Բակուր

ISSN 1829-1473

2



ՀԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (2Հ)
Կ-294

Զրույցները վարեց Բակուրը
Մատենաշարի գլխավոր խմբագիր՝ Անահիտ Ասատրյան

Կարապետյան Բակուր
Կ-294 Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք երկրորդ. -Եր.: «Շուշի» ԲՀ, 2008 - 260 էջ:

Մատենաշարի երկրորդ հատորը բովանդակության առումով զուտ առաջինի շարունակությունը չէ: Պարզապես հատորները կազմվում են այնպես, որ ներքին ամբողջականություն ունենան՝ հնարավորինս լայն ընդգրկելով արցախյան գոյամարտը, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի շարժման, նրա շարժառիթների, ինքնապաշտպանության կազմակերպման, զուգահեռ ընթացող դիվանագիտական աշխատանքի, պատերազմի բոլոր կողմերի մասին՝ սկսած բանակում քահանայի աշխատանքից մինչեւ կապ, առաջին օգնություն, հրետանի, շարքային զինվոր ու գլխավոր հրամանատար:

Հնարավոր է՝ մատենաշարի հեղինակը երբեմն համաձայն չլինի պատմողի արտահայտած այս կամ այն մտքի հետ, սակայն բոլոր դեպքերում ձգտել ենք հարազատ մնալ ձայնագրությանը, եթե, իհարկե, այն չի վնասում պետության անվտանգության շահերին:

Ձայնագրությունների խտասկավառակը «Շուշի» բարեգործական հիմնադրամը կհանձնի որեւէ արխիվի տնօրինությանը, որից անհրաժեշտության դեպքում կարող են օգտվել նյութի հետագա ուսումնասիրողները:

Մատենաշարի երկրորդ հատորը տպագրվում է «Շուշի» ԲՀ, «Եվրոֆարմ» եւ «Արգոֆարմ» ընկերությունների միջոցներով:

ԳՄԴ 66.3 (2Հ)

© Բակուր, 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաբկեն Արարքցյան....4
Արկադի Մանուչարով....29
Մուրադ Պետրոսյան....36
Ժորա Գասպարյան....46
Վալերի Պողոսյան....67
Գուրգեն Դալիբալթայան....76
Ալիկ Ալեքսանյան....81
Սերժիկ Ասլանյան....88
Տեր Գրիգոր քահ. Մարկոսյան....117
Համլետ Հարությունյան....134
Ամալյա Աղաջանյան, Վլադիմիր Կարապետյան....140
Ռոլես Աղաջանյան....157
Շահեն Հովասափյան....183
Կարո Կարապետյան....195
Սերգեյ Վանցյան....198
Նելսոն Մինասյան....202
Վյաչեսլավ Դանիելյան....212
Գրիգոր Միրզոյան, Արթուր Ավանեսյան,
Սամվել Պողոսյան....220
Արա Խուդավերդյան....235
Անձնանունների ցանկ....248
Տեղանունների ցանկ....255

Պատմում է Բաբկեն Արարքցյանը (ՀՀ ԳԽ (1991-95 թթ.) եւ ԱԺ (1995-98 թթ.) նախագահի)
11.03.2006 թ., Երեւան



Բ.Ա. - Ծնվել եմ 1944 թվականին Երեւանում: Ծնողներս եղել են մտավորականներ՝ դասախոսներ: Ուսումս սկսել եմ Երեվանի պետական համալսարանում: Այնուհետեւ ավարտել եմ Մոսկվայի պետական համալսարանը: Մասնագիտությամբ մաթեմատիկոս եմ: Եղել եմ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: Ղարաբաղյան շարժմանը ակտիվ մասնակցել եմ 1988 թվականի փետրվարի 20-ից, երբ Հայաստանում սկսվեց շարժումը: Սակայն մինչ այդ՝ դեռ 60-ական թվականներին, Մոսկվայում կային հայ ուսանողների, ասպիրանտների խմբեր, որոնք զբաղվում էին ազգային հարցերով: 1965 թվականին մասնակցել ենք Եղեռնի հիսուն ամյակին նվիրված մոսկովյան ցույցերին: Այնուհետեւ ամեն տարի՝ ապրիլի 24-ին, Մոսկվայում կազմակերպվել են այդ ցույցերը, որոնք խորհրդային իշխանության ժամանակ խստորեն արգելվում էին: Ոստիկանությունը չէր թողնում, որ Մոսկվայի հայ ուսանողները եւ բնակչությունը իրենց բողոքի ցույցն անեն Մոսկվայում՝ Թուրքիայի դեսպանատան առջեւ: Փակում էին ճանապարհները, մասնակիցներին կարճ ժամանակով ձերբակալում էին, տանում ոստիկանատուն:

Մոսկվայից վերադառնալուց հետո աշխատել եմ Երեւանի պետական համալսարանում, Գիտությունների ազգային ակադեմիայում: Մեր մոսկովյան խումբն ընդլայնվեց:

Բակուր - Ովքե՞ր էին ընդգրկված խմբում:

Բ.Ա. - Հիշում եմ Լեոնիդ Հարությունյանին, Արտաշես Պոչիկյանին, Հայկ Ղազարյանին, Վազգեն Մանուկյանին, Եսայի Ստեփանյանին, Կարեն Քաղթալդյանին, Վահան Գալուստովին, Վարդան Հայկազյանին եւ շատ ուրիշ տղաների: Ամենավառ դեմքերից մեկն էր Վրեժ Համբարձումյանը, ով, ցավոք, շատ երիտասարդ հասակում մահացավ: Հետագայում նրանցից ոմանք դարձան հայտնի գիտնականներ, մտավորականներ: Նշված մարդիկ Երեւան վերադառնալուց հետո հիմնականում աշխատում էին Երեւանի պետական համալսարանում կամ Գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր գիտահետազոտական

ինստիտուտներում: Մեր կապերը շարունակվեցին: Երեւանի պետական համալսարանում ստեղծվեց մշակույթի ակումբ. խորհրդային ժամանակաշրջանում այլ անուն չէր կարելի տալ: Մշակույթի անվան տակ մենք կազմակերպում էինք քաղաքական քննարկումներ, իհարկե, այն ժամանակվա համար շատ սահմանափակ ծավալներով: Մենք ունեինք նաեւ լավ բարեկամներ Սփյուռքում, որոնց հետ հանդիպում էինք, փորձում հասկանալ նաեւ սփյուռքի տրամադրությունները մեր ազգային խնդիրների վերաբերյալ հատկապես Հայաստանի հետագա զարգացման համար: Շատ մշուշոտ, բայց արդեն զգացվում էր, որ Խորհրդային Միությունում ամեն ինչ, կոպիտ ասած, կարգին չէ, եւ շատ մեծ հեռանկարներ՝ մեր ժողովրդի ճակատագրի վերաբերյալ, չի կարելի կապել Խորհրդային Միության հետ:

Բ. - Սփյուռքից ի՞նչ ուժեր, ի՞նչ մարդիկ կային:

Բ.Ա. - Շատ տպավորիչ էր մեր ծանոթությունը գրող, հրապարակախոս, թերթի խմբագիր Անդրանիկ Ծառուկյանի հետ, որը նաեւ շատ հայտնի քաղաքական դեմք էր: Նա Դաշնակցության բյուրոյի անդամ է եղել, բայց հետո վտարվել է Դաշնակցությունից, որովհետեւ չէր կիսում Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների մոտեցումները: Մեզ վրա շատ մեծ ազդեցություն թողեց արքեպիսկոպոս Սերովբե սրբազանը, որի հետ տարիներ շարունակ հանդիպումներ էինք ունենում: Նա Հայ առաքելական եկեղեցու Արեւմտյան Եվրոպայի թեմի առաջնորդն էր: Բազմիցս այցելել է Հայաստան: Սերովբե սրբազանը մեծ մտավորական էր, շատ լավ հասկանում էր քաղաքական հարցերը: Նրա հետ զրույցները հիմնականում ոչ թե գործնական բնույթ էին կրում, այլ ավելի շատ ակադեմիական, մտավորական բնույթի էին՝ ուղղված ժողովրդի, պետության, մեր պատմության, ճակատագրի հարցերին: Հաշվի առնելով այն, որ մենք այն ժամանակ համեմատաբար երիտասարդ էինք, այդ զրույցները նաեւ ուսուցողական շատ կարեւոր դեր ունեին: Նրանից բացի՝ ուրիշ մարդիկ էլ կային: Շատ կարեւոր էր այն, որ մենք պարբերաբար հանդիպում էինք Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ: Կրկնում եմ, որ այդ զրույցները չէին քաղաքականացվում կոշտ ձեւով, բայց ենթատեքստում էզոպյան լեզվով հնարավոր էր շատ բան հասկանալ եւ տեսնել մտադրությունները: Կարող եմ ասել՝ դաստիարակվել ենք այդ մթնոլորտում:

Բ. - Դուք 1965 թվականի ցույցին այստե՞ղ էիք:

Բ.Ա. - 1965 թվի ցույցը շատ հետաքրքիր պատմություն ունի: 1964 թվականի վերջին Մոսկվայի համալսարանում մի քանի հանդիպում կազմակերպեցինք մեր մտավորականներից Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սեւակի, Գեւորգ Էմինի հետ: Շատ էինք հանդիպում Կանադայում ԽՍՀՄ դեսպան Հարությունյանի հետ: Չնայած շատ փակ էին

տվյալները, բայց այդ զրույցների ընթացքում արդեն Մոսկվայում գիտեինք, որ Երեւանում, ինչպես նաեւ Մոսկվայում 1965 թվականի ապրիլի 24-ին պատրաստվում է ցույց: Այդ ժամանակ համալսարանական շրջանակներում ժողով արեցինք եւ որոշեցինք, որ Մոսկվայի ուսանողության, ասպիրանտության ներկայացուցիչներից մեկը այդ օրերին պետք է Երեւանում լինի: Որոշվեց, որ դա պետք է լինեմ ես: Բայց միայն այդ ցույցին մասնակցելու հանգամանքը չէր: Որոշեցինք նամակ գրել Մարտիրոս Սարյանին՝ նրան համարելով մեր մտավորականներից ամենամեծ հեղինակությունը, մանավանդ, գիտեինք նրա մոտեցումներն այդ հարցին: Կազմվեց նամակ հայ ուսանողների եւ ասպիրանտների կողմից: Հանձնարարվեց, որ ես գնամ Երեւան, հանդիպեմ Մարտիրոս Սարյանի հետ, փոխանցեմ նամակը: Հենց ապրիլի 24-ի առավոտյան ես հասել եմ Երեւան, գնացել եմ Մարտիրոս Սարյանի մոտ եւ հանձնել նամակը: Ցույցն արդեն սկսվել էր: Մարտիրոս Սարյանի հետ մեկ ժամ զրուցեցի, բացատրեցի՝ մենք ով ենք, ինչ ենք մեզանից ներկայացնում, ինչ նկատառումներ ունենք: Ապա մասնակցեցի ցույցին: Այդ ժամանակ երիտասարդ էինք՝ քսան-քսանմեկ տարեկան, եւ մեր ամբողջ ընկերական շրջապատը Մոսկվայում էր: Ի դեպ, Մարտիրոս Սարյանը այդ օրը՝ ցերեկը, ինձ ասաց, որ երեկոյան չի մասնակցելու հանդիսավոր նիստին: Եվ, ինչպես հայտնի է, նա չի գնացել, որովհետեւ կարծում էր, որ ոչ թե օպերայի դահլիճում պետք է նիստը արվի, այլ պետք է այնպիսի միջոցառում լինի, որ ամբողջ ժողովուրդը մասնակցի: Հետո ժողովուրդը հավաքվեց օպերայի հրապարակում եւ բողոքեց, որ ինքը մասնակից չէ այդ նիստին: Կոտրեցին դռները եւ մտան դահլիճ: Եղան ձերբակալություններ: Հաջորդ օրը ես նորից հանդիպեցի Մարտիրոս Սարյանի հետ: Նա ինձ տվեց պատասխան նամակ՝ ուղղված հայ ուսանողությանը, որում ներկայացնում էր իր դիրքորոշումները այդ հարցերի վերաբերյալ: Ես ունեմ նրա՝ ինձ նվիրած ալբոմը, որտեղ ամսաթիվը գրված է հենց «Ապրիլի 24, 1965 թիվ» մակագրությամբ: Պետք է ասել, որ այն ժամանակ երիտասարդ էինք, եւ այդ ամենը մեզ համար ավելի էմոցիոնալ բնույթ ուներ, մանավանդ որ մեր խմբի մարդկանց մեծամասնությունը ծագումով Արեւմտյան Հայաստանից էր: Մենք խնդիրն ավելի սրտամոտ էինք ընդունում: Քաղաքական հստակ դիրքորոշումներ չկային, գերակայում էին ավելի էմոցիոնալ, զգացմունքային արտահայտությունները: Հետագայում՝ Երեւան վերադառնալուց հետո, մի գաղափար առաջացավ մեր մեջ. այն, որ Ղարաբաղը մնացել է հայ բնակչությամբ անկլավ տարածքներից մեկը, հայկական տարածք, որ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս է: Մնացած բոլոր տարածքներն այս կամ այն ձեւով հայաթափված են: Մենք գիտեինք՝ ինչ է տե-

ղի ունենում Ղարաբաղում, ինչ սահմանափակումներ կան լեզվի
գացման, կրթության, մշակույթի բնագավառներում: Մի քիչ
անցնելով ասեմ, որ 1990-ական թվականներին, երբ մենք արդ
տական մակարդակով հանդիպումներ էինք ունենում տարբեր
կանց հետ, այդ թվում՝ արտասահմանում, մի փաստարկ կար, ո
լորին շատ զարմացնում էր: Չնայած նրանք գիտեին, թե ինչ է հ
ներկայացնում Խորհրդային Միությունը, բայց չէին պատկերա
որ Ղարաբաղի տարածքում չկար հայկական ոչ մի գործող եկ
Այսինքն՝ երեխաները հնարավորություն չունեին մկրտվելու: Ը
նուր առմամբ ԽՍՀՄ-ում այդպես էր, բայց, այնուամենայնիվ, Հ
տանում ամեն տեղ էլ եկեղեցիներ գործում էին, կարող էին մկ
Իսկ Ղարաբաղում գործող ոչ մի եկեղեցի չկար, չնայած հռչակ
խղճի ազատություն: Այս առումով 1970-ականների վերջին, 19
կանների սկզբին առաջացավ այսպիսի գաղափար՝ պետք է վ
գոնե մշակութային, կրթական, գիտական կապեր հաստատել Ղ
բաղի համապատասխան կառույցների հետ: Քանի որ մենք համ
րանական էինք, բնական է, որ ավելի շատ ուշադրություն պ
դարձնեինք կրթական ոլորտին: Մինչ այդ մենք շատ էինք գնա
շավների ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Նախիջեւանում: Մեզ շա
դժվարությամբ հաջողվեց Ջուղայից մի քանի խաչքար բերել,
այսօր Վեհարանի բակում են գտնվում: Խաչքարերը հանձն
Վազգեն Վեհափառին: Մենք կարողացանք կապեր հաստատել
փանակերտի մանկավարժական ինստիտուտի դեկանների
Եկանք համաձայնության, որ կարող են մեզ հրավիրել, եւ
կգնանք այնտեղ մասնագիտական դասախոսություններ կար
որպեսզի համագործակցություն ստեղծվի Երեւանի պետակա
մալսարանի եւ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտու
ջեւ: Այդ ծրագիրը բավական հաջող գործեց: 1980-ական թվակ
րին բազմիցս մեկ-երկու շաբաթով գնացել ենք Ստեփանակերտ
սախոսություններ կարդացել: Իհարկե, արգելքներ կային: Չն
ռեկտորը հայ էր, բայց պրոռեկտորը պետք է անպայման ադրբ
լիներ: Շատ կասկածանքով էին վերաբերվում մեր այցելությունն
որովհետեւ, բնական է, դասախոսություններից դուրս շփվում
դասախոսների հետ, Լեռնային Ղարաբաղում ծանոթանում իր
վիճակին:

Բ. - Այսինքն՝ դա, կարելի է ասել, մի փուլ էր 1988-ին նախա
բաստելու:

Բ.Ա. - Այդ ժամանակ ոչ մեկս չէր պատկերացնում, թե 1988
այդպես կլինի, բայց մենք գտնում էինք, որ պետք է Հայաստան
բաբաղ կապը լինի, որովհետեւ շատ էինք անջատված: Բացի հ

տանաբնակ ղարաբաղցիներից, որոնք իրենց հարազատներին այցելում էին հարսանիքի, ծնունդի կամ դժբախտության դեպքում, այլ տիպի կապեր գրեթե չկային Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ: Շատ լավ էր, որ այդ թվականին Ղարաբաղից վտարվեցին մի խումբ մտավորականներ: Դրանով կապը հայկական երկու հատվածների միջեւ ամրապնդվեց: Շատ հաճախ այդ գործողությունների վերաբերյալ խորհրդակցում էինք Բագրատ Ուլուբաբյանի հետ: Այդպիսի կապը բավական արդյունավետ աշխատեց: Մեր մասնագետները գնում դասախոսություններ էին կարդում: Կարող եմ ասել՝ անգամ ավանդույթ դարձավ, որ ավարտական պետական հանձնաժողովի նախագահները լինեն մեր տղաները: Այդ ժամանակ մենք արդեն ձեւավորված գիտնականներ էինք, գիտական կոչումներ ունեինք: Ղարաբաղում արդեն ոչ միայն բազմաթիվ ծանոթներ, այլեւ բարեկամներ ունեինք: Քննարկում էինք, թե ինչ պետք է լինի: Արդեն կային քաղաքական մոտեցումներ: Մի բան էր պարզ. Ղարաբաղը մնացել էր միակ հայկական հողը, ուր դեռեւս բնակվում էին հայերը: Այն ժամանակ դա երազանք էր, ֆանտաստիկ գաղափար: Ի դեպ, մենք այն ժամանակ էլ, միգուցե մասնագիտությունից է գալիս, շատ պրագմատիկ էինք մոտենում հարցերին: Հասկանում էինք, որ եթե Նախիջեւանում, Արեւմտյան Հայաստանում հայկական բնակչություն չկա, ապա պատմական վեճերը անիմաստ են: Տվյալ դեպքում այդտեղ կար հող, որտեղ ապրում էին մեր հայրենակիցները: Հետեւաբար, ես կարծում եմ, որ, ճիշտ է, «Ղարաբաղ» կոմիտեի ձեւավորումը եղավ հանրահավաքների շրջանում, բայց այն, որ իմ ասած շրջանակից մարդիկ մտան «Ղարաբաղ» կոմիտեի մեջ, այնքան էլ պատահական երեւույթ չէր: 1988 թվականի փետրվարի դեպքերից առաջ՝ 1987-ի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին, Երեւանում էկոլոգիական ցույցեր եղան: Անունը «էկոլոգիական» էր, բայց դրանք, իհարկե, քաղաքական ակցիաներ էին: Շարժման սկիզբը փետրվարի 20-ին էր՝ ԼՂԻՄ-ի խորհրդի հայտնի որոշումից հետո:

Բ. - Գուցե փետրվարի 13-ին Ստեփանակերտում առաջին հանրահավաքն էր սկիզբը:

Բ.Ա. - Իհարկե, իմպուլսը Ստեփանակերտն էր:

Բ. - Առաջին անգամ հանրահավաք արեցին այնտեղ:

Բ.Ա. - Ցույց տվեցին, որ կարելի է դուրս գալ եւ արտահայտել կամքը: Եթե վերլուծենք՝ դա գալիս էր նաեւ Խորհրդային Միության ընդհանուր վիճակից, արդեն որոշ չափով ինչ-որ ազատություններ էին տրված: Բայց մինչ այդ Ղարաբաղում ցանկացած այդպիսի մտքի արտահայտում բերում էր մարդկանց անգամ ֆիզիկական ոչնչացման: Երբ մի խումբ մտավորականների ուղղակի դուրս քշեցին Ղարաբաղից, դա

կարելի էր համարել լավագույն դեպքը: Կարեւոր է, որ Ղարաբաղում Հայաստանում ղարաբաղյան հարցի համար պայքարը զուգորդվ ընդհանուր քաղաքական հարցերի հետ: Հասկացանք, որ այդպ առանձին խնդիր դնելը ճիշտ չէ, այն պետք է դրվի ընդհանուր քա քաղաքական կոնտեքստում: 1988 թվականի օգոստոսին «Ղարաբաղ» կո տեն հրապարակեց իր ծրագիրը:

Բ. - Իսկ ինչպե՞ս եք գնահատում Իգոր Մուրադյանի դերը շարժ մեջ, հետո նրա դուրս մղվելը:

Բ.Ա. - Իհարկե, նա ունեցել է որոշակի դեր, հատկապես հանրահ վաքների եւ տարբեր քաղաքական դեմքերի հետ կապերի առում Բայց կարծում եմ, որ նա, այնուամենայնիվ, չներգրավվեց այս ընդ նուր քաղաքական պրոցեսում, չկարողացավ ձեւավորվել որպես ք ղաքական գործիչ: Հարցը այն չէ, որ նրա մոտեցումները որոշ դեպ ում ծայրահեղական էին, ինչը ընդունելի չէր մեզ համար: Նրան դո մղեց ժողովուրդը: Նա չընդունվեց այդ հանրահավաքների կողմի Ճշմարտությունը պետք է ասել: Սկզբնական շրջանում հանրահավ ները, փաստորեն, ղեկավարվում էին Իգոր Մուրադյանի, Զորի Բա յանի եւ այլ մարդկանց կողմից: Բայց ինչպե՞ս բացատրել այն երեւ թը, որ եկավ մարդկանց մի խումբ, որն անվանվեց «Ղարաբաղ» կո տե, եւ այդ տասնմեկ հոգին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ է բայց նրանց շուրջը կային տասնյակ մարդիկ, որոնք պակաս ներդ չեն ունեցել շարժման մեջ: Իհարկե, միշտ առաջանում է այսպիսի ռիզ, բայց կային տասնյակ, հարյուրավոր մարդիկ, որոնք կոնկ գործեր են արել, եւ ոչ թե միայն ունկնդիր են եղել հանրահավաքն ժամանակ: Ցավոք, միշտ չէ, որ այդ մարդիկ հիշատակվում են: Հ րահավաքներին ելույթ էին ունենում տարբեր մտավորական խոսում էին տարբեր հարցերի շուրջ, բայց դա համակարգված քա քական ուղղություն չէր կրում: Դա իմ կարծիքն է: Օրինակ՝ Վաչե ռուխանյանի ելույթներում քաղաքական ուղղվածությունը բացա յում էր: Կարելի էր շատ փայլուն, թատերական ոճով էմոցիոնալ ել ունենալ, մարդիկ ծափահարեին, բռունցքները բարձրացնեին, բ վաղը դա ոչ մի ազդեցություն չէր ունենա: Այդտեղ պետք է լինեին օ ծողություններ եւ, ամենակարեւորը, ամենօրյա աշխատանք: Պետ ասեմ՝ «Ղարաբաղ» կոմիտեն, որ ձեւավորվեց ապրիլ-մայիս ամիս ռին, քանչորս ժամ էր աշխատում եւ՛ շրջաններում, եւ՛ Ղարաբաղ եւ՛ քաղաքական բնագավառում, եւ՛ ուժային կառույցներում:

Բ. - Ստեփանակերտում ստեղծվեց «Կռունկ» կոմիտեն: Ինչ էիք դուք՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներդ, ընդունում նրանց:

Բ.Ա. - Շատ հաճախ էին հանդիպումներ լինում «Կռունկի» հ Հիմնականում այսպես էր. մենք՝ «Ղարաբաղ» կոմիտեի ներկայա

ցիչներս, մեկնում էինք Ղարաբաղ, եւ այնտեղ տեղի էին ունենում հանդիպումները, միասին քննարկում էինք որոշակի հարցեր: Որոշ հարցերի վերաբերյալ կային տարբեր մոտեցումներ: Չեմ կարող ասել, թե եղել է շատ սերտ համագործակցություն: Ինչպես ասացի, մենք հետագայում լայնացրինք հարցերի շրջանակը: Խոսքը մեր պետականության, ժողովրդավարության մասին է: Ղարաբաղում դա ճիշտ չէր ընկալվում: Հասկանալի է, մարդիկ ապրում էին մի հողի վրա, որտեղ ունեին իրենց բազմաթիվ խնդիրները, եւ նրանց առաջին հերթին այդ խնդիրներն էին հուզում: Եկեք ճիշտ գնահատենք: Ադրբեջանն այնպես էր արել, որ Ղարաբաղը կարծես աշխարհից կտրված մի կղզյակ լիներ, նրանք աշխարհի անցուդարձից այնքան էլ տեղյակ չէին: Եվ այնտեղ մեր հարցերի շրջանակների լայնացումը նրանք գնահատում էին՝ իբրեւ մենք շեղվում ենք ղարաբաղյան հիմնահարցից: Դա բոլորովին այդպես չէր: Մենք մտածում էինք, որ ընդհակառակը՝ ընդլայնումը, շրջահայացությունը ավելի կնպաստեն հարցի լուծմանը: Իմ կարծիքով՝ հետագա քաղաքական գործունեությունն ու ռազմական գործողությունները ապացուցեցին, որ մենք այդպես չենք մտածում: 1988 թվի ղարաբաղյան շարժումը, որ Հայաստանում վերածվեց քաղաքական շարժման, բերեց 1990 թվի ընտրությունների այն արդյունքներին, որ շարժման գաղափարները հաղթեցին: Շարժում ասելով՝ ես լայն իմաստով եմ հասկանում. ոչ միայն Ղարաբաղի հարցն է, այլեւ անկախության խնդիրը: Երբ իշխանությունն անցավ շարժման գաղափարախոսությանը, է՛լ ավելի հստակ կարող էր դրվել ղարաբաղյան հարցը: Հիմա այստեղ շատ կարեւոր մոտեցում կա: Ես այն կարեւորում եմ, որովհետեւ հաճախ անդրադառնում են այդ հարցին: Պետք է հասկանալ այն նրբությունը, որ Խորհրդային Միության ժամանակաշրջանի Ղարաբաղի հարցը տարբերվում էր անկախության շրջանի ղարաբաղյան հարցից: Խորհրդային Միության շրջանում, նկատի ունեմ 1980-ական թվականները, կային այլ մոտեցումներ: Շատ լավ հայտնի է, թե ԽՍՀՄ-ում Քաղբյուրոն ինչ որոշումներ էր ընդունում. Ղրիմը տալիս էին Ուկրաինային, Կարակալպակիան մի քանի անգամ վերցրել են Ղազախստանից, տվել Ուզբեկստանին եւ այլն: Անկախ պետականության դեպքում հարցը պետք էր դնել այնպիսի քաղաքական հիմքերի վրա, որ աշխարհը ճանաչեր: Դա արդեն տեղային, Խորհրդային Միության «երկաթե վարագույրի» ետեւում գտնվող ներքին հարց չէր: Հետեւաբար, պետք էր մշակել այն քաղաքական սկզբունքները, որոնք աշխարհի համար ընկալելի կլինեին: Այսօր էլ ես համոզված եմ, որ դա ինքնորոշման սկզբունքն էր: Դրա համար մենք դրեցինք Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման սկզբունքը:

Բ. - Որը մինչեւ վերջ պիտի տարվեր:

Բ.Ա. - Այո, դա էր սկզբունքը եւ չպետք է վերածվեր այնպիսի
վիճակի, որ այսօր Հայաստանը եւ Ադրբեջանը ինչ-որ տարածք
պահանջների վերաբերյալ խնդիրներ ունեն:

Բ. - Որը մեր օգտին չէ...

Բ.Ա. - Ոչ թե մեր օգտին չէ, այլ դատապարտված քաղաքակ
թյուն է, չի ընդունվի ոչ մեկի կողմից: Աշխարհը չի կարող դա ընդ
Ճիշտ է, ինքնորոշման սկզբունքը որոշ հակասություններ ունի
րածքային ամբողջականության սկզբունքի հետ, բայց այստեղ
շատ լավ ելքեր: Դա ֆորմալ հակասություն է: Բայց այդ ֆորմա
կասությունը ընդունում է ամբողջ աշխարհը: Պետք է այդ հակ
թյունները այնպես իրարից անջատել... Եվ դա, ի դեպ, աշխատո
Ցավոք, վերջին տարիներին այն նենգափոխվեց: Հիմա ուզում է
պտտել անիվը, բայց դժվար է, քաղաքականությունը մեխանիկ
գործընթաց չէ, որ կարողանաս պտտել այս կամ այն կողմ: Ես
չեմ ուզում գնահատել վերջին շրջանի երեւույթները, դա առանձի
սակցություն է: Բայց եթե վերցնենք՝ ինչ կա ռեալ այսօր. այսօր կ
կախ Հայաստան, կա Ղարաբաղ, որը, փաստորեն, ունի իր կառ
րը. իր պետականությունը, ճիշտ է, չճանաչված, բայց որոշ չ
ապահովված է նրա անվտանգությունը: Հայաստանին պարտա
է պատերազմ, Հայաստանը պատվով դուրս է եկել այդ պատերա

Բ. - Պատերազմում Հայաստանը օգնում էր Արցախին: Արցախ
պարտադրված պատերազմը: Հայաստանը պետք է օգներ արցա
հայությանը:

Բ.Ա. - Այո՛, պարտադրված էր Արցախին: Բայց Արցախին
տադրված պատերազմը պետք է դիտել որպես մեր ժողովրդին
տադրված պատերազմ:

Բ. - Ես ուզում եմ ասել, որ պատերազմող կողմը հիմնակա
մնում է Արցախը, որովհետեւ պատերազմը պարտադրված էր
իսկ Հայաստանը պարտադրված էր օգնել:

Բ.Ա. - Դրա համար մեր հետագա քաղաքական մոտեցումը
հետեւյալը. Հայաստանի համար պետք է ընդունելի լինեն այն
որոշումները, որոնք ընդունել է Արցախը: Այսինքն՝ Հայաստանն հ
ղաքական շահերից, քաղաքական կապրիզներից բխող քայլեր չ
է անի: Եթե Արցախը ընդունում է ինչ-որ մոտեցում, Հայաստանը
է աջակցի, որ այդ որոշումը իրականացվի: Եվ, ընդհանրապես,
հարցերում՝ լինի դա ռազմական կամ այլ, Հայաստանը պետք
աջակցությունը ցույց տա: Խոսքը մեր ժողովրդի մի հատվածին
րաբերում: Հայաստանը պետք է աջակցի եւ անի այն, ինչ հնար
է, որոշ դեպքերում էլ՝ անհնարինը, որը արվեց: Դրա համար
լրիվ անհասկանալի եւ անհեթեթ է, որ Արցախը դուրս է մղվա

նակցային պրոցեսից: Ի՞նչ կարող են որոշել Հայաստանի եւ Ադրբեջանի կամ որեւէ Մինսկի խմբի ներկայացուցիչներ, որ հետո պետք է մատուցեն Արցախին, եւ Արցախը դրան համաձայն լինի կամ չլինի, եթե ինքն այդ պրոցեսին չի մասնակցում եւ չի տալիս իր համաձայնությունը այդ հարցերին:

Բ. - 1988 թվականից սկսած կարծես երկիրը նախապատրաստվում էր անկախությունն ընդունելուն...

Բ.Ա. - Չմանրամասնելով հետագա գործունեությունը՝ մենք հասկանում ենք, որ եղավ շատ ծանր, դաժան պատերազմ: Հայկական կողմը՝ արցախցիները, կարողացան այդ պատերազմում տանել շատ կարեվոր հաղթանակ: Այստեղ հաղթանակը պետք է գնահատել ոչ միայն այն իմաստով, որ տվյալ պատերազմում կոնկրետ հաղթանակ է տարվել: Հարյուրամյակների ընթացքում մենք չենք ունեցել նման հաղթանակ: Դա ամրապնդեց մեր ժողովրդի ինքնագիտակցությունը, ստրկային վիճակից հանեց, որովհետեւ մենք միշտ խոսել ենք պարտությունների մասին եւ լացել ենք այդ պարտությունների համար: Ժողովուրդը ձերբազատվեց պարտվածի հոգեբանությունից: Ցավոք, պետք է նշեմ, որ պարտվողական հոգեբանությունը այսօր էլի ուզում են ներշնչել ժողովրդին՝ որ ջարդել են, սպանել են... Մենք հաղթել ենք, եւ այսօր դրա մասին պետք է խոսել: Եվ շատ կարեւոր է, որ հաղթող կողմն իր ռազմական հաղթանակները կարողանա վերածել նաեւ քաղաքական հաղթանակների: Եթե ռազմական հաղթանակները չես կարողանում կարճ ժամանակահատվածում վերածել քաղաքական հաղթանակների, ապա կարող է, ընդհակառակը, քեզ վնաս լինի, այն, ինչ այսօր տեղի է ունենում: Պետք է գտնել Ղարաբաղի հարցի քաղաքական լուծումը:

Բ. - Դուք Ազգային ժողովի նախագահն էիք, այդ ընթացքում ի՞նչ հետաքրքիր դեպքեր են եղել, մանավանդ, դիվանագիտական տեսանկյունից: Օրինակ՝ Հեյդար Ալիեւի հետ Նախիջեւանում հանդիպումներ եք ունեցել, կցանկանայի դրանց մասին ավելի մանրամասն պատմեք:

Բ.Ա. - Ընդհանուր կոնտեքստում իմաստը հետեւյալն էր. այն, որ անվերջ պատերազմ չի լինում, անվերջ հաղթանակներ չեն լինում, եւ պետք է գտնել ինչ-որ լուծում: Այդ լուծումների համար, բնական է, պետք է լինեին բանակցային գործընթացներ: Կարող էին լինել բաց եւ փակ բանակցություններ: Ալիեւը գնաց Մոսկվա, 1991 թվականին վերադարձավ եւ դարձավ Նախիջեւանի Գերագույն խորհրդի նախագահը: 1993 թվականին Ադրբեջանի այդ իրադարձություններից հետո պետք է լինեին նախագահական ընտրություններ, եւ Ալիեւը համարվում էր գլխավոր թեկնածուներից մեկը: 1993-ի հուլիսին նա արդեն

նախագահ ընտրվեց: Մինչ այդ վերադարձել էր Բաքու, պատգամավոր ընտրվել, հետո՝ Միլիմեջլիսի նախագահ: Մենք հաստատեցինք դիվանագիտական եւ այլ կապեր, որ Ալիեւի հետ հանդիպում տեղի ունենա, քննարկենք, թե ինչպիսին կարող են լինել հետագա զարգացումները: Կարող եմ ասել, որ ինչ-որ չափով այդ նախաձեռնությունը գալիս էր Ալիեւից: 1993 թվականի գարնանը պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Ալիեւի հետ հանդիպենք Նախիջեւանում: Նրանք միշտ կարեւորել են այն հանգամանքը, թե որտեղ ենք հանդիպում: Մենք գտնում էինք, որ կարեւորը խոսակցության բովանդակությունն է, եւ ոչ թե վայրը: Ի՞նչ էր հետաքրքրում Ալիեւին. նա շատ մտահոգված էր, որ եթե դնում է իր թեկնածությունը եւ ընտրվում է նախագահ, ապա ի՞նչ ակնկալիքներ կարող է ունենալ Հայաստանից, կարո՞ղ ենք գնալ բանակցությունների, ի՞նչ լուծումներ ենք մենք տեսնում: Խոսքը վերաբերում է Ղարաբաղի հարցին: Հիշեցնեմ, որ այդ ժամանակ Արցախի ինքնապաշտպանության ուժերն արդեն վերցրել էին Շուշին, բացվել էր Լաչինի միջանցքը, Քելբաջարը: Այսինքն՝ Ադրբեջանը ռազմական առումով բավական վատ վիճակում էր հայտնվել: Հանդիպումը տեղի ունեցավ: Մենք քննարկել էինք, թե ինչը երբ կարող ենք ասել: Բայց հանդիպումը տեղի ունեցավ բավական աննպաստ մթնոլորտում: Մենք պատրաստ էինք բաց խոսակցության, բայց Ալիեւը, լինելով Նախիջեւանի Գերագույն խորհրդի նախագահը եւ գտնվելով իր տարածքում, եկել էր Ադրբեջանի ժողճակատի ներկայացուցիչների հետ: Եվ այն տպավորությունը ստացանք, թե նա շատ կաշկանդված էր: Նա հետո ինձ առանձին ասաց, որ ինքը նախատեսել էր մենակ գալ կամ վստահելի մեկի հետ: Մեր կողմից ես եւ Աշոտ Մանուչարյանն էինք: Սակայն Ադրբեջանի ժողճակատը պարտադրել էր, որ իրենց ներկայացուցիչը նույնպես ներկա լինի բանակցություններին: Մենք բանակցեցինք: Խոսքն այն մասին էր, թե ինչ մոտեցումներ ենք մենք տեսնում Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ: Մենք անգամ նրանց ներկայությամբ ներկայացրինք մեր մոտեցումները. այն, որ Խորհրդային Միությունը այլ կառույց էր, եւ եթե այսօր մենք անկախ պետություններ ենք, իսկ Ղարաբաղը հայ բնակչությամբ կոմպակտ մի տարածք է, հնարավոր չէ ընդունել, որ այն լինի Ադրբեջանի կազմում, պետք է գտնել այլ ելքեր: Հիմնական կետն այն էր, որ անընդունելի է Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում լինելը որպես ինչ-որ մաս, եւ կարեվոր չէ՝ հանրապետությա՞ն, թե՞ որեւէ այլ կարգավիճակով: Խոսակցություններ կային, որ Ղարաբաղին հանրապետության կարգավիճակ կտան: Այսինքն՝ պետք էր գտնել այլ մոդել: Այդտեղ ոչ ոք պատրաստի դեղորայք չուներ, հարկավոր էր մտածել: Բայց այդ դրույթը պիտի ընդունեին: Ալիեւը մտահոգված էր, թե մենք այդ բանակցություններում

կունենանք շատ կոշտ դիրքորոշումներ, քանի որ ունենք նաեւ ռազմական առավելություններ: Ասացինք, որ բանակցություններից է կախված, բայց այդ սկզբունքային հարցը կարեւոր է: Մինչ այդ էլ մենք հանդիպել էինք Ալիեւի հետ: Այդ օրը խոսակցությունը շատ երկար էր: Նրա խոսքը այսպես էր. նա, խորհրդային նոմենկլատուրայի վառ ներկայացուցիչ լինելով, տրաֆարետային նախադասություններ էր ասում, մտքերն արտահայտում բանաձեւերի տեսքով: Որեւէ շեղում այդ տրաֆարետներից, երբ ոչ ստանդարտ ինչ-որ բան էր ասում, դիսկոմֆորտ էր առաջացնում: Մենք նրան ասելիք ունեինք, եւ նա, ըստ էության, մեզ հասկացրեց, որ այդտեղ շատ բաց խոսակցություն չի կարող լինել: Հանդիպման վերջում ճաշեցինք, որովհետեւ նրանց տարածքում էինք: Ես ասացի. «Խնդրում եմ, մենք առանձին խոսենք, շատ կարճ»: Ադրբեջանի ժողճակատի ներկայացուցիչները դա ընդունեցին շատ նյարդայնացած՝ ասելով. «Ի՞նչ է, այս հանդիպումն ունի նաեւ գաղտնի մա՞սն»: Պատասխանը հետեւյալն էր. «Ես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահն եմ, Ալիեւը՝ Նախիջեւանի Գերագույն խորհրդի: Մենք համապատասխան կարգավիճակ ունենք, չնայած ես անկախ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահն եմ, նա, միգուցե, մի քիչ ավելի ցածր է, բայց մենք կարող ենք առանձին խոսակցություն ունենալ: Միշտ էլ ընդունված է եղել, որ բանակցությունները լինում են լայն եւ նեղ ձեւաչափերով»: Փորձեցին խանգարել, բայց չկարողացան նրան ետ պահել: Նրանք, դիմելով Ալիեւին (իմ առաջ չէին կարող այդպիսի պայման դնել), ասացին, որ խոսակցությունը պետք է շատ կարճ լինի: Երբ մենք առանձնացանք, նա ասաց, որ ժամանակը քիչ է: Ես էլ կաշկանդված էի եւ չէի կարող ինչ-որ բաներ ասել: Ես նրան հայտնեցի ո՛չ իմ անձնական, այլ մեր ընդհանուր դիտարկումները: Մենք մինչ այդ Հայաստանի Հանրապետության նախագահի, Անվտանգության խորհրդի անդամների հետ քննարկում էինք ունեցել: Նրան ասացի. «Սա սկզբունքային հարց է, մենք կարող ենք պատերազմական գործողությունները վերջացած համարել եւ պատրաստ ենք բանակցություններ վարել հարցի քաղաքական կարգավորման վերաբերյալ, բայց այդ սկզբունքային հարցի շուրջը»: Մենք շատ լավ գիտեինք Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը, ռազմական վիճակը, շատ լավ գիտեինք նաեւ Հայաստանի ներքաղաքական եւ ռազմական իրավիճակը: Քանի որ ժամանակը սուղ էր, բաց տեքստով ասացի, որ ես դիվանագետ չեմ, ոչ թե վերջնագիր եմ ներկայացնում, այլ ասում եմ ճշմարտությունը՝ եթե փորձեք Լեռնային Ղարաբաղի հարցը այլ ձեւով լուծել, իմացեք, որ կկրեք ավելի ծանր պարտություններ, մենք գիտենք ռեալ իրավիճակը: Նրանք չգիտեին մեր հնարավորությունների մասին: Դա այսօր էլ դեռ փակ

թեմա է, եւ չարժե անդրադառնալ: Իմ կարծիքով՝ նա հասկացավ: Ես ասացի, թե մենք թույլ չենք տա, որ հարցի քաղաքական լուծումը ձգձգվի այնքան, մինչեւ իրավիճակը փոխվի: Այստեղ, ես կարծում եմ, նա չկարողացավ գնահատել վիճակի լրջությունը:

1993 թվականի հուլիսին Ալիեւն ընտրվեց նախագահ, 1993 թվին սկսվեցին պատերազմական գործողությունները: Նրան թվաց, թե պատերազմական գործողություններով կարող է այդ հարցը լուծել: Ի դեպ, ես պետք է ասեմ, եւ այսօր դա շատ ավելի հստակ է, որ այդ պատերազմը թույլատրված պատերազմ էր: Միջազգային հանրությունը թույլ էր տվել դա: Կարող է՝ ես կոպիտ եմ ներկայացնում, բայց իմաստն այն էր, որ եթե կարող եք այդ հարցը պատերազմով լուծել՝ լուծե՛ք, բայց, իհարկե, դա անվերջ ժամանակով չի կարող լինել: 1993 թվականին սկսվեց այդ հարձակումը: Սկզբնական շրջանում ադրբեջանցիները ունեցան որոշ հաջողություններ, անգամ Օմարի լեռնանցքը մի պահ ետ վերցրին, Լաչինի միջանցքը սեղմվեց... Ինչո՞ւ եմ ասում՝ թույլատրված էր: Աշխարհը բացարձակապես չէր անդրադառնում այդ դաժան պատերազմին: Մենք դիմում էինք բոլոր միջազգային ատյաններին: Քար լռություն էր տիրում: Ես էլ եմ եղել արտասահմանում, նաեւ մարդ ենք ուղարկել, հանդիպումներ ենք ունեցել, բացատրել իրավիճակը: Այսպիսի մթնոլորտ էր տիրում՝ «Հա, կտեսնենք, կմտածենք...»: Հասկանալի էր, որ այն թույլատրված էր: Եթե Ադրբեջանն ունենար հաջողություններ, միջազգային հանրությունը մի գլխացավանքից կազատվեր: Մինչեւ ադրբեջանցիները կգրավեին՝ այդ ընթացքում Ղարաբաղը կհայաթափվեր, ճիշտ է, փախստականներ կլինեին, մի քիչ օգնություն կտային, բայց հարցը մի լուծում կստանար, եւ հինգ-տասը տարի հետո կմոռացվեր այդ խնդիրը: Բայց մեզ հաջողվեց պատերազմական գործողություններում բեկում մտցնել: Եվ ինչն է հետաքրքիր: Ադրբեջանը տարածքային ամենամեծ կորուստներն ունեցել է Ալիեւի իշխանության ժամանակ: Եթե մինչեւ Ալիեւը մեր կողմից ազատագրվել էր Շուշին, դե, Շուշին չեմ հաշվում, դա Ղարաբաղի տարածքում է, ֆորմալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքից դուրս նրանք մինչ այդ կորցրել էին Լաչինը, Քելբաջարը, ապա Ալիեւի օրոք՝ մնացած բոլոր տարածքները: Այս խնդիրը դրված էր շատ հստակ, որովհետեւ Ղարաբաղի պարագծով ապահով պաշտպանություն ստեղծելը գրեթե անհնար էր: Պետք էր ռազմաճակատի գիծը հեռացնել ԼՂԻՄ-ից ու կարճացնել: Ինչպես գիտեք, տասնապատիկ կարճացվեց: Եվ այդ խնդիրը լուծվեց: Ի՞նչն է հետաքրքիր: Այսօրվա գնահատականները: Ալիեւը, փաստորեն, կրեց ռազմական նման մեծ պարտություն եւ այդ ընթացքում տվեց հինգ շրջան: Այսօր Ալիեւը Ադրբեջանում ազգային հերոս է, կուռք է: Իսկ Հայաստանում

հաղթանակող ուժերն անընդհատ քննադատվում են: Բայց դա արդեն ուրիշ հարց է: Մի բան պարզ դարձավ այդ ընթացքում: Նախ՝ երկու հանգամանք. եթե միջազգային հանրության կողմից ոչ ֆորմալ, բայց լռելյայն այդ թողտվությունը կար, ապա դա երկարատեւ չէր կարող լինել, որովհետեւ իսկապես սարսափելի պատերազմ էր, մեծ քանակությամբ զոհեր կային: Մյուս կողմից՝ եւ՛ Ադրբեջանը, եւ՛ մենք ուժերի ծայրահեղ լարվածությամբ էինք պատերազմում: Բնական է, որ ինչ-որ ձեւ պետք էր գտնել այդ վիճակին վերջ տալու համար: Ադրբեջանցիները հասկացան, որ ռազմական գործողությունների միջոցով հարցի լուծումը, որն ընդունելի կլիներ աշխարհի համար, տապալվում է, չի ստացվում: Այդ հարցին մասնակցում էր Մինսկի խումբը՝ ձեւավորված 1992 թվականից: ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովում էր խումբ ստեղծվել Լեռնային Ղարաբաղի հարցով, որը ղեկավարում էր Ղրղզստանի խորհրդարանի նախագահը՝ Շիրինկուլովը: Այդպիսի միջամտություններ կային: Մենք որոշեցինք ակտիվացնել խորհրդարանական մասը: Տեղի ունեցավ իմ եւ Ռասուլ Գուլիեւի հանդիպումը Ղազախում: Պետք է ասեմ, որ շատ արդյունավետ հանդիպում եղավ: Մենք տեղեկություններ ունեինք, որ նրանք էլ են ուզում կոնտակտ ստեղծել: Բայց շատ զարմանալի մոտեցումներ ունեին: Ամեն անգամ, երբ ինչ-որ կոնտակտ պետք է ստեղծվեր ադրբեջանական կողմի հետ, միշտ դրվում էր այդ հարցը՝ ով ում կզանգահարի, որտեղ կհանդիպեն: Ստամբուլում Սեւծովյան վեհաժողովներից մեկի ժամանակ Իսա Ղամբարովը մյուս պատվիրակությունների ներկայացուցիչների միջոցով հաղորդեց, որ ուզում է ինձ հետ հանդիպել: Ես որեւէ խնդիր չէի տեսնում հանդիպման մեջ: Նրանք կարծես բարդույթներ ունեին, ասացին. «Իսկ ինքն ասում է՝ որտե՞ղ հանդիպենք»: Ասացի. «Որեւէ խնդիր չկա, հյուրանոցի ցանկացած սրահում կարող ենք հանդիպել»: Ակնարկեցին, թե արդյոք նրա հյուրանոցի համարում հնարավոր է: Նրան պետք էր, որ ես գնայի: Ասացի. «Ես խնդիր չեմ տեսնում, եթե դուք բան ունեք ասելու, ապա կարեւոր է՝ իմ, թե ձեր համարում կասեք»:

Նույնը տեղի ունեցավ Գուլիեւի հետ: Մենք գիտեինք, որ նրանք փնտրում են կոնտակտներ, եւ Շիրինկուլովի կամ մյուսների միջոցով տարբեր ձեւերով փորձում էին իրականացնել: Ես հարցը միանգամից լուծեցի. վերցրի հեռախոսը եւ զանգեցի Գուլիեւին: Նա շատ զարմացավ, որովհետեւ նրա համար կարեւոր էր, թե ով է զանգահարել: Ես ասացի, որ եթե մենք խոսելու բան ունենք, ի՞նչ կարեւոր է՝ ով է զանգել: «Որտե՞ղ հանդիպենք»,- հարցրեց: Ասացի. «Ինձ համար նշանակություն չունի, թե որտեղ կհանդիպենք: Ես մի շատ բնական եւ պարզ առաջարկություն ունեմ»: Իջեւանից Ղազախ սահմանի վրա մի փոքր, երկհարկանի, լավ կահավորված տուն կար, որը դեռ խորհրդային տա-

ժամանակներին կառավարական տուն է եղել: Այն հենց սահմանի վրա էր, բայց Հայաստանի տարածքում էր: Առաջարկեցի հանդիպել այդ տանը: Նա թե՝ գիտե՞ս, մեզ մոտ թերթերում կգրեն... Ասացի. «Դո՞ւ ինչ ես առաջարկում»: Ասաց. «Ես մի շատ լավ տնակ ունեմ, որը կցվում է ավտոմեքենային: Բերեմ այդ տնակը, այդտեղ հանդիպենք»: Ուրեմն՝ այդ տնակը Բաքվից պետք է քշեին բերեին Ղազախ, որպեսզի այդտեղ հանդիպենք: Այդ հանդիպումը շատ մեծ արձագանք գտավ, բոլոր լրատվամիջոցներն անդրադարձան: Բայց կարեւորն այն էր, որ այդ մարդը, իսկապես, կարողացավ ցույց տալ քաղաքական հնարամտություն, գիտակցեց, որ այդ պատերազմը տվյալ դեպքում օգտագործվում է երրորդ կողմից, որպեսզի մենք՝ երկու երկրներս, պատերազմենք, ինչը երկու կողմերին էլ տալիս է առաջին հերթին մարդկային զոհեր, տնտեսական ճգնաժամ... Այդ ամենը պետք էր շուռ տալ քաղաքական հողի վրա: Ես նրան ասացի. «Քանի՞ անգամ է պետք ապացուցելու համար, որ պատերազմական գործողություններով հարցի լուծում չի լինում»: Այդտեղ տեղի ունեցավ այն պայմանավորվածությունը, որ պետք է փորձ անել դադարեցնելու պատերազմը: Այն ժամանակ դեռ չէինք պատկերացնում, թե ինչպես պետք է անել, բայց պետք էր նախապատրաստական աշխատանք կատարել: Մենք համաձայնվեցինք, որ ամենաարագ եւ ամենահնարավոր ձեւաչափը ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի հանձնաժողովն է, որը ղեկավարում էր Շիրինկուլովը՝ դրանում ընդգրկելով նաեւ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հատուկ ներկայացուցիչ Կազիմիրովին: Շատ արագ՝ քսան օր էլ չտեւեց: Որոշվեց, որ Բիշքեկում պետք է տեղի ունենա այդ հանդիպումը: Խոսակցություն եղավ Ղարաբաղի ներկայացուցչության մասին: Իհարկե, միանշանակ այն կարծիքն էր հնչում, որ առանց Ղարաբաղի ներկայացուցիչների որեւէ որոշում չպետք է կայացվի: Ընդորում, մենք այդ հարցն էլ քննարկեցինք, որ նրանք պետք է լիարժեք մասնակցություն ունենան: Սակայն խնդիրը այն էր, որ հանդիպումը պետք է լիներ պառլամենտական վեհաժողովի հանձնաժողովի հովանու ներքո, իսկ Ղարաբաղը պառլամենտական հանձնաժողովի անդամ չէր: Բայց մենք ասացինք, որ ոչ թե հանձնաժողովի նիստ է տեղի ունենալու, այլ բանակցություններ Ադրբեջանի, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Ղրղզստանի եւ Ռուսաստանի՝ հանձին Կազիմիրովի՝ նախագահի հատուկ ներկայացուցչի միջեւ: Ես առաջարկեցի, որ մասնակցեն Ռուսաստանի Ֆեդերացիայի խորհրդի նախագահ Շումեյկոն, ԱՊՀ վեհաժողովի գլխավոր քարտուղար Կրոպովը: Որոշեցինք հարցին ավելի գործնական տեսք տալ: Հրավիրվեց նաեւ Ալանդյան կղզիների ներկայացուցիչը: Այդ ժամանակ քննարկվում էր հարց՝ Ալանդյան կղզիների մոդելը Ղարաբաղի կարգավիճակին հարմարեց-

նելու վերաբերյալ: Հանդիպումը տեղի ունեցավ Բիշքեկում, սկսվեց մայիսի 4-ից: Սկզբում մեր պատվիրակությունը մեկնեց, որը ղեկավարում էի ես: Իսկ Ղարաբաղի պատվիրակությունը ղեկավարում էր Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահ Կարեն Բաբուրյանը: Թվում էր, թե դա կլինի ինչ-որ հանդիպում, որ հակամարտող կողմերը եկել, ձեռք են սեղմում, բայց այն շատ արագ դրվեց գործնական հողի վրա: Հանդիսավոր ճառեր ասելուց հետո՝ խաղաղությունը լավ բան է եւ այլն, հանդիպում եղավ նաեւ Ղրղզստանի նախագահ Ակաեւի հետ: Այդ պրոտոկոլային արարողություններից հետո մենք հարցը դրեցինք այսպես՝ մենք եկել ենք այստեղ ոչ թե աշխարհին ցուցադրելու, այլ արդյունքի հասնելու համար: Շատ լրագրողներ կային, նաեւ՝ Հայաստանից, Ղարաբաղից: Որոշեցինք, որ նրանք բոլորը դուրս գան, եւ մնան միայն պատվիրակությունների ղեկավարները: Ռասուլ Գուլիեւը չէր եկել Բիշքեկ: Վերջին պահին ինչ-որ պատճառներ բերեց եւ ուղարկեց իր տեղակալ Ջալիլովին: Ես կարծում եմ, որ դա դիվանագիտական խորամանկություն էր: Մենք պայմանավորվել էինք, որ այդտեղ պետք է որոշում ընդունենք: Նա այդպես վարվեց, որպեսզի խուսափի պատասխանատվությունից: Ադրբեջանում մեծ աղմուկ էր բարձրացրել այն փաստը, որ Ղարաբաղն էլ է մասնակցում բանակցություններին, ինչը նշանակում է, որ նա ճանաչում է Ղարաբաղի իրավունքը: Որպես հիմնական խնդիր դրված էր հետեւյալը՝ կարո՞ղ ենք մենք բոլորս դիմել գործադիր իշխանություններին եւ ասել, որ պետք է հրադադար լինի, պետք է վերջացնել պատերազմը: Եվ՛ Ադրբեջանը, եւ՛ մենք պետք է ունենայինք գործադիր իշխանության հավաստիացումը: Հրադադարի մասին որոշում ընդունելու դեպքում գործադիր իշխանությունը պետք է արձանագրեր: Ես մեր գործադիր իշխանությանը այդպիսի լիազորություններ տվել էի: Առանց որեւէ նախապայմանի այն դիրքերում, որտեղ կանգնած ենք այսօր, հրադադար ենք հայտարարում, ու ռազմաճակատի գիծը սահման է դառնում երկու կողմերի միջեւ: Հարց էին դնում, թե այդ դեպքում այսքան պետք է ետ քաշվենք եւ այլն: Ո՛չ, հարցը դա չէ. հրադադար է կնքվում, ո՛չ զինադադար, ուղղակի կրակը դադարեցնում ենք, տեսնենք՝ հետագան ինչ ցույց կտա: Աշխատել ենք քսանչորս ժամ: Ընդմիջում է եղել, երկու ժամ քնել ենք, սնունդը բուտերբրոդներ էին, սուրճ, թեյ: Մեկուկես ժամ ընդհատել ենք, քանի որ մայիսի 5-ին Ղրղզստանի Սահմանադրության օրն էր, այնտեղ մեծ հանդիսություններ էին տեղի ունենում, եւ Շիրինկուլովը պետք է գնար մասնակցելու: Մեզ էլ հրավիրեց, ու գնացինք մասնակցելու: Նախատեսվում էր՝ եթե հրադադար կնքվի, ապա դա պետք է նշել: Մեզ պետք է հրավիրեին Իսիկկուլ: Հատուկ ինքնաթիռ էին պատվիրել, որը մեզ պետք է տաներ այնտեղ, որպեսզի մենք հանգստանայինք: Մենք

քսանչորս ժամ աշխատել ենք: Բոլորը համաձայն էին հրադադար կնքելուն: Ադրբեջանական կողմը պնդում էր, որ պետք է դիրքերի փոփոխություն լինի: Մենք դեմ էինք: Այստեղ ոչ թե հարցը այն էր, որ մենք չէինք ուզում մի քանի հարյուր մետր նրանց զիջել: Եթե սկսեինք նման հարցերի մեջ մտնել՝ այս դիրքը այսքան, այն դիրքը այնքան, ապա խճճվելու էինք, թաղվելու էինք այդպիսի հարցերի մեջ: Սա էր առաջին հարցը: Երկրորդ հարցն այն էր, թե Ղարաբաղը ինչ դեր է խաղալու այդ բանակցության մեջ: Մեր դիրքորոշումն այն էր, որ եթե ինչ-որ փաստաթուղթ ստորագրվի, ապա Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրությունը պետք է լինի: Դա, բնականաբար, նշանակում է Ղարաբաղի ճանաչում: Այդ վեճն է ծավալվել: Ցավոք, շատ դանդաղում էր պրոցեսը, որովհետեւ Ջալիլովը չուներ անհրաժեշտ լիազորությունները, եւ ընդհատում էր, գնում զանգահարում Բաքու, այնտեղից ինչ-որ ցուցումներ ստանում: Այնուամենայնիվ, գիշեր-ցերեկ այդ մարդիկ նստած աշխատում էին: Եվ ձեւակերպվեց փաստաթուղթը: Հիմնական կետը այն էր, որ կոչ է արվում հակամարտող կողմերին մայիսի 8-ից 9-ի գիշերը՝ ժամը տասներկուսին, հրադադար հայտարարել: Սա՛ էր արձանագրված: Զիջումների (նրանց ձեւակերպումն է) մասին խոսակցությունները կայանում են նրանում, որ չնշվեն պաշտոնները, ու վերջում ձեւակերպվեց այսպես՝ «Պատվիրակության անունից»: Չի նշվում, թե ով է Կարեն Բաբուրյանը, Ջալիլովը, Արարքցյանը, Շումեյկոն: Միայն երկու հոգու պաշտոններն էին նշված. Կազիմիրովինը նշված էր, որ նա Ռուսաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչն է, Կրոտովն էլ՝ միջպառլամենտական վեհաժողովի քարտուղարը: Մնացածիս պաշտոնները գրված չէին: Բոլորը գիտեին՝ ով է Բաբուրյանը կամ Շումեյկոն:

Բ. - Իսկ եթե դուք պահանջեիք, որ նշվեր, նրանք չէի՞ն անի:

Բ.Ա. - Դա ժամեր կտեւեր: Ասում էինք. «Ի՞նչ է եղել, պետք է գրենք, որ Ջալիլովը Ադրբեջանի Միլիմեջլիսի նախագահի տեղակալն է»: Նրանք ասում էին. «Ճիշտ է, Կարեն Բաբուրյանը Լեռնային Ղարաբաղից է, բայց ի՞նչ գրենք, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մա՞րզ»: Ես կարծում եմ, որ դա զիջում չէր, դա երկրորդականը կարեւորագույնից տարանջատելու սկզբունքն էր: Ինչեւիցե, փաստաթուղթը պատրաստվեց: Այն ընդամենը մեկ էջանոց փաստաթուղթ էր, բայց դրա վրա քսանչորս ժամ աշխատել էին պատվիրակության ղեկավարները: Սովորաբար դա անում էին փորձագետները: Երբ այդ ամենը պատրաստվեց, Ջալիլովն ասաց, որ ինքը պետք է խորհրդակցի Բաքվի հետ: Նա ետ եկավ եւ ասաց, որ իրենք համաձայն չեն ստորագրել այդ փաստաթուղթը, եւ հարց բարձրացրեց, թե մնացածը համաձա՞յն են այն ստորագրել, թե ոչ: Այստեղ տարբեր կարծիքներ կային. եթե Ադրբեջանը չի

ստորագրում, մյուսներս ինչո՞ւ ենք ստորագրում, հրադադարը Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ է: Մեր տեսակետն այլ էր: Մենք գտնում էինք, որ եթե փաստաթուղթը ստորագրեն մյուսները, նշանակում է մենք այդ կամքը արտահայտում ենք, իսկ Ադրբեջանը հրաժարվում է իր կամքն արտահայտելուց: Բայց դա շատ դժվար որոշում էր Ռուսաստանի եւ մյուս երկրների ներկայացուցիչների համար, մասնավորապես Ղրղզստանի ներկայացուցչի՝ Շիրինկուլովի համար, եւ նա այդտեղ որոշիչ դեր խաղաց: Ջալիլովը գնաց: Մենք բոլորս նստած մտածում էինք, այդ հարցն էինք քննարկում: Կազիմիրովը մի ելք առաջարկեց: Նա զանգահարեց Գուլիեւին եւ ասաց, որ մենք բոլորս կարող ենք ստորագրել, ինքը պատրաստ է գնալ Բաքու, ամեն ինչ բացատրել նրան, միգուցե նա նպատակահարմար գտնի: Գուլիեւն ասաց, որ Ջալիլովը իրեն ամեն ինչ ասել է, իրենք համաձայն չեն: Երբ այդպիսի կոշտ դիրքորոշում եղավ, որոշիչ դեր ունեցավ Շիրինկուլովը: Ես կստորագրեի, հարց չկար: Հարցը Շիրինկուլովի հետ էր կապված, նա էր նախաձեռնողը: Եթե Շիրինկուլովը հրաժարվեր ստորագրելուց, ապա Շումեյկոյի, Կազիմիրովի, մյուսների համաձայնությունը այն ուժը չէր ունենա: Նա ասաց. «Ես գիտեմ, որ ինձ շատ կմեղադրեն», եւ ստորագրեց: Նրանից հետո մենք ստորագրեցինք: Հետագա ընթացքը եղավ այն, որ Կազիմիրովը իսկապես վերցրեց այդ փաստաթուղթը եւ գնաց Բաքու: Գուլիեւի հետ հանդիպման ժամանակ նա Բաքվից զանգահարեց ինձ եւ ասաց, թե Գուլիեւն ուզում է երկու բառ փոխել, որը ձեռագրով ավելացրել է փաստաթղթի վրա: Գրված էր՝ «դիտորդներ», դարձրել էր՝ «միջազգային դիտորդներ»: Այդտեղ ես առարկություն չունեի: Գրել էինք՝ «զբաղեցրած տարածքներ», նա գրել էր՝ «գրաված տարածքներ»: Ես ասացի, որ այդ հարցում սկզբունքորեն դեմ եմ: Կազիմիրովն ասաց, որ ստորագրված է այս փաստաթուղթը, որտեղ ինչոր ավելացում է արված: Նա Գուլիեւին ասել էր. «Գայիր Բիշքեկ, այդ բառերը ինքդ մտցնեիր»: Այդ բառերի շուրջն այնքան վեճեր են եղել: Ես ասացի. «Գրում է՝ թող գրի, բայց նրա գրածը իրավական ուժ չունի, որովհետեւ մյուսները այս փաստաթուղթն են ստորագրել»: Ինչեւիցե, Գուլիեւը ստորագրեց: Արդեն ամսի ութն էր: Այդ պատճառով փաստաթղթում գրված է ամսի ութից ինը: Հայաստանի, Ղարաբաղի, Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայի միջոցով ֆաքսով ուղարկեցին իրենց համաձայնությունը, եւ հրադադարի մասին հայտարարությունը եղավ 1994 թվականի մայիսի 12-ի գիշերը: Այդ երեք-չորս օրվա հետաձգումը կապված էր Գուլիեւի ստորագրության պատմության հետ: Իսկապես, այդ հրադադարը հաստատվեց: Փաստորեն, ոչ մի ֆորմալ ձեւակերպում չկա: Բիշքեկյան պրոտոկոլը կոչ է: Զինադադարի մասին ֆորմալ պայմանագիր չկա, հրադադար է: Այսինքն՝ եթե կողմերից մեկը ցանկացած պահի սկսի ռազմական գործողությունները, դա չի կարող համարվել որեւէ պայմանագրի խախտում:

Բ. - Երբ Նախիջեւանում Ալիեւի հետ հանդիպեցիք, նա անհանգստացա՞ծ էր Նախիջեւանի համար, թե կարող է այնտեղ էլ սկսվեն պատերազմական գործողությունները:

Բ.Ա. - Նա չարտահայտվեց, բայց մի բան էր ակնհայտ. նա չէր կարող կանխագուշակել, որ երբ սկսվեն պատերազմական գործողությունները, որ ուղղությամբ կգնանք: Ես նրան ասացի, որ իրենք կշարունակեն պարտություններ կրել, եւ այդպես էլ եղավ: Զուտ մարտավարական առումով Հայաստանի պատերազմական գործողությունները դեպի Նախիջեւան նպատակահարմար չէին: Իհարկե, մի քիչ մտածող մարդը պետք է հասկանար: Կարծում եմ՝ նա այդ հանգամանքը հաշվի էր առել, որ մենք Նախիջեւանում խնդիր չունենք լուծելու: Ղարաբաղում ի՞նչ խնդիր ունեինք լուծելու: Կրճատել ռազմաճակատի գիծը, ապահովել Ղարաբաղի անվտանգությունը եւ հետագայում այդ հաջողությունները դարձնել բանակցության առարկա: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ նա չէր կարող մոռանալ Երասխավանի 1990 թվականի դեպքերը: Մենք էլի բանակցություններ վարեցինք, որ Նախիջեւանի այդ հատվածում եղել են ռազմական գործողություններ, եւ հաղթող կողմը եղել է Հայաստանը: Մենք շատ լավ գիտեինք, թե նրանք Նախիջեւանում ինչ ռեսուրսներ ունեն: Կարծում եմ՝ նա հասկանում էր, որ մենք չենք գնա այդպիսի քայլի, որ մի նոր խնդիր ավելացնենք:

Բ. - Իսկ երբ Ադրբեջանի ժողովակատի ներկայացուցիչը ներս մտավ, ի՞նչ վիճակում էր Ալիեւը, ինչպե՞ս ընկալվեց դա:

Բ.Ա. - Մենք ասացինք, որ հանդիպումը պետք է շատ կարճ լինի, բայց մի քիչ ձգձգվեց՝ մոտ ութ-ինը րոպե: Այդ ժամանակ դուռը բացվեց, Ադրբեջանի ներկայացուցիչը մտավ ներս ու ասաց, որ շատ երկար ենք խոսում: Ես զգացի, որ Ալիեւը նրան չի կարողանում ասել՝ դե, գիտե՞ք ինչ, հաշվի առեք, որ ես Գերագույն խորհրդի նախագահն եմ, կարող եմ եւ տասը րոպեից ավելի խոսել: Ասաց. «Հա՛, հա՛... մենք արդեն վերջացրել էինք, ուզում էինք ձեզ հրավիրել ներս»:

Բ. - Խեղճացած էր...

Բ.Ա. - Թեւաթափ էր: Հասկանո՞ւմ եք, մարդը եղել է կենտկոմի առաջին քարտուղար, քաղբյուրոյի անդամ, Խորհրդային Միության Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ: Միշտ ինքն է տիրապետել, ինքն է եղել դրության տերը: Այդ ժամանակ էլ նա ավելի բարձր պաշտոն էր գրավում: Ընդ որում, նա վերադարձել էր Մոսկվայից եւ նոր ընտրվել այդ պաշտոնում: Բայց այդ ժամանակ երեւում էր, որ նա չի տիրապետում իրավիճակին: Դրանից այդ մարդու

ուսերը ասես կախվեցին:

Բ. - Մանավանդ որ, ձեր ներկայությամբ եղավ այդ միջադեպը:

Բ.Ա. - Ճիշտն ասած, դրանից հետո ես փորձեցի նրան դուրս բերել այդ վիճակից: Կատակ արեցինք, սեղանին խուրմա էր դրած, վերցրի կերա, ասացի. «Վաղուց խուրմա չէի կերել»: Փորձեցի հարթել, նրան դուրս բերել այդ իրավիճակից:

Շարժման սկզբնական շրջանում մեծ հույսեր էինք կապում նաեւ Ռուսաստանի հետ: Սակայն եղան կտրուկ, սադրիչ քայլեր, այն է՝ Քաղբյուրոյի որոշումը եւ այլն: Որոշ առումով պետք է իմաստավորել Ռուսաստանի դերը այս շարժման մեջ: Ես չեմ ուզում գնահատել Գորբաչովի դերը Խորհրդային Միության «վերակառուցման» գործում, դա առանձին խոսակցություն է: Բայց ես ուզում եմ պատմել մի դեպք, որտեղ երեւում է, թե ինչ քաղաքական ուժեր եւ ինչ հոսանքներ կային: Այս պատմությունը ներկայացնում է նաեւ Ռուսաստանի, մասնավորապես Գորբաչովի մոտեցումները այս հարցի վերաբերյալ: 1991 թվականի նոյեմբերին Ղարաբաղում բավական լուրջ ընդհարումներ էին լինում: Անընդհատ գազամուղի պայթեցումներ էին իրականացվում: Հայաստանը նույնպես շատ նեղ պայմաններում էր հայտնվել, մասնավորապես 1991 թվականի հոկտեմբերի վերջին, նոյեմբերի սկզբին շատ սրվեց իրավիճակը: Նոյեմբերի 4-ին Ղազախում պայթեցվեց հիմնական գազամուղը: Հայաստանը գազից զրկվեց: Ադրբեջանցիները հայտարարեցին, թե իբր Կարմիր կամուրջի մոտ կան ավելի փոքր խողովակներ, վթարը այդտեղ է եղել: Այն չնչին քանակով գազը, որ գալիս էր Վրաստանի տարածքով, փակվեց: Այսինքն՝ Հայաստանի վրա տնտեսական ճնշումներ էին գործադրվում: Այս իրավիճակում 1991 թվականի նոյեմբերի 8-ին Գորբաչովը հանդես բերեց մի նախաձեռնություն, որը հրապարակվեց ռուսական, ինչպես նաեւ մեր բոլոր թերթերում: Հրապարակվեց պաշտոնական հաղորդագրություն, որում ասվում էր, որ Ադրբեջանի ու Հայաստանի սահմանային գոտում եւ Ղարաբաղում կտրուկ սրվել է իրավիճակը, եւ ԽՄ նախագահ Գորբաչովը շտապ կարգով հանդիպել է երկու հանրապետությունների ղեկավարների հետ: Ովքե՞ր էին մասնակցում այդ հանդիպմանը: Սա շատ կարեւոր է պատկերացնելու համար, թե ինչ ուժեր էին ընդգրկված այդ հանդիպման մեջ: Ադրբեջանի կողմից մասնակցում էին նախագահ Մութալիբովը եւ վարչապետ Հասանովը: Հայաստանի կողմից ներկա էին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Արարքցյանը՝ ես, եւ ՀՀ Կառավարության նախագահի պաշտոնակատար Հրանտ Բագրատյանը: Լեւոն Տեր-Պետրոսյանն արդեն ընտրվել էր նախագահ, բայց չէր անցել պաշտոնավարմանը, նա դեռ Գերագույն խորհրդի նախագահն էր: Մասնակցում էին Սիլաեւը՝ Ռուսաստանի

Գերագույն խորհրդի նախագահը, Վոլսկին, Բարաննիկովը՝ ներքին գործերի նախարարը, Շապոշնիկովը՝ պաշտպանության նախարարը, Վլադիմիր Լոբովը՝ Գլխավոր շտաբի հրամանատարը, Կալինինչենկոն՝ սահմանապահ զորքերի հրամանատարը, եւ Չերնոմիրդինը՝ գազամատակարարման նախարարը: Ո՞րն էր գաղափարը: Ադրբեջանական կողմը Խորհրդային Միության ղեկավարությանը կարողացել էր այնպես ներկայացնել, թե Հայաստանից ջոկատներ են գնում Ղարաբաղ: Այդ ժամանակ անգամ խորհրդային զորքերը փորձում էին ճնշել Ղարաբաղի բնակչությանը, եւ դիմադրությունը հիմնականում կազմակերպվում էր Հայաստանի ուժերով: Դա մասամբ իրականություն էր, իսկ հիմնական բեռը կրում էր Ղարաբաղի ժողովուրդը: Եվ առաջարկում էին հետեւյալ գաղափարը... Գորբաչովը ոչ թե առաջարկում էր, այլ հենց հանդիպման սկզբում ասաց, թե հիմա ընդունում են որոշումը: Հայաստանում արդեն եղել էր Անկախության հանրաքվեն, Հայաստանը հռչակվել էր անկախ պետություն: Բայց դեռ կային Խորհրդային Միությունը եւ ԽՍՀՄ նախագահը: Որոշումն այս էր՝ Հայաստանի եւ Ղարաբաղի սահմանը սարքվում է պետական սահման, տասը կիլոմետրանոց գոտի է ստեղծվում՝ պետական սահմանի բոլոր ատրիբուտներով: Դրա վերաբերյալ Կալինինչենկոն ասաց, որ իրենք կարող են դա շատ արագ անել: Այսինքն՝ կտրվում էր Հայաստանի եւ Ադրբեջանի կապը: Ղարաբաղը մնում էր Ադրբեջանի մեջ: Այսինքն՝ Հայաստան-Ղարաբաղ կապը դառնում էր պետական սահման: Հետեւանքներն ակնհայտ էին. Ղարաբաղը մնում էր անպաշտպան, Հայաստանն արդեն ոչ մի աջակցություն չէր կարող ցույց տալ: Եվ այդպիսի մեծ ուժեր էին ներգրավված, որպեսզի Հայաստանին ճնշեին, պարտադրեին այդ որոշումը: Հայաստանի տնտեսական վիճակը շատ ծանր էր: Հայաստանը կախված էր ռուսական գազից: Այն ժամանակ չկային այս կապերը, առեւտուրը: Դեպքը ցույց է տալիս Ռուսաստանի վերաբերմունքը այս հարցի նկատմամբ: Իհարկե, մենք անմիջապես դրեցինք Ղարաբաղի հարցը, թե այդ դեպքում Ղարաբաղի պարագծով նույնպես պետք է գոնե սարքել պետական սահման: Չնայած դա էլ լուծում չէր: Կասեին՝ կսարքենք թե չենք սարքի, ինչ զորքեր կպահպանեն՝ ձեր խնդիրը չէ: Գորբաչովը մեր բարձրացրած հարցն ընդհանրապես չէր ուզում լսել: Չեմ ուզում պատմել Մութալիբովի, Հասանովի ելույթները, ինչպես էին նրանք նկարագրում իրավիճակը՝ իբր Հայաստանը խառնում է ամբողջ Ադրբեջանը, որ Ղարաբաղի ժողովուրդը ուզում է ապրել Ադրբեջանի հետ, իսկ Հայաստանից խառնակիչներ էին գնում, որոնք կեղծ քարոզչության ներքո իրական վիճակը չէին էլ պատկերացնում... Գորբաչովը դա ներկայացրեց որպես կայացած որոշում: Այսինքն՝ նրա պատկերացմամբ՝ այդ հանդիպումը պետք է տեւեր

տասնհինգ-քսան րոպե, առավելագույնը՝ կես ժամ: Ինչ-որ փաստաթուղթ պետք է ստեղծվեր, որտեղ բոլորս պետք է մեր համաձայնությունը գրեինք: Կլինեին հանձնարարականներ ներքին գործերի նախարարին, սահմանապահ զորքերի պետին եւ այլն: Այդ դեպքում Չերնոմիրդինը երաշխավորում էր, որ գազամուղն անմիջապես կբացվի: Ինչպես տեսնում եք, Ադրբեջանը ներկայացել էր իր առաջին դեմքերով, Հայաստանը՝ ոչ: Տեր-Պետրոսյանը դեռ Գերագույն խորհրդի նախագահն էր: Մենք դիտավորյալ էինք այդ քայլը արել, որպեսզի ՀՀ նախագահին զերծ պահենք նման հնարավոր ճնշումներից:

Բ. - Դուք մինչեւ գնալը գիտեի՞ք, թե ինչ հարց է քննարկվելու:

Բ.Ա. - Ոչ, կոնկրետ չգիտեինք: Մենք հասկանում էինք, որ Ադրբեջանը կարողացել է այնտեղ նրանց համոզել ինչ-որ բաներում: Մենք կարծում էինք, որ կլինեն բանակցություններ, խոսակցություններ Հայաստանից Ղարաբաղ ջոկատներ տեղափոխելու գործընթացը սահմանափակելու մասին: Այն ժամանակ ուղղաթիռներով եւ ինքնաթիռներով կապը դեռ կար: Մտածում էինք՝ կոմունիկացիաների տեսակետից հարցեր կլինեն: Բայց որ այդպիսի կոնկրետությամբ հարցը կդրվի... Հարցը դրվել էր շատ հստակ՝ պետական սահման, եւ վերջ. այսինքն՝ ոչ մեկը չի կարող անցնել այդ սահմանը: Եվ, ինձ թվում է, հենց սա էր իմաստը՝ որ մեզ այդպիսի ներկայացուցչական կազմով պետք է դնեն անսպասելի վիճակի մեջ: Փաստորեն, ԽՍՀՄ կառավարության ազդեցիկ դեմքերը հավաքվել էին այդտեղ: Խաղաղության շղարշի տակ պետք է դադարեցնեին ռազմական գործողությունները: Այնտեղ կային ապարատի աշխատողներ, որոնք մեքենագրում էին, իսկ Գորբաչովը ուղղակի անձամբ թելադրում էր որոշումը, որ երեք րոպե հետո, երբ պայմանագիրը պատրաստ լինի, բերեն, որ մենք ստորագրենք: Մենք ասացինք, որ չենք կարող ստորագրել այդպիսի փաստաթուղթը: Այդ հանդիպումը, որն ըստ երեւույթին նախատեսված էր, որովհետեւ նա ընթացքում անընդհատ ասում էր, որ ինքը տարբեր հանդիպումներ եւ նիստեր ունի, տեւեց շուրջ վեց ժամ: Բոլորը զարմացած էին: Բանակցել ենք համարյա առանց ընդմիջման: Երկու անգամ երեք րոպեանոց ընդմիջում ենք արել. նա ինչ-որ հեռախոսային խոսակցություններ ուներ, գնում էր, երեք րոպե խոսում, գալիս էր, շարունակում էինք: Այդպիսի աննախադեպ հանդիպում է եղել: Պետք է ասեմ, որ երբ մենք մեր փաստարկներն էինք բերում, մեզ ամենաշատ հասկացող մարդը Բակատինն էր:

Բ. - Վոլսկին ինչպե՞ս էր իրեն պահում:

Բ.Ա. - Վոլսկին գերադասում էր սուր պահերին չխառնվել: Նա փորձում էր այս ուղղությամբ տանել՝ «Խաղաղություն է պետք, չէ՞ որ դուք տեսնում եք, որ մարդկային զոհեր կան...»: Չեմ կարող ասել, թե նա

Ադրբեջանին էր պաշտպանում:

Բ. - Չեզոք էր...

Բ.Ա. - Դիվանագիտական դիրքերից էր խոսում: Շատ սրվեց մթնոլորտը:

Բ. - Բակատինը ինչպե՞ս էր մեզ պաշտպանում:

Բ.Ա. - Բակատինն ասում էր, որ մեր փաստարկները պետք է քննարկենք: Նա ընդունում էր մեր փաստարկները, որ ասում էինք. «Չէ՞ որ փորձ կա, չէ՞ որ եղել են Սումգայիթի եւ ուրիշ մասսայական ջարդեր: Եթե Ղարաբաղը մնում է անկլավային վիճակում Ադրբեջանի կազմում, ապա ոչ մի դժվարություն չկա ժողովրդին այնտեղ ոչնչացնելու խընդրում»: Նա ասում էր, որ այդ հարցը լուրջ է: Իսկ Գորբաչովն ասում էր. «Ադրբեջանի՛ ղեկավարություն, դուք ասում էիք, որ այնտեղ ամեն ինչ խաղաղ կլինի»: Նրանք էլ ասում էին՝ իհա՛րկե... Մութալիբովը ավելի դիվանագիտորեն էր կարողանում ներկայացնել, իսկ Հասանովը չէր տիրապետում բանակցային կուլտուրային: Նա մի քանի անգամ ինչ-որ անհեթեթ բաներ ասաց, նրան ընդհատեցին եւ ասացին. «Նստի՛ր տեղդ, սրանից հետո քեզ թույլ չենք տալիս խոսել»: Համենայն դեպս, մոտ վեց ժամ տեւող այդ բանակցությունների ժամանակ մենք կտրականապես մերժեցինք: Եղան անգամ ծիծաղելի դեպքեր: Գորբաչովը վերցնում էր գրիչը եւ սկսում գրել, ասում էր. «Լավ, այդ դեպքում այսպես ձեւակերպենք»: Ես ասում էի. «Չէ՛, եկեք սկզբունքը հասկանանք, եկեք քննարկենք սկզբունքը, մենք դրան համաձայն չենք: Խոսքը ձեվակերպելը երկրորդական հարց է»: Նա ասում էր. «Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ է դա նշանակում: Խորհրդային Միության նախագահը գրիչը վերցրել է ձեռքը, գրում է, իսկ դու ասում ես՝ մի՛ գրիր այդ բառը»: Ասում էի. «Գիտե՞ք ինչ կա, այստեղ սղագրողներ կան, դուք ասեք՝ թող մեքենագրեն, ես ձեզ չեմ ստիպելու»: Ընթացքում նա ասաց, որ այդ դեպքում ինքը պետք է խոսի Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Զանգահարեց Տեր-Պետրոսյանին: Տեր-Պետրոսյանի պատասխանը եղավ հետեւյալը. «Այդտեղ է գտնվում մեր պատվիրակությունը, ես չեմ կարող հեռախոսով թելադրել, քանի որ նրանք լիազորված են այդ հարցերում»: Այսինքն՝ հեռախոսով հարցեր չեն լուծվում, ինչը Գորբաչովին էլ ավելի զայրացրեց: Նրա՝ Խորհրդային Միության նախագահ լինելու դերը կարծես սասանվում էր:

Ես սա պատմում եմ, որպեսզի մենք հասկանանք, թե ինչպիսի քաղաքական ելեւէջներ են եղել այդ ժամանակ, եւ ճիշտ գնահատենք: Սա պետք է ոչ միայն անցյալի, այլեւ այսօրվա համար: Փոքրիկ ընդմիջումներ էին լինում, որի ժամանակ մոտենում էին Սիլաեւը, ապա եւ Շապոշնիկովը: Նա ասում էր. «Գիտե՞ք ինչ, ես՝ որպես պաշտպանության նախարար, կապահովեմ, որ այնտեղ լինի համապատասխան ան-

վտանգություն»: Ասում եմ. «Գիտե՞ք ինչ, Դուք հիմա ինձ բառեր եք ասում... Կես ժամվա մեջ այդպիսի բան չի լուծվում»: Բոլորն իրենց հերթին ուզում էին մեզ համոզել, որ իրենք անվտանգությունը կապահովեն: Բայց մենք, միեւնույնն է, կտրուկ դեմ էինք: Բոլորը ասում էին, որ աննախադեպ է՝ Գորբաչովը վեց ժամ բանակցի: Վերջում արդեն մի տեքստ էր պատրաստված: Գորբաչովն ասաց. «Սա՛ է տեքստը, ստորագրո՞ւմ եք, թե՞ ոչ»: Ես ասացի՝ ո՛չ: Հիմնականում ես էի պատասխանում, որովհետեւ կարգավիճակով, պաշտոնով ես ավելի բարձր էի, քան Բագրատյանը: Բայց մենք, իհարկե, այնտեղ որպես թիմ էինք հանդես գալիս: Նա ասաց. «Այդ դեպքում ես հիմա հրավիրում եմ լրագրողներին եւ հայտարարում, որ մենք Ղարաբաղի հարցում արյունահեղությունը դադարեցնող մի շատ գործուն մեխանիզմ էինք առաջ քաշում, եւ Հայաստանի կողմը վիժեցրեց այն»: Ասացի. «Գիտե՞ք ինչ, դա Ձեր իրավունքն է, թե լրագրողներին ինչ կհայտարարեք, մենք էլ մեր ասածը կհայտարարենք»: Չնայած, ես շատ լավ հասկանում էի, որ Գորբաչովի հայտարարությունը աշխարհի համար այլ հիմք ունի, մեր հայտարարածը՝ այլ: Նա թե. «Ո՞նց, դուք պետք է հակասե՞ք իմ հայտարարությանը»: Ասացի. «Բայց ես չեմ հակասելու Ձեր հայտարարությանը, ես ասելու եմ այն, ինչ տեղի է ունեցել այստեղ: Այսքան մարդիկ կան, նրանք էլ կտեսնեն, եթե ես մի բառ խեղաթյուրեմ, Դուք կարող եք պատասխան արձագանք տալ»:

Այն ժամանակ ինքնաթիռները շատ քիչ էին, օրը մեկ ինքնաթիռ էր թռչում Երեւան - Մոսկվա չվերթով: Այն ժամանակ մենք Ռուսաստանի Դաշնությունում դեսպանատուն չունեինք, ունեինք մշտական ներկայացուցիչ, որը Ֆելիքս Մանուկյանն էր: Ես նրան ասել էի, որ ինքնաթիռը պետք է պահել, ուշացում տալ, որ մենք գիշերը Մոսկվայում չմնանք, որպեսզի տարբեր ճնշումներից զերծ մնանք: Այդ ընթացքում նրանցից շատերը՝ Սիլաեւը, անգամ Բակատինը համոզում էին մնալ: Հետո ես Բակատինի հետ շատ հանդիպումներ եմ ունեցել: Մեր մեջ եղել է համակրանք: Նա, իսկապես, մտավորական մարդ էր, ժողովրդավարության կողմնակից: Նրանք ասում էին. «Գիտե՞ք ինչ, եկեք գիշերը մնացեք Մոսկվայում, կհանգստանաք, կմտածենք, կխորհրդակցենք»: Ես ասում էի. «Չէ, մենք Մոսկվայում չենք կարող մնալ, պետք է վերադառնանք Երեւան, շատ գործեր ունենք»: Եվ երբ Գորբաչովն ասաց, որ ինքը հենց հիմա կհրավիրի լրագրողներին, ասացի, որ մենք մեկնում ենք, կհասնենք Երեւան, կիմանանք, թե ինչ են իրենք ասել, եւ մենք համապատասխան արձագանք կտանք: Նա խորհրդակցությունը փակեց՝ ասելով, որ Հայաստանի պատվիրակությունը կարող է գնալ, իսկ մյուսները մնում են, եւ իրենք հրավիրում են լրագրողներին: Կոպիտ ասած՝ դա նման էր մեզ դուրս վռնդելուն:

Բ. - Շանտաժ էր...

Բ.Ա. - Մենք դուրս եկանք, որպեսզի հասնենք ինքնաթիռին: Երբ հասանք «Վնուկովո» օդանավակայան, Ֆելիքս Մանուկյանը դեռ այնտեղ էր, ասաց, որ Գորբաչովն ինձ կանչում է հեռախոսի մոտ: Գնացինք, նեղ միջանցքներով հասանք ինչ-որ տեղ՝ մի առանձին սենյակ: Գենսեկին հաղորդեցին, որ ես հասել եմ օդակայան: Ասացին, որ սպասենք, որովհետեւ պետք է այնպիսի կապ միացնեն, որ այլ տեղերից չի լսվում, եւ մոտ տասը րոպե կտեւի մինչեւ միացնեն: Ինքնաթիռը արդեն երկու-երեք ժամ սպասում էր: Մենք չէինք կարող մտնել ինքնաթիռ եւ ուղեւորներին ամեն ինչ բացատրել: Այդպես էլ եղավ: Երբ մենք մտանք ինքնաթիռ, ուղեւորներին թվաց, թե մեր քմահաճույքի համար ենք ուշացել: Այդպիսի դեպքեր շատ են լինում, բայց դա երկրորդական է: Միացրին Գորբաչովի հետ, եւ նա շատ չոր խոսեց, ասես ուզում էր ձայնին սառը տոն տալ: «Ուրեմն այսպես, -ասում է,- լավ, ես մամուլին չեմ հրավիրում, ոչ մի բան չեմ ասում: Մենք մի պաշտոնական հաղորդագրություն ենք տալիս մամուլին, որ քննարկել ենք իրավիճակի սրման հետ կապված հարցեր»: Ճիշտն ասած, ես այդքան վստահություն չունեի, ասացի. «Միխայի՛լ Սերգեյիչ, եթե Դուք դա պատրաստեք, ես երկու ժամ հետո Երեւանում եմ, լավ կլինի, որ մենք այդ տեքստը ունենանք: Եթե նորմալ է տեքստը... միեւնույնն է, վաղը պետք է հրապարակվի մամուլում»: Նա նորից չզսպեց իրեն ու պոռթկաց, որ Խորհրդային Միության պրեզիդենտին չի կարելի հակաճառել կամ ընդդիմանալ:

- Նորից դուք շարունակում եք...

- Մենք չենք շարունակում, շատ պարզ բան եմ ասում: Եթե դուք տալիս եք հաղորդագրություն եւ ինձ դրա մասին տեղեկացնում եք, ուրեմն՝ տեքստն էլ պետք է փոխանցեք ինձ, եթե ոչ, ուրեմն՝ Դուք ազատ եք ցանկացած հաղորդագրություն տալ:

- Չէ, ինչ հաղորդագրություն էլ որ լինի... Դուք այստեղ ասացիք, որ դուք էլ կհրավիրեք ժուռնալիստներին եւ կբացեք փակագծերը, այդպես չպետք է լինի:

- Ես համաձայն եմ, որ չբացենք փակագծերը, ընդհանուր խոսքեր ասվեն, բայց այդ դեպքում ես պետք է տեսնեմ տեքստը, որովհետեւ կարող է այնպիսի բաներ գրված լինեն, որ մեզ համար ընդունելի չեն:

- Լավ,- ասաց Գորբաչովը:

Նա անորոշ պատասխան տվեց, որից ես չհասկացա՝ նա կուղարկի՞ տեքստը Երեւան, թե՞ չի ուղարկի: Երբ հասանք Երեւան, ուշ գիշեր էր: Հանդիպեցինք Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Երկուսուկես-երեք ժամ տեւած թռիչքի ընթացքում Գորբաչովն ուղարկել էր տեքստը: Ընդհանուր նախադասություններ էին գրված՝ ապահովել խաղաղություն....

հանդիպումն արդյունավետ էր.... կողմերն ասացին, որ զինված գործողություններին պետք է դադար տալ եւ այլն: Բայց մի փոքր ակնարկ կար, այն, որ միգուցե պետք է քննարկել տասը կիլոմետրանոց շերտի ստեղծման հարցը: Ոչ թե ստեղծվում է, այլ՝ պետք է քննարկել, շարունակել բանակցությունները: Ես ասացի, որ ընդունելի չէ, որովհետեւ չէի ուզում, որ տասը կիլոմետրանոց շերտի ստեղծման մասին միտքն ընկներ մամուլ: Գորբաչովը նորից զանգ տվեց: Գիշերվա ժամը երեքը-չորսն էր: Ես ասացի, որ այդ միտքը պետք է հանել:

- Դուք հասկանո՞ւմ եք, այսքան մարդ հավաքվել է, մենք պետք է այդ գաղափարը իրականացնեինք, բայց չենք իրականացրել: Դուք չեք ուզում, որ այդ գաղափարն էլ լինի: Բայց մենք պետք է մի բան պայմանավորվենք: Լինելու է այս պաշտոնական հաղորդագրությունը, եւ ուրիշ ոչ մի մեկնաբանություններ: Այսինքն՝ եթե ինձ են հարցեր տալիս, ասում եմ՝ սա է պաշտոնական հաղորդագրությունը, ձեզ են հարցնում՝ պատասխանում եք նույնը:

Անցել են տարիներ, տասնհինգ տարի է անցել: Միգուցե պետք չէր, որ այդ բառերը մնային: Բայց այդ ժամանակ մենք մտածեցինք, որ հարցը լուծվեց: Այսինքն՝ չի լուծվել այնպես, ինչպես նրանք առաջարկում էին: Այստեղ էր կարեւորը՝ ո՞ր խնդիրն ենք մենք լուծում: Նա պետք է իր նախարարների ներկայությամբ բարձրության վրա գտնվեր, սակայն որովհետեւ չկարողացավ դրված հարցը լուծել... Ու եթե այստեղ էլ այդ միտքը հանվեր, նա իսկապես փակուղու մեջ կհայտնվեր:

Բ. - Դա ադեն հարց չէր, հարցը դուք լուծել էիք:

Բ.Ա. - Ես նրան չասացի, որ համաձայն եմ այդ պաշտոնական հաղորդագրությանը: Ես նրան ասացի, որ մեկնաբանություններ չեմ տա: Ասացի, որ համաձայն չեմ այդ տասը կիլոմետրանոց գոտուն: Բայց ասում եմ՝ եթե թերթերը բացենք, շատ չեզոք է գրված, ակնարկի ձեւով՝ միգուցե... իմաստ ունի... Ահա այսպես վերջացավ այդ պատմությունը: Ո՞րն է այս պատմության ուսանելի կողմը: Մենք պետք լավ հասկանանք, որ, իսկապես, մենք ունեցել ենք որոշ աջակցություն Ռուսաստանի կողմից, հատկապես հետագայում՝ Ելցինի իշխանության ժամանակ: Բայց միշտ պետք է հասկանալ, որ դա հավերժ չէ, որ իրավիճակը, ելնելով նրանց շահերից, ինչ-որ դրդումներից, կարող է փոխվել: Եվ չի կարելի շահագործել այդ մոտեցումը, միշտ հույս ունենալ, թե դու կունենաս այդ աջակցությունը, եւ դրա համար չանես այն քայլերը, որ պարտավոր ես անել: Բացի պաշտոնական հաղորդագրությունից՝ մամուլում այլ հրապարակում չի եղել: Սա, ինձ թվում է, շատ ուսանելի է, որպեսզի հասկանանք, թե քաղաքականության մեջ ինչ երեւույթներ են լինում:

Պատմում է Արկադի Մանուչարովը (1988 թ. Արցախյան շարժման առաջնորդ, «Կռունկ» կոմիտեի եւ ԼՂ «Տնօրենների խորհրդի» նախագահ) 15.07.1991 թ., Ստեփանակերտ

Ա.Մ. - 1965 թվականին Բագրատ Ուլուբաբյանի, Սերգեյ Շաքարյանի, Արամ Բաբայանի, Գուրգեն Գաբրիելյանի եւ մյուսների հետ (տասներեք հոգով) ստորագրել եմ Խորհրդային Միության կոմկուսի կենտկոմին ուղղված՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՍՀ-ին միացնելու պահանջագիրը: Այդ պատճառով ստիպված եղա հեռանալ Ղարաբաղից:

1988 թվականի փետրվարին՝ հենց հանրահավաքի ժամանակ, ինձ ընտրեցին «Կռունկ» կազմակերպության նախագահ: Հետո այն փոխարինվեց «Տնօրենների խորհուրդ»-ով:

1988-ի նոյեմբերի 16-ին մարզկոմի մի աշխատակցուհի ցերեկը հանդիպել է կնոջս՝ Լիլյային, ու հայտնել, որ մարզկոմում խոսակցություն է լսել ինձ ձերբակալելու մասին: Հոկտեմբերի 3-ից սկսած՝ ձերբակալել էին շինանյութերի կոմբինատի ութ աշխատողներին՝ գլխավոր ինժեներ Առնոլդ Աբրահամյանին, արտադրամասի պետ Անտոն Պապայանին, գլխավոր հաշվապահ Արտեմ Կաֆյանին, Հադրութի գրանիտի քարհանքի պետ Սուրեն Աթայանին, Հարավ գյուղի քարհանքի պետ Վազգեն Մելքումյանին, արհմիության նախագահ Ռոբերտ Սարգսյանին, արտադրամասի պետ Գեորգի Պետրոսյանին, բրիգադավար Ալեքսան Բարսեղյանին: Նրանց երկու-երեք ամիս Շուշիում կամ Աղդամում պահելուց հետո ժամկետից շուտ բաց էին թողել: Ռոբերտ Սարգսյանը ազատվելուց հետո պատմում էր, որ բանտախցում մենակ էին պահում: Խուց է մտնում մի ադրբեջանցի, ցույց տալիս իմ լուսանկարները եւ ասում, որ եթե չստորագրի Մանուչարովի դեմ քննիչի ներկայացրած ցուցմունքը, կենդանի դուրս չի գա բանտից: Մազերից բռնում են ու գլուխը խփում պատին: Վախից ստորագրում է: Բոլորին անխնա ծեծում էին, սպառնում սպանել, ընտանիքին ոչընչացնել: Ձերբակալել էին Ցուրա Ջհանգիրյանին: Սպառնում էին Քա-

ղաքացիների սպասարկման բյուրոյի պետ Ռուբեն Գրիգորյանի ճակատագրին արժանացնել նրան: Յուրան կեղծ վկայություն է տվել եւ ազատ արձակվել: Սակայն ԽՍՀՄ գլխավոր դատախազին, Միխայիլ Գորբաչովին բողոքի նամակներ գրեց անարդարությունների, Շուշիի բանտում հայերի վիճակի մասին: Եվ նրան կրկին ձերբակալեցին ու սպանեցին:

Երեկոյան իմ մտերիմներից Ռոլես Աղաջանյանը մնաց ինձ հետ մինչեւ ժամը տասնմեկն ու գնաց: Կինս պահանջում էր, որ տանը չգիշերեմ, հնարավոր է, որ գան իմ ետեւից: Թոռնիկս, երեխաներս տանն էին, ուստի չէի ուզում ընտանիքիս միայնակ թողնել: Մինչ այդ Արկադի Վոլսկին ու Հենրիխ Պողոսյանը հավաքել էին շարժման տղաներից Ռոլես Աղաջանյանին, Էռնեստ Հայրապետյանին, Ռոբերտ Քոչարյանին ու Բորիս Առուշանյանին եւ պահանջել՝ հայտնեն իրենց անունից, որ ես ինքնակամ հեռանամ Ղարաբաղից: Ես պատասխանեցի, որ չեմ հեռանա, քանի որ գիտեմ նրանց նպատակը. գնամ՝ հետո կասեն. «Ձեր առաջնորդը փախավ»: Վոլսկին տղաներին երեւանյան բնակարանի լուսանկար էր ցույց տվել, թե իբր իմն է, ու կարող եմ այնտեղ ապրել: Դա եւս շանտաժի մի ձեւ էր: Տղաները մի մեծ խմբով նոյեմբերի 14-ին՝ ժամը երեքին, մտան Հենրիխ Պողոսյանի աշխատասենյակ՝ պահանջելով չանհանգստացնել ինձ: Կուսմարզկոմի առաջին քարտուղարն ասաց, որ իբր իմ դպրոցական ընկերն է, ոչինչ չունի իմ դեմ: Ջհանգիրյան Յուրան, որը լավ գիտեր Պողոսյանին, ասաց. «Ուրեմն՝ պատրաստվում են ձերբակալել Մանուչարովին»: Գիշերը ես ու կինս չքնեցինք: Գիշերվա ուղիղ ժամը երեքին հնչեց դռան զանգը: Կինս հարցրեց՝ ո՞վ է: Դռան հետեւից պատասխանեցին. «Շուշիի բանտից եմ, ինձ Բարսեղյան Ալեքսանդրն է ուղարկել: Արկադի Մանվելովիչը տա՞նն է»:

Բարսեղյան Ալեքսանդրը իմ ղեկավարած շինանյութերի կոմբինատի մարմարի արտադրամասի բրիգադավարն է, որին ձերբակալել էին: Սակայն նրան Ստեփանակերտում բոլորը որպես «Սաշա» են ճանաչում, ուստի հասկացա, որ դռան հետեւում փոխանձ է:

- Տանը չի,- պատասխանեց կինս:

- Բայց ես նրան շատ կարեւոր լուր ունեմ հաղորդելու,- համառեց այցելուն:

- Տանը տղամարդ չկա, չեմ բացի դուռը, առավոտն արի:

Պատուհանից տեսանք, որ նա մուտքից դուրս եկավ երկու այլ անձանց հետ: Փողոցի անկյունում նրանց ուրիշ մարդիկ էին սպասում: Չորսն անց կեսին կրկին հնչեց դռան զանգը: Պատուհանից տեսա, որ զինվորական մեքենաներով, զրահամեքենաներով շրջապատել են տունը: Ամենուր զինվորներ, սպաներ էին:

- Ո՞վ է,- հարցրեց Լիլյան:

- Անմիջապես բացեք դուռը,- հնչեց դռան հետեւից:

- Իսկ ովքե՞ր եք, ես անծանոթ մարդկանց առաջ դուռը չեմ բացի:

- Բացե՛ք, եթե ոչ՝ դուռը կջարդենք:

- Դուռը չեմ բացի, եթե հարց ունեք, առավոտյան կգաք:

Հինգ հոգի էին դռան մոտ, որոնք սկսեցին դուռը ջարդել: Լիլյան մուրճով սկսեց հարվածել ջեռուցման խողովակին: Դղրդոցից արթնացան մեր եւ շրջակա մյուս շենքերի բնակիչները: Արթնացավ ողջ քաղաքը: Կես ժամ չանցած՝ շենքի մոտ հավաքվեց տասնհինգ հազար մարդ: Մեր մուտքի չորրորդ հարկի հարեւան Սուրեն Ասրյանն իր փոքր երեխաների ու մոր հետ եկավ, կանգնեցին դռան մոտ՝ արգելելով հատուկ նշանակության ջոկատայիններին ջարդել դուռը: Փողոցում ընդհարումները զինվորականների եւ բնակչության միջեւ շարունակվեցին մինչեւ ցերեկվա ժամը տասներկուսը: Վիրավորվեցին տասնութ հոգի: Զինվորականներին շենքի մուտքից դուրս քշեցին: Ինձ ձերբակալելու օպերացիան ղեկավարում էր ԽՍՀՄ գլխավոր դատախազության ավագ քննիչ Յուրի Անանեւիչ Կարնեշովը: Ես այդ պահին տանիք բարձրացա եւ չորրորդ մուտքով ցած իջա: Այնտեղ ինձ էր սպասում Ռոլեսը, որի հետ դուրս եկանք զինվորականների օղակից: Երեք օր մնացի Ստեփանակերտում: Կինս՝ Լիլյան, նոյեմբերի 18-ին հանդիպել էր ԽՍՀՄ գլխավոր դատախազ Սուխարեւին ու պահանջել ձերբակալման թույլտվության փաստաթուղթը՝ նախապես իմանալով, որ այն գոյություն չունի: Հետո հետին թվով նման փաստաթուղթ էին պատրաստել:

Նոյեմբերի 20-ին, շաբաթ օր էր, Ռոլեսի հետ մեկնեցինք Խաչին տափ: Վատ եղանակի պատճառով Երեւանից ուղղաթիռ չեկավ: Հայաստանյան մեքենաների շարասյունը տուֆ քար էր բերել, որ Խաչին տափում ավան կառուցեն: Գլխավոր ինժեներն առաջարկեց շարասյան հետ Երեւան մեկնել: Տղաները չհամաձայնվեցին: Ռոլեսի եւ նրա երկու աշխատակիցների հետ «Ժիգուլի» մեքենայով ճանապարհվեցինք: Ամեն տեղ ստուգում էին փաստաթղթերը: Կեսգիշերին անցանք սահմանը: Հիշում եմ՝ «Աշոտ Երկաթ» ռեստորանում ընթրեցինք, ապա գիշերեցինք Սեւանում:

Երեւանում երեք օր ընդհատակում մնացի: Կարծում էի, որ շուտով Ստեփանակերտ կվերադառնամ ու կշարունակեմ ղեկավարել շարժումը: Ամեն օր Վազգեն Մանուկյանի տուն էի գնում, որտեղ հավաքվում էր «Ղարաբաղ» կոմիտեն: Ես չէի թաքնվում, քանի որ գիտեի, որի իմ աշխատանքում ոչ մի խախտում չեմ արել: Իհարկե, փաստաբան էր պետք, որ այդ ամենը ձեւակերպեր ու հիմնավորեր: Մասնակցեցի թատերական հրապարակի հանրահավաքին, սակայն ելույթ չէի ունե-

նում: Նոյեմբերի 24-ին օպերայի դահլիճում շարունակվում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Ես ազատ էի զգում ու ոչ մի վտանգ չէի տեսնում, ուստի ներկա էի նստաշրջանին: Նոյեմբերի 28-ին՝ ժամը երկուսին, մտա Գրողների տուն, որտեղ տեղավորված էր շարժման շտաբը: Մի երկու ժամ այնտեղ մնալուց հետո գնացի իմ նախկին աշխատավայրը՝ Գյուղատնտեսական շինարարության նախարարություն: Վաղուց էի խոստացել այցելել փոխնախարար Արշավիր Բալայանին: Տասը րոպե չանցած՝ ներս մտան երեք հոգի: ՀԽՍՀ ներքին գործերի փոխնախարարը՝ քաղաքացիական հագուստով երկու աշխատակիցների հետ: Փոխնախարարը դիմեց ինձ. «Դուք Արկադի Մանուչարո՞վն եք»: «Այո»,- պատասխանեցի ես: «Եկե՛ք մեզ հետ»,- հրամայական տոնով ասաց ներքին գործերի փոխնախարարը:

Ինձ մտցրին մենախուց: Խնդրեցի թույլ տալ զանգել ընտանիքիս, մորս: Արգելեցին: Հետո խնդրեցի հաղորդել Աշոտ Մանուչարյանին, թե որտեղ եմ գտնվում: Հերթապահ սպան հրաժարվեց: Որոշ ժամանակ անց Մոսկվայից եկած ռուս սպայի ուղեկցությամբ տարան «Էրեբունի» օդակայան, ռազմական ուղղաթիռ նստեցրին: Թռիչքի ուղղությունից կռահեցի, որ դեպի Ղարաբաղ ենք թռչում: Տեսա, որ ուղղաթիռը Աղդամում է իջել: Առավոտյան ժամը տասն էր: Մտածեցի, որ երեւի Աղդամի բանտ են բերել: Օդակայանում հսկայական ամբոխ էր հավաքվել: Հասկացա, որ ինձ բերել են ցույց տալու խաժամուժին: Հինգ աղդամցիներ, այդ թվում՝ օդանավակայանի պետը, մոտեցան ու սկսեցին հայհոյել, սպառնալից խոսքեր ասել: Ամբոխն արդեն մոտենում էր: Ուղեկցողները ինձ հրմշտելով արագ զինվորական մեքենայի մեջ խցկեցին ու ութսուն ավտոմատավորների ուղեկցությամբ անցան Աղդամի միջով, ուղղվեցին դեպի Շուշի: Մտածում էի՝ մի՞թե վաթսունամյա մարդուն այսքան շատ զինվորներ են ուղեկցում: Ճանապարհին զրահամեքենայի մեջ խցկեցին: Շուշիի բանտ հասանք: Բանտի աշխատողները՝ տոնական զգեստներով, անհամբեր սպասում էին իմ ժամանմանը: «Ո՞ւր եք ինձ բերել, հասկանո՞ւմ եք ձեր արածը»,- դիմեցի ես ռուս սպային: «Իսկ ի՞նչ էիր կարծում»,- պատասխանեց նա:

Ես հասկացա, որ ինձ սպասում են ծաղր ու ծանակը, կտտանքները, մահը...

Քաշքշելով հենց սալարկված հրապարակում հանեցին շորերս ու մեկուկես ժամ խուզարկեցին: Ստուգում էին եղունգներս, մազերս, ատամներս, աչքերս, ականջներս, ռունգերս... Բանտապետի տեղակալը երկու ցուցամատները խրեց բերանիս մեջ ու թափով քաշեց: Պատռվածքից արյուն հոսեց: Հետո ստիպեցին տասնյակ անգամ կքանստել: Ցուրտ էր: Շապիկս գցեցի ոտքերիս տակ, քանի որ մերկ ոտքերով սառը քարին չէի դիմանում: Մի այնպիսի հարված ստացա, որ գետնին փռվեցի, ու շապիկի մասին էլ մոռացա:

Դեկտեմբերի 3-ին ինձ Մոսկվայի Լեֆորտովո բանտ տեղափոխեցին: Սակայն դեկտեմբերի 28-ին կրկին Շուշի բերեցին: Տասներեք օր մահապարտների խցում էին պահում: Ջուր, ուտելիք չէին տալիս: Դռան մոտ զինվորներն էին պահակություն անում, որ չգողանան ադրբեջանցիները: Լեֆորտովոյի բանտը Շուշիի համեմատ սանատորիա էր հիշեցնում: Տասնհինգ ադրբեջանցիներ բանտ էին թափանցել ու, քշելով զինվորներին, փորձում էին կեսգիշերին ջարդել դուռն ու տանել ինձ: Ցերեկը նստել չէին թողնում: Հիվանդացա: Բժշկին խնդրեցի, որ թույլ տան գոնե տասնհինգ րոպե պառկեմ: Բժիշկը գրեց. «Թույլ տալ տասնհինգ րոպե պառկել»: Ընթրիքից հետո, որ տաքացրած ջուր էր, հանկարծ հրամայում էին՝ պառկի՛ր: Իսկ տասնհինգ րոպեից՝ վեր կա՛ց: Երբ դուրս էին բերում, պետք է ձեռքերս ծոծրակիս պահեի: Սակայն աջ ձեռքս ուսից դուրս էր ընկած, ու ոչ մի կերպ չէի կարողանում այն ծոծրակիս պահել: Երբ ասում էի, որ ձեռքս չեմ կարող ծոծրակիս պահել, հայհոյում էին՝ ես քո հայ...

Ծեծելու համար ասես առիթ էր պետք:

Քննիչները ստիպում էին ինձ հանձն առնել չիրագործած մեղքեր: ԽՍՀՄ դատախազության հատուկ կարեւոր գործերի ավագ քննիչ, գեներալ Կոնստանտին Մայդանուկը մի թուղթ էր կազմել ու ստիպում էր ստորագրել: Այնտեղ գրված էր, թե ես հիսուն հազար ռուբլի կուսմարզկոմի առաջին քարտուղար Կեւորկովին եմ կաշառք տվել, երեսուն հազար ռուբլի՝ 1988 թվականի փետրվարին Կեւորկովին փոխարինած Պողոսյանին, տասը հազար ռուբլի՝ Ստեփանակերտի կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Զավենին: «Եթե ստորագրես, կփոփոխեմ խափանման միջոցները»,- ասաց ավագ քննիչը: Ես հրաժարվեցի ստորագրել: «Ես կձերբակալեմ քո ընտանիքի բոլոր անդամներին,- սպառնաց ավագ քննիչը,- երբ լսես որդուդ ոռնոցը, երեւի կխնդրես, որ քեզ ստորագրելու հնարավորություն տանք»:

1989 թվականի ապրիլի 9-ին ինձ տեղափոխեցին Բուտիրկայի բանտ, որտեղ մնացի մինչեւ 1990-ի ապրիլի 4-ը: Ինձ հետ բանտախցում տեղավորեցին պրոֆեսիոնալ մատնիչ 1944 թվականին ծնված Սերգեյ Նիկոլայեվիչ Շամինին: Ճաղատ ու նիհար մարդ էր: Ու իբր գեներալի որդի է: Ներկայացավ որպես բաքվեցի, որ այնտեղ կոոպերատիվ ունի: Նրա փաստաբանը բաքվեցի Վարդան Աբեղյանն էր, որը շատ էր հետաքրքրվում իմ անձով: «Բոլոր հայերը բռնագաղթել են Բաքվից,- ասաց նա,- հիմա Երեւանում եմ ապրում: Եթե նամակ գրելու լինես ձերոնց կամ շարժման տղաներին, սիրով կփոխանցեմ»:

Երբ գալիս էին դուրս տանելու, Սերգեյը հիվանդ էր ձեւանում ու մնում էր բանտախցում: Ես շորերի ծալվածքին ու թղթերին նշաններ

էի թողնում ու երբ ետ էի գալիս, տեսնում էի, որ քրքրված, խուզարկված են: Նա իմ փաստաթղթերի մեջ էր ինչ-որ բան փնտրել: Հասկանում եմ, որ նա իմ գրառումները, Գորբաչովին, գլխավոր դատախազին, Գերագույն դատարանին ուղղված դիմում-բողոքները, դատարանում իմ ելույթների սեւագրերն էր որոնում: Սերգեյ Շամինն ասում էր. «Ես Բուդապեշտում մարզական հանդերձանքի սեփական ֆիրմա ունեմ, ես շատ հարուստ եմ, եթե դու շատ փող ունես, ապա կարող եմ դրանք Բուդապեշտում տարադրամի վերածել»: Նա ստուգում էր՝ փող ունեմ ես, թե ոչ: Իսկ Մայդանուկն ասում էր. «Գնանք քո տան պատերը քանդենք, տեսնենք՝ պատերի մեջ ինչքան փող ես թաքցրել»: Ասում եմ. «Գնանք, բայց ես փող չունեմ»: Շամինն ասում էր. «Բանտից հենց դուրս գանք, կարիք չկա, որ այս երկրում ապրես, ես քեզ կօգնեմ հեռանալ այս երկրից»: «Ես Լեռնային Ղարաբաղի մեկ քառակուսի մետրն անգամ չեմ փոխի արտասահմանյան եւ ոչ մի արտոնյալ վիճակի հետ»,- ասում էի ես:

Ես սկսեցի վախենալ, որ նա կարող է թունավորել ինձ: 1989 թվականի նոյեմբերի 2-ին հացադուլ հայտարարեցի: Բանտապետ Սեմյոնովը, ցույց տալով ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավորների ստորագրությամբ ինձ ուղղված նամակը, համոզում էր, որ հացադուլը ամենեւին էլ պայքարի հարմար եղանակ չէ: Ես պատասխանեցի, որ չեմ ուզում փչացնել նրանց տոնական տրամադրությունները, նոյեմբերի 7-ին եւ 8-ին ժամանակավորապես դադարեցնում եմ հացադուլը, իսկ 9-ին կշարունակեմ՝ մինչեւ ԽՍՀՄ գլխավոր դատախազ Սուխարեւը դադարի խախտել սահմանադրությունը եւ ճանաչի իմ՝ Չարենցավանի օկրուգի պատգամավորի կարգավիճակը, փոխի իմ նկատմամբ խափանման միջոցը: Նոյեմբերի 10-ին գործն ուղարկվեց դատական մարմիններին, եւ հացադուլն արդեն իմաստ չուներ:

Մատնիչը հայտնվեց 1989-ի ապրիլին: Տասնչորս մետր քառակուսի մակերեսով 231-րդ խցի մեջ յոթ հոգով էինք: Քնատեղերը երկհարկանի էին: Ինձ՝ որպես մեծահասակի, առաջին հարկում էին տեղ տվել: Ալեքսեյը, որը գազանների աճեցման սովխոզի աշխատող էր եղել, քննիչի սեղանին տեսել էր իր նամակը՝ ուղղված կնոջը, որը ուղարկել էր Սերգեյ Շամինի միջոցով: Արդեն ոչ ոք չէր կասկածում, որ Շամինը մատնիչ է: Շամինին մեր խցի անդամները սովի նստեցրին: Նա հատակին էր քնում, իրավունք չուներ բոլորի հետ նստելու: Բայց մարդիկ չուզեցին մեղք վերցնել ու սպանել նրան: Իսկ նա պնդում էր, որ ինքը մատնիչ չէ: Հաջորդ օրը, երբ մեզ մեկ ժամով ման գալու տարան, ասացին, որ Շամինին պատրաստվում են քննիչի մոտ տանել: Երբ վերադարձանք, տղաներից մեկը՝ Վալերան, որին «Լեպարդ» էին ասում (նա զինապահեստից վեց հարյուր քառասուն ատրճանակ էր գողացել, ինչի համար էլ դատապարտվել էր), ասաց, որ իր բաճկոնը չկա, իսկ գըրպանում փաստաթղթեր կային: Մյուսները եւս հայտնեցին, որ թղթեր են կորել: Իմ գրառումների տետրից բացակայում էր հինսունութ էջ: Վեց անգամ դիմել եմ բանտապետին՝ պահանջելով վերադարձնել գրառումներս: Խոստացան վերադարձնել: Բանտի բաժնի պետ մայոր Գերասիմովը, ի վերջո, վերադարձրեց թղթերս ու ասաց, որ հույս ունի, թե Շամինին հանդիպելու դեպքում նրան չեմ խփի: Խոստացա: Իսկ Սաշա Բալանդերը, որը սկզբնական շրջանում մեր խցում էր մնում ու դատվելուց հետո ճաշը բաժանողն էր (կրկեսի աշխատող էր եղել, ավտոմեքենաների առջեւի ապակիները հանում, հազար ռուբլով վաճառում էր), հայտնեց, որ Սերգեյ Շամինը 126-րդ խցում է գտնվում: 126-րդ խցի բանտարկյալներն ասացին, որ Շամին ազգանունով մարդ չի եղել իրենց մոտ: Իսկ Սաշան ասաց, որ առավոտյան են նրան տեղափոխել:

Երբ 1988-ին Անդրեյ Սախարովը այցելել էր Լեռնային Ղարաբաղ, ցանկություն է հայտնել հանդիպելու ինձ հետ: Նա այդտեղ տեղեկացավ, որ ինձ Մոսկվա են տեղափոխել: Երկրորդ անգամ 1989-ի վերջին Սախարովը Գալինա Ստարովոյտովայի հետ այցելեց Բուտիրկայի բանտ: Նրան ասել են, թե իբր ես այնտեղ չեմ: Հետո դռան դիտանցքից են թույլ տվել տեսնել ինձ: Նրանք տեսել են, որ խցի տղաները շախմատ են խաղում, իսկ ես այս-այն կողմ եմ քայլում: Գալինան, օգտագործելով հարմար առիթը, հայտնեց բանտարկյալներին. «Տղանե՛ր, այս ծերունին մարդու իրավունքի պաշտպան, ակադեմիկոս Անդրեյ Սախարովն է, որը եկել է այցելելու ժողովրդական պատգամավոր Արկադի Մանուչարովին»: Անդրեյ Դմիտրիեւիչը դիտելու պահին սկսեց հազալ: «Այս ի՞նչ է,- ասաց ակադեմիկոսը,- էլի սկսեցի հազալ»: Կես ժամում բանտարկյալներն իմացան, որ ակադեմիկոս Սախարովը եկել է Մանուչարովին այցելության: Մինչեւ գիշերվա ժամը չորսը Բուտիրկայի բանտարկյալները գդալներով չրըխկ-չրըխկացնում էին՝ գոչելով՝ ազատություն Մանուչարովին: Հետո ինձ Նահապետ անունով կոչեցին: Գալինայի բողոքից հետո ինձ համար թերթեր ու հեռուստացույց բերեցին:

Բանտում միակ հանդիպումը եղել է 1990 թվականի մայիսի 14-ին Գալինա Ստարովոյտովայի եւ Շավարշ Քոչարյանի հետ, որոնք բերել էին պատգամավոր ընտրվելու մասին տեղեկանքը: Հանդիպեցինք բանտապետի տեղակալ Պոլիցկու գրասենյակում: Հետո ինձ համար բերեցին, Բակու՛ր, քո պատրաստած տեսաֆիլմը իմ մասին:

Մայիսի 29-ին՝ ժամը տասներկուսին, հայտնեցին. «Մանուչարովին՝ պատրաստվել դուրս գալուն»: Հասկացա, որ ինձ ազատում են: Ուրախ չէի: Երկար ժամանակ մի ընտանիքի նման էինք ապրում: Ժամը չորսին դուրս եկա: Ինձ էին սպասում Բորիս Դադամյանը, Գալինա Ստարովոյտովան, Սերժ Սարգսյանը:

Պատմում է Մուրադ Պետրոսյանը (ԼՂՀ ԳԽ (1991-95) եւ ԱԺ (1995-2000) պատգամավոր) 10.11.2005 թ., Ստեփանակերտ



Մ.Պ. - Ես իմ գործունեությունը սկսել եմ որպես պարետ՝ մինչեւ 1993 թվականը: Ներքին կարգուկանոն չկար, քանի որ ո՛չ դատախազությունն էր աշխատում, ո՛չ ռուսական զորքը կար, ո՛չ մեր ոստիկանությունն ուժ ուներ: Եվ որոշեցինք ստեղծել պարետատուն:

Շարժման՝ բոլորի կողմից ընդունված լիդերը Իգոր Մուրադյանն էր՝ «Ղարաբաղ» կոմիտեի անունից: Զորի Բալայանն էլ ազդեցիկ լիդեր էր, սակայն գործադիր մասով թերի էր:

1988 թվականին գնացի Երեւան շարժման հետ կապված մի հարցով Իգորին բողոքելու: Ռեյգանը եկել էր Մոսկվա՝ Գորբաչովի հետ հանդիպման: 1988 թվականի մայիսի 30-ին միտինգ կազմակերպեցին ժողովրդի անունից Գորբաչովին դիմելու նպատակով, որ եթե վերակառուցում է, արդարության հաստատում, ապա մեր պահանջը վերին ատյանների լուծմանն է սպասում: Շարժումը «Կռունկն» էր ղեկավարում՝ Արկադի Մանուչարովի գլխավորությամբ: Զարմացա, որ միայն Գորբաչովին են դիմումը հասցեագրում: Ամբիոնից ելույթ ունեցա, թե այդ դեպքում ինչու հենց Ռեյգանի ժամանման օրը միտինգ արեցինք, ճիշտ կլինի ավելի բարձր ատյանին դիմելը: Բայց Մանուչարովը եւ մի քանի հոգի համաձայն չէին, գտնում էին, որ մեզ համար վատ կլինի: Ժողովուրդը Մանուչարովի տեսակետին հետեւեց: Բայց մի խումբ մոտեցավ ինձ եւ ասաց, որ համաձայն է ինձ հետ: Ես այդ հարցով գնացի Երեւան, բայց Իգորն արդեն չկար: Ինձ ասացին, որ կոնկրետ լիդեր չկա, բայց եթե այդպիսի հարց ունեմ, մոտենամ Վազգեն Մանուկյանին: Այդպես ծանոթացա «Ղարաբաղ» կոմիտեի տղաների հետ: Նրանք համամիտ էին իմ տեսակետին, բայց որեւէ բան փոխելու համար արդեն ուշ էր: Տղաների, Ղարաբաղի հետ կապը Իգորն էր պահում: Մեր այդ հանդիպումից երկու ամիս հետո՝ օգոստոսին կամ հուլիսին, երբ Վազգեն Մանուկյանը եւ մյուս տղաները ճանաչելու, ծանոթանալու նպատակով եկել էին Ղարաբաղ, ինձ զանգեցին, տեղյակ

պահեցին, որ գալիս են: Մինչ այդ Երեւանում, երբ այնտեղ արդեն միտինգներ էին լինում, մենք մի անգամ էլ հանդիպեցինք: Ղարաբաղում նրանք հանդիպեցին Քոչարյանի, շարժման բոլոր հայտնի դեմքերի հետ: Ես շատ զարմացա, երբ Վազգեն Մանուկյանը մոտեցավ ինձ եւ ասաց, որ իրենք որոշել են՝ Ղարաբաղում ես լինեմ իրենց ներկայացուցիչը, իմ միջոցով որեւէ բան փոխանցեն կամ ուղարկեն: Որոշեցինք ինքնապաշտպանական կազմակերպություններ ստեղծել: Միտքն իմն էր, բայց մտածում էի, որ իրագործել չեմ կարող: Պնդեցին, որ այդ գործը ինձ է հանձնվում, իրենք երկար են մտածել եւ կանգ են առել հենց ինձ վրա: Ես հանձն չառա: Մտածում էի, որ այդ գործն իրականացնելու համար համապատասխան հեղինակություն չունեմ: Երկու ամիս անց՝ սեպտեմբերին, Խոջալուում երկու մեքենայում մարդկանց գլուխները ջարդում են: Մերոնք վեր են կենում առանց զենքի գնում Խոջալուի ջարդարարների դեմ: Ես այդ օրը ներկա չեմ եղել, բայց պատմում են, որ թուրքերը ընդամենը երկու հրացանով մերոնց հարյուր հոգանոց ամբոխին, որ «զինված» է եղել փայտերով, քշել են: Ես գիտեի, որ Իգոր Մուրադյանը խոսել է զենք ուղարկելու մասին: Ինձ թվում էր՝ ուղարկել են, բայց ես տեղեկացված չեմ: Խոջալուի դեպքից հետո մատս կծեցի. ես կարծում էի, թե ազդեցիկ մեկը զբաղվում է նման գործերով:

Գնում եմ Երեւան, կոմիտեում Վազգեն Մանուկյանին, մյուսներին ասում, որ ընդունում եմ նրանց առաջարկությունը: Սկսում եմ համագործակցել «Ղարաբաղ» կոմիտեի հետ: Այդ գործում շատ կարեւոր էին ճիշտ կողմնորոշումը եւ բաշխումը: Օրինակ՝ ուղարկել են տասը զենք: Ո՞ր գյուղը եւ ո՞ւմ ուղարկել: Բացում էի քարտեզը եւ ուսումնասիրում: Կանչեցի գիտակ մարդկանց, նշեցինք ամենաթույլ, առավել օգնության կարիք ունեցող գյուղերը: Առանձնացրինք հինգ սահմանամերձ՝ թուրքի բերանում գտնվող գյուղեր՝ Բունիաթլուն, Թալիշը, Դահրազը, Աղբուլաղը, Ղազանչին, որն անտառի մեջ էր, անգամ մեքենայի համար կարգին ճանապարհ չուներ, եւ եթե անձրեւ գար, չէինք կարող օգնության գնալ:

Զենքի տրամադրումն իրականացվում էր կապերի, ծանոթությունների միջոցով, օրինակ՝ Երեւանի «Հայէլեկտրոն» կամ Կիրովականի մի որեւէ գործարանի տնօրենը, ենթադրենք, Ռոբերտ Քոչարյանի հետ է առվորել: Դեմիրճյանի գործարանն իր օգնությունը Մանուչարովի միջոցով էր իրագործում: Կապվում էին, ասում, որ եթե Ղարաբաղում զենքերը հավաքել են, իրենց մոտ կա, գնանք, բերենք: Այդպես բերում էին ու վստահելի մարդկանց միջոցով շրջաններում ցրում: «Ղարաբաղ« կոմիտեն այդ ժամանակ այն հզորությունը չուներ, ինչ կենտկոմը: Սակայն աստիճանաբար ազդեցություն ձեռք բերեց:

Սումգայիթյան ջարդերից հետո Գորբաչովն ընդունում է Զորի Բա-

լայանին եւ Սիլվա Կապուտիկյանին: Հայաստանը մեկ ամսով դադարեցնում է հանրահավաքներն ու գործադուլը: Մայիսի 19-ին, երբ այդ մեկ ամիսը դեռ չէր լրացել, Կինոյի տանը «Ղարաբաղ» կոմիտեի եւ Խորհրդային Հայաստանի հանրության ներկայացուցիչների հանդիպումը կայացավ: Սերուցքը, մտավորականությունը պետք է որոշեր՝ ինչ անել, քանի որ մայիսի 26-ին ուլտիմատումը վերջանում էր, մնացել էր յոթ օր: Ներկա էին Սիլվա Կապուտիկյանը, Սոս Սարգսյանը, Զորի Բալայանը: Պետք է առաջարկություններ անեին, քննարկեին: Սիլվան հաճախ է խոսում անցյալում թույլ տված որոշ սխալների, բացթողումների մասին: Նրանք առաջին սխալը հենց այդ օրն են թույլ տվել: Այդ օրվա նրանց ելույթներից ես հասկացա, որ առաջարկում են լռել, պատասխան հակահարված չտալ Սումգայիթի դեպքերին: Իմ մեկնաբանությունը, առաջարկությունն այսպիսին էր՝ երբ դու քաղաքակիրթ ես, դիմացինդ՝ ոչ, եւ նա խփում է, իսկ դու ձայն չես հանում, նա էլի կխփի՝ մտածելով, որ եթե ձայն չես հանում, ուրեմն ուժ չունես, եթե ունենայիր՝ անպայման կպատասխանեիր: Ասածիս իմաստն այն չէ, թե մենք էլ «սումգայիթյան ջարդեր» կազմակերպենք, այդպիսի բան անելու համար գեներդ պետք է թույլ տան: Նկատեցի, որ Ղարաբաղից ոչ մեկը չի եկել: «Կռունկ»-ից էլ մարդ չկար: Ես Իգորին չէի ճանաչում, որովհետեւ նա կապ ուներ Կարապետյան Արկադիի (նրան Դաշնակ Ագո կամ Կոմսոմոլի Ագո էինք ասում) եւ Շիրինյան Վիգենի հետ: Իգորի ժամանակ ինքը հանդես է եկել որպես միանձնյա կառավարող, իսկ Վազգեն Մանուկյանի ժամանակ որոշումները կայացնում էին կոլեկտիվ: Ագոյին ասում եմ. «Դուք չեք գալի՞ս, սա կարեւոր հանդիպում է»: Տեղյակ պահեցի, որ ես գնում եմ, եւ եթե Իգորը ինձ չի ճանաչում, ապա ես նրան կներկայանամ որպես Ագոյի եւ Վիգենի ներկայացուցիչը: Ինձ համար անհասկանալի էր Իգորի եւ Զորիի հարաբերությունների բնույթը: Զորի՞ն էր Իգորին պետք իր կապերով եւ շփումներով, թե՞ Իգորը՝ Զորիին՝ իր ազդեցության ոլորտներով:

Մինչ այդ՝ մարտի 15-ին՝ Սումգայիթի դեպքերից հետո, իմ ձեռքը սղագրություն էր ընկել: Կենտկոմի բաժնի վարիչն էր եկել, շրջկոմի բյուրոյին հրավիրել ժողովի: Հետո այդ ժողովի հաշվետու սղագրությունն աղբարկղն էին նետել: Շրջկոմի աշխատողներից մեկը այն հանում է եւ բերում տալիս ինձ: Խոսել էին Վաչիկ Գրիգորյանը, եւս մի քանի հոգի: Բոլորն էլ հայրենասիրական ելույթներ էին ունեցել: Բաժնի վարիչն ասում է. «Ես հասկանում եմ ձեզ, բայց իրավիճակն այսպիսին է: Քաղբյուրոն բաժանված է երկու թեւի: Ես խոսում եմ եւ՛ Միխայիլ Գորբաչովի, եւ՛ Լիգաչովի անունից: Բայց այս ամենին պետք է վերջ տալ: Դուք ասացիք ձեր կարծիքը, բայց Քաղբյուրոյի, Գորբաչովի եւ Լիգաչովի կարծիքներն այսպիսին են: Եթե չեք կարող, ասեք՝ չենք կա-

ղող....»: Մերոնք չեն ասում, թե չեն կարող: Սրանից ելնելով՝ Մոսկվայի դիրքորոշումը պարզ էր ինձ համար: Այդ պատճառով ես անպայման ուզում էի ներկա լինել այդ ժողովին:

Երբ Սիլվա Կապուտիկյանն ու Զորի Բալայանը Կրեմլում հանդիպում էին ունեցել Գորբաչովի հետ, նրանց ասել էին. «Ընկե՛ր Կապուտիկյան, ընկե՛ր Բալայան, արյուն է թափվելու, եւ այդ ամեն ինչի պատասխանատվությունը դուք եք կրելու»: Արկադի Մանուչարովը, Հենրիխ Անդրեյեվիչ Պողոսյանը, Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը չէին դիմանում Մոսկվայի ճնշումներին: Եթե Սովետի դեմ դուրս գալու եւ խոսելու Սախարովի համարձակությունը չունեին, կարող էին դիմում գրել, հրաժարվել իրենց պաշտոններից:

Միայն զենքը ուղարկելը չէր, կարեւոր էր նաեւ կազմակերպչական գործը: Օրինակ՝ Ղազանչի գյուղին, որ փոսի մեջ էր, զենքը միայն իմ կամքով չէի կարող տալ: Համաձայնեցրի Վազգեն Մանուկյանենց հետ, որ Վանքը, Արջաձորը վտանգ չունեն՝ ոչ մեջքից կխփեն, ոչ կողքից, բայց դրանք մեծ գյուղեր են, պետք է բաժանել ձորակների եւ, որպես ջոկատների, դրանց եւս զենք մատակարարել: Կապ անցկացրի, որ հարկ եղած դեպքում իրար օգնեն: Ղարաբաղի բոլոր շրջաններում իրականացրի այդ գործը: Հադրութի շրջանի մեծ գյուղերից մեկի՝ Թաղլարի պաշտպանության համար դիմեցի Աղաբեկյան Արթուրին, որը օդափոխիչների խարկովյան գործարանի Հադրութի մասնաճյուղի պետն էր:

Հրապարակում փող էին հավաքում զենք ձեռք բերելու համար, ուղարկում Մոսկվա, եւ ոչինչ չէին ստանում: Հիմնեցինք Միացյալ շտաբ, որում մտնում էր նաեւ Դաշնակցությունը, որն իրենից ուժ էր ներկայացնում: Շտաբի անդամներից էին Արկադի Կարապետյանը՝ որպես դաշնակցական, ռազմական ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը, Ռոլես Աղաջանյանը եւ խոշոր ջոկատների, շրջանների ներկայացուցիչներ՝ մոտ տասը հոգի:

Մինչ այդ՝ 1988 թվականին, Չարենցավանի գործարանում ինքնաշեն նռնակներ եւ ուրիշ զենքեր էին պատրաստում: «Ղարաբաղ» կոմիտեն զգուշացրեց, որ ամեն եկողի զենք չտան, դա պետք է կենտրոնացված լինի: Վազգեն Մանուկյանը իմ եւ Շիրինյան Վիգենի հետ ուղարկում է Համբարձում Գալստյանին: Չարենցավանի գործարանի ղեկավարներից Յուրա Իշխանյանը, որը ստեփանակերտցի տղա էր, ասաց, որ միայն Պետրոսյան Մուրադին է զենք տալու: Ես եւ Վիգեն Շիրինյանը մեկնեցինք: Վիգենը զենքի մի խմբաքանակն անցկացնում է Մարտակերտ: Հաջորդ օրը, երբ մյուս խմբաքանակը ես պետք է անցկացնեի, բռնվեցի: Յուրան Չարենցավանում «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարներից էր, հնարավոր է՝ նրա հեռախոսային խոսակցու-

թյունը լսած լինեին: Ես անց էի կացնում տասնութ հրացան եւ նռնակ: Ռազմական դրություն էր: Պարետային ժամ էր հայտարարված: Ինձ բռնեցին այնտեղ, որտեղ ռազմաօդային զորքն էր եւ Օմսկից գործուղված ՊԱԿ-ի գործակալներն էին: 1988 թվականի դեկտեմբերն էր: Մեկ ամիս քննեցին: Դատախազության կրիմինալիստիկայի փորձագետները մեր հայերն էին: Պարետային վարչական տույժով բավարարվեցին:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո, երբ Գորբաչովը Հայաստանում էր, Սովետաշենում «Ղարաբաղ» կոմիտեի տղաների հետ հանդիպման ժամանակ ավելի մոտիկից ճանաչեցի նրան:

Ես եւ ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը նույն բանտախցում էինք նստած, իսկ կողքի բանտախցում Վազգեն Մանուկյանն էր: Հունվարին ազատվեցի բանտից:

Քիչ առաջ խոսում էի ճնշումների մասին: Կամ պետք է դիմանաս այդ ճնշումներին եւ աշխատես, կամ թողնես եւ դուրս գաս: Բայց դիմանալու, աշխատելու, վերեւից եկած հրամանը մասամբ կատարելու համար պետք է համոզված եւ վստահ լինես քո արժանիքներին, որ քեզ չեն հանի: Գոյություն ունի նաեւ քաղաքական կարճատեսություն, ասենք, Ռոբերտ Քոչարյանի, Լեւոն Տեր-Պետրոսյանի, Վազգեն Մանուկյանի, Աշոտ Մանուչարյանի, Վանո Սիրադեղյանի կողմից:

Մինչեւ իմ բռնվելը՝ նոյեմբերին, ամբողջ Ղարաբաղը խոսում էր, որ դեկտեմբերին հարցը կլուծվի: Բորյա Առուշանյանը, որ «Կռունկի» անդամներից էր, իսկ երբ «Կռունկը» դարձրին «Տնօրենների խորհուրդ», նա նախագահն էր, լիդերներից մեկը, իմ մտերիմը: Ասում եմ. «Բորյա՛, ո՞նց եք ասել, թե դեկտեմբերին հարցը կլուծվի»: Բորյան պատասխանում է. «Հենրիխ Անդրեյեվիչը՝ կուսմարզկոմի առաջին քարտուղարը, ասել է՝ ինձ կխաչեք, եթե դեկտեմբերին գործը գլուխ չգա»: Ղեկավարներ են, էլի, իրար հետ գցում-բռնում են՝ էսօր էսպես ասաց, վաղը մի ուրիշ բան կասի: Հենրիխ Անդրեյեվիչին համարում էի ամենախելացի մարդը: Բայց դե կուտը կերան:

Քոչարյանը՝ որպես քաղաքական դեմք, տարբերվում էր մյուսներից իր պահվածքով: Միգուցե ի՞նձ էր թվում: Բոլոր հարցերում՝ ծխելուց եւ խմելուց սկսած, նա խիստ էր մյուսների եւ ինքն իր նկատմամբ թե՛ կռվի, թե՛ քեֆի ժամանակ: Պահանջում էր, որ իրեն այդպիսին ընդունեն: Մանուչարովի խոսքը շատ զգացմունքային էր, գեղարվեստական: Քոչարյանի խոսքը, ելույթը կոռեկտ էր: Նա մեր կողմից ընդունված էր: Քոչարյանին եմ հարցնում.

- Ռոբի՛կ, ի՞նչ է կատարվում: Եթե Մոսկվան այդպիսի բան որոշած լիներ, լրատվամիջոցները՝ «Վրեմյա»-ն, «Պրավդա»-ն, կխոսեի՞ն դրա մասին:

- Ես քո «Վրեմյա»-ին հավատա՞մ, թե՞ գենսեկին:

- Ուզում ես ասել՝ գենսեկն է՞ ձեզ ասել, որ հարցը լուծված է:

- Հա՛,- ու խոսում է մեծամիտ տոնով, իբր՝ ի՞նչ ես ժամանակ խլում, երբ այդ հարցը հաստատված է: Իսկապես, խիստ բարկացել էր: Երբ նրանք դեռ կոմսոմոլ էին, ես արդեն զբաղվում էի քաղաքականությամբ: Յոթերորդ-ութերորդ դասարանից ես քաղաքական հարցերով վիճաբանում էի ուսուցիչներիս հետ:

Դեկտեմբեր ամիսն անցավ: Հարցը լուծելու փոխարեն՝ տղերքին ձերբակալեցին, «Ղարաբաղ» կոմիտեն գլխատեցին: Որոշվեց ժողով կազմակերպել: Մարդիկ վախենում էին, քանի որ Շուշիի բանտը թուրքերի ձեռքին էր: Այն ժամանակ բյուրոկրատական սկզբունքներով, մեկ-երկու հոգու խոսքով չէր հարց որոշվում: Լեռնային Ղարաբաղի պարետ գեներալ Մակաշեւի հետ հանդիպումը կայացավ «Ղարմետաքս» կոմբինատի ակումբում: Վեր կացա, խոսեցի, նկարագրեցի իրավիճակը, բոլորի ներկայությամբ հարցրի. «Ռոբի՛կ, դեկտեմբերն անցավ, բա գործը ի՞նչ եղավ»: Ասում է. «Ցածրաձայն ասա»: Պատասխանում եմ. «Ինչո՞ւ ցածրաձայն, բարձր-բարձր կասեմ, դրա մասին ամբողջ ժողովուրդը գիտեր, բոլորին հայտարարված էր»: Ասում է. «Գենսեկը չէր, Շահնազարովն էր զանգել»: Այս պատմությունը թարմ եմ պահել հիշողությանս մեջ, որ թերթիս մեջ՝ «Что делать?», անդրադառնամ այդ խնդրին: Նմանատիպ բան այսօր կարող է հայտարարել Պուտինը: Բայց դա Պուտինից կամ Գորբաչովից չէր կախված: Սա 1956 թիվը չէ: 1988 թվականին ժողովրդի աչքը բաց ես արել, խփում ես, գլուխը ջարդում, էլ զինվորը չի գալիս:

Նրանք քաղաքական-ստեղծագործական մտածողություն չունեն, ինչը մարդու մեջ բնատուր է լինում: Ինձ համար դա մեծ ցավ է: Կարդացի, որ Ոսկանյանը Ինդոնեզիայից 13-ին պետք է մեկնի Սինգապուր: Այդ երկիրը Հայաստանից վատթար վիճակում էր, երբ վարչապետ դարձավ այժմյան վարչապետի հայրը: Այդ մարդը հիմա ողջ է եւ իր հիշողություններն է գրում: Նա իշխանության եկավ 1958 թվականին, եւ 1965 թվին Սինգապուրն անկախացավ: Նա հայտարարեց, որ իրենք պետք է բոլորից լավ ապրեն կամ ամենալավ ապրողին հավասար: Երեսուն տարվա ընթացքում կենսապայմանների չափանիշներով Սինգապուրը անցնում է Եվրոպայից: Իր մեմուարներում նա պատմում է, թե ինչ մեթոդներով է իրականացրել իր այդ քաղաքականությունը: Եթե մեր գենի մեջ չկա այդ շնորհքը, գոնե կարելի է կարդալ, իմանալ: Իմ թերթի համարներում այդ գրքից կտորներ կտպագրեմ: Ես տրակտոր, ինքնաթիռ կառուցել չգիտեմ, վերցնում եմ գծագրերը, ծանոթանում եւ կառուցում: Բուշի ու ԱՄՆ-ի երեւի բոլոր պրեզիդենտների «հայրը»՝ Կիսինջերը, այդ գիրքը համարել է քաղաքական

լավագույն դասագիրքը: Ապացույցներից մեկն այն է, որ Սինգապուր քաղաք-հանրապետության բնակչության մի մասը Մալազիայից էր, մյուս մասը՝ Չինաստանից, նա կարողացավ ազգ շինել եւ հասցնել կենսապայմանների առաջին մակարդակ:

Ես Ռոբերտ Քոչարյանին՝ որպես անհատի, դեմ չեմ, նա պետքական կադր է: Բայց նրան չպետք է նշանակեին: Նա ինքը չպետք է թռչեր առջեւում նստեր: Ռոբերտ Քոչարյանը ցանկացած պատասխանատու աշխատանք կարող է շատ լավ կատարել: Ղեկավարը չի կարող բոլոր աշխատանքներն անձամբ անել, նա պետք է ընտրի թեկնածուների: Ուզում ես մաքսատունը լավ աշխատի, կամ հարկերը լավ հավաքվեն՝ Քոչարյանը ամենահարմար թեկնածուն կարող է լինել: Ուզում եմ ասել, որ նրանք դա չեն արել եւ թույլ չեն տվել, չի նշանակում, որ յոթ միլիոնանոց հայ ժողովրդի մեջ չի կարող արդար ընտրություն լինել եւ արժանի ընտրյալ առանձնացվել: Միայն Քոչարյանը չէ, Լեւոնի ժամանակ էլ էր նույնը: Բոլորն էլ մեղք ունեն: Այդ պատճառով հինգ տարի հետո ավելի վատ է լինելու:

Ժողովից հետո սկսեցինք ինքնապաշտպանության հարցերով զբաղվել: Մի փաստ եմ ուզում շեշտել: Համախմբվեցինք եւ Չինված ուժերին առընթեր Չինված շտաբ ստեղծեցինք: Դաշնակցականները նույնպես շտաբի անդամներ էին եւ լավ էլ գործում էին: 1990 թիվն էր: Վազգեն Սարգսյանը զենքի հարցերով էր զբաղվում: Բայց նրանք չէին կարողանում գործարանային արտադրության ավտոմատ գտնել, իսկ դաշնակցականներին հաջողվում էր: Ստացանք առաջին խմբաքանակը՝ քսանհինգ հատ: Զենքը հազիվ տրամադրվում էր նրանց: Ի՞նչ տարբերություն, մեր ղարաբաղցին է, չնայած անունը դաշնակ է: Բայց երբ արդեն երեսուն, քառասուն, վաթսուն հատ ուղարկվեց, շտաբի անդամներով նստեցինք խորհրդակցության: Շտաբը պաշտոնական պետ ուներ, կոորդինատորը ես էի: Պայմանավորվեցինք, որ զենքի վաթսուն տոկոսն իրենք վերցնեն, քառասուն տոկոսը մնա ընդհանուրին: Դաշնակցականները մի ջոկատում էին հավաքվել: Նրանք համաձայնվում են, բայց նրանց վերեւներում՝ ոչ: Նորից զենքի մի մեծ խմբաքանակ ուղարկում են, մեզ ոչ մի հատ չեն տալիս: Այդպիսով ցեց են գցում:

Այդ ընթացքում Վազգեն Սարգսյանը գալիս է: Հայաստանում ջոկատներ էին ստեղծվել, եւ զենքով առաջնահերթ մատակարարվում էր ՀԱԲ-ը կամ «Սասունցի Դավիթը»: Ասել եմ. «Վազգե՛ն, աշխատիր մինչեւ ամիսը հարյուր հատ «ստվոլ» ուղարկել: Այստեղ դժվար են ուղարկում: Չնայած ինքնաշեն զենքերը լավը չեն, բայց ութսունը թող ինքնաշեն լինեն, գոնե տասից քսան հատն էլ՝ գործարանային արտադրության: Դա կոգեւորի գյուղացուն, ում ասում ես՝ գնա ֆերման

պահիր, ասում է՝ ինչո՞վ, փայտո՞վ»:

Սա Դաշնակցության ամենավատ քայլերից մեկն էր: Բացատրում եմ, որ հայրենիքը վտանգի մեջ է, ստիպված ենք պահեստները բացել, բաժանել զենքը: Մի կողմից՝ ես նրանց հասկանում էի, երբ ասում էին. «Զենքը տանք՝ ցրվելու է եւ կորչի»: Բայց մենք համախմբված էինք աշխատում, ամեն մեկին զենք չէինք տալիս, զենք ստացողը ստորագրում էր եւ ինքն էլ իր հերթին առանց ստորագրություն վերցնելու չէր բաժանում: Առանց հանձնաժողովի որոշման ոչ մեկին ոչինչ չէինք տալիս: Ասում էին. «Չէ՛, պիտի դաշնակ լինի, մերը միացյալ շտաբ է, կիսվելու է, դաշնակը պետք է անցնի»: Կարճ ասած՝ ցեց է գցում: Խեղճ Վազգենը գնում է, պտտվում, հարյուր հատ զինափող չի կարողանում գտնել:

Մի անգամ Գանձասարի Վանք գյուղը գնում է Ղազանչի գյուղին օգնության: Տասնվեց հոգով ծուղակն են ընկնում: Տասնվեց հրազենի փող կորցնում ենք: Դա մեծ գյուղի քսան-քսանհինգ հոգանոց ջոկատ է, տասնվեցի փոխարեն եթե ութ հատ չուղարկես, չեն գնա: Ես հարյուր հատ զենք ուզել եմ՝ ամբողջ Ղարաբաղի մասշտաբը նկատի ունենալով:

Դաշնակցականների այստեղի կոորդինատորին առաջարկում եմ միացյալ ուժերի շտաբի օրինակով ստեղծել միացյալ քաղաքական շտաբ: Պաղեստինից եմ օրինակ բերում, թե՝ ՕՕՊ-ի մեջ տարբեր կուսակցություններ են մտնում: Դաշնակցության ղեկավարը, որ Բեյրութից էր, ասում է. «Դու գիտե՞ս, որ ՕՕՊ-ում Յասեր Արաֆաթի կուսակցությունը ութսուն տոկոս է կազմում: Եթե Ղարաբաղում քաղաքական միավորում լինի, նրա ութսուն տոկոսը պիտի մեր կուսակցությունը կազմի, հակառակ դեպքում՝ մենք չենք մտնի»: Փաստորեն, նախապես պայման էին դնում, որ իրենց լոզունգով իրենց շուրջը պիտի միավորվենք:

Ղարաբաղում Ազգային ժողովի՝ 1991 թվականի դեկտեմբերի ընտրություններին ահագին դաշնակցականներ անցան: Արթուր Մկրտչյանն էլ այդպես ընտրվեց: Նրանց մի վատ կողմն էլ ասեմ: Նրանք ամեն կերպ ջանում են դաշնակցականին բարձրացնել, եթե արժանի է «դրսի»՝ «հինգի» հասցնել, եթե՝ «հինգի», ապա «տասի» հասցնել: Օրինակ՝ Վազգեն Սարգսյանը կամ Վազգեն Մանուկյանը իր տաղանդով է բարձրացել, իսկ Արթուր Մկրտչյանն ընտրվել է, քանի որ այդպես ասել էինք Ռոբերտ Քոչարյանին: Այդ ժամանակ Քոչարյանին Երեւանում ընդունում էին: Մենք դաշնակցականների հանդեպ անհանդուրժողականություն կամ չոր վերաբերմունք չենք ունեցել. նորմալ հարաբերություններ էին: Ռոբիկն իրեն խորամանկ է պահում, ասում է. «Ինչ Լեոնարդ Պետրոսյանը լինի, մյուս անգամ ես կլինեմ: Նա սո-

վետական սպա է եղել, ես այդպես եմ գտնում, ես դա եմ ճիշտ համարում»: «Ես»-ը նրա մեջ բնավորություն է՝ он один: Ասում ենք. «Լեոնարդը չի ընտրվելու, նա այդ հեղինակությունը, իմիջը չունի...»:

Այնպես է ստացվում, որ գյուղերում, շրջաններում բոլոր հրամանատարները դաշնակներ էին, այդ թվում եւ Սամվել Բաբայանը: Սամվելն էլ խորամանկ տղա է: Դաշնակները, նկատելով, որ Սամվելը տաղանդավոր, ճարպիկ տղա է, հետեւից էին ընկել, թե՝ դաշնակ դարձիր: Նա թե՝ չէ՛, ես դաշնակների հետ գործ չունեմ: Սամվելին դրա համար եմ ասել. «Քանի՞ հոգի կան ձեր խմբում»: Նրա խմբում մոտ տասը հոգի են եղել, բայց նա շտաբի անդամ էր: Ասում է. «Տասը հոգի ենք, եթե վեց հատ ավտոմատ տաք, դաշնակ կդառնանք»: Համաձայնությունը տալիս է եւ գալիս ինձ, քանի որ կոորդինատոր էի, տեղեկացնում: Ասում եմ. «Արդեն դու համաձայնվել ես, հիմա էլ ինչ «չէ» կամ «հա» ասեմ: Բայց այդպես ուժերի կենտրոնացումը կորչում է»: Եվ այդպես՝ Բալասանյան Վիտալիկը Ասկերանից, ուրիշները՝ Մարտակերտից, Հադրութից, դառնում են դաշնակներ: Ուզում եմ ասել՝ արհեստականությունը, մտնելով մաքրության մեջ, սկսում է ժանգոտել այն:

Ընտրությունների արդյունքում Լեոնարդը չի անցնում, երկու-երեք դաշնակցականներ են գալիս ֆինալ: Իրենց մեջ որոշում են, որ Արթուր Մկրտչյանը պիտի անցնի, նա ավելի է համապատասխանում այդ պաշտոնին: Արթուրը մաքրության, արդարության, բարոյականության առումով շատ բարձր, ընտիր տղա էր: Ես շատ կուզեի նրա նման հինգ հոգի էլ լինեին: Բայց այդ տարիներին նա Ղարաբաղում լիդեր չի եղել: Ուրիշ կողմեր էլ կան, հո միայն մաքրությունը չէ՞:

Մանուչարովը բռնված էր, բաց թողեցին: Մենք Երեւան էինք գնացել ինքնապաշտպանական ջոկատներին զենքով ապահովելու հարցով: Բացատրեցինք, որ նրանք ամբողջ օրը աշխատում էին գյուղի կոլխոզում, հետո ինչպե՞ս գիշերով գնան գյուղից երեք կիլոմետր հեռու գտնվող ֆերմաները հսկելու: Այդ ժամանակ ինքնապաշտպանական ջոկատների հիմնական առաջադրանքը ֆերմաները հսկելն էր, քանի որ թուրքերը գալիս էին, կովերը քշում-տանում: Քաղաքում արդեն օպերատիվ ջոկատներ կային: Մենք նրանց ուղարկում էինք այդ տեղերը: Վազգենը Երեւանից «մին էրկու պեն» էր ուղարկել: Այդ ժամանակ էր, երբ Մանուչարովը զանգեց: Մենք «Հրազդան» հյուրանոցում էինք: Մի մասը, չգիտեմ, ինչ հարցերով էր Երեւան եկել: Մանուչարովի հարցով հավաքվել էին. Զորի Բալայանն էր, Դադամյանը, քաղաքական մյուս լիդերները:

Ինքնապաշտպանական ջոկատներին ծխախոտով, բենզինով, «Նիվայով» ապահովելու համար դոլար չէին տալիս, այլ մթերք կամ զենք: Իսկ Ղարաբաղում տարադրամի ներմուծում իրոք եղել է: Այդ ժամանակ Քոչարյանը, Բաբայան Սեմյոնի ժամանակներից սկսած, Լեոնարդը, որին հետո բերեցինք մարզային խորհուրդ, ակտիվ դեր էին կատարում: Մեր այդ իշխանությունները, կենտրոնանալու փոխարեն, Մանուչարովի նստած ժամանակ նրա հեղինակությունն են բարձրացնում: Զորիկին մոտեցա եւ առաջարկեցի, որ Մանուչարովին տանենք մինչեւ ընտրություն, հավաքվենք հիսուն, հարյուր հոգով, հիմնադիր հավաքով ընտրենք պրեզիդենտի պես մի բան, անունը նշանակություն չունի, կարեւորը՝ կենտրոնացված օրգան ստեղծենք: Ասաց՝ հարց չկա: Ընդհանուրի մոտ այդ միտքն ասացի: Մանուչարովն էլ «վենները յեղած» նման մի բանի էր պատրաստվում: Հետ ենք գալիս, Զորիկն էլ է մի քանի անգամ գալիս: Զորիկը ծերակույտի գլխավորն էր, լիդեր էր, իսկ ես ընդամենը գաղափարն եմ տվել, ես չեմ կարող քաղաքական հարցեր վճռել: Ասում եմ. «Զորի՛ Բալայան, Զորի՛ Բագունց, Զորի՛, կազմակերպիր՝ ցուցակ կազմենք, ընկեր Բաբայանին ասա (այն ժամանակ Բաբայան Սյոման էր գործադիր մարմնի ղեկավարը), թե ո՞ւմ ենք պատվիրակություն կանչելու»: Ասում է. «Լավ, ախպոր պես, գնա ասա, դուք ոնց ճիշտ եք գտնում, այդպես էլ արեք»: Ես նրան ինձնից մեծ էի համարում: Տեսա՝ Զորին ինքն իրեն հաշմված է ուզում զգալ, ասացի. «Լավ, կարեւորը ես քեզ տեղյակ պահեցի»: Գնացի, Բաբայան Սյոմայի հետ կազմեցինք ցուցակը եւ ընդգրկեցինք բոլոր նրանց, ովքեր հայտնի են, այն է՝ «Կռունկի» անդամներից ոմանց, տնօրեններին, ակտիվիստներին, քաղաքականության հետ առնչվող մարդկանց: Ժողովին երկու հոգի ձեռնպահ մնացին, մեկը՝ դեմ էր. Միրզոյան Մաքսիմն էր եւ Պետրոսյան Գեորգին: Արկադի Մանուչարովն ընտրվեց պրեզիդենտ: Մանուչարովին բացատրում եմ իշխանության կառուցվածքը. «Առաջին հերթին պետք է ձեւավորենք արագ կողմնորոշման հատուկ խմբեր: Երկրորդ շրջանում պետք է ընդգրկենք այն մարդկանց, ովքեր կարող են գնալ, ասենք, Շահումյան, այլ տեղեր, այսինքն՝ ոչ մարտիկների, նրանց, որոնք կարող են ֆերմա պահել: Քեզ առաջարկում եմ՝ այս կամավոր մարդկանց որոշենք, իսկ մնացածներին ասեք, որ պարտադիր չէ այսօր զենք բռնեն: Պետք է բոլորի պարտականությունները նախապես որոշենք, որ տագնապի դեպքում արագ կողմնորոշվենք, ամեն մեկն իմանա իր տեղն ու դերը»: Երբ եկան Մանուչարովին ձերբակալելու, ես մի քսան օրով թաքնվեցի մեր գյուղում: Գալիս տեսնում եմ՝ երկու սեւ «Վոլգա» են բերել. մեկը Մանուչարովն է վերցրել, մյուսը տվել է Ռոլեսին: Տեսնեմ՝ սիգարետից են բողոքում, թե ճիշտ չեն բաժանել: Ասացի՝ չէ, սա խորհրդային հին բյուրոկրատ է: Ասում եմ. «Լավ կլինի՝ ինքդ դուրս գաս»: Մի ամիս է տեվում այդ գործընթացը:

Պատմում է Ժորա Գասպարյանը *(1992-ից՝ ԼՂՀ ՊԲ հրետանու պետ)* *03.10.2005 թ., Ստեփանակերտ*



Ժ.Գ. - Ծնվել եմ 1942 թվականին Մարտակերտի շրջանի Զարդախաչ գյուղում: Քսանհինգ տարի ծառայել եմ Խորհրդային Միության բանակում: 1990 թվականին ընդգրկվել եմ մեր ենթաշրջանի՝ Զարդախաչի ֆիդայական ջոկատում, բայց ջոկատները դեռեւս անկազմակերպ էին:

Բ. - Այդ ջոկատի մասին պատմեք:

Ժ.Գ. - Մեր գյուղը փոքր էր՝ ընդամենը յոթանասուն ծուխ: Երիտասարդները շատ քիչ էին՝ հազիվ երեսուն հոգի, այնպես որ՝ գյուղի պաշտպանությանը մասնակցում էին հիմնականում մեծահասակները, անգամ յոթանասուն տարեկան մարդիկ: Վտանգը Չափար գյուղի կողմից էր սպասվում: Հիմնականում զինված էինք հրացաններով, ինքնաշեն ականանետներով, որոնք մեծ վնաս հասցրին հենց մեր տղաներին: Իմ եղբոր տղան եւս զոհվեց դրա պայթյունից: Ես նախօրոք զգուշացրել էի, որ դրանք վտանգավոր են: Ինձ հավաստիացրին, թե կառուցվածքը ճիշտ է: Բայց այդպես չէր: Չարենցավանի գործարանում լրիվ սխալ տեխնոլոգիայով էին սարքել: Այդ դժբախտ պատահարից հետո կտրականապես արգելեցի դրանց գործածումը: Առաջին ավտոմատը մենք ձեռք բերեցինք ադրբեջանցի գրոհայիններին Ումուտլուից դուրս հանելու ժամանակ: Մի գերի էինք վերցրել, նրա ավտոմատն էր: Գյուղը կորցնելու մտավախությունից՝ դիմեցի Վազգեն Սարգսյանին, որ զենքով ապահովի Երեւանում սովորող եւ ապրող մեր գյուղի երիտասարդներին: Նա էլ դիմել էր Սերժ Սարգսյանին: Սերժը, ինձ ճանաչելով, ասել էր, որ իմ կարիքն ավելի շատ զգացվում է իրենց մոտ՝ կենտրոնում: Տղաներին զենքով, հագուստով ապահովեցին: Նրանց ուղարկեցինք մասնակցելու գյուղի պաշտպանությանը, իսկ ես աշխատանքի անցա նախարարությունում: Ինձ հանձնարարվեց կազմակերպել հրետանու գործը, քանի որ այն իմ մասնագիտությունն է: Աշխատանքի կազմակերպումը սկսեցի մեր հնարավորություններն ուսումնասիրելով: Մենք հակակարկտային թնդանոթներ ունեինք, որոնք կարելի էր օգտագործել: Սկզբնական շրջանում այդ

քսանչորս-քսանհինգ թնդանոթներով էինք կռվում: Ստեփանակերտի կենտրոնական զորամասում սովետական զորքերը վեց թնդանոթ էին թողել: Դրանք հարմարեցրինք ու սկսեցինք գործածել: 1991 թվականի մարտին մի թնդանոթով դուրս էի եկել թշնամու նշանակետերը ոչնչացնելու: Մարտունու, Ասկերանի տարածքներով շրջում էի: Առաջին երեք ամիսներն այդպես անցան, հետո կազմակերպչական գործն ավելի ընդլայնեցի: Երեւանից օգնություն ուղարկվեց: Մի քանի ուրիշ՝ հարյուր հիսուներկու միլիմետր տրամաչափի թնդանոթներ ստացանք: Իմ նախնական աշխատանքն էր ստուգել զինվորական կոմիսարիատի տվյալներով, թե ովքեր են բարձրագույն կրթություն ստացել, զինվորական ամբիոնի դասընթացներն անցել եւ ինչ ուղղությամբ ու մասնագիտացմամբ: Մոտ հարյուր վաթսուն հրետանավորների անուններ գտա: Զանգեցի շրջանային զինկոմիսարիատներ, որպեսզի ճարեն այդ տղաներին: Ցավոք սրտի, նրանցից շատերը արդեն զոհվել էին: Քաղաքի տղաներից մի խումբ հավաքեցի եւ ուսումնական կենտրոն բացեցի: Գործնական հմտության համար նրանց տանում էի Մարտակերտի, Ասկերանի շրջաններ, հրամանատարներ էի նշանակում՝ մարտկոցի հրամանատար, դասակի հրամանատար: Դիվիզիա հասկացությունը գոյություն չուներ, քանի որ այդքան թնդանոթ չունեինք: Մարտկոցում, օրինակ, ամենաքիչը պետք է ութ թնդանոթ լինի, իսկ մենք երկու-երեք թնդանոթը համարում էինք մարտկոց:

Շուշիի գրավման ժամանակ մեզ հանձնարարված էր, ինչպես բոլոր գործողությունների դեպքում, մինչեւ հակահարձակման անցնելը ամբակոծել թշնամու դիրքերը, վնաս պատճառել, ինչպես նաեւ հոգեբանորեն ճնշել նրան: Մոտ մեկ ամիս պատրաստվում էինք, հետախուզության միջոցով որոշում նշանակետերը: Թնդանոթները հիմնականում փորձաքննություն էին անցել: Երկու «Գրադ» կայանք, «ԲՄ-21» ականանետ ունեինք: Շուշիի ազատագրումից հետո թշնամու թողած ողջ զինամթերքը վերցրինք:

Հետո Մարտակերտի դեպքերն էին:

Բ. - Ինչպե՞ս եք Դուք մեկնաբանում դրանք:

Ժ.Գ. - Չի կարելի ասել, թե անկազմակերպ էր: Մեր ամբողջ խնդիրն էր պաշտպանությունն այնպես կազմակերպել, որ թշնամին Մարտակերտը չվերցնի: Հուլիսի 2-ին Սերժ Սարգսյանն ինձ կանչեց, որպեսզի ստեղծված ծանր կացությունից դուրս գալու որեւէ ելք գտնենք: Ինձ առաջարկեց մեկնել այնտեղ: Երեւանում կային լավ պատրաստված հրետանավորներ, որոնք կարող էին ինձ փոխարինել: Վերցրեցի մի թնդանոթ, «Գրադ» կայանք իր զինամթերքով ու գիշերը ճանապարհ ընկա: Հասա Դրմբոն, այնտեղից՝ Մարտակերտ: Ժողովուրդն արդեն Կուսապատի ճանապարհով տեղաշարժվում էր: Եկա շտաբ՝ տեսնելու

Արկադի Տեր-Թադեւոսյանին, ով հրամանատարն ու պատասխանատուն էր: Սակայն թիկնապահները թույլ չտվեցին՝ պատճառաբանելով, թե հիվանդ է, չի կարող ընդունել: Ընդհանուր շտաբի պետն այդ ժամանակ փոխգնդապետ Ֆելիքս Գզողյանն էր: Փորձեցի նրանից ինչ-որ բան իմանալ հրավիճակի մասին: Բայց նա էլ ոչ մի կարգին բան չասաց: Հասկանալի էր, որ իրենք էլ գլուխ չեն հանում, ամեն ինչ ձեռքներից բաց են թողել: Կարծում եմ, որ թշնամու մեծաքանակ ուժերից էին վախեցել: Անտեղյակ մարդիկ ասում էին, թե ինչ-ինչ պայմանով Մարտակերտը հանձնել են: Դա, իհարկե, այդպես չէ: Խնդիրը պաշտպանության նախարարության աշխատանքների կազմակերպման թույլ լինելու մեջ էր: Միայն չեմ հասկանում, թե ինչու էին խուճապի մեջ ընկել: Երբ ոչ ոք չկարողացավ պատասխանել, թե ես ինչով կարող եմ օգնել, ինքս որոշեցի իմ անելիքը: Մտածում էի, որ Քելբաջարի կողմից վտանգն ավելի մեծ է, քանի որ Մարտակերտում գոնե զորքեր կային: Բայց երբեք մտքովս չէր անցնում, որ Մարտակերտը կթողնեն: Կապվեցի հրետանու հրամանատարների հետ՝ օգնություն խնդրելու: Պարզվեց, որ նրանք էլ լավ վիճակում չեն, զենքի պակաս կա: Իսկ մեզ օգնության եկած հրամանատարները Ստեփանակերտ էին գնացել: Այդ նույն գիշերը գնացի Դրմբոն: Որոշվեց, որ Չափարից Նարեշտար գիծը պետք է պաշտպանենք: Բայց առավոտյան ժողովուրդը Հաթերքի ուղղությամբ ոտքով ճանապարհ էր ընկել, գյուղից հեռանում էր: Նրանց ետ պահելու իմ փորձերը ապարդյուն անցան: Նրանց վախը շատ էր մեծ: Թշնամին արդեն սկսել էր գնդակոծել Չափարը, Գետավանը, Վաղուհասը: Դիրքավորվելով՝ սկսեցի հակառակորդի հրետանու դեմ կրակ բաց անել, որ գոնե մարդիկ կենդանի դուրս գան: Ինչքան ինձ հայտնի է, ոչ ոք չի վնասվել, բացի այն ծերերից ու հիվանդներից, ովքեր մնացել էին գյուղում, նրանց տները թշնամին վառել էր: Այդ օրերին մեր պարտության գլխավոր պատճառը հրամանատարների թույլ կազմակերպվածությունն էր: Անհասկանալի պատճառով նրանք ընկել էին շոկային վիճակի մեջ:

Բ. - Իսկ Արկադի Տեր-Թադեւոսյանի մասին ի՞նչ կասեք, ի՞նչ հետաքրքիր, կարեւոր գործողություններ է ղեկավարել:

Ժ.Գ. - Ես նրան շատ եմ համակրում, վստահում նրա ուժերին, բայց նա հատուկ տակտիկա, ռազմավարություն գործադրելու հարցերում թույլ էր, շուտ էր խուճապի մատնվում: Նրան շատ էր օգնում Դալիբալթայանը, այն մարդիկ, ովքեր հմուտ էին իրենց գործում, հատկապես կապի հրամանատար Արթուր Փափազյանը: Վերջինս իր գործի գիտակն էր, շատ լավ ու ճիշտ էր կազմակերպում աշխատանքները, առանց որի ոչ հրետանին, ոչ էլ մյուս ուժերը արդյունքի չէին հասնի: Բայց Կոմանդոսը, անշուշտ, ձեռքերը ծալած չէր նստել, նա էլ իր ներդրումը, վաստակը ունեցավ: Եթե Վլադիմիր Բալայանը չզոհվեր, մենք Մարտակերտը չէինք հանձնի:

Բ. - Նույնը կարելի՞ է Նորայր Դանիելյանի մասին ասել:

Ժ.Գ. - Ես Նորիկի հետ ծանոթացա, երբ նրան նշանակել էին Մարտակերտի շրջանի գնդի հրամանատար: Պատմում են, որ սկզբնական շրջանում նա շատ լավն էր, ջոկատներ էր կազմակերպում, ձեռք բերում՝ ինչ որ անհրաժեշտ էր: Երբ մենք Մարտակերտի գծում էինք, Նորիկը դեռ չկար: Այնտեղ էին Աշոտը, Իլյիչը, կենտրոնական գնդի հրամանատարությունը: Նորիկի նշանակվելուց հետո մենք շարժվեցինք առաջ՝ Վաղուհաս, Չափար, Զարդախաչ, Հաթերք, հետո առաջացանք Քելբաջարի ուղղությամբ՝ մինչեւ Օմար: Նորիկն այդ բոլոր մարտերին մասնակցեց, բայց շատ կոպիտ սխալներ թույլ տվեց: Այնպես որ՝ նրան ուղղված գովեստները չափազանցված են: Նրա կողքին կային այնպիսի մարդիկ, որ գերագնահատում էին նրան, քաջալերում, թե՝ դու այնպիսի բաների կհասնես... Նա էլ սկսեց երես առնել: Նորիկի համար մեծ ու փոքր չկար, խփում էր թե՛ ավագին, թե՛ ստորադասին: Այն ժամանակ, երբ թեժ մարտեր էին, երբ Ավոն եւ մյուս տղաները կռվում էին, նա իր անձնական գործերով էր զբաղված: Մի անգամ ինձ առաջարկեցին Մարտակերտի մասին գիրք գրել: Նորայր Դանիելյանի մասին գրեցի, որ ոչ մի լավ բան ես նրանից չեմ տեսել: Հարազատները վիրավորվել էին ինձանից, բայց ճշմարտությունը սերունդներից թաքցնել կամ աղավաղել չի կարելի:

Նույնը չեմ կարող ասել Սամվել Բաբայանի մասին: Սամվելը նույնիսկ միջնակարգ կրթություն չուներ, բայց գլուխը լավ էր աշխատում: Քննարկումների ժամանակ հրաշալի կողմնորոշվում էր, թե ինչպես ճիշտ կլինի վարվել: Զարմանալի էր, որ այդ ունակությունները դրսեվորում էր անգրագետ եւ զինվորական կրթություն չունեցող մի երիտասարդ:

Բ. - Իսկ ճի՞շտ էր, արդյոք, ոչ կադրային սպաներին հնարավորություն տալ ղեկավարելու բանակը:

Ժ.Գ. - Այդ մասին ես ցավով եմ խոսում, նույնիսկ ամաչում եմ հիշել: Պատերազմի սկզբում մենք շուրջ ութ հարյուր սպա ունեինք: Ղարաբաղից գնում, ծառայում էին Խորհրդային Միության բանակում, որի փլուզվելուց հետո նրանց մի մասը մնաց Ռուսաստանում, մի մասն էլ՝ այլ երկրներում: Հատուկենտ մարդիկ վերադարձան եւ օգնության ձեռք մեկնեցին: Բայց բանակն ի վերջո պետք էր մեկնումեկին վստահել: Եվ չվերադարձած գեներալների, գնդապետների փոխարեն մեր տղաներն էին պատրաստակամ դառնում գումարտակների հրամանատարներ: Նշանակում էինք, երբ որեւէ մեկի մեջ կազմակերպչական ջիղ էինք նկատում: Այն ծանր օրերին, երբ Արջաձորի, Գանձասարի եւ

այդ ուղղությամբ մինչեւ աջ՝ Ասկերան, ձգվող ճակատն էինք պահում, ժամանեց, այսպես ասած, զինվորական խորհուրդ՝ պաշտպանության նախարարի գլխավորությամբ: Գեներալ-լեյտենանտ Տեր-Գրիգորյանն էր, խելացի մարդ էր: Նա եկել էր իր տեղակալների հետ: Հավաքվեցինք պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի մոտ՝ քննարկումների եւ զեկուցման: Ելույթ ունեցավ տեղակալներից մեկը՝ խորհրդային բանակի գեներալ-մայոր Սան Սանիչը (Սարգսյան): Ասաց, որ նախարարությունը ամեն ինչով ապահովում է ղարաբաղցիներին, եւ մի վիրավորական արտահայտություն արեց՝ կապված «լիմիտի» հետ, թե. «Լիմիտով ինչքան հասնում է, մենք տալիս ենք»: Ես զինվորական եմ եւ գիտեմ, թե ինչ է նշանակում «լիմիտ» ասվածը. երբ մի ավտոմատի համար հատկացված է երեք հարյուր հիսուն փամփուշտ, եւ այդքանն էլ զինվորը պետք է միշտ ունենա, զինվորի հագուստը, տարվա եղանակին համապատասխան, կարգին վիճակում լինի, թնդանոթի մոտ արկերը շարված լինեն: Երբ նա ավարտեց զեկույցը, ես ձեռք բարձրացրի, ներկայացա: Այն ժամանակ նշաններով ուսադիրներ չկային, հագնվում էինք՝ ինչպես կարողանում էինք: Խնդրեցի բացատրել, թե ինչ նկատի ունի «լիմիտ» ասելով, այդ ինչից որոշեց, որ պատերազմում մեզ հենց այդքան փամփուշտ է անհրաժեշտ: Նա, իհարկե, չկարողացավ պատասխանել: Ասացի, որ ցանկացողներին առաջարկում եմ ինձ հետ ճակատ գնալ, եւ տեղում էլ ամեն ինչ կորոշենք՝ «լիմիտ» կոչվածը գոնե պաշտպանության համար ապահովվա՞ծ է, թե՞ ոչ: Տեր-Գրիգորյանը, գնդապետ Հայրապետյանն ու ես գնացինք Սրխավանդի դիրքերը: Ճանապարհին նրանց համար էքսկուրսավարի դեր էի կատարում: Մոտեցանք մի պահատնակի: Մեր տղաներից չորս հոգի քաղաքացիական հագուստով դուրս եկան: Աշոտին խնդրեցի. «Նախարարը եկել է, ներկայացրու իրավիճակը»: Զարմացան, որ քաղաքացիական հագուստով մարդը ճակատի այդ գծի հրամանատարն ու պատասխանատուն է: Տեր-Գրիգորյանը հարցրեց, թե քանի զինվոր ունեն: Պարզվեց, որ երեսունհինգ կիլոմետրի վրա ընդամենը տասնութ կռվող կան, այն էլ այդպիսի ճակատում: Կեսն ավտոմատ էլ չունեին, կռվում էին մրսած, քաղցած: Եվ նախարարը եզրակացրեց, որ ոչինչ էլ չի ապահովվում, ոչ մի լիմիտ էլ գոյություն չունի:

Ես շատ էի ուրախանում, որ մեր ղարաբաղցի կիրթ, գրագետ տղաները կարճ ժամանակամիջոցում լավ հրետանավորներ էին դառնում, աշխատանքները ղեկավարում: Ամբողջ ճակատը՝ Հադրութից մինչեւ Մարտակերտ, կարելի էր նրանց վստահել: Իմ տղաներից էին Սամվելը, որ բրիգադի հրամանատար էր, Օմարում զոհվեց, Վալերի Կարապետյանը, որը մինչեւ հիմա ծառայում է շտաբում: Շատերին կարելի է

թվարկել: Ես հիմնականում այն վայրերում էի գտնվում, աշխատանքները կազմակերպում, որտեղ կամ մենք էինք գործողություն ծրագրել, կամ հակառակորդը: Բոլոր ուղղություններում էլ մշտական հրետանավորներ ունեինք: Հարավում Սուրենն էր, որը հիմա ուսումնական գնդի հրամանատարն է: Դիվիզիոնի հրամանատարը Արմենն էր, նա զոհվեց: Մարտակերտում գնդի հրամանատարը Գառնիկն էր: Ատոմ անունով տասնյոթ տարեկան մի տղա կար: Երբ Հաթերքի բնակիչները գյուղը թողեցին, Չլդրանում մարտեր էինք մղում, Ատոմը երկու հոգու հետ եկավ, խնդրեց մնալ այդտեղ՝ ինձ օգնելու: Նայում էիր՝ ոնց որ երեխա լիներ, բայց կարճ ժամանակում այնպես հմտացավ, որ թնդանոթը նրա ձեռքին կարծես խաղալիք լիներ: Իմ բախտը բերել էր, որ ես այդպիսի խելացի տղաներ ունեի: Քսանհինգ տարվա իմ ծառայության ընթացքում, երբ Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից եկած տղաների հետ էի աշխատում, համոզվեցի, որ զինտեխնիկային ամենալավ կարողանում են տիրապետել ղարաբաղցիները: Իսկ ադրբեջանցիները գլուխ չէին էլ հանում: Նրանց՝ տանուլ տալու պատճառներից մեկն էլ հենց դա է, թեեւ օգնություն էին ստանում Ուկրաինայից, Ռուսաստանից:

Բ. - Ավոյի մասին ի՞նչ կարող եք պատմել, ինչպե՞ս ծանոթացաք նրա հետ:

Ժ.Գ. - Ավոյի հետ ծանոթությունը շատ հետաքրքիր էր: Ես դեռ երկրորդ օրն էի շտաբում, Կոմանդոսը կանչեց: Նրա առանձնասենյակում մորուքավոր մի ֆիդայի կար, ինչ-որ բան էր բացատրում Կոմանդոսին: Հասկացա, որ հայերեն է խոսում, բայց շատ տարօրինակ: Ասում էր. «Թուրքի թնդանոթը որ Կարմիր Շուկային խփի, շատ վնաս կտա»: Հետո ցույց էր տալիս քարտեզը, թե որ կամուրջից կկրակեն: Կոմանդոսն ինձ հարցրեց, թե հասկացա՞ ինչ է ասում: Ասում եմ. «Ամեն ինչ հասկացա, իսկ «ատիկա»-ն ինչ է՝ չհասկացա»: Կոմանդոսը ներկայացրեց, որ նա Ավոն է՝ Մոնթեն: Ասացի.

- Ինչպե՞ս կարող է թնդանոթը այդ բարձունքից կրակել: Նրանք հո էշ չե՞ն, որ թնդանոթը դնեն այնտեղ ու բարձրից խփեն գյուղին:

- Էշ են, դրա համար էլ այդպես են անում, ես քեզի բան կըսեմ,- ասաց Ավոն:

Ես մի թնդանոթով գնացի «ստուգելու»՝ ճի՞շտ է ասում: Իսկապես, այնտեղ թնդանոթ էր դրված, որը տասնհինգ րոպեից այլեւս նրանց չմնաց: Հետո Ավոն ինձ տարավ Կուրոպատկինո՝ ասելով, որ այնտեղ թնդանոթներ շատ կան: Երկու օրից իմ առաքելությունը ավարտած՝ ետ եկա:

Մեր հրամանատարների հիմնական տոկոսը զինվորական կրթություն չուներ, բայց նրանք հրաշալի ղեկավարում էին, իրենց առջեւ դրված

խնդիրը շատ լավ կատարում:

Երբ Քելբաջարը եւ դեպի Օմար ձգվող կիրճն էինք ազատագրում, ուժեղ սառնամանիք էր, ձյուն: Անհրաժեշտ էր թնդանոթները եւ մյուս տեխնիկան տեղափոխել այնտեղ: Քարշակներ չկային, նույնիսկ տրակտորներն էինք դրանց փոխարեն օգտագործում: Տրակտորով բարձրացա լեռնաշղթայի ամենաբարձր կետը, որպեսզի այնտեղից «փակեմ» լեռնանցքը: Այնտեղ ոչ միայն տեխնիկայի, այլեւ սննդի համար չէին գնում: Ականանետային դիվիզիոնի հրամանատար Սուրիկ Անտոնյանը (նա Օմարի մոտ զոհվեց) մոտեցավ ինձ, ասաց. «Մի թամաշա արեք, տեսեք՝ ինչ ենք անում»: Ձյան վրա սեւ կետեր էին: Թուրքերն էին իրենց սեւ համազգեստներով: Մերոնք էլ բոլորին հերթով շատ դիպուկ խփում էին: Մեր տղաներին պետք չէր քարոզել, թե ինչպես վարվեն: Նրանք բարոյապես շատ բարձր էին: Նույնիսկ ուտելու մասին էին մոռանում: Պատերազմը համարյա վերջացել էր, թեեւ պատերազմը պայմանականորեն է ավարտվել, մի անգամ Նոր տարուն գնացել էի հրետանային դիրքեր՝ Ամանորը շնորհավորելու: Շամպայն կար, մի քիչ օղի էին ճարել տղաները, կոնֆետներ, նարինջ, մանդարին: Տղաների տրամադրությունը տոնական էր, բոլորն իրենց տեղում էին: Շնորհավորեցի ու գնացի ուրիշ դիրք: Բոլորը քնած են, չկա ոչ մի պաշտպանություն, մարտական պատրաստվածություն: Մարտունու ուղղությամբ էր: Թնդանոթի փողը շրջեցի հակառակ կողմը: Շատ էի վրդովվել: Հաջորդ դիրքում նույն պատմությունն էր: Ստիպված կապվեցի այդ պաշտպանական շրջանի հրետանու հրամանատարի՝ Արտակ Զախարյանի հետ, որը շատ լավ տղա էր, լավ կազմակերպիչ, լավ հրետանավոր: Ասացի. «Եկել եմ, եւ ոչ ոք չկա, որ նվերները բաժանեմ: Եվ վիրավորական է, որ հրետանին այդպիսի վիճակում է»: Նա ռացիայով կապվեց այն դիրքերի հետ, ուր ես գնացել էի: Որին հարցնում է՝ դյադյա Ժորան եկե՞լ է, ասում են՝ չէ: Ասացի. «Որ չէ, թող նայեն, թե թնդանոթների փողը որ կողմ է նայում»: Մի անգամ էլ պահատնակում՝ վագոնում էին քնել: Բոլորի հրացաններն ու ռացիաները հավաքեցի: Փողոցում կրակահերթ բաց արի, որպեսզի նրանց արթնացնեմ: Արթնացան, ասում են. «Արա՛, էս ո՞վ է եկել գիշերով»: Մի դեպք էլ հրամանատարական կետում՝ բլինդաժում էր: Գնացի, այդ լակոտները քնած էին: Մի փոքր շուն էլ հաչում էր, որ իբր մարդ է եկել: Բայց նրանք քնից չէին զարթնում: Մի շիշ շամպայնի գինի դրեցի սեղանին, դուռը լարով կապեցի ու դուրս եկա: Հրետանու պետին՝ Արտակին, ասում եմ. «Տես՝ ինչ վիճակում է հրետանին»: Դիմում է զինվորներին.

- Գասպարյան Ժորան ձեզ մոտ եկե՞լ է:

- Չէ:

Ասացի.

- Բլինդաժի դուռը ստուգե՛ք:

- Ոնց որ թե կապված է:

- Սեղանին շամպայնի գինի կա՞:

- Հա:

- Ես եմ դրել:

Այսպիսի դեպքեր էլ էին լինում:

Մի անգամ եկա Կարմիր շուկա: Ֆիզուլու գործողությանն էինք պատրաստվում: Ստուգում էի հրետանու վիճակը, հանձնարարություններ տալիս, ճշտում յուրաքանչյուրին տրված առաջադրանքը: Այնտեղ երեք մարտկոց կար: Լուսադեմին գնացի, մարտկոցի մոտ ոչ ոք չկար, պաշտպանություն չկար: Տղաներին արթնացրի, ասացի. «Հլա մի շարք կանգնե՛ք»: Շարվեցին: «Ո՞վ է ձեր հրամանատարը, սպան ո՞վ է»: Ոչ ոք ձայն չէր հանում: Տասներկու հոգի էին: Ասացի. «Սպան ո՞վ է, ուզում եմ զրուցել, իմանալ, թե ինչու է նման վիճակ տիրում»: Տեսա, որ լռում են, հարցրի, թե ով որքան աշխատավարձ է ստանում: Այդ ժամանակ զինվորը վեց հազար ռուբլի էր ստանում, իսկ սպան՝ տասնութ հազար ռուբլի: Մի երկուսին հարցրի, ասացին՝ վեց հազար, մյուսը ասաց՝ տասնութ հազար: Ասացի. «Բա ասում ես՝ այստեղ սպա չկա: Դե դուրս արի շարքից»: Ամաչել էր երեւի: Նույն օրն էլ պաշտոնից հեռացրի, եւ այլեւս տասնութ հազար ռուբլի չստացավ:

Մեր կորուստների մեծ մասի պատճառն այն էր, որ զինվորները երկաթե սաղավարտներ չէին հագնում: Ամենաշատը գլխից էին վիրավորվում եւ զոհվում: Իսկ, օրինակ, Ժիրոյի գումարտակում կարգապահությունը շատ բարձր մակարդակի վրա էր, կարծես տղաները զինվորական ակադեմիայի կուրսեր անցած լինեին, կամ ինչ-որ մեկը պարապել էր նրանց հետ: Այդ տղաները ամենաթեժ կետերում էին լինում: Գիշերը զինվորը իրավունք չուներ խրամատում ծխախոտ վառելու:

Բ. - Բայց Ժիրոն էլ պրոֆեսիոնալ զինվորական չէր, ինչպե՞ս է, որ գումարտակը նման պատրաստվածություն ուներ:

Ժ.Գ. - Հավանաբար ինչ-որ մեկը ներսում կազմակերպում էր, հիմքը ճիշտ էր դրված: Մյուսներն էլ պետք է այդպիսին լինեին կամ Մարտակերտի Վլադիմիրի ջոկատի նման: Վլադիմիրի զինվորներից ոչ մեկը չէր ծխում, արգելված էր: Ամեն ինչ կախված է հրամանատարի վարքագծից, թե նա իրեն ինչպես է պահում: Զինվորական գործում շատ կարեւոր է անձնական օրինակը:

Սեյրան Օհանյանը ծառայում էր խորհրդային բանակում: Օգտվելով առիթից, որ ծառայում է Ստեփանակերտի կենտրոնական գնդում՝ նա շարժման սկզբնական շրջանում զենքով, զրահատեխնիկայով՝ ինչով կարողացել է, օգնել է, ցուցաբերել է առաջին հերթին հայրենասիրություն՝ որպես ազգի իսկական զավակ: Իմ սիրելի Սեյրանի հետ ծա-

նոթացել եմ, ցավոք սրտի, Մարտակերտը հանձնելու ժամանակ, երբ նա էլ էր եկել այդ ուղղությամբ օգնություն ցույց տալու: Հրետանային զորքերում այսպիսի մի արտահայտություն կա՝ «կրակը ինձ վրա եմ վերցնում», երբ հետախույզը կամ դիտորդը գտնվում է թշնամու դիրքի խորքում: Նման մի դեպք պատահեց Սեյրան Օհանյանի հետ: Նա ինձ ադրբեջանցիների երեք տանկերի կոորդինատները տվեց, որոնք կենտրոնացված էին մի տեղում, իսկ անձնակազմը նստել էր ճաշելու: Ռացիայով էր հաղորդում: Նա Դրմբոնում էր, ես՝ Չլդրանում: Տալիս է կոորդինատները եւ ասում. «Այսպիսի պահը չպետք է կորցնել, նախապատրաստիր կրակը այդ կետի վրա»: Կրակը նախապատրաստում եմ, բայց անվտանգության համար հարցնում.

- Դու որտե՞ղ ես գտնվում:

- Ես նույնպես այդտեղ եմ, բայց բարձունքում, նրանք ներքեւում են, ես վերեւում՝ նրանց հետեւում:

- Բայց ես ինչպե՞ս կարող եմ կրակ բաց անել, եթե դու այդտեղ ես:

- Ոչինչ, երբ կրակես, ինձ զգուշացրու:

Նա մենակ չէր, նրա հետ էլի տղաներ կային: Մի քանի անգամ ճըշտեցի կոորդինատները: Որպես կադրային սպա՝ ես հրաշալի գիտեի քարտեզը, կարող էի հանել ճշգրիտ կոորդինատները, չնայած նա տվել էր: Առաջին կրակոցից հետո, ուրախությունից էր թե ինչ, գոռաց՝ եւս երե՛քը: Անձնակազմի ճաշն, իհարկե, չկայացավ: Այդ երեք տանկերն էլ վերցրեց, բերեց մեր կողմը: Նման մի դեպք էլ պատահեց Ջեբրայիլը ազատագրելու ժամանակ: Հակառակորդը շատ տեխնիկա ուներ: Մեր հետախույզները մտան նրանց դիրքի խորքերը եւ ճշտեցին դրանց տեղերը: Դրանից հետո Սեյրան Օհանյանին շատ անգամ հանդիպեցի ճակատի բոլոր կետերում: Եվ կարող եմ ասել, որ հրետանու կրակի ճշգրտությունը շատ բանով կախված էր ուղղորդողից՝ որտեղ էլ որ գտնվեր: Սկզբնական շրջանում չկային դիտորդներ, հետախույզներ, այնպիսի հրետանավորներ, որ կարողանային կրակն ուղղորդել: Մեր հրամանատարները, անգամ շարքայինները կամ տանկիստներն էին կրակը ուղղորդում, բայց առանց քարտեզի, աչքաչափով՝ տեղանքը շատ լավ իմանալով: Նախօրոք պայմանավորվում էինք՝ ինչպես կոչել դաշտերը, ծառերը եւ այլն: Որպեսզի կրակը ճիշտ կառավարեինք, վերցնում էինք տեղացի տղաներ բոլոր այն բնակավայրերից, որոնք թողել էինք հակառակորդին: Տղաները տեղագրական քարտեզը լավ չէին հասկանում: Քարտեզները քիչ էին, պատճենահանում ու բազմացնում էինք: Եվ հենց ճակատային գծում վաշտի, դասակի, գումարտակի հրամանատարներին բացատրում էի, թե ինչպես պիտի կոորդինատները դուրս բերեն: Նրանք մոտավորապես կողմնորոշում էին մեզ, թե հակառակորդը որտեղ է գտնվում:

Իվանյանի հետ ծանոթացա Մարտակերտը թողնելու ժամանակ՝ հուլիսի 7-ին: Ես գտնվում էի մարտական կարգերում: Ցերեկը՝ ամենաթեժ ժամանակ, երբ թշնամու ինքնաթիռը ռումբ էր գցում, հրետավորներն էին կրակում, շուրջը կռիվ էր, Վլադիկը մեքենայով մոտեցավ, նրա հետ՝ ինտելիգենտ մի մարդ: Դիրքի մոտ նրան կանգնեցրել եւ հարցրել էին, թե ով է: Ասել էր, որ իրեն ուղեկցեն հրամանատարի մոտ, այսինքն՝ ինձ մոտ: Այդ պահին ես հաշվարկներ էի անում, հրամաններ արձակում, կրակը ղեկավարում: Մոտենում է եւ ներկայանում՝ հրետանու գեներալ-մայոր Իվանյան: Իմ ուրախությանը չափ չկար: Թեեւ ծանոթ չէինք, բայց գրկախառնվեցինք: Ես շատ ուրախ էի, որովհետեւ եկել էր մի մարդ, ով ինձ անպայման օգնության ձեռք կմեկներ: Շատ դժվար էր միայնակ գիշեր-ցերեկ ճակատի մի գծից մյուսն անցնել: Ժամանակը չէր հերիքում, մանավանդ որ, այդ ընթացքում հակառակորդը քնած չէր: Այդ պահին ինքնաթիռի աղմուկ լսվեց. «ԻԼ-21» էր: Օդային ազդանշան, տագնապ տվեցինք: Հրաման տրվեց՝ մտնել թաքստոցները: Ես իրավունք չունեի հեռանալ իմ տեղից՝ մինչեւ բոլորը ապաստարվեին: Բոլորը ենթարկվեցին իմ հրամանին՝ բացի նոր եկած գեներալից: Նրան եւս հրամայեցի մտնել թաքստոցը: Ասաց. «Ինչ ես գոռում գեներալի վրա, ուզեմ՝ կմտնեմ»: Բայց տղաներին հրամայեցի զոռով նրան իջեցնել պատսպարան: Այդ պահին ինքնաթիռը մեզնից մոտ հինգ հարյուր մետր հեռավորության վրա ռումբ գցեց: Եվ նա զգաց, որ իսկապես պատերազմ է, եւ ոչ թե ինչ-որ զինանվերժություն ենք անցկացնում: Երբ ավելի լավ ծանոթացանք միմյանց հետ, պարզաբանեցինք, թե ինչն ինչոց է, ես նրան բացատրեցի, որ իրավիճակը շատ բարդ է, կարելի է ասել՝ հրետանին դեռ պատրաստ չէ, չկան անհրաժեշտ քանակությամբ զինափողեր, անձնակազմի բավարար քանակություն, որպեսզի հնարավոր լինի կարգին մարտ վարել կամ հրետանին պահել: Հաշվի առնելով նրա պատկառելի տարիքը, մոտ յոթանասուն տարեկան էր, խնդրեցի ուսումնական բազա ստեղծել: Նա հաճույքով համաձայնվեց: Գնաց Ստեփանակերտ, պայմանավորվեց Սերժ Սարգսյանի հետ: Իվանյանը շատ ջանքեր ներդրեց այդ գործում, հատկապես հրետանու ստեղծման ուղղությամբ, բարելավեց կազմը՝ եւ՛ քանակական, եւ՛ որակական առումով: Եվ աշխատանքի ընթացքն էր հետաքրքիր, եւ հաջողությամբ լուծում էինք մեր առջեւ դրված բոլոր խնդիրները: Իվանյանին հարցրի, թե ինչու է այս տարիքում եկել այստեղ, երբ Լենինգրադում տուն, ընտանիք ունի: Պատասխանեց. «Ես կարո՞ղ եմ գոնե մի քիչ իմ հայրենիքին ծառայել, իմ պարտքը կատարել»:

Ք. - Ծնունդով որտեղի՞ց էր:

Ժ.Գ. - Ասում են՝ Վրաստանից: Հայրը եւս զինվորական է եղել: Հե-

տո տեղափոխվել են Մոսկվա, այնտեղ սովորել է: Ծառայել է տարբեր տեղերում: Եղել է հրետանավոր, այնուհետեւ՝ հրթիռային զորքերի մասնագետ, հրթիռային բրիգադի գլխավոր հրամանատար: Նրա բրիգադը համարվում էր լավագույններից մեկը խորհրդային բանակում: Շատ գրագետ էր, կիրթ, շնորհքով: Միաժամանակ ուսումնական բազա ստեղծեց նաեւ տանկիստների համար, զորանոցներ՝ իրենց բոլոր հարմարություններով: Նրա ներդրումը անգնահատելի է: Իզուր չէ, որ մեր փոքր ուսումնարանը, որտեղ ութամյա կրթությամբ երեխաներ են սովորում, կոչվում է Իվանյանի անունով:

Մարտակերտի ուղղությամբ, երբ ամրացել էինք Արջաձորում, Գանձասարում, Կիչանում, Սրխավանդում, անընդհատ ծանր մարտեր էին: Ազերիները ուզում էին տիրել Խաչենի կամուրջին, այդ կիրճին, որտեղից կխփեին արդեն Ստեփանակերտին: Եթե Գանձասարը վերցնեին, ապա մեր վիճակը շատ ծանր կլիներ, ես չեմ պատկերացնում, թե ինչպես կկարողանայինք պաշտպանել Ստեփանակերտը եւ, ընդհանրապես, Ղարաբաղը: Այդ ամենածանր ժամանակ Ալեքսանյան Արթուրը, չնայած իր հիվանդությանը, անընդհատ ճակատում էր լինում: Նա կազմակերպչական ունակություններ ուներ եւ իրեն տրված հանձնարարությունները միշտ էլ հաջողությամբ էր իրականացնում: Երբ Հաթերքը, Զարդախաչը, Չափարը հանձնել էինք, Արթուրն ինձ կոորդինատներ տվեց, որ մեծ թվով ադրբեջանցիներ տեխնիկայով տեղավորվել են Չափարի դպրոցի շենքում: Պետք է այդ ուղղությամբ կրակ բաց անեի: Ասացի.

- Գիտե՞ս՝ ես այդ դպրոցում եմ սովորել, ինչպե՞ս կարող եմ իմ դպրոցի վրա կրակել:

- Ի՞նչ անենք, այնտեղ հիմա ադրբեջանցիներ են...

Անկեղծ ասած, ինձ համար շատ ցավոտ էր, բայց ստիպված էի կրակելու հրաման տալ: Նրա մյուս կոորդինատները Զարդախաչում էին՝ իմ գյուղում: Երկու տանկ մեզ հանգիստ չէին տալիս, չէին թողնում գլուխ բարձրացնել, շատ էին վնաս տալիս: Հարցրի, թե որ մասում են նրանք: Նրա նկարագրածից հասկացա, որ իմ հայրական տան մոտ են: Էլ հարկ չհամարեցի ասել, որ դա իմ տունն է: Կրակ բաց արի, ճիշտ ուղղությամբ տեղ հասավ: Մեկը եղբորս տունն էր, մյուսը՝ հորս, իսկ երրորդ տանը տանկն էր խփել: Նման դեպքեր շատ են եղել: Հաթերքի տղաները երեք տարի մնացին իրենց գյուղում: Հարությունյան Սուրիկը, որ Մոսկվայի զինվորական ակադեմիան է ավարտել, մնալով իր գյուղում, ուղղորդում էր կրակը: Այդտեղ ադրբեջանցիները մտել ու կենտրոնացել էին: Բայց այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ իր տղաների հետ նա ստիպված էր գյուղից դուրս գալ: Երբ Գանձասարի ուղղությամբ դրությունը վատացել էր այնքան, որ քիչ էր մնում թուրքերը

գրավեին, Գանձասարի տեր Հովհաննեսը հարցրեց. «Կնքվա՞ծ եք, Ժորա՛»: Ասացի՝ ոչ: Ասաց. «Գոնե կնքվեք, կյանք է, ամեն ինչ էլ կլինի»: Համաձայնվեցի: Կնքահայրս Արթուր Ալեքսանյանն էր: Անունս էլ Անդրանիկ դրեցին: Երեքով երդվեցինք, որ Գանձասարը չենք լքի, կմեռնենք այնտեղ, որպեսզի չտեսնենք, թե ինչպես են Գանձասարին ուրիշները տիրում: Հետո Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ «Մահապարտներ» ջոկատը եկավ: Բարձրահասակ, ամրակազմ տղաներ էին՝ մարտական ոգով լցված: Բայց այդտեղ մենք մեծ սխալ գործեցինք, նույնիսկ կարող եմ ասել, թե ինչպես դա եղավ: Անձրեւոտ օր էր: Եկան «Իկարուսով», տեղավորվեցին Գանձասարում, Վանք գյուղում՝ կահույքի արտադրամասում: Երեկոյան Վազգեն Սարգսյանն ինձ կանչեց, ասաց, որ վաղը պատրաստվում են հարձակվել Վաղուհասի, Հարությունագոմերի վրա, իմ գյուղն էլ կվերցնեն: Այդտեղ էր գտնվում այն ժամանակ գնդապետ Զենեւիչը, որը Սերժ Սարգսյանի խորհրդականն էր: Ասացի.

- Ինչպե՞ս թե հարձակվել: Նրանք դեռ չեն յուրացրել տեղանքը, չգիտեն էլ, թե որտեղ է թշնամին, որքան են, ինչ ուժեր ունեն, նույնիսկ կոնկրետ առաջադրանքը չգիտեն: Ինչպե՞ս կարելի է վաղը հարձակվելու հարց դնել:

- Դե, եկեք ճշտենք թշնամու տեղը, ինչ քանակությամբ են, չէ՞ որ ճակատային գիծը վաղուց է այստեղ:

Տեղի հրամանատարին՝ Վանքի Յուրային, մատնացույց արեց, ասաց. «Թող հրամանատարը զեկուցի, թե որտեղ է գտնվում հակառակորդը»: Իմ քարտեզի վրա ամեն ինչ նկարված էր, ճշգրիտ ցույց տրված, բայց ես քարտեզը ցույց չէի տալիս: Տեղացի տղաները կասեն՝ ինչն ինչից է: Քանի որ Յուրան քարտեզին, ոչ մի բանին չէր տիրապետում, ասաց.

- Դյադյա Ժորա, դու գիտես, դու ցույց տուր:

- Ո՛չ, ահա մաքուր քարտեզը, դու ասա՝ որտեղ, ես կնկարեմ:

- Դե, մի քսանհինգ հոգի այս թմբում են...

Վազգեն Սարգսյանն ասաց.

- Ինչու՞ եք հարյուր անգամ հետախուզություն անցկացնում, քսանհինգ հոգի են, էլի՛:

Ասացի.

- Ո՛չ, այնտեղ քսանհինգ հոգի չեն, ավելի շատ են եւ ոչ թե մի տեղում, այլ ամբողջ գծում:

Նա պարզապես տեղեկացված չէր: Զենեւիչի հետ վիճաբանություն սկսվեց: Ասաց.

- Վազգեն Սարգսյանը որոշում է կայացնում, իսկ Դուք դեմ եք:

- Մենք պետք է հուշենք, որ այդպես չի կարելի: Գոնե մի շաբաթ ժա-

մանակ պետք է տանք, որպեսզի տղաները տեղանքին ծանոթանան, առաջադրանքը ճշտեն՝ ով որտեղ հարձակվի:

Վեճը շատ լուրջ էր: Ես չէի պատկերացնում, որ գնդապետի աստիճան ունեցող կադրային սպան հենց այնպես համաձայնվի՝ մի գիշերում վերցնի եւ անպատրաստ տղաներին կռվի տանի: Չկարողացա համոզել: Հաջորդ օրը նրանք գնացին հակառակորդի ուղղությամբ՝ չիմանալով տեղանքը, որտեղ են ականապատված դաշտերը: Մի քանիսը պայթում են ականների վրա, մի քանիսը հանկարծակի կրակում են մյուսների վրա... Վիրավորներ շատ եղան, երկու օրվա մեջ ահագին կորուստներ ունեցանք: Վազգեն Սարգսյանը հասկացավ, որ շատ մեծ, կոպիտ սխալ է թույլ տվել: Պետք չէր շտապել, հարկավոր էր մի շաբաթ սպասել, հետախուզություն անցկացնել, ամեն ինչին տեղյակ լինել, նոր միայն գործի անցնել: Մի շաբաթում այդ տղաները զոհվեցին: Հիմա գրքերում գրում են, ֆիլմ են նկարահանում, թե «Մահապարտները» ազատագրել են Վաղուհասը, Հարությունագոմերը: Իրականում այդպես չէ: Նրանք Գանձասարից չեն իջել, Վաղուհասը նրանք չեն վերցրել, դա ավելի ուշ է եղել՝ չորս ամիս հետո: Վերակազմակերպեցինք մեր ուժերը, միջոցները, գնացինք առանց նրանց, նրանք արդեն մեզ հետ չէին, համարյա երկու շաբաթվա ընթացքում այլեւս չկային: Ովքեր ողջ էին մնացել, վերադարձան: Ցավալի էր նայել այդ զոհերին: Երբ Գանձասարի մասին ֆիլմ էին նկարում, ինձ էլ խնդրեցին պատմել: Ասացի, որ ես ճշմարտությունն եմ ասելու, խաղալ չեմ կարող: Այդ մարտը իրականում տեղի չունեցավ: Գնացին եւ հանկարծակիի եկան, չգիտեին, որ թշնամին սպասում է իրենց:

Բ. - Եթե այդ տղաների փոխարեն պրոֆեսիոնալ զինվորականներ, կադրային սպաներ լինեին, երեւի բոլորովին այլ իրավիճակ կլիներ:

Ժ.Գ. - Բնականաբար: Հիմա մենք բանակ ունենք, եւ եթե, աստված չանի, պատերազմ լինի, այսօրվա բանակը նախորդի հետ չի համեմատվի՝ ո՛չ մակարդակի, սպաների գրագիտության, ո՛չ տեխնիկայի առումով:

Բ. - Նկատի ունեմ այն, որ հարցերը, որոնք Վազգեն Սարգսյանն էր որոշում, որոշվեին կադրային սպաների օգնությամբ, գուցե այլ կերպ կլիներ:

Ժ.Գ - Բոլորն էլ գիտեն, որ որոշում ընդունելուց առաջ հարկավոր է ամենայն մանրամասնությամբ հաշվարկել, չէ՞ որ մարդկանց կյանքի հետ գործ ունեն:

Բ. - Իսկ նրանք, ովքեր բարձր պաշտոններում էին, բայց չէին ծառայել, փորձ չունեին, ինչպե՞ս էին վերաբերվում կադրային սպաներին:

Ժ.Գ. - Երբ Շահումյանում վիճակը լավ չէր, ես կամավոր գրվեցի: «Արցախ» կոմիտեում ջոկատներ էին կազմում, ուղարկում: Ես ներկայացա, ասացի, որ հրետանու փոխգնդապետ եմ, ծնունդով Ղարաբաղից եմ: Երեք հոգի նստած էին: Նրանցից մեկը, որին «գնդապետ Պետրոսյան» էին դիմում, իմանալով, որ կադրային սպա եմ, նայեց վրաս, ասաց. «Մենք դեռ ձեր կարիքը չենք զգում»: Ես ստիպված էի գնալ օդանավակայան, փող տալ, որպեսզի ինձ՝ որպես «լեւի» ուղեփոխի, ետ ուղարկեն: Հինգ հարյուր ռուբլի տվեցի, ուղղաթիռով եկա Վերին Հոռաթաղ որպես ֆիդայի: Սկզբում, չգիտես ինչու, չէին վստահում, կադրային սպաների հանդեպ անվստահություն կար: Միգուցե այդ պատճառով շատերը չեկան: Սուրիկ Անտոնյան կար, Լենինականի ռուսական գնդում էր ծառայում, ականանետի մասնագետ էր: Եկավ ինձ մոտ, թե. «Հրետանավոր եմ, ավագ լեյտենանտ, ուզում եմ կռվել, իմ հայրենիքը Զագլիկն է»: Կարելի է ասել, որ նա Ղարաբաղի հերոսներից մեկը եղավ, շատ սխրանքներ գործեց: Նրա օգնությամբ ականանետային դիվիզիոն ստեղծեցինք, նա էլ դարձավ հրամանատարը: Օմարում բրիգադի հրամանատարը՝ Սամվել Սաֆարյանը, Անտոնյան Սուրիկը եւ վարորդը՝ Կամոն, զոհվեցին, երբ Օմարը երկրորդ անգամ էինք ազատագրում: Թե որտեղի՞ց էր գալիս այդ անվստահությունը, չգիտեմ: Նույնիսկ երբ եկա Հաթերքի ենթաշրջան, բոլորը գիտեին, որ կադրային սպա եմ՝ փոխգնդապետի կոչումով, հրետանավոր: Ես փորձեցի հավաքել բոլոր հրամանատարներին, քանի որ մարտը սկսվում էր, ասենք, Չափարի ուղղությամբ: Այն ժամանակ դեռ Ումուտլուն գոյություն ուներ: Այնտեղ ՕՄՕՆ-ականներ կային, նույնիսկ՝ ռուսական զորքեր: Չափարի տղաները կռվում են, իսկ Վաղուհասում մի մասը գալիս է, մի մասը՝ ոչ: Անհամաձայնություն, անկազմակերպվածություն կար, ով ուզեց՝ եկավ օգնության, ով չուզեց՝ չեկավ: Մի օր ես անցա այդ գյուղերով, քանի որ ես Չափարում էլ էի սովորել, Հաթերքում էլ, եւ բոլորը ճանաչում էին ինձ, իմ բարեկամների կեսը Վաղուհասից են, այնտեղ էլ էին ինձ ճանաչում: Ուզում էի հավաքել բոլոր հրամանատարներին, որպեսզի մի կառուցվածք լինի, ընդհանուր համաձայնություն՝ ով պիտի գնա, ով կազմակերպի, այլ ոչ թե նրա համար, որ ինձ հրամանատար նշանակեն: Գնացինք, մեկ թե երկու հոգի զոհվեց, կարծես այդպես էլ պիտի լիներ, ամեն ինչ անկազմակերպ էր: Երբ նրանց հավաքեցի, զրուցեցի, կարծես թե համաձայն էին: Հետո սկսեցին իրար մեջ խոսել, թե երեւի ես ուզում եմ այստեղ հրամանատար դառնալ: Ասացի, որ ես հրամանատար չեմ ուզում լինել, այլ խորհրդատու, չէ՞ որ սա պատերազմ է, հայրենիքի ճակատագիրն է որոշվում:

Վաղուհասի բոլոր տղաներին անխտիր կարելի է հերոս կոչել: Հաթերքի տղաները վախենում էին, թեեւ նրանք ավելի շատ էին՝ մոտ հազար հոգի: Հաթերքի տղաներից կարելի էր գունդ կազմել: Բայց երբ

Հաթերքը հանձնեցինք, այդ տղաները գնացին եւ չեկան: Երեսուն հոգի մնացել էին: Նրանց մեջ կային տղաներ, որոնք հերոսաբար կռվեցին, նաեւ զոհվեցին, բայց վաղուհասցիների հետ չեն համեմատվի: Դա միանգամայն այլ դաստիարակություն էր: Վաղուհասում սկզբում մի քանի ջոկատներ էին ստեղծվել՝ «Դաշնակ», ՀԱԲ, ՀՀԾ... Նրանց համար սննդամթերքը Հայաստանից կուսակցությունն էր ուղարկում, ինչը տղաների մեջ կռիվ էր գցում: Ենթադրենք, մեկին «Սալյուտ» ծխախոտ էին ուղարկում, մյուսին՝ «Պրիմա», կամ թե՝ շաքարավազը մեզ այսքան տվեցին, նրանց կոնֆետ, երշիկ տվեցին, մեզ չտվեցին... Եվ կռիվ նրանք միասին չգնացին: «Դաշնակի» հրամանատարը վերցրեց իր տղաներին եւ գնաց՝ չիմանալով հանձնարարությունը: Այսինքն՝ միաբան չէին: Մի բռունցք պիտի լինեին, մի հրամանատար պիտի լիներ, հակառակ դեպքում՝ ոչ մի խնդիր լավ լուծում չէր ստանում: Նորից վերադարձա այդ ճակատից, չնայած մեծ մասամբ եղել եմ հարավային ուղղության վրա, կենտրոնական մասում, երբ գլոբալ հարցեր էին որոշվում. դրանք էին՝ Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Հորադիզի, Կուբաթլուի, Զանգելանի, Քելբաջարի ազատագրումը: Բնականաբար, բոլորին էլ մասնակցել եմ: Բայց այն տպավորությունն ունեմ, որ ամենաշատ կորուստները մենք Մարտակերտում ենք տվել: Պատճառն այն էր, որ սկզբում ամեն ինչ անկազմակերպ էր, ընդհանուր համաձայնություն չկար, բանակային կառուցվածք չկար, ֆիդայիներ էին, ով ինչպես ուզում էր, այնպես էլ անում էր: Դրությունը շատ ծանր էր: Գտնվում էինք այդ նույն ճակատային գծում եւ երկու օրից պատրաստվում էինք ազատագրել Վաղուհասը, Հարությունագոմերը, Կոճողոտը, Դրմբոնը, Հաթերքը, Զարդախաչը: Շատ լավ էինք պատրաստվում. տղաները հասկանում էին, որ ծանր է լինելու, քանի որ թշնամին մի ամբողջ տարի էր՝ ամրացել էր այդ շրջաններում: Մեր երկու գումարտակները հիմնականում Արջաձորում էին կենտրոնացել: Մշակույթի նախարարին՝ Նելլի Ոսկանյանին, առաջարկեցի անսամբլ ուղարկել այնտեղ, որպեսզի մարտից առաջ տղաների համար համերգ տան՝ նրանց ոգեշնչելու համար: Նելլին ասաց. «Գի՞ժ եք, ինչ է, տղաները վիրավոր են, զոհվածներ կան, եւ այսպիսի ժամանակ ուզում եք, որ գնան երգեն ու պարե՞ն»: Ասացի. «Իսկ ի՞նչ կա որ, խրամատներում էլ են երգում»: Ասաց. «Չգիտեմ, եթե ուզում եք, փորձենք»: Կարգավորեցի ավտոբուսի հարցը: Նաիրա Ալավերդյանն էր, ջութակահար Բորյան, Ստեփանակերտի նշանավոր մշակութային գործիչները, Դրամատիկական թատրոնից արտիստներ կային, որոնք փոքրիկ ներկայացումներ էին տալիս: Չեք պատկերացնի՝ տղաները ոնց էին ոգեշնչվել դրանից: 1993 թվականին էր դա՝ Վաղուհասը վերցնելուց առաջ: Դրանից հետո ավանդույթի պես շարունակվեց: Երբ մութն ընկնում էր, եւ

մարտը դադարում, ռացիաները միացնում էին, գիտեին որ ժամը ութին, իննին հրետանու ալիքի վրա համերգ է: Երգը ռացիայով տարբեր տեղերում լսում էին: Տղաների ոգին բարձրացնելու շատ լավ միջոց էր: Նրանք էլ էին մասնակցում: Մեխակ անունով մի ջահել տղա կար, շատ գեղեցիկ երգում էր: Մեխակը Մարտունուց էր, բայց միշտ այդ ուղղության վրա էր կռվում: Շատ լավ, սիրուն տղա էր: Ասացի. «Հրետանիում անսամբլ ստեղծենք, կգնաս, ճակատներում կերգես»: Ասաց. «Կռիվը պրծնի՝ հետո»: Հարությունագոմերում զոհվեց այդ տղան: Շատ ցավալի էր նրա մահը:

Բ. - Իսկ Վաղուհասի գործողությունն ինչպե՞ս կազմակերպեցիք, ծա՞նր մարտ էր, ի՞նչն էր հատկանշական այնտեղ:

Ժ.Գ. - Այդ ժամանակ մենք արդեն բանակ էինք ստեղծել, այն կառուցվածք ուներ, զինվորական երդում էինք ընդունել: Ջոկատ արտահայտությունը այլեւս չկար, կար՝ դասակ, վաշտ, գումարտակ եւ այլն: Տղաները քարտեզն էին ուսումնասիրում, քիչ-քիչ սկսել էին նկարել, հետախուզությունն էր աշխատում: Այսինքն՝ կազմակերպված էր դարձել:

Բ. - Իսկ հակառակորդը ի՞նչ վիճակում էր, զուգահեռ առա՞ջ էր գնում:

Ժ.Գ. - Նրանք նույնպես զարգանում էին: Չի կարելի թերագնահատել: Բայց գիտենք, որ ադրբեջանցիները վախկոտ էին, եթե մի հոգի մեռնում էր, մնացած քսանը փախչում էին: Այդ գիծը նրանց արյան մեջ է: Որքան էլ հիմա հեռուստացույցով ելույթ են ունենում թե՝ «նորից պատերազմ լինի, մենք կհաղթենք», միեւնույնն է, ոչ մի դեպքում նման բան չի լինի: Ես գիտեմ նրանց: Նրանք կարող են գիշերը գաղտնի թիկունք մտնել եւ վնաս տալ, լեզու բռնել: Եվ դա հատուկ չեն սովորել: Նրանց բնավորության, արյան մեջ է գիշերը մարդկանց թալանելու սովորությունը: Երբ ես ծառայում էի խորհրդային բանակում, ինձ հետ հայազգի կադրային սպաներ կային, մենք հրամանատարական պաշտոններ էինք զբաղեցնում, ադրբեջանցիները՝ թիկունքային: Նրանք անտեղյակ էին տանկից, հրետանուց, չգիտեին՝ ինչ է համազորային կռիվը: Նույնը զինվորներն էին. ուզում էին հնոցապան լինել կամ նման այլ աշխատանք կատարել, միայն թե ավտոմատ չվերցնեին: Մեր տղաներից էլ կային այնպիսիք, որ ուզում էին հրամանատարների վարորդ լինել, բայց հիմնականում պրոֆեսիոնալներ էին, ինչն էլ մեր հաջողության գրավականներից էր: Խորհրդային բանակում մեր տղաները մեծ դաս են ստացել՝ ինչպես վարել մարտական գործողությունները: Երբ Վաղուհասի, Հարությունագոմերի ուղղությամբ մանրամասն նախապատրաստական աշխատանքներ էինք կատարում, Սամվել Բաբայանը հարցրեց, թե մոտավորապես որքան արկ, ակա-

նանետի համար որքան ական է հարկավոր: Ես նախօրոք հաշվել էի: Ասացի.

- Երկու հազար հարյուր վաթսուն:

- Ի՞նչ ես ասում, ուզում ես Բաքու՞ն վերցնել:

- Ոչ, ես դեռ մեկ տասներորդ մասն եմ ասում: Այսպիսի ճակատում ավելին է պետք: Սահմանված չափ գոյություն ունի, թե, ենթադրենք, մեկ հեկտարի համար պաշտպանական կետում նորմայով որքան արկ է անհրաժեշտ, որպեսզի իսկապես հակառակորդին վնաս հասցվի: Հենց այնպես թվեր չեմ ասում: Դու ինձ երկու հազար հատ տուր, ես քեզ հինգ հազարը կվերադարձնեմ,- ասացի:

- Որտեղի՞ց:

- Թալանի ենք գնալու, նրանք ամբողջությամբ թողնելու են: Եթե այդքան արկ եւ ական ունենանք, ամեն ինչը ճիշտ, կանոնավոր կերպով անենք, ապա հաջողություններ կունենանք, քիչ կորուստներ կտանք:

Երբ հարձակումից առաջ հրետանին սկսում է «մշակել», նաեւ հետեւակայինների ոգին է բարձրանում: Երբ ամեն ինչ արդեն ծխի մեջ է, բոլորը փախչում են, նրա համար ավելի հեշտ է լինում, ինչպես նաեւ՝ տանկիստների համար: Հակատանկային միջոցներ էլ ձեռք բերեցինք՝ «Ֆագոտ», հակատանկային թնդանոթներ: Արդեն ծրագրել էինք գործողությունը կամ հարձակումը, կամ էլ հակահարձակումը, արդեն ինչպես որ սահմանված էր կանոնադրությամբ, կառուցվածքով, չէինք գոռում «ուռռա», վազում այդ կետը վերցնում: Ենթադրենք՝ այդ ճակատում գլխավոր հրամանատար էր նշանակված, որ ղեկավարում էր մարտը, առաջադրանքներ էր տալիս հրետանավորներին, տանկիստներին, հետեւակայիններին: Հաջողությունը դրանում էր: Ադրբեջանցիները միայն հասցնում էին փախչել: Հեռուստացույցով մի քանի անգամ ցույց տվեցին Ալեքսանդր Նեւզորովի հաղորդումը, թե ինչպես է ադրբեջանցի գեներալը կանգնեցնում զորքին, հեռացնում է զինվորներին: Ինչպե՞ս կարող էին չփախչել այդ կրակից, մեր ոգուց:

Բ. - Որքան գիտեմ, նրանք հետեւում զորքեր ունեին, որոնք թույլ չէին տալիս նահանջել:

Ժ.Գ. - Ես այնտեղ չեմ եղել, չգիտեմ, բայց խորհրդային բանակում կային հատուկ ջոկատներ, որոնք նահանջողների վրա կրակում էին: Իմ հաշվարկներով՝ մենք մի քանի անգամ ավելի շատ զոհ ենք տվել՝ բնակչության առումով, քան նրանք:

Բ. - Իսկ ընդհանուր առմամբ՝ նրանք չորս անգամ ավելի շատ զոհ են ունեցել:

Ժ.Գ. - Ավելի շատ՝ մոտ յոթանասուն հազար:

Բ. - Պաշտոնապես ասում են՝ չորս անգամ ավելի:

Ժ.Գ. - Ինչպե՞ս էին նրանք հաշվում: Հեռուստացույցով, ռադիոյով ինֆորմացիա էին տալիս՝ իբր իրենք այդ օրը հաջողություններ են ունեցել այսինչ ճակատում, հայկական կողմը կորուստներ է տվել, որ հրետանին, գումարտակը վերցրել են... Այդ ամբողջը խաբեություն էր: Իրենց զոհվածներին էլ ասում էին անհայտ կորածներ են կամ՝ ճակատը թողել են, փախել, այսինքն՝ նույնիսկ Ադրբեջանից են փախչել: Բայց իրականում թափված-ընկած էին, ժամանակ էլ չկար հավաքելու, կույտ անելու, որպեսզի ճանապարհը նորմալ անցնեինք: Զանգվածային կորուստներ էին դրանք: Դրմբոնի, Սարսանգի ջրամբարի ուղղությամբ, երբ նրանց հետապնդել էինք, կոշիկները հանել, ոտաբոբիկ էին վազել, զենքերն էին գցել: Ամեն ինչ անում էին, որ փախչելը հեշտ լինի: Նրանց զինվորական բաճկոնները, սապոգները, վալինկաները թափված էին ամենուրեք: Սկզբում ինձ անհասկանալի էր, թե ինչու է հագուստը թափված ճանապարհներին, բայց հետո իմացա, որ նույնիսկ գոտիներն էին արձակում, հանում, որպեսզի չխանգարի: Նրանք բարոյապես, հոգեբանորեն պատրաստ չէին: Սա առաջին հերթին: Գերիների հետ երբ զրուցում էինք, հարցնում էինք, թե որտեղից են եկել: Ասում էին, որ իրենց զոռով են բերել: Միգուցե գերի էր ընկել, դրա համար էր այդպես ասում, իսկ իրականում սխրանքներ է գործել: Բայց նման դեպք մեր տղաների մեջ հազարից մեկ էր պատահում: Բայց ով էլ չի վախենում, ուրեմն հիմար է: Ասենք՝ արկը թռչում է, մեկն էլ թե՝ ես հերոս եմ, կարող եմ կանգնել, ուրեմն՝ գլուխը չի աշխատում: Մի դեպք պատմեմ: Ինձ հաղորդում են, որ այսինչ հատվածում դրությունը լուրջ է, եւ կանչում են այդտեղ: Ես աջ ճակատում էի, իսկ դա կենտրոնում էր: Թշնամին շատ էր գնդակոծել մեր առջեւի եզրը, խրամատները: Պետք էր պարզել, թե ինչու է Աղաբեկյան Արթուրը ինձ խնդրել այնտեղ գնալ: Պարզել, թե որտեղ են գտնվում հրետանային դիտորդական կետը, հետախույզը, հրետանու ուղղորդողը, որպեսզի նրանց վերացնեինք: Գալիս եմ մի տեղ, իմ հետախույզներն աշխատում են... Մարտունու հրամանատարին Ավո էինք ասում: Երբ նա մտավ թշնամու խրամատը, ձեռքին ոչինչ չկար՝ ո՛չ ավտոմատ, ո՛չ նռնակ, ո՛չ փամփուշտ: Մի քար վերցրեց, թքեց խրամատի մեջ, գոռաց: Տասներկու հոգի էին: Բոլորը պառկեցին: Ավտոմատները հավաքեց, երբ ձեռքին ընդամենը մի քար էր:

Մարտակերտի Միշիկ էինք ասում՝ փոքր Միշիկը, որ հիմա ակադեմիայում է սովորում: Նա շատ սխրանքներ գործեց: Գումարտակի հրամանատար էր, շատ համարձակ, շփվող տղա էր, շատ խելացի որոշումներ էր կայացնում: Նա էր, Մարտակերտից Աշոտը... Ցավոք, բոլորի ազգանունները չեմ հիշում: «Ալինկո» ռացիաներով միմյանց հետ խոսում էինք, մարտը վարում: Մեր գործողությունները համաձայնեց-

ված էին: Սկզբում անուններով էինք դիմում, հետո սկսեցինք ծածկանուններով խոսել, ասենք՝ «Ժորա-1», «Ժորա-2»: Լինում էր, որ մի տարի կողք կողքի կռվում էինք, օրը տասն անգամ խոսում իրար հետ, հարցեր վճռում, բայց երբեք իրար չէինք տեսնում: Հետո հանդիպում էինք շտաբում, հարցնում էինք՝ սա ո՞վ է, ասում էին՝ Աշոտն է, կամ մականունը տալիս: Գրկախառնվում էինք, ասում էի՝ բա ես էլ Ժորան եմ: Հետաքրքիր դեպքեր պատահում էին: Մեր տղաները շատ խելացի էին: Լեւոն Մնացականյանը, որ ռազմական ակադեմիան ավարտեց, նույնպես հրետանավոր էր, ականանետի մասնագետ: Սկզբում բոլորն էլ հրացանը ձեռքին ֆիդայիներ էին, ի՞նչ մասնագետների մասին է խոսքը: Իսկ Մնացականյան Լեւոնը կենտրոնական գումարտակում էր քաղաքի տղաների հետ: Հետո ստեղծվեց Կենտրոնական գունդը: Մի անգամ շտաբում էի, առանձնասենյակում նստած: Այնտեղ մտավ երիտասարդ, շիկահեր մի տղա թե՝ կարելի՞ է: Ներս եմ հրավիրում: Ասում է.

- Ես եւ թնդանոթ ունեմ, եւ ականանետ, բայց պրիբոր չունեմ, ինձ պրիբոր չէի՞ք տա:

- Իսկ դու ո՞վ ես,- հարցրի ես:

- Ես Ցորում եմ:

- Կրթություն ունե՞ս, ինչ-որ բան գիտե՞ս:

- Այո:

- Դե, տեսնեմ, թե ինչպե՞ս պետք է պատրաստվես, այդ պրիբորներն ինչպե՞ս պիտի օգտագործես:

Սկսեց ամեն ինչ ճշգրիտ ներկայացնել: Գրագետ, կիրթ տղա էր: Բնականաբար, պետք է օգնեի՝ ինչով կարող էի: Դիմեցի Սերժ Սարգսյանին, ասացի, որ մի հրետանավոր կա, ում կարելի է վստահել, հրետանային թնդանոթները, հաուբիցները կտանք նրան, նա կղեկավարի: Սկզբնական շրջանում Ցորում սկսեց հրետանին ստեղծել: Երբ հրետանային բրիգադի հրամանատարը՝ Սաֆարյան Սամվելը, մահացավ, Մնացականյան Լյովային նշանակեցինք բրիգադի հրամանատար: Իսկ հետո նա դարձավ դիվիզիայի հրամանատար: Մեր բախտը բերել էր, որ մենք այդպիսի խելացի, քաջ տղաներ ունեինք: Վերցնենք Շուշիի ազատագրումը: Իսկ ինչպե՞ս կարելի էր գրավել այն: Եթե հավաքեին Մոսկվայի ամբողջ գլխավոր շտաբը եւ ասեին՝ մշակեք Շուշիի գրավման պլանը, նրանք կասեին՝ դա անհնար է: Ճիշտն ասած, ես մտածում էի, որ նրանք չեն հավատա, թե կարելի է այդ սարերով բարձրանալ եւ այնտեղից դուրս մղել թշնամուն: Տղաները գնացին՝ հաստատ իմանալով, որ դեպի մահ են գնում: Պետք էր վաթսուն աստիճան թեքությամբ գնալ եւ այնտեղից հանել հակառակորդին: Երբ Շուշին վերցրել էինք, եկեղեցում գտանք պահեստավորված վեց հարյուր հիսուն «Գրադի» արկեր, վեց հարյուր հիսուն հատ՝ կոմպլեկտով: Իմ ուրախությանը չափ չկար: Իսկ երկու հազար արկերի պարկուճներ թափված էին Ստեփանակերտում: Այդ երկու հազար արկը եթե գրագետ օգտագործեին, ապա գետնի երեսից կարող էին ջնջել Ստեփանակերտը:

Կարող եմ շատ բան պատմել Աղաբեկյան Արթուրի մասին: Նա շատ գրագետ էր: Հադրութի շրջանում նրան վստահում էին մեծից փոքր: Գրիգորյան Մանվելն իր գումարտակով էդիլլուում էր: Հետո գունդ ստեղծեցին: Գուցե հադրութցիներին նաեւ ոգեշնչում էր այն, որ Մանվելը այնտեղ է: Ադրբեջանցիները նրան «անտառի արջ» էին ասում: Նրանք գրեթե ամեն երեկո հանդիպում էին՝ քննարկելու, թե ինչ պետք է անեն, ինչ խնդիրներ, հանձնարարություններ կան, որն է մեր թույլ տեղը: Ես հաճախ եմ ներկա եղել նրանց հանդիպումներին, հատկապես այն ժամանակ, երբ մենք պատրաստվում էինք ազատագրել Ֆիզուլին եւ մեր բռնագաղթված գյուղերը: Մեր տղաների համար շատ ծանր պահեր են եղել, բայց նա այնպես էր ոգեշնչում նրանց, որ կարծես տղաները նորից ծնվեին: Մի անգամ երեք տանկ էին գալիս, հեռավորությունն ընդամենը հարյուր հիսուն մետր էր: Նրանք զեկուցում են Արթուրին. «Երեք տանկ են գալիս, ի՞նչ անենք»: Ասում է. «Դրանք մեր տանկերն են, հանկարծ չխփեք»: Երբ տարածությունը փոքրացավ, ասաց. «Հիմա խփեք, դրանք թուրքի տանկեր են»: Համոզված էր, որ մեծ հեռավորությունից նրանք չէին կարող խփել, կվրիպեին: Երեք տանկերն էլ ոչնչացվեցին: Բոլորը լսում ու հավատում էին Արթուրին, մտածում էին, որ եթե նա չլինի, Հադրութը եւս չի լինի: Նույն կերպ սիրում ու հարգում էին Մարտակերտի Վլադիմիրին: Ցավոք սրտի, զոհվեց: Եթե նա ողջ մնար, վստահ եմ, մենք Մարտակերտը չէինք տա: Մաճկալաշենի Արմենը, Նելսոնը հրաշալի տղաներ էին, հերոսը դեռ այն բառը չէ: Շատերին դեռ չգիտենք էլ: Ես մի հրամանատարական կետում էի, հրետանին էի ղեկավարում, ինձանից մոտ երեք հարյուր մետր ձախ դիտորդական կետն էր, որտեղ հրետանավորներ կային, ավելի ճիշտ, ականանետներ: Նրանք ղեկավարում էին իրենց ականանետային մարտկոցները:

Մարտակերտը վերցնում ենք, թուրքերը ետ են քաշվում, պետավտոտեսչության պոստի հետեւում խրամատավորվում, դիրք են դնում: Ինձ նշանակում են այդ ճակատի՝ Մարտակերտի ուղղության պատասխանատու: Ընդգրկված էին Շուշիի գունդը, Ցորի գնդի մի մասը, երրորդ պաշտպանական շրջանի գնդի մի մասը՝ Նելսոնի գլխավորությամբ, Մարտակերտի գունդը, հրետանու բրիգադը եւ այլն: Խնդիր էր դրված, որ մինչեւ մայիսի 20-ը պիտի վերցնենք Չայլուն, Լենինավանը, Կարմիրավանը: Հաջորդ գլխավոր ուղղությունը Միրբաշիրն էր: Գլխա-

վոր նպատակը Չայլուի սիֆոնը մեր ձեռքը վերցնելն էր, քանի որ Թարթառի ջրերից նրանք ավելի շատ էին օգտվում, քան մենք: Հետախուզություն անցկացրինք: Մի ամսից յուրաքանչյուրը գիտեր իր անելիքը, ուղղությունը: Առաջին անգամ հրամանատարներին հավաքում եմ, զրուցում, հարցերը ճշտում, ամեն օր մի նոր հարց էր առաջանում, քանի որ թուրքերն իրենց ուժերը պատրաստում էին: Մայիսի 14-ին լրիվ պատրաստված՝ ես զեկուցում եմ Սամվել Բաբայանին, որ կարող ենք առավոտյան սկսել: Մայիսի 16-ին հրաման տրվեց՝ կրակը դադարեցնել: Մայիսի 15-ի առավոտյան անձրեւ եկավ, որը չէր թողնում տանկերը լավ շարժվեին, մանավանդ որ կավային հողեր էին այնտեղ: Այդ օրը սպասեցինք: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 11-ին, արդեն հրաման տվեցի՝ տանկերը տաքացնել, հրետանին պատրաստել, մինչեւ ժամը 12-ը հարձակումը սկսում ենք: Թուրքերն արդեն վախեցել էին: Բնակչության մեծ մասը դուրս էր եկել Միրբաշիրից: Հրաման տվեցի, որ հրետանին տասը րոպեից սկսի: Այդ ժամանակ ստացա Սամվել Բաբայանի հրամանը՝ «Դադարեցնե՛լ, կռիվը սրանով վերջանում է»: Ես շատ ափսոսացի: Գիտեի, որ այդ օրը զոհեր կտայինք, բայց մեր հայկական գյուղերը հաստատ կվերցնեինք, ես դա երաշխավորում էի: Սիֆոնը վերցնելուց հետո ավելի լավ դիրք կգրավեինք: Մենք լրիվ պատրաստ էինք թե՛ զորքի, թե՛ զենքի առումով, ամեն ինչով ապահովված էինք: Նա ինձ առաջադրանքը տվել էր մայիսի 20-ի համար, բայց 14-ին արդեն պատրաստ էինք: Խանգարեց միայն այն, որ ընդհանուր համաձայնության եկան՝ դադարեցնել կրակը: Թուրքերն այդ պահին ուրախությունից հրավառություն արեցին: Հասկացող մարդու համար մեծ ցավ է գյուղը թողնել թշնամուն ու համաձայնության գալ: Հրամանը մեկ օր ուշ տրվեր, այդ գյուղերը անպայման մերը կլինեին:

Պատմում է Վալերի Պողոսյանը
26.09.2005 թ., Երեւան



Վ.Պ. - Սահմանադրական դատարանի անդամ եմ: 1998-ին եղել եմ ներքին գործերի նախարար: Մինչ այդ Գերագույն խորհրդի պատգամավոր եմ եղել: Այնուհետեւ Ազգային անվտանգության ծառայության պետն էի՝ մինչեւ 1993 թ.: 1993-ի վերջերից մինչեւ 1996 թվականը եղել եմ Ազգային ժողովի նախագահի խորհրդականը:

Ք. - Հետաքրքիր է անվտանգության ծառայության նպատակերպումը, ձեւավորումը, կառուցվածքը: Անվտանգությունն ինչպե՞ս էիք պատկերացնում, այն նաեւ խորհրդային ՊԱԿ-ի ժառանգորդն էր...

Վ.Պ. - Ծառայությունը, որտեղ ես աշխատել եմ, անվտանգության համակարգի մի բաղկացուցիչ մասն էր միայն: Կային նաեւ բանակ, այլ ծառայություններ, որոնց հետ ես գործի բերումով շփվում էի, բայց չի միջամտում: Հիմնականում երկու ծառայություն ուներ՝ հետախուզությունը եւ հակահետախուզությունը, ու եւս մի քանիսը, որոնք զբաղվում էին այդ երկուսին: Կար տնտեսության բնագավառում հանցագործությունների հետ առնչվող ծառայություն, ՊԱԿ-ից հայտնի ավելորդ վարչությունը, որը մարդկանց քաղաքական հայացքներով էր զբաղվում եւ, բնականաբար, փակվեց: Մենք ստեղծեցինք նոր ծառայություն՝ այդ խնդիրը լուծող, բայց արդեն նոր տեղափարախոսության հիման վրա, այն ուղղված էր սահմանադրական կարգի պահպանմանը:

Ներքին գործերի նախարարությունում աշխատելու ժամանակ ես ավելի շատ զբաղվում էի Նախիջեւանի եւ Ադրբեջանի հետ կապված հարցերով, քան այն գործերով, որոնք ուներ ներքին գործերի նախարարությունը: Հիմնականում մազութի հարցն էր: Անընդհատ կապի մեջ էի Նախիջեւանի ներքին գործերի նախարար Մամեդովի եւ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Մազութը ամիսներ շարունակ Նախիջեւանի տարածքով էր բերվում: Անընդհատ ինչ-ինչ պատճառներով ճանապարհը փակվում էր: Գնում էինք, նորից ճանապարհը բացել տալիս: Պատճառը երբեմն ադրբե-

ջանցիներն էին, երբեմն մենք՝ որոշ աշխատակիցների չհասության պատճառով: Մի անգամ Մեղրիում տեղացիները կանգնեցրին մարդատար գնացքը եւ պատանդ վերցրին բոլոր ադրբեջանցի ուղեւորներին: Հիմնական պատճառն այն էր, որ այնտեղ գտնվող ջոկատների տղաներից շատերի հարազատներին ադրբեջանցիներն էին պատանդ վերցրել ղարաբաղյան կռիվների ժամանակ:

Բ. - Ե՞րբ էր:

Վ.Պ. - 1991-ի վերջին թե 1992-ի սկզբին: Ստիպված եղանք Մեղրիում արտակարգ դրություն հայտարարել: Երկար եւ լուրջ բանակցությունների արդյունքում միայն մեզ հաջողվեց խնդիրը հարթել: Մազութը Վրաստանից անցնում էր Ադրբեջան, Բաքվից էլ՝ Նախիջեւան: Մազութը առաջին հերթին մեզ էր անհրաժեշտ, բայց նախիջեւանցիները նույնպես օգտվում էին, նրանք էլ էին շահագրգռված, եւ փոխզիջման տարբերակներ միշտ էլ գտնում էինք:

Բ. - Երկաթգիծն այդ ժամանակ դեռ աշխատում էր:

Վ.Պ. - Այո: Ես անընդհատ հետեւում էի, թե գնացքը որ ժամին կայարանից դուրս եկավ, երբ եւ ուր հասավ:

Բ. - Իսկ հետախուզությունն ինչպե՞ս էր աշխատում:

Վ.Պ. - Մենք հետախուզության նոր ծառայություն ստեղծեցինք, որովհետեւ հինը, ըստ էության, գոյություն չուներ, ամբողջը Մոսկվայից էր ղեկավարվում, մեր քիչ թե շատ լավ մասնագետներին էլ տարել էին այնտեղ: Եթե հակահետախուզությունը ամեն շրջանում, երկրամասում համապատասխան կառուցվածքներ ուներ, ապա հետախուզությունը որպես այդպիսին չի եղել եւ չէր կարող լինել: Հետախուզությունն իր իսկական իմաստով մեր հանրապետությունում կազմակերպվում էր առաջին անգամ, եւ անելիքները բնականաբար շատ էին:

Իմ առաջին գործը Ղարաբաղի հետ կապված... Երբ ես նախարար էի, ինձ մոտ Արմեն Իսագուլովը եկավ: Ես ոչ պաշտոնապես որոշեցի, որ այն, ինչ անում ենք Հայաստանի շրջանների համար՝ բոլոր ծախսերը եւ մյուս միջոցառումները, նույնը պետք է անենք Ղարաբաղի համար, քանի որ այն համարում էի մեր երեսունվեց շրջաններից մեկը: Եվ հնարավորության սահմաններում ինչ-որ բաներ անում էինք: Հետո, երբ ՊԱԿ-ում էի աշխատում, մոտեցումը նույնն էր: Հետագայում դա պաշտոնական բնույթ կրեց:

Բ. - Իսկ ՊԱԿ-ը կարողանու՞մ էր օգտագործել Ադրբեջանի թույլ կողմերը, այն է՝ ներսում ազգային շարժումների առաջացումը եւ այլն:

Վ.Պ. - Այդ ուղղությամբ աշխատանքներ ձեռնարկվում էին, բայց ոչ շատ խորը եւ լուրջ, ինչը հիմնականում պայմանավորված էր կադրերի բացակայությամբ: Լրջորեն պատրաստված, Ադրբեջանը լավ իմացող

կադրեր չկային: Եվ՛ ՊԱԿ-ը, եւ՛ ներքին գործերի նախարարությունը Հայաստանի բոլոր շրջաններում ունեին բաժիններ, որոնց միջոցով էինք տեղեկատվություն հավաքում, այնտեղ լավ կապեր ունեին հարեւան ադրբեջանցիների հետ: Ցանկացած ինֆորմացիա կարող էր շատ անհրաժեշտ լինել: Շատ դեպքեր են եղել, որ Վազգեն Սարգսյանի հետ պայմանավորվել ենք, արագ հավաքել ջոկատներ եւ ուղարկել այն շրջանները, որտեղ տեղային կռիվներ էին լինում: Բացի այդ, ունեինք մշտական ջոկատներ, որոնց մի մասը Նախիջեւանի կողմում էր, մի մասը՝ Իջեւան - Շամշադինի:

Բ. - Սահմանների հսկողությունը ձե՞զ էր հանձնված:

Վ.Պ. - Ոչ: Այդ ժամանակ սահմանապահ զորքերն արդեն անջատ էին, ՊԱԿ-ին չէին ենթարկվում, պաշտպանության նախարարությանն էին ենթարկվում: Մինչեւ իմ աշխատանքի անցնելը ՊԱԿ-ում, ՆԳՆ-ում ինչքան զենք կար, տրվել էր պաշտպանության կոմիտեին:

Բ. - Հատուկ ծրագրերի վարչության իմ ղեկավարած բաժինը համագործակցում էր անվտանգության ծառայության հետ, լեզգի տղաներ էինք բերում Ադրբեջանի Կուսարիի շրջանից, մարզում նրանց...

Վ.Պ. - Այո, կային համապատասխան փորձ ունեցող մարդիկ, որոնք զբաղվում էին այդ հարցերով, հակահետախուզությունն էր ինչ-որ բան անում: Բայց աշխատողների մի մասին Վազգեն Սարգսյանը տարավ պաշտպանության նախարարություն:

Բ. - Ձեզանից հետո Ազոյանը անցավ աշխատանքի: Բայց Դավիթ Շահնազարյանը նրան չէր ընդունում՝ պատճառաբանելով, թե սովետական հետախույզ է...

Վ.Պ. - Ես դրան սկզբունքորեն դեմ էի: Նախ՝ ու՞մ պետք է բերեինք, որ սովետական շրջանից եկած չլիներ, եւ հետո, ենթադրենք՝ բերեինք, սովետական հետախուզության համար պրոբլե՞մ էր նրանց հավաքագրելը: Ավելի լավ է՝ իմանանք, թե ովքեր են, այդ հնարավոր տարբերակն էլ դիտենք, այդ սկզբունքով աշխատենք: Չի կարելի առանց կոնկրետ փաստ ունենալու ասել, թե ուրիշի լրտես է: Թերեւս դրանք ստանդարտ պատճառաբանություններ էին՝ ինչ-ինչ մարդկանց հեռացնելու համար: Այդ նույն Ազոյանը գնաց պաշտպանության նախարարությունում որպես հետախուզության պետ աշխատեց: Ճիշտ է, նրանց հետ կապերը կային, բայց ինչու՞ մտածել, թե այդ կապերը միայն վատ առումով են: Ես էլ Մոսկվայի հետ կապեր ունեի, նաեւ՝ իմ աշխատողները, եւ դա բավական մեծ ինֆորմացիայի աղբյուր էր: Բայց ոչ ոք ինֆորմացիա չի տա, եթե դու էլ չտաս, եւ ինֆորմացիայի փոխանակում էր լինում: Պետք էր պարզապես կարողանալ ճիշտ կազմակերպել, օգտագործել այդ համագործակցությունը:

Ես մի դեպք եմ հիշում, այն, որ Ադրբեջանից ինքնաթիռ փախցրինք:

Կազմակերպիչները Ազգային անվտանգության խորհրդականի աշխատողներն էին, նրանք էին գտել այդ ռուսին: Մենք ինչ-որ չափով մասնակցում էինք: Շատ ուրախացանք, որ հաջողությամբ ավարտվեց, սակայն կարող էինք տապալվել: Փախուստից հետո նա պետք է հատուկ ազդանշան տար, որ մենք գնայինք, ընդունեինք, այսինքն՝ մեր համապատասխան ուժերին հրամայեինք՝ այդ ինքնաթիռը չխփել: Ազդանշանը թե ինքը չէր տվել, թե մերոնք չէին ստացել, եւ վտանգը, փաստորեն, մեծ էր, որ օդում կխփեն ինքնաթիռը: Բայց լավ օդաչու էր, կարողացել էր շրջանցել վտանգը: Այդ ռուս տղային երկար ժամանակ մեզ մոտ էինք պահում, որպեսզի ադրբեջանցիները չվնասեն: Նույն կերպ նրա ընտանիքի անվտանգությունն էինք ապահովում: Այդ տղան շատ լավ պահեց իրեն: Նախապես պայմանավորված ամեն ինչ պահպանվեց երկու կողմից էլ: Այդ ժամանակ մենք սկսեցինք որոշակի կապեր հաստատել այլ պետությունների համապատասխան ծառայությունների հետ, օրինակ՝ ամերիկացիների:

Բ. - Ի՞նչ տարբերություններ էիք տեսնում շփվելու ընթացքում, ինչու՞ էին գալիս:

Վ.Պ. - Միանշանակ դժվար է ասել՝ ինչու էին գալիս, կարելի է ընդամենը ենթադրություններ անել: Ինչ-որ հարցերում, երբ դիմում էինք, մեզ օգնում էին: Օրինակ՝ ամերիկացիների միջոցով կազմակերպեցինք հակատեռորիստական միջոցառումների ծրագիրը: Մասնագետներ ուղարկեցին, իսկ մենք որոշակի կոնտինգենտ առանձնացրինք այդ հարցերով զբաղվելու համար: Ինչ-որ բաներ արվում էին: Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայության հետ միջգերատեսչական պայմանագիր կնքեցինք, որի նախագահն այդ ժամանակ Պրիմակովն էր:

Բ. - Իսկ կռահու՞մ էիք, որ ամերիկացիները, նաեւ ռուսները այստեղ կարող են հենակետ ունենալ ինֆորմացիայի եւ այլ առումներով:

Վ.Պ. - Հայաստանի անվտանգության, պաշտպանության, տնտեսության եւ այլ բնագավառների վերաբերյալ ինֆորմացիան, այսպես ասած, փողոցում թափված էր, ով չալարեր՝ այդ ինֆորմացիան կստանար: ՊԱԿ-ում աշխատանքի անցնելու հենց առաջին օրերից ես պարզեցի, որ Պարսկաստանից հսկայական թվով մարդիկ են եկել մեր գործարաններ, գիտահետազոտական ու այլ հիմնարկներ եւ ասել, որ ուզում են ներդրումներ անել: Եվ մեր հիմնարկների ղեկավարները նրանց լավ ընդունել էին, ամեն ինչ ցույց տվել: Դե, աշխատանքի հարց կար, էլ ի՞նչ գաղտնիք: Այդ ժամանակ հիմնարկների հատուկ բաժինները փակվել էին, չէին գործում: Ես հատուկ զբաղվել եմ այդ հարցով, որ վերաբացեն աշխատող հիմնարկները: Ամբողջ ինֆորմացիան ստանում են, գնում: Էլ ի՞նչ ներդրում: Ինչքան որ հաջողվեց պարզել,

բոլորը Պարսկաստանից էին, թեեւ չի բացառվում, որ նրանց մեջ ազերիներ էլ լինեին: Համարյա բոլոր քիչ թե շատ լուրջ հիմնարկներ այդպիսի մարդիկ եկել են:

Բ. - Իսկ հետագայում նրանք ինչպե՞ս օգտագործեցին դա: Հետո գալիս, հաստոցներն էին մասերի բաժանում եւ էժան գնով տանում...

Վ.Պ. - Դժվարանում եմ ասել, այդ հարցով ես չեմ զբաղվել: Հնարավոր է՝ նրանց պետական հատուկ ծառայությունն էր դա անում, ուրիշ նպատակով էր ինֆորմացիա հավաքում: Մյուսներն էլ՝ տնտեսական ոլորտում, ուրիշ նպատակ ունեին: Հիմա դժվար է տարբերել, թե որը որն էր: Ես չգիտեմ՝ հատուկ ծառայությունը իր ինֆորմացիան տրամադրե՞լ է տնտեսական մարմիններին: Եթե մի պետությանը պետք էր որեւէ բնագավառում հետազոտությունը խորացնել, ապա տնտեսվարող սուբյեկտների միջոցով դա անպայման արել է: Կոպեկներով հազվագյուտ հաստոցներ էին տանում: Այստեղ մեկ-երկու հաստոց ծախում էին, սեփականաշնորհման համար ինչ տվել էին՝ դրանով ծախսը փակում: Իսկ պետականորեն դրա առաջը չէր առնվում: Պետությունը սկզբում չէր արգելում, սեփականաշնորհման պայմանագրերը երբ կնքվում էին, նրանց չէր ասում՝ չես կարող ծախել: Նրա սեփականությունն է, ինչ կուզի՝ կանի: Ավելի ուշ որոշակի սահմանափակումներ կային, բայց արդեն շատ ուշ էր:

Բ. - ԳԴՀ-ում պայմանագիր էին կնքում նրա հետ, ով ուզում էր գնել գործարանը, բայց որոշ պայմաններ էին դնում. ինչ-որ ժամկետում գործարանը պետք է աշխատեր, եթե ոչ՝ նա այլեւս տերը չէր, պայմանագիրը չեղյալ էր հայտարարվում: Եվ այդ տարբերակը ձեռնտու էր, գործեց: Ոչ թե հարյուր հազար շահեցին, այլ խոշոր արդյունաբերողներ դարձան:

Վ.Պ. - Բայց դրա թիկունքում Գերմանիայի նման պետություն կար, որը համ փորձ ուներ, համ միջոցներ: Թեեւ ես չեմ ուզում արդարացնել շատ բաներ, որ արվում էին այստեղ, բայց կարելի էր թույլ չտալ ժամանակին:

Երբ իշխանությունը անցավ շարժման ղեկավարների ձեռքը, նրանցից շատերը պատկերացում չունեին, թե ինչ եւ ինչպես պետք է լինի, ազատություն հասկացության ճիշտ ըմբռնում չկար: Մութ տեղը խարխափելով էինք առաջ շարժվում: Այդ վիճակը հանգեցրեց նրան, որ շատ արժեքներ կորցրեցին իրենց նշանակությունը, իսկ նոր արժեքներին տեր չկանգնեցինք, չսովորեցինք՝ ինչը արժեւորել:

Բ. - Երբ ատոմակայանի աշխատանքը դադարեցվեց, անվտանգության ծառայությունը կարո՞ղ էր միջամտել, կանխել, թե՞ ոչ: Դա ՀՀԾ-ից էր սկսվել:

Վ.Պ. - Ատոմակայանի աշխատանքները դադարեցնելու

նախաձեռնողը Ռիժկովն էր, կենտկոմի մակարդակով է եղել, թեեւ, ինչ խոսք, այստեղ կային այդպիսի տրամադրություններ՝ իբր վտանգավոր է:

Բ. - Նրանք ինչու՞ էին ուզում կանգնեցնել ատոմակայանի աշխատանքը:

Վ.Պ. - Դա գալիս էր Հայաստանին պատժելու ընդհանուր քաղաքականությունից: «Նաիրիտ»-ի դեպքում ՀՀՇ-ն շատ ջանք թափեց, որ փակվի, բայց ատոմակայանի հարցում ամեն ինչ այլ կերպ էր, այն մեզ էր առաջին հերթին պետք:

Բ. - Թուրքիայում կային ուժեր, որոնք տրամադրված էին դադարեցնել նրա աշխատանքը: Դրանից ակնկալում էին դեմոգրաֆիական փոփոխություններ, որ վատ պայմաններ կստեղծվեն մեր երկրում, հայերը կգնան, փոխարենը ազերիները կգան: Իբրեւ էկոլոգիական խնդիր էին դրել, իսկ այստեղ մեքենայորեն իրականացնում էին դա: Մեր ծառայությունը թույլ էր, այն մակարդակը չուներ, որ կարողանար կանխել, ճիշտ կողմնորոշվել:

Վ.Պ. - Այսպես ձեւակերպենք՝ ՀՀՇ-ն հատուկ կռիվ չի տվել ատոմակայանի աշխատանքը ոչ կանգնեցնելու, ոչ էլ չկանգնեցնելու համար: Այստեղ վճռորոշ էին Խորհրդային Միության քայլերը: Ես հիշում եմ կռիվները 1990 թվականից հետո ատոմակայանի վերագործարկման շուրջ: Վերագործարկումը նույնպես խոչընդոտվում էր. բավական լուրջ ուժեր կային Հայաստանում:

Բ. - Ի՞նչ ուժեր:

Վ.Պ. - Քաղաքական դեմքերին կարող եմ ասել, այսինչ մարդիկ դեմ էին, օրինակ՝ Խաչիկ Ստամբոլցյանը, թեեւ նա փոքր դեմք էր: Այդպիսի մարդիկ շատ կային:

Բ. - Ուրիշ ովքե՞ր կային:

Վ.Պ. - Կոնկրետ չեմ կարող հիշել: Քննարկումներ լինում էին՝ սկզբունքորեն պե՞տք է, թե՞ պետք չէ վերաբացել ատոմակայանը: Հարցը սովորաբար այսպես էր լուծվում՝ որ անհրաժեշտ է վերաբացել, կասկած չկա: Բայց իշխանությունները կոնկրետ քայլերի չէին դիմում, թե կարող է դա քաղաքական առումով օգտագործվի իրենց դեմ, ընդդիմությունը կարող է ասել՝ հա, տեսեք, բացում են... Գուցե կարելի էր ավելի շուտ բացել, բայց ամենաշատը՝ երկու տարի, ավելի շուտ հնարավոր չէր: Ես ֆիզիկայի մասնագետ եմ, երբ Մոսկվայից մարդիկ էին գալիս, մասնակցում էի քննարկումներին: Մենք վերագործարկելու դեպքում ռուսներից անվտանգության երաշխիքներ էինք ուզում, թե որքանով դա ապահով կլինի: Այդ հարցով ֆրանսիացիներին էինք հատկապես դիմում: Ֆրանսիական մի կազմակերպություն կար, որ զբաղվում էր դրանով, կոնսուլտացիաներ էին անցկացնում: Մոսկվայի Կուրչատովի անվան գիտական ինստիտուտի աշխատողներից էր Ռաֆիկ Հարությունյանը: Նա մեզ ապացուցում էր, որ անվտանգ է, եւ անհրաժեշտ է վերաբացել ատոմակայանը: Նա մեզ շատ հարցերում օգնում էր: Հաճախ մեր ղեկավարության հետ վեճի էր բռնվում, երբ սկսում էին կասկածներ հայտնել, թե վտանգավոր է:

Բ. - Իսկ հնարավո՞ր է դրա հումքից ռումբ սարքել:

Վ.Պ. - Ոչ, ռումբի համար դա բավարար չէ, բայց կեղտոտություն անելու համար բավարար է, ռադիոակտիվ նյութերը կարելի է ինչ-որ տարածքում շաղ տալ: Գագիկ Հարությունյանը, երբ վարչապետ էր, մի անգամ հարցազրույցներից մեկի ժամանակ այսպիսի արտահայտություն արեց. «Եթե պետք լինի, վախեցնելու համար դա էլ կանենք»: Դրա արդյունքում նույն ամերիկացիները, ֆրանսիացիները կարող էին մեզ ընդհանրապես արգելել գործարկել կայանը:

Այն ժամանակ եթե ինչ-որ մեկն ինձ առաջարկեր գրել սահմանադրություն, ես կհամաձայնվեի եւ մի ամիս ժամանակ կխնդրեի: Ես իրավաբան չեմ եղել, բայց գործի բերումով սեղանիս վրա միշտ դրված էր Սահմանադրությունը՝ ի տարբերություն շատ իրավաբանների: Թե՛ ԽՍՀՄ, թե՛ Հայաստանի, ինչպես նաեւ այլ պետությունների սահմանադրություններին ես շատ լավ ծանոթ էի: Հետո աշխատանքի անցա Սահմանադրական դատարանում: Հիմա, երբ սահմանադրությունը բնականաբար ավելի լավ գիտեմ, առաջարկեն՝ սահմանադրություն գրիր, քեզ միլիոն կտանք, ես կհրաժարվեմ, քանի որ հիմա գիտեմ, թե դա ինչ է, եւ այդպիսի պատասխանատվություն ինձ վրա չէի վերցնի: Շատերը մնացին այն մակարդակին, որ եթե մի երկու բան կարդացել են, ուրեմն՝ փայլուն գիտեն, թե սահմանադրությունն ինչ է: Սահմանադրության վերաբերյալ քննարկումների ընթացքում ես անընդհատ դրան եմ ականատես լինում: Ես միշտ բերում եմ Լեհաստանի օրինակը: Լեհերը մոտ տասնհինգ տարի առաջ ընդունեցին Սահմանադրություն, իսկ մի քանի տարի առաջ՝ նորը: Հին ու նոր սահմանադրությունները երբ համեմատում եմ, էական տարբերություններ եմ տեսնում դեպի լավը: Այն կատարյալին ավելի մոտ է, քան եվրոպական ցանկացած երկրի սահմանադրությունը: Իսկ ինչպե՞ս լեհերը կարողացան հասնել դրան: Շատ պարզ պատճառով: Այն, ինչ մեզ մոտ եղել է, նրանք մեզնից մոտ տասը տարի առաջ են ունեցել: Այդ տասը տարի առաջ լինելը նրանց հնարավորություն տվեց լավ մասնագետների տաս-տասնհինգ հոգանոց խումբ ունենալ: Նրանք արդեն կարող էին լավ սահմանադրություն ստեղծել: Մենք դեռ պատրաստ չենք: Այդպիսի մասնագետների այդ քանակությամբ, որը նվազագույնն է, եւ այդ մակարդակով խումբ մենք կարող ենք ունենալ տասը տարի հետո:

Բ. - Իմ կարծիքով՝ խնդիրը մասնագետների ընտրության մեջ է: Մի

խումբ իրավաբաններ, ֆիզիկոսներ եւ այլ մասնագետներ մշակեցին Արցախի համար սահմանադրություն: Նրանք հաշվի էին առնում այն, որ Լեռնային Ղարաբաղը այսօր աշխարհին պետք է երեւա որպես ժողովրդավարական, առաջադեմ երկիր: Ինձ խնդրեցին թարգմանել: Թարգմանեցի եւ հայերեն ու ռուսերեն տարբերակները տարա Ղարաբաղ, ներկայացրի նախագահին:

Վ.Պ. - Այստեղ երկու հարց կա: Իմ ասածը վերաբերում է իրավական կողմին, Դուք խոսում եք քաղաքական կողմի մասին: Ղարաբաղի սահմանադրության դեպքում նախ պետք է որոշել՝ այն անհրաժե՞շտ է Ղարաբաղին, թե՞ ոչ: Սա քաղաքական հարց է: Եթե որոշվեց, որ պետք է, ապա հաջորդ հարցը պետք է լինի՝ ինչպիսի՞ սահմանադրություն: Դա որոշելուց հետո պետք է գտնել մասնագետներ եւ սահմանադրություն գրելու պատվեր տալ: Քաղաքական պատվեր պետք է լինի: Իսկ նման պատվեր, իմ կարծիքով, կարող է լինել այն դեպքում, եթե քաղաքական ղեկավարները հասկանան Ղարաբաղի հետագա ճակատագիրը: Ղարաբաղյան հարցի լուծման ամենահեշտ եւ հնարավոր տարբերակը այսօր մեկն է. Ղարաբաղը ժողովրդավարական առումով պետք է մեկ քայլ առաջ լինի Ադրբեջանից: Այդ դեպքում ոչ մի պետություն չի ասի, որ Ղարաբաղը պետք է միանա Ադրբեջանին: Միանա հետամնաց երկրի՞ն: Ղարաբաղի հարցը ամբողջ Հայաստանի խնդիրն է: Այնտեղ պետք է իդեալական ընտրություններ անցկացվեն: Երկրորդ հարցը. Ղարաբաղում ընդամենը հարյուր հիսուն հազար մարդ կա, ի՞նչ խնդիր կա այն դարձնել անհարկ տարածք, որպեսզի ներդրումներ լինեն: Հարյուր հիսուն հազար հոգուն պահելն ի՞նչ է: Թող ընդհանրապես հարկեր չգանձեն, ընտրությունները, մրցակցությունը լինեն ժողովրդավարական: Հաստատ շատ գործարանների մասնաճյուղեր այնտեղ կբացվեն: Ճանապարհն էլ արդեն կա: Այդ հարցը կարելի է առաջիկա հինգից տասը տարում լուծել: Դրա համար ղարաբաղցու եկամուտները պետք ավելի շատ լինեն, քան ադրբեջանցու եկամուտները: Դա կարելի է անել: Թող շատերը գնան այնտեղ ապրեն, ի՞նչ խնդիր կա:

Ես հիշում եմ, թե ինչպես էր Աշոտ Մանուչարյանը կազմակերպում խնդիրները: Նրա հետ կարելի էր համաձայնվել կամ չհամաձայնվել, բայց մոտեցման, կազմակերպչական առումով շատ ճիշտ էր աշխատում: Ցանկացած պաշտոնական պատվիրակության հետ արտասահման գնալուց առաջ հանդիպում էր, բացատրում նրանց իշխանության մոտեցումը Ղարաբաղի կամ այլ հարցին, ասում, թե մոտավորապես ինչպես իրենց դրսեւորեն: Հանդիպում էր նաեւ վերադառնալուց հետո՝ սկսած նախագահից մինչեւ հասարակ աշխատողը: Եթե պաշտոնական հարցի լուծում կար, ապա պետք է պարտադիր

հանդիպեր նրանց հետ: Այսինքն՝ ամբողջ աշխատանքը փորձում էր համակարգել, ինչը չափազանց կարեւոր է: Իսկ, օրինակ, Ազգային ժողովի պատվիրակությունը գնում է, հայտնի չէ՝ այնտեղ ինչ է խոսում, իսկ Արտաքին գործերի նախարարությունը՝ ինչ: Դրանք պետք է կապակցված լինեն, ինչքան էլ որ տարբեր մարմիններ են:

Բ. - Բայց երբ Մանուչարյանը դուրս եկավ, ծառայությունը վերացավ: Պետք էր համակարգ ստեղծել, մեխանիզմ:

Վ.Պ. - Հենց այդպիսի համակարգ էլ ստեղծվել էր: Աշոտը գործը լրիվ կազմակերպում էր: Նրա աշխատակիցները այդ նույն գործը անում էին: Ձեւավորվել էր աշխատաոճ: Ստեղծվել էր Անվտանգության խորհրդականի ծառայություն, որ ոչ թե կապված էր Մանուչարյանի անձի հետ, այլ մի համակարգ էր ստեղծվել, որը պատկերացնում էր իր անելիքները, հարցերի շրջանակը: Արտգործնախարարությունն էլ, մյուս մարմիններն էլ գիտեին, որ իրենց քայլերը պետք է կենտրոնացվեն: Երբ Ազգային ժողովում էի աշխատում, Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը այդ հարցերը լուծում էր: Արարքցյանին դուր չէր գալիս, որ Աշոտը կարծես եկել, իրեն քննում է: Բայց Մանուչարյանի նպատակը ոչ թե դա էր, այլ ամբողջ աշխատանքը կոորդինացնելը, որ ընդհանուր մոտեցում լինի: Նույնը եւ տնտեսական հարցերում, որտեղ անընդհատ կռիվների մեջ էր կառավարության անդամների հետ: Շատերը ճիշտ չէին հասկանում նրան: Բայց դա արվում էր ընդհանուր անվտանգության շահերից ելնելով, իսկ նրանք հարցին մոտենում էին՝ ելնելով կոնկրետ իրենց բնագավառի խնդիրներից: Ոչ թե Աշոտին հանեցին, այլ համակարգը քանդեցին: Ծառայությունը ցրվեց, աշխատակիցներին հանեցին, մի մասը իրենք թողեցին հեռացան, երբ տեսան, որ այդ պայմաններում հնարավոր չէ աշխատել: Եվ անվտանգության խնդիրը, ըստ էության, մնաց անկառավարելի: Կարծես հրշեջի դեր են կատարում. հրդեհ է՝ գնան հանգցնեն, բայց այնպես չեն անում, որ հրդեհ չլինի:

Ես հիմնականում զբաղվում էի Նախիջեւանի մազութի հետ կապված խնդիրներով, եւ Հեյդար Ալիեւը, Մամեդովը, հաճախ էին զանգահարում ինձ: Բայց Աշոտին Ալիեւը գրեթե ամեն օր էր զանգահարում, ասում էր՝ կարո՞ղ եք կազմակերպել, այսօր այս ուղղությամբ հարձակվեք: Հեյդար Ալիեւն էր ասում: Աշոտն էլ թե՝ խնդիր չկա, այնպես կանենք, որ քեզ համար լավ լինի:

Պատմում է Գուրգեն Դալիբալթայանը *(1992-93 թթ. ՀՀ ՊՆ 1-ին տեղակալ 1993 թ. ՀՀ նախագահի խորհրդական)*
29.11. 2005 թ., Երեւան

Գ.Դ. - Ծնվել եմ 1926 թվականին Ջավախքի Մեծ Արագյալ գյուղում: Ծնողերս 1929-ին տեղափոխվել են Գորելովկա գյուղը, որտեղ 1944 թվականին ավարտել եմ միջնակարգ դպրոցն ու զորակոչվել բանակ: Ես յուրացրի զինվորական մասնագիտությունն ու մինչեւ հիմա բանակում եմ: Ես քաղաքական գործիչ չեմ: Ես եկել եմ ծառայելու մեր պատմական հայրենիքին: Եկա 1990 թվականին: Հանդիպեցի Վազգեն Մանուկյանի հետ, առաջարկեցի ստեղծել ազգային բանակ: Նա զանգեց ներքին գործերի նախարարին, որի անունը չեմ ուզում տալ: Ես գնացի նրա մոտ, մեկ ժամից ավելի սպասեցի ընդունարանում: Արդեն ուզում էի հեռանալ, երբ օգնականը ներս հրավիրեց: Ընդունելությունը ջերմ չէր: Նա հարցրեց. «Դուք լու՞րջ եք մտադրվել բանակ ստեղծել»: Ասացի. «Ձեզ հետ հանդիպման է եկել Հյուսիս-կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր հրամանատարի տեղակալը, մի մարդ, ով անցել է ծառայության բոլոր աստիճաններով: Դա իմ մասնագիտությունն է: Իմ պարտականությունն է բանակ ստեղծելը: Ես վստահ եմ, որ մենք կարող ենք բանակ ստեղծել»: Ես վեր կացա եւ դուրս գնացի: Երկրորդ անգամ Երեւան եկա 1991 թվականի մարտին: Հանդիպեցի Վազգեն Սարգսյանի, Վահան Ծիրխանյանի ու Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Հայաստանի Մինիստրների խորհրդին կից ստեղծվել էր Պաշտպանության խորհուրդ: Եկան Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: Կառավարության հատուկ որոշումով՝ ես նշանակվեցի Պաշտպանության կոմիտեի շտաբի պետ: Սկսեցինք ջոկատներն ի մի հավաքել՝ մեկ դրոշի տակ, որպեսզի ամեն մեկն ինքնակամ չգնա ու ղարաբաղյան իր գործունեությունը հերոսական իրադարձություն համարի: Ես որոշեցի նրանց առաջադրանքը, եւ սկսեցինք կառավարել այդ ջոկատներին: Կային ուժեղ, կազմակերպված ջոկատներ, կային եւ թույլ ջոկատներ: Լուրջ ջոկատները մնացին, իսկ անկազմակերպ ջոկատներին դուրս մղեցինք բանակի կազմավորման ճանապարհից: 1992 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանով ստեղծվեց պաշտպանության նախարարություն: Նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը, իսկ շտաբի պետ նշանակեցին ինձ: Իսկ մինչ այդ ես գալիս էի գաղտնի, առանց համազգեստի: Այդ ժամանակ էլ հիմնական իրադարձությունները սկսվեցին: Իրականացրինք մեր մշակած առաջին գործողությունը:

Բ. - Էլ ու՞մ կարող եք առանձնացնել բանակի ստեղծման գործում:

Գ.Դ. - Նրանք են, ովքեր կանգնած էին ղեկին: Իսկ գլխավոր շտաբը կարգավորիչ դեր ուներ:

Բ. - Ե՞րբ եք առաջին անգամ եղել Լեռնային Ղարաբաղում:

Գ.Դ. - Ես ժամանակին եղել եմ Կիրովաբադի դիվիզիայի հրամանատարի տեղակալը ու հաճախ էի գործով Ստեփանակերտի գնդում լինում:

Բ. - Այդ գնդի զինանոցը պետք է ղարաբաղյան շարժմանը մնար, այլապես...

Գ.Դ. - Անպայման, այլապես դժվար կլիներ: Նման մի գունդ ձեւավորվեց, պատրաստել էինք մարդկանց ցուցակները, հավաքել էինք տանկիստների, կազմվել էր հրանոթային դիվիզիոն: Նրանք արագ ընդունեցին մարտական տեխնիկան, ձեւավորվեց բանակը: Ադրբեջանցիներն ամեն ինչ անում էին, որպեսզի տեխնիկան հայերին չմնա: Նրանց հինգ դիվիզիա էր մնացել: Անհրաժեշտ էր, որ մեզ մնացած տեխնիկան արագորեն յուրացվեր եւ գործեր, ինչն էլ փայլուն կերպով իրականացվեց: Այդ գնդի առաջին հրամանատարը Սամվել Կարապետյանն էր: Սակայն տեխնիկայի մի մասը բաժանվեց շրջաններին, ինչի հետեւանքով գունդը թուլացավ: Ես դրան դեմ էի, քանի որ մեզ ուժեղ գունդ էր անհրաժեշտ: Սակայն շուտով այն ռազմական տեխնիկան, որ մեր տարածքում էր, մեզ հանձնեցին (ինչն էլ արվեց ողջ ԱՊՀ տարածքում): Մենք չկարողացանք զորահավաք իրականացնել, քաղաքական գործիչները թույլ չտվեցին, քանի որ դա պատերազմի հայտարարություն կընկալվեր: Հնարավոր է՝ նրանք ճիշտ էին: Սակայն զինվորականները հավաքեցին մասնագետների, որոնց օգնությամբ էլ ստեղծվեցին համապատասխան զորամասեր: Այդ ժամանակ ես զբաղված էի Խոջալուի գործողության նախապատրաստմամբ: Վազգեն Սարգսյանը դիմեց ԱՊՀ երկրների բանակների հայ սպաներին, սակայն նրա կոչին քչերը արձագանքեցին: Ահա, եկավ մեկը, ազգանունը չեմ ասի, գեներալ-մայոր էր՝ ծնունդով Լենինականից: Ես ռազմական օկրուգի գլխավոր հրամանատարի տեղակալն էի, իսկ նա նույն օկրուգում մարտական պատրաստության պետի տեղակալն էր: Նա պահանջեց իրեն նշանակել ղարաբաղյան զորքերի գլխավոր հրամանատար: Հավաքեց Հայաստանում ապրող ղարաբաղցի գնդապետ-

ներին ու ասաց. «Դուք զբաղվեք երիտասարդ սպաների, սերժանտների, զինվորների նախապատրաստությամբ, դուք ռազմաճակատ մի գնացեք, միայն սովորեցրեք»: Նրանց զինվորական համազգեստ բաժանեց: Սակայն քչերը արձագանքեցին: Ստիպված էինք զինկոմիսարիատներից կադրեր հավաքել, որ զբաղվեն այդ ջոկատների հետ, դարձնեն դասակներ, վաշտեր, սովորեցնեն ռազմական գործը: Ահա այդպես՝ աստիճանաբար ստեղծեցինք բանակը: Եվ մեծ պատասխանատվությամբ էինք վերաբերվում այդ գործին: Ես դա երբեք չեմ մոռանա: Նրանք ինձ սրտամոտ ընդունեցին, եւ դա փոխադարձ էր: Իմ հայրենի Ջավախքի համար ես ոչինչ չէի կարող անել: Տղաները գալիս էին, դիմում, սակայն մենք դա թույլ չէինք տալիս: Երկրորդ ճակատ բացել չէինք կարող, մենք ճիշտ գնահատեցինք իրավիճակը: Իհարկե, մեր բոլոր ծրագրերը չէ, որ իրականացան:

Բ. - Պատմեք, խնդրում եմ, Խոջալուի գործողության մասին:

Գ.Դ. - Դա մեր առաջին խոշորամասշտաբ գործողությունն էր: Պետք է ոչնչացնեինք այդ որջը: Ավելի քան երկու հազար զինված մարդիկ տեղավորվել էին Աղդամի եւ Ստեփանակերտի միջեւ: Դա անթույլատրելի էր: Նրանք կարող էին փակել բոլոր կենսական ճանապարհները: Մենք հավաքեցինք հինգ հարյուր կամավորականների: Տասնհինգ օր զբաղվում էինք նախապատրաստությամբ: Ստեղծեցինք տեղանքի, ամրությունների մանրակերտը: Հրամանատարներին բացատրում էինք առաջադրանքը: Խոջալուն բաժանվել էր չորս շրջանի: «Խոջալու-1»-ը Նորագյուղի ուղղությունն էր: «Խոջալու-2»-ը աջից էր, որտեղ Նորագյուղի, Մասիսի, Արամոյի ջոկատներն էին, քիչ այն կողմ նստած էին Հրազդանի, Սեւանի ջոկատները, իսկ «Խոջալու-3»-ի ուղղությամբ ղարաբաղյան ջոկատներն էին: Սեյրան Օհանյանն այդ ժամանակ գնդի գումարտակի հրամանատարն էր ու մասնակցում էր իր ջոկատով: Նրանք շարժվում էին օդանավակայանի եւ երկաթուղու կայարանի ուղղությամբ: Չորրորդ ուղղությունը նորակառույց թաղամասի կողմն էր, որտեղ տներ էին կառուցում թուրք-մեծխեթների համար: Նրանք պետք է շարժվեին Ասկերանից: Նրանց ղեկավարում էին Սամվել Բաբայանն ու Վիտալի Բալասանյանը: Գործողությունը պետք է սկսվեր գիշերվա ժամը երկուսին: Սակայն հրետանավորները ուշացրին: Նրանք խմել, հարբել էին: Ստիպված էի նրանց կողքին կանգնել ու հրամայել: Հրետանային նախապատրաստությունից հետո սկսեցինք առաջին ուղղությունից: Մինչեւ առավոտ գործողությունն ավարտվեց: Իսկ ադրբեջանական բնակչության համար միջանցք էինք բացել, որ հեռանան: Իսկ այն, ինչ հաճախ ցույց են տալիս ֆիլմում, ուղղակի մոնտաժ է եւ իրականության հետ կապ չունի: Մենք ազատ ջոկատ չէինք կարող ունենալ, որը նրանց իսկ տարածքում դիմավորեր

բնակիչներին ու կոտորեր: Դա բացառվում է: Այդ ամենը Բաքվի քարոզչության արդյունք է: Ես մեր ջոկատներից որեւէ մեկին չեմ կարող առանձնացնել: Բոլորն էլ փայլուն կատարեցին իրենց խնդիրը:

Բ. - Անշուշտ, Արկադի Տեր-Թադեւոսյանն էլ դեր ուներ գործողության մշակման եւ իրականացման գործում:

Գ.Դ. - Նա ուղղակի ներկա էր: Գլխավոր շտաբը նրան ուղարկել էր, որպեսզի օգներ բարձրացնել ջոկատների մարտական ոգին: Դրանից հետո ես նրան նշանակեցի Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի շտաբի պետ: Նա այնտեղ գլխավոր հրամանատար էր կոչվում: Դա ճիշտ չէ, քանի որ մերն ընդհանուր բանակ էր, բոլոր գործողությունները մշակվում էին Գլխավոր շտաբում: Իսկ Շուշիի ազատագրումը Խոջալուի գործողության շարունակությունն էր: Խոջալուից հետո ես երկու շաբաթ Ղարաբաղում մնացի, որպեսզի նախապատրաստեմ հաջորդ գործողությունը: Գրոհից մեկ շաբաթ առաջ պատրաստում էի գործողությունը: Շուշիի գործողությունը մենք անվանում էինք «Հրազդան -1» ծածկանունով: Լաչինից հետո Տեղ գյուղում հանրահավաք արեցինք: Հայ ժողովրդի երկու հատվածներ միացան: Մեզ միջանցք էր պետք, որ Ղարաբաղը միանար Հայաստանին: Դրա համար անհրաժեշտ էր ազատագրել Շուշին: Գործողությունը դժվարիններից չէր: Նրանց բանակը կազմալուծված էր: Որպես քաղաքական գործիչ կարեւոր դեր ունեին Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը: Կարեւոր դեր ուներ եւ Պարգեւ սրբազանը՝ Արցախի հոգեւոր առաջնորդը: Մի անգամ կարծել էի, թե Պարգեւը ջոկատի հրամանատար է, ու հեռակապով հայհոյեցի նրան: Հետո հիշում ու ծիծաղում էինք:

Հիշում եմ ծանր օրերը, երբ ռմբակոծում էին Ստեփանակերտը: Ղարաբաղի հյուսիսից կանայք երեխաների հետ նահանջում էին: Ղարաբաղցիները դիմացան դժվարություններին: Լենինգրադյան բլոկադայում ավելի հեշտ էր, քան Ղարաբաղում: Կգա ժամանակն ու մենք կհարցնենք Շահումյանի մասին: Այնտեղ կուսակցական պատերազմ էր: Այնտեղ այնքան միջոցներ կային, որ կարող էին շրջանաձեւ պաշտպանություն կազմակերպել: Սակայն թողեցին հեռացան: Բնակչությունը անտառով հեռացավ:

Բ. - Ինչպե՞ս եք գնահատում հրամկազմում ոչ պրոֆեսիոնալ զինվորականների ներկայությունը:

Գ.Դ. - Նրանք տաղանդավոր մարդիկ էին, ակադեմիական կրթության կարիք չկար: Ահա, Սամվել Բաբայանը, Վիտալի Բալասանյանը, Սերժ Սարգսյանը, Ավոն, մյուսները... Ադրբեջանցիները շատ ավելի անկազմակերպ էին: Նրանց սկզբնական հաջողությունները կապված են ռուսների, հատկապես Կիրովաբադի 23-րդ դիվիզիայի օգնության հետ: Շահումյանում մերոնք չկարողացան կողմնորոշվել, կազմակեր-

պել: Տեր-Թադեւոսյանը պարտավոր էր ելք գտնել: Որոշ հրամանատարներ չէին ենթարկվում հրամանատարությանը: Նրանք սպասում էին, թե ինչ կասի Քաղբյուրոն: Սակայն նրանք եկել էին պատերազմելու թշնամու դեմ: Հիմնականում դրանք ուժեղ ջոկատներ էին:

Բ. - Իսկ ի՞նչ կասեք «Մահապարտներ» ջոկատի մասին:

Գ.Դ. - Ես զինվորական եմ եւ չէի պաշտպանում Վազգեն Սարգսյանի այդ ձեռնարկը: Դա սխալ գործ էր: Հետո նրանց «մահապարտ» կոչեցին: Ի՞նչ է, նրանք չէի՞ն կարող պատերազմել:

Քարվաճառի խնդրում Լեւոն Տեր-Պետրոսյանը վախենում էր: Ազատագրման ծրագիր մշակվեց: Վազգենը ուզեց՝ իրականացնի, նոր միայն զեկուցի: Այդպես էլ եղավ: Իսկ Շուշիի պլանը նա հավանել էր: Վազգենը շատ համարձակ մարդ էր, նա մեզ չէր սահմանափակում:

Պատմում է Ալիկ Ալեքսանյանը
25.10.2005թ., Ստեփանակերտ

Ա.Ա. - Պատերազմի սկզբին եղել եմ թիվ 61 կապի հանգույցի կապավոր, ապա՝ հանգույցի պետը, այնուհետեւ՝ Արցախի հրետանու կապի պետը: Հանգույցը ողջ Արցախին մատակարարում էր կապի միջոցներ: Մենք ունեինք խորհրդային արտադրության վեց հանգույց, որ գալիս վերցնում էին, օգտագործում, կրկին ետ բերում: Մի անգամ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը դիմեց ինձ. «Մոսկվա եմ գնում, քեզ համար ի՞նչ բերեմ»: Ասացի. «Կապի վեց միջոց, ռացիա»: Մեկ ամսից տասը հատ «Ալինկո» ռացիա բերեց: Թարգմանեցինք, փորձարկեցինք: Լավ գործիք էր: «Քսանվեցի» դիրքերում օգտագործեցինք: Վաշտի հրամանատար Մարտիկը թողեց դիրքերն ու փախավ: Վաշտի զինվորները՝ մոտ երկու հարյուր հիսուն հոգի, տեսնելով, որ հրամանատարը փախչում է, իրենք էլ հեռացան: Դիրքում ես էի ու մի բուժքույր Երեւանից, հրաշալի աղջիկ էր, Մելսիդա էր անունը: Մենք վիրավորների վերքերը միասին կապում էինք, ուղարկում: Ահագին փամփուշտ ու նռնակ ունեինք, բայց ավտոմատը մեկն էր: Մելսիդան վերցրեց ավտոմատն ու սկսեց կրակել դեպի մեր դիրքերը եկող թուրքերի վրա: Բավական լավ էր կրակում: Ես էլ նռնակներ էի նետում: Հետո ինքն էր նռնակներ նետում, ես՝ կրակում: Կապվեցի «Քսանվեցի» հետ, ասացի, որ վիճակը ծանր է, պատասխանեց. «Խուճապի մեջ ընկնես, հեսա օգնություն կուղարկեմ»: Մեկը եկավ, նստեց մեզ մոտ, թե. «Ի՞նչ եք անում, այստեղ կռիվ է, լավ կլինի՝ հեռանաք»: Ասացի. «Հեսա գնում ենք»: Մեկի ձեռքը վիրակապեցինք: Տեսա՝ էս երիտասարդ զինվորի վիճակը լավ չի: Ասաց. «Մեջքս ինչ-որ ցավում է»: Բացեցինք մեջքը՝ լրիվ արյան մեջ կորած, մեջքի մկանները կտրտված: Բեկոր Աշոտն էր: Հենց նրա վաշտն էր օգնության եկել: Երեսուն հոգու թողեց այդ դիրքերում, մնացած երեսունին տարավ իր հետ: Գնաց օգնելու «Քսանվեցի» դիրքի հրամանատար Յուրա Հովհաննիսյանին: Մի երկու հարյուր մետր հեռու՝ «Քսանվեցի» դիրքերի տակ՝ Արթուրը՝ եղբայրս, շատ լավ հարմարություններով հոսպիտալ էր կազմակերպել:

Ասացի՝ տանենք հոսպիտալ, թե՝ ի՞նչ ես ասում, զինվորս կռվի դաշտում՝ ես հոսպիտալում պառկե՞մ: Այդ օրը մի քանի դիրքերից բացի՝ բոլոր դիրքերը ետ վերցրինք: Տասնմեկ զոհ ենք տվել: Երեկոյան Ցուրան ասաց, որ «Ալինկոն» կորցրել է, բայց առավոտյան կգտնի ու ետ կվերադարձնի, քանի որ գիտե, թե մոտավորապես որտեղ է կորցրել: Գիշերը չքնեցի, այդ սարքի մասին էի մտածում: Առավոտյան թշնամին նահանջել էր, ու խոտերի մեջ գտան սարքը: Սա «Ալինկոյի» կիրառման առաջին դեպքն էր, որ անմիջական կապով արագ շտկվեց իրավիճակը: Հանդիպեցի սրբազանին, խնդրեցի մի տասը հատ էլ բերել: Հետագայում ջոկատների հրամանատարներն էլ նման սարքեր ունեցան: Այն շատ կարեւոր դեր ուներ հրետանու համար: Ուղղորդողը անմիջապես հաղորդում էր հակառակորդի կոորդինատները: Իսկ սովետական կապի միջոցով նման հաջողություն դժվար կունենայինք: Ադրբեջանցիները այդպես էլ չունեցան այդ սարքից:

Օմարի երկրորդ գործողության ժամանակ հակառակորդը համառորեն դիմադրում էր: Մեր վիճակն էլ ծանր էր: Ցուրտ, սառնամանիք, ուտելիք ու փամփուշտ չկար: Կապվում եմ «Քառասունչորսի» հետ, խոստանում է հասցնել այդ ամենը, բայց խնդրում է մի տեքստ կազմել ու ռադիոկապով այն հաղորդել հակառակորդին: Արագ տեքստ կազմեցի ու ձայնս սփռեցի սառնամանիքով պատած Օմարով մեկ: Հաղորդեցի ԼՂՀ ինքնապաշտպանության բանակի գլխավոր շտաբի դիմումը, որ նրանք գտնվում են շրջապատման մեջ, նրանց հրամանատարությունը իրենց խաբում է եւ սխալ տեղեկություն է հաղորդում իրավիճակի մասին, առաջարկում ենք հանձնվել, այդ դեպքում բոլորին ազատ կարձակենք, իսկ հակառակ դեպքում՝ բոլորին կկոտորենք: Նրանց հրամանատարը սկսում է խոսքակռիվը՝ ասելով իբր մենք խանգարում ենք, եկեք ազնվորեն կռվենք: Սակայն արդեն նրանց շարքերում սկսվում է հուսալքությունն ու մի քանի օրից հանձնվում են:

Մի անգամ միացրել եմ «Քսանվեցին», մեծ ռացիայով էի, հանդիպեցի Արթուրին, երկուսս էլ «Քսանվեցի» դիրքերն էինք գնում: Ճանապարհին հայրական տուն մտանք: Աստիճաններով բարձրանում էինք, մայրս թե՝ ե՞րբ եք վերցնելու Շուշին, ամբողջ օրը ռումբեր են թափում քաղաքի վրա, երեկ հարեւան Ռուբենի բակում է պայթել, դրանից առաջ՝ Համբարձումենց տան մոտ: Ասացի՝ քիչ էլ համբերիր: Լոբուխաշի ճաշ դրեց մեր առաջ: Ամբողջ օրը՝ առավոտից գիշեր, մայրս, Արթուրի հանձնարարությամբ, կռվող զինվորների համար վեց հարյուր հատ հաց էր թխում: Մայրս գալիս գրկում է երկուսիս, թե՝ մատաղ ձեզ, անպայման դուք էլ կմասնակցեք կռվին, ուրիշներից ետ չմնաք, բայց զգույշ կլինեք: Դա բոլոր մայրերի խոսքն է: Չորս եղբայրներով մասնակցել ենք պատերազմին:

«Քսանվեցի» ստեղծումից մի քանի օր հետո Արթուրը գալիս է Երեւանից, 1991թ. դեկտեմբերի 16-ից ընդունում յոթերորդ վաշտի հրամանատարությունը, որ պահում էր Քյոսալարի ուղղությունը, եւ հրամանատարում ուղղության հրամանատարի թիկունքի պետի պարտակատությունը, մնում է այդտեղ մինչեւ մայիսի 9-ը: «Քսանվեցին» հանձնարարված էր թույլ չտալ, որ հակառակորդի ուժերը Ջանհասանից ու Քյոսալարից օգնության գան Շուշիին: Մի անգամ կապվեցին ռացիայով, թե՝ Արթուրը «ֆուտբոլիստ ա». այսինքն՝ վիրավոր է: Հետո ճըշտվեց, որ ուրիշի՝ «Տասնյոթի» Փափազյան Արթուրի մասին է խոսքը:

Կիչանի երկրորդ մարտն էր, Ուլուբաբի սարի վրա կանգնած ենք, ռազմական տղաներն էլ են կանգնած նայում: Ոնց որ ցուցադրական մարտ լիներ: Իվանյանն է, Ժորան է, Արթուրն է... Ամեն մեկն իր համար հրամաններ է տալիս: Երեք հատ «Գրադի» հրթիռ են բաց թողնում մերոնք՝ աջ, ձախ, մեկն ընկնում է ճանապարհի վրա: Թուրքի տանկը փախչում է: Ես, Արթուրը, Ժորան իրար նայեցինք: Իվանյանն ասում է. «Հինգ արկ տանկի վրա, կրա՛կ»: Մի հրթիռ բաց թողեց Ժորան՝ ուղիղ տանկի վրա: Բոլորս ծիծաղում ենք: Իվանյանը թե՝ ի՞նչ է պատահել: Ժորան բացատրեց, որ գեներալը հրամայել էր թնդանոթով խփենք, այնինչ՝ «Գրադի» մի հրթիռով էր արվել: «Դեհ, ապրե՛ք»,- ասաց գեներալ Իվանյանը:

Գեներալ Վլադիկ Խաչատրյան - Կիչանը լրիվ ավերեցինք հրետանով, ոչ մի տուն չէր մնացել կանգուն: Այդպես՝ առանց մի զոհի ազատագրեցինք Կիչանը: Մեր բանակի հրետանու կատարելագործման մեջ Իվանյանի դերը շատ մեծ էր: Ես, որ 1992-ին հրետանային դիվիզիոնի հրամանատար էի, նրա աշակերտն էի: Այսօր հրետանու ուսուցման, շինարարության, նյութական բազայի ստեղծման հարցերում մեր հաջողություններով պարտական ենք գեներալ Իվանյանին: Ինձ էլ էր կանչել դասի: Ոչ ոքի բացակայությունը չէր ներում: Հետախուզության դաս էր: Հայտարարեց երեք րոպեանոց ընդմիջում: Սերժ Սարգսյանն էր կանչել: Մտածեցինք, որ ծեր մարդ է, մինչեւ մեքենա նստի, հասնի շտաբ, ներկայանա, ետ գա, նվազագույնը քսան րոպե կանցնի: Դուրս եկանք լսարանից: Այդ մարդը երեք րոպեից լսարանում մեզ էր սպասում: Նրա համար զինվորական կարգապահությունը վեր էր ամեն ինչից:

Ա. Ալեքսանյան - Պատերազմի ժամանակ ես ու Արթուրը ձգտում էինք առանձին կռվել, միասին չլինել, որ իրար չխանգարենք: Իսկ «Ամարաս» բարեգործականը իրականում զենքի հարցում շատ էր օգնում Ղարաբաղի ազատագրական պայքարին: Ամարասի վանքի բացումն իրականում զենք-զինամթերքի տեղափոխումն էր, Մարտունու պաշտպանության կարգավորումը:

1990 թիվն էր, Սերժը, Ռոբերտը, Վիտոն որոշում են զենքը տեղափոխելու համար ինձ ուղարկել: Ասացին. «Եղբայրդ է, գնա համոզիր եղբորդ, որ ավելի շատ ավտոմատ տա, Ասկերանի համար է»: Գնացի Երեւան, համոզեցի, որ Աղդամին հարեւան շրջան է, ծանր է վիճակը: Վաթսուն ավտոմատ հատկացրեց, ճիշտ է, մեծ մասն «ուչեբնի» էր, փողը ծակ: Թե՝ ո՞նց ես տանելու: «Դա իմ գործն է»,- ասացի:

Մարտուն Միքայելյան ունեինք՝ կապի ՊՄԿ-ի պետը, շատ լավ տղա էր եւ միշտ օգնել է մեզ, զրահապատ կաբել հատկացրեց, որը կապի համար է օգտագործվում: Կոճերը բացեցինք, ավտոմատները շարեցինք մեջը, վրայից փաթաթեցինք կաբելը: Թե՝ Լաչինը, Կիրովաբադը փակ, ո՞նց ես տանելու:

Գնացի Հրազդանի գործարան: Երկու «Ուրալ» էի վերցրել: Բեռնեցի, եկա Գորիս: Գորիսի ռեստորանում խորհրդային զինվորականներ էին հաց ուտում, փակեցի դրանց հաշիվը: Հյուրանոցում էլ օգնեցի կոնյակով: Սպան թե՝ ես քեզ կօգնեմ, քանի որ դու ինձ դուր ես գալիս: Ծանոթացրեց թիկունքի պետի հետ: Սա թե՝ ամեն մեքենայի համար երեք հազար ռուբլի կտաս: Ասացի. «Ոչ, թանկ ես ասում, ես ամեն մեքենայի համար հարյուր ռուբլի կտամ»: Հետո ասացի. «Կտամ վեց հազարը»: Ասացին, որ Բերդաձորի տղաները թուրքի մի տղայի են փախցրել տարել, որպես պատանդ են պահում, կարո՞ղ եմ ես օգնել, որպեսզի ետ տան: Զանգեցի բերդաձորցի Հակոբյան Մարատին, որ Երեւանում էր աշխատում, խնդրեցի, որ օգնի այդ հարցում: Ասաց. «Գիտեմ տեղը, դու մեքենաներն անցկացրու, կտանք տղային»: Զինվորականն ուզում էր այդ երեխայի հարցում էլ փող աշխատել: Ասացին՝ բենզին չունենք: Ասացի, որ Ասկերանի բազայում վառելիք ունենք, այնտեղից կտամ: Զրահամեքենայի ուղեկցությամբ եկանք Լաչին: Վարորդներից մեկը Ֆելիքս Հակոբյանն էր Շուշիից, որ հիմա Շուշիի քաղաքապետն է: Լաչինում Ֆելիքսին ՕՄՕՆ-ականը ճանաչեց: Շուշիում կանգնեցրին, թե՝ ո՞վ է Շուշիից, Ֆելիքսն ասաց, որ ինքն է: Մտցրին զրահամեքենան, տարան Ստեփանակերտ: Շուշվա տակ մեզ դիմավորեցին Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Արթուրը, Վիտո Բալասանյանը: Շատ ուրախացան: Ասացի, որ մի ցիստեռն բենզին եմ խոստացել, մեկ էլ երեխային: Ասացին, որ խնդիր չկա: Զինվորներին հաց տվեցինք: Սաֆոնովին դիմեցինք, նրա կարգադրությամբ էլ բենզին տվեցինք: Զիմացան էլ՝ ով եմ, ինչ մեքենաներ եմ տեղափոխել, ինչ կաբել էր, ու դրանց մեջ ինչ էր փաթաթված: Այդ զենքը օգնեց Ասկերանի պաշտպանության գործում:

Շուշիի ազատագրման նախօրեին ժուռնալիստների խմբեր էին ժամանել, ու Ստեփանակերտի «կինոպրոկատի» կողմով պետք է ուղեկցեի նրանց: Համարյա երկու ժամ ճանապարհ գնացինք: Առավոտյան՝ ժամը 6-ին, մարտը սկսվեց: Թուրքերի համար անսպասելի էր մեր գրոհը: Մեկ զոհ ունեցանք, երեք վիրավոր: Կապվեցի Ֆելիքս Գզողլյանի հետ՝ «13-13» կապի նշանաբանով, զեկուցեցի: Հասանք նշված կետը, սպասեցինք, որ տեխնիկան գա: Նեւզորովի, մյուս ժուռնալիստների զենքը միկրոֆոնն էր կամ տեսախցիկը: Հրամանատարը Վալերի Չիթչյանն էր: Մեքենայի մեջ ես էի, Չիթչյան Վալերան, Շավարշ Վարդանյանը, «Հայլուր»-ից Արթուր Գրիգորյանը: Տանկը եկավ անցավ, թուրքերը տանկի գնդացրով մեզ վրա կրակում էին: Երկրորդ անգամ թնդանոթից կրակեցին, կպավ էլի պատին: Շավարշը հարցրեց. «Քանի՞ տարեկան ես«: «Երեսուներեք»,- ասացի: Ասաց. «Ուրեմն՝ Քրիստոսի տարիքին ես, ես էլ քառասուներեք եմ»:

Երրորդ անգամ կրակեց տանկը, էլի պատին կպավ: Ասացի. «Սրանք կամ կատակ են անում, կամ էլ մեկ այլ պատճառ կա, որ չեն խփում»: Թողեցինք դուրս եկանք ու փախանք: Ձեռքիս «Ալինկոն» էր մնացել, մեկ էլ ավտոմատը: Հրամանատարին ասացի. «Վալերա՞, մի «Ալինկո»-ով քո ետեւից իմաստ չունի վազվզեմ, ուզում եմ հետեւակի հետ գնամ ու կռվին մասնակցեմ»: Ասաց. «Լավ, բայց հեռու չգնաս»: Արթուր Գրիգորյանը վիրավորների հետ իջավ Ստեփանակերտ, հաղորդեց նյութը: Երեկոյան երեխաներն էլ տեսան Շուշիի ազատագրման մասին նյութը, որտեղ միայն հասցրել էր ինձ նկարահանել:

Երեկոյան Չիթչյանը կանչեց թե՝ մարտկոցը նստել է: Իջա Ստեփանակերտ, լիցքավորեցի, հիմա մեքենա չկա, որ բարձրանամ: Մայիսի ութի երեկոյան էր: Վտանգավոր էր: Կարող էին մերոնք խփել, կամ փախած թուրք լինի՝ նա խփի: Յոթանասուն կիլո շալակած՝ երկու անգամ իջել եմ Ստեփանակերտ ու բարձրացել դիրքերը: Անընդհատ կապվում եմ, ասում, որ ես եմ, չկրակեք, պատասխանում են՝ հասկացանք, Ալիկ, հանգիստ բարձրացիր: Առավոտյան՝ ժամը 4-ին, հրաման ստացանք ու առաջացանք: Կարգին մարտ էլ չկար: Հրամայված էր խաղաղ բնակիչներին թույլ տալ, որ հեռանան: Չիթչյանին ասացի. «Ոտքերս ուռչել են, համ էլ, ոնց որ երեւում է, կարգին գործ չկա, Շուշին հանձնել են թուրքերը, թույլ տուր գնամ տուն, կարգի բերեմ ոտքերս»: «Չէ,- ասում է,- հեսա նոր մարտ է սկսվում»: Ասում եմ. «Լավ, ի՞նչ մարտ, ես գնամ, քայլել չեմ կարող»: Թե՝ բա բանկաներ, խանութի ապրանք... Ասացի՝ չեմ ուզում: Հարեւանս, որ ինձ օգնել էր բարձրանալ տուն, առավոտյան ժամը իննին եկավ, թե՝ վեր կաց, արի: Ասում եմ՝ չեմ կարող, թե՝ արի պատշգամբից նայիր: Մեր երեք շենքերից կռվի մասնակից միայն ես էի: Հարեւանները, ով տանն ինչ ուներ՝ մեկը սոխ, սխտոր, մի կտոր հաց, գինի, մյուսը թթու, բակում սեղան են բացել : Ասացին. «Ելք չունես, պետք է իջնես, քո կենացի, հաղթանակի համար մի բաժակ խփես մարդկանց հետ»: Մարդիկ՝ երեխաներով,

ծերերով, նկուղներից դուրս էին եկել: Թվաց, թե պատերազմը վերջացել է:

Խոջալուի մարտերի մասին պատմեմ: Մեր զորախումբը Հասանաբադի ուղղությամբ էր գրոհել՝ Սեյրան Օհանյանի հրամանատարությամբ: Լավ ընթրեցինք միասին: Փետրվարի 26-ին՝ գիշերվա ժամը 12-ին, գետն անցանք: Գետը խորն էր: Շալվարներս սառել էին ու սառցակալումից խշխշում էին: Դուրս եկանք մայրուղի: Ես ու Սեյրանը բարձրացանք զրահամեքենան: Մի ձող կար, հերթով բռնում էինք: Սառն էր, երկար չես կարող բռնել: Երբ կրակում էին մեր ուղղությամբ, պատըսպարվում էինք աշտարակի ետեւում: Եկանք խաչմերուկ: Ձախ կողմից կրակեցին մեզ վրա: Հասանք կամրջին: Բեկոր Աշոտն իր վաշտով եկավ, անցավ գետափով: Սեյրանի ծածկանունը «Քսանյոթ» էր: Հրամայեցին դիրքավորվել ու սպասել: Գիտեինք, որ մի քանի ժամ տեւելու է մարտը: Մեր ետեւից կրակում էին մոշի թփերի արանքից: Դժվար էր շրջվել ու պատասխան տալ: Կոմանդոսն ու Արթուր Փափազյանն էին գալիս «ՈւԱԶ»-ով: Ասում ենք՝ պառկե՛ք, կրակում են: Ճիշտն ասած, սպասում էինք, որ կրակողի ավտոմատի փամփշտակալը կսպառվի, եւ մինչեւ փոխի՝ հարցը կլուծենք: Բեկորի հետ կապվեցինք, ասացինք, որ կամրջի տակ մարդ կա: Մոտեցանք: Ոտքը կտրված, մաշկն էր պահում կտրված մասը: Երեսունհինգ-քառասուն տարեկան տղա էր, սկսեց լաց լինել: Մի ապտակ հասցրին, նա թե՝ ի՞նչ անեի, պաշտպանվում էի: Կանչեցինք սանիտարին: Նրան տարան հոսպիտալ: Առավոտյան ժամը վեցին վերջացավ մարտը: Հինգ հարկանի շենք կար, վեց-յոթ հոգի կային այնտեղ: Այն գրավել չէինք կարողանում: Ականանետներով, զրահամեքենայով, գնդացրերով չէինք կարողանում վերցնել: Երեկոյան կողմ միայն նրանք փախան: Աղդամի կողմից Ասկերանով էին փորձել գալ օգնության, սակայն մեր ուժերի մի մասը գնաց օգնելու Ասկերանի տղաներին: Երեկոյան կողմ Խոջալուն գրավված էր: Զինվորները գալիս էին, իրենց հասանելիք հարյուր գրամ օղին խմում:

1992 թվականի մարտի 22-ն էր, Նախիջեւանիկի, Փառուխի կողմերի մարտերն էին: Հերթապահում էի «վաթսունմեկ»-ում: Թուրքերը գալիս էին ինքնաթիռներով, հինգ հարյուր կիլոգրամանոց ռումբեր գցում: «Հարյուրտասնմեկերորդ» հրամանը հաղորդվեց, որը օդային տագնապի նշանն էր: Հետո ասացին, որ ավտոկայանի հետեւի շենքն է ոչընչացվել: Այդտեղ էլ մեր տունն էր: Հանրակացարանի շենքն էր: Գնացի Ստեփանակերտ: Լրիվ փոշի էր: Տեսա՝ աղջիկները խաղում են բակում: Հարեւան Ղազի ապա ունեինք, զոհված երեխաներ կային մոտը: Բարձրացանք տուն: Պատուհան ու տանիք չկար: Երրորդ հարկի աստիճաններին տեսա՝ մի ավտոմատ ընկած: Իմ համարն էր: Դուռ-բան չկար, ամեն ինչ խառնված: Տանը ոչ ոք չի եղել: Զանգեցի մորս, թե՝

Մարինան երեխաների հետ գնացել է թատրոնի շենք՝ կնքվելու: Տան ամանեղենը լրիվ ջարդված էր, միայն կոնյակի բալոնը չէր ջարդվել: Երեխաներին տարա աներոջս տուն:

Խրամորթ գյուղում էինք: Հաճախակի էին թուրքերը մեր կապի մեջ մտնում: Մի անգամ թե՝ Վազգեն, Վազգեն, յա Մոլլա... Ասում եմ.

- Լսի՛ր, ի՞նչ ես ուզում:

- Որտեղի՞ց ես:

- Ղարաբաղից: Ի՞նչ ես ուզում:

- Ես քեզ հասկանում եմ,- ասում է,- դու քո հայրենիքն ես պաշտպանում, իսկ ինձ զոռով են քշել բերել այստեղ, ինձ ոչ Ղարաբաղ է պետք, ոչ Աղդամ: Այստեղ Մեջլիսի ոչ մի պատգամավորի, ոչ մի մինիստրի, պաշտոնյայի որդի չկա, բոլորս հասարակ մարդկանց տղաներ ենք: Արի պայմանավորվենք այսպես՝ իրար վրա չկրակենք, օդ կկրակենք, հերթափոխը կգա, կգնանք, ապահով տուն կհասնենք:

- Որտե՞ղ ես գտնվում,- հարցրի ես:

- Աղբյուրի մոտ:

Հարյուր մետր էր մեզանից հեռու: Հարցրի, թե քանի հոգի են: Ասաց՝ հիսուն: Ասացի՝ երեք կրակոց տուր: Տեղն իմացանք: Մերոնք ռմբակոծեցին, լրիվ ոչնչացրին:

Ես դեռ միայն մի դեպք պատմեցի, բայց նման դեպքեր շատ են եղել:

Մայիսի 6-ին կապի պետ Արթուր Փափազյանը բոլորիս՝ վաթսուն հոգու, շարք կանգնեցրեց, ասաց. «Եթե որեւէ մեկին պայմանները չեն ներում, հիվանդ է կամ այլ խնդիր ունի, ավելի լավ է ինքնակամ հրաժարվի, քան թե կես ճանապարհից ետ դառնա: Լավ է՝ քսան զինվոր պակասի, քան թե մի կապավոր բացակայի: Առանց կապի պատերազմ չկա»: Երկու հոգի դուրս եկան շարքից, մեկն ասաց, որ ոտքն է ցավում, մյուսն ասաց, որ վախենում է: Նրանք մեր աչքին բարձրացան, քանի որ համարձակություն ունեցան խոստովանել ճշմարտությունը: Հետագայում այդ վախեցող տղան մասնակցեց մարտերին ու իրեն շատ լավ դրսեւորեց:

Ավդալ-Գյուլափլի մարտերն են: Հայաստանից պետք է ռմբակոծիչ գար, ռմբակոծեր հակառակորդի դիրքերը, նոր սկսվեր գրոհը: Ինքնաթիռի կապի նշանաբանը «Քեռի» էր: Ֆելիքսին հարցրի. «Ի՞նչ եղավ Քեռին, ախր սոված ենք, հաց պետք է բերեր»: Թե՝ կոշիկները հագնում է, հեսա հաց կբերի: Բայց ուշանում էր: Հետո թե՝ ձին սատկել է՝ էշով է գալու: Հետո, երբ հարցրի, թե՝ էշը վեր ընկավ, սատկեց: Հետո իմացա, որ Ստեփանակերտի «Կոլցեւոյի» մոտ հենց մերոնք խփել են մեր իսկ ինքնաթիռը: Ասաց. «Ոչ մի հույս չկապեք Քեռու հետ, ինքներդ ձեր գլուխը պահեք»: Գիտեինք, որ Հայաստանն այդ ժամանակ ընդամենը երկու ինքնաթիռ ուներ: Մի անեկդոտ տարածվեց Ղարաբաղում՝ «Ղարաբաղի բանակն այնքան ուժեղ է, որ մի հարվածով ոչնչացրեց Հայաստանի ավիացիայի հիսուն տոկոսը»:

Պատմում է Սերժիկ Ասլանյանը
03.02.2006 թ., Երեւան



Ս.Ա. - Ծնվել եմ 1947 թվականին, Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտել եմ Ստեփանակերտում: Երեւանում ավարտել եմ Գյուղատնտեսական ինստիտուտի ավտոբաժինը, ավտոինժեներ եմ: Մինչեւ 1991 թվականն աշխատել եմ ավտովերանորոգման գործարանում որպես արտադրամասի պետ: Շարժման առաջին օրերից ընդգրկվել եմ ազգային-ազատագրական պայքարի մեջ: Սկսել եմ հավաքագրել հայաստանաբնակ ղարաբաղցիներին:

ՀԽՍՀ ԴՕՍԱԱՖ-ի նախագահ Նապոլեոն Տիգրանիչն ինձ տրամադրեց հրածգարանը: 1990 թվականի գարնանից ես այնտեղ անց էի կացնում պարապմունքները: Սկզբում, իհարկե, գաղտնի, որովհետեւ շատ բաներ արգելված էին: Զբաղվում էինք նաեւ զենք հայթայթելով: 1991 թվականին առաջին անգամ կառավարական մակարդակով զենք ստացանք: Այդ զենքը գտնվում էր Պռոշյան փողոցում՝ կենտկոմի ամառանոցում: Առաջին քսան բուլղարական «ԱԿՄ» ինքնաձիգները Վազգեն Սարգսյանը տվեց, տարա մեր գյուղ: Հաջորդ անգամ կազմակերպեցի, եւ զինամթերքը տարան Թալիշի ջոկատի համար: Ես պատասխանատու էի Մարտակերտի շրջանի գյուղերի համար: Տասներկու ավտոմատ տարա Չափար, իսկ ութ հատը՝ Դրմբոն: Իմ տղաները զբաղված էին դիրքերում՝ Սրխավանդի եւ Քելբաջարի ուղղությամբ: Ես տեղափոխվեցի Դրմբոն: Ծնողներս այնտեղ էին: 1992 թվականի փետրվարին Սեւանի Սուրիկի եւ Հրազդանի Միքայելյան Սասունի հետ մասնակցեցինք Խոջալուի օպերացիային: Մեկ շաբաթ ջոկատի տղաների հետ մնացինք Մեհտիշեն գյուղի դպրոցի շենքում: Խոջալուի գործողությունը սկսեցինք երեկոյան: Ժամը տասնմեկին շարժվեցինք օդանավակայանի ուղղությամբ: Օպերացիան ղեկավարում էր Արկադի Տեր-Թադեւոսյանը:

Բ. - Նա ընդհանուր գործողությունն էր ղեկավարում, բայց չորս ուղղություններ կային:

Ս.Ա. - Մեր ուղղության վրա Սասունն էր, Սուրիկը եւ ես: Երբ պետք է օդակայանի ուղղությամբ Խոջալու մտնեինք, առաջին վիրավորը Արմեն անունով մի տղա էր՝ Ստեփանակերտի հետախուզական վաշտից: Ես եւ Ուտյոս Արթուրը, որը Զագլիկ գյուղից էր, ականանետը դրել էինք բարձունքին, խփում էինք Խոջալու գյուղի վրա, եւ կարծես մի դեզ վառվեց: Արկերը սահմանափակ էին: Տասնմեկ հատ արկ կրակելուց հետո իջանք ներքեւ: Խոջալուի դաշտային հատվածը բնակեցված էր թուրք մեսխեթինցիներով: Երբ մենք մտանք գյուղ, մեսխեթինցիները չէին փախել, տանն էին: Նրանց թողել էին ՕՄՕՆ-ականները: Մի տասնչորս տարեկան մեսխեթինցու ասացի, որ եթե մյուսներին ասի՝ բոլորը դուրս գան, մենք նրանց ոչ մի բան չենք անի: Երկու գազապատարանից յոթանասունհինգ հոգու հանեց՝ կանանց, տղամարդկանց եւ երեխաների: Արդեն գիշերվա ժամը մեկն անց էր: Այդ ժամանակ մեզ երեք ժուռնալիստներ էին ուղեկցում՝ երկու կին եւ մեկ տղամարդ: Մի կինը ֆրանսիացի էր, տղամարդը, որը բարձրահասակ էր, բելգիացի էր կամ հոլանդացի, մյուս կինն էլ ռուս էր՝ լենինգրադցի, որը թարգմանիչն էր: Նրանք ամբողջ գիշեր նկարեցին: Ես նրանց ասացի. «Այ, հիմա նկարում եք, հետո սրտաճմլիկ պատմություններ չգրեք: Մենք այդ մարդկանց ուղղակի հանել ենք, ուրիշ ոչինչ չենք արել»: Սասունի ջոկատից Արշոյին եւ տասնչորս տարեկան մեհտիշենացի մի տղայի յոթանասունհինգ մեսխեթինցիների հետ ուղարկեցինք շտաբ՝ Կոմանդոսի մոտ: Մեկ օր հետո Ժաննա Գալստյանի ուղեկցությամբ այդ մեսխեթինցիներին ուղարկեցինք Աղդամ՝ թուրքերի մոտ: Բայց մենք նրանց Կարմիր խաչի ներկայությամբ ենք հանձնել աղդամցիներին: Առավոտյան ժամը հինգն էր, երբ մենք հասանք գյուղի կենտրոն: Ժուռնալիստները մեզ հետ էին: Սիսիանցի Վարդգեսն ասաց. «Սերժի՛կ, ես գիտեմ, արի՛»: Մի այրվող շենքի բակից տասներկու հատ նոր մեքենաներ ենք հանել: Մեզ հրաման եկավ, որ տասնհինգ հոգով պետք է գնանք, բարձրահարկ բետոնե շենքը պահենք: Ուտյոս Արթուրը, Սուրիկի երկու տղաները, Սասունի երեք տղաները եւ ես գնացինք, այդ շենքը պաշարեցինք եւ ամբողջ օրը պահեցինք: Այդտեղ էին հավաքված ՕՄՕՆ-ականների հիմնական մասը: Այդտեղ երկու զոհ ունեցանք: Նրանք դիպուկահար հրացանով էին կրակում, մենք անընդհատ պատասխանում էինք: «Ալազանով» էլ էինք խփում: Երբ մութն ընկավ, Կոմանդոսը մեզ շենքը թողելու հրաման տվեց: Տանկերը եկան, ու հանձնվեցին:

Բ. - Բանակի տանկե՞րն էին:

Ս.Ա. - Երեւի: Խոջալուի օպերացիայի հաջորդ օրը շարժվեցինք: Վաղուհաս գյուղից երեք «ԳԱԶ-66» մեքենաներով, որոնցից մեկը Սասունն էր քշում, բարձրացել ենք Գանձասար: Շատ դժվար ճանապարհ էր: Եկանք Զագլիկ, Հաթերք: Կոմանդոսն էր մեզ ուղարկել: Մեր նպատակն էր ազատագրել Ումուտլու գյուղը: Երբ մենք տեղ էինք հասել,

գյուղի բնակչությանը ադրբեջանական կողմը ուղղաթիռներով տեղափոխել էր: Մենք ձեռնարկեցինք Հաթերքի եւ Չափարի պաշտպանությունը Քելբաջարի ուղղությամբ: Հաջորդը՝ իրականացվեց Սրխավանդի օպերացիան, որը ռազմավարական մեծ նշանակություն ուներ. կապահովեինք Ստեփանակերտից Մարտակերտ ճանապարհային կապը: Այդ գործողությունը բավականին մշակված էր, քանի որ Սրխավանդում ահագին ուժեր էին կենտրոնացրել: Այնտեղ էլի ադրբեջանական գյուղեր կային: Բոլոր այդ գյուղերը լուսավորված էին էլեկտրական հոսանքով: Այդ օպերացիայի ժամանակ մենք Ղուլյան Աշոտի՝ Ասկոլկայի եւ դրմբոնցի ութ տղաների հետ գիշերվա ժամը մեկին դուրս ենք գալիս Չլդրանից եւ շրջանցելով ճանապարհի տակից մտնում ենք Բաշ Գյունափայա գյուղը: Այնտեղ խնդիր առաջացավ. մի «Նիվա» մեքենա եկավ, կրակեցինք՝ չիմանալով, թե ովքեր են: Առավոտյան ժամը վեցին դիրքերի զինվորները վեր կացան: Դա պատճառ եղավ, որ մենք տասնմեկ զոհ տվեցինք: Արդեն կեսօրին Բաշ Գյունափայա գյուղը համարյա գրավված էր: Նրանք թնդանոթ ունեին, վերցրել էինք, բայց հետո թողեցինք: Արդեն երեկոյան ամեն ինչը մեր ձեռքի տակ էր: Բաշ Գյունափայա գյուղի դպրոցը նրանց զինանոցն էր: Մարտակերտի Վլադիմիրի տղերքը եկան եւ «ԿԱՄԱԶ»-ով ահագին զինամթերք տարան: Այդքան ամուր կետ էր այդ գյուղը: Հիշում եմ՝ երբ փոքր էի, Բաշ Գյունափայա գյուղում խանութ չկար: Այդ գյուղի բնակիչները գալիս էին Մեհմանա՝ հունական գյուղ, լուցկի, աղ առնում, տանում: Իսկ երբ գրավել էինք, գյուղում արդեն երկու դպրոց կար: Այդ գործողությունից հետո Սամվել Բաբայանն ասաց, որ պետք է պատրաստվենք նոր գործողությունների՝ Սարսանգի ջրամբարի ուղղությամբ: 1992 թվականի գարունն էր: Շահումյանը վտանգի տակ էր, բնակիչները դուրս էին գալիս: Սարսանգի ջրամբարը Ղարաբաղի ամենաթանկ կառույցն էր: Այն հոսանք էր մատակարարում ամբողջ Ղարաբաղին:

Ղազանչի գյուղ կա, որը Մարտակերտի ամենահին գյուղերից մեկն է: Փետրվար ամիսն էր: Վաթսուներեք հոգով՝ Վերին Հոռաթաղի, Վաղուհասի եւ իմ տղաների հետ Չլդրանից շարժվեցինք դեպի Ղազանչի: Մարտակերտի հետ կապը վատ էր, մեզ անընդհատ ուշացնում էին: Երբ հասանք Ղազանչի, պաշտպանական կետերը «Բուլդոզեր»-ով մաքրել էին, զրահամեքենաները մտել էին գյուղ: Բոլոր զրահամեքենաների վարորդները ռուսներ էին: 1992-ին մենք տանկի ու զրահամեքենայի թուրք վարորդի չենք հանդիպել: Գյուղի վերեւում հանդիպեցինք Ղազանչի գյուղից մի մանկավարժ կնոջ եւ մի տղամարդու, որոնք այդտեղ ծվարել էին: Նրանք մեզ ասացին, որ ուշացել ենք, պետք է ետ դառնանք: Թուրքական գյուղ կար՝ Բաշինլար, որը բնակեցված էր: Այդ գյուղի կողքով գնացինք: Այդտեղից մեզ վրա կրակեցին: Հոռաթաղի

տղաներից Ագոն, որին Խալաստոյ Ագո ենք ասում, հետեւից էր գալիս: Լավ է՝ նրան չկպավ: Փաստորեն, կազմակերպված օպերացիա չէր: Դրանից հետո ես եկա Երեւան եւ Վազգեն Սարգսյանին խնդրեցի, որ մասնագետ՝ զինվորական գիտելիքներ ունեցող մարդ ուղարկի: Մենք չէինք կարողանում Գրադ ժորային կոորդինատները ճիշտ ասել: Օրինակ՝ ասում էինք, որ տասը մետր աջ կրակի, բայց պարզվում էր, որ հարկավոր է ասել՝ հարյուր մետր, քանի որ այդ տեղը անկյան տակ է: Իսկ մենք այդպիսի բաներ չգիտեինք: Մարտ ամսին Վազգեն Սարգսյանը Բաղմանյան Հայկազին, որն այն ժամանակ բանակի կապիտան էր, ուղարկեց ինձ հետ: Ես նրան՝ որպես զինվորական լուրջ գիտելիքներ ունեցող մասնագետի, տարա Մարտակերտ: Հիմա ես մի դեպք կպատմեմ, եւ դուք կհամոզվեք, թե որքան անհրաժեշտ էր մասնագետի ներկայությունը: Արկադի Տեր-Թադեւոսյանը Ներքին Հոռաթաղից, Պուշկին յալից եկավ դեպի դիրքեր՝ Փափրավանդ, որը թուրքական գյուղ էր: Մարտակերտի հրամանատարը Վագիֆն էր, որ շատ հայրենասեր տղա էր: Նա շինարար էր: Երբ Կոմանդոսը տեսավ խրամատները, հարցրեց, թե ով է պատվիրել, որ այդպես փորեն: Սխալ էր փորված: Դե, Վագիֆը շինարար էր, չգիտեր ռազմական էլեմենտները, այբուբենը: Հայրս ինձ զինվորական գրքեր էր տալիս կարդալու: Նա Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մինչեւ Բեռլին գնացել է: Ասում էր. «Տղա ջան, եթե քեզ զենք են տվել, դու պարտավոր ես զինվորական գոնե տարրական բաներն իմանալ»: Եվ ես իրիկունները կարդում էի այդ գրքերը: Բաղմանյան Հայկազին նշանակեցին Մարտակերտի շտաբի պետ: Շահումյանը հանձնելուց հետո Մարտակերտի խնդիրն էր: Ճիշտն ասած՝ մենք Մարտակերտում մեծ ուժեր էինք կենտրոնացրել եւ ահագին գրոհներ կարողացանք ետ մղել: Մարտակերտի բնակչությանը թույլ չէին տալիս դուրս գալ: Իսկ ես դրան այնքան էլ կողմ չէի: Ես զգում էի վտանգը: Եթե չէինք կարողանալու պաշտպանել, ապա պետք չէր նրանց պահել: Կարմիրավանի, Մարտակերտի դեպքերը գիտեք. բնակիչները մնացել էին իրենց գյուղերում, թուրքերը մտել էին, բոլորին գլխատել: Մարտակերտում էին Արկադի Տեր-Թադեւոսյանը, Ալիկ Պետրոսյանը, գեներալ-մայոր Հարությունյանը: Շատ նյարդային օրեր էին: Այդ կրիտիկական օրերին Կոմանդոսն ինձ իմ տղաների հետ ուղարկեց Կարմիրավան գյուղը: Այնտեղ էին նաեւ «Արաբոյի» տղաները: Այդ ժամանակ էր, որ «Արաբո» եւ Հոկտեմբերյանի ջոկատների տղաները գնացին, անհետ կորան: Մատյանում, որ մինչեւ այսօր պահպանվում է, Պետրոսյան Ալիկը եւ Մարտակերտի շտաբի պետը իմ անունն էին գրել, որ այդ տղաներին պետք է տանեմ: Բայց հարցեր առաջացան, եւ Կոմանդոսն ինձ ուղարկեց Կարմիրավան: Նրանց առաջնորդեց Դմիտրի անունով մի տղա: Երբ ես Կար-

միրավանից եկա, լարված վիճակ էր, տղաները Պետրոսյան Ալիկի հետ խնդիրներ ունեին: Դմիտրին հայ էր, որը փախել էր Ռուսաստան: Նա, հավանաբար, մոտոցիկլետով էր, որովհետեւ այդքան կարճ ժամանակում չէր կարող Հասանղայա գյուղից հասնել Մարտակերտ: Ես չգիտեմ, թե ինչ կպատահեր, եթե ես նրանց առաջնորդեի: Բայց ես այն միամիտը չեմ, որ գնայի, այդտեղ հասնեի: Ես ինձ հետ միշտ ղարաբաղցի տղաների էի վերցնում, որոնք տարածքը գերազանց գիտեին: Դա շատ ողբերգական պատմություն է: Այդ ժամանակ Ասկոլկա Աշոտը իր ջոկատի տղաների հետ գտնվում էր Լեւոնարխում՝ մալականների գյուղում: Այդպես որոշվեց երեկոյան խորհրդակցության ժամանակ. Կոմանդոսն ինձ ուղարկեց Կարմիրավան, որը հիմա չեզոք գոտի է (կանալի մի կողմում մեր դիրքերն են, մյուս կողմում՝ ադրբեջանցիների), իսկ Ասկոլկա Աշոտին ուղարկեց Լեւոնարխ: Մարտակերտում ահագին զոհեր ունեցանք, որովհետեւ ադրբեջանցիներն անընդհատ ռմբակոծում էին: Մի մարտի ժամանակ մենք տասնչորս հատ զրահամեքենա վերցրինք: Անձնակազմում վեց հոգին չեչեն էին: Նրանց բերեցինք շտաբ: Կոմանդոսը նրանց հետ խոսում էր: Ցորենի դաշտը վառվել էր, նրանք շշկռել էին: Չեչեն սպան շատ դժգոհեց ադրբեջանցիներից. «Այդ խոզերը մեզ թողել գնացել են»: Ասում էր, որ ադրբեջանցիները կռվել չգիտեն, բայց եթե իրենք մեզ հետ կռվեին, բոլորին կհաղթեինք: Այդ դեպքերից հետո Մարտակերտը հանձնեցինք, որը մեծ ողբերգություն էր:

Բ. - Հանձնելն արդարացվա՞ծ էր:

Ս.Ա. - Արդարացված էր այն իմաստով, որ այլեւս հնարավոր չէր պահել: Մարտակերտի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ հարձակումը լայն ճակատով պետք է լիներ: Ամբողջը դաշտավայր էր: Մենք չէինք հասցրել բոլոր մուտքերն ականապատել: Մարտավարական տեսակետից կային բացթողումներ: Հնարավոր չէր այդ լայն ճակատին դիմագրավել: Մարտակերտում էին Հատուկ գնդի տղաները: Նրանք գիշերօթիկ դպրոցում էին մնում:

Բ. - Ո՞վ էր, որ խուճապ տարածեց:

Ս.Ա. - Մենք Մարտակերտը որոշ ժամանակ պահեցինք: Նախ ուղղաթիռներից, «ՍՈՒ-25» ինքնաթիռներից ռմբակոծում էին: Մարդիկ իրենց տներում զոհվեցին: Տանկն էր անընդհատ խփում: Մենք երեք անգամ շտաբի տեղը փոխեցինք:

Բ. - Արկադի Տեր-Թադեւոսյանի վիճակը ո՞նց էր:

Ս.Ա. - Շատ վատ էր, նյարդային վիճակում էր: Մարտակերտը վերցնելուց առաջ, երբ վիճակը շատ վատ էր, Հայաստանից եկածները մեր տանն էին մնում: Մեր տանն էին Սամվել Շահմուրադյանը, Սմբատ Այվազյանը, Երջանիկ Աբգարյանը եւ Ցուրա Հարությունյանը: Սամվել

Շահմուրադյանը եւ Սմբատ Այվազյանը գնացին Ստեփանակերտ, զանգեցին Վազգեն Սարգսյանին եւ շտապ պահանջեցին չորս տանկ, որովհետեւ Մարտակերտը չէինք կարողանում պահել: Մեկուկես օրից չորս տանկերը Ստեփանակերտում էին: Երկու տանկերի անձնակազմում Կիրովականցի տղաներ էին: Ես Մարտակերտում եմ եղել, երբ նրանք եկել են մեր տուն, հաց կերել: Մեր տունը Մարտակերտի ճանապարհին է: Հետո նրանք էլ եկան Մարտակերտ: Ստեփանակերտից երկու տանկ ուղարկեցին Մարտակերտ: Համենայն դեպս, մի քանի օր էլ կարողացանք դիմադրել: Տանկերից մեկը հանձնեցինք: Տանկի անձնակազմում երիտասարդ տղաներ էին, անփորձ: Արկադի Տեր-Թադեւոսյանը շատ ծանր տարավ այդ կորուստը: Չլդրան գյուղում նա ինքն իրեն արդեն չէր տիրապետում: Իրավիճակն այնպիսին էր... Մարտակերտի վրա երեք կողմից հարձակվել էին: Այդ մարդը ի՞նչ աներ: Թիկունքից չէր գալիս այն, ինչ պետք էր: Չեչեններից վերցրած զրահամեքենաներից մեկը Արկադի Տեր-Թադեւոսյանը իմ ջոկատին տվեց, որովհետեւ իմ տղաներից երկու հոգի դրա լավագույն մասնագետն էին: Նրանք Սովետական բանակում միասին էին ծառայել: Գեւորգյան Բաբկենը, որ զրահամեքենայի մեխանիկ-վարորդ էր, դարձավ տանկային գումարտակի հրամանատար: Գեւորգը հայաստանաբնակ ղարաբաղցիներից էր, նրան ես էի բերել Ղարաբաղ: 1991 թվականից մինչեւ 1993-ի նոյեմբերը ես ցուցակներով, հրամաններով Հայաստանից հինգ հարյուր ղարաբաղցիների եմ տարել Ղարաբաղ: Ընդ որում, բոլորը կամավոր էին եկել՝ իրենց դիմումներով:

Արդեն Սարսանգի ջրամբարն էր հարվածի տակ: Մարտակերտը հանձնելուց հետո ջրամբարը երկու անգամ տվեցինք ադրբեջանցիներին եւ ետ վերցրինք: Երբ ադրբեջանցիները առաջին անգամ ջրամբարը վերցրին, սկսեցին աշխատեցնել: Մեկ ու կես ամիս անց մենք ետ վերցրինք ջրամբարը: Հետախուզությունը մենք ենք կատարել: Հետախուզության ժամանակ չորս պատգամավորներ կային՝ Մազմանյան Հայկազի գլխավորությամբ: Նա պետք է ուղղությունը տար, որ խփեին ջրամբարի վրա: Ալաշան կոչվող տեղամասում էր գեներալ Դալիբալթայանը: Եթե չեմ սխալվում, Գզողլյան Ֆելիքսն էլ էր այնտեղ: Հինգ օր մենք հետեւում էինք ադրբեջանցիների դիրքերին, թե ինչպես է հերթափոխությունը կատարվում, ինչ տեխնիկա ունեն: Մոտ էինք գնում՝ մինչեւ լճի ափ, անտառի մեջ: Եռոտանի շտատիվի վրա մեծ հեռադիտակ ունեինք: Մեկ-մեկ Հայկազը ուղղորդում էր, Գրադի Ժորան խփում էր: Հայկազը շատ ճիշտ էր ուղղորդում: Մի քանի արկ ընկավ անմիջապես ջրամբարի պատնեշի վրա: Հայկազին խնդրեցի այնպես ուղղորդել, որ ՀԷԿ-ի գեներատորի վրա չընկնի, որպեսզի վնաս չլինի: Եկանք, ծրագիր մշակեցինք: Այն ժամանակ Ուտյոս Արթուրը ողջ էր:

Հավաքվեցինք Դալիբալթայանի մոտ: Չորս պատգամավորներն էլ էին այնտեղ: Սամվել Շահմուրադյանն ասում էր, որ ինչ օպերացիա էլ մշակենք, ինքը պետք է մասնակցի: Ես, իհարկե, այնպես արեցի, որ նա չմասնակցի, որովհետեւ նա մեր պատմությունն էր գրում: Նրան բացատրում էի, որ մենք զինվոր ենք, մեր գործն ենք անում, իսկ նա զոհվելու իրավունք չունի: Բոլորը մտածում էին՝ ինչպես անենք, որ ջրամբարը վերցնենք: 1992 թվականի հուլիսի 12-ն էր: Հինգ օր տեւած հետախուզությունից հետո ռացիայով ինձ ասացին, որ հայրս ծանր է: Ես գնացի Ստեփանակերտ: Հայրս սրտի ինֆարկտ էր տարել: Բժիշկ Բաբայանի հետ խոսեցի, ասացի. «Եթե հայրս պետք է մահանա՝ մնամ, թե ոչ՝ գնամ, ջրամբարի օպերացիային պետք է մասնակցեմ»: Բժիշկն ասաց, որ հայրս կապրի: Պարզվում է, որ հորս ասել էին, թե ես զոհվել եմ, եւ հայրս ինֆարկտ էր ստացել: Ես նրա միակ տղան եմ: Հաջորդ առավոտ նորից սրտագրառում արեցին, ասացին, որ հորս վիճակը լավ է, ես ետ եկա: Գործողությունը կատարեցինք յոթ հոգով: Այն մշակվել էր Դալիբալթայանի գլխավորությամբ: Մտածում էինք փոքր կամերներով անցնել գետի մյուս ափը: Յուրաքանչյուրս իր տեսակետն էր հայտնում: Մենք ուզում էինք հանկարծակիի բերել ադրբեջանցիներին, որպեսզի ճակատամարտ չլինի: Նրանց տեխնիկան շատ էր: Վերջում Դալիբալթայանն ասաց. «Ладно, сделайте по своему»: Ես իմ ջոկատի յոթ տղաների հետ գնացի: Կեսօրվա ժամը երկուսն էր, երբ նրանց «ԳԱԶ-66» մակնիշի երեք մեքենաները եկան հերթափոխության: Մենք նրանց հերթափոխության ժամերը գիտեինք: Մեծ Շենի կողմից ջրամբար գնալիս մեծ պաստառի վրա Լենինի նկարն էր, որի վրա բոլորը կրակում էին: Մեծ պատ էր, հետո՝ անտառը: Անտառից կրակում էինք այդ մեքենաների վրա: Առաջին անգամ Ադրբեջանի ռադիոն հայտնեց, որ քսանյոթ զոհ են տվել: Մենք լսում էինք: Հերթափոխող մեքենաներին խփելուց հետո խիտ անտառով փախանք: Ադրբեջանցիները տեղափոխվեցին այդտեղից: Մենք ջրամբարը գրավեցինք: Ջրամբարի մոտ Սեւանի Չոլի հետ նկարվեցինք: Նա Սուրիկի ջոկատի տղաներից էր, 1993 թվականին ջրամբարի մոտ զոհվեց: Ջրամբարի պատի մոտ նրա հիշատակի քարը կա: Դալիբալթայանին ասացի, որ ջրամբարը վերցրել ենք, ասաց. «Не может быть»: Նրան տարա լճի ափ, հեռադիտակով նայեց, տեսավ՝ մեր տղերքը ջրամբարի պատի վրա պարում են: Ասացի. «Ա՛յ, նայիր, նայիր՝ Չոլը»: Ասաց. «Տղե՛րք, այդ ե՞րբ հասցրիք»: Գովեց մեզ: Հավաքվեցինք, որ գնանք մեր տուն, նշենք: «Վիլիսի» մեջ ռացիայով կապվեցին, թե.

- Ասլանյան Սերժիկն այդտե՞ղ է:

- Հա՛, ի՞նչ է եղել:

- Նրան ասեք, որ հայրը մահացել է:

Ես գնացի Ստեփանակերտ, բերեցի հորս: Հաջորդ օրը թաղեցինք: Զինվորներն էին, եւ միայն մայրս էր եկել: Գյուղում մարդ չկար: Սեղանը Դալիբալթայանը ղեկավարեց: Քսան օր հետո գյուղը հանձնեցինք: Ջրամբարն էլ հանձնեցինք: Մեր գյուղը հանձնելն արդեն աղետ էր: Մենք տեղափոխվեցինք Չլդրան: Մինչեւ գյուղը հանձնելը դեպք եղավ: Գյուղում էին Ամարասի Արթուրը, Գզողլյան Ֆելիքսը, Հաթերքի Սուրիկը: Շտաբը մեր գյուղում էր: Գզողլյան Ֆելիքսն էր ղեկավարում: Դալիբալթայանը չկար այդ ժամանակ: Ջրամբարի առաջին դեպքերն են: Թիկունքից ես եւ իմ ջոկատի տղաներն էինք գնում դեպի ջրամբար: Այն ժամանակ «Ալինկո» ռացիաներ դեռ չկային:

Բ. - Բայց Արթուրը Սուրիկի տղաների համար տասը հատ բերել էր, բաժանել էին:

Ս.Ա. - Երկու հատ կար, որից մեկը Ամարասի Արթուրի ձեռքին էր, մյուսը՝ Ֆելիքսի: Երբ ճանապարհվեցինք ջրամբարի ուղղությամբ, մեզ մոտ չորս հատ ոստիկանական ռացիաներ կային: Կապվեցին եւ ասացին, որ թուրքերը գյուղ են մտել: Ադրբեջանցիները որտեղից որ պետք է մտնեին, ես հենց այդ ուղղությամբ էի գնում: Մտածում եմ՝ ինչպե՞ս պետք է թիկունքից մտնեն: Չհավատացի, շարունակեցի առաջ գնալ: Իջա ձորը, բարձրացա, ռացիայի կապը ուժեղացավ եւ ինձ նորից զգուշացրին, որ ետ դառնանք: Բաբկենին՝ զրահամեքենայի մեխանիկ-վարորդին, ուղարկեցին մեր ուղղությամբ: Քշեց եկավ Արջի արձանի մոտ, ասաց. «Սերժի՛կ, շուտ ետ արի»: Սիսիանի Աշոտի, Սպիտակի Վիտոյի տղաները ավտոճանապարհի վրա հավաքվել էին, չգիտեին ինչ անել: Ինքնաթիռները ռմբակոծում էին: Ասացի. «Իմ շտապ օգնության «ՈՒԱԶ»-ը ուղարկեք»: Այդ մեքենան ես հիվանդանոցից էի վերցրել (ես բոլոր մեքենաները վերցրել եմ օրինական ճանապարհով՝ պաշտպանության նախարարության փաստաթղթով): Մեքենան ուղարկում են: Բաբկենին ասում եմ, որ վարորդի հետ մի մարդ դնեն, որ վարորդը գա: Գնում ենք Ալաշան, հետ գալիս, տեսնում՝ ադրբեջանցիները՝ հարյուր քսան զինվոր, գյուղ են մտել: Ինչպե՞ս են ադրբեջանցիները մեր գյուղ մտել: Վերեւը Սուրիկենք էին պահում: Գետավանը մեր ձեռքում էր: Պարզվում է՝ եկել են Բաշ Գյունափայա գյուղից: Չլդրանի եւ Մեհմանայի արանքում ջոկատ է եղել, չգիտեմ՝ ում ջոկատն է եղել: Այդ ջոկատը ինքնագլուխ թողել գնացել է: Չլդրանի եւ Մեհմանայի արանքով՝ անտառով, որտեղ սայլի ճանապարհ կար, անցել-եկել են: Դպրոցի կողմից կրակոցների ձայներ լսեցինք: Սա այն դեպքն է, որ ֆուտբոլի թիմին, գյուղ մտնելիս, կես կիլոմետր գյուղից վերեւ ադրբեջանցիները խփել էին: Երկու հոգի զոհվել էին, չորսը՝ վիրավորվել: Գյուղից հեռացող մեծահասակ ամուսինների ու եւս երեք հոգու գլխատեցին: Մարդիկ ճանապարհով գնում էին Ստեփանակերտ, ի՞նչ իմա-

նային, որ այդտեղ թուրքեր կան: Գնացինք: Ամարասի Արթուրն էր, Սուրիկը, Գգողլյան Ֆելիքսը: Մենք կարծում էինք՝ երկու տանկ է գյուղ մտել: Բաբկենը «ԲՄՊ-1»-ով դուրս էր գալիս, խփում: Զրահամեքենան հեռու չի կարողանում խփել՝ մինչեւ յոթ հարյուր մետր: Մի տանկ խփած է լինում: Ես իջնում եմ ձորը՝ ֆերմայի մոտ, այնտեղ Խոմարի աղբյուր կար, որ այդտեղով գնամ: Այդ ժամանակ Չափարի ջոկատի տղաներից չորս հոգի ինձ մոտ էին: Տեսնենք՝ այդ աղբյուրի մոտ ադրբեջանցիների տանկը կանգնած աշխատում է: Ասում եմ. «Բաբկեն, այստեղ մեծ «պղոճ» կա»: Տանկին այդպես էինք ասում, որ ադրբեջանցիները չհասկանան, թե խոսքն ինչի մասին է: Բաբկենը կարողանում է վերեւից ներքեւ նշան բռնել, եւ այնպես է խփում, որ կպնում է տանկի շարժիչին: Տանկը սկսում է ծուխ հանել: Ադրբեջանցիները, տեսնելով, որ տանկը ծուխ է անում, շրջվում են, փախչում վերեւ: Այդտեղից գնում եմ վերեւ, Ամարասի Արթուրին նկարագրում իրավիճակը: Միասին բարձրանում ենք ֆերմայի կողմը: Այնտեղ ադրբեջանցիները զոհեր էին թողել: Երկու տանկ ենք վերցնում: Հետո եւս երկու տանկ ենք տեսնում: Նրանք քարտեզի օգնությամբ ուզում էին փախչել: Երբ անտառով պետք է իջնեին, Մարտակերտից մեր գյուղ տանող ավտոճանապարհի վրա խփել էին: Մի տանկի ուղղորդիչն է ծռվում: Հաճարի մեծ ծառեր կային, նրանց արանքում տանկը լռվում է, չի կարողանում անցնել: Ես այդ տանկերը ուղեկցում եմ ձորը, հետո տանում ենք գյուղ: Յոթանասունչորս հատ տանկ կար: Չորս տանկը վերցնում ենք, ինչպես նաեւ «Գրադ» կայանքը եւ շտապ օգնության մեքենան: Հետո ես այդ հարցը բարձրացնում եմ՝ ինչու նրանք պետք այդ կողմով գային, ինչու էր ջոկատը առանց հրամանի դիրքերը թողել: Կազմակերպչական հարցը լավ մակարդակի վրա չէր: Իսկ Մարտակերտի հրամանատար Վագիֆն ինձանից նեղացել էր, որ Հայկազին բերել էի: Վագիֆը լավ տղա էր, հայրենասեր էր, բայց իր կարողություններից վեր էին զինվորական գործը, ռազմական խնդիրներ լուծելը: Սուրիկը Վագիֆին քանիցս զգուշացրել, նկատողություն է արել ռազմական սխալների համար: Հաթերքի Սուրիկը Գգողլյան Ֆելիքսի կյանքը փրկել է: Զրահամեքենայի մոտ կանգնած են լինում, ադրբեջանցիները խփում են: Սուրիկը Ֆելիքսին ցած է գցում, ինքը ընկնում նրա վրա: Արկը կպչում է «ԲՄՊ»-ին: Այդ խփած զրահամեքենայի կմախքը մինչեւ այսօր կանգնած է:

Բ. - Այն դեպքը հիշո՞ւմ ես, որ Ամարասի Արթուրը ատրճանակը ձեռքին վազել է ադրբեջանցիների տանկի հետեւից...

Ս.Ա. - Մեր գյուղում է եղել: Այն դեպքն է, որ խփել ենք, տանկը սկսել է ծուխ հանել: Արթուրը վազում էր տանկի ուղղությամբ: Ես էլ երկար էի քայլել, շատ էի հոգնել: Ասում եմ. «Ա՛յ տղա, դու մի առողջություն էլ

չունես, ինձնից արագ ես վազում»: Գուցե տանկում վիրավոր լիներ, խփեր: Եվ չարժեր հենց այնպես վազել: Նրա բախտը բերել է, պարզապես ադրբեջանցիները խուճապահար փախչում էին:

Բ. - Դրանք թալանչիների տանկեր էին, չէ՞:

Ս.Ա. - Տանկի վրա լիքը ապրանք էր բարձած: Միայն տասներկու փամփշտակալ զրահաջարդ-հրկիզող փամփուշտներ վերցրի, որովհետեւ մնացածը թալան էր:

Բ. - Այդպես ո՞ւր էին գնում:

Ս.Ա. - Քարտեզի օգնությամբ էին փորձում դուրս գալ: Թալանչիներ էին: Ասեմ նաեւ, որ այդ տանկի վարորդները ռուսներ էին:

Սուրիկն ուզում էր տասնութ տարեկանների համար Գետավանում զորանոց սարքել: Այդ հարցը կազմակերպեցինք: Որոշեցինք, որ պետք է գնամ Երեւան, այդ երեխաների համար դեղահաբեր ստանամ:

Բ. - Դա առաջի՞ն զորակոչն էր:

Ս.Ա. - Այո՛, առաջինն էր: Պայմանավորվել էի Դրմբոնի զինկոմիսարիատի հետ: Եկա Երեւան հագուստ ստանալու: Ես զինամթերքի խնդիր չեմ ունեցել, պաշտպանության նախարարությունից էի ստանում: Ինձ ասացին. «Ձեր գյուղը թուրքերը վերցրել են»: Երեխեքս գյուղում, հերս, մերս գյուղում, ո՞նց են գյուղը վերցրել: Սուրիկն էր այնտեղ, իմ եւ Սուրիկի «ԲՄՊ»-ներն էին, եւ մի տանկ կար: Չեմ պատկերացնում, թե ինչպես են վերցրել: Զրամբարը դեռ մեր ձեռքում էր: Մի ճանապարհ կար, որ ականապատել էինք: Գալիս եմ տուն, կինս պառկած, շտապ օգնություն է եկել: Ասում եմ՝ ի՞նչ է պատահել, թե՝ աղջիկս, աղջիկս... «ՈՒԱԶ»-ը քշում եմ մեր գյուղ: Գալիս եմ Ստեփանակերտ, տուն չեմ մտնում, տեսնեմ՝ ինչպես են հերս, մերս, երեխաներս: Իմ ջոկատի տղերքը երեխաներին «ԿԱՄԱԶ»-ով բերել էին թիկունք, իսկ ծնողներս ոտքով էին եկել: Հասնում եմ գյուղ, տեսնեմ՝ կոլխոզի նախագահը, որը նույնպես իմ ջոկատից էր, անասունները քշած տանում է:

- Արա՛, էս ո՞ւր եք գնում,- հարցնում եմ ես:

- Էս ի՞նչ եղավ, Լեւոնը ծախեց...

- Ի՞նչ է պատահել:

- Քելբաջարից գործկոմի նախագահը, մյուսները եկել են, ասել, որ Հաթերքը վերցրել են, ուղիղ խփում են գյուղի վրա, մարդկանց գյուղից հանեն:

- Ո՞վ կա գյուղում:

- Սուրիկն է իր տղաների հետ, ուրիշ ոչ ոք:

- Լսի՛ր, Վալերի՛կ, ա՛յ հիմար,- ասում եմ ես,- Քելբաջարն էլ ենք վերցնելու, Աղդամն էլ: Ի՞նչ ես ստից խոսում, թե՝ հանձնում ենք, գնում ենք...

Վալերիկը, որ իմ դասարանցին էր, հետագայում խոստովանում է,

որ անցել է մեքենայի հետեւը եւ ասել. «Պա՛հ, մեր Սերժիկը խելքը թռցրել է, գժվել է»: Ասում եմ, որ անասուններին քշեն, իսկ զինվորներին ետ եմ տալիս, ասում եմ. «Լսի՛ր, զենքը ձեռքիդ գնում ե՞ս»: «ՈՒԱԶ»-ը քշում եմ գյուղ, տեսնում՝ Սուրիկն է մի քանի տղաների հետ: Ես յոթ տղաների հետ էի: Ասում եմ.

- Սուրի՛կ, էս ի՞նչ բան է:

- Գետավանը արդեն թուրքերի ձեռքին է:

Այդ ժամանակ Օհանյան Սեյրանին ուղարկում են մեր գյուղ: Նա զինվորական գրագիտություն ուներ: Այն օրհասական վիճակն էր՝ ադրբեջանցիները հանկարծ Գետավանից առաջ չանցնեն: Իմ ջոկատի տղաներով գնացինք Հարությունագոմեր գյուղի տակ: Մեր զրահամեքենան էինք տարել ու տանկը: Փոքր Վեդիից մի ջոկատ էլ կար, տասնվեց հոգի էին: Խալաստոյ Ագոն էլ էր: Ստեփանակերտից Օգանովսկի Սամոն՝ Կարապետյան Սամվելը, եկավ իր ջոկատով: Ագոյի եւ Սամվելի միջեւ խնդիր առաջացավ: Սամվելը թե՝ ինչո՞ւ եք հողերը թողնում..., Ագոն էլ՝ ո՞վ է թողնում... Ես նրանց հաշտեցրի: Ղարաբաղցիների շրջանում ես հեղինակություն ունեի: Նրանք հավատում, վըստահում էին ինձ, եւ ես կարողանում էի նրանց հաշտեցնել: Զբաղված էինք այդ վիճաբանությամբ, մեկ էլ տեսնենք՝ երեք տանկ, մեկ «Շիլկա» եւ մեկ զրահամեքենա գալիս են դեպի գյուղ: Բոլորի վարորդները ռուսներ էին, ադրբեջանցի չկար: Քարտեզը ձեռքներն էին տվել, խմեցրել: Գետավանից էին գալիս: «ԿԱՄԱԶ»-ի վարորդը հասցրեց մեքենան փախցնել, որ չխփեն: «ԲՄՊ»-ն էլ հասցրեց փախչել: Խաչմերուկի մոտ փողը դրեց Ագոյենց «ԿԱՄԱԶ»-ի վրա, խփեց, ցրիվ տվեց: Այդ ջոկատի տղաները եկան անտառ, որ գնան գյուղ: Մայրս գյուղում էր: Մեքենատրակտորային կայան կար, ու այդ հարթ տեղում կանգնած էինք ես, Օհանյան Սեյրանը, Կարապետյան Սամվելը, բուժքույր Աղավնին: Օհանյան Սեյրանի ստամոքսն ուժեղ ցավում էր: Օգանովսկուն ասացի՝ ի՞նչ ունես: Նռնականետով հիսուն մետրի վրա խփեց, ոչ մեկը չկպավ: Մենք հարթ տեղում էինք կանգնած: Եթե շուռ գային, մեզ խփեին, մեզանից միայն փոշի կմնար: Թաքնվելու տեղ էլ չկար:

Բ. - Ո՞վ էր խփողը:

Ս.Ա. - Ստեփանակերտցի էր: Նրանք գնացին: Սեյրանին ասում եմ. «Սեյրա՛ն, մերս տանն է, նրանք գնացին, ո՞նց կլինի»: Նայում եմ՝ մեր տուն տանող ճանապարհով են գնում: Փառք աստծո, գյուղ չհասան: Ասֆալտի գործարանի կողքով ճանապարհ էինք սարքել դեպի Վերին Հոռաթաղ: Ադրբեջանցիների կողմից կռվող ռուս կապիտանը գալիս է, գյուղի տակ՝ ընկույզի ծառերի մոտ, որտեղ փոքրիկ աղբյուր էլ կար, կանգնում է ու քարտեզը նայում: Քարտեզի վրա ներքեւի նոր կառուցած ճանապարհը չկար: Վերին Հոռաթաղի ջոկատի տղաներից մեկը՝

Վալենտինը, ծառի ետեւից ավտոմատով խփում է այդ կապիտանին: Էս ռուսները հայհոյելով ամբողջ տեխնիկան շրջում, ետ են գալիս: Մենք այնտեղ կանգնած էինք, երբ կես ժամ հետո նրանք ետ դարձան: Ասացի. «Ա՜խ, էս ինչ լավ եղավ»:

Գնում ենք Վերին Հոռաթաղ: Վլադիկենք, մյուսները, հավաքվում են, տեսնենք՝ ինչ ենք անելու: Որոշում ենք, որ մի մասը պետք է գնա Կոճողոտ, մի մասը՝ Չլդրան: Ես գնում եմ մեր գյուղը: Ջոկատի տղաներից մեկը, որ մեքենայով էր եղել, մորս տարել էր Ստեփանակերտ: Գնում ենք Չլդրան: Շտաբը տեղափոխվում է այնտեղ: Ասում էին, որ գյուղը չենք կարողանալու պահել: Ես իմ տղերքին վերցնում եմ, գնում գյուղ: Այնտեղ Սուրիկն էր: Օգոստոսի մեկն էր: Հայկազենք եկան, թե՝ Դրմբոնը թողնում ենք: Այդպես էր շտաբի որոշումը, որ պիտի գնանք Չլդրան, այնտեղ դիրքավորվենք: Ղազարահողերից դեպի Չլդրան տարածությունը հեշտ էր պահել: Ռազմավարական տեսակետից ճիշտ էր Դրմբոնը թողնելը: Մեր գյուղին հարյուր տեղից խփում էին՝ Ումուտլուից, Հաթերքից, Զագլիկից: Տղերքը ասում էին. «Ապրանքը տանենք, տանը ի՞նչ ունես»: Ասացի. «Եթե մի բան տարաք տնից, բոլորիդ կխփեմ»: Թողնում են, գնում Չլդրան: Ես չեմ գնում: Առավոտյան ժամը հինգին ասում են՝ ի՞նչ ես անում: Ես չէի պատկերացնում՝ ինչպես պետք է գյուղը հանձնենք, ադրբեջանցիները մտնեն: Գյուղի հրամանատարի համար ամոթ է գյուղը հանձնելը: Գնում եմ Չլդրան: Զրահամեքենան վերանորոգման կարիք ուներ: Բաբկենի հետ «ԲՄՊ»-ով գնում ենք Ստեփանակերտ: Ծնողներիս եմ տեսնում, իմանում, որ երեխաներիս ուղարկել են Երեւան: Ետ եմ դառնում Չլդրան: Չլդրանում դիրքեր էինք պահում: Դիրքերը ձգվում էին լեռնաշղթայով՝ Պողոսագոմերից մինչեւ Մեհմանա: Երեք օր անցել էր, բայց դեռ ադրբեջանցիները գյուղ չէին մտել: Ես ամեն օր վերեւից նայում էի: Չորրորդ օրը մեր գյուղը թուրք է մտել: Սեպտեմբերի մեկին ես Պետրոսյան Ալիկի հետ Գանձասարում էի: Ռացիայով «Քառասունչորսն» էր խոսում՝ Սամվել Բաբայանը, թե՝ Սերժի՛կ, շուտ գնա ձեր գյուղը, տղերքը մտել են: Գնում եմ Երեւան, «ԿԱՄԱԶ» վերցնում, Չլդրանի Հայկազի հետ ճանապարհվում դեպի մեր գյուղ: Հայկազը «ԿԱՄԱԶ»-ի պրոֆեսիոնալ վարորդ էր: Ոչ մեկին հետս չեմ վերցնում, անում եմ. «Դուք մնացեք դիրքերում»: Ասել էին, որ գյուղում հարյուր քսան հոգի մարդ կար: Մեկ օր առաջ Գրադի Ժորան Չլդրանից խփում էր մեր գյուղի վրա, ես էլ ուղղորդում էի: Խփեց, ասացի. «Ժորա՛, հիսուն մետր ձախ խփիր»: «Ի՞նչ է, վախենում ես ձեր տանը կպնի՞»,- ասաց հրետանավորը,- թուրքերը ձեր տունը շտաբ են դարձրել, պետք է խփեմ»: Երկու արկ խփում է մեր տան վրա:

Բ. - Նա իր տան վրա էլ է խփել:

Ս.Ա. - Ասաց. «Որ մեր հարյուր քսան արկղ մեղվի ճանճը չկա, թող ձեր տունն էլ չլինի»: Նրա համար ճանճերը տնից թանկ էին: Ես չգիտեի, որ պետք է գյուղ մտնենք: Մեր գյուղը մտնելու համար Կոճողոտն ու Մեհմանան էլ պետք է վերցնեինք: Սամվել Բաբայանն ասաց, որ Կարապետյան Սամվելը պետք է Մեհմանան վերցնի, Խալաստոյի տղերքը պետք է Կոճողոտը վերցնեն: Գիշերվա ժամը տասներկուսին գյուղ մտանք: Մյուս ալիքով կապվեց, ասաց. «Քեզ լսո՞ւմ են»: Ասացի՝ չէ: Թե՝ դե հեռու գնա, բան եմ խոսելու: Ժամը մեկն անց էր: Շատ մարդ կար, մի քիչ հեռացա: Ասաց. «Կոճողոտից մեքենաներ են իջնում: Առայժմ ոչ մեկին չասես, մինչեւ որոշենք, թե ինչ ենք անում»: Փաստորեն, ոչ Կոճողոտն են վերցրել, ոչ Մեհմանան: Ասաց, որ դիրքավորվենք: Ֆերմայի վերեւի ավտոճանապարհից սկսում են մեզ «Գրադ» կայանքով խփել: Ստեփանակերտցի մի տղա ասում է. «Արա՛, հո դու պրավադնիկ չես, ա՛յ ջահել»: Ինձնից մոտ քսան տարի փոքր էր: Ասում եմ՝ ինչո՞ւ: Ասաց. «Խփում են, ինչո՞ւ ես մեզ տանում: Էդ ո՞նց է՝ դու չես վախենում»: Առավոտյան հինգ կողմից խփում էին մեզ վրա: Հրաման է գալիս, որ գյուղը թողնենք, դուրս գանք: Մի տանկով եւ մի զրահամեքենայով մի կերպ դուրս ենք գալիս: Այդ պահին մեքենաներ են իջնում, բայց ես Սամվել Բաբայանին ասել էի, որ մեքենայով իջնում ենք: Մեր գյուղի կողմը «ԶԻԼ» է գալիս: Հենց մեր տան մոտ մի հարյուր հոգի կրակում են այդ «ԶԻԼ»-ի վրա, որի մեջ յոթ հոգի կային: Հինգ հոգի թափքի մեջ էին, երկու հոգի՝ մեքենայի կաբինում: Մեքենան կահույք էր բարձած. Կոճողոտից բերած թալան էր: Ճանապարհին մի սրիկա, վիրավոր ադրբեջանցու են հանդիպում: Տղաներին թվում է՝ նա մահացած է: Վիրավորը նռնակը քաշում է: Տղաներից մեկի աչքը շատ ծանր վիրավորվում է: Նրան անմիջապես ուղարկում ենք: Տանում եմ, տղաներին դիրքավորում: Առավոտյան ասում են, որ դուրս գանք: Դուրս ենք գալիս: Մտնում եմ մեր տուն, որ տեսնեմ ինչ վիճակում է: Մորս գրադարանում մոտ երկու հազար կտոր գիրք կար: Մայրս դպրոցի տնօրեն է եղել: Գրքերը թափթփել էին տնով մեկ, դարակները տարել: Տանը դուռ, լուսամուտ չկար: Եկանք Չլդրան: Չլդրանն էլ հանձնեցինք: Չլդրանում Հովսեփյան Հովսեփն էր: Գյուղը ահագին պահել ենք՝ մինչեւ հոկտեմբերի կեսը:

Բ. - «Մահապարտները» ինչպե՞ս են եկել:

Ս.Ա. - Ինձ կանչում են Երեւան: Գնում եմ: Ասում են, որ «մահապարտներ» են հավաքում: Ժողովում ես էի, Հովսեփյան Հովսեփը, Պետրոսյան Ալիկը, Սուրիկը... յոթ հոգի էինք: Ընտրում էինք «մահապարտներին», զինում նրանց: Տեր Վահանի տղաներից մեկն էլ եկավ. այն տղաները, որ Սուրիկից զենք էին ստացել, փախել: Այդ տղային ճանաչեցինք, բայց փախավ, չկարողացանք բռնել: Այդ տղաներին

նուկ էինք հյուրասիրել: Նրանց հետ մի աղջիկ էլ կար, բուժքույր էր: Զենքերը ստացան: Ավտոբուսով տարանք, դիրքավորեցինք: Նրանց դիտորդական դիրք տվեցինք, որ ռացիայով կապվեն եւ տեղյակ պահեն: Իրավիճակը շատ վատ էր: Երեկոյան գալիս ենք, տեսնում՝ այդ տղաները չկան: Տասնվեց-տասնութ հոգի մարդ էին: Զենքերը վերցրել են, ավտոբուսով փախել: Ես էլ եմ ջղայնանում, Սուրիկն էլ: Հինգ օր մնացի Երեւանում: Ասես կրակի վրա լինեի: Ասացի. «Դուք հավաքեք, ես գնամ»: Հավաքագրել էինք ցուցակներով՝ մոտ հարյուր ութսուն հոգի մարդ: Տասն օր հետո երեք հարյուր վաթսուն հոգով գալիս են: Վազգեն Սարգսյանն էլ նրանց հետ եկավ: Նրա գալը մեծ նշանակություն ունեցավ: Եթե մենք Գանձասարը տայինք, վտանգի տակ կդնեինք Վաղուհասը, Վերին Հոռաթաղը, Հարությունագոմերը: Ահագին զոհեր տվեցինք: Լավ մասնագետներ ունեինք: Բայց զոհվեց Սամվել Շահմուրադյանը: Նրան ընդգրկել էին հետախուզական խմբում: Վազգեն Սարգսյանը երեք օր մնաց: Մենք Կարմիր քար կոչվող տարածքում էինք: Ականանետով խփեցին: Վազգեն Սարգսյանին ասացի.

- Վազգեն, անցիր այն կողմ:

- Ի՞նչ է, վախենո՞ւմ ես:

- Դե, կանգնես՝ արկը գա խփի՞, իմաստ չկա:

Ճակատը ցույց տվեց, թե.

- Այստեղ ի՞նչ է գրված:

- Չգիտեմ:

- Այստեղ գրված է, որ ես այս հողում չպիտի զոհվեմ:

- Բա իմ ճակատի՞ն ինչ է գրված:

- Արի, ինձ քիպ կանգնիր:

- Ա՛յ քեզ բան: Զոհվե՞նք, ա՛յ տղա: Գրված է, գրված չի՝ խփում են...

Երեք հատ խփեցին, էլ չխփեցին: Մտքումս ասացի. «Էս ինչ լավ եղավ»: Դե, հո նրան չէի թողնելու, ես գնայի: Այդտեղ կանգնելն ու զոհվելն էլ մի բանի նման չէր:

Հետո ես Արայիկին ասացի. «Արա՛, մի՛ թողեք, որ Սամվել Շահմուրադյանին տանեն կռիվ: Նա մարտերի պատմություններն է գրում»: Նա Գանձասարում ինձ ասաց.

- Դու ինձ չէիր տանում կռվի, բայց Վաղուհասի հրամանատարը ինձ տանում է: Գիտե՞ս, նա ինձ երեք գաղտնիք է սովորեցրել:

- Ի՞նչ է սովորեցրել:

- Ասել է՝ քեզանից բարակ ծառի ետեւում չկանգնես, փամփուշտը քեզ կկպնի:

- Ա՛յ քեզ բան... Է՞լ ինչ է ասել:

- Չեմ ասում:

- Ա՛յ տղա, ասա՝ իմանանք:

- Ասել է՝ փտած ծառի ետեւում չկանգնես, փամփուշտը միջով կանցնի:

Ձղայնացա, երրորդ «գաղտնիքը» չասաց:

Ես Չլդրանում էի, երբ «Մահապարտները» եկան բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ վառելանյութով, զինամթերքով: Թալիշի տղաներից վաթսուն հոգու տվեցին ինձ Չլդրանի ուղղության համար: «Մահապարտների» վերաբերյալ տարբեր կարծիքներ կան, բայց իմ կարծիքով՝ այդ ամենը դրական մեծ ազդեցություն ունեցավ: Այնտեղ էին Պետրոսյան Ալիկը, Ամարասի Արթուրը, Փայտյան Արշալույսը: Տղաներ, որոնք, իրոք, մեծ գործ են արել:

Բ. - Ինչպե՞ս զոհվեց Սամվել Շահմուրադյանը:

Ս.Ա. - Այդ օրը ես Սամվելի հետ խոսում եմ, ասում եմ, որ Սամվել Շահմուրադյանին չտանեն մարտի, եւ գնում եմ Չլդրան: Հաջորդ օրը «ԿԱՄԱԶ»-ով խորհրդակցության եմ գալիս: Հարցնում եմ.

- Բա որտե՞ղ է Սամվելը:

- Տարան Երեւան:

- Ինչո՞ւ:

- Զոհվել է:

- Որտե՞ղ:

- Հետախուզության տղաների հետ իջել էր: Վաղուհասի վերեւում՝ աղբյուրի մոտ, հանդիպել են ադրբեջանցի հետախույզներին: Երկու հոգի նրանց կողմից են սպանվում, մեր տղաներից մի հոգի վիրավորվում է, Սամվելն էլ զոհվում է:

- Սամվելն այն տղա՞ն է, որ հետախուզության տղաների հետ ուղարկեք խորքերը: Նա ինձանից նեղանում էր, որ իրեն ջրամբարի կռիվներին չեմ տարել:

Ձղայնանում եմ, չեմ մնում, որ մասնակցեմ խորհրդակցությանը: Հետ եմ դառնում Չլդրան: Եթե չեմ սխալվում, սեպտեմբերն էր, երբ Չլդրանը հանձնեցինք: Եկանք Կիչան գյուղը, որտեղից չնահանջեցինք, Արջաձորը պահեցինք: Կիչանի գերեզմանների մոտ Չլդրանի տղաների հետ էի: Չլդրանը հանձնելիս կապվեցի Սերժ Սարգսյանի հետ, ասացի՝ չենք կարողանում գյուղը պահել, մարդ է պետք: Չլդրանի դիրքերում Խնուշինակի Արթուրն էր: Ժաննա Գալստյանը «Վիլիս»-ով մեզ հետ էր անտառում: Մեր շտաբն այնտեղ էր: Չլդրանին շատ էին խփում: Մեկ ամիս Ժաննան մեզ հետ այդ անտառում մնաց: Մեզ հետ էր նաեւ Փոքր Հայկազը, որ հետո զոհվեց: Հետո Վիտյան եկավ: Հաջորդ օրը հարյուր ութսուն հոգու ուղարկեցին, բայց արդեն ուշ էր, մենք Կիչանում էինք: Մի մասը ետ գնաց, մի մասը մնաց: Արդեն հոկտեմբերի 27-ն էր: Կիչանի վրա շատ էին խփում, բայց վախենում էին առաջ գալ, որովհետեւ պահում էինք: Կիչանի գերեզմանների մոտ երեք հոգով կոնտուզիա ենք ստացել: Մեքենայով տարան Ցեխի ձորի հոսպիտալ: Ուղարկեցին Երեւան: Երկու շաբաթ բուժվեցի: Պաշտպանության նախարարությունում էի: Պետրոսյան Ալիկը թե՝ ի՞նչ ես անում: Ասացի, որ ուզում եմ հավաքագրել Մարտակերտի գյուղերից բռնագաղթածներին: Ինձ պետք է օրական հինգ լիտր բենզին տան, որ ես իմ մեքենայով շրջեմ, այդ հարցերը լուծեմ: Ինձ հատկացրին Չարբախի հավաքակայանի երրորդ հարկը: Մարտակերտցի տղաներով հավաքվում ենք՝ մոտ յոթ հոգով, եւ Չարենցավանում, Սեւանում, Երեւանում սկսում հավաքագրել բռնագաղթածներին: Գնդապետ Մարդյանին երկու հարկ էին տվել, նա մայրաքաղաքային գունդն էր հավաքում: Սեւանի Սուրիկն էլ էր նրա հետ, բայց հրամանատարը Մարդյանն էր: Ես ինքնունվեց հոգու հավաքել էի: Վազգեն Սարգսյանը եկավ, թե՝ պետք է արագացնենք: Այդ ինքնունվեց հոգու հետ հրամանով գնացինք Արջաձոր գյուղը: Մենք կոչվեցինք «Արծիվ-23» գումարտակ: Ներկայանում ենք Սամվել Բաբայանին: Մենք որպես ջոկատ չէինք գրանցվել: Իմ հավաքագրած ղարաբաղաբնակ մարդիկ հրամանագրվում են Ղարաբաղի բանակում, եւ ոչ զենք-զինամթերքը, ոչ հագուստը ետ չպիտի ուղարկվեին: Մենք գնացինք Արջաձորի դպրոց:

Մեհմանայի օպերացիան իրականացվեց փետրվարի 18-ին: 1993 թվականի փետրվարին Մեհմանա գյուղը ազատագրեցինք ադրբեջանցիներից եւ ահագին ավար վերցրինք՝ երկու «ԲՄՊ», «Տ-74» տանկ, երկու տրակտոր: Առավոտյան մոտ հարյուր քառասուն ազերիների հաշվեցինք: «Արծիվ-23» գումարտակի տղաներով էինք՝ վաթսուն հոգով, իսկ գյուղի ներքեւի՝ հարավային մասից պիտի մտներ Իլիչի գումարտակը: Ես գյուղը, այդ տեղանքը լավ գիտեի, քանի որ մայրս այդտեղից էր, մի տարի այդ գյուղի դպրոցում եմ սովորել: Անտառով այնպես շրջանցեցինք, որ դուրս եկանք թիկունքից՝ թուրքերի ամրության դիրքերից: Այդ ժամանակ չորս թուրք իջնում էին գյուղից ջուր բերելու: Ձյան շերտը շատ բարձր էր՝ մեկ մետրից ավելի: Նրանք հենց մեր դիմացով իջան՝ մեզ չնկատելով: Մենք այդտեղ յոթ հոգով դիրքավորվեցինք: Մյուսները մնացել էին դիրքերում: Նրանց դիրքերում խրամատներ էին փորված, վրաններ էին դրած, տեխնիկա կար: Դա Մեհմանայից Մարտակերտ տանող ճանապարհն էր: Երեք «ՊԿ» գնդացիր էր, երեք ավտոմատ: Նավթալյան Արմենն էր, Արզումանյան Արթուրը՝ առաջին վաշտի հրամանատարը (նրան Արզուման էինք ասում), նա շատ խրոխտ ձայնով ռուսերեն հրամայում էր. «Առաջին վաշտը՝ աջից, երկրորդ վաշտը՝ ձախից...»: Թուրքերը հայտնեցին, թե Մեհմանան գրավեցին ռուսները, բայց այնտեղ ռուս չկար: Այն չորս հոգուն, որ իջան գյուղ, աղբյուրի մոտ Իլիչի տղաները խփեցին: Հետո տղաները բարձրացան մեր դիրքերը:

Դրանից հետո իմ «Արծիվ-23» գումարտակով տեղափոխվեցինք Դրմբոն: Այն ժամանակ դեռ իննսուն հոգի էինք: Դանիելյան Նորիկն արդեն պաշտպանական շրջանի հրամանատարն էր, եկավ Չլդրան:

Բ. - Մինչեւ Նորիկի հրամանատար դառնալը ովքե՞ր էին այդ ուղղության հրամանատարները:

Ս.Ա. - 1992 թվականին մենք այնտեղ էինք, տարբեր փոփոխություններ եղան: 1992-ի ամռանը՝ մինչեւ գյուղը հանձնելը, մեր գյուղում Ստեփանակերտից Օհանյան Սեյրանն էր ներկայացված, այնտեղ Գզողլյան Ֆելիքսն էր, երբ գյուղի վրա հարձակումը թիկունքից եղավ, Ամարասի Արթուրը, Հարությունյան Սուրիկը՝ 1992 թվականի ամռանը: Այդ ուղղությամբ, երբ մենք Չլդրանում էինք, Փոքր Հայկազն էր: Նա պատրաստվում էր ամուսնանալ, բայց հարսանիքից մի ամիս առաջ զոհվեց: Նորիկը վիրավորվեց, նրան տեղափոխեցինք հիվանդանոց: Գալստյան Ժաննան էլ էր մեզ հետ՝ մինչեւ Չլդրանը հանձնելը: Մեր կողմից մեծ սխալ եմ համարում. Չլդրանը մենք չպիտի հանձնեինք: Գնացինք Կիչան մեր դիրքերը պահելու, այնտեղ դրությունը ավելի լավ էր, քան Չլդրանում: Այդ ժամանակներից Քսանվեցի Յուրայի հետ կապված մի դրվագ պատմեմ: Նա զոհվեց Վագիֆի քարհանքում մեզ փոխարինելուց հետո: Չլդրանում դրությունը շատ վատ էր: Մենք անտառում էինք: Թուրքերը ուզում էին մեծ տեխնիկայով մտնել, Կիչանի վերեւում անտառով կարճ ճանապարհ կար: Ստեփանակերտի չորրորդ վաշտի տղաներից քսան հոգի եկան մեզ օգնության: Ես նրանց ուղեկցում էի, քանի որ Չլդրանի անտառներին անծանոթ էին: Մեզ հետ էր Քսանվեցի Յուրան, երկու բուժքույրեր, որոնցից մեկը Աղավնին էր: Մոտ քսանհինգ հոգով գնացինք հետախուզության՝ տեսնելու, թե թուրքերը որտեղից կարող են մտնել: Չլդրանից վերեւ գտնվող դաշտով տեխնիկա էր մտնում: Անտառում հաճարենու՝ իրար կպած երկու ծառ կար: Յուրան, մոտ քսան րոպե չարչարվելով, հազիվ բարձրացավ ծառը, որպեսզի նայի: Եթե ուղիղ կապ չէր լինում հրետանու հետ (Գրադի Ժորան Խաչենի ձորակում էր), այդ ժամանակ մենք կապի մեքենայի միջոցով էինք հաղորդում կոորդինատները: Մեր շտաբը անտառում էր, կապի մեքենան այնտեղ էր: Կապի վրա «նստած» էր Բաղմանյան Հայկազը, նա շտաբի պետն էր: Յուրան ծառի վրայից տեսավ, որ երկու տանկ են գալիս: Կապվեց Հայկազի հետ, որ Ժորային հաղորդի՝ խփել Չլդրանից վերեւ՝ այսինչ տեղին: Մեկ արկ խփելուց հետո պիտի նրան ուղղորդեինք: Յուրան Հայկազին ասաց. «Թող հիսուն մետր կարճ խփի»: Հայկազն էլ ասաց. «Յուրա՛, ասելու եմ՝ հարյուր քեզ է կպնելու, հենց այս ծառի վրա է»: Կարծեցինք, թե կատակ է անում: Հայկազը որ հաղորդում էր, մենք լսում էինք: Ասաց. «Հարյուր մետր կարճ»: Յուրան ռացիայով գոռում էր: «Գրադի» արկը ծառի ճյուղերին դիպչելով անցավ: Եթե մի մետր ներքեւ լիներ, հաստ ճյուղը կպոկեր: Յուրան հինգ վայրկյանում, ո՞նց է արջը ծառից իջնում, իջավ, ասաց. «Հայկա՞զ, եկա այդտեղ, գլխատելու եմ քեզ»: Երբ հայտնեցինք ճիշտ ուղղությունը, ու խփեցին, թուրքերը նահանջեցին: Ընդամենը հինգ արկ խփեց: Երբ վերադարձանք, Հայկազը չկար: Յուրային համոզում, հանգստացնում էի, ասում էր. «Չէ՛, ես դրան պիտի պատժեմ»: Բայց Հայկազը չկար, ասացին՝ դիրքեր է գնացել: Մի ամբողջ օր չերեւաց:

Մեհմանան ազատագրելուց հետո տեղափոխվեցինք Դրմբոն: Գյուղի ազատագրման համար առանձնապես մարտեր չեն եղել: Երբ մենք հանձնել էինք գյուղը, ազերիները չորս օր հետո են գյուղ մտել: Մեր գյուղը ճանապարհի վրա էր, խաչմերուկ էր կոչվում: Երբ ես տեղափոխվեցի, Դանիելյան Նորիկն ասաց, որ դեռ շուտ է Դրմբոն գնալու համար, որովհետեւ դիմացը լրիվ թուրքեր են: Դեռ հաթերքը չէինք ազատագրել: Ասացի, որ այնտեղ դիրքերի համար հարմար է, այնտեղից Մարտակերտի ուղղությամբ պիտի շարժվենք, իսկ մյուս ուղղությունը պետք է լինի դեպի վերեւ: Տեղափոխվեցինք: Դրանից հետո հանձնարարություն եղավ՝ Սարսանգի ՀԷԿ-ի ուղղությամբ աշխատել: Փետրվարին էր: Ահավոր օրերից մեկը: Պիտի ազատագրեինք Սարսանգի ՀԷԿ-ը: Այն տեւեց համարյա տասներկու օր: Մի անգամ վերցրինք, զոհեր տվեցինք ու նահանջեցինք: Երկու օր հետո նորից գրոհեցինք: Երկու շաբաթից շտաբը Չլդրանից տեղափոխվեց Դրմբոն: Երեւանից եկավ Հատուկ գունդը՝ Մարդյանի հրամանատարությամբ: Մեհմանի Սուրիկը նրանց շտաբի պետն էր: Մենք շատ մտերիմ էինք, քանի որ մեկուկես տարի միասին պատերազմի օրեր էինք անցել: Այնտեղ էր նաեւ Ջերմուկի Համոն: Սամվել Կարապետյանն ու Վագիֆը գրոհվեցին. մեր դրած ականը պայթեց Հակոբ Կամարիից Մատաղիս տանող ճանապարհի վրա: Ջերմուկի Համոն շատ լավ կռվող էր, նա գումարտակի հրամանատար էր: Երբ նա վիրավորվեց ջրամբարի դիրքերում, ես նրան զոռով ուղարկեցի հոսպիտալ, իսկ նրա տղաներին տիրապետեցի: Փետրվարի 24-ին հարձակում եղավ, իսկ 27-ին ջրամբարը համարյա ազատագրված էր: Հարձակումը եղավ Ալաշանի կողմից: «Եղնիկները» մեզ օգնեցին Շահումյանի կողմից՝ գետի ձախ ափից: Նրանք այդ ճանապարհի վրա շատ դիվերսիաներ են կատարել, ճանապարհը հսկում էին: Զինվորական մեքենաները, ավտոբուսները ճանապարհի կողքին խփված ընկած էին: Մոտ երկու տարի այդ մեքենաները այդպես մնացել էին: Փետրվարի 28-ին իրական վտանգ եղավ, թուրքերը Մեծ Շենի կողմից մեծաթիվ տեխնիկայով հարձակվեցին: Մեր ուժերը քիչ էին, եւ պետք է նահանջեինք: Բայց, ելնելով մեր ռազմաճակատի ռելիեֆից, որոշեցինք այնպիսի դիրքեր դնել, որ կարողա-

նանք պահել ազերիների հարձակումը: Մենք հակատանկային միջոցներ չունեինք, բայց նրանք տանկերով իջնում էին ամբարտակի պատնեշի վրա: Մենք չէինք պատկերացնում: Դա նույնպես մեր սխալն էր: Համենայն դեպս, չկարողացանք այդ տեխնիկայի առաջխաղացումը կասեցնել: Նրանց հետեւակը սկսեց անտառով դեպի մեր դիրքերը բարձրանալ: Պետրոսյան Ալիկը տասներկու հոգուց բաղկացած մի ջոկատ էր տվել՝ Սարգսյան Հրաչի հրամանատարությամբ: Սարգսյան Հրաչն իր մի քանի տղաների հետ իջավ լճի ափ, թեկուզ ես նրանց չէի թողել, որ իջնեն այնտեղ: Ինչքան կարողացանք՝ թուրքերի առաջխաղացումը կասեցրինք: Վիրավորներ ու զոհեր տվեցինք: Որ տեսանք տարածքը մեծ է, ու թշնամու քանակը՝ շատ, նահանջեցինք դեպի ձորը ու ձորով բարձրացանք: Ես էի, Նավթալյան Արմենը, Հայկազը: Դեպի Ալաշան էինք նահանջում: Չէինք կարողանում տղաներին հավաքել: Մաղավուզ գյուղից մի ուսուցիչ՝ Սլավիկի եղբայրը, որն Ազգային ժողովի պատգամավոր էր, ջրամբարից մի քիչ վերեւ գտնվող դիրքի վրա տեսել է, որ Սեւանի Չոլը՝ Մանուկյան Գագիկը, տղաների հետ իջնում է: Հանդիպում են Հատուկ գնդի Ոսկանի գումարտակի տղաներից յոթ հոգու: Ասում է. «Տղանե՛ր, ես Սեւանի Չոլն եմ»: Չեն հավատացել, թե՝ դու հայերեն խոսող թուրք ես: Տղաները, երեք օր անտառն ընկած, չգիտեին: Ես որ նրանց կանչեցի, զգացի որ ինչ-որ բան էին ծխել, գիտակցությունները տեղը չէին: Սրանք գոռում են. «Չկրակե՛ք, նա մեր տղան է՝ Չոլն է»: Բայց չեն լսում, յոթ հոգով էլ կրակում են Չոլի վրա: Նա էլ բարակ զրահաբաճկոն էր հագել, այդտեղ մահանում է: Երբ ինձ կանչեցին, շտապ գնացի: Հարցրի՝ ու՞մ տղաներն եք, թե՝ Ոսկանի: Ասացի. «Դուք հիմա իմ տանն եք մնում»: Մեկը բաքվեցի էր, մեկը Արարատից էր... յոթ հոգի էին: Ասացի. «Բա խի՞ Չոլին խփեցիք...Ես ձեզ մի շանս եմ տալիս. եթե Չոլի դիակը հանեք, կազատվեք պատասխանատվությունից՝ իբր չեք իմացել»: Նրանք իջնում են, բայց դիակը չեն հանում: 27-ից հետո, երբ մենք նորից եկանք, թուրքերին կարողացանք ջրամբարից քշել: Չոլի, Սարգսյան Հրաչի, Մանուկյան Դավիթի, Մելիքյան Մարտիրոսի դիակները հանեցինք: Բոլորին էլ այդ յոթ հոգին էին խփել: Նրանց ուղղաթիռով տեղափոխեցի: «Էրեբունի» օդանավակայանում Վազգեն Սարգսյանը մեզ դիմավորեց: Նա առաջին անգամ այդտեղ լաց եղավ: Ինձ համար էլ շատ ծանր էր, քանի որ բոլորի ընտանիքների հետ պիտի հանդիպեի: Դավիթի ծնողները Չափարից էին: Դավիթը տասնութ տարեկան էր, Պրոֆեսոր էինք ասում: Նրան չէի ուզում կռվի տանել, քանի որ տասնութը դեռ չէր էլ լրացել: Հայրը ասաց. «Դու չտանես՝ ուրիշի հետ կգնա»: Դիմեց «Արցախ» կոմիտեին: Երեք օրից վերադարձա: Ալաշանի ճաշարանում հանդիպեցի այդ յոթ տղաներից չորսին: Նրանց զինաթափեցի, իմ «ՈՒԱԶ»-ով բերեցի գյուղ

ու տվեցի Մարդյանի տղաներին: Այնտեղ բաքվեցի կռվող աղջիկ կար, բանաստեղծություններ էր գրում: Այդ չորսից մեկն էլ էր բաքվեցի, նրան հարցրեց.

- Դու էլ ե՞ս կրակել Չոլի վրա:

- Բոլորս էլ կրակել ենք:

Այդ աղջիկը գնդակահարեց նրան հենց մեր տան դիմացի ճանապարհին: Այդ տղաների ճակատագիրը չգիտեմ ինչ եղավ:

Պուշկին յալում էինք: Դաշտային շտաբում էին Հայկազը, Նորիկը, Մոնթեն: Բայց Մոնթեն չէր մնում տեղում: Նա պաշտպանական շրջանի միակ հրամանատարն էր, որ զինվորի հետ խրամատներն էր գնում: Ես դիրքավորվել էի Փափրավանդի ուղղությամբ: Երրորդ օրը մեզ պիտի փոխարինեին: Ազերիների գրոհայինները գրավում են, նույն օրը ավտոբուսներով երիտասարդների են բերում դիրքը պահելու: Ասացին, որ Մոնթեն է գալիս փոխարինելու: Պուշկին յալի «Գլոբուսի» մոտ Մոնթեին դիմավորեցի: Հարցրեց. «Սե՛րժ, հոս ո՞րն է գարեւոր զենքը»: Ասացի՝ սակրավորային բահերը: Ասաց՝ ապրե՞ս: Բաց տեղ էր: Փափրավանդի, Միրբաշիրի կողմից, հեռուստաաշտարակից թուրքերը խփում էին: Մեր խրամատները պաշտպանական խրամատներ չէին, թուրքի դեմ չէին գործում: Մոնթեն կարգադրեց այնպես սարքել, որ մարդիկ կարողանան մեջը քայլել, ոչ թե բարձրանան՝ խփվեն: Երկուերեք օրից մենք նրանց փոխարինեցինք: Մեզ հետ Հատուկ գնդի տղաները եկան: Զախ թեւի վրա ինձ տասնվեց հոգու տվեցին՝ Մարդյանի հրամանատարությամբ: Մարտի կեսերին էր, երեկոյան գալիս էի մեր դիրքերը, որպեսզի բենզին ուղարկեմ տանկերի համար: Այդ պահին մի արկ պայթեց, եւ տեսա, որ մարդու մարմին բարձրացավ: Եկա հարցրի, թե ով է զոհվել, ասացին՝ Զուբը: Պարզվեց, որ նա այն յոթ տղաներից վերջինն էր: Զայրացա, թե ինչու ինձ չէին ասում, որ այդ տղան այստեղ է, չէ՞ որ նա կարող էր ինձ թիկունքից խփել, որովհետեւ ես նրանց ասել էի՝ դուք չպետք է այլեւս Ղարաբաղում լինեք: Առավոտյան փնտրեցինք: Այդ տղայից սապոգի կտոր էր մնացել, նույնիսկ զենքից բան չգտանք: Դա բացառիկ երեւույթ էր: Պուշկին յալում մեզ փոխարինեցին Ստեփանակերտի տղաները: Դրանից հետո Պուշկին յալը հանձնեցինք, եւ հնարավոր էլ չէր պահել: Սամվել Բաբայանին ասացի. «Եթե մարտակերտցիներս հանձնեինք Պուշկին յալը, չգիտեմ՝ մեզ ինչ կանեիք»: Ասաց. «Հանձնել ենք, հետո ետ կվերցնենք»: Հանձնելը ո՞րն է: Թողել էին, որովհետեւ զոհեր շատ էին տալիս:

Մարտի կեսերին պիտի ազատագրեինք Գյուլաթաղ գյուղը: Կուսապատ չհասած՝ մեքենայից իջանք: Անտառի միջով ճանապարհ կար, ոտքով գնում էինք այդ ճանապարհով: Շատ դժվար էր: Նրանք շատ էին ուզում գյուղը պահել, գիտեին, որ Դանիելյան Նորիկի՝ հրամանա-

տարի գյուղն է: Ավերել էին գյուղը: Առաջին օրը չկարողացանք, երկրորդ օրը վերցրինք: Իլիչի տղաներից Ճուտո կար, տասնվեց տարեկան կլիներ, բայց շատ լավ կռվող էր: Նա մի հսկայամարմին ռուսի հետ թեւ թեւի ընկած, խմած գալիս էր: Ճուտոն ասաց, որ նա հայերեն չի հասկանում: Հայկազն ասաց. «Ա՛յ տղա, ի՞նչ ես անում այստեղ»: Ասացինք ռուսին, որ այս մարդը Ալիեւի մարդն է, իբր թուրք ՕՄՕՆ-ական է, Ցոլդաշ Մամեդով էինք ասում, որ նա չիմանա՝ հայ ենք: Ռուսը սկսեց թուրքերին հայհոյել. «Թողեցին գնացին, սրանք ի՞նչ կռվող են, ինձ էլ բերել են այստեղ...»: Աֆղանստանում կռված տղա էր, Սիբիրից էր, չգիտենք, թե ոնց են վարձել, ինչու է եկել: Ասում էր. «Ինձ Բաքվից են բերել: Ալիեւին ասա, որ վատ են կռվում»: Դպրոցի շենքում Ճուտոն նրան բռնել էր: Մի երեք լիտրանոց բանկա լիքը օղի թե որտեղից է ճարում, նրան խմեցնում է, ինքն էլ հետն է խմում: Ասում է. «Տղե՛րք, վրաս հալ չկա, ես էլ եմ խմած, սա էլ չի կարողանում քայլել»: Ճուտոն փոքրմոքր էր, նա էլ՝ մոտ հարյուր կիլո: Խոսում էինք, ասում էր. «Ընկե՛ր Մամեդով, Ալիեւին ասա, որ այդպես չի լինի...»: Նա դժգոհ էր թուրքերից: Հետո ասում էր, որ դպրոցի դիրքից երեք հայի է սպանել: Ասացի, որ մենք հայ ենք: Չէր հավատում: Ցույց տվեցինք մեր պարանոցի խաչերը: Խմածությունն անցավ: Ապշել էր, ասաց. «Դե տղանե՛ր, ի՞նչ ասեմ, փող տվեք, ձեր կողմից կկռվեմ»: Նրան տարանք Ստեփանակերտ, հանձնեցինք:

«Արցախ» կոմիտեից ինձ մի զինվոր տվեցին՝ Վլադիմիր Միխայլով, նրա հետ եւս մի տղա՝ Բայբել Վիկտոր Վիկտորովիչ: Բայբելը գերմանացի էր, բայց գերմաներեն ոչ մի բառ չգիտեր: Ծնվել էր Ղազախստանում: Մայրն ու հայրը գերմանացի էին: Խորհրդային բանակում ծառայել էր հայերի հետ, թուրքերի հետ պրոբլեմներ էր ունեցել, հայերը նրան պաշտպանել էին, եւ եկել էր թուրքերի դեմ կռվելու: Հատուկ ծրագրերի պետվարչությունում նրան ինձ տվեցին: Նրա հետ խոսելիս իմացա, որ գնդացրորդ է եղել: Ստուգեցի, տեսա, որ զենքերին շատ լավ տիրապետում է: Վլադիմիրը նույնպես բոլոր տիպի զենքերին շատ լավ տիրապետում էր: Նա Աֆղանստանում էր կռվել, մի ոտքից կաղում էր: Ճանապարհին հարցրի, թե ինչու է եկել: Պատմեց, որ Ստեփանակերտից թուրքեր են տեղափոխվել իրենց մոտ (նա կարծում էր, թե Ստեփանակերտը թուրքի քաղաք է): Ինչ-որ թուրք պաշտոնյա կար այնտեղ, Վոլգոգրադին կպած, ասել էր. «Ով թուրք փախստականներին տեղավորի, պետությունը նրանց փող կտա»: Իրենց տանը ինքն ու տասնհինգ տարեկան քույրն են ապրել: Նրանք համաձայնվել են, որ իրենց տանը թուրքեր ապրեն, ինչի համար իրենք փող կստանան: Հինգ թուրք են եղել. երկու զույգը ամուսիններ էին, իսկ հինգերորդը նրանցից մեկի եղբայրն էր: Մի շաբաթ մնացել են այդ տանը: Վլադիմիրը գիշերային հերթափոխի աշխատող է եղել, առավոտյան եկել է տուն եւ տեսել, որ թուրքը քրոջը բռնաբարել է: Ահավոր վիճակ է եղել, ամբողջ թաղամասը ոտքի է ելել: Ասում է. «Միլիցիոներները նրանց ծեծում էին, ինձ էլ զոռով են պահել...»: Թուրքերին այդտեղից փախցնում են: Քրոջը ուղարկում է Ուկրաինա, թե՝ ամոթ էր: Ինքն էլ եկել էր քրոջ վրեժը լուծելու: Գյուլաթաղի մարտերի ժամանակ մենք մի կապավորի բռնեցինք: Հարյուր քսան կիլոյանոց տղա էր, վիրավոր էր, ոտքը լրիվ ցրիվ էր եղել, ու արնաքամ էր լինում: Ինձ շտաբից ասում էին, որ ուղարկեմ գերուն: Վլադիմիրը եկավ, ասաց. «Նրան ինձ տուր, սիրտս հովանա, ես դեռ թուրքի չեմ սպանել, շտաբում կասես, թե մահացավ: Ես թույլ չտվեցի: Վլադիմիրը Պուշկին յալը պահելու ժամանակ՝ 1993 թվականի մարտի 23-ին, զոհվեց: Հատուկ գնդի տղաները ինձնից օգնություն խնդրեցին ձախ Գլոբուսի մոտ: Ուղղաթիռից որ մեզ վրա կրակում էին, նրանք խրամատներում էին: Հետո թուրքերը որ գալիս են, այդ տղան չի նահանջում: Տղաները նահանջում են, բայց նրան չեն ասում, որ իրենց հետ նահանջի: Թուրքերը նռնականետով նրան խփում են: Մարմնի կեսը չկար: Նրան Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում թաղեցինք:

Շտաբը Ումուտլու գյուղում էր: Նորիկը ինձ կանչեց: Գնացի: Ազգային ժողովից երկու «Նիվա»-ով եկել էին. Կիմ Բալայանն էր, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ալեքսան Հակոբյանը, Սմբատ Այվազյանը, Արա Սահակյանը... Ինը հոգի էին: Նրանց տարա ջրամբարի մոտ: Կիմի եղբայրը ինձ հետ էր՝ Մոխրաթաղի դիրքում: Կիմն ասաց՝ քննություն պիտի հանձնի, քսան օրով տանեմ: Կիմի հետ Մոխրաթաղից վերադարձանք, նրանք ջրամբարի պատնեշի վրա կանգնած վիճաբանում էին.

- Եթե Լեւոնը Քարվաճառը տա, ի՞նչ կանեք:

Այդ հարցը տվեցին Մերուժան Տեր-Գուլանյանը եւ Արա Սահակյանը: Ես չգիտեի, որ նրանք գյուղում Նորիկին հարց են տվել: Ասացի. «Չեմ կարծում թե կտա, համենայն դեպս մեր զորքը չենք հանի այնտեղից, եւ ոչ ոք էլ չի կարող մեզ ստիպել»: Ասաց. «Խոսքներդ մեկ ե՞ք արել, Նորիկն էլ այդպես պատասխանեց, ում հարցնում եմ՝ այդպես է ասում»:

Բ. - Լեւոնի անունից եկել էին ստուգելու...

Ս.Ա. - Չգիտեմ, ինը հոգի էին: Գնացինք լողալու, հետո խորոված հյուրասիրեցինք: Ինձ ասաց. «Համենայն դեպս ինձ ճիշտ պատասխանիր՝ Քելբաջարից դուք զորքերը կհանե՞ք»: Ասում եմ. «Էս ի՞նչ եք ասում, Քելբաջարը երբեք չենք տա: Թուրքերը ո՞նց են կապը պահելու, մի Օմարի լեռնանցքով Քելբաջար ե՞ն պահելու, դա անհնար է: Ռազմավարական տեսակետից՝ Քելբաջարը տալը անմտություն կլինի: Մարտակերտի թիկունքը զիջենք՝ Ղարաբաղը կտանք»:

Լեւոնարխի վերեւի դիրքը մերն էր, դիմացից հեշտությամբ վերցրինք, մի զոհ տվեցինք՝ չայլվեցի Կոլյան: Այդտեղ դիրքավորվեցինք: Երրորդ օրը Հասանղայա գյուղի վերեւը դեպքեր եղան, այնտեղից մեկ կիլոմետր վերեւ էին մնացել Հոկտեմբերյանի, «Արաբոյի» տղաները: Մարտակերտը դեռ չէինք վերցրել, դրա համար 1994 թվականի հունվարի 3-ին հեռուստաաշտարակը եւ քարհանքը պետք է վերցնեինք: Արմենը թե՝ մի թուրք եմ բռնել: Սիրուն տղա էր, թուրքին նման չէր: Ռուսերեն ասում է. «Վիրավորվել եմ, ու ոչ ոք չի օգնում, հայերին կանչեցի, էլ չեմ դիմանում»: Ասացինք. «Նամակ գրիր ձերոնց»: Զրահամեքենայի վրա ենք դնում, ուղարկում ետ: Հայրը մեծահարուստ էր: Այս տղային ասում եմ. «Եթե հայրդ հարուստ մարդ է, ինչու՞ ես եկել պատերազմ»: Ասաց, որ խմած է եղել, բռնել բերել են պատերազմ: Նա սակրավորների հրամանատարն է եղել, հենց առաջին օրը վիրավորվել է, մնացել դաշտում: Ասաց, որ երկու ամիս Դրմբոնում է մնացել: Պարզվեց, որ մեր տանն էր մնացել: Բոլնիս Խաչենից մի տղա եկավ, ասաց. «Քեզ մեկը կանչում է Սադախլոյում»: Մի մեծահարուստ թուրք էր, ասաց. «Տասը ցիստեռ բենզին եմ տալիս, տղայիս ետ տվեք»: Հորը մեր գերի ընկած տղաներից յոթ հոգու ցուցակ եմ տալիս, որ գտնի եւ տա: Սակայն թուրքերի մոտ գերի տալը շատ բարդ էր: Միրբաշիրի գումարտակի եւ Նորիկի հանդիպման ժամանակ թուրքն ասել էր, որ իրենցը թայֆայություն է, ամեն մեկն իր համար է որոշում, եւ կենտրոնացնելու խնդիրը չի հաջողվում: Բոլորն էլ ուզում են փող աշխատել: Իջեւանում այս տղային տալիս ենք հինգ հոգու փոխարեն: Պետք է Մարտակերտը ազատագրեինք, բայց նախ քարհանքը պետք է վերցնեինք: Նորիկը այսպիսի մարտավարություն էր մշակել. այսօր գնում ենք, բայց ոչ թե գրավելու, այլ տեսնենք, թե նախ ինֆորմացիան ոնց է գնում այնտեղ: Գիշերն էինք գնում: Նորիկը երեք գումարտակ շարեց, Իսիչի գումարտակն էլ էր: Յուրաքանչյուր գումարտակին հարցնում էր, թե ով է ուզում գիշերային մարտի գնալ: Իննսուն տոկոսն ուզում էր, բայց չէին ուզում գնալ դիրքերը պահելու: Բայց մենք այնտեղ զինվորի պակասություն ունեինք, վիրավորներ շատ կային: Նորիկը յուրաքանչյուր գումարտակից տասնհինգ հոգու վերցրեց՝ ասելով, որ շատ մարդ պետք չէ: Գիշերը քարհանքը վերցրինք: Փոխարինողները քիչ էին: Մորուք Ռաֆոյի խումբը աջ կողմում էր: Վլադիմիրի տղաները՝ մարտակերտցի Գալստյան Սուրիկի հրամանատարությամբ, մեզնից աջ էին. այդ ճանապարհն իջնում էր դեպի պետավտոտեսչության կետը: Ձախ կողմում մենք էինք: Հրաձգությունը չէր դադարում, անընդհատ խփում էին, քանի որ ահագին ավար էինք վերցրել՝ զինամթեք, սնունդ: Ասացին, որ փոխարինելու կգան Հադրութից՝ Մանվելի բրիգադից: Նրանք շատ ուշ եկան՝ չորրորդ օրը: Ասում եմ. «Նորի՛կ, ո՞նց է

լինելու», թե՝ Սերժի՛կ, ես քեզ ի՞նչ բացատրեմ... Հասկանալի էր, բայց այդ տղաներն էլ մեղք էին, երկու օր մարտի մեջ էին, չորս օր էլ մնացին: Չգիտեի, որ Քսանվեցի Յուրան եկել է: Այդ բրիգադի շտաբի պետն էր: Ճանապարհը ականազերծված էր, ճանապարհի կողքերին տաս-տասնհինգ տեխնիկա էր կանգնած: Ես մինչեւ դիրքեր հասա, ժամեր տեւեցին: Ես դիրքերը հանձնում եմ Փոքր Հայկազին, դա տեվում է երկու ժամ: Այդ ժամանակ թուրքերից մի խումբ դիվերսիա են անում մեր ձախ թեւի վրա: Այդտեղ մենք խփեցինք, հետո նրանք նընդնականետով խփեցին: Այդ պատճառով երկու ժամ ուշացանք: Տղաներով եկանք նստեցինք «ԿԱՄԱԶ»-ը. մոտ քառասուն հոգի ինքնաթափի մեջ էին: Մեքենայի վարորդը մեր գյուղից էր, ասաց. «Գիտե՞ս, որ ընկերդ՝ Յուրան, այստեղ է: Այնքան մարդ կար, որ իրար չէինք տեսել: Աջ թեւը շուտ հանձնեցի ու գնացի: Ետ դարձա, ռացիան, ավտոմատը թողեցի: Հոգնած էի: Յուրային տեսա. «Վիլիսի» մեջ նստած էր, երեք հոգով էին: Յուրան առաջարկեց իր հետ գնալ: Բայց նախ ուզում էի գնալ բաղնիք, մենք այնտեղ բաղնիք էինք սարքել: Ասացի, որ Ստեփանակերտից գինի եմ բերել, տղաները ձուկ են բռնել: Չայլվեցիները լավ ձուկ էին բռնում: Յուրան ուրախացավ, ասաց, որ իր սիրած բանն է: Նա գիտնական էր՝ ֆիզիկոս, մայրս էլ նրա մոր հետ շատ մոտ էր, ընդհանուր բան կար, մենք շատ մտերիմ էինք: Յուրային ասացի. «Ես գնում եմ բաղնիք, ինձնից արդեն զզվում եմ, մոտ կես ժամից կգաս»: Գնում էի, տեսնեմ՝ «ԳԱԶ-66»-ի մեջ կապավորն էր՝ ստեփանակերտցի Բասմաչը, շատ սառնասիրտ տղա էր, ասաց՝ Սերժիկ, ու սկսեց լաց լինել: Ես Բասմաչին չէի տեսել արցունքներն աչքերին: Ասացի.

- Ա՛յ տղա, հո դերասա՞ն չես, ի՞նչ կոկորդիլոսի արցունքներ են:

- Որ ասեմ, դու էլ լաց կլինես: Յուրան զոհվեց:

- Ո՞նց թե զոհվեց, հիմա պիտի գար...

- Շրջադարձի ժամանակ վարորդը չուզեց մի հատ էլ ետ տա... պայթեց ականի վրա:

Այդպես են ասում: Թե ո՞նց էին ականազերծել... Լինում է, որ ականներն իրար վրա են դնում: Կրկնակի ականներ են եղել: «ՈՒԱԶ»-ը տրաքում է, բոլորը զոհվում են: Ես երեք հոգու էի տեսել, ասում են, որ չորսն են եղել: Կարծես սառը ջուրը գլխիս լցնեին...

Լեւոնարխի վերեւի դիրքում քանի որ ճանապարհը ականազերծած էր, տանկը ուշ ուղարկեցի: Անձնակազմը եւ երկու հոգի՝ հինգ հոգով, ճանապարհի մեջտեղը՝ տանկի կողքը, նստած հաց են ուտում: Գնդացիրի ժապավենը լցնում են, որ պիտի հերթապահեն, քանի որ մենք այնտեղ հակատանկային ոչինչ չունեինք: Ճանապարհը Լեւոնարխից բարձրանում էր: Ես այդ ժամանակ դիրքեր էի գնում: Խրամատ կար, որի վրա թուրքերը շենքի պանելներ էին շարել: Հանկարծ խրամատը

դղրդաց: Չայլվեցի մի անչափահաս տղա ունեինք, նրա հայրն էլ էր կռվում (ես չայլվեցիների վաշտ ունեի), նրան ուղարկեցի, թե. «Ոնց որ այնտեղից ձայնը եկավ, գնա տես՝ ինչ է եղել»: Ես ուսումնասիրում էի, թե դիրքը ոնց պիտի լինի: Այդ տղան վերադարձավ, կակազում էր, չէր կարողանում խոսել ու ձեռքով ցույց էր տալիս դեպի տանկը: Գնացի, տեսա՝ ականանետի արկը ընկել է ուղիղ հինգ հոգու մեջտեղը: Եթե չափումներ կատարեին, երեւի այդքան ճշգրիտ չկարողանային գցել: Հինգն էլ չկային. մեկի դեմքի կեսը չկար, մյուսի ոտքը: Ապշել էի: Տանկն էլ աշխատում էր, անջատած չէր: Կապվում եմ, ինձ Գրադի Ժորան է պատասխանում, ասում եմ, որ մեքենա ուղարկեն: Ծածկագրերով էինք խոսում. «ֆուտբոլիստ»՝ զոհված, «վոլեյբոլիստ»՝ վիրավոր: Այդ պահին ես կարծես անջատվել էի, մտածեցի՝ վրան-թիկնոց ճարեմ, տղաներին ծածկեմ: Լեւոնարխ որ իջնում ես, այդտեղ կավահող է, խրամատներ են փորված: Տեսնում եմ, որ թուրքերը գնացել են այդտեղից, ու ամեն ինչ կա: Բայց ես արդեն նրանց տեսադաշտում էի, կարող էին ինձ խփել, մեկ կիլոմետր տարածություն էլ չկար: Բայց չէին կրակում: Ես դանդաղ գնացի, հինգ-վեց հատ նոր՝ դեռ չբացած վրան-թիկնոց վերցրի, տարա, տղաներին ծածկեցի: Դրանից հետո տեսա՝ մեկի թեւն էր մնացել այդտեղ: Ահավոր վիճակ էր:

Քարհանքը վերցրել էինք: Մենք շատ էինք, պիտի ջուր բերեին, բայց չէին բերում: Երկու օր ջուր չխմեցինք: Մերոնք իջան Մաղավուզ գյուղի աղբյուրից ջուր բերելու: Կեղտոտ, պղտոր ջուր էր. այդտեղով տեխնիկա էր անցնում: Քամում էինք, որ շարժուն բաները չմնան: Երկու օր ջուր չեմ խմել:

Քարհանքից հետո հաջորդ քայլը Մարտակերտի գրավումն էր: Հունիսի վերջին էր: Մտանք Մարտակերտ՝ ոչ մեծ դժվարությամբ: Հեռուստաաշտարակը որ վերցրինք, նրանք արդեն չէին կարող այնտեղ մնալ: Նահանջեցին: Այդ ժամանակ ենք Պուշկին յալը վերցնում, հիմնական մասը մնում է մեր ձեռքին: Մարտին վերցրել էինք, տասներկու օր պահեցինք ու հանձնեցինք: Դրանից հետո տեղային ընդհարումներ եղան, մեծ մարտական գործողություններ տեղի չունեցան: Ես նոյեմբերին զորացրվեցի Ղարաբաղի բանակից:

1992 թվականի օգոստոսի սկզբին Դրմբոնն էլ էր հանձնված: Շտաբը գտնվում էր Չլդրանում: Այնտեղ որ տունը տեղափոխվում էինք, ռմբակոծում էին: Ստիպված գնացինք Կիչան տանող անտառի ճանապարհով եւ շտաբը տեղադրեցինք անտառում: Կապի մեքենան այնտեղ էր: Այդտեղից դիրքերը ղեկավարում էինք, փոխում, թուրքերի հարձակումները կասեցնում: Նրանք ամեն գնով ուզում էին Չլդրանը գրավել: Մեզ մոտ բերին կազակների մի դասակ, բայց Չլդրանում նրանք տասնութն էին, ինձ մոտ էին: Նրանց ղեկավարում էր Արջաձորում գտնվող ատամանը: Նա նստում էր Վանք գյուղում, երկու անգամ եկել էր մեզ մոտ: Նրանց մի մասն էլ Վաղուհասի ուղղությամբ էր գտնվում, կասեցնում ազերիների հարձակումը դեպի Գանձասար: Կազակների հետ մենք պրոբլեմներ ունեցանք: Մի քանի հետախուզական աշխատանքների կազակներին ուղարկեցինք: Ուղեկցողը ու նրանցից մի քանի հոգի չվերադարձան: Այն մեզ մտածելու եւ կասկածի տեղիք էր տալիս: Երբ նրանց զենքերը ստուգում էի, ուղեկցողի զենքը մեր բանակի գրանցված զենքերից էր: 1992 թվականի սեպտեմբերի 26-ի դեպք է: Հաթերքի օպերացիային ուղարկված ինը կազակներից վերադարձան չորսը: Ուղարկվածներից մեկը բժիշկն էր՝ Հակոբյան Սերգեյը, որին ես կասկածում էի: Իր ասելով՝ բաքվեցի էր: Նրանից ես բացատրություն վերցրի: Չկարողացա իմանալ, թե ինչու են Հաթերք գնացել, ու՞ր են այն հինգ հոգին: Նրանց մեջ Աֆղանստանում կռված տղաներ կային, որոնցից մեկը Սաշան էր: Տեխնիկային լավ տիրապետում էին: Նաեւ հետախուզական աշխատանքների հետ կապված՝ կազակները ինձ շատ կասկածելի թվացին, եւ ես խնդրեցի նրանց տանել, նրանց կարիքը մենք արդեն չէինք զգում: Համենայն դեպս, այդ «Բերկուտ» օպերացիան, որ նրանք անվանել են, ինձ կասկածելի թվաց: Նրանց հետ անհատապես զրուցելուց հետո ասացին, որ կպատմեն, թե ինչ է տեղի ունեցել: Երբ գնացի Վանք, Պետրոսյան Ալիկն ասաց, որ ատամանը երեք հոգու շարել է պատի տակ ու գնդակահարել որպես հայրենիքի դավաճաններ: Այդ դեպքը մեզ վրա շատ տհաճ տպավորություն թողեց: Ատամանի հետ զրուցեցինք, բայց չկարողացանք կոնկրետ ինչ-որ բան ճշտել: Նա այդպես էլ ասում էր. «Նրանք դավաճանել են մեզ, ուզում էին անցնել ազերիների կողմը»: Սեպտեմբերի 24-ը թե 25-ն էր, դեռ կազակները մեզ հետ էին, «Բերկուտ» օպերացիայի չկապացած վիճակն էր: «ԿԱՄԱԶ»-ի վարորդը հորեղբորս տղան էր՝ Ասլանյան Ռաֆիկը, նրան ասել էի, որ անընդհատ մեքենան պատրաստ պահի, քանի որ ամեն վայրկյան կարող էինք գնալ դիրքեր, այնտեղ վիճակը շատ ծանր էր: Հանկարծ Ռաֆոն եկավ, ասաց. «Արի՛, այնտեղ հավատացյալներ են եկել, կազակների հետ զրուցում են»: Հինգ հոգի էին՝ մի կին ու չորս տղամարդ: Ես շատ հանգիստ խոսեցի նրանց հետ: Հարցրի.

- Ի՞նչ եք ուզում:

- Աստված ասել է՝ «Զենքը ցած դրեք, պետք չէ, որ մարդը մարդու վրա կրակի»:

- Դուք զինվորների հետ խոսել ե՞ք:

- Չէ՛, մենք բժիշկների հետ էինք խոսում, անտառում փրկարարական խումբ կար, եւ կազակների հետ ենք զրուցում:

- Մի րոպե սպասեք, հիմա կգամ, ձեզ հետ կզրուցեմ:

Կապվեցի շտաբի հետ, ասացի, որ «Քառասունչորսի» հետ կապվեն եւ հայտնեն, որ այսպիսի բան կա: Սամվել Բաբայանն ասաց. «Ես դրանց էի ման գալիս, այնպես արա՝ չփախչեն»: Գնացի ու սկսեցի նրանց հետ զրուցել: Պարզվեց, որ «Եհովայի վկաներ» աղանդի հետեւորդներ են: Չանցած քառասուն րոպե՝ Ստեփանակերտի պարետատան տղաներից երկու հոգի «ՈՒԱԶ»-ով եկան, նրանց շատ կոպիտ ձեւով լցրին մեքենան ու տարան: Դրանից հետո այդ «Եհովայի վկաներից» լուր չեմ ունեցել: Չէին էլ ասում, թե որտեղից են եկել, հարցնում էի.

- Երեւանից ե՞ք եկել:

- Ի՞նչ կապ ունի, թե որտեղից ենք եկել:

Դրանից հետո ես բժիշկների, կազակների հետ խոսեցի: Կազակներին տարա դիրքեր, դիրքերի վիճակը շատ վատ էր: Հենց այդտեղ Սաշան ոտքից վիրավորվեց: Երբ հարցրի, թե այդ մարդկանց՝ աղանդավորներին, հավատացել են արդյոք, ասացին, որ ոչ ոք չէր ուզում լսել նրանց, եւ եթե ես չմոտենայի, հնարավոր է՝ խփեին նրանց: Նույնիսկ ամենաանգրագետ զինվորի մեջ չգտա հակվածություն դեպի նրանց ասածները:

Հոկտեմբերի 26-ին Մարտակերտ գնացող ճանապարհով ադրբեջանցիները մեր թիկունքում՝ դեպի Չլդրան, դեսանտ էին իջեցրել: Դիրքերը Չլդրանից վերեւ էին գտնվում, այնտեղ մարդու խիստ պակաս ունեինք: Կապվեցինք Ստեփանակերտ: Զագլիկ գյուղից Ուտյոս Արթուր ունեինք, նա «Շիլկայով» գնաց, նրան էլ խփեցին: Եղբայրը գոռում էր, բայց չհասցրինք տանել հոսպիտալ: Դա դիվերսիա էր մեր նկատմամբ: Չիմացանք, թե ով մեր դիրքերի մասին այդպես լավ ինֆորմացիա տվեց: «ԿԱՄԱԶ»-ն էլ այդտեղ մնաց: Անտառում ոչինչ չէր երեւում, «Գրադի» մի արկ խփեց ճանապարհին, «ԿԱՄԱԶ»-ը շարքից հանեց: Դուրս գալիս «ԲՄՊ»-ով մեքենային խփեցինք, որ ընդհանրապես թուրքերի համար անպիտան դառնա:

Չլդրանը հանձնելուց հետո դիրքավորվեցինք Կիչանում: Պուճուր Հայկազը կապվեց, ես խոսեցի: Վիտալիկը եկավ, ասացին. «Հա, լավ, թողեք, բայց եկեք դիրքավորվեք Կիչանում»: Հաջորդ օրը՝ 27-ին, ես վիրավորվեցի՝ կոնտուզիա ստացա, եւ երկու ամսով եկա Երեւան:

1992 թվականի հունիս-հուլիս ամիսներին Հաթերքն ազատագրվեց թուրքերից: Հաթերքը երեք անգամ տվել-առել ենք: Պիտի գետն անցնեինք: Իմ զրահամեքենան անցավ, բայց տանկի մեխանիկը վախենում էր անցնել: Բաբկենը «ԲՄՊ»-ն ետ դարձրեց ու մի անգամ էլ անցավ, ասաց. «Եթե տանկը հենց հիմա իմ ետեւից չանցնի, կրակում եմ վրան»: Այդ տղան վախից զրահամեքենայի ետեւից եկավ: Մտանք Հաթերք: Թուրքերը նահանջում էին: Բայց Հաթերքը մեծ գյուղ է եւ ռելիեֆային: Հիվանդանոցից անցանք, «ԶԻԼ-131» մեքենայի մոտ կանգնած էին, մեզ վրա մոտ տասը հոգի կրակում էին: Իմ ջոկատում մեր գյուղից Լազարյան Տոլիկ կար, պատի ետեւից նայեց, ասաց. «Մերոնք մեզ վրա կրակում են»: Դուրս է գալիս ու ասում. «Մենք ենք, մի՛ կրակեք»: Սրանք հենց տեսնում են, կրակ են բաց անում մեզ վրա: Տոլիկին քաշում եմ պատի հետեւը: Մերոնք չէին, թուրքերն էին՝ մոտ երեք հարյուր մետր հեռավորությամբ, որտեղ ձոր էր իջնում: Մենք չորս հոգով էինք: Ռացիայով կապվեցի Սուրիկի հետ. նա եւ Վլադիկը Հաթերքի վերեւում էին: Նախ ուզում էի իմանալ, թե Բաբկենն ուր է, պիտի ետ դառնայինք, հետեւի կողմով գնայինք, վերեւով չէինք կարող, քանի որ նրանք ընկույզի ծառի տակ էին ու շատ էին: Այդ պահին թուրքերի «Գրադը» շատ հեռվից մեզ վրա խփեց: Խփեց պատին ու փլեց այն: Սուրիկին ասացի, որ այստեղ թուրքեր կան, ասացին. «Գիտենք, ինչու՞ էիք գնում...»: Երբ բարձրացանք վերեւ, ասացին, որ Վլադիկը վիրավոր է: Նրանք հենց այդ տղաների հետ հանդիպում են, Վլադիկը ոտքից վիրավորվում է: Ճանապարհի խնդիր էր՝ որտեղո՞վ գնանք: Ներքեւով չէինք կարող, ճանապարհը դեպի Գետավան էր տանում: Բաբկենին կանչեցի եւ ասացի, թե Վլադիկը որտեղ է գտնվում: Այդ ճանապարհով միայն հեծանիվով կարելի է անցնել, գյուղի տներ են՝ ցանկապատերով, թոնրատներով: Բայց Բաբկենը զրահամեքենայով այդ արանքով ջշեց-անցավ, Վլադիկին ու եւս մի քանի վիրավորների դրեց դրա վրա, ու նույն տեղով ետ դարձանք:

1993 թվականի հուլիսի 4-ին Լեւոնարխի «503» բարձունքում (ներքեւում Հասանղայան է, աջ կողմում՝ Լեւոնարխը) դիրքավորվել էինք: Գումարտակից տղաների էինք վերցրել: Արդեն երկրորդ օրն էր, ինչ այնտեղ էինք՝ հուլիսի 7-ից: Ահագին ուշ եկան մեզ փոխարինելու՝ չորրորդ օրը: Հինգ հոգով, ես դիմացից, գնում էինք: Ճանապարհի կողքին կանաչը շատ բարձր էր, քանի որ դաշտերը չէին մշակվել: Չալյան Սերգեյը «Եղնիկներից» ռացիայով կապվում է ինձ հետ (նրա ծածկանունը Պրիզրըկ էր), ասում է. «Կանգնի՛ր, առաջ չգնաս»: Ես ահագին առաջ էի գնացել՝ դեպի Լեւոնարխ, Հասանղայա՝ տեսնելու, թե մեր դիմաց ինչ կա: Ասում եմ. «Պրիզրը՛կ, դու ինձ որտեղի՞ց ես տեսնում»: Նրանք Թալիշից տասնհինգ կիլոմետր վերեւ էին, Քաչալ սարից էին նայում, շտատիվի վրա էր հեռադիտակը դրված, այն վաթսուն անգամ խոշորացնում էր: Ասում է.

- Մի՛ շարժվիր, տեղդ կանգնի՛ր:

- Դու ինձ տեսնում ե՞ս:

- Հա, հինգ հոգի եք, դու էլ դիմացից գնում ես:

- Հիմա ի՞նչ անեմ:

- Իջիր ներքեւ, քեզնից ձախ դիպուկահար ադրբեջանցին սպասում է, եթե մի քայլ էլ անես, կխփի: Ուզում եմ ուղղորդում տալ, չեմ կարո-

ղանում կապվել «գրադի» հետ: Բայց դու պիտի ուղղորդես, ես որ տամ, կարող է ձեզ կպնի:

Ետ դարձանք, Չալյան Սերգեյն ասաց. «Փախան, վեց հոգի էին, իջան Հասանղայա գյուղը»: Չկարողացանք գնալ այդ գյուղը, զոհվածներին գտնել:

Պուշկին յալի գործողությունից երեք օր հետո Մոնթեն իր տղաների հետ պիտի գար մեզ փոխարինելու: Պուշկին յալը բաց տարածք է ու բարձունք, ոչ մի ծառ չկա այնտեղ: Մեր՝ իմ ու Նավթալյան Արմենի դիրքը աջն էր՝ Փափրավանդի կողմի դիրքը: Ես կատեգորիկ հրաման էի տվել, որ գիշերը ոչ ոք չկրակի, քանի որ թիրախ էինք դառնալու: Մարտակերտը թուրքերի ձեռքին էր, հեռուստաաշտարակի բարձունքից խփում էին մեզ վրա: Մեր դիմաց նույնպես թուրքեր էին՝ դեպի Ջանգաթաղ: Միայն Գյուլաթաղի ուղղությամբ էինք մենք՝ սեպի պես խրված: Գիշերը ժամը երեքին ես եմ գնացել Գլոբուսի մոտ, Մոնթեին դիմավորել: Ցուրտ օր էր, ձյուն էր գալիս, ու քամի էր փչում: Մարտի կեսին էր: Անընդհատ սպասում էի, որ ինձ հետ կկապվեն ու կասեն, թե ժամը քանիսին գնամ Մոնթեին դիմավորելու: Խրամատներից կրակոց էր գալիս: Թուրքի խրամատներ էին, մեզ համար որպես իսկական խրամատներ չէին ծառայում, քանի որ դրանք դեպի մեր կողմն էին: Թումբը մյուս կողմը պիտի լիներ, բայց բահ կամ այլ գործիք չունեինք: Իսկ Մոնթեն ամեն ինչով զինված եկավ: Կրակում էին, ես ջղայնությունից չգիտեի ինչ անել: Ասացի.

- Տղա ջան, ինչու՞ ես կրակում:

- Բա, այնտեղ բան երեւաց:

- Ի՞նչ երեւաց, մութ գիշեր է...

Երրորդ անգամ որ գնացի, մեր գյուղից իմ ընկերոջ տղան ասաց. «Սերժի՛կ դյադյա, բան մի ասա, կրակում ենք...»: Տեսնեմ՝ ավտոմատի փողը գրկած՝ նստել է, տաքանում է: «Տրասսերով» է կրակում, քանի որ այն փողը շուտ է տաքացնում: Քամի էր, խրամատը խորը չէր, որպեսզի պատսպարվես: Ես նստել էի խրամատում, որ դեպի Փափրավանդ էր նայում: Ցերեկը հնարավոր չէ նստել, քանի որ դիպուկահարը կխփի: Ծնոտս բռնել եմ, ատամներս իրար են խփվում, նորից բռնում եմ, էլի խփվում են: Մտածում էի՝ թոքաբորբ կունենամ, կմեռնեմ: Երբ գիշերը չորս կիլոմետր քայլելով գնացի մինչեւ Գլոբուս, մի քիչ տաքացա: Մոնթեն կարգադրեց մինչեւ լույսը բացվելը երեսուն մետր խրամատ փորել: Ինքն էլ խրամատի մեջ պառկեց, ասաց. «Ես մի քիչ հանգստանամ...»:

Պատմում է տեր Գրիգոր քահանա Մարկոսյանը (Գանձասարի վանքի վանահայր) 30.11. 2005 թ., Երեւան



Գ.Մ. - Մինչեւ Ղարաբաղ գնալը աշխատում էի Հայֆիլհարմոնիայում, նվագում էի տարբեր երաժշտական խմբերում: Լսելով Պարգեւ սրբազանի հորդորները՝ 1990 թվականի հունիսի 3-ին տասնհինգ օրով գնացի Ղարաբաղ: Տասնհինգ օրը դարձավ տասնհինգ տարի: Ամարասի վանքի վերաբացման օրը սրբազանի ձեռամբ ձեռնադրվեցի սարկավագ: Նույն օրը՝ սեպտեմբերի 8-ին, լույս 9-ին, ազերիները Ֆիզուլուց հարձակվեցին Մաճկալաշեն գյուղի եւ Ամարասի վրա: Հայերից քսանչորս հոգի գերվեցին, մի հոգի զոհվեց: Հաջորդ օրը՝ առավոտյան, սրբազանը եկավ: Ճանապարհները փակ էին: Հակառակ ճանապարհով գնացինք Ամարաս, Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի խորանում աղոթեցինք: Սրբազանն ինձ մի շաբաթով տարավ Ստեփանակերտ: Գիշերը ռացիայով Օլեգ Եսայանին, որ շրջափակման մեջ էր, անընդհատ ասում էի՝ Արմեն սարկավագն է: Հետո իմացա, որ փնտրում էին, թե ով է Արմեն սարկավագը: Վերադարձանք Երեւան: Սեպտեմբերին սրբազանը ինձ դարձյալ տարավ Ղարաբաղ: Խնդրեց, որ քահանա լինեմ՝ ասելով, որ քահանայի կարիք շատ ունի: Այդ ժամանակ կինս էլ էր ինձ հետ, նա համաձայն չէր: Ես էլ չէի ուզում, գիտեի, թե ինչ ծանրություն էի վերցնելու ուսերիս: Սեպտեմբերի 25-ին Պարգեւ սրբազանը ինձ քահանա ձեռնադրեց: Արմեն սարկավագը դարձավ տեր Գրիգոր քահանա: Վեհափառի կարգադրությամբ եւ սրբազանի տնօրինությամբ՝ 1990 թվականի նոյեմբերի 23-ից ես դարձա Գանձասարի վանքի վանահայր: Քառասունքս անցկացրի Գանձասարում: 1991 թվականին եկա Երեւան, տասն օրից վերադարձա Ղարաբաղ: Դրությունը լուրջ էր հատկապես Շահումյանում: 1991 թվականի ապրիլի վերջին էր, սրբազանը ինձ տարավ Շահումյան: Այդ ժամանակ «Կոլցո» գործողության հիմքերն էին դրվում ռուսների կողմից: Սրբազանի «Նիվա» մեքենայով Մարտակերտի, Միրբաշիրի, Լենինավանի ճանապարհով գնացինք: Ադրբեջանական կողմով չենք անցել: Ամառ էր: Սարերով գնացինք, Լենինավանը տեսանք, թեքվեցինք ձախ, Խար-

խափուտով գնացինք: Հասանք Շահումյան: Այնտեղ էին Իգոր Մուրադյանը, Զորի Բալայանը, տեր Կորյունը, որն այդ ժամանակ Վրույր Կարապետյան էր: Նրանք ուղղաթիռով գնացին Գետաշեն: Շահեն Մեղրյանը ինձ ու սրբազանի վարորդին՝ Կարենին, ասաց. «Սպասեք, հիմա մի հատ բոյ ենք մտնում Սարըսուում»: Ուրախացանք: Սրբազանենք գնացին Գետաշեն: Ռացիայով կապվեցինք, իմացանք, որ այնտեղ տասնչորսամյա Արամայիս Սահակյանին են թուրքերը սպանել: Մտանք Սարըսուի ուղղությամբ: Լեոնիդ Ազգալդյանն էր իր ջոկատով, այլ ջոկատներից տղաներ կային: Երեւանում սարքած նռնականետն էին փորձարկում: «ՄԱԶ»-ի թափքի մեջ «Ալազանի» ռելսերն էին դրված: Սրբազանի վարորդը ավտոմատ ուներ, իսկ ինձ մի կարաբին տվեցին: Փամփուշտներ կային, բայց Շահենն ասաց, որ շատ խնայողաբար օգտագործենք: Գնացինք, ու մարտը սկսվեց: «Ալազանից» ոչ մի հրթիռ չկարողացանք ուղարկել, ինչ-որ մաս փչացել էր: Մարտի թեժ պահին հանկարծ Գետաշենի կողմից ուղղաթիռ եկավ: Շատ ցածր էր թռչում: Մտածում էինք՝ թուրքի ուղղաթիռ է, թուրքը մտածում էր՝ հայի է: Սկսում ենք այդ ուղղաթիռին խփել: Այն պահին, երբ ես զրահաջարդ-այրիչ եմ դնում, Կարենն ասում է՝ սրբազանը մեջն է: Գոռում ենք՝ սրբազա՞ն, սրբազա՞ն: Մեր տղաները կանգնում են, իրենք են դառնում թիրախ, սկսում են կրակել, որ ուղղաթիռը անցնի: Հետո սրբազանն ինձ ասաց. «Զգացի, որ կտկտոց է գալիս, թեեւ կարկուտ չկար, զարմանում էի, թե ինչ ձայն է»: Բարեհաջող վայրէջք էին կատարել: Մենք որ գնացինք Ներքին Շահումյան, սրբազանը իմացել էր:

Բ. - Մարտի մասին ավելի մանրամասն պատմեք:

Գ.Մ. - Առանձնապես բան չեղավ՝ ոչ հաղթանակ, ոչ պարտություն, մենք ոչ մի զոհ, վիրավոր չտվինք, կենտրոնը միայն ուղղաթիռն էր, որի վրա կրակում էինք: Երբ ուղղաթիռը իջավ, մենք վերադարձանք: Մարտունաշենից էինք մտել: Մարտունաշենի ձորում է Սարիսուն: Հետո սրբազանը բարկացավ, ասաց. «Քո զենքը խաչն է: Բայց դե, պատերազմ է: Հետո, առանց իմ օրհնության որ գնում եք, այսպիսի վիճակի մեջ եք ընկնում»: Ինձ օրհնեց, զենքը տվեց ձեռքս, մի հատ էլ ինքը գցեց ուսը եւ ասաց. «Հիմա եկեք, տեսնեք՝ ինչ ենք անում»: Եվ, իսկապես, երեկոյան «Ալազանը» խփեց: Մի վայնասուն էր ընկել Սարիսուում: Հետ եկանք Գանձասար: Մի կարեւոր դեպք կա. Պարգեւ սրբազանը եկավ Գանձասար, ասաց. «Ես գնում եմ Երեւան, բայց ոչ մեկին չասես, որ ես Երեւանում եմ: Ստեփանակերտում գիտեն, թե ես Գանձասարում եմ: Թող այդպես էլ իմանան: Հազիվ թե այնտեղից հասնեն Գանձասար»: Գնաց Քոլատակ: Ուղղաթիռը պետք է իջներ այնտեղ, նրան վերցներ, ու գնային: Բոլոր ուղղաթիռները գալիս, Գանձասարի վրայով պտտվում էին ու գնում: Գանձասարի վանքի պահակը՝ Բենիկ

Հակոբյանը, նայեց ուղղաթիռին, ասաց. «Սա թուրքի ուղղաթիռ է»: Ասացի. «Չէ՛, թուրքի չի»: Նա պնդեց իր ասածը, հրացանը վերցրեց, որ խփի: Ասում եմ. «Թուրքի չի, խնդրում եմ, մի՛ խփիր»: Ասաց. «Սովորել են մեզնից, ցածր են թռչում, որ գլխի չընկնենք»: Մի կերպ պահեցի նրան ասելով, որ սրբազանն է ուղղաթիռում: Հետո սրբազանին պատմեցի, ծիծաղեցինք: Եկանք Երեւան: Շահումյանում հինգ հոգի զոհվել էին, նրանց դիակները բերեցինք: Մոսկվայից Կիրիլ Ալեքսեեւսկի կար՝ «Կուրանտ»-ի թղթակիցը, նա Շահումյանում էր, հեռագրով տեղեկացրել էր, թե՝ մենք այստեղ հոգեւորականի կարիք ունենք: Ավելի հեշտ էր գնալ Շահումյան Ղարաբաղից՝ զարտուղի ճանապարհներով, անտառներով, քան Երեւանից: Սրբազանն ինձ ասաց, որ պիտի անպայման գնամ: Համաձայնվեցի, բայց չգիտեի, որ «Կոլցո» գործողությունն արդեն սկսվել է: Սրբազանին միայն խնդրեցի կնոջս ասել, որ Գորիս եմ գնացել: 1991 թվականի մայիսի 28-ին «Արցախ» կոմիտեում (այդ ժամանակ Գրիգոր Հարությունյանն էր ղեկավարը) ասացին, որ գիշերը ուղղաթիռով պիտի գնանք Կամո, այնտեղից լուսադեմին՝ Շահումյան: Այդպես էլ արեցինք: Այն ուղղաթիռում, որտեղ ես էի, Կոռնիձորի Արայիկի ջոկատն էր, ու բժիշկներ էին: Իջանք Կամո, լուսադեմին հասանք Գյուլիստան: Շահեն Մեղրյանը մեզ դիմավորեց, Արայիկին ասաց. «Ապրե՛ք, լավ եք արել, որ եկել եք, ձեր կարիքը կա»: Այդ ժամանակ շտաբը Վերին Շենում էր: Այն մարդը, որ ինձ պիտի ուղեկցեր այնտեղ, չգիտեր, որ շտաբի տեղը փոխել են: Նախկին շտաբը գյուղի ծայրին էր: Հենց իջանք, տեսա՝ Վարդանյան Սամվելի ջոկատն է այնտեղ նստած: Այդ ջոկատը սրբազանի հովանու ներքո էր գտնվում, սրբազանն էր նրանց ապահովում զենք-զինամթերքով, սնունդով: Ամենալավ ջոկատներից մեկն էր: Լյովան էր, Ցասաուլը... Սամվելին ես արդեն ճանաչում էի, գիտեի, որ Բյուրեղավանում է ապրում: Ինձ որ տեսավ, ասաց. «Էլ ու՞ր ես գնում շտաբ, սա է էլի, նախկին շտաբն է սա»: Շտաբը մի քանի տուն ներքեւ էր գտնվում: Գնացի այնտեղ, ներկայացա: Ռուսաստանից ահագին մարդիկ կային, կարծեմ՝ ինչ-որ Թիմուր Գայդար: Ինձ ներկայացրին որպես Գանձասարի վանահայր: Կիրիլ Ալեքսեեւսկին շատ ուրախացավ, թե՝ պիտի բարձրացնել տղաների ոգին: Վերին Շենը Շահումյանի ամենամեծ գյուղն է, բայց մարդ չկար, շատ քչերն էին գյուղում մնացել: Մնացի Սամվելի հետ: Նրա տղաները տասներկուսն էին: Շատ խնդրեցի, որ ինձ էլ վերցնի իր հետ: Ասաց. «Չէ՛, ես պատասխան եմ տալու Պարգեւ սրբազանին»: Բայց ես հերթապահում էի, գնում էի դիրքեր: Սամվեը մի տղայի էր վերցրել իր խմբում, որը փախել էր ռուսական բանակից: Անունը Սաշա էր: Երեխայի պես պահում էր նրան: Սամվելի ջոկատում մեծ մասը ղարաբաղցիներ էին: Հայոն էր Ղարաբաղից, Էդոն ու Բենոն, որոնք եղբայրներ

էին, Քաչալ Արմենը, կոշկակար Լյովան, Կնյազը Աբովյանից էր, Գոռը Կալինինոյից էր: Ընտիր ջոկատ էր: Բոլորն էլ խմող էին, բայց հրամանատարի ներկայությամբ ոչ ոք չէր խմում, շատ զգոն էին, որ խմիչքի հոտ չգա: Մենք գյուղի ամենավերջին տանն էինք ապրում: Այն հարյուր քսան մետր էր հեռու թուրքերի դիրքից, նրանց նշանառուն աշխատում էր այդ տան վրա: Զուգարանը շարժվող էր, որ մտնում էինք, մի ձեռքով զուգարանը պահում էինք, աշխատում էինք շուտ վերջացնել, որ հանկարծ զուգարանում չմեռնենք: Կոռնիձորի Արայիկի տղաները Կարաչինարում էին: Տարբեր գյուղերում ջոկատներ կային: Ժիրայրը՝ Դաշնակ Ժիրոն էր, մենք որ գնացինք, նա ետ եկավ: Որոշ ժամանակ անց Շահենը ասաց. «Մի տղա է գալու, նրա իսկական անունը Մոնթե է, բայց մենք Ավո ենք ասում»: Հարցրի, թե ուր է, ասաց, որ Արայիկի մոտ է տարել նրան: Գնացինք, իմացանք, որ Մոնթե Մելքոնյանն է: Ամեն ջոկատից մի քանի հոգի գնացել էին այնտեղ: Ես աշխարհիկ շորերով ու զենքով էի, գնացել էի որպես Սամվելի ջոկատի անդամ: Մոնթեն նայեց երեսիս, ասաց. «Այստեղ հոգեւորականի կարիք կա: Ես ճանաչում եմ Պարգեւ սրբազանին, նա ինձ չի մերժի եւ մի հոգեւորականի կուղարկի»: Որոշեցի մի քիչ խաղալ, ասացի. «Ի՞նչ հոգեւորական, այստեղ նույնիսկ աշխարհիկ մարդիկ չեն կարողանում իրենց գլուխը պահել, ուր մնաց՝ հոգեւորականը»: Ասում է. «Դու ո՞վ ես, դու թուրք ես»: Ասացի. «Ի՞նչ թուրք, հայ եմ, Երեւանից եմ»: Պնդեց, որ մեզ հոգեւորական է պետք: Ասացի. «Որ հույսդ դրել ես հոգեւորականների վրա, ուրեմն կպարտվես»: Բարկացավ: Չուզեցի վիճակը լրջացնել, ասացի. «Վերին Շենում մի տերտեր կա, կարծեմ՝ մարդկանց կնքում է, առավոտյան ժամը ութից եկեղեցում կնքում է»: Ուրախացավ. «Իրա՞վ կընես»: Ես օրական երեք հարյուր-չորս հարյուր հոգու կնքում էի, ամբողջովին ջրի մեջ կորում էի, մի քիչ հանգստանում էի ու գնում դիրքեր: Առավոտյան ժամը ութին գնացի Վերին Շենի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Մոնթեն սպասում էր, ոտքով հասել էր այդտեղ: Ասում եմ՝ հո գի՞ժ չես, թե՝ վա՜յ, տեր հայր... 1992 թվականին Մոնթեն, որ Մարտունիում էր, սրբազանից հոգեւորական էր խնդրել, որ այնտեղի Մշակույթի տանը պատարագ արվի քարի վրա: Այնտեղ էին Սեդան, Մարտիրոս Ժամկոչյանը: Մոնթեն ասել էր. «Ես սրբազանից հոգեւորական եմ ուզել, կտեսնեք, որ Տեր Գրիգորը կգա»: Գնացի, նրանք սկսեցին ծիծաղել: Հարցրի՝ ի՞նչ է եղել: Ասաց. «Ես գիտեի, որ խենթը դու ես, դու կգաս»: Այդ ժամանակ շատ լրագրողներ էին գալիս, Վերին Շենի ամբուլատորիայում էին մնում: Այդ պահին մերոնք մի ազերի ընտանիքի բռնեցին: Նրանք հասել էին Կարաչինար, հարցրել էին. «Կիրովաբադ ճի՞շտ ենք գնում»: Մերոնք ասել էին՝ այո: Նրանց փոխեցին հարյուր հիսուն գլուխ անասունի հետ:

Իմ մեռոնն ու խաչերը վերջացել էին: Ռացիայով ներքին կապ կար, բայց Հայաստանի հետ կապ չկար: Մեծ ռացիան Գյուլիստանում էր. իրար հետ հաղորդակցվում էինք այս ճանապարհով՝ Գյուլիստանից Իջեւան, Իջեւանից Աբովյան, Աբովյանից Երեւան: Շահենն ասաց. «Սրբազանին իմաց տվեք, որ մեռոնն ու խաչերը վերջացել են»: Նա էր իմաց տվել սրբազանին, սրբազանն էլ ասել էր. «Թող ինքը գա»: Այդ նպատակով մեքենա էր ուղարկել: Եկել էին Մարտակերտի եկեղեցու վարորդը՝ Գուրգենը, եւ Ռաֆիկ սարկավագը, որը հետո Հադրութում զոհվեց, շատ լավ տղա էր: Զարմացած նայում էին երեսիս, թե՝ կարողանում ե՞ս դիմանալ: Ասացի. «Ինչպե՞ս կարող եմ չդիմանալ»: Գնացինք Ստեփանակերտ, տեսա՝ Վարդանյան Սամվելն այնտեղ է: Սրբազանը նայում էր ինձ, ժպտում: Ասացի. «Ինձանից շու՞տ եք հասել, չէի՞ կարող Սամվելի հետ գալ»: Սամվելն ասաց. «Մենք զենքերով էինք գալիս, կարող էին մեզ բռնել»: Երեկոյան սրբազանն ասաց. «Ես էլ եմ գալիս Շահումյան»: Եկանք Քոլատակ, ուղղաթիռն իջավ, ահագին զենք-զինամթերք վերցրինք, բերինք Գանձասար: Մեր քիմիկոսները երեք լիտրանոց տարայով թույն էին սարքել, որի կողքը նստողի աչքերից արցունք էր գալիս, գլխապտույտ էր առաջացնում: Ես ու Սամվելը այդ բանկան բռնած բերում ենք: Ասացին, որ պիտի գան, Գանձասարից այն տանեն: Այդպես էլ չտարան, ռուսները տարան: Առավոտ շուտ շարժվեցինք դեպի Շահումյան: Զենքերը դրեցինք «ԿԱՄԱԶ»-ի մեջ, որը Հայոն էր քշում: Տղաները այդ «ԿԱՄԱԶ»-ով անտառների միջով պիտի հասնեին Շահումյան: Ես, սրբազանը, Կիրիլ Ալեքսեեւսկին սըրբազանի «Նիվայով» նորմալ ճանապարհով գնում էինք: Այդ ժամանակ Հաթերքի կանայք ռուսներին բռնել էին, Հաթերքի ամբողջ ճանապարհին ռուսներ էին կանգնած: Իմ, սրբազանի ու նրա վարորդի մոտ զենք կար, եթե ստուգեին, մեզ կբռնեին: Բնական էր, որ խառնվեցինք իրար: Սրբազանը դիմացը նստած էր, շրջվեց, ասաց՝ հանգիստ, եւ ատրճանակը դրեց նստարանի տակ: Մեքենան մի գնդապետ կանգնեցրեց, սրբազանի հետ բարեւեցին, հարցրեց. «Դուք այնտեղ «ԲՄՊ» տեսել ե՞ք»: Սրբազանն ասաց. «Հա, ինչ որ պրոբլեմ կար «ԲՄՊ»-ի հետ»: Գնդապետը նայեց սրբազանին, որ հոգեւորականի զգեստով էր, ես էլ էի փարաջայով, ասաց՝ դե լավ: Մի քիչ գնացինք, տեսանք՝ մեքենաների մեծ շարասյուն է: Ռուսներ էին: Մեքենան դարձյալ կանգնեցրին: Սըրբազանն ասաց, որ մեզ արդեն հարցրել են «ԲՄՊ»-ի մասին: 1991 թվականի հունիսն էր: Ճանապարհին իմացանք, որ «ԿԱՄԱԶ»-ը շուռ է եկել: Հետ գնացինք անտառ: Կիրիլ Ալեքսեեւսկին դոշ էր տալիս, որ ուղղի, բայց այդպես ուղղել չէր լինի, տրակտոր էր պետք: Մի հունական գյուղ կար՝ Մեհմանան, գնացինք այնտեղ, որ տրակտոր վերցնենք: Որ իմանում են սրբազանին է պետք, երկու տրակտոր են տալիս:

Բերում, մի կերպ մեքենան քաշում ենք: Երեկոյան հասնում ենք Շահումյան: Ես մեռոն, խաչ, ամեն ինչ վերցրել էի: Սրբազանին ասացի. «Դու գնա, շտաբում մնա»: Ասաց. «Չէ՛, ես Սամվելի հետ եմ մնալու»: Չգիտեի, որ ինքն ու վարորդը չորս օր չէին քնել: Այդ եւ մյուս գիշերն էլ սրբազանը չքնեց: Ես գնում էի դիրքեր, բայց սրբազանը չէր ուզում, որ գնայի, ասում էր. «Կողքիցս տեղ չգնաս»:

Ռուս-ադրբեջանական ուղղաթիռները գալիս էին Վերին Շենի վրա: Մենք ցրված էինք մարտի մեջ: Մեր հրամանատար Սամվելը փրկվեց: Վերին Շենից Աշոտ անունով մի տղա զոհվեց, ուղղաթիռն էր խփել: Մի շաբաթ այդ տղային չէինք կարողանում թաղել, որովհետեւ անընդհատ խփում էին: Երկու ուղղաթիռներ էին. մեկը դիրքերին էր խփում, մյուսը մտել էր գյուղի մեջ: Նրանք էլ էին խփում տանկով, զրահամեքենայով: Երբ ետ եկանք, տեսանք՝ սրբազանը վառարանի մոտ քնել է: Սրբազանի մոտ էին հավաքվել Ցվետանա Պասկալեւան, Ալեքսեեվսկին ու մտածում էին, թե այս մարդու պետքը չէ, որ դրսում իրար սպանում են: Դե, ո՞վ գիտեր, որ նա յոթ օր չէր քնել: Սրբազանը վեր կացավ, հարցրեց, թե ինչ է եղել, ասացինք. «Հե՛չ, ոչ մի բան, տուրուդմփոց է»: Ասաց. «Կներեք, ես հոգնած էի»: Այդ օրը մատաղ արեցինք Սամվելի համար: Իջեւանցի Վարդան կար, նա էր բերել գառը: Մեղրյան Շահենը բերեց, հենց այդտեղ էլ նստեցինք:

Մի հետաքրքիր դեպք եղավ: Մեր ջոկատում Հայո ու Էդո կային: Ես երաժիշտ եմ ու հարգում եմ այն մարդկանց, ովքեր սիրում են երաժշտություն: Մենք «դվիժոկ» ունեինք, միացրինք, լույսը վառեցինք ու մատաղ էինք ուտում, հանկարծ մի հարմոն սկսեց նվագել, ու մեկը թուրքերեն բայաթի էր երգում: Բոլորս կատաղեցինք, թե՝ էս ի՞նչ են հեռուստացույցով Բաքու նայում: Բայց պարզվեց, որ Էդոն հարմոն էր նվագում, Հայոն էլ բայաթի էր կլկլացնում: Մի կիթառ ճարեցինք: Կնյազն ու Սամվելը հոյակապ երգեցին: Ցվետանան երգեց «Հայդուկի երգը»: Շատ լավ ժամանակ անցկացրինք այդ օրը: Հաջորդ օրը սրբազանը պիտի գնար Էջմիածին, բայց չորս օր ուղղաթիռ չկար: Հարձակման առաջին փորձը պիտի լիներ Էրքեջ - Բուզլուխ - Մանաշիդ ուղղությամբ: Գիշերը ես ու սրբազանը գնացինք օգնություն ցույց տալու զինվորներին: Սամվելի ջոկատի տղաներից կային, Կոռնիձորի Արոյի տղաներն էին, Վերին Շենի Սամսոնը, Սեդոյ Միշիկը, Այվազյան Սմբատը, Երջանիկ Աբգարյանը, Գզողլյան Ֆելիքսը: Օրինեցինք նրանց, խաչ կախեցինք պարանոցներից: Սրբազանը գնաց: Ես ուզում էի մի կերպ պոկվել նրանցից, սրբազանը ձեռքիցս քաշեց, ասաց. «Արի՛, դեռ ժամանակը չէ»: Այդ օրը Կնյազը վիրավորվեց մեջքից, Կոռնիձորի Արոն վիրավորվեց, բայց շատ լուրջ չէր: Կնյազին տեղափոխեցին հիվանդանոց: Բժիշկներն էին Նշանը, Պետրոսյան Կոստյան, Գուրգենը,

Շիշմանյան Վարդանը, Երեւանից եկած բժիշկներ կային, որոնք Կնյազին ոտքի հանեցին:

Մի դեպք պատմեմ: Մենք շատ երկար «մոսին» ունեինք, որոշեցինք օպտիկական սարք դնել «մոսինի» վրա: Սարքը Լենինգրադից էին բերել: Ասացի. «Տանենք, կարգավորենք»: Ես էի, Գոռը, Քաչալ Արմենը: Գոռը Գյումրիի բարբառով էր խոսում, Արմենը՝ Ղարաբաղի, իսկ ես կողքից դիտորդ էի: Թուրքի դիրքերը մեր դիրքից ութսուն մետր էին հեռու, հեռադիտակ պետք չէր, բայց Գոռը հեռադիտակով նայեց, ասաց. «Ծո՛, Քաչա՛լ, էն թուրքի գլուխը կըտեսնի՞ս, կըրնա՞ս զարկել»: Արմենն ասաց. «Հա՛, միանգամից»: Նշան բռնեց ու խփեց: Գոռը հեռադիտակով նայում էր: Թուրքը ընկավ-ելավ, ընկավ-ելավ: Բայց ի՞նչ «ընկավ-ելավ»: Տեսանք՝ այդ թուրքը խրամատ է փորում, կռանում, հողը վերցնում էր: Փորներս բռնած ծիծաղում էինք: Մի գիշեր Սամվելն ասաց, որ մի անակնկալ «վիխոդ» անենք թուրքի վրա: Արդեն ժամը տասնմեկն էր: Մենք մի աղջիկ ունեինք, որ մեզ համար ճաշ էր եփում, մեր շորերն էր լվանում: Անունը Լիլյա էր, բաքվեցի փախստական էր: Սամվելին խնդրեցի ինձ էլ տանի, բայց Լիլյան չէր թողնում, ասում էր. «Մինչեւ ինձ չկնքես, չեմ թողնի գնաս»: Ասացի. «Գնամ գամ, առավոտյան կկնքեմ»: Ասաց. «Չէ՛, բա որ զոհվե՞ս»: Ստիպված գիշերը սկսեցի կընքել: Անունը Շուշանիկ էի դրել: Նա ցեպով սպորտային վերնաշապիկ էր հագել: Լվացվեց, ճակատին, քթին, ականջներին մեռոն քսեցի, ասացի. «Շուշանի՛կ, մի քիչ շորիդ ցեպը իջեցրու, կրծքիդ՝ սրտիդ կողմը քսեմ»: Նա էլ ցեպը լրիվ քաշեց: Այն կողմից Հայոն ասաց. «Քեռակին, մատաղ լինեմ, ատբոյ չի ասում, է՞...»: Մի կերպ այդ կնունքը արեցի, բայց ամբողջ ճանապարհին ծիծաղում էինք: Որ հիշում եմ այդ դեպքերը, խաղաղություն է գալիս վրաս, այն ժամանակ ավելի լավ էր:

Սամվելը եկավ Երեւան, որ զենք վերցներ: Նրան փոխարինում էր մարտակերտցի Չաուշ Լյովան: Էդմոնդ Բարսեղյան կար, ասաց. «Գնամ մարտի, գամ, կնքիր մեզ»: Կարաչինարի մարտն էր: Ասացի՝ կկնքեմ: Հոյակապ տղա էր, շատ լավ երգում ու նվագում էր, իր գրած բանաստեղծություններն էր կարդում: Առավոտյան մարտի ժամանակ լսեցի, որ Էդմոնդը զոհվեց: Նա ամուսնացած էր, կինը հղի էր, իր տղային էլ չտեսավ: Էդմոնդի կինը՝ Նարինե Աղաբալյանը, այժմ Արցախի հեռուստատեսությունում է աշխատում:

Բ. - Նա Արցախի հեռուստատեսության առաջին հաղորդավարն է:

Գ.Մ. - Շահումյանում մեր առաջին զոհը Էդմոնդն էր: Սամվելը եկավ Երեւան զենք տանելու, նաեւ Կնյազին բերեց, որ Երեւանի հիվանդանոցում բուժվի: Երեք օր հետո Սամվելը ինձ մի թուղթ տվեց, որտեղ սրբազանի ձեռագրով գրված էր. «Սամվելին լավ կնայես», իսկ Սամվելին ասել էր. «Տեր Գրիգորին լավ կնայես»: Սեպտեմբերի 13-ն էր,

ամբողջ գիշեր չէինք քնել: «ԲՄՊ»-ի թնդանոթ ունեինք, որը խախտվել էր, ուզում էինք սարքել: Մինչեւ առավոտ սարքեցինք: Սամվելը խողովակներ էր գցել, այսինքն՝ հարվածը վերցրել էր մեզ վրա, որ տղաներն առաջ գնան: Զրահամեքենայով երկու կրակոց արեցինք: Սամվելն ասաց. «Ես տղաներին մենակ չեմ թողնի»: Գնաց, ինձ ասաց. «Ա՛ռ, էս թնդանոթը, էս էլ դու...»: Թնդանոթը գալիս է, փողը հետ չի գնում, մեծ մուրճով խփում էինք փողին, որ տեղն ընկնի: Եկան, ասացին, որ Սամվելը վիրավորվել է, վերինշենցի Մհերիկը, որ մեր ջոկատ էր եկել, նույնպես վիրավորվել է, իսկ Չաուշ Լյովան զոհվել է, Սամվելի հետ Աբովյանից եկած Արամն է վիրավորվել, Վասիսդասն էլ է վիրավորվել: Սեյրան Օհանյանը միշտ գալիս էր Սամվելի ջոկատ, նա այն ժամանակ կապիտանի կոչում ուներ: Մի հայ տղա կար՝ ենթասպա Բենոն, ուզբեկներին հավաքում էր, մեզ ցինկե արկղերով փամփուշտ էր տալիս, պարկերով երկարաճիտ զինվորական կոշիկներ էր տանում: Մեր ջոկատին օգնում էր, թե՝ խրամատը այստեղ փորեք, ավելի ճիշտ կլինի, եւ այլն: Սեպտեմբերի 14-ի գիշերը Սամվելը զոհվեց: Նրան վիրահատեցին, բայց չդիմացավ: «ԱԿՍ» ավտոմատի «5,45»-ի գնդակից էր վիրավորվել. լրիվ խառնել էր իրար: Բժիշկները զարմացել էին, որովհետեւ Սամվելը կես ստամոքս ուներ, այն վիրահատած էր: Սեյրան Օհանյանին մայորի կոչում են տալիս: Նա իր տղաներով, խոզ, ձմերուկ, ուտելիք վերցրած, գալիս է, տեսնում, որ Սամվելը զոհվել է: Սամվելի մարմինը բերեցինք Աբովյան: Սրբազանը չկարողացավ գալ Աբովյան, քանի որ զբաղված էր: Ահագին մարդ էր եկել թաղմանը: Նրա ջոկատի տղաներն էին եկել: Ջոկատի մեջքը կոտրվեց: Սրբազանն էլ շատ ծանր տարավ Սամվելի մահը:

Բ. - Նրա տղաները կռվեցին Կրկժանի մարտում:

Գ.Մ. - Սամվելից հետո հրամանատար դարձավ Քաչալ Ռաֆոն, որը Կարմիրից էր: Նա էլ զոհվեց: Նրանից հետո Վանյան Նիկոլը դարձավ հրամանատար: Նա Աբովյանից էր, բայց ծագումով բանանցի էր: Նա ու Կնյազը եկան Գանձասար: Ասաց, որ գնալու է Կրկժանի մարտին մասնակցի, իսկ դրանից հետո պիտի մասնակցի ինչ-որ բարեկամի հարսանիքին:

Բ. - Հիշում ե՞ս՝ ողջ գիշեր Նիկոլի հետ զրուցեցի, ձայնագրեցի:

Գ.Մ. - Հա, ճիշտ է, հիշում եմ: 1991 թվականի դեկտեմբերի 28-ի գիշերը սրբազանն իր վարորդի հետ եկավ՝ լրիվ թոզ ու դումանի մեջ կորած: Սկիհներ, եկեղեցական պարագաներ, գրքեր էր բերել: Հարցրի՝ ինչ է պատահել: Ասաց. «Լուսադեմին խփել են տանս վրա»: Շատ ուշ իմացա, թե ով է խփել եւ ում պատվերով: Գանձասարում բաղնիք էինք սարքել, սրբազանը լողացավ, եկավ, նստեցինք սեղանի շուրջը: Սրբազանը, աչքերը արցունքով լցված, ասաց. «Նիկոլը Կրկժանում զոհվեց»: Հաջորդ օրը կիրակի էր, պիտի գային, նրա մարմինը տանեին: Ես ու սրբազանը պատարագի էինք: Երբ պատարագը վերջացավ, ուղղաթիռը եկավ: Վազելով իջանք: Գանձասարի մոտ սրբազանն իբր կարուսելի համար հրապարակ էր դգրտել: Ուղղաթիռից իջան Նիկողոսյան Ստյոպան, Միշան: Երբ ասացինք, որ Նիկոլը զոհվել է, շոկի մեջ էին, չէին հավատում: Նրանք Նիկոլին Ստեփանակերտից վերցրին, գնացին: Սրբազանը գնաց Ստեփանակերտ: 1992 թվականի հունվարի 6-ին, երբ Ազգային ժողովի նիստն էր հրավիրվում, գիշերը ուղղաթիռը Վերին Հոռաթաղում է իջնում: Մեքենաները չեն կարողանում գալ, քանի որ ճանապարհները փակ էին: Զորի Բալայանն էր, Լեդի Քոկսը, ահագին անգլիացիներ, Բակուր Կարապետյանը, կարծեմ՝ Ռոբերտ Մավիսակալյանը... Ոտքով գալիս էիք Գանձասար: Սրբազանը մնացել էր պատարագին, որովհետեւ ասել էին. «Քո ներկայությունը շատ կարեւոր է»: Դուք մեքենաներով գնացիք, երեկոյան սրբազանը Շահենի հետ եկավ: Շատ ներվային վիճակ էր: Ես մանրամասն չգիտեմ, խմորումներ կային արդեն՝ ով ում հետ է: Մի շատ կարեւոր բան եմ ասում. սրբազանը որ գալիս էր Գանձասար, Լեոնիդ Ազգալդյանը, Արկադի Կարապետյանը գալիս, գիշերները մնում էին, սրբազանի հետ խոսում: Մի անգամ Վազգեն Սարգսյանը, Մուրադ Պետրոսյանը, եւս մի քանի հոգի եկան: Ուղղաթիռ պիտի գար, ճանապարհ չկար, այսինքն՝ եղանակ չկար: Վազգեն Սարգսյանը ասաց. «Խնդրում եմ, տղերք, աղոթեք, թող ճանապարհ լինի, մառախուղը բացվի, որ ես կարողանամ թռնել, Երեւան պիտի գնամ»: Երկու օր այդտեղ էր, երկու օրն էլ երգում էինք, իրար ոգեշնչում: Այդտեղ Պարգեւ սրբազանն ասաց. «Դու մեր ազգի սպարապետն ես»: Վազգենի դուրը շատ եկավ «սպարապետ»-ը, ասաց. «Հա՛, ես սպարապետ եմ, սրանից հետո ինձ սպարապետ կասեք»: Սրբազանն էլ ինձ անընդհատ ուղարկում էր «պրատիվատումաննի» աղոթք անելու, որ եղանակը բացվի, Վազգենը թռչի: Ես էլ այնքան «պրատիվատումաննի» աղոթք եմ անում, որ մառախուղը ավելի է լցվում: Վերջը՝ ուղղաթիռը եկավ, ու Վազգենը գնաց:

Նիկոլը որ զոհվել էր, Սամվելի ջոկատի տղաները նոր հրամանատար էին ուզում նշանակել: Որոշեցին, որ Քաչալ Ռաֆոն պիտի լինի: Քաչալ Ռաֆոն էլ զոհվեց: 1992 թվականի ապրիլին տեր Հովհաննեսը ձեռնադրվեց քահանա: Քառասունքը անցկացրեց Մայր տաճարում, երկու տարի նա այնտեղ էր սովորել: Ապրիլին եկավ Գանձասար: Ապրիլի 24-ին եղեռնի զոհերի հիշատակին պատարագ էր մատուցվում: Սրբազանը եկավ, պատարագն արեց եւ ասաց. «Շատ մոտ է Շուշիի ազատագրումը»: Ապրիլի 26-ին՝ Շուշիի մարտից առաջ, ասաց. «Հոգեւորականի կարիք կա»: Թեմում ինչքան հոգեւորական կար, իր հետ

բերել էր. տեր Կորյունն էր, տեր Հովհաննեսը, տեր Թադեւոսը, Հայր Վրթանեսը, ես էլ Գանձասարի վանահայր էի համարվում: Ես փորձ ունեի: Ասացի. «Ես պիտի գնամ, ուրիշ էլ ո՞վ պիտի գնա»: Սրբազանն ասաց. «Նստի՛ր տեղդ, քեզ որ մի բան լինի, ես Անոյին ի՞նչ պատասխան պիտի տամ»: Հետո զգացի, որ որոշել է ինձ տանել: Պարզվում է՝ Արկադի Իվանիչն ասել էր, որ «Քսանվեցի» դիրքում հոգեւորականի կարիք է զգացվում: Այդ դիրքի հրամանատարը՝ Հովհաննիսյան Յուրան էլ ակնկալում էր մի դրբով հոգեւորական տեսնել: Սրբազանը ինձ բերեց: Արկադի Իվանիչն իմ մասին լսել էր՝ կապված Շահումյանում իմ առաքելության հետ: Ձեռքս սեղմեց, ասաց. «Հա՛, էս նշանավոր տեր Գրիգորն է՞»: Յուրան նայեց ինձ ու սրբազանին, առանց ամաչելու ասաց. «Սրբազա՜ն, մենք քեզնից դուխով տերտեր ենք ուզել, դու էս դոդին, չորս աչքանուն բերել ես՝ ի՞նչ անենք»: Սրբազանն ասաց. «Յուրա՛, հանգիստ, դու չգիտես, ամեն ինչ լավ կլինի»: Սրբազանը ձեռքը դրեց գլխիս, աղոթեց, ասաց. «Դու սրանից հետո բանակի հոգեւոր հովիվն ես»: Ես դառնում եմ ազատագրական բանակի հոգեւոր հովիվը: Սկզբում Ստեփանակերտում էի, բայց Յուրան ասաց, որ պիտի գնամ դիրքեր, քահանան պիտի ժողովրդի հետ լինի: Արկադի Իվանիչն ասաց. «Ահա՛ քո տեղը», ու ինձ մահճակալ տվին: Սրբազանն ասել էր, որ Արկադի Իվանիչն ինչ ասի՝ պիտի լսեմ: Նրանց ասացի, որ սրանից հետո մինչեւ սեղանները չօրհնեմ՝ ոչ ոք հաց չուտի: Առաջին, երկրորդ օրերը սեղանը օրհնում եմ, հաց են ուտում, երրորդ օրը այնտեղ չէի, որ օրհնեի: Արկադի Իվանիչը ջղայնանում է. «Գտե՛ք նրան, ինչ-որ մեկը գիտե՞ այդ աղոթքը»: Հետո ինձ ասացին. «Մեզ էդ աղոթքը սովորեցրու, կարող ես ընդհանրապես չգալ»:

Մայիսի 1-ն իմ ծննդյան օրն է: Այդ օրը սրբազանի վարորդը եկավ Արկադի Իվանիչի մոտ, ասաց. «Սրբազանը տեր Գրիգորին կանչում է»: Ես էլ մոռացել էի, որ իմ ծննդյան օրն է: Գնացինք, հենց վարորդ Կարենի տանը նշեցինք: Արկադի Իվանիչն ասել էր. «Ուղիղ ժամը տասնմեկին ինձ մոտ լինես»: Ես էլ շուտ գնացի, մտածեցի՝ կես ժամ շուտ գնամ, անհանգիստ մարդ է: Բուշլատը ուսերին գցած՝ գնում-գալիս էր, մտածում էր: Տեսավ, որ շուտ եմ եկել, ասաց. «Գնա քնիր, որ առավոտ շուտ պիտի լինես «Քսանվեցի» դիրքերում»: Ինձ տարան «Քսանվեցի» դիրքերը: Մի ավտոմատ էր դրված, հարցրի՝ ու՞մն է: Ձայն չկար: Վերցրի, մաքրեցի: Յուրան եկավ, ասաց. «Տեր Գրիգոր, գնա դիրքեր, ժողովրդին ոգեշնչի՛ր»: Ասացի՝ խնդրե՛մ: Ավտոմատը գցեցի ուսիս, որ գնամ: Յուրան ասաց. «Էս ի՞նչ ես անում, քոնը խաչն է, խաչը վերցրու, գնա»: Խաչը վերցնում եմ: Ինձ երկու ուղեկցող էին տվել: «Քսանվեցում» տասը դիրք կար: Գնացինք, տեսանք, որ մեր ուղղությամբ սնայպեր է աշխատում: Յուրան հասկացավ, որ գոնե զենք

պետք է ունենամ: Տեսավ, որ ես Սամվելի տված «ՏՏ»-ն հանում եմ ու կրակում, ասաց. «Տեր հայր, ցավդ տանեմ, ինչ ուզում ես արա, հալալ է քեզ»: Այդ օրվանից մենք շատ մտերիմ էինք: Ներողություն խնդրեց, ասաց. «Դե, գիտես, մարտական հոգեւորականը մի քիչ ուրիշ ձեւի պիտի լիներ, մտքումս ուրիշ տպավորություններ էի պատկերացնում, բայց լավ է, որ հենց դու եկար»:

Մարտը պիտի մայիսի 5-ին սկսվեր, բայց այդ օրը ձյուն եկավ: Արթուր Ալեքսանյանի ծննդյան օրն էր, գնացինք նշելու: Մայիսի 8-ի գիշերը մարտը սկսվեց: Առավոտյան ռացիայով իմանում եմ, որ սրբազանը ինձ է ման գալիս: Ես «Քսանվեցի» դիրքում էի, մեքենայով Ալեքսանյան Արթուրի հետ գնացինք: Բայց մինչ այդ գնացինք, որ Լոլոյի համար արյուն տամ: Նա վիրավորվել էր նռնակի պայթյունից: Ասել էին, որ Լոլոն «երկրորդ-բացասական» կարգի արյուն ունի: Իմն էլ է արյան այդ կարգը: Հասանք այնտեղ, ասացին, որ Լոլոյինը «երկրորդ-դրական» արյուն է: Բայց «երկրորդ-բացասական» կարգի արյունը դեֆիցիտ էր, խնդրեցին երկու հարյուր գրամ արյուն տալ: Գնացի որ Լոլոյին տեսնեմ, այնտեղ չէր, այդքան վիրահատությունից հետո կաթիլայինը ձեռքին ման էր գալիս: Ասաց. «Տեր Գրիգոր, դու գնա, ուզում եմ ջիգյարով հայհոյել»: Այդ օրը կարեւոր էր նրանով, որ Շուշին ազատագրվեց: Ամբողջ օրը ես ու սրբազանը միասին էինք, որոշեցինք գիշերը ժամը մեկին գնալ Գանձասար: Սրբազանին ասացի. «Լավ կլիներ, չէ՞, որ Վարդանյան Սամվելը այս օրը տեսներ»: Հուզվեցինք: Առաջին անգամ տեսա, որ սրբազանը հենց այնպես փամփուշտ է կրակում: Համ զոհվածների հիշատակի, համ հաղթանակի համար էր: Երկուսս էլ մեկական փամփուշտ օդ կրակեցինք: Մինչեւ լույս հիշեցինք: Հետո եկանք Երեվան: Լաչինը որ ազատագրվեց, Երեւանից ավտոբուսով գնացինք Ղարաբաղ: Ես Գանձասար չգնացի, համարվում էի բանակի հոգեւոր հովիվ, մնացի Ստեփանակերտում: Ստեփանակերտի Կուլտուրայի տան երկրորդ հարկը պիտի ժամանակավոր եկեղեցի դարձնեինք: Ժամերգություն եղավ: Սրբազանը շատ մեծ ազդեցություն ունեցավ ինձ վրա, նա ինձ քահանա ձեռնադրեց, իմ հոգեւոր հայրն էր: Ղարաբաղյան շարժումը շատերիս դարձրեց հայրենասեր, թե չէ մենք շատ հեռու էինք հայրենասիրություն հասկացողությունից: Վերջին վեց տարին ես հայրենասեր չեմ, որովհետեւ խմելը թարգել եմ: Սրբազանի ներկայությունը ամեն տեղ տղաներին ոգեշնչում էր, ասում էին, որ եթե սրբազանը մեզ հետ է, ուրեմն՝ խաղ չկա: Սրբազանի խոսքն էր՝ «Զանգը հնչի, թուրքը փախչի»:

Գնում էինք Մարտունի՝ Ամարաս, սարի դոշից նայում էինք: Այդ ժամանակ Շուշին թուրքերի ձեռքին էր: Որոշել էինք, որ առաջին պատարագը սրբազանն է անելու, երկրորդը՝ ես: Այդպես էլ եղավ: Որոշել

էինք նաեւ, որ նույնը Կիրովաբադում՝ Գանձակի եկեղեցում ենք անելու: Դա էլ կլինի:

Պայման կար, որ մի տարի ծառայելու եմ որպես քահանա: Սրբազանն ասաց. «Լավ, այդ մի տարին ծառայել ես, եւ լավ ես ծառայել»: Ասացի, որ ուզում եմ գնալ Երեւան, քանի որ ընտանիքս այնտեղ է: Ասաց. «Յոթ երեխայի պատրաստիր որպես սարկավագ, դրանից հետո ազատ ես»: Կարենը, որ հիմա «հայր Հակոբ» է դարձել, քսան հոգու հավաքեց: Ընտրեցինք տասներկու հոգու, որ ես նրանց հետ պարապեմ: Այդ տասներկուսից չորսը հիմա քահանա են: Այդ տասներկուսը այն երեխաներն էին, որ ժամերգությունների էին մասնակցում: Կային, որ հայերեն կարդալ չգիտեին, բայց արդեն հոյակապ ժամերգություն էին անում: Գնացինք Գանձասար, նրանք փլված շենքը մաքրեցին, տակից խաչքարեր հանեցին, որ հիմա Գանձասարի պատին կպցրած են: Շատ լավ դպրանոց էր դարձել: Սրբազանին միշտ առաջարկում էի պաշտոնապես հայտարարել, որ մենք դպրանոց ունենք: Իսկապես հոյակապ, չտեսնված երեխեք էին: Նրանցից մեկը՝ Թովմասյան Արմենը, պատերազմի ժամանակ՝ 1994 թվին, զոհվեց: Նրանցից Սերգեյ Սահյանը հիմա մայոր է, շուտով փոխգնդապետի կոչում կստանա: Կապիտան ունենք այդ երեխեքից: Ով չմնաց եկեղեցում՝ իրեն նվիրեց զինվորական կյանքին: Միայն մի հոգի՝ Կարենչիկը, համակարգչային գործ է անում: Ստեփանակերտի մարզադաշտում այդ երեխաների հետ ֆուտբոլ խաղացինք: Բակու՛ր, հիշո՞ւմ ես, ձեր թիմը մեր թիմին հաղթեց, տասներկու հոգուն բաժանեցինք երկու խմբի, մեր թիմը պարտվեց: Բայց շատ լավ օր էր: Մի հետաքրքրի դեպք եղավ. տասնչորս-տասնհինգ տարեկան ղարաբաղցի երեխաներ էին, ասացի. «Երբ գալիս եք Գանձասար, հետներդ հողաթափ բերեք»: Մի Արսեն ունեինք, նա երկու հատ բահ էր բերել: Ասում եմ. «Ա՛յ տղա, էս ինչի՞ ես բերել»: Ասաց. «Բա չասի՞ր՝ հողաթափ բեր»: Նրանք էին ճաշ եփում, գիշերները հերթապահում:

1992 թվականի օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներն էին, արդեն վիճակը լրջացել էր: Ժուռնալիստ Սախինով Էդիկն ու հեռուստատեսության ռեժիսոր Բադունց Էդվարդը գնում են Մարտակերտ, որ պատերազմի կադրեր նկարեն: Այնտեղ Ցվետանա Պասկալեւան էր: Դանիելյան Նորիկն ասում էր, որ ոչ մի օպերատոր իրավունք չունի գալ: Բադունց Էդվարդը չէր ասել, որ ինքը ծագումով մարտակերտցի է, ասել էր, որ իր մանկության ընկերը տեր Գրիգորն է: Նորիկն ասել էր. «Որ տեր Գրիգորի անունը տվեցիր, կարող ես այստեղից նկարել»: Գիշերը Սախինով Էդիկն ու Բադունցը ցեխակոլոլ եկան Ստեփանակերտ՝ ինձ մոտ: Բադունցն ասաց. «Անունդ կանաչ ճանապարհ է դարձել»: Ասացի. «Դա իմ անունը չէ, կարող էիք ասել, որ Պարգեւ սրբազանի հետ եք սովորել, այդ դեպքում միայն հեռու տարածությունից չէիք նկարի»: Նրանք միասին Բրյուսովի անվան լեզվաբանության ինստիտուտում են սովորել: Էդիկ Բադունցը շատ անգամ եկավ, ֆոտոնկարիչ Մանգասարյան Ռուդիկը եկավ, Ռոբերտ Խաչատրյանը եկավ մի քանի անգամ, Դավթյան Կոլյան էր այնտեղ, դրանից առաջ՝ Սիմոնյան Գագիկը:

Բ. - Երկու Գագիկներին ու Կոլյային ես էի երաշխավորել Հայկական հեռուստատեսությունից Արցախի հեռուստատեսություն փոխադրելու համար:

Գ.Մ. - Դեմուրյան Ավիկն էր հաճախ գալիս, Հովհաննիսյան Վարդանը, որ Կիրովաբադում գերի ընկավ: Լավ էր. ամեն մեկն ուզում էր ինչ-որ լավ բան անել: Շատ կարեւոր գործ էին անում: Սրբազանին ինչ պետք էր՝ Դեմուրյան Ավիկը անմիջապես ուղարկում էր: Արտասահմանից էին շատ ժուռնալիստներ գալիս. Ժիրիկն էր Բեյրութից, Ժամկոչյան Մարտիրոսը Ավոյի հետ էր եկել, «Խաչակիրների» Կարոն Ֆրեզնոյից էր եկել, նա իր տունը գրավ էր դրել, զենք-զինամթերք ու ամերիկյան զինվորական համազգեստ էր բերել: Շատերն էին գալիս: Մարտից որ գալիս էինք կամ ինչ-որ «վիխոդ» էինք անում, տղաներից՝ ով հանգիստ էր, ազատ էր, տաշտով տաք ջուր էր բերում, որ ոտքերս լվանային: Չէի թողնում, ասում էի՝ ես կլվանամ, ասում էին՝ դու հոգնած ես, մենք կլվանանք: Բայց 1992 թվին Մեծ պահքի վերջին շաբաթն էր, Ավագ շաբաթվա «Ոտնլվայի» օրը Գանձասարում ջոկատի բոլոր տղաների ոտքերը ես սիմվոլիկ ձեւով լվացի: Ես նրանց հատուկ կանչել էի Գանձասար, ասացի, որ սա պատասխանն է: Ասացին. «Այսպիսի պատասխան մենք չէինք էլ երազում»: Շատ կարեւոր էր այդ ախպերությունը, ընկերությունը: Ընտիր ջոկատ էր, Սամվելը շատ լավ էր ընտրել: Նրա դաստիարակությունն էր: Ջոկատը շատ զոհեր տվեց: Արծվաշենում կռվեցին, Սարսանգի ազատագրմանը մասնակցեցին: Սարսանգի ազատագրումից եկանք, ահագին ձուկ էինք բերել: Վասիսդասն իր ձեռքով ձուկը լվաց, կտրատեց, պոմիդոր, բիբար, կարտոֆիլ դրեց հետը, ասաց. «Մի օյին խաղում ենք՝ ձուկը պատրաստ է»: Մի օյինը դարձավ երկու, երեք, մի թայլա, երկու թայլա: Շրջվեց, ասաց. «Ա՛յ կնիկ, էդ ձուկը ի՞նչ դառավ»: Կինը ասաց. «Եփել է, երկու անգամ խառնել եմ, մի անգամ էլ խառնեմ, կբերեմ»: Վասիսդասը հումորով մարդ էր, ասաց. «Մի անգամ էլ խառնիր՝ տար տուր շներին»:

Վերին Շենում էինք: Ում տունը որ պահում էինք, Տիգրան էր անունը: «Գրադով» խփել էին, նրա այծը սատկել էր: Հալալ կեսը մեզ տվեց, թե՝ տղե՛րք ջան, ձեր ցավը տանեմ... Մենք էլ ուտելու բան չունեինք: Տղաները երկու սագ էին խփել, ասացինք. «Բերեք խորովենք, ուտենք»: Հրամանատարն այդտեղ չէր, Երեւան էր գնացել: Միսը կտրր-

տեցինք, ասացինք. «Տիգրան ջան, կգա՞ս մեզ հետ ուտես»: Սագի միսն էլ էին կտրտել, դրել: Տիգրանը եկավ, ասաց. «Տղե՛րք, երկու դազերս չկան»: Ասինք. «Ո՞նց թե չկան»: Տղերքը միանգամից շուռ են տալիս, էծի միսը դնում են վերեւ: Սա գալիս, լավ էլ ուշադիր նայում է, որ դազերի մեջ էծի միս է: Ասաց. «Ձեր ցավը տանեմ, դուք ձեր տուն ու տեղը թողած եկել, մեր գյուղն եք պահում, ձեր կյանքին մեռնեմ, ձեր կենացն եմ խմում»: Հրամանատարը այնտեղ չէր, խմիչք կար: Վասիսդասն ասաց. «Որ դու ըսենց լավ կենաց ես ասում, էս էծի քարաջիկը կեր»: Կերավ, թե՝ «Հա, լավ ա եփել, բա էծը քարաջիկ ունի՞»: Վասիսդասն ասաց. «Քո նման էշն էլ ունի, կե՛ր»: Վասիսդասը գնում է շուկա, հարցնում. «Բաբո, էս որձակը ի՞նչ արժի»: Թե՝ քսանհինգ մանեթ: Ասում է. «Իյա՜, կարող ա՞ կեռենքն էլ ոսկի ես գցել, որ քսանհինգ մանեթ ես ասում»: Մահացավ երիկամների հիվանդությունից, հոյակապ տղա էր: Այդ ջոկատի մասին կարելի է անընդհատ խոսել: Էդմոնդի մասին ո՞նց կարելի է չխոսել: Զարգացած, վերին աստիճանի զգոն, չտեսնված տղա էր: Իսկ հրամանատար Սամվելի հետեւից կարող էիր աշխարհի ծայրն էլ գնալ: Փոքր-մոքր էր, բայց դուխը տեղն էր: Այդպես կարելի էր Ավոյի հետ գնալ:

«Գրադը» որ սկսեց խփել Գանձասարին, սրբազանը ասաց՝ առանց պանիկայի, ու մեզ տարավ ապահով տեղ: Սարի լանջին կանգնեցինք, որ ոնց էլ խփեն, մեր վրայով անցնելու էր: Սրբազանի հետեւից էլ կարող ես գնալ: Նրանք այն մարդիկ էին, որ իրենք էին առաջ գնում, օրինակ էին ծառայում, զինվոր էին, այլ կերպ չէին կարողանում: Օրինակ՝ Ցուրան հրաման չէր տալիս, գլուխը կախ գնում էր, եւ նրա հետեւից անկախ քեզնից գնում էիր:

Շահումյանում էինք, թուրքերը գրադով խփում էին: Պիտի թաքնվեինք, ուրիշ ճար չկար: Ես ասել էի, որ մկրտվելուց հետո չպիտի համբուրվեն, լվացվեն: Լիլյա-Շուշանիկն էլ էր մեր ջոկատում: «Գրադը» որ խփում է, նրան գրկում, փախցնում են: Ասում են. «Տեր Գրիգոր, մեղք ենք գործել, բայց ուրիշ հնար չկար»: Ընկել էին Լիլյայի վրա, որ նրան բան չպատահի: Լիդա անունով մի ռուս աղջիկ էլ կար: Ես այդ ջոկատի բոլոր չկնքված տղաներին կնքեցի: Ամեն մեկը մի քանի անուն ուներ: Մի Ցասաուլ ունեինք, նրան Սաշիկ էին ասում: Մտածում էի, որ անունը Ալեքսանդր է, կնքելիս կդնեմ Ալեքսան: Ասացի. «Սաշի՛կ, անունդ փոխում եմ, Ալեքսանդրի փոխարեն Ալեքսան եմ դարձնում»: Ասաց. «Ինչու՞, ես իմ իսկական անունն ունեմ՝ Սուրեն»: Քաչալ Արմենին ասում եմ՝ Արմեն, ասում է՝ ես Արմեն չեմ, Աշոտ եմ: Սամվելն էր ջոկատի քավորը: Հավատքը մեծ էր, որ Աստված իրենց կպահի: Օրը հարյուր մարդու կնքում էի: Կարաչինարում եմ կնունք արել, Վերին Շենում, կողքի գյուղերից էին գալիս կնքվելու: Վերին Շենը լցվել էր, երբ

գյուղի մարդկանց կարելի էր մատների վրա հաշվել: Կյանք կար, եռուզեռ: Բուզլուխն ու Մանաշիդը որ ազատագրեցինք, մի ցնդելու բան էր: Ազատագրմանը մասնակցում էին Շահումյանի ջոկատի տղաները՝ Մեղրյան Շահենի ղեկավարությամբ, Կոռնիձորի Արայիկն էր, Մանվելի «Արաբոն» էր, «Արամոն»: Բաժանվել էին երեք տեղ: Սամվելի ջոկատն էլ էր, որը բացատում էր, այսինքն՝ Սամվելը հարվածը վերցնում էր իր վրա: Նույնը «Քսանվեցում» էր. «Քսանվեցը» հարվածն իր վրա էր վերցնում: Այդ ճանապարհով մերոնք մտան Շուշի: Հետաքրքիրն այն էր, որ «Արամոյի» տղերքը այդ բարձր սնայպերին խփեցին: Մեր ջոկատի տղերքը որ գնացին, Արաբոյի Մանվելը եկավ էլի նույն ճանապարհով: Բայց արդեն Սամվելը վիրավորվել էր: Մենք զոհեր ունեինք, մտան մեր զոհերին դուրս բերին: Սամվելին շատ ուշ բերեցին, որովհետեւ վախենում էին, թե տեղանքը ականապատված կլինի: Բայց եթե ականապատված լիներ, Սամվելը ո՞նց կարող էր մինչեւ սարի դոշը հասնել: Այդտեղից նրան բերեցինք, բայց չկարողացանք փրկել: Կոռնիձորի Արոն ձախ թեւով էր մտել: Մեր թնդանոթն էր, որին կվալտով էինք խփում: Ռեզերվ ունեինք: Մեղրյան Շահենի եղբայրները՝ Պողոսն ու Պետրոսը, ռեզերվ ունեին, որ ցանկացած պահի մտնում էին: Արոյի տղաներից մեկը վիրավորվեց: Մեր ջոկատը շատ վիրավորներ տվեց: Երեք հոգի զոհվեցին: Սամվելը զոհվեց, Միերիկին բերեցինք, բայց չկարողացանք փրկել, Չաուշ Լյովան զոհվեց: Բուզլուխն ու Մանաշիդը ազատագրելուց հետո Սամվելի դիակը բերեցինք: Մեր այնտեղ մնալը այլեւս իմաստ չուներ: Դրանից հետո շտաբը Թոդանում էր: Ես ու սրբազանը գնացինք Թոդան, վիճակը այնտեղ էլ լուրջ էր: Իսկ Շուշիի ազատագրումից երկու ամիս հետո Շահումյանը ուղղակի հանձնվեց: Ես շատ էի ուզում գնալ Գյուլիստան՝ «Եղնիկներ»: Սրբազանը չէր թողնում: Բնական է, որ Մեղրյան Շահենի հետ պիտի գնայի, նրա հետ էլ վերադառնայի: Մի օր իմացանք, որ Մեղրյան Շահենը զոհվել է, նրա ուղղաթիռը խփվել է:

Ֆիլմ են նկարահանում, որ Վաղուհասը ազատագրեցին «Մահապարտները», բայց նրանցից ընդամենը վաթսուն հոգի էին հասել Գանձասար, ու Գանձասարում էր ամբողջը տեղակայված: Լավ, ասենք, «մահապարտները» անտառով մտան Վաղուհաս, գերեզմանում կռիվը եղավ: Հետո Մորուք Ռաֆոյի տղաները վերցրին, չէ՞: Մենք ամբողջը գիտենք: Հետո այսպես եղավ. «մահապարտներին» իզուր զոհ ենք տվել: Զոհ չենք տվել: Ցանկացած մարդու էլ որ հարցնում ես, ասում է. «Լավ, է՛լի, ախպոր պես...»: Այդպես չի կարելի սարքել: Հիմա տարին մի հուշարձան են տանում Գանձասար՝ «Արծիվ 1», «Արծիվ 2», «Արծիվ 25», «Արծիվ 36»... Չես հասկանում: Այնպիսի բաներ են գրված: Սերոբյան Ահդան ջոկատ էր ման գալիս, իմացել էր մեր ջոկատի մասին,

եկավ, թե՝ ես կդառնամ ձեր բուժքույրը: Տղաները ասացին. «Չէ՛, թող գնա»: Ինքը այդպես փնտրեց, փնտրեց, իսկ հետո պարզվեց, որ նա դարձել է «կռված սանիտարկա»: Արխիվում գրված է, որ ջոկատների հետ երկու հարյուր քառասուն բուժքույր են եղել, նրա մոտ այդ թիվը դարձել էր հազար երկու հարյուր: Այդ կինը արդեն սովոր էր ստին, գիտեր, որ այդ սուտը անցնում է: Ես չեմ կարող նրան մեղադրել: Չինացին ասում է՝ «Հազար անգամ ասված սուտը դառնում է ճիշտ», առավել եւս՝ գրված, տպված սուտը: Հանրագիտարանը որ կարդացի, տեսա՝ ահագին մարդկանց անունները չկան գրված, այնպիսի մարդկանց, որոնց անուններն իսկապես պիտի լինեին: Տղաներին ասում եմ. «Ոչինչ, հո քրդերի առաջնորդ Օզալանի, Հեյդար Ալիեւի, մյուսների անունները կան, ուզում էիք նրանց հետ մի գրքու՞մ լինել»: Գոնե այդ ձեւով սփոփվում ենք: Նույն կերպ եկան ինձ ասացին. «Տեր Գրիգոր, մենք գիտենք, որ դու կռվել ես, բայց մեզ ճիշտ հասկացիր, ղարաբաղյան պատերազմի հերոս հոգեւորականը պիտի ղարաբաղցի լինի»:

Բ. - Ո՞վ է այդպիսի բան ասել, դա անմտություն է:

Գ.Մ. - Դա քաղաքականություն էր: Դրա համար էլ տեր Հովհաննեսը դարձավ հերոս: Տեր Հովհաննեսից բացի՝ ուրիշ ո՞ր հոգեւորականին գիտեն, որ ձեռքը զենք է վերցրել: Ու այսօր տեր Հովհաննեսը այնպիսի բաներ է պատմում, որ եթե ուշադիր լսես, կպարզվի, որ Ղարաբաղը ծայրից ծայր նա է ազատագրել, բոլոր մարտերին մասնակցել է: 1990-92 թվականներին ես Գանձասարի վանահայրն էի: Ոչ ոք չի հիշում դա, կյանքում իմ անունը չեն տա: Այդ նույն հանրագիտարանում, ես չգիտեմ, թե ով է գրել «Արցախի թեմն ու նրա հոգեւորականները պատերազմի՝ տարիներին» գլուխը, Հովհաննեսի մասին առանձին հոդված է գրված, որ Գանձասարը նա է պահել: Նույն տեղում գրված է. «Հայր Վրթանես - մասնակցել է Ամարասի ու Գանձասարի ազատագրմանը», կամ գրված է. «Տեր Կորյունը մասնակցել է Գանձասարի ու Լաչինի ազատագրմանը»: Այդպիսի բան չի եղել: Հովհաննեսին միկրոֆոնը դեմ ես տալիս, ասում է. «Ես կնքել եմ, օրհնել եմ, ուղարկել...»: Գառնիկյան Գրիգորի գիրքը, ինչպես եւ հանրագիտարանը կարդալիս այն տպավորությունն ես ստանում, թե նա հերոս է, «Մարտական խաչ» ունի:

Ազգալդյան Լեոնիդին առաջին անգամ տեսա Շահումյանում: Ապրիլ ամիսն էր: Շատ լավ, ցնդելու տպավորություն ստացա: Նա զենքը ձեռքից ցած չէր դնում անգամ հաց ուտելիս, չէր ծխում, չէր խմում: Ես շատ շուտ զգացի, որ նա չի ընդունում խմող, ծխող զինվորականին: Ես էլ նրա ներկայությամբ չէի ծխում ու խմում: Նա շուտշուտ էր գալիս Գանձասար սրբազանի հետ հանդիպելու: Երեկոյան մոմ էր վառում: Գիտեր, որ ես խմում եմ առիթից առիթ, ծխում: Իրեն

լավ էր զգում, ասում էր՝ կարող եք ծխել: Ասում էի՝ չէ՛: Զարմացավ, երբ իմացավ, որ նախկինում երաժիշտ եմ եղել՝ ջութակահար: Հայտնի մի խումբ կար՝ «Ռետրո», որտեղ նվագում էին Չատինյան Վազգենը, Լյովան, Բադունց Էդիկը, նա կիթառ էր նվագում, իսկ բասը ես էի նրա հետ նվագում: Հիմա Էդիկը Ամերիկայում է, Վազգենը Մոսկվայում է, Ռուբո ունեինք, նա էլ է Ամերիկայում: Լավ խումբ էր: Լեոնիդը զարմացավ, որ երաժիշտ եմ եղել ու հիմա հոգեւորական եմ եւ ձգտում եմ պաշտպանել հայրենիքը: Մենք մտերմացանք, ու ինձ համար մեծ ցավ էր, որ նա զոհվեց: Մեծ ցավ ապրեցի, երբ «Խաչակիրների» Կարոն զոհվեց: Լեոնիդի ու Կարոյի մեջ մեծ նմանություն կար՝ ջոկատ ստեղծելու, կազմակերպելու առումով: Առաջին անգամ Լեոնիդին եմ տեսել, որ չի ծխում: Նաեւ իմ հրամանատար Սամվելը տղաների ներկայությամբ չէր ծխում, որ հանկարծ նրանք չգայթակղվեն: Դա շատ կարեվոր էր, եւ տղաները գնահատում էին: Մի անգամ Գոռը զենքը մաքրում էր, հանկարծակի այն կրակեց: Վերեւում ռուս զինվորը, որ փախել էր ռուսական բանակից եւ եկել էր մեր ջոկատ, քնած էր: Ծածկը փայտից էր: Սամվելը սփրթնեց, լրջացավ, բարձրացավ վերեւ, ասաց. «Сава, сынок, ты жив?»: Բայց Սաշան քնած ոչինչ էր զգացել: Մտածեցինք, թե Գոռի վերջը եկել է: Գոռը կանգնել էր, չէր ուզում խոսել: Սամվելն ասաց. «Դե, հիմա բան էր՝ եղավ, դու էլ ես իմ տղան, նա էլ, ես բոլորիդ համար պատասխանատու եմ»: Զգացի, որ նույնը տեսել եմ Լեոնիդի մեջ: Նա էլ էր պատասխանատվություն զգում, իր տղաներին չէր թողնում խմեին, որ գիտակցությունը չկորցնեին, իսկ ծխելն արգելում էր, որ հանկարծ հետախուզության գնալիս չհազան: Նրա տղաներից մեկն ինձ պատմեց, որ խարույկի շուրջը, երբ կրակի ծուխը բարձրացել էր, ինքը ծխում էր, Լեոնիդը նկատել էր եւ ասել. «Վե՛րջ, դու այլեւս իմ զինվորը չես»: Հրամանի կատարումը ես Լեոնիդի եւ մեր ջոկատում եմ տեսել:

Փարաջայով ինձ մեկը տեսավ, Երեւանից էին եկել այդ տղաները, ասաց.

- Ապ ջան, դու էս ո՞ր ջոկատից ես:

- Վերեւի:

- Վա՜յ, ես Աստծու կյանքին մեռնեմ, մենք էլ ենք այդ ջոկատից, հիմա ի՞նչ, բոլորս այդ դեյրե՞ն հագնենք:

Արտասահմանից մի քանի հոգի եկել էին: Մեկը հունական մի թերթի թղթակից էր, կարծեմ՝ Դինա Վայենա էր անունը: Տեսել էին, որ ես կնունքներ եմ անում: Գնացել, համարյա խճճվել էին չեզոք գոտում: Սամվելի ջոկատը պիտի գնար, նրանց ետ բերեր: Ես էլ զենքը ձեռքիս գնացի: Ինձ տեսան, ասացին՝ «Դելի բաբա (խենթ տերտեր), այս ի՞նչ ես անում»: Նրանց համար ես մնացի որպես գիժ տերտեր:

Պատմում է Համլետ Հարությունյանը
(«Արցախ» ՀՄ նախագահ, 1999-ից՝ ՀՀ ԱԺ պատգամավոր)
15.04.2006թ., Երեւան

Հ.Հ. - Ծնվել եմ 1947 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Կարծում եմ, որ Ղարաբաղում ծնված ցանկացած մարդ շարժման հետ կապ ունի իր ծննդյան օրից, որովհետեւ շարժման կոդը ղարաբաղցիների մեջ դրված է այն ժամանակվանից, երբ նա ընկավ Ադրբեջանի տիրապետության տակ: Ինչ-որ մի փուլում դա անգիտակցաբար է լինում, բայց հետո դառնում է գիտակցաբար՝ ապրած կյանքի, ձեռք բերած գիտելիքների շնորհիվ: Այնպես որ, եթե ասեմ, որ շարժմանը 1988-ից եմ միացել, այնքան էլ ճիշտ չի լինի: Ես ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Այդ ֆակուլտետը ազգային իդեաների իրականացման դարբնոց է, ազգային ոգով դաստիարակությունը արդեն քո մեջ դրվում է, եւ առիթ է պետք, որ մտնես շարժման մեջ: 1988-ը հենց այդ առիթն էր, եւ շատ-շատերը արդեն գիտակցաբար, պատրաստված մտան այդ շարժման մեջ:

Բ. - Այդ ժամանակ գյուղն ի՞նչ վիճակում էր, ժողովուրդը ո՞նց ընկալեց:

Հ.Հ. - Ես ապրել եմ մի միջավայրում, որտեղ մարդիկ բավական բարեկեցիկ կյանքով էին ապրում: Ճարտարը մեծ գյուղ էր, միութենական նշանակություն ուներ: Բայց, միեւնույնն է, բոլորն էլ ուզում էին ապրել Մայր հայրենիքի հետ: Այսինքն՝ ղարաբաղցիները երբեք կենսամակարդակը չեն դիտել որպես ապրելու միջոց, այլ միշտ զգացվել է այն լուռ ընդդիմությունը, որ կար ժողովրդի մեջ, ինչը տարբեր ձեւով էր արտահայտվում, հատկապես այն անհամատեղելիությունը, որը ես մանկական տարիներին տեսել եմ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ՝ չնայած ինտերնացիոնալ դաստիարակության մամլիչին: Երբ տասներորդ դասարանում էի սովորում, շրջկոմը ինտերնացիոնալ դաստիարակության պլանը իրագործելու համար տեղական հանդիպում կազմակերպեց Ճարտարի եւ Խոջավանդ թուրքական գյուղի միջեւ, որն ավարտվեց ծեծկռտուքով: Այդ սովորական տղայական կռիվը Ադրբեջանի կոմկուսի կենտկոմում քննարկման առարկա դարձավ, եւ հատուկ հրահանգ տրվեց, որ մեզ նորից հանդիպեցնեն եւ սեղանի շուրջ հաշտեցնեն: Դա 1963-64 թվականներին էր: Չեմ հիշում մի դեպք, երբ Ստեփանակերտ որեւէ մրցույթի կամ հավաքի մեկնեինք, եւ այն կռվով չավարտվեր:

Բ. - Փաստորեն, Բաքվի ղեկավարությունը անհանգստանում էր, որ փոխադարձ բախում է լինում, եւ ուզում էին հաշտեցնել:

Հ.Հ. - Շատ հետաքրքիր հարց է, եւ ես միշտ մտածել եմ այդ մասին: Մեր գենետիկական կոդի մեջ դրված է: Ես չեմ հիշում, որ մեր ծնողները կամ առաջնորդները հրահրեին մեզ: Այնպես որ՝ պատճառներն արդեն կային, առիթ էր պետք:

Բ. - Խոսենք «Արցախ» հայրենակցական միության գործունեության մասին, որի նախագահն եք, փորձենք ի մի բերել, թե ինչ է արվել:

Հ.Հ. - Զարմանալի չէ, որ Հայաստանում որպես առաջին հասարակական կազմակերպություն գրանցվեց «Արցախ» հայրենակցական միությունը: Դուք մասնակցում էիք հիմնադիր համագումարին, այն տեղի ունեցավ 1988 թվականին: Առաջին նախագահն ընտրվեց ոչ ղարաբաղցի. Ալբերտ Հովհաննիսյանն էր, որը բավական մեծ գործ կատարեց կազմակերպության ստեղծման, ձեւավորման գործում: Հիմնադիրներից էին Լենսեր Աղալավյանը, Ալեքսանդր Մանասյանը, Լարիսա Ալավերդյանը, Յուրի Հովհաննիսյանը, Աբիգ Սամվելյանը, Բակուրը, Զորի Բալայանը, որը միշտ եղել է «Արցախ» հայրենակցական միության պատվավոր նախագահը, Շահեն Մկրտչյանը եւ այլոք: «Արցախ» հայրենակցականի գործունեությունը կարելի է բաժանել երկու էտապի: Երբ 1988-ին միությունը ստեղծվեց, ավելի շատ հետապնդում էր տնտեսական եւ մշակութային խնդիրներ: Լեռնային Ղարաբաղի տնտեսական ինտեգրացումը դեռ չկար, ազատագրական պայքարը եւս, բոլորս դեռ հավատում էինք գորբաչովյան վերակառուցմանը, դեմոկրատական լոզունգների քողի տակ հույս ունեինք խաղաղ ճանապարհով այդ գործընթացն իրագործել: Սակայն Սումգայիթի եւ Բաքվի կոտորածները բոլորիս համոզեցին, որ խաղաղ ճանապարհով այդ հարցը երբեք չի կարգավորվի: «Արցախ» հայրենակցականի երկրորդ նախագահը դարձավ Ալեքսանդր Մանասյանը: Բնավորությամբ պացիֆիստ մարդ էր: Եվ միության մեջ այդ ժամանակ երկու թեւ առաջացավ. մարդիկ, որոնք շատ շուտ հասկացան, որ այս գործից վառոդի հոտ է գալիս, եւ մարդիկ, որոնք մնացին նախկին կարծիքին: Շուտով այն բարեգործական, հայրենակցական միությունից վերածվեց ազատագրական պայքարի երեւանյան օպերատիվ շտաբի: Այդ ժամանակ պետական կառույցները կայացած չէին, ամեն ինչ տեղի էր ունենում հասարակական հիմունքներով, անգամ՝ Ղարաբաղում ազատագրա-

կան պայքարի նախապատրաստումը: Ինչու՞ հասարակական: Կար իշխանություն, եւ կային լիդերներ, որոնք ավելի ռեալ իշխանություն ունեին: Խոսքը մինչեւ 1991 թվականի մասին է, երբ Սեմյոն Բաբայանը գործկոմի նախագահն էր, եւ նրա աշխատասենյակում խորհրդակցություն էինք անցկացնում: Այդ ժամանակ նոր էի սկսել ճանաչել Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, Մաքսիմ Միրզոյանին եւ տեսնում էի, որ լիդերները նրանք են, եւ նրանք են հարցերը լուծում: Այդ ժամանակվանից «Արցախ» հայրենակցականը սկսեց զբաղվել պաշտպանական գործունեությամբ՝ չմոռանալով տնտեսական օգնություն ցույց տալ մեր հայրենակիցներին, մեր գյուղերին, շրջկենտրոններին, Ստեփանակերտին: Այն ժամանակ հնարավորությունները մեծ էին, վերելք էր, եւ ժողովրդի ստվար մասը պաթոսով էր այդ օգնությունները հասցնում Ղարաբաղին: Երբ պատերազմը սկսվեց, «Արցախ» հայրենակցական միությունը կամավորական ջոկատներ էր կազմավորում եւ ուղարկում ռազմաճակատ՝ միեւնույն ժամանակ հայթայթելով զենք-զինամթերք, բենզին, սոլյարայուղ: «Արցախ» հայրենակցականը շտաբ կազմակերպեց «Էրեբունի» օդակայանում, որը տարիներ շարունակ կազմակերպում էր ինքնաթիռների թռիչքները, օգնության բեռների տեղափոխումը Ղարաբաղ: Այդ գործում անուրանալի դեր ուներ կազմակերպության նախագահի տեղակալ Վիկտոր Բեգլարյանը՝ Հաթերք գյուղից: Կուզենայի խոսել Ժորա Օհանջանյանի մասին, որն Ասկերանի համայնքի նախագահն էր: Նա արտակարգ ընդունակություններ ուներ զենք-զինամթերքի հայթայթման գործում: Չեմ կարող չնշել կազմակերպության նախագահ Ցուրա Հովհաննիսյանի աշխատանքը: Դուք տեսել եք, որ «Արցախ» հայրենակցական միությունը աշխատում էր շուրջօրյա: Առավել մեծ գործունեություն ծավալեց այն ժամանակ, երբ Շահումյանից եւ Մարտակերտի շրջանի գյուղերից փախստականները միանգամից ասես թափվեցին կոմիտեի դիմաց: Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան կողքին վրաններում տեղավորելու, սնունդով ապահովելու ողջ աշխատանքը կատարել է «Արցախ» հայրենակցական միությունը: Չեմ կարող չհիշատակել «Արզնի -2»-ի գլխավոր բժիշկ Հրաչիկ Ադամյանի անձնուրաց աշխատանքը, որ մոտ հազար մարդու տեղավորեց, կազմակերպեց նրանց սնունդով ու հագուստով ապահովելու հարցը, որովհետեւ տկլոր էին եկել այնտեղից: Երկար ժամանակ զբաղվում էինք այդ հարցով, մինչեւ որ ազատագրեցինք Մարտակերտի գյուղերը, եւ բնակիչների մի մասը վերադարձավ իր բնակավայրերը: Ես բազմաթիվ օրինակներ կարող եմ բերել, որ մեր կազմակերպության անդամներից շատերը մեկնել են ռազմաճակատ, մասնակցել մարտական գործողություններին. նախագահության անդամ Աբիգ Սամվելյանը, Վլադիկ Դավթյանը, Կիմ Բալայանը... Ես ընտանիքով տեղափոխվել էի այնտեղ, քանի որ տղաս կռվում էր: Սերժ Ասլանյանը, որը Դրմբոնի ջոկատի հրամանատարն էր, մեծ ավանդ ուներ: Հաթերքից Սպարտակ ունեինք, որն ակտիվ մասնակցում էր պաշտպանական մարտերին, Շեֆերից Անդրանիկ անունով տղա կար... «Արցախ» հայրենակցականին եւ մեր հայրենիքին անուրանալի օգնություն է ցույց տվել Հադրութից Միխայիլ Արտյոմիչը, որ Բաքվից էր եկել, նա բավական մեծ գումար է օգնություն տվել: Մեր զինվորների համար առաջին երկարաճիտ սապոգները առել է Միխայիլ Արտյոմիչը, որն ուղարկել ենք Ղարաբաղ: Պյատիգորսկի համայնքի ղեկավար Ռաֆայել Իսախանյանը եւս իր ներդրումն ունեցավ այս գործում: Զորի Բալայանի միջնորդությամբ Ռուսաստանից, հատկապես արտաքահմանից մեծ օգնություններ էին գալիս, իհարկե, «Արցախ» հայրենակցական միության միջոցով: Երբ արդեն պետությունը կազմավորվեց, եւ հատուկ ծրագրերի պետական կոմիտեի նախագահ նշանակվեց Վահան Շիրխանյանը, մեր մեջ կոնֆլիկտ առաջացավ, երբ մրցակցություն առաջացավ «Արցախ» հայրենակցականի եւ այդ պետական կառույցի միջեւ: Դա օբյեկտիվ օրինաչափություն էր: Մենք դիմադրեցինք, եւ կոնֆլիկտային իրավիճակ ստեղծվեց: Բայց պետությունը քանի կազմավորվում էր, այնքան մեր դերը այս բնագավառում նեղանում էր: Մոսկովյան ուղեւորության ժամանակ ես անձամբ ուղեկցել եմ Զորի Բալայանին: Հիշում եմ մեր հանդիպումը Սերժ Ջիլավյանի հետ, որն այդ ժամանակ հայերից ամենահարուստն էր: Եվ այդ բանակցությունների արդյունքում՝ Սերժ Ջիլավյանը երկու թե երեք մեծ ինքնաթիռներով խոշոր ռազմական օգնություն, հանդերձանք ուղարկեց:

Պակաս կարեւոր չէր «Արցախ» հայրենակցականի դերը Մարտակերտի, Հաթերքի դեպքերի առնչությամբ: Մի զավեշտալի բան պատահեց այդ ժամանակ: Զորին զանգեց «Արցախ» կոմիտե, ասաց. «Հավաքել եմ КРИК-ի (Ռուսաստանի մտավորականության ղարաբաղյան կոմիտե - խմբ.) անդամներին, բայց քանի որ ոչ մի որպես ժամանակ չկա տուն գնալու, եւ պետք է այսօր հասցնենք Մարտակերտում լինել, պիտի նրանց համար գիշերազգեստներ գնել»: Եվ թելադրեց նրանց չափսերը: Պատվիրակության կազմում կանայք էլ կային: Երբ տղաներով գնացինք խանութից գնելու, ես ամաչում էի կանացի ներքնազգեստի չափսը ասել վաճառողուհուն: Վարորդին՝ Միշիկին, ասում եմ. «Դու ասա, քո երեսը պինդ է»: Էն ժամանակ դեռ ամոթ կար: Եվ գիտե՞ք, թե ինչ դեր խաղաց ռուսական մտավորականության ներկայացուցչությունը Հաթերքում: Եվ դա մեր կազմակերպության խողովակով եղավ: Դա գուցե իմ կյանքի լավագույն ժամանակահատվածն էր: Ի՞նչ առումով: Մարդկային հարաբերությունների առումով, իրար

վստահելու, ոչ ամբիցիոզ իրավիճակի համար: Բոլորը միասին էին, եւ բոլորի նպատակը Ղարաբաղն էր, կարծես ուրիշ ոչինչ չունեինք՝ ո՛չ ընտանիք, ո՛չ երեխա, ո՛չ անձնական կյանք:

Պատերազմի ավարտից հետո՝ 1996 թվականից «Արցախ» հայրենակցականը դադարեց գործել, բայց հետո անհրաժեշտություն առաջացավ, եւ 2000 թվականից վերակենդանացավ կազմակերպությունը:

Հատուկ ռեժիմի ժամանակ բազմաթիվ տղաներ ձերբակալվեցին եւ ուղարկվեցին Բաքվի ու Կիրովաբադի բանտեր: Այդ ժամանակ մեր պետական ստրուկտուրաները թույլ, համարյա ձեւավորված չէին: Ի զարմանս մեզ՝ Բաքուն ձերբակալվածներին ուղարկեց Երեւանի կենտրոնական բանտ: Անձամբ գնացել եմ: Ծիծաղում էի՝ ա՛յ մարդ, սրանց ինչի՞ եք էստեղ պահում: Եվ բաց չէին թողնում, մի ամիս տեւեց՝ մինչեւ ազատեցին: Խորհրդային իշխանությունն էր դեռ: Քրեական հանցագործներ էին անվանում նրանց: Մեր՝ «Արցախ» հայրենակցականի ջանքերով, անմիջական բողոքների, պահանջների արդյունքում այդ ձերբակալվածներին բաց թողին: Մեկին հիշում եմ՝ Սոս գյուղից Վլադիկ Բաղրյանը:

Բ. - Հաթերքից էլ տղաներ կային:

Հ.Հ. - Նրանց ազատեցինք՝ ցույց տալով նաեւ բժշկական օգնություն: Նրանցից շատերին տանջել էին, հյուծված էին:

Տնտեսական գործեր շատ-շատ ենք արել, թեկուզ կոոպերատիվների առիթով: Ծիծաղում ենք, բայց եղել է, չէ՞, որ կոոպերատիվներ են ստեղծվել:

Բ. - Բայց ինչքա՞ն մարդիկ ընտանիքով տեղափոխվեցին...

Հ.Հ. - Այդ պահն էլ չմոռանանք. վերաբնակեցման ծրագիր էինք իրականացնում: Մինչեւ օրս «Արցախ» հայրենակցականը կատարում է վերաբնակեցման ծրագիրը: Նույնիսկ այս սուղ պայմաններում, եթե մեկը գալիս է եւ ուզում գնալ Ղարաբաղ ապրելու, «Արցախ» հայրենակցականը 88-ից առ այսօր իր սուղ միջոցներից էլի ինչ-որ բան տրամադրում է: Բազմաթիվ ընտանիքներ ենք բնակեցրել Հադրութում, Մարտակերտում, Բերդաձորում, անգամ Ստեփանակերտում:

Բ. - Նաեւ բարոյական դեր ուներ:

Հ.Հ. - Ամեն մեկը ավելի շատ մտածում էր իր գյուղի մասին: Ես կարող եմ Ճարտարի համայնքի ակտիվիստների անունները մեկ-մեկ տալ, օրինակ՝ Գուրգեն Սարգսյան, Անդրանիկ Հովհաննիսյան, Համլետ Խաչատրյան, Վալերի Հայրապետյան: Այդ օգնությունները հո իրենք իրենց չէին գնում, այլ տանում էին մեր ակտիվիստները, հանձնում, համապատասխան փաստաթղթերը բերում: Այս տեսակետից «Արցախ» հայրենակցականի ամեն մի համայնք ուներ իր ակտիվիստները. Լեւոն Հայրապետյանը՝ Բերդաձոր, Վիկտոր Բեգլարյանը, Կիմ

Բալայանը՝ Մարտակերտ, Ասկերանում՝ Աբիգ Սամվելյանը, Բարսեղ Բեգլարյանը մեծ օգնություն է ցույց տվել իրենց գյուղի եւ Ասկերանի ջոկատներին, ինչպես նաեւ՝ Ժորա Հակոբյանը: Բոլորի անունները մենք պետք է հիշենք, թե ով ինչ է արել: Ես տեսել եմ հայ մարդու, հայ ժողովրդի միասնական կամքը:

Ցավոք սրտի, պատերազմից հետո բարոյական մեծ հարստությունը մենք կամաց-կամաց կորցրինք:

Պատմում են Ամալյա Աղաջանյանը, Վլադիմիր Կարապետյանը, Սիլվա Աղաջանյանը
23.10.2005 թ., Ստեփանակերտ

Ամալյա Աղաջանյան - Մի քանի անգամ «կալցեւոյում» բարձրացել ենք երկրորդ հարկ եւ ամբիոնից մեր ժողովրդին կոչ արել: Այդ հանրահավաքների ժամանակ ինքս երկու ելույթ ունեցա, ես հիշում եմ այս բառերը, որ ասել եմ. «Թուրքը ոչ մի ժամանակ թող չկարծի, թե մեր ղարաբաղցիներին, մեր կռռ ղարաբաղցիներին կկարողանա կոտրել, որովհետեւ մենք, եթե ուրիշ ոչ մի բան էլ չլինի, փիրփեթով,- այս բառերը, որ ես ասել եմ, իմ կյանքում չեմ մոռանա,- փիրփեթով եւ մեր ժինգյալավ հացով մեր երեխաներին կպահենք, բայց մեր Ղարաբաղը չենք տա ո՛չ մի դեպքում»: Հետո մեր եղբայրական գերեզմանոցում եմ ելույթ ունեցել: Այդ օրը ես ուղղակի այնտեղ կանգնած էի, Սերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանը ամբիոնում էին, տեսա՝ այնտեղից կանչում են. «Ամալյա Աղաջանյան, արի, ելույթ պիտի ունենաս»: Թե ինչպե՞ս էին տեսել, որ ես այդտեղ եմ, երեւի գիտեին, որ ես ոչ մի հավաք բաց չեմ թողնում: Առանց նախապատրաստվելու, դե ի՞նչ նախապատրաստվեինք, ամեն ինչ մեզ համար պարզ էր, ելույթ ունեցա, ասացի իմ ասելիքը, որ թուրքը թող ոչ մի ժամանակ ոտք չմեկնի,

միեւնույնն է, ինչպես էլ մեկնի, ով ինչպես ուզում է մեզ վախեցնի, ութ միլիոն է՝ թե ինչքան է, դա կապ չունի... Մենք գիտենք, թե ինչի համար ենք կռվում, բայց նրանք չգիտեն: Ճիշտ է, նրանք ուզում են կռվել, որ հարստությունները տանեն, բայց մենք կռվում ենք մեր հարստությունը պահելու համար:

Ինձ ուղարկել էին Մոսկվա՝ 19-րդ կոնֆերանսին: Եվ ես էլ այդտեղ պետք է ելույթ ունենայի: Սումգայիթից հետո էր դեպքը: Սիլվա Կապուտիկյանն էր այնտեղ, Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Համբարձումյանը, մեր Ղարաբաղից Պողոսյան Հենրիխ Անդրեեւիչն էր, Վոլսկին, Դուբրովինը: Ինչ արեցինք, ինձ խոսք չտվեցին, թեկուզ երկրորդն էի ես գրանցված: Վերջապես տեսա, որ ուրիշ ելք չկա, ընդմիջման ժամանակ մոտեցա Գորբաչովի կնոջը՝ Ռաիսային, ու այ, այսպե՛ս կանգնեցրի նրան: Նա ռուսերենով թե՝ «Что хотите, женщина?»: Իսկ ես առանց ամաչելու ասացի. «Я не женщина, я такая же мать, как вы, даже лучше, чем вы, потому что я в таких ситуациях живу... а вы даже не сможете представить»: Իր թիկնապա՞հն էր, թե ով էր, չգիտեմ, կանչեց նրան, թե՝ տեսեք այս կինը ի՞նչ է ուզում: Ասացի. «Ես կասեմ ձեզ, թե ինչ եմ ուզում: Ես երկրորդ համարով գրանցվել եմ, ինչո՞ւ ինձ խոսք չեն տալիս, որպեսզի իմ սրտի ցավը, իմ ժողովրդի ցավը ես ներկայացնեմ ամբողջ միության ժողովրդին»: Արտասահմանյան հյուրեր էլ կային այդտեղ: Ասաց. «Ես անպայման կխոսեմ իմ ամուսնու հետ եւ ձեզ կընդունի»: Մինչ այդ մեզ կլոր սեղանի շուրջ ընդունում է ԽՍՀՄ արտգործնախարար Գրոմիկոն: Ես էի, Մելքումյանը, Ռազմիկը՝ Գիշի գյուղից, Արկադի Վոլսկին: Այդ ժամանակ ես նորից սկսում եմ... Գրոմիկոյին բացատրում եմ Սումգայիթի դեպքը, ինչպես են մեր բարեկամներին՝ Քյաթուկ գյուղից, տանջանքների ենթարկել: Սերյոժա էր անունը, բռնել էին նրա ընտանիքին, նրան պահել էին այդ հիմարները, կնոջը բռնաբարել աչքի առաջ, հետո արդեն նրան սպանել: Կինը շատ ծանր վիճակում մնացել էր այդտեղ, տղային՝ փոքր երեխային, սպանել էին: Այդպիսի դեպքեր ես նկարագրեցի եւ ասացի, որ այդքանից հետո մենք չենք կարող հարմարվել եւ դրանց հետ միանալ: Նույնիսկ Գրոմիկոն ինձ հարց տվեց. «Բա մենք ո՞նց ենք արել, 1941-45 թվականների պատերազմից հետո, երբ Խատինն են վառել»: «Ես չգիտեմ, թե դուք ինչպես եք արել: Այդ վերքերը, ես գիտեմ, մինչեւ հիմա դուք չեք մոռացել»,- հենց այդպես էլ ասացի: Պատկերացրեք, երբ ես պատմում էի, Գրոմիկոյի աչքերից արտասուք գնաց: Եվ Վոլսկին ծածուկ ասաց. «Լսեք, նա իր կյանքում արցունք թափած չկա, այդ բառերիդ ազդեցությունն ինչպե՞ս ներգործեց, որ նա արտասվեց»:

Բ. - Հետո նա ի՞նչ խոսեց:

Ա.Ա. - Ոչ մի բան էլ չխոսեց. թե՝ պետք է ներենք, տանենք, համբե-

րենք, մենք շատ ենք համբերել, մենք՝ ռուսներս, այսքան կորուստ ենք տվել, համարյա ջահելություն չունենք:

Բ. - Դրանից հետո ուրիշ ընդունելություն չեղա՞վ:

Ա.Ա. - Դրանից հետո՝ արդեն գիշերը, երբ ինձ ճանապարհել էին, ինքը՝ Գորբաչովը, Հենրիխ Անդրեեւիչին, Վոլսկուն, Դուբրովինին ընդունեց: Հետո եկան եւ ասացին, որ իրենց ընդունել է: Ուրեմն՝ իմ այդ պահանջը ինչ-որ օգուտ տվեց, թե չէ՝ չէր ընդունելու: Դրանից հետո եկանք արդեն ամեն մարդ իր գործին, իր դարդին: Հետո կազմակերպություններից, այսպես ասած, կոնֆերանսի պատվիրակներ էին ընտրում «Ամարաս» բարեգործական միությունը ստեղծելու համար: Սկզբում ես նույնիսկ տեղյակ չէի, բայց արդեն «Ղարմետաքս» կոմբինատում ինձ ներկայացրել էին:

Բ. - «Ղարմետաքս» կոմբինատո՞ւմ էիք աշխատում:

Ա.Ա. - Այդտեղ երեսունմեկ տարի աշխատել եմ: Ռոբերտ Քոչարյանը կոմբինատի կուսքարտուղարն էր:

Բ. - Դուք կուսակցական ե՞ք եղել:

Ա.Ա. - Կուսակցական էի, այո: Հետո ընտրեցին կոնֆերանսի պատվիրակ: Կոնֆերանսին մասնակցեցի, եւ ինձ ընտրեցին որպես «Ամարաս» բարեգործական միության կոմիտեի անդամ: Սկսեցի իմ աշխատանքի հետ միասին իմ մասնակցությունը, օգնությունը ցուցաբերել այդ կազմակերպությանը:

Բ. - Բորիս Դադամյանին նախագահ ընտրեցին, չէ՞: Ինչպե՞ս էիք վերաբերվում: Դադամյանն ինչպիսի՞ մարդ էր:

Ա.Ա. - Դադամյանը շատ հոյակապ, բարեսիրտ մարդ էր: Իսկական հայրենասեր էր: Այդ մարդու արածը ոչ ոք չէր կարող անել:

Բ. - Որեւէ դեպք հիշո՞ւմ եք «Ամարասի» հետ կապված:

Ա.Ա. - Ինչո՞ւ չեմ հիշում: Մի անգամ գնում էինք Մարտակերտ, որպեսզի այնտեղ անցկացնենք «Ամարաս» բարեգործականի ժողովը եւ տեսնենք՝ ինչ են արել: Այդ օգնությունները, որ գալիս էին, հենց այնպես չէր. դրանք գալիս էին, որպեսզի օգնեինք բազմազավակ ընտանիքներին, այն ջոկատներին, որոնք անտառներում էին, ծմակներում: Հեռու գյուղերի համար էին՝ Բերդաձորի, Փառուխի, Հադրութի շրջանի Էդիլլու գյուղի: Այդ օրը գնում էինք, որպեսզի ստուգենք, թե Մարտակերտում ինչպես է գործը արվել: Ես էի, մեր գլխավոր հաշվապահը եւ Դադամյանը: Ետ դառնալիս ուժեղ մառախուղ էր, ճանապարհը կորցրինք, քիչ մնաց, որ ընկնեինք Սրխավանդ՝ թուրքերի ձեռքը:

Բ. - Կիչանի կողմն է՞ր:

Ա.Ա. - Հենց Կիչանից: Հիմա իմ տղան Սրխավանդում է ծառայում: Մառախուղն այնքան էր իջել, որ ոչ մի բան չէր երեւում: Փոխարեն այս ուղղությամբ ծռվեինք, Կիչանի կողմը գայինք, ուղիղ դեպի Սրխավանդ

գնացինք: Մեկ էլ Դադամյանը տեսավ, թե՝ ա՛յ մարդիկ, էս ո՞ւր ենք գնում: Մի տասը մետր էր մնացել, որ մտնեինք գյուղը: Նորից ետ ենք դառնում: Նա շատ անգամ էր գալիս Երեւան այդ օգնությունների կազմակերպման հարցերով: Բայց, ախր, միայն օգնությունները չէին, այստեղ բոլորին հասկանալի էր, թե «Ամարաս» բարեգործականն ինչ աշխատանքներ է արել... Ամեն ինչը, ինձ թվում է, պետք էլ չի ասել, նրանք մեզանից լավ գիտեն...

Բ. - Այդ շրջանն անցավ: Պատմությունը պետք է վեր հանել:

Ա.Ա. - Դե որ պատմությունը պետք է վեր հանվի... զենքի հարց է եղել: Ախր Դադամյանն այստեղ նստում էր, պիտանի չէր զենքը բաժանելուն, ոչ էլ բազմազավակ ընտանիքներին օգնություն էր տալու: Դրա համար կայինք կոմիտեի անդամներս, մենք գիտեինք՝ ինչ անել: Նրանք էլ գնում էին Երեւան, տարբեր տեղեր՝ զենքի հարցով: Ամեն գործ անում էին: Դիպլոմատով ատրճանակը բերում էին, պահարանի մեջ էինք թաքցնում, բերում էի այստեղ, կարծում էին, ի՞նչ իմանամ, ինչ-որ այլ բան է, հետո տանում էինք... Մարդիկ հո դատարկաձեռն չէ՞ին գնալու թուրքերի բերանում պայքարելու: Մեր փոխտնօրենը Արթուր Ալեքսանյանն էր՝ մինչեւ ձերբակալվելը: Արթուրին որ ձերբակալել էին, մենք գիշեր-ցերեկ աղոթում էինք նրա համար, որովհետեւ այդ տղան բոլորովին քուն ու դադար չուներ: Միայն նա չէ, բոլոր մեր տղաներն էին այդպիսին: Թե՛ սրբազանի, թե՛ մեր լավ տղաների միջոցով մի կերպ ազատեցինք Արթուրին: Ազատվելուց հետո, որպեսզի կարողանա ազատ աշխատել, մտածում էինք, թե ով կարող է փոխարինել նրան: Սերժը, Քոչարյանը, Արթուրը գալիս են այն հայտարարին, որ փոխտնօրեն միայն ինձ կարող են նշանակել: Այդքան տարիներ աշխատել էի, նրանք գիտեին՝ ինչ կյանքի, ինչ խղճի տեր եմ: Ինձ նշանակում են Արթուրի տեղը, նրան ուղարկում ենք Երեւան, որ այնտեղից կարողանա ազատ զբաղվել թե՛ զենքի մատակարարման, թե՛ կազմակերպչական հարցերով:

Բ. - Այստեղ փախստականների համար ճաշարան հիմնեցիք, ինչպե՞ս կազմակերպեցիք:

Ա.Ա. - Այդ նախաձեռնության հեղինակը Արթուրն է: Ասել էինք, որ բազմազավակ ընտանիքներին պիտի օգնենք, բայց ունեինք միայնակ մարդիկ, անտեր-անտիրական եկվորներ, որոնք ոչ մի օգնող չունեն: Նրանց համար ի՞նչ անենք, որ կարողանանք ոչ թե ամսական կամ տարեկան մեկ անգամ օգնել, այլ օրական գոնե մեկ անգամ կուշտ փորով հաց ուտեն: Բացեցինք ճաշարան, այն գտնվում էր հրապարակի տակ: Մեր աշխատակիցներից երեք հոգու նշանակեցինք այդտեղ որպես խոհարար եւ մատակարարողներ: Եկան անտեր-անտիրականները, քյասիբները, մարդիկ, որոնք ապրելու հնարավորություն չունեին:

Գալիս էին առավոտյան, կեսօրին, ուտում եւ գնում էին: Օգտվում էին նաեւ եկվորները, փախստականները: Այդպես ահագին ժամանակ պահեցինք, ժողովրդին բավարարեցինք:

Գործադուլի ժամանակ ոչ մի միջոցառում բաց չենք թողել: Նախ ամեն մի աշխատողի փողով օգնել ենք, այն ժամանակ հարյուր ռուբլի էր, այդքան է եղել մեր հնարավորությունը: Բաժանել ենք գրություններով, ստորագրություններով: Մեր ներկայացուցիչներին, օրինակ՝ «Ղարմետաքս» կոմբինատից Բեգլարյան Վլադիմիրն էր, կանչում էինք, եւ նրանք, երեք հոգով կոմիտե կազմած, գալիս էին, փողը ստանում էին եւ ամբողջ աշխատուժի միջեւ հավասարաչափ այդ հարյուրական ռուբլիները ստորագրություններով բաժանում: Դրանից բացի՝ ինչքան ապրանք, ինչքան մթերք եկել է՝ ալյուր, վերմիշել, շաքար, բրինձ, օճառ... Ինչ որ գալիս էր, տալիս էինք նրանց, տանում էին, ցուցակով բաժանում, որպեսզի ժողովուրդը կարողանար իր գոյությունը պահել: Եվ չի եղել մի կազմակերպություն, որին մենք չօգնեինք: Մեկ առ մեկ կարող ենք փաստաթղթերը հանել եւ ներկայացնել: Հետո գյուղարանքներ էինք ուղարկում, հիմնականում՝ սահմանային գյուղեր, եւ դրանց ավելի հաճախակի էինք օգնում, նրանց ցանկացած կարիքի դեպքում անմիջապես հասնում էինք: Իսկ այդքանը ստեղծողներն ովքե՞ր էին. Արթուր Ալեքսանյանը, Բորիս Դադամյանը եւ մյուսները: Հիշում եմ՝ մի անգամ, երբ ես այստեղ համարյա մենակ էի, քսան տոննանոց երկու ուղղաթիռ եկել էին, իբր մանկական կոշիկ ու կեր էին բերել: Ինչ անեմ, ո՞վ պիտի գնա, փոխտնօրենը ես եմ: 1989 թիվն էր: Տղամարդիկ էլ թե՝ չենք ուզում: Որին ուղարկում ես, մտածում է, որ իրեն անպայման կձերբակալեն: Այնտեղ ռուս եւ թուրք ՕՄՕՆ-ականներ էին կանգնած: Երբ ես մտա օդանավակայան, երկու մետրանոց բոյով, մեծ գլխով մի մարդ մոտեցավ: Թուրքերեն ասում է.

- Ո՞վ ես դու:

- Ես «Ամարասի» փոխտնօրենն եմ:

- Ինչո՞ւ ես եկել այստեղ:

- Եկել եմ, որ քսան տոննանոց ուղղաթիռները դատարկեմ:

- Բա դու չես վախենո՞ւմ, որ եկել ես:

- Բայց ես ումի՞ց պետք է վախենամ, ես ի՞նչ եմ անում, որ վախենամ: Ես եկել եմ սոված երեխաների համար կեր տանեմ, ոտաբոբիկ երեխաների համար ոտնաման տանեմ, ինչո՞ւ պիտի վախենամ:

- Դե, որ չես վախենում... ես կարծում էի, թե պիտի վախենաս:

- Չէ, չեմ վախենում, վախենալու բան չունեմ, մեծ կնիկ եմ, ինչի՞ց վախենամ:

- Դե, որ չես վախենում, ուղղաթիռդ կարող ես դատարկել:

Դրանից հետո տղաները եկան մեր մեքենաներով: Բայց չէ՞ որ

միայն մանկական կերը չէր, ամբողջը ամունալ էր արկղերի մեջ. ո՞վ էր իմանում՝ ո՞րն է մանկական կերը, որը ամունալը: Հետո զենքերի մասեր էին, դատարկեցինք, բերեցինք:

Բերդաձոր գյուղին ենք շատ օգնել: Նույնիսկ Պարգեւ սրբազանը այն ժամանակ տասը էլեկտրական ռադիատոր է այդտեղի դպրոցի երեխաների համար ուղարկել: Սննդամթերքով միշտ ապահով ենք պահել: Աղավնի ունեինք, շատ լավ աղջիկ էր, շատ էր օգնում:

Բաքուն բողոքել էր Մոսկվային, որ Ղարաբաղը, «Ամարասը» իր հինգ միլիոնը կերել են: «Գոլոս սվաբոդի»-ի թղթակիցը զանգում է եւ հարց տալիս, թե՝ այդ ինչպե՞ս է եղել, որ Ադրբեջանի հինգ միլիոնը կերել եք: Ես վերցնում եմ, ասում. «Մենք՝ երկու թոշակառուներ, այստեղ նստած ինչպե՞ս կարող էինք թուրքի հինգ միլիոնը ուտել: Մենք ընդամենը երեխաներին մանկական կեր ենք տալիս եւ բազմազավակ ընտանիքներին օգնություն ենք ցույց տալիս: Ի՞նչ գործ ունենք Ադրբեջանի հինգ միլիոնի հետ»: Դրանից հետո Բաքվից նշանակված դատախազ Վասիլենկոն երկու հոգու՝ մեկը Լենինգրադից էր, մեկն էլ Բաքվի ներկայացուցիչ էր, ուղարկում է «Ամարասին» ստուգելու, որ նրանք միայն զենքի հարցով են զբաղվում, զենք են առնում, ուրիշ բան չեն անում՝ ոչ մի օգնություն, ոչ մի բազմազավակ ընտանիք, ոչ մի այդպիսի բան: Մի ամիս մեզ ստուգում են: Դե, ղարաբաղցու ասած, նստած հո խոտ չե՞նք արածում: Այն, ինչ մենք անում ենք, մտածված ենք անում, հո չէի՞նք գրելու, որ տարեկան այսքան տվել ենք՝ զենք առել: Գրված էր, որ օգնություն է, եւ ստորագրություն, որ մարդը ստացել է այդ օգնությունը: Դե գնա այդ մարդուն հարցրու, թե ի՞նչ ես արել այդ գումարը: Մի ամբողջ ամիս այդ մարդիկ թղթերի մեջ խրված ստուգում են եւ գնում հաշվետվություն տալիս, որ նրանք ոչ մի մեղք չունեն, միայն մաքուր աշխատում են, իսկական բարեգործներ են, ուրիշ ոչ մի բան: 1989 թվականին էր: Վասիլենկոն չի հավատում, ասում է. «Չէ՛, ես դրանով չեմ բավարարվի, գնացեք, նորից ստուգեք»: Գալիս են, հենց այդ ժամանակ Կարաքենդի գլխին ուղղաթիռը պայթում է՝ Վասիլենկոն, եւս մի քանի հոգի մեջը: Դրանից հետո բավարարվում են եւ ձեռք քաշում մեզանից:

Արդեն վերեւից մեզ տեղյակ են պահում, որ ՕՄՕՆ-ականները մտած ստուգում են: Այդ խեղճ տղաները, քրտինք պատած, սեւ նոթի պես, մի նկուղից զենքը տեղափոխում էին մի ուրիշի նկուղ: Երբ մի թաղամասում վերջացնում էին, այնտեղից ուղարկում էին մի ուրիշը: Աբգարյան Արմենն էր, Հարությունյան Աբրահամն էր, Արզումանյան Վովան, Ավակիմյան Լյովան, Սաղյան Պավելը, Պետրոսյան Վալերին, նրա քույրն էր, Աղավնիկն էր:

Երբ Շուշիից «Ալազանով» սկսեցին խփել, մենք դուրս ենք եկել,

նկուղ փախչելու փոխարեն՝ նայում էինք, հաշվում, ուղղությունը որոշում, թե այդ «Ալազանը» որ կողմն է գնում: Եկան այն ժամանակները, երբ ընտանիքներով տեղափոխվում էին Հայաստան, որպեսզի անմեղ երեխաները եւ կանայք ապահով լինեն:

Բ. - Քանի՞ երեխա ունեք:

Ա.Ա. - Ես երկու տղա, մեկ աղջիկ ունեմ եւ ինը թոռ: Տղաներս ու փեսաս կանգնեցին, թե՝ մեր կանայք ու երեխաները ոչ մի տեղ չեն գնալու, որովհետեւ մենք մեր երեխաների համար ենք կռվում: Մեր ամենահեռու տեղը Նինգի գյուղն էր, մեր պաշտպանության տեղն էր: Դա այն գյուղն է, որտեղ երկուսուկես տոննանոց ռումբ էր ընկել, չհաշված, որ ուղղաթիռներով ռմբակոծում էին: Տեղափոխվեցինք Նինգի գյուղ: Այնտեղ մենք տուն չունեինք, ուրիշի տուն վերցրինք եւ երեխաներիս, հարսներիս, աղջկաս, ամուսնուս հետ սկսեցինք ապրել: Ի՞նչ էինք անում: Ընտանիքով անտառից փայտ էինք բերում, ջուրն էինք շալակով բերում: Սկսեցինք բոստաններ անել, հող մշակել: Ոչխարներ առանք, որպեսզի փոքր երեխաներին կաթ տանք, պանիր սարքենք: Էշ առանք եւ սկսեցինք ծմակից փայտ բերել, մեր տրանսպորտի միջոցը դա էր: Մեր գյուղը հարուստ գյուղ է, այնտեղ սոված մնալը հանցագործություն է: Շագանակից սկսած մինչեւ զկեռը՝ ամեն ինչ աճում է: Հավաքում էինք ամեն ինչ, էշով բերում: Մեր գյուղից մայորը ասում էր. «Ես զարմանում եմ, դուք էլ մի փախստական եք եւ այդքան շնչով ապրում եք այստեղ: Դեռ չի եղել, որ մի անգամ գաք, ասեք՝ գոնե մի բուռ ալյուր տուր, տանեմ, այսօր իմ երեխաներին պահեմ»: Ընդհակառակը, եթե մի գյուղացու շաքար կամ մի բան էր պետք, որ մենք ունեինք, նրանք՝ ոչ, օգնում էինք: Անտառներից հավաքում էինք խնձոր, տանձ, մոշ: Նինգի գյուղացիներին մոշ վաճառելը ես եմ սովորեցրել: Ինչպե՞ս: Թոռներիս, ամուսնուս հետ գնում էի, մոշը հավաքում, բերում էի: Եթե բեռնատար մեքենա կամ տաքսի էր գալիս, մոշը լցնում էի այդ մեքենայի մեջ, մի դույլ մոշ էլ վարորդին էի տալիս ու խնդրում էի, որ տանի աղջկաս շենքը: Թոռնիկս, որ յոթ տարեկան էր, այդտեղ վաճառում էր՝ թանկ, էժան, ինչ գնով տալիս էին, վաճառում էր: Որոշված էր, որ շահույթի դիմաց այդ անգամ շաքարավազ է բերում, մյուս անգամ՝ վերմիշել, բրինձ, մակարոն: Շաքարավազով գյուղի տանձ ու խնձորից ջեմ էինք սարքում, որ ամբողջ տարին ապահով լինենք: Տղաս եւ փեսաս տանկի վրա էին աշխատում: Գալիս էին, այդտեղով գնում Մարտունի, Չանախչու կողմերը՝ Շուշին գրավելու համար: Ի՞նչ էի անում: Ես ու քույրս առավոտյան ժամը վեցին սկսում էինք թոնրի հացը թխել: Գիտեինք, որ այդ օրը կա-չկա մերոնցից մեկը գալու է, գնա: Գալիս են, ուրիշի երեխաներ են, ի՞նչ իմանամ՝ ետ կդառնա՞ն, թե՞ ոչ: Տասնհինգ հատ թոնրից նոր հանած լավաշները տալիս էինք այդ տանկի տղանե-

ին: Յոթանասուն հավ էի պահում, ձու էի տալիս, գյուղի ֆերմայից կաթ էի բերում, պանիր սարքում, տոպրակը պանրով լցնում էի, տալիս այդ երեխաներին: Նույնիսկ այսպիսի դեպք է եղել: Քույրս տոլմա էր սարքել, առանց կաթսայի բերանը բացելու, առանց երեխաներիս մի հատ տալու տվել ենք այդ զինվորներին, թե՝ տարեք, ձեզ հալալ է, տարեք կերեք: Ա՛յ, այս կյանքով ապրել ենք: Այսպիսի մի դեպք է եղել: Եկել էի քաղաք, տեսնեմ՝ տունը ինչ վիճակում է: Տունս, ինչպես որ կա, թողել էինք, մենք գնացել գյուղ: Փողոցով գնում էի, մի բեռնատար ավտոմեքենա կանգնեց: Զինամթերք էին բերել: Վեց տղաներ էին՝ բոյով, բուսաթով: Հայաստանցի տղաներ էին: Ասացին. «Տատի՛, որտե՞ղ կարող ենք ճաշել, ախր ամբողջ ճանապարհը սոված եկանք, մի բաց տեղ չըգտանք, որ գոնե մի կտոր հաց գտնենք»: Որ գալիս էի, գիշերը երկու հաց էի թխում, հետս վերցնում, ճանապարհ է էլի, կարող է մեքենա չպատահի, մնամ այդտեղ: Երկու հաց կար մոտս: Այնտեղ էլ թոշակառուների համար խանութ կար, որ ապրանք էինք ստանում: Աշխատողը, Լուսյա էր անունը, դուրս եկավ, թե՝ Ամալյա՛, ի՞նչ է եղել: Ասում եմ. «Էս տղաները սոված են, հաց են ուզում, ուրիշ ժամանակ մոտս պանիր-բան լինում է, հիմա մենակ հաց կա»: Հանել եմ այդ հացերը, ասում եմ. «Տղանե՛ր, ձեր ցավը տանեմ, իմ տղան էլ է ձեզ նման էն ձորերում, մեկի փոխարեն երեքն ունեմ, ի՞նչ կա որ՝ փեսաս է, նա էլ մի տղա է, էլի, իմ աղջկա ընկերն է»: Այդ հացից մի քանի կտոր կտրում եմ, մնացածը տալիս եմ տղաներին, ասում եմ. «Ձեր ցավը տանեմ, մի՛ նեղացեք, բան չկա մոտս, տանս էլ բան չկա, գյուղում ենք լինում»: Այդ տղաները ինձ շնորհակալություն են ասում, ես գնում եմ: Իմ գնալուց հետո խանութի աշխատողներից մեկը տնից երկու կարտոֆիլ էր բերել, մեկը՝ սոխ... ինչ կա՝ հավաքում են, տալիս այդ երկու տղաներին: Դա լինում է մայիսի 2-ին: Մայիսի 4-ին գնում եմ գյուղ: Փեսաս շտաբից զանգում է, թե՝ շուտ արի, տղադ վիրավորվել է, բերում են: Արդեն իմ հույսը կտրած՝ ո՞նց կարող է Թալիշում արկի ուղիղ հարված լինի, ու նա ողջ մնա: Ես չեմ հավատում: Դուրս եմ եկել ճանապարհ, շշմել եմ, ինձ կորցրել, ծվում, ծկլթում եմ, թե տղաս արդեն չկա, ուղղակի փեսաս ինձ խաբում է, տանի: Մի «Վիլիս» է գալիս, ճանապարհի հենց մեջտեղում չոքում եմ, ասում. «Չգիտեմ, ինչ ուզում եք արեք, ինձ պետք է տանեք, ես հետ՝ տուն գնացողը չեմ»: Տղաները դուրս են գալիս, թե՝ ա՛յ տատի, ի՞նչ է պատահել քեզ: Ասում եմ. «Չգիտեմ, ինձ խաբում են, թե տղադ վիրավորվել է, բայց չի վիրավորվել, ես չեմ հավատում»: Ասում են, որ Մոսին էլ է վիրավորվել: Մոսին մեր բարեկամն էր ու նրա վարորդը, գնում են տեսնեն՝ նա ինչ վիճակում է: Ասում են. «Տատի՛, մի՛ լացիր, արի նստիր, ոչ մի բան չի լինելու, արի քեզ տանենք»: Գալիս ենք: Այն նույն կինը՝ Լուսյան, որ լսում է իմ տղան վիրա-

վորվել է, չի մահացել, գալիս է ուղիղ հիվանդանոց: Բժիշկներին ասում է. «Ես մի բան պատմեմ, դուք հավատացեք, որ դա իրականություն է: Երեկ այս կինը իր ձեռքի վերջին հացը հանել է, տվել ամբողջ ճանապարհը սոված եկած զինվորներին: Ա՛յ, այսքան հաց էր կտրել իր համար: Հենց այդ հացը իր տղային պահել է»:

Սիլվա Աղաջանյան - Երբ արկը ընկել է մեքենայի վրա, որտեղ մեր Աշոտն էր նստած, վարորդը եւ նրանց ընկերը, նրանք անմիջապես մահացել են, իսկ Աշոտը վիրավորվել է: Նա նույնիսկ չի հիշում, թե ինչպես է եղել, որ նա այն երկուսին քաշել-հանել է, ինքը մնացել մեքենայի կողքին ընկած: Հետո եկել են, նրան քարշ տվել, տարել: Երբ ուշքի է եկել, գլխի է ընկել, որ այն երկուսն այլեւս չկան: Մոտ ընկերը ջահել տղա էր:

Ամալյա Աղաջանյան - Իսկ գյուղում՝ կռվի տարիներին, մենք շատերին ենք օգնել: Ոչ միայն մենք ենք ապրել, այլեւ օգնել ենք այն պատճառով, որ ձեռքներս չենք ծալել նստել: Չի կարելի այն առատ աշխարհում սոված մնալ: Ես նույնիսկ ամուսնուս հետ գնացել եմ սովխոզում աշխատելու: Խնձորի ժամանակ խնձորն ենք հավաքել, կարտոֆիլի ժամանակ՝ կարտոֆիլը, քաղհան ենք արել, նոսրացման ժամանակ՝ նոսրացրել: Ամեն աշխատանք էլ արել եմ: Ի՞նչ վնաս եմ տեսել: Ոչ մի վնաս: Աշխատանքից հետո ընտանիքով գնում էինք այնտեղ, որտեղ կարտոֆիլն արդեն քանդած-հավաքած է, նորից փորում էինք եւ վեց պարկ կարտոֆիլ բերում: Եվ մենք էինք ուտում, եւ տանում վաճառում: Վաճառածի դիմաց էլ ամեն ինչ գնում էինք:

Ս. Ա. - Հետո, երբ արդեն մի քիչ խաղաղ էր, մենք տեղափոխվել ենք: Տղաս է ստիպել, թե՝ չէ, դու գյուղում մի մնա, դու անպայման քաղաքում պիտի ապրես:

Բ. - Այնտեղ ավելի հե՞շտ էր ապրելը:

Ա. Ա. - Չարչարվողի համար ամեն տեղ էլ հեշտ է: Կարծում եք՝ այս ամեն ինչը ես հե՞շտ եմ կառուցել: Իմ փեսային չորս անգամ վիրահատել են, մահից մի կերպ ենք ազատել: Երբ չորրորդ անգամ վիրահատեցին նրան, նա մայոր է, բոլորը հույսները կտրել էին: Ղուկասյան Էդուարդն է վիրահատել: Մի ամիս վերակենդանացման բաժնում պառկած էր՝ փորը լրիվ բաց, բարակ աղիքի հետ կաթիլային միացրած: Միայն հյութերով ենք պահել: Արդեն հույսներս կտրել էինք, որ փտախտ է ստանում՝ չկա էլի, վերջանում է: Կինը պարտքերի մեջ խրված, դեղորայքը, ամեն ինչը թանկ: Աղջկաս ասում եմ. «Հերիք է, էլի, վերջապես վեր կաց, գնա նրա ղեկավարների մոտ»: Այդ մարդը իր կյանքը տվել է հայրենիքին: Ռուսական բանակի սպա է եղել, այնտեղից, ինչքան ամունալ, զենք, պահեստամասեր են եղել, տվել է մեզ՝ եւ թաքուն, եւ գողացել է: Հիմա այդ մարդը մահանում է, չասե՞նք՝ ամ-

ընկերներ, հիմա ի՞նչ անենք, այս մարդը մահանում է:

Բ. - Նրա անունն ի՞նչ է:

Ա.Ա. - Կարապետյան Վլադիմիր: Աղջիկս՝ Աղաջանյան Ռիտան, իմ շատ խոսելուց հետո վերջապես վեր է կենում, գնում շտաբ: Արմեն Աբգարյանը նրա համադասարանցին էր, որ տեսնում է, ասում է.

- Ա՛յ աղջիկ, այստեղ ի՞նչ ես անում:

- Ուզում եմ գնալ Սամվել Բաբայանի մոտ:

- Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

- Ի՞նչ է, դու չգիտե՞ս՝ ինչ է պատահել, ամուսինս մահամերձ է:

- Ո՞նց կարող է իմանայինք: Մեր այդպիսի սպան, ծառայողը, ջանը կռվին տվողը... ու հանկարծ մենք անտեսենք:

Արմենը նույնիսկ չի թողնում, որ աղջիկս մտնի, ասում է՝ դու դրսում կանգնիր, ինքը մտնում է, բացատրում, որ Վոլոդյան այդ վիճակում է՝ անհույս: Ասում է. «Ասա թող գա»: Աղջիկս մտնում է, լացելով պատմում է վիճակը, որ արդեն ձեռքներս ծալած նայում ենք: Աղջկաս ճանապարհում են տուն, կանչում բժիշկներին՝ Դանիելյան Բորյային, Ղուկասյան Էդիկին, Սամվելին: Ասում է. «Ես չգիտեմ, ինչ ուզում եք արեք, այդ մարդը չպիտի մահանա: Նա մեզ համար այնքան է արել, որ մենք իրավունք չունենք ծալած ձեռքերով բաց թողնել: Ինչո՞ւ այսքան ժամանակ ձեզանից ոչ մեկը չի ասել, որ այսպիսի դեպք կա»: Զանգում է Երեւան, որ տեղ պատրաստեն, Կարապետյան Վլադիմիրին բերում են: Էդուարդ Իշխանիչը խնդրում, ուղղակի աղաչում է, որ նրան չի կարելի տեղից շարժել, եթե մի մետր բարձրացնեն, համարենք՝ այդ մարդն արդեն մահացած է: Սամվելն ասում է. «Ես չգիտեմ, դուք ինձ մի բացատրեք, ասեք՝ ի՞նչ անենք, որ այդ մարդը չմեռնի»: Էդուարդ Իշխանիչն ասում է. «Մի դեղ կա, եթե կարողանանք այդ դեղը գտնել, կկարողանանք այդ մարդու կյանքը փրկել, եթե ոչ, հաշվեք, որ ոչինչ չենք կարող անել»: Զանգում է Երեւան, համակարգիչով ստուգում են, ոչ մի պահեստում չեն գտնում: Զանգում է Մոսկվա: Այդ դեղը՝ չորս արվակ, մի գիշերվա մեջ Մոսկվայից հասնում է հիվանդանոց: Ես ու աղջիկս վերակենդանացման բաժնի միջանցքում կանգնած էինք: Գիշերվա ժամը վեցն էր: Մի ռուս է բարձրանում, բարձրահասակ սպա, ասում է.

- Простите, а где здесь реанимация?

- А вот реанимация.

- А вы не знаете Карапетяна Владимира?

- Я знаю, вот его жена.

- Вы сможете передать лекарство?

- Конечно, сможем.

Հանում է, այդ դեղերը մեզ տալիս: Հերթապահ բժիշկը զանգում է

Էդուարդ Իշխանիչին, ասում, որ դեղը հասել է: Բժիշկը վեր է կենում, գիշերվա ժամը վեցին գալիս հիվանդանոց: Այդ դեղի շնորհիվ այդ մարդն այսօր ապրում է: Հիմա նա նորից ծառայում է:

Բ. - Նա Մարտակերտո՞ւմ է լինում:

Ա.Ա. - Նոր են ուղարկել, նա այստեղ գենքի պահեստի պետն է եղել: Ուզում եմ ասել, որ չի կարելի մարդու արածը կորցնել: Սամվել Բաբայանի արած այդ քայլը մեզ համար դարձել է մի աստծո աշխատանք՝ մարդուն նվիրել է իր երեխաներին:

Հիշում եմ՝ պատերազմի ամենաթեժ շրջանում, երբ մահացությունները շատ-շատ էին, մի օր Արթուրը եկավ, ասաց. «Տյոտյա Ամալյա, գիշերը երկու դիակ պիտի բերենք»: Մեր բակում Լենինյան խաղասենյակ կար, որտեղ երեխաները խաղում էին, ես այն ժամանակավոր վերցրել էի որպես պահեստ, կոշիկներ կամ այլ իրեր՝ ինչ մնում էր, բերում էինք, այդտեղ էլ էինք պահում: Արթուրն առաջարկեց բերել այդտեղ, մինչեւ տեսնենք՝ ինչ ենք անում: Եկել եմ, ազնվորեն եմ ասում, տղամարդու ներքնաշորերը, որ պահում էի... երեխաներ ունեի պատերազմում, Աստված չարած, ի՞նչ էի սպասում... հանել եմ ինչ-որ պետք է, տարել եմ: Ես ու Արթուրն ենք հագցրել այդ երեխաներին, որպեսզի ուղարկենք Երեւան:

Գյուղում էինք, գնացել էինք մեր հողամասը: Այդ պահին Հին գյուղի վրա (գյուղը երկու մասի էր բաժանված՝ Հին եւ Նոր) երկու հատ կես տոննանոց ռումբ են գցում: Ամբողջ գյուղը սեւ ծխի մեջ կորում է: Թոռս տղայիս ասաց. «Քեռի՛, պապայի արեւ, իսկական կռիվն սկսվել է»: Քեռին էլ ի՞նչ անի, մտել էր քերծի տակ, երեխային փորի տակ պառկեցրել, ինքը վրան պառկել: Մի օրով եկել էր մեզ տեսներ, գնար: Ասել էր. «Թե մի բան լինի, թող ինձ լինի, երեխան փորիս տակ ողջ մնա»:

Բ. - Որտե՞ղ էր:

Ա.Ա. - Բողուրխանի սարի տակ: Ես էլ մենակ էի, վախենում էի: Սկսեցի բարձր ձայնով լացել եւ երգ ասել, իբր ինձ հույս եմ տալիս:

Բ. - Ի՞նչ երգ էիր երգում:

Ա.Ա. - Ես Սայաթ-Նովայի երգերը շատ եմ սիրում: Համ լացում էի, համ երգում: Այդ պահին գալիս են, որ Բողուրխանի դիրքերը փոխեն: Մեր գյուղացի մի տղա է լինում, վազելով գալիս է, ասում. «Մեր գյուղացի Ամալյա տոտուն ձայնն է, էդ ինչո՞ւ է այդպես անում»: Հունվար ամիսն էր, գիշերվա ժամը ինը: Ասում է.

- Ա՛յ Ամալյա տոտա, ես ժամին դու այստեղ ի՞նչ ես անում:

- Դե ի՞նչ անեմ, մեքենա չի եղել, ընկեր էլ չի եղել, որ հետը գամ: Պապն էլ երեխաների հետ տանն է: Բա ի՞նչ անեմ:

- Ա՛յ կնիկ, գայլեր էին:

- Գայլերից եմ վախեցել, լացում եմ եւ երգ ասում:

1988 թվականին՝ Սումգայիթի դեպքերից հետո, երբ մեր Ղարաբաղի երեխաները սովորում էին Բաքվի տարբեր ինստիտուտներում, թուրքերը սկսեցին նաեւ նրանց հետ գազանաբար վերաբերվել, ծեծում էին, գրատախտակների վրա արտահայտություններ էին գրում մեր եկեղեցու, ղեկավարների հասցեին: Ստեփանակերտից նամակ-հեռագիր գրեցինք Գորբաչովին, ընդ որում, իմ ստորագրությամբ: Եկել էին բժիշկներ, ծնողներ, Պատվականյան Էդիկն էր, ուրիշներ, բայց ուղարկվեց իմ ստորագրությամբ եւ անձնագրի համարով: Այդ հեռագիրը հասցնում են Գորբաչովին:

Բ. - Ինչպե՞ս:

Ա.Ա. - Ուղարկում ենք կենտկոմ, այնտեղից էլ հասցնում են Գորբաչովին: Շատ նամակներ, դիմումներ տեղ չէին հասնում: Ես Ադրբեջանի կենտկոմի անդամ էի եւ կոմկուսի 24-րդ համագումարի պատգամավոր, հինգ տարի եղել եմ Ադրբեջանի կենտկոմի պլենումի անդամ: Այդ պատճառով էր, թե ինչ, հեռագիրը հասնում է Գորբաչովին: Գորբաչովը զանգում է Բաքու, Բաքվից զանգում են այստեղ: Այդ ժամանակ մեր ժամանակավոր ղեկավարը Աթաջանյան Վալերիկն էր: Բաքվից կանչում են: Սումգայիթի դեպքերից հետո ես ուզում էի մենակ գնալ Բաքու, բայց տղաս չհամաձայնվեց, ասաց. «Ինչ էլ որ լինի, ես քեզ հետ գալիս եմ»: Գնում ենք Բաքու, մտնում կենտկոմի շենքը: Ինձ ուղիղ քարտուղարի մոտ են կանչում: Ուսանող փոքր տղայիս հետ էի գնացել: Կենտկոմի շենքի առաջին հարկում Խոջալուի, Կրկժանի թուրքերն էին, նրանք շատ լավ էին ինձ ճանաչում, շատերը աշխատողներ էին, շատերն էլ ճանաչում էին, որովհետեւ անունս երկինք էին հանել, հեռուստացույցով էին ցույց տալիս, թերթերում բոլորի մասին գրում էին: Սրանք այնպես են ինձ նայում, ասես այդ որպեսի ինձ մասերի պիտի բաժանեն: Բայց այդտեղ կանգնած էին ռուսական սպաներ: Տարան Էլմիրա Տատարովայի՝ Ադրբեջանի կենտկոմի երրորդ քարտուղարի մոտ: Նա սկսում է ինձ քարոզել, թե ինչու ենք ուզում մեր երեխաներին տանել, ինչու ենք քանդում, քայքայում: Ասացի. «Չհասկացա, մենք ե՞նք քանդում, քայքայում, մի ամբողջ Սումգայիթ եք կոտորել, եւ դուք համարձակվում եք այդքանն ի՞նձ ասել»: Ասաց. «Հայ տղաներին հանրակացարան կտանք, կապահովենք, ամեն ինչով կբավարարենք»: Ասացի. «Չէ՛, եւ ես ոչ միայն իմ երեխայի համար եմ պահանջում, այլ բոլոր երեխաների»: Վերջապես, այդքանից հետո Բաքվում սովորող բոլոր ղարաբաղցի երեխաների փաստաթղթերը ուղարկում են Երեվան: Տղաս այդտեղ էլ ավարտում է:

Գիշերները ես հետեւում էի, որ հանկարծ արտակարգ դեպք չլինի: Մի օր էլ՝ գիշերվա ժամը երեքի կողմերը, նայում եմ, տեսնում՝ ռուսական սպաները եկել են Պարգեւ սրբազանի դարպասի կողքերին կանգ-

նել ու զանգն են տալիս: Ամուսնուս ասացի. «Ի՞նչ անենք սրբազանի համար»: Մտնում եմ ներս եւ զանգում նրան: Ասում եմ. «Պարգեւ ջան, ռուսի շներն այդտեղ են»: Դու մի ասա, նրա մոտ ընկերներ են լինում, պիտի նրանց տեղավորեր: Գետնի տակով տեղ կար, անմիջապես տանում են տեղավորում: Մեկ ժամ հետո, իբր քնաթաթախ, բացում է դուռը: Ռուսները թե.

- Столько мы звоним, столько кричим...

- Կներեք, քնած էինք:

Մտնում են, մոտավորապես մեկ ժամ հետո դուրս են գալիս, գնում: Սրբազանը զանգում է ինձ. «Տիկին Ամալյա, դուք գիտե՞ք, թե ինչից ազատեցիք մեզ: Ահագին գործ էինք արել, եւ դու մեզ փրկեցիր»:

«Ալազանը» որ արդեն սկսեց խփել, ես գիտեի, որ սրբազանը տանն է: Այդ օրը վեց հատ մեր բակի վրա եկավ: Զգացի, որ մի հատն ընկել է հենց նրա տան վրա: Նկուղից դուրս եկա, էլ չնայեցի թե «Ալազան» է գալիս, վազում եմ, ասում՝ վա՜յ սրբազանը, վա՜յ սրբազանը: Մտնում, ի՞նչ եմ տեսնում: Սսրբազանը պատի անկյունում կանգնած, դեմքն ասես էն սպիտակ պատը լիներ: Ասում եմ. «Վա՜յ, Պարգեւ ջան, դու ողջ ե՞ս»: Աում է. «Տիկին Ամալյա, մի՛ վախեցիր, Աստված ինձ պահել է: Որ ասում եմ Աստված պիտի պահի, ուրեմն՝ պահել է»: «Ալազանը» պայթել էր, ամեն ինչ ցրիվ տվել, բայց նա ողջ-առողջ կանգնած էր:

Վլադիմիր Կարապետյան - Երբ շարժումը սկսվեց, ես ծառայում էի խորհրդային բանակի շարքերում, Ստեփանակերտի 366-րդ գնդի գումարտակում որպես դասակի հրամանատար: Այդ ժամանակ ավագ ենթասպա էի: Ռուսական սպաների ութսուն տոկոսից ավելին կողմ էր Ադրբեջանին: Մոտ քսան տոկոսն էր, որ իսկապես ասում-խոսում էին, ինչ-որ օգնություն էին ցույց տալիս շարժմանը: Կամաց-կամաց շարժումն սկսեց թափ առնել: Հիշում եմ, որ թուրքերը մեծ ջանքեր էին գործադրում, որ գունդը տեղափոխեն Ադրբեջան: Նրանք ամեն կերպ պայքարում էին: Եթե չեմ սխալվում, 1989 թվականի վերջն էր: Ամբողջ Անդրկովկասյան օկրուգի կենտրոնը Թիֆլիսում էր: Այնտեղից ուղղաթիռով մի հայ գեներալ ժամանում է Ստեփանակերտ:

Բ. - Ազգանունը չեք հիշո՞ւմ:

Վ.Կ. - Օհանյան էր, եթե չեմ սխալվում: Բայց լավ եմ հիշում, որ այդ գեներալը մեր ակումբում հավաքեց բոլոր սպաներին, ենթասպաներին, եւ այսպիսի զրույց սկսվեց. «Товарищи, имейте в виду, панику рассеяли среди вас, но этот полк мы отсюда передислоцируем где-то в Россию. Азербайджан хочет полк перевести к их сторону, это факт»: Խոսքը վերաբերում էր այն բանին, որ իրենք հանկարծ չխաբվեն: Ասաց այսպիսի մի բան. «...Դա չի լինելու, եթե սա չանցավ...Հայերը միշտ ռուսների կողմն են եղել, նույն ձեւով կյանքը շարունակվելու է: Այս գունդը, եթե այստեղից դուրս եկավ, անմիջապես մտնելու է Ադրբեջան, այդտեղից ուրիշ տեղ չի գնալու»: Այդ օրվանից սպաները իրենց հավաքեցին:

Բ. - Ո՞վ էր գնդի հրամանատարը:

Վ.Կ. - Ազգանունը մոռացել եմ: Բոլորին այդ կոչը արեց, բոլոր սպաներին եւ ենթասպաներին, ինչից հետո, կարելի է ասել, մի քիչ հանգըստացանք այն առումով, որ նրանք մեզ դեպի իրենց են ձգում: Շարժումն ավելի խորացավ: Սկսվում է զինված ապստամբությունը: Սկզբնական շրջանում մեր գունդն ահագին ուժ է գործադրում այդ ավազակների դեմ:

Բ. - Ի՞նչ էիք անում:

Վ.Կ. - Օրինակ՝ հայ սպաների եւ ենթասպաների միջոցով շատ զենք ու փամփուշտ է դուրս եկել: Եղել է, որ ուսումնական զենքեր ենք հանել, բերել քաղաքում սարքել:

Բ. - Օրինակ՝ ինչքա՞ն ավտոմատ է դուրս բերվել:

Վ.Կ. - Ես չեմ կարող ասել, թե քանի ավտոմատ է դուրս բերվել, անձամբ ես ավտոմատ դուրս չեմ հանել, բայց շատ ռազմամթերք եմ հանել, ուսումնական ավտոմատի մակետ եմ հանել, ակոսներով փող եմ հանել: Կուճուր Յուրա ենք ասում, նա, տանը հաստոց, հարմարանքներ տեղադրած, այդ ամենը մարտական զենքի էր վերածում: Երբ Մայիքեյլուի վրա գործողություն էր սկսվել, օգտագործվել է հենց մեր զենքը: Սա հիմնականում արել են գնդում ծառայող հայ սպաներն ու ենթասպաները, առաջին հերթին՝ Սեյրան Օհանյանը: Խոսում էին, թե թուրքերը կգան, գնդի ամբողջ զենքը կտանեն: Մի անգամ Օհանյանը բոլոր հայ սպաներին եւ ենթասպաներին հավաքեց իր տանը, որը զորամասից հեռու չէր, եւ կոչ արեց. «Եթե փորձեն զորամասը դուրս տանել, ամեն մեկդ պետք է խանգարեք դրան: Մեկը կկազմակերպի հարձակումը պահակակետի վրա, մյուսը կփչացնի զինտեխնիկան, որ չաշխատի»: Յուրաքանչյուրն ստացավ իր առաջադրանքը. Մովսես Հակոբյանն է եղել, Հարությունյանը...

Բ. - Ինչպե՞ս վերցրին գունդը:

Վ.Կ. - Դա հիմնականում քաղաքականություն է: Բայց հիշում եմ, որ մեր ֆիդայիները մտան ստորաբաժանման տարածք եւ որոշեցին գընդի ճակատագիրը: Հիշում եմ՝ ականանետներ կային՝ «Մոսկվիչի» անիվներով: Անիվները լրիվ հանել, տարել էին, այդ կարեւոր զենքը թողել նման վիճակում: Կոմանդոսը քիչ էր մնում լացեր: «Ստրելա» տիպի հակաօդային զենք կար, որը բարձեցինք մեքենաներն ու տարանք: Տանկերն ու զրահամեքենաները մի կերպ դուրս ենք հանել: Ամեն ջոկատ իր համար հանել տարել է: Սկսել են սովորել օգտագործել այդ տեխնիկան: Ես՝ որպես զրահատեխնիկայի մասնագետ, կար-

գի եմ գցել զրահամեքենաներն ու տանկերը, տանկի փողը հանել, տեղադրել եմ: Դա էլ կարեւոր գործ էր: Այդ պահին ոչ ոք չի մտածել աշխատավարձի, պաշտոնի, դիրքի մասին: Ես նորոգման գումարտակում էի, որտեղ եւ՛ նորոգում էի, եւ՛ տղաներին սովորեցնում տիրապետել այդ տեխնիկային: Բոլոր խոշորամասշտաբ գործողությունների ժամանակ մեր արհեստավորներով գնում, պատրաստ սպասում էինք տեխնիկան վերանորոգելուն: Մի անգամ էլ Շոշ գյուղի վերեւում էր զրահամեքենան փչացել: Մեխանիկը Վլադիկ Հակոբյանն էր, որն այնպես էր վարել մեքենան, որ քիչ էր մնացել շուռ գար: Ասացինք. «Պատերազմում չենք զոհվել, կարող է այստեղ զոհվենք»: Տեղ հասանք ու նորոգեցինք մեքենան: Երբ մտել էինք Շուշի, մեզ հետ մի ռուս տղա կար, որը, փողոցում կանգնած, ձեռքին՝ մի հսկա ձուկ, բոլորին ցույց էր տալիս ու հպարտանում՝ տեսեք, թե ինչ եմ բռնել: Զորիկ անունով մի «էլեկտրոնշիկ» ունեինք, ուզեց, որ միասին մտնենք Շուշիի իրենց տունը: Մտանք տուն, տեսավ՝ ամեն ինչ քարուքանդ, սկսեց լաց լինել:

Ալաշանում, որ բազավորվել էր նորոգման գումարտակը, Վալերիկ անունով մի մարտակերտցի տղա ունեինք, չաղ տղա էր, հենց նա վազում մտնում էր տանկի տակ, արդեն գիտեինք, որ հակառակորդի ինքնաթիռներ են հայտնվելու:

Հիշում եմ՝ ձմռանը Չլդրանում մեջքս կպցրել էի պառկած շանը, որ տաքանամ:

Ես չգիտեի, որ «մոտորին» հայերեն «շարժիչ» են ասում: Մենք «ԲՄՊ»-ի մոտորներ էինք հավաքում Վլադիկենց նորոգող բրիգադայի հետ միասին: Ավոն մի գրություն է ուղարկում, որ իրենց «ԲՄՊ»-ն գտնվում է մեր վերանորոգման բազային մոտիկ: Գրված էր նաեւ «Խնդրում եմ այդ շարժիչի գործն արագացնել»: Մտածում եմ. «Ա՛յ քեմատաղ, շարժիչն ի՞նչ է»:

Մի անգամ Միրուշեն գյուղի «ԲՄՊ»-ն փչացել էր, մի քանի հոգով գնացինք, որ վերանորոգենք: Երբ թուրքերն ուղղաթիռով մի քանի անգամ խփել էին, դրանից հետո զրահամեքենան դեզի տակ էին թաքցրել: Դեզի տակից հանում են, որ նորոգենք: Ամբողջ գյուղը դուրս էր եկել: Տղերքն ասում էին, որ եթե վերանորոգենք, եւ «ԲՄՊ»-ն աշխատի՝ կրակի, մեր արձանները գյուղում կանգնեցնելու են: Այն ժամանակ դա մեծ գործ էր:

Բ. - Քանի՞ զրահամեքենա ես վերանորոգել:

Վ.Կ. - Համարյա ինչքան տեխնիկա եղել է, նորոգող գումարտակը շուռ է տվել:

Բ. - Թնդանոթներ էլ է՞իք վերանորոգում:

Վ.Կ. - Այո: Թնդանոթների հետ կապված մի պատմություն եմ հիշում: Մենք «Գրադ» կոչվող հարյուր միլիմետրանոց թնդանոթներ ունեինք, որոնք մարտական էին: Կիրովաբադի դիվիզիայից պետք է գային ու հայերից հավաքեին այդ թնդանոթները, «Ալազանները», թնդանոթների տրիմոները պետք է հանեին, որ չկրակեն: Մեր զորքին են մեջտեղ գցում, որ հավաքեն: Այդ ժամանակ ես պահեստապետ էի: Իմ ծառայության պետը մայոր Կազարչուկն էր: Մի քանի հոգով դուրս էինք գալիս, սկսում շրջել այն տեղերով, որտեղ «Գրադի» կայանքներ էին կանգնեցված: Մայորին խմեցնում էինք, տղերքին էլ բացատրում էի, որ հիմա հանում ենք, բայց պիտի հետ գանք ու նորից տեղավորենք եւ ուղղենք: Մի քանի հատ «Ալազան» էինք բարձել, մի քանի հատ էլ արկեր, որ տանեն Կիրովաբադ, իբր՝ հա էլի, ինչ-որ բան տարել են:

Զայցեվ ազգանունով ռուս կար, բայց նա վաղուց այստեղ էր ապրում: Կինը հայ էր, ընտանիքը, կարելի է ասել, հայացել էր: Առաջին գործողությունը սկսել է Զայցեվը: Առաջին թնդանոթները նա է վերանորոգել: Շուշին ազատագրելուց հետո նա թողել գնացել է:

Հիշում եմ հրետանու գեներալ Իվանյանին: Ես եղել եմ նրա՝ սպառազինության գծով տեղակալը: Նա չէր սիրում թանկարժեք ծխախոտ ծխողներին, հավակնոտ պահվածք ունեցողներին: Մի անգամ Իվանյանն ինձ ասաց. «Վոլոդյա՛, առավոտ շուտ պատրաստ կլինես, որ նախաճաշից հետո տեղ պիտի գնանք»: Նա ուզում էր ինձ տեղ ցույց տալ, որտեղից մենք զորադաշտի համար անկյունակներ պետք է հավաքեինք: Մեծ Շենում էինք, այն ժամանակ դիվիզիայի շտաբն այնտեղ էր: Պայմանավորվածության համաձայն՝ նախաճաշում, դուրս ենք գալիս: Ձեռքը տանում է գրպանը, որ ծխախոտ հանի: Շատ էր սիրում ծխել: Գրպանները լիքը լուցկիներ էին, ծխախոտի տուփեր: Գրպանից մի արտասահմանյան ծխախոտի տուփ է հանում եւ այնպես է գոռում, քիչ է մնում տուփը ճակատիս խփի: Մնում եմ զարմացած, թե այս մարդուն ի՞նչ պատահեց: Ասաց. «Это не мои сигареты, дочка полажила»: Աղջիկը Լենինգրադից էր եկել եւ նա էր այդ թանկարժեք ծխախոտը տրել հոր գրպանը: Անհարմար զգաց, որ իր գրպանից այդ տուփն է դուրս է եկել, երբ ինքը դեմ է նման բաների: Այդպիսի մարդ է եղել:

Միասին դուրս ենք գալիս, տանում է ինձ Փափրավանդ: Ես էլ պետք է վերանորոգման դասակը հանեմ, որ այդ գործողությունները կատարեն: Ճանապարհին ասաց.

- Нам шланду нужна.

Շլանդան երկար մեքենա էր, որը հարմար կլիներ այդ ամենը տեղավորելու համար: Երկար մտածելուց հետո ասաց.

- Վոլոդյա, Պրիզրըկը շլանդա կունենա:

«Պրիզրըկ» Շահումյանի գնդի հրամանատար Սերգեյ Չալյանին էինք ասում:

Ասաց.

- Ի՞նչ ես կարծում, եթե ես իմ հրացանը տամ նրան, նա շլանդան ինձ չի տա՞:

Տեսեք՝ ինչ մարդ էր, որ իր նվերը շլանդայի դիմաց ուզում է տալ Սերգեյին, որ ամենը հանի, բերի զորադաշտ: Ասացի.

- Քրիստափո՛ր Իվանովիչ, այդ շլանդան նա հենց այնպես կտար քեզ:

- Դու այդպե՞ս ես կարծում:

Մեկ ժամ հետո վերադառնում է գեներալը եւ ասում, որ ես ճիշտ էի, Չալյանը հենց այնպես էլ շլանդան կտար:

Ես զինվորական շորերով էի: Ավտոբուսում եւ՛ հավատացյալներ կային, եւ՛ զինվորական համազգեստով մարդիկ, եւ՛ կանայք: Սառնարանը փաթեթավորել էինք. մեջը զենք կար, տանում էինք Ամարաս: Ճանապարհները փակել էին, ՕՄՕՆ-ականները կանգնած էին: Ավտոբուսը բացում, մտնում են: Առաջին հայացքից տպավորությունը նորմալ էր, սովորական մարդիկ են, գնում են: Ո՞վ կարող էր մտածել, որ սառնարանի մեջ զենք էինք տանում:

Ամալյա Աղաջանյան - Արթուրը Շուշիի բանտում էր: Մենք պետք է գնայինք, որ իբր Ամարաս վանքի բացումն է: Այնտեղ էլ մեծ պատրաստություն էին քաշել, որ մեզ դիմավորեն: Ուղղակի ամբողջ կոլեկտիվով՝ որպես «Ամարաս» բարեգործական միության աշխատողներ, գնում ենք Ամարաս վանք: Իբր գնում ենք մեր թոռներին կնքելու: Զայնը հասել էր ՊԱԿ, որ մենք զենք ենք տեղափոխում, ոչ մի մկրտություն, ոչ մի Ամարասի բացում, ոչ մի այդպիսի բան չկա: Ի՞նչ անենք: Սառնարանի մեջ զենք ենք դնում, այնպես ենք փաթեթավորում, ասես նոր են խանութից հանել: Հիմա ՊԱԿ-ի ներկայացուցիչը գալիս է «Ամարաս» բարեգործական միության բակ, այնտեղ կանգնում եւ յուրաքանչյուր մեքենան ստուգում, որ տեսնի, թե ինչ ենք տեղավորում: Սրբազանն էլ մեզ հետ պետք է գար այնտեղ: Մենք էլ սկուտեղներով ուտելիք էինք վերցրել, նվերներ, նկարներ, ջահեր եկեղեցու համար, իբր ոչ մի բան մեզ մոտ չկա: Հետո ռուս ՕՄՕՆ-ականը եկավ, սկսեց ստուգել, թե ինչ ենք տանում: Ի՞նչ ենք տանում՝ երեխաներ, մեծահասակ մարդիկ: Զատիկի օրն էր: Ազատ գնացինք, դեռ Շոշ գնացող ճանապարհին էլ մեքենան կանգնեցրինք, Արթուրի մասին շատ խոսքեր ասացինք: Կարծես այնտեղից Արթուրը պիտի մեզ տեսներ, լսեր: Զինամթերքը տարանք, տեղ հասցրինք: Մեզ հետ Կարոն է եղել, Ագոն, Պարգեւ սրբազանը: Ես էլ սկսեցի լացել. «Չէ, ես չեմ կարող այսքանը տանել: Մենք առանց Արթուրի ենք գնում...»: Սրբազանն ասաց. «Տիկի՛ն Ամալյա, անհոգ եղիր, ես ամեն օր աղոթում եմ Արթուրի համար: Նա շատ շուտով գալու է»:

Պատմում է Ռոլեսի Աղաջանյանը *(1992-94 թթ. ԼՂՀ ՊԲ ճարտարագիտական ծառայության պետ) 16.10.2005 թ., Ստեփանակերտ*



Ռ.Ա. - Երբ տղաներին ուղարկել եմ Հայաստան՝ «Ղարաբաղ» կոմիտե, զգուշացրել եմ, որ նրանց տարբեր տեղերում տեղավորեն, նորմալ պայմաններ ապահովեն, նրանք որոշ ժամանակ պետք է Ղարաբաղ չգան: Մեկը մնացել էր այստեղ. Հովիկն էր, որ խփել էր թուրքին, սակայն չէր սպանել: Նրան բռնում են, տանում Շուշի: Ծեծում են, ստիպված անունները տալիս է: Բայց այդ տղաներն այստեղ՝ Հայաստանում չեն, չեն կարողանում գտնել: Եկավ խաբեց, թե՝ սպանել եմ: Ասացի. «Տեսեք, եթե կենդանի եք թողել, հետո բոլորիդ ծախելու է»: Նրան, ում բռնել էին, ինձնից հրաման չէր ստացել: Նրան, ում հրաման էի տվել, հանել էի այդտեղից: Նա չէր կարող Ռոլեսի անունը տալ: Երբ Ամարասի Արթուրն ասաց, որ իրավիճակն այդպես է, ես անմիջապես նրանց «թռցրել» եմ, որ այստեղ նրանց չտեսնեն: Եթե բռնեին, կարող է իմ անունն էլ տային: Իսկ այն մեկը Հովիկն էր, մնում է այստեղ, բան էլ չի անում:

Բ. - Ես կուզեի վերհիշենք այն օրը, երբ ադրբեջանցիների ամբոխը՝ շուրջ տասնհինգ հազար մարդ, Աղդամից արշավեց դեպի Ասկերան՝ նպատակ ունենալով ցրել Ստեփանակերտի ցուցարարներին... Զաբի Յուրային ինչքանո՞վ ես ճանաչում, այն ժամանակ ի՞նչ հարաբերություններ ունեիք:

Ռ.Ա. - Զաբին իմ դասարանցին էր: Ֆուտբոլիստ էր: Երբ առաջին անգամ թուրքերը Աղդամից հարձակվեցին, ես զանգեցի Ասկերան: Ասկերանի հետ մեր կապը Մարատի միջոցով էր: Թուրքական տասնհինգհազարանոց ամբոխի դեմ են դուրս գալիս Զաբի Յուրան, Վիտոն: Հիարկե, Վիտալի Բալասանյանի անունը չենք տալիս, որպեսզի նրան չձերբակալեն: Ամենաշատը Զաբիի անունն էր հնչում: Զաբիին որ կասկածեին, բռնեին, ոչինչ, նա կարող էր այդ ամենի տակից դուրս գալ: Այդպես էլ նրա անունը դուրս եկավ: Թե ով է խփել, չեմ կարող ասել, ապացուցելը դժվար է: Օրինակ՝ մի գործում ես եւ դու լինենք, բայց ասեն՝ Բակուրն է եղել, եւ Ռոլեսի անունը չտան, ես կյանքում չեմ

բողոքի, թե ինչու են այդպես ասում: Ասենք՝ Ջահանգիրյան Ցուրան, որ գնացել է եւ ասել է դրա մասին, ինքը հետո դուրս պետք է գա իր ասածի տակից: Բայց իմ անունը տալու իրավունք չունի: Ես Ջաբիի կողքին չեմ եղել եւ չեմ կարող ասել՝ Ջաբին է եղել: Բայց ես գիտեմ, որ Վիտոն էլ է խփել:

Բ. - Ջաբին չի մատնել Վիտոյին:

Ռ.Ա. - Չէ: Նույնիսկ առաջադրանք ուներ, պետք է գնար Ռուսաստան, Սաֆոնովին սպաներ: Ռուսաստանում բռնեցին, տասներկու տարի նստեցրին:

Բ. - Տեսագրությունը դիտել եմ, խփելու տեսարանն էլ կար:

Ռ.Ա. - Գիտե՞ս, որ եղբոր հետ է գնացել:

Բ. - Այո, տեղյակ եմ: Պարգեւ սրբազանն ու Դավիթ Շահնազարյանը եկան մեր տուն, տեսագրությունը նայեցինք՝ ինչպես են խփել, ինչ է եղել: Շավարշ Վարդանյանն էր նկարել: Սխալվել են, գեներալ Սաֆոնովի փոխարեն գնդապետ Բլախոտինին են սպանել: Այսինքն՝ օպերացիան չի ստացվել, ուստի եւ նկարահանումը պետք չի եղել:

Ռ.Ա. - Ես Վարդանյան Սամվելին առաջադրանք տվեցի: Եղել է, որ թուրքերը մեր գյուղերի նկատմամբ «գործեր էին անում»: Մի անգամ այսպիսի բան որոշեցինք: Նինգի գյուղից ներքեւ՝ աջ կողմի վրա, Կարադաղլու գյուղ կա, ադրբեջանական գյուղ է, այդտեղից մեր գյուղերին վնաս էին տալիս, խփում էին: Մի անգամ մեր «ՈՒԱԶ» մեքենաներից մեկը Մարտունի էր գնում, Կղարծի գյուղից մի կնոջ տանում էին Մարտունի ծննդաբերելու: «ՈՒԱԶ»-ները հիմնականում Սամվելի տղաներն էին քշում: Թուրքերը հարձակվում են մեքենայի վրա, խփում են, մարդ են սպանում: Վրեժ ունեինք: Որոշեցինք պատժել թուրքերին:

Ես, ճիշտն ասած, տարբեր գործեր անելիս պահեր են եղել, որոնց մասին նույնիսկ Ռոբերտ Քոչարյանին չեմ ասել:

Բ. - Ռոբերտ Քոչարյանն առանձի՞ն էր գործում, թե՞ Մանուչարովի հետ:

Ռ.Ա. - Նրանք առանձին էին գործում: Ռոբերտը նստում էր Գերագույն խորհրդի շենքում: Նրանց հարաբերությունները սրված էին: Ցանկացած հարց այդ պատճառով դժվարությամբ էինք անցկացնում ժողովներում: Ազգային ժողովի ուղեղը Կարեն Բաբուրյանն էր, չնայած Ռոբերտն էլ էր հասկանում օրենքներից: Քանի որ միասնություն չկար, որոշեցի ադրբեջանական այս գյուղի խնդրում առանձին գործել: Չորս-հինգ գյուղերի ջոկատներից Սամվելի հետ ընտրեցինք լավագույն տղաներին եւ խփեցինք գյուղին: Սկզբում մերոնք լավ ընդունեցին, չնայած չգիտեին, թե ով է արել: Որոշ ժամանակ անց Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը հարցրին ինձ, թե ով է իրականացրել այդ գործողությունը: Պատասխանեցի, թե տեղյակ չեմ: Հետո մենք

հանդիպեցինք «Աշոտ Երկաթի» շտաբում, ու ես ստիպված խոստովանեցի: Նրանք այն կարծիքին էին, որ այս գործողությունը վնաս կբերի շարժմանը, բայց ես համամիտ չէի: Ստիպված եղա տղաներին դուրս տանել Ղարաբաղից: Մեզ ուղեկցում էին Սամվել Վարդանյանն ու Սեյրան Օհանյանը: Ուղղաթիռը մեզ հասցնում է Աբովյան: Սեյրանը, չնայած բանակում ծառայության մեջ էր, ակտիվորեն աջակցում էր շարժմանը: Երբ Շուշիից ռմբակոծում էին Ստեփանակերտը, նրա գլխավորությամբ գնդի զրահամեքենաները դուրս էին գալիս Արմենավանի կողմն ու հակահարված տալիս հակառակորդի հրետանուն:

Սամվելն իր ջոկատով տեղափոխվեց Շահումյան: Կռվեցին, ահագին դիրքեր վերցրին: Շահումյանում նրանց լավ ընդունեցին: Այնտեղ Սամվելը վիրավորվեց: Տարան հիվանդանոց, բայց չկարողացան փրկել, մահացավ: Նրա մահը մեծ կորուստ էր: Մեծ գործեր ենք արել, մեծ պլաններ ունեինք: Կոլյան էլ էր նրա հետ, որը Կրկժանի դիրքերում զոհվեց:

Բ. - Փամփուշտները վերջացել էին, նա մնացել էր խրամատում:

Ռ.Ա. - Իզուր զոհվեց: Իմ ներկայությամբ է որոշվել, որ Սամվելից հետո հրամանատարը պետք է լինի Կոլյան: Կոլյայից հետո Գնելն էր: Այդ փոփոխությունները իմ համաձայնությամբ են իրականացվել. այդ կապերը, հարաբերությունները կային, միասին էինք գործ անում: Մանուչարովի հետ օրը մի քանի անգամ հանդիպում էինք, տեղեկություններ հաղորդում տարբեր շրջաններից:

Բերդաձորի Անդրանիկը հերոս տղա է: Անդրանիկը Հայաստանից էր եկել, նրան Բերդաձորում հրամանատար նշանակեցին: Իմ հիմնարկից «ՈՒԱԶ» տիպի ավտոմեքենա տվեցի նրանց: Կոոպերատիվներ էինք ստեղծում: Տարբեր տեղերում ջոկատները կոոպերատիվներ էին ստեղծում, իբր գործ են անում, որ ռուսները չմիջամտեն: Նույնիսկ մի անգամ Բերդաձորի տղերքին՝ շուրջ երեսուն հոգու, բռնում են, բերում մեր ոստիկանություն: Այն ժամանակ ներքին խոհանոցն այսպես էր. վերեւից ինչ հրաման ստանում էին, այդ էլ անում էին՝ անկախ նրանից՝ Ռուսաստանի՞ց են եկել-նստել, թե՞ Բաքվից, իսկ մեր ոստիկանները՝ կամ եղած, կամ չեղած: Բայց երբեմն տեղեկություններ տալիս էին: Ոստիկանապետ Արմեն Իսագուլովը իր տեղակալին ուղարկում էր ինձ մոտ, նրա միջոցով զգուշացնում, որ ինչ-որ բան է սպասվում, ժողովուրդը թող ցրվի կամ թող այսպես չանի, թե չէ կգան, կկոտորեն, կջարդեն... Ես գնում, բոլորին տեղյակ էի պահում եւ Մանուչարովի, մի քանի հոգու հետ համաձայնեցնում, ժողովրդին հրապարակից հանում, ժամանակավոր դադարեցնում: Մանուչարովը միշտ ասում էր, որ պետք է աշխատենք խուսափել ընդհարումներից:

Բ. - Նա չէր հավատում, որ կարելի է զենքով հարցը լուծել:

Ռ.Ա. - Զենքով հարցը լուծելուն դեմ էր, հակված էր քաղաքական լուծմանը: Ասում էի. «Թող քաղաքականությունը քաղաքականություն մնա, բայց եթե թուրքը խփեց, դու չխփեցիր, դա մեզ պարտության կբերի»:

Բ. - Իսկ Ռոբերտ Քոչարյանը ի՞նչ կարծիքի էր, ի՞նչ էր մտածում:

Ռ.Ա. - Սկզբնական շրջանում բոլորն էլ դեմ էին, բայց երբ պաշտպանություն պետք է լիներ, Ռոբերտ Քոչարյանն էլ էր զբաղվում զենք բերելու, մատակարարելու հարցերով: Երբ Ամարասի Արթուրը զենք էր բերում, նրա հետ եկել է, Ամուլյան էլ կար, երեկոյան նստում էինք, որոշում, թե զենքերը ինչպես պետք է բաժանենք: Բայց Մանուչարովը սկզբից մինչեւ վերջ դեմ էր կռվին, վախենում էր, որ կարող է չդիմանանք: Երբ մեր հայերին բռնում են, ծեծում, սպանում, ինչ ուզում՝ անում են, եւ պատասխանը չես տալիս, ասում են՝ ոչխար մարդիկ են: Նույնիսկ ասել եմ, որ ռուսին խփելու իրավունք տան: Թույլ չէին տալիս: Բայց եղել են պահեր, ասել եմ, որ առանց աղմուկի անեն, որ ոչ Ռոբերտը իմանա, ոչ Մանուչարովը:

Բ. - Մի անգամ ճանապարհը փակվեց, երկաթբետոնե մեծ բլոկներ դրեցին, այնտեղ էլ ընդհարում եղավ ռուսների հետ...

Ռ.Ա. - Մեր հիմնարկի մոտ էր: Կազմակերպեցինք՝ բլոկները, ամբարձիչները բերեցինք, ճանապարհը փակեցինք, որ թուրքերը Աղդամից չգան Շուշի: Այն ժամանակ աշխատանքային խումբը՝ Արաքսյան, որ շատ մարտական կին էր, եւ կահույքագործ Ռաֆիկը, գալիս, ստանում էին, նաեւ՝ «Դյավոլը», որ հետագայում հրամանատար դարձավ, կոչում ստացավ, իսկ այն ժամանակ իր մեքենայով Ջահանգիրյան Յուրայի վարորդն էր: Հարյուր հիսուն կիլո քաշ ուներ: Կռիվների ժամանակ վիրավորվեց, ոտքը կտրեցին: Սկզբնական շրջանում սովորեցնում էին քարով խփել: Առաջին անգամ, երբ սկսել ենք ինքնաշեն նռնակներ, զենքեր սարքելը, մեր հիմնարկից Սարգսյան Հրաչիկը պահեստապետ էր: Գնդեր էինք սարքում: Չորրորդ գնդի հրամանատարը Վիտոն էր, իսկ Մայիսին մեր մոտից տանում են նրան տեղակալ: Մենք ամբարձիչներով ծանր երկաթբետոնե սալերով փակում ենք ճանապարհը, որ Աղդամից Շուշի եկող ավտոբուսները ստիպված կանգ առնեն, մենք էլ քրպարանուկ անենք:

Բ. - Դա էլ հենց քարե պատերազմն է, որ տարածվել էր ողջ Ղարաբաղի եւ Ադրբեջանի ճանապարհներին:

Ռ.Ա. - Այո, քարե պատերազմ, որը այն ժամանակ անհրաժեշտ էր: Մարտակերտի Վիգեն Շիրինյանը հրաման է ստանում, Քելբաջար տանող ճանապարհը փակում են, գալիս կանգնեցնում են, խփում, կոտորում՝ խելքները ոնց կտրում է: Ասում եմ՝ պետք է մի բան անեք, նրանք էլ անում են: Հարցնում էի.

- Ի՞նչ եք արել:

- Մի բան արել ենք...

- Նորմալ է՞: Զգույշ եղեք, հանկարծ չիմանան, վնաս չտան...

Այդ ամենը կատարվում էր տարբեր ուղղություններում: Նույնը թուրքերն էին անում: Ասկերանից Խոջալու անցնելիս նրանք էին փակում ճանապարհը, խփում ժողովրդին, կոտորում, ծեծում, սպանում... Որոշեցինք, որ Խոջալուն պետք է ջնջենք, պահը հասունացել է, այդ գյուղերը՝ Կրկժանը, Ջանհասանը, Մալիբեյլուն, մյուսները, պետք է ազատագրենք: Առաջարկել եմ Մալիբեյլուի վրա խփենք: Չնչին բան էր: Սամվելը, մյուսները պատրաստ էին, մի հրաման՝ եւ բոլորին քշում էինք: Չթողեցին: Ռոբերտ Քոչարյանից մի երկու բան էլ եմ հարցրել, ասել է. «Չէ, ժամանակը թող գա, հետո»: Ասել եմ. «Մալիբեյլուի գրոհայինները Դաշուշենում մեր տղաներին խփել են, ջոկատն այնտեղ էր, ասում են պատասխան տալու համար համաձայնություն տվեք»: Մանուչարովն էլ, Ռոբերտն էլ ասացին՝ չէ՞: Դե չէ՝ չէ: Այդպես էլ մնաց: Այդ պատճառով Կարադաղլուի վրա խփեցի առանց նրանց տեղյակ պահելու: Եվ երբ եկան բանակցությունների, հարցրին. «Ինչո՞ւ եք այդպես արել...»: Ասացի. «Որ ասեինք, չէիք թողնելու, դրա համար էլ չեմ ասել»: Սկզբում ուրախացել էին, թե լավ գործ է: Ի՞նչ պատահեց, որ հիմա էլ ասում են՝ ինչո՞ւ եք արել: Զգուշացրին, որ այլեւս առանց իրենց հետ համաձայնեցնելու գործ չանենք: Կարող էի ասել՝ ես չեմ եղել, բայց տեսա, որ շատ ջղայնացած է, ասացի՝ ես եմ արել: Բայց երբ տղաներին բռնել էին, ես ասել եմ, որ հարկավոր է թուրք պատանդներ բռնել, փոխանակել: Եվ Մալիբեյլուից, եւ ուրիշ գյուղերից թուրքեր ենք բռնել, փոխանակել: Զանգել ենք ոստիկաններին, բանակցել: Գնում էինք Մալիբեյլուի մոտ՝ Հոռեն տակ տեղամասը, այդտեղից բաց էինք թողնում պարկը գլուխը գցած թուրքին: Ոստիկաններն էլ, թե ռուս էին, թե թուրք, չգիտեմ, մեր մարդուն էին բերում: Բայց սկզբում նրանք էին բաց թողնում, հետո՝ մենք:

Մի անգամ Էջմիածնի տղաներին՝ Էդիկենց, զենքը ձեռքներին բռնում են: Էջմիածնի դպրոցի տնօրեն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նահատակյանը գալիս է, ասում է. «Ռոլե՛ս, տղերքը դուխից ընկել են: Հենց այնպես տեղը բռնել են, տարել, ո՞նց անենք, ազատենք»: Զենքը ձեռքներին են բռնել, ազատել հնարավոր չէ: Տղաներին հետախուզության եմ ուղարկում, որ տեսնեն՝ ում կարելի է բռնել: Գալիս են ասում, որ փոստում մեկը կա՝ ռուսի նման, Բաքվի հետ է խոսում: Ասում եմ. «Որ Բաքու է խոսում, ուրեմն մի բան կա»: Այն ժամանակ մեր շտաբը քաղաքապետարանի դիմաց էր, ես հիմնականում այդտեղ էի նստում: Ասացի՝ գնացեք, բերեք: Բերում են շտաբ՝ ինձ մոտ: Նայում եմ՝ դեմքը ռուսի նման է, ռուսերեն է խոսում, ազգանունը թուրքական

է՝ Ազիզով: Ասում եմ.

- Արա, դու թուրք ե՞ս, փաստաթղթերդ,- նայում եմ, տեսնեմ՝ սպա է,- ո՞վ ես:

- Սովետական բանակի սպա եմ:

- Ի՞նչ ես անում:

- Բաքվի հետ եմ խոսում:

Չգիտե՝ իրեն ինչու են բերել, խոսում է: Տեսա, որ սպա է, կարելի է փոխանակել, ասացի նրան բռնելու պատճառները: Ասաց.

- Իրավունք չունեք, ես սովետական բանակի սպա եմ:

Ռուսերեն է խոսում, բայց հաստատ թուրք է: Տղերքը պատրաստ կանգնած են: Աչքով եմ տալիս, սրան բռնում են, մի լավ ծեծում: Մըտնում է սեղանի տակը, ասում՝ «Не надо, не надо»: Տղերքին չթողեցի, որ շարունակեն: Հետո ասում է.

- Ես ի՞նչ անեմ, ես սպա եմ, բերել են այստեղ, ծառայում եմ, ես հետախույզ չեմ:

Վերջը, թուրքը մնում է թուրք: Լավ կադր էր: Օգանով Ռուդիկին ասում եմ՝ տարեք, պահեք: Շուշվա կողմի ոստիկանությունում երկու թուրք ոստիկաններ էին ծառայում: Ասել եմ. «Գնացեք, այդ երկու թուրքին բռնեք»: Ոստիկանը գնացել է ոստիկանությունից այդ երկու թուրքին վերցրել: Ասել եմ. «Պահեք, փոխելու ենք»: Վստահելի հարցերը Ռուդիկին էի ասում, նա էլ արագ տղերքին վերցնում էր, գնում: Պատանդներին լավ էին պահում:

Բ. - Որտե՞ղ էիք պահում:

Ռ.Ա. - Նկուղներում: Ոչ ոք չգիտեր, թե որտեղ են պահում, միայն նա գիտեր: Երբ հրաման էր ստանում, բերում էր: Ռուսին բռնելուց մի քանի օր անցնում է, ձայն չկա, բանակցությունների դուրս չեն գալիս: Գիշերը զանգում եմ ռուսական բանակ, ասում եմ.

- Ձեզ աշխատող ունե՞ք, Ազիզով ազգանունով:

- Հա:

- Բա որ այդ մարդուն տարել են, ծեծում են, սպանում են, ինչո՞ւ չեք մտածում դրա մասին, մեղք է,- խոսում եմ որպես այդ ամեն ինչի հետ կապ չունեցող մարդ:

- Ինչպե՞ս բանակցությունների դուրս գանք:

- Չգիտեմ, բանակցությունների դուրս եկեք շտաբի հետ:

Հաջորդ օրը բանակցությունների են դուրս գալիս: Զանգում են ինձ, հարցնում, թե ինչ է եղել, ասում եմ. «Չգիտեմ, բայց կարող եմ իմանալ, հետո կզանգեք, պատասխանը կասեմ, մենք այդպիսի գործերով չենք զբաղվում»: Նրանք գիտեին, որ այդպիսի հարաբերություններ կան, շտաբ կա: Բերդաձորի տղաներից երեսուն հոգու բռնած բերել են, տարել ոստիկանություն: Զանգում եմ տղաներին, ասում, որ շտաբից

գնում ենք, եթե տղերքին բաց չթողնեն, նռնակով խփում ենք: Լուրը հետախուզությունը տեղ է հասցնում, ոստիկանությունը տեղյակ է լինում: Դուրս են գալիս բանակցությունների. Սաֆոնովն էր: Ասում են՝ ի՞նչ եք ուզում: Ժողովուրդն էլ այժմյան նախարարության շենքը շրջապատել էր, եթե ինչ-որ բան այն չլիներ, պատրաստ էին ապակիները ջարդել: Նրանք զգում են, որ լավ բան չի սպասվում: Մեզ հետ էր նաեւ Գրիգորյան Համլետը: Ասում ենք, որ Բերդաձորի տղաներին պետք է բաց թողնեն: Բանակցություններն ավարտվում են նրանով, որ Բերդաձորի տղաներին բաց են թողնում: Մենք հասնում ենք մեր ուզածին: Ասում են. «Տեսնու՞մ եք, խոսելով հնարավոր է հարցերը լուծել»: Անդրանիկենց մի քիչ հետո բաց թողեցին: Անդրանիկը Լաչինի, շրջակա թուրքական գյուղերի, Շուշիի, Լիսագորսկի տարածքում շատ մեծ գործեր է արել: Գործ է արել, այսինքն՝ պատասխանատու է եղել այդ տարածքի համար եւ պատրաստ՝ ժողովրդին պահել: Ամենածանր գործն էր:

Իսկ Ազիզովի համար դուրս են գալիս բանակցությունների: Ասում եմ. «Նրանք ասում են, որ Հադրութից ինչ-որ մեկին զենքը ձեռքին բըռնել են, ինչո՞ւ են դրա համար բռնել, թուրքերը բոլորը զինված են, մենք՝ ոչ: Պետք է բաց թողնեք Էդիկին, նրանք լսել են, որ նա ձեզ մոտ է: Եթե բաց թողնեք, նրանք էլ Ազիզովին բաց կթողնեն»: Այդպես, ռուսների հետ բանակցությունը հաջողվում է, պայմանավորվում ենք: Զգուշացնում եմ, որ մինչեւ Էդիկին չվերցնեն տանեն ապահով տեղ, փոխանակում չանեն, որովհետեւ հնարավոր է՝ նորից բոլորին ձերբակալեն: Դիմացի շենքից շտաբի անդամների հետ նայում ենք: Ռուսները պայմանավորված ժամին մեքենաներով գալիս են, շտաբի շենքը շրջափակում, որ բոլորին բռնեն: Ես նախատասել էի, որ կարող էր այդպիսի բան պատահել: Ասել էի. «Դուրս եմ գալիս, բայց առանց ինձ գործ չձեռնարկեք»: Շենքում Գրիգորյան Համլետն էր, Արաքսյան, Սապոժնիկ Սերժիկը: Հիմնական գործ անող տղաներից այդտեղ չպետք է լինեին: Գալիս են, ասում՝ Кто Полес?, տղերքից ամեն մեկը թե՝ ես եմ: Երբ տղերքը գնում են, տեսնում, որ Էդիկը մեքենայի մեջ է, գալիս ասում են, որ նա իրոք մեքենայի մեջ է: Հետո պատմում են, որ Էդիկը մեքենայից ասել է. «Մինչեւ ինձ բաց չթողնեն, չհավատաք»: Ծեծել էին... Մի խոսքով, բաց են թողնում, տեղափոխում են, տանում մի քանի կիլոմետր հեռու մի տեղ: Իսկ երբ շրջապատել էին , տեսնում են, որ Ռոլես չկա, հարցնում են. «Բա ի՞նչ անենք», ասում են. «Երեխային բաց կթողնեք, հետո մենք կզանգենք, ինչ-որ տեղից Ազիզովին կբերեն»: Ստիպված Էդիկին բաց են թողնում, տեղափոխում են: Ասում եմ. «Ռուդիկենց ասեք, թող գնան բերեն»: Եվ զգուշացնում եմ, որ Ազիզովին տանեն ոչ թե շտաբի շենքի մոտ, այլ՝ պարկը գլխին, որ

չտեսնի, թե ով է իրեն տանում, եւ փոստի մոտ բաց թողնեն, հեռախոսի համարը տան, թող փոստից զանգի այդ համարով: Այդպես էլ անում են: Տղերքը հեռանում են, պարկը գլխից հանում է, զանգում շտաբ, ասում.

- Ազիզովն է:

- Որտե՞ղ ես:

- Փոստում:

- Դե ոտքով արի այստեղ:

Այնտեղից ոտքով գնում է: Ռուսները Ազիզովին վերցնում են, գնում: Ես պատուհանից ամեն ինչ տեսնում էի:

Դրանից հետո ինձ բռնում են. գործ էին սարքել: Հարցնում են Ազիզովին պատանդ վերցնելու մասին, ասում եմ. «Ես տեղյակ չեմ»: Ինձ որ հետագայում ձերբակալեցին եւ գործ սարքեցին, այս գործն էլ էին ինձ վրա բարդել:

Բ. - Ներսից տեղեկացնողներ կայի՞ն:

Ռ.Ա. - Ներսից ասել էին, որ Ռոլեսն է կազմակերպել:

Բ. - Ո՞վ էր նրանց տեղեկատուն:

Ռ.Ա. - Երբ զենքերը ստանում էինք, մի մասն էլ մարզադաշտից էինք բաժանում, Ռազմիկ Պետրոսյանը այդտեղ էր: Գալիս էին, նրանից վերցնում, տանում տարբեր շրջաններ՝ Մարտունի, Մարտակերտ... Ես Ռազմիկի հետ էի, միասին էինք գործում: Լուր են հասցնում, թե զենքի հարցով են զբաղվում, եւ անուններ են տալիս՝ Ռազմիկն է, Ռոլեսն է:

Բ. - Բայց նաեւ վաթսուն հոգու անուններով ցուցակ կար Արկադի Վոլսկու մոտ:

Ռ.Ա. - Հետագայում իմացա, որ Զորին, որոշ մարդիկ գիտեն այդ ցուցակի մասին: Ասել եմ. «Դուք ի՞նչ գիտեք, ի՞նչ ցուցակ է»: Պարզվեց, որ կրկնօրինակը վերցրել են: Ռոբերտ Քոչարյանն էլ ռուսների հետ կապ ուներ, ինֆորմացիան այնտեղից վերցնում էր, գալիս մեզ ասում էր:

Ռազմիկին բռնում են, տանում, հետո մարզադաշտը շրջափակում, կտուրի միջից, տարբեր տեղերից զենք-զինամթերքը հանում: Այդ ամենը Ռազմիկի ներկայությամբ չի եղել: Նա հո երեխա՞ չէ: Չէին կարող հաստատել, որ զենք-զինամթերքն իսկապես գտել են: Կարող էր պընդել, որ իրենք են դրել, իրենք էլ հանել: Բայց փաստն այն է, որ Ռազմիկին ձերբակալել են, զենք-զինամթերքն էլ գտել: Այն ժամանակ Ազգային խորհուրդ էինք ստեղծել: Պաշտպանության գծով պատասխանատուները ես եւ Ռազմիկն էինք: Գնում եմ Խորհուրդ, այնտեղ էին Վաչագան Գրիգորյանը, մյուսները եւս, ասում եմ, որ Ռազմիկին բռնել են, որ եթե մենք որեւէ գործ չձեռնարկենք, կգան, մեզ բոլորիս կբռնեն, որ հա-

մաձայնություն տան խփելու, նրանցից մեկին բռնելու: Ասում են. «Չէ՛, հնարավոր չէ...»: Ասում են, որ պետք է ժամանակավոր դուրս գամ, ստիպում են: Ասում եմ. «Չէ, ես այստեղից դուրս գամ, ի՞նչ կդառնա...»: Նույնիսկ ՊԱԿ-ից Թովմասյան Ռոբերտն է գալիս, տեղեկացնում, որ ինձ տանելու են, դուրս գամ: Սերգեյ Սերգեյիչն էլ է եկել: Եվ այնպիսի մարդիկ էին գալիս, զգուշացնում, որ դուրս գամ, զարմանում էի, թե նրանք որտեղից գիտեն: Որոշեցի ժամանակավոր գնալ Երեվան՝ գործուղման: Սերգեյ Սերգեյիչն առաջարկեց իր մեքենայով օդակայան գնալ: Գնում եմ հիմնարկ՝ գործուղման թուղթ վերցնելու: Այդ ժամանակ պոստը Եղբայրական գերեզմանից ներքեւ գտնվող կամրջի մոտ էր: Ասել էին, որ պոստերի մոտով չգնամ, ցուցակում գրված է, որ այնտեղից են պատրաստվում ինձ բռնել: Ուրիշ տեղով եմ գնում հիմնարկ: Ճոճքի մոտ կանգնեցնում են մեքենան: Ինձ ուղեկցում էր Ռուդիկը: Սերգեյ Սերգեյիչի վարորդը Միշան էր, որը նախկինում եղել է Սերժ Սարգսյանի վարորդը: Կռիվների ժամանակ Միշայի մեքենան ականով է ընկնում, պայթում: Մեքենայում Իվանյանն է լինում: Փաստորեն, նրանք տեղեկացված էին, թե ես ինչ ճանապարհով եմ գնալու հիմնարկ: Պահանջեցին անձնագիրս, փաստաթղթերս: Ստուգեցին փաստաթղթերը, զանգեցին, տեղեկացրին, որ այսպիսի մարդիկ կան, ասացին՝ վերցրեք: Նստեցնում են մեքենան, ամբողջ պոստը լուծարում են: Մեքենան քշում են դեպի ավտոբազան: Մի տեղ կանգնեցնում են: Մեկը հարցնում է.

- Ролес, ты скажи, где заложник.

- Не понял, какой заложник?

Ասում եմ, որ ես պատանդների մասին գաղափար անգամ չունեմ, ի՞նչ Ազիզով, ի՞նչ պատանդ... Տանում են օդանավակայան, ուղարկում Թիֆլիս, այնտեղից՝ Նովոչերկասկ: Ուղղաթիռ նստեցնելիս ձեռքերս հետեւից կապում են: Ազարյան Ռուդիկին էլ էին բռնել որպես ինձ ուղեկցողի: Նա Մարտունու վարչակազմի ղեկավարն է, բայց այն ժամանակ հանքային ջրերի արտադրության տնօրենն էր: Ստեփանակերտի բոլոր գործարանների տնօրենները օգնում էին, եւ նրանց հետ կապված հարցերը ես էի իրականացնում, առաջադրանքներ տալիս: Ցուրաքանչյուրն ինչ-որ բանով օգնում էր, օրինակ՝ ավտոդպրոցի տնօրենը մեքենա էր տալիս: Ուղղաթիռի մեջ ես եւ Ռուդիկն էինք, տասից ավելի մարդ՝ զինված, զենքերի փողերը մեզ ուղղած: Ասում եմ. «Ձեռքերս արձակեք, մատներս արդեն չեն աշխատում»: Ասացին, որ երկու ժամ սպասեմ: Բաց չթողեցին: Մեկին խնդրեցի, որ ավտոմատը հեռու պահի, երկու ժամ է՝ ուղղաթիռի մեջ ենք, կարող է քնով անցնի, պատահական խփի: Իջնում ենք, տանում են բանտ, այնտեղից՝ Նովոչերկասկ:

Բ. - Իսկ բանտի պայմաններն ինչպե՞ս էին:

Ռ.Ա. - Մի բաժակ թեյ էին տալիս, մի կտոր հաց: Ես եւ Ռուդիկը միասին էինք: Հետո իմացա, որ բռնել են Ղուկասյան Արկադիին, Գրիգորյան Ավետին եւ Թիֆլիս են տարել: Գրիգորյան Ավետը հետագայում՝ Շուշիի գրավումից հետո, գնում է Լիսագորսկ, այնտեղ վիրավորվում ու զոհվում: Այդ չորսս մի բանտում էինք: Մի քանի օր հետո Ավետին տարան, խոսեցրին, բաց թողեցին:

Փաստորեն, Ռազմիկին բռնելուց մի քանի օր հետո ինձ էլ բռնեցին: Եվ Ռազմիկին էին հարցաքննել, եւ ուրիշ տղաների, ամենքը մի բան ասել էին: Ինձ առանձին բանտախուց էին գցել: Մարդ էին բերել մոտս, որ խոսեցնի, ես էլ բան պատմեմ, մի բան իմանան: Ոչինչ չի ստացվել: Հետո ինձ տարել են Թիֆլիսի բանտ: Բանտում շատ ցուրտ էր: Ձմեռ էր: Երբ չորս հոգուս բաց էին թողնում զբոսանքի, այնտեղ սառցապատ տեղ կար, դրա վրա ֆուտբոլ էինք խաղում: Բաժանվում էինք երկու հոգանոց թիմերի՝ ես ու Ավետն էինք, Ռուդիկն ու Արկադի Ղուկասյանը: Իսկ թե չորսով ինչպես էինք ապրում բանտախցում, կարող է պատկերացնել նա, ով եղել է բանտում: Պատահել է, որ խոսակցություններ են եղել միմյանց դեմ:

Բ. - Ի՞նչ խոսակցություններ:

Ռ.Ա. - Օրինակ՝ Ավետը Արկադիին էր կպնում, թե՝ դու ով ես... Արկադին էլ հոդված էր գրել, դրա համար էին բռնել: Նա ինքն էլ չգիտեր, թե ինչու են իրեն բռնել: Ավետն ու Արկադին ուզում էին կռվել իրար հետ, թույլ չէի տալիս, ասում էի. «Չի կարելի, հիմարություն մի՛ արեք»: Ավետը այսպիսի սովորություն ուներ՝ մեկին ասում էր ՀՀԾ-ական, մյուսին՝ դաշնակ... Նախատում էի նրան այդպես խոսելու համար: Ես ամեն տեղ լինում էի, բոլորի հետ կապերի մեջ էի, բայց նման բաներ ինձ թույլ չէի տալիս, ասում էի, որ ամենալավը իմ ընկերներն են: Տղաներ կային, որոնք վաղուց էին նստած: Ասում եմ, որ տեղներս ցուրտ է, ոչ պատուհան կա, ոչ մատրաս, մեզ մի տաք տեղ տանեն: Ասում են, որ երեկոյան մեկին տանելու են գնդակահարելու, որ ազատվի, ինձ կտանեն այնտեղ, նորմալ տեղ է: Մեկը վրացի էր, հարցնում է՝ меня за что?, ասում եմ, որ ինձ երեսուն օրով են այդտեղ բերել: Ծիծաղում է. «Այստեղ երբեք երեսուն օրվա համար չեն բերում, քեզ ուրիշ բանի համար են բռնել, իսկ դու գաղափար էլ չունես: Այստեղ տասնհինգ տարով են բերում, որ վերջում գնդակահարության տանեն»: Ստեփանակերտից պետք է այնպիսի փաստաթղթեր բերեին, որ հիմնավորեին նախապես որոշած հոդվածը: Սակայն Բելառուսիայի քննիչները ստիպել են, որ հոդված տան, դատավորները չեն տվել, ասել են. «Մինչեւ չհարցաքննենք, բաց չենք թողնելու»: Ինձ բաց են թողնում, որ ներկայանամ դատախազություն հարցաքննությանը: Վերջին տասնհինգ օրը

Ռոստովում ինչ պայմաններում են պահել, ինչ օրը գցել... Տասնհինգ օրից Նովոչերկասկում տղաներից ինձ բաժանել են: Ում երեսուն օրը լրացել էր, բաց էին թողնում: Գալիս եմ Երեւան, ինձ չեն ճանաչում, էնքան որ նիհարել էի: Մի անգամ սառնարանի մեջ են բաց թողել, մի անգամ այնպիսի մի սենյակում, որտեղ ոչ մի պատուհան չկա, բայց այնքան ջեռուցված է, որ խեղդվում ես: Միտումնավոր աղի ձուկ կամ թթու դրած պոմիդոր էին տալիս, որ ծարավես, ծորակից ջուրը գալիս էր, անընդհատ ջուր խմես եւ քրտնես: Մնում էի մի ներքնաշորով: Հատակին ջուր էի լցնում, տասնհինգ րոպեից չորանում էր... Հետո գնացքով բերեցին մինչեւ Թիֆլիս, այնտեղ բանտում մնացի, իսկ հետո բաց թողին: Գալիս եմ Երեւան, այնտեղից էլ՝ Ստեփանակերտ: Կանչում են հարցաքննության: Գնում եմ դատախազություն: Ազիզովը բացատրություն էր գրել, որ այնտեղ Ռոլեսն էր, եւ գրել էր մյուս տղերքի անունները: Խոսում եմ նրանց հետ, լեզու գտնում: Լավ տղաներ էին, քեֆեր ենք անում: Բայց մեր դատախազության տղաները՝ հայերը, չեն օգնում: Իսկ այդ բելառուս տղաների հետ խոսում եմ, պայմանավորվում: Շուշիում էին ապրում: Ասում եմ.

- Ինչո՞ւ եք Շուշիում ապրում:

- Եկել ենք ձեր դատախազություն, ասել են, որ այդտեղ տեղ չկա, ուղարկել են Շուշի: Գնում ենք Շուշի՝ թուրքերն են խոսում, գալիս ենք այստեղ՝ սրանք են խոսում:

- Ասում են, որ դուք հայերի հետ հաց չեք ուտում...

- Սուտ է, լավ տղաների հետ ուտում ենք: Մենք քո մասին գիտեինք, պատմել են: Ասել են, որ արձանագրություն գրենք, չենք գրել: Եթե գրեինք, Թիֆլիսից չէիր գա:

Գործը այնպես են սարքում, որ իբր ես այնտեղ չեմ եղել: Որպես ականատես եմ հանդես գալիս: Ես այդ տղաներին օգնեցի: Ձանգեցի Երեւան, նրանց ուղարկեցի այնտեղ: Ասացի, որ նրանց համար տոմսեր գնեն, լավ տղաներ են, ուղարկեն Բելառուսիա: Շատերին են օգնել այդ տղաները: Հիմնական պարետատանը բժշկական տեխնիկումն ավարտած երկու բելառուս տղաներ էին նստում, նրանց հետ շատ լավ հարաբերություններ ունեինք: Որպես նրանց մոտիկ մարդ՝ բոլոր պոստերում մեքենայով ազատ շրջում էի: Դրա համար մեր մեքենաները ազատ կարողանում էին զենքը տանել-բերել: Իմ վարորդներից Բաբայան Գագոն, որ իմ համադասարանցին էր, զենք էր տեղափոխում, մատակարարում: Ռուս զինվորներին ծխախոտ էր տալիս, որ բաց թողնեն: Նրանց տեղափոխեցին եւ նոր խմբեր բերեցին: Մինչեւ նրանց հետ հարաբերություններ ստեղծելը մերոնցից շատերին ձերբակալում են: Ինձ վրա դրված էր «Կռունկի» ղեկավարների, օրինակ՝ Արկադի Մանուչարովի անվտանգությունը: Երբ ռուս ՕՄՕՆ-ա-

կանները գալիս են Մանուչարովին տանելու, շենքը շրջապատում են, տեսաձայնագրման արհեստանոցի տերը՝ Սուրիկը, որ նրանց հարեւանն էր, ասում է ինձ, ու ես Մանուչարովին հուշում եմ, որ դուրս գա տանից, հաջորդ մուտքով հեռանա: Այդպես էլ անում է: Մուտքի մոտից փախցնում տանում ենք Հրաչիկի աներոջ՝ Մանաս դայու տուն: Այնտեղ մի քանի օր ես եւ Մանուչարովը ապրում ենք: Քանի որ պատասխանատվությունը ինձ վրա էր, գիշեր-ցերեկ նրա հետ էի: Լուր է գալիս, որ տեղը գիտեն: Գիշերը տեղափոխվում ենք: Նույնիսկ մի քանի օր մեր շենքի տակ գտնվող ավտոտնակում՝ մեքենայի մեջ ենք քնել: Մանուչարովը մինչեւ հիմա հիշում է, որ տեղներս հարմար չէր, գիշերը քնած խռռացնում էինք: Արդեն հնարավոր չէր փախուստի մեջ մնալ, նա պետք է դուրս գար: Ոչ մեկին ոչինչ չեմ ասում: Վերցնում եմ պահեստապետ Հրաչոյի մեքենան: Իմ գործարանում Պողոսյան Բորիկ կար, նա շատ նման էր Մանուչարովին: Նրա անձնագիրն եմ վերցնում, տալիս Մանուչարովին: Նստում ենք մեքենան, գնում Երեւան: Հասնում ենք Միրբաշիր, մեքենան կանգնեցնում են: Այն ժամանակ թուրքերը բոլորիս ճանաչում էին, ինձ՝ որպես ճանապարհաշինարարի, բոլորը գիտեին: Ինձ մոտ գործուղման թուղթ կար, իբր մեկը պահեստապետն է, մյուսները՝ աշխատողներս, ես էլ տնօրենն եմ, գնում ենք Երեւան գործուղման: Ես թուրքերեն լավ եմ խոսում: Ղեկավարների անուններ եմ տալիս, ասում են՝ յախշի (լավ): Երբ սահմանը անցնում ենք, որ պետք է մտնենք Հայաստան, մի տաղավարում հաց ենք ուտում: Հարցնում եմ, թե որտեղ է «Աշոտ Երկաթը», ասում են՝ որ գնաք Ղարաբաղ, հետ դառնաք, տաղավարի անունը դնելու ենք «Աշոտ Երկաթ»: Հասնում ենք Հայաստան, տեղավորում եմ ապահով տեղում: Պարտքս կատարած համարելով՝ հետ եմ գալիս: Բայց Մանուչարովի տեղը տեղ չի տալիս, շատ էր անհանգիստ, զանգում էր Գրողների միություն, տարբեր տեղեր: Վերջը, տեղը իմանում են, բռնում տանում են: Հետո Մանուչարովին ազատելու համար մեծ միտինգներ եղան, բայց արդեն օգուտ չէր, ինչքան ուզում են լոբ-լոբ տան:

Խոջալուի թուրքերը Մեհտիշենի հացի գործարանում հրամանատարին էին սպանել: Գործերը ոստիկանությունում էին, դրությունը լրջանում էր: Հակոբին, որ Ստեփանակերտից էր, ասում եմ. «Գնա Մեհտիշեն, գործ արա»: Ատրճանակ է ուզում: Ամարասի Արթուրից վերցնում, նրան եմ տալիս: Հետագայում երեք տղաների հետ գնում են Ռոստովում գեներալ Սաֆոնովին սպանելու, սակայն շփոթում են եւ սպանում գեներալ Բլախոտինին: Հավանաբար շփոթել են, չնայած ասում են, որ դիտավորյալ շփոթեցրել են, քանի որ ՊԱԿ-ն ուզում էր հայ տղաների ձեռքով վերացնել Բլախոտինին:

Քանի որ պետք է բռնեին պաշտպանության տղաներին, հրամանատարներին, շարժման ղեկավարներին, որոշում ենք դառնալ պատգամավոր: Այն ժամանակ Հայաստանում պետք է Գերագույն խորհուրդ ստեղծեին, որտեղ նաեւ Ղարաբաղից ներկայացուցիչներ պիտի ընդգրկվեին: Որոշեցինք, որ Հայաստանում պատգամավոր կդառնան նրանք, ովքեր ամենաշատն են վտանգի մեջ, որպեսզի անձեռնմխելիության կարգավիճակ ստանան: Քաղաքական գծով Արկադի Մանուչարովն ու Ռոբերտ Քոչարյանն էին, պաշտպանության գծով՝ ես եւ Պետրոսյան Ռազմիկը: Չորս հոգի Հայաստանում են պատգամավոր դառնում, տասներկու հոգի՝ Ղարաբաղում: Աշոտ Մանուչարյանն էլ Աբովյանում էր իր թեկնածությունը դրել, բայց հանեց, թե՝ Ռոլես, դու պետք է անցնես: Մանուչարովը Չարենցավանում անցավ, բոլորս էլ անցանք, անձեռնմխելիության կարգավիճակ ձեռք բերեցինք: Մի անգամ, տանը նստած ռուսները զանգեցին, թե.

- Ասում են՝ հիմնարկդ ականապատված է, արի, ուզում ենք ստուգել:

- Ինչո՞ւ պետք է ականապատեն, ականները որտեղի՞ց... Ես իրավունք եմ տալիս, ստուգեք:

Պարզ է, ուզում էին ինձ խաբել եւ տանել: Նորից են զանգում: Ասում եմ. «Ա՛յ մարդ, դուք ստուգեք, ինչ ուզում եք արեք»: Ռուսները մտնում են հիմնարկ, ստուգում, ավտոմատով կրակում, ցրիվ տալիս, մեզ են փնտրում: Ասել էին, թե ինձ մոտ ինչեր կան, պետք է գտնեին: Հինգ րոպե անց դռան զանգը տալիս են: Ես հողաթափերով էի, սպորտային հագուստով, տանը հեռուստացույց էի նայում: Մտքովս չէր անցնում, որ կարող է գան տուն, բայց եթե տունս ստուգեին, շատ բան կգտնեին: Երեխան դուռը բացում է, գալիս ասում է. «Պապա, մի բոյով սալդաթ է քեզ կանչում»: Դուրս եմ գալիս, ռուս զինվոր է կանգնած: Ասում եմ.

- Ի՞նչ է պատահել:

- Ինձ հրամանատարն է ուղարկել, գնանք, քո հիմնարկը ականապատված է, պետք է ականազերծենք:

- Ա՛յ ցավդ տանեմ, ես նրա հետ խոսել եմ, ասել եմ, որ դուք ինչ ուզում եք արեք, ես գալիս եմ՝ ի՞նչ անեմ:

- Ինձ առաջադրանք են տվել՝ վերադառնալ ձեզ հետ: Որ այդպես է, ես կապվեմ նրանց հետ, եթե այդպես են ասել, մենք ետ ենք դառնում: Բայց ռացիան մեքենայում է, գնանք, որ այնտեղից խոսենք, ճշտենք:

Այդպես խաբում է, եւ ինձ տնային շորերով տանում են: Բայց եթե տունը ստուգեին, լավ չէր վերջանա: Մուտքից դուրս եմ գալիս, տեսնեմ՝ երկու «ՈՒԱԶ» կանգնած, տասից ավելի զինվորներ ավտոմատներով դուրս են գալիս, բարեւում են, խոսում են, մեկն էլ իբր ռացիայով ուզում է կապվել, բայց չի կարողանում: Ես տեսնում եմ, որ կամաց-

կամաց ինձ շրջապատում են: Կանայք, երեխաները, բոլորը դուրս են եկել: Մեկ էլ մեկը գոռաց՝ «Взять»: Թափվեցին գլխիս, ոտքերիցս, ձեռքերիցս բռնեցին, նստեցրին մեքենան: Տանում են մի տեղ, այդտեղից էլ՝ Շուշի: Հաջորդ օրը խցկում են զրահամեքենան, տանում օդակայան, այնտեղից էլ՝ Սարատով: Գրիգորյան Համլետը ակտիվ դեմք էր, խոսքը երեսին ասող, անձեռնմխելիությունը ապահովելու համար պատգամավոր էր ընտրվել, բայց դա էլ նշանակություն չուներ, բռնում էին: Երեւանից գալիս ինքնաթիռը փոխել է, ուրիշը նստել: Սպասում էին, որ նրան էլ պետք է բռնեն: Համլետին էլ են բռնում: Երկուսիս նույն ուղղաթիռով տանում են Սարատով: Նույն բանտախցում էինք: Հայաստանում որոշում են, գալիս, մեզ ազատում: Երբ Շուշիի բանտում մեկ օր պահել են, ինձ խոսեցրել են: Այնտեղ ե՛ւ թուրքեր կային, ե՛ւ ռուսներ: Ասում եմ. «Ես տնօրեն եմ, ճանապարհաշինարար...»: Ասում են.«Հողաթափերով, սպորտային շորերով ես, թվացել է՝ «ԿԱՄԱԶ»-ի վարորդ ես»: Թուրքերի անուններ տվեցի, որոնց ճանաչում էի: Բայց մի ռուս ասաց, որ ինձ ճանաչում է: Ամարասի Արթուրն էլ է այնտեղ եղել, հետո փոխանակել են: Այդ ռուսը ինձ ասաց, որ իմ դեպքը այնպիսին է, որ ինձ փոխանակել հնարավոր չէ: Ես Արթուրին խորհուրդ եմ տվել, որ թղթերը ձեռքին չպահի: Եթե հանկարծ բռնեին, փաստաթղթերով դիպլոմատն էլ ձեռքին լիներ, ամբողջ ինֆորմացիան կիմանային՝ ինչքան զենք ունենք, Ամարասի Արթուրին էլ կկորցնեինք: Մի անգամ Արթուրը, Ռոբերտ Քոչարյանը եկել էին մեր հիմնարկ հաշվետվության: Խոսել ենք, ստուգել ենք, Արթուրին ասել եմ, որ թղթեր չպահի, հավատում ենք նրան:

Սաֆարյան Գագիկն էլ էր զբաղվում զենք-զինամթերքի հարցերով: Հայաստանից զենքի տարբեր տեսակներ էր հավաքում, ուղղաթիռով ուղարկում: Ալիկին պարետատանն էինք նշանակել, որպեսզի կարողանայինք ուղարկածը դիմավորել: Գագոն ուղարկում էր Ստեփանակերտ, Դադամյանը կամ մեկ ուրիշը դիմավորում էին, բերում էին շտաբ, տանում էինք Ռազմիկի մոտ, այնտեղից բաժանում:

Մեհտիշենի ճանապարհը պետք է շինվեր: Քանի որ Շուշիից խփում էին, Շուշից չէինք կարողանում անցնել: Որոշեցի մեր հիմնարկի մոտից ճանապարհ սարքել, որ Շուշի գլխից, շրջանցելով Մալիբեյլուն, ձգվեր մինչեւ Մարտունի: Շարժման սկզբներին էր: Քարին տակի վիճակը ծանր էր, ժողովուրդը չէր կարողանում գնալ-գալ: Շուշից Սղնախ գյուղով ճանապարհ եմ սարքել: Ոչ թե ուրիշին եմ հանձնարարել, այլ ինքս եմ զբաղվել այդ ճանապարհի շինարարության բոլոր հարցերով՝ որտեղով ձգվի, ապահով եւ ծածկված լինի: Պետք էր զգույշ լինել, թուրքերը խփում էին: Ճանապարհը հասցնում ենք մինչեւ Քարին տակ գյուղը: Ուրախությունից աշխարհը գյուղացիներինն էր դառել: Ճանապարհի առիթով մենք զենքեր էինք տեղափոխում, զինում գյուղերի ջոկատներին, օգնում ինքնապաշտպանության կազմակերպմանը: Ճանապարհների կառուցման խնդրով մեզ օգնում էր «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Մանուշակ Պետրոսյանը մի քանի անգամ այցելել է, ֆինանսավորել այդ կարեւոր գործը:

Պաշտպանության համար զենք հիմնականում մատակարարում էր Ամարասի Արթուրը: Նրա հիմնական նպատակը, որի համար գիշերցերեկ աշխատում էր, զենքերը տեղափոխելը եւ տեղ հասցնելն էր: Կամ ինքն էր բերում ուղղաթիռով՝ Շահումյանով, Քոլատակով կամ Հադրութի կողմերով: Մի քանի անգամ ես էլ եմ գնացել, տեղափոխել ենք: Հիմնականում Արթուրն էր զբաղվում, նաեւ՝ Կարապետյան Ագոն, նա էլ ուղղաթիռներով բերում էր: Մի անգամ, երբ գնացել էինք դիմավորելու, հետաքրքիր ձեւով էր զենքը ուղարկել: Ավտոմատները, փամփուշտները լցրել էր տակառների մեջ, գլխին յուղ լցրել: Ոչ ոք չէր կասկածի, որ յուղով լիքը տակառների մեջ կարող էր զենք լինել: Ռուսների հսկողության տակ ինքնաթիռով բերեցին, նրանք չնկատեցին էլ: Ռիսկի գործ էր, բայց տեղափոխեցին:

Մեր հիմնական մատակարարողներից էր նաեւ Հարութը՝ Ուջանից եկած բժիշկն իր ջոկատով: Հայաստանից տարբեր տեսակի ինչքան զենք կար, հավաքում էր, կամ ես էի գնում, բերում, կամ ինքն էր տեղափոխում:

Մեծ գործերով օգնում էր Սաֆարյան Կամոն: Նա Վրաստանից, տարբեր տեղերից հավաքում էր իր մոտ, կամ ես էի բերում, կամ նա էր տեղափոխում Ստեփանակերտ:

Հայաստանում «Ղարաբաղ» կոմիտե կար, նրանք էլ ահագին զենք առնում էին, հավաքում, տեղափոխում: Պատահում էր՝ Ռոբերտ Քոչարյանն էր զբաղվում:

Բ. - Պատմեք ձեր հիմնական՝ սակրավորական աշխատանքների մասին:

Ռ.Ա. - Տարիներ անցան, արդեն կարեւոր գործեր պիտի արվեին: Պետք էր միավորել ջոկատներին, գնդերին եւ նորմալ բանակ ստեղծել: Ճիշտն ասած, մի քանի անգամ հավաքվեցինք այն մարդկանցով, որոնք հիմնականում զբաղվում էին այդ գործերով: Այդ ժամանակ մասնակցել են տարբեր մարդիկ եւ՛ Հայաստանից, եւ՛ Ղարաբաղից: Որոշում էին, թե ում պետք է հրամանատար նշանակեն: Իմ թեկնածությունն էլ են առաջադրել, բայց հետո որոշել են, որ լավ կլինի Կոմանդոսին՝ Արկադի Տեր-Թադեւոսյանին նշանակեն: Որոշեցինք նրան նշանակել Ղարաբաղի բանակի շտաբի պետ: Դժվար էր ջոկատների հրամանատարներին համոզել, որ միանան: Ոմանք միմյանց նույնիսկ չէին վստահում: Ասացինք, որ սկզբում առանձին գործեր կանենք, հետո

միասին կաշխատենք: Վերջը, մի կերպ ստեղծեցինք, Կոմանդոսին հրամանատար նշանակեցինք, տարբեր շրջանների ջոկատներին միավորեցինք: Երկուսը կամ երեքը միանում էին, վաշտ ստեղծում: Ստեղծեցինք Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Մարտունու ստորաբաժանումները եւ հրամանատարներ նշանակեցինք: Ինձ նշանակեցին բանակի ինժեներական ծառայության եւ սակրավորների պետ: Մեր հիմնական պարտականությունն էր ականապատել եւ ականազերծել: Ականները մենք հիմնականում ստանում էինք Հայաստանից: Մի քանի անգամ գնացել ենք, պայմանավորվել:

Բ. - Գիտենք, որ ադրբեջանցիները տարբեր տեղերից ընդգրկել էին պրոֆեսիոնալ սակրավորների, որոնք Աֆղանստանից փորձ ունեին, ծուղակներ էին սարքում, եւ մերոնք հաճախ ընկնում էին ծուղակը: Իսկ այստեղ ի՞նչ էր արվում այդ ուղղությամբ:

Ռ.Ա. - Պոլիտեխնիկական ինստիտուտում ռազմական ամբիոն ունեինք: Ավարտելուց հետո երկու տարով տարան Մերձբալթյան երկրներ զինվորական ծառայության որպես զրահատանկային գնդի առանձին սակրավորային զրահատանկային դասակի հրամանատար: Այնտեղ ես սովորեցի եւ դարձա սակրավոր: Ես պատահական մարդ չէի իմ գործում, գիտեի ինչպես պայթեցնել, ականապատել կամ ականազերծել: Քիչ մարդիկ կային, լավ մասնագետներ չունեինք, որոնք կարող էին զբաղվել ականազերծող գործիքների հայթայթման հարցով: 1990 եւ 1992 թվականներին գնացի Մոսկվա, տղաները օգնեցին, եւ այնտեղից տեղափոխեցի ամենալավ ականազերծող գործիքները, որ Հայաստանում չկային: Արդեն բանակը կազմավորվել էր: Երբ ականները բերում էինք Հայաստանից, արդեն Շուշին գրավելուց հետո էր: Դրանից առաջ ինքնաշեն ականներ եւ ուրիշ զենքեր էինք պատրաստում: Դրանք մասամբ արդարացնում էին իրենց: Մտածեցինք, որ ուրիշ տարբերակ չկա, ինքնաթիռով՝ փոքր «ՑԱԿ»-ով, ուղղաթիռով զենք-զինամթերք, սոլյարկա, բենզին բերելու համար դժվարություններ կան: Եվ ստիպված էինք ճանապարհ բացել դեպի Հայաստան: Հարկավոր էր բացել Շուշի - Լաչին ճանապարհը: Դա էր հիմնական նպատակը, այլ փրկություն Ղարաբաղը չուներ: Շարժման ընթացքում, երբ վիճակը ծանր էր, ես մի անգամ գնացել էի Հայաստան, խոսել էի «Ղարաբաղ» կոմիտեի տղաների հետ՝ որ եթե կռիվ լինի, նրանք կգա՞ն օգնության: Ճիշտն ասած, նրանք այնքան էլ կոնկրետ պատասխան չտվեցին: Մտածում էինք, որ կարող են Լաչինի կողմով մեզ օգնության գալ: Այն ժամանակ՝ կոմունիստների օրոք, ասացին. «Հնարավոր չէ, չենք կարող, խանգարում են»: 1990 թվականին գնացինք ընտրությունների, որոշեցինք եւ համաձայնվեցինք Լեւոնին ընտրել, քանի որ նա խոստացել էր նախագահ դառնալու դեպքում զենքով օգնել Ղարաբաղին: Ասել էր, որ Հայաստանի բոլոր գործարաններում զենքեր կպատրաստվեն:

Բ. - Ինչպե՞ս էին լուծվում սակրավորության հետ կապված խնդիրները:

Ռ.Ա. - Շուշին գրավելու ժամանակ առաջինը ուղարկեցի Այդինյան Էդիկին, որը հետագայում դարձավ իմ տեղակալը, նա հիմա ինժեներական ծառայության պետն է: Շուշիից դեպի Լիսագորսկ - Լաչին ճանապարհը պետք է անտառներով գնային, ականապատեին, քանի այդ ճանապարհը բաց էր, այդտեղից կարող էին Շուշիին օգնության գալ: Եվ այդ դեպքում կպայթեին, եւ հետ փախչելու դեպքում: Գնացին, ականապատեցին: Երբ Շուշիի վրա հարձակումը սկսեցինք, տանկերը, զրահատեխնիկան պետք է այս ճանապարհով բարձրանային: Տանկերը գնացին, բայց ճանապարհը փակ էր: Շուշի չհասած՝ լիցքավորման կետի մոտ, այդ ճանապարհը թուրքերը ծածկել էին: Կոմանդոսը կապվեց եւ ասաց, որ պետք է ճանապարհը բացել: Ես տեխնիկա վերցրի, գնացի, որ բացեմ: Մինչեւ բացելը՝ տանկերը գնացին սարերի վերեւը, կալերի կողմերը ստուգայցի՝ հնարավո՞ր է այդ ճանապարհով մոտենալ Շուշիին: Ես տեսա, որ ճանապարհը ականապատված է, տղաների հետ միասին նայեցինք, հանեցինք, ճանապարհը բացեցինք: Երբ ճանապարհը փակում են, ական էլ են դնում, որ եթե տրակտորով կամ մի ուրիշ մեքենայով աշխատես, պայթես: Դրանից հետո ճանապարհը դեպի Շուշի բաց էր: Բայց հիմնական հարձակումը եղել է Շուշիի սարերով, ձորերով: Այնպես որ՝ հիմնական տեխնիկան գնաց: Իսկ առաջին տանկը, որ Շուշիի մոտ պայթեց, Շահենն էր, ես նրանից մի քիչ ներքեւում էի: Նրանք հասան այնտեղ, որտեղ հիմա տանկ է դրված, անցան գնացին, այդտեղ էլ նրանց խփեցին:

Բ. - Պայթե՞լ է, թե՞ խփել են:

Ռ.Ա. - Շուշիից թուրքերն են խփել, դա ական պայթյուն չէր: Փրկարարներն էլ էին այնտեղ, բայց փրկել հնարավոր չէր: Պայթեց, ամբողջությամբ վառվեց:

Դրանից հետո ցանկացած գործ լինելիս՝ Շուշիում կամ ուրիշ տեղերում, առաջինը մենք էինք գնում, ճանապարհը մաքրելով բացում դեպի Լաչին: Գնացինք մինչեւ Լաչին, այդտեղից՝ Գորիս: Ավելի հեռու ճանապարհները նայում էինք, ստուգում:

Բ. - Լավ սակրավոր տղաներից ո՞ւմ անունը կարող ես հիշել: Կոմանդոսներ էլ ունեցաք...

Ռ.Ա. - Կորուստներ ունեցել ենք ականազերծելիս: Մարտունիում, Մարտակերտում, բոլոր շրջաններում ինժեներական ծառայություններ էինք ստեղծել, որոնք հրամանատարներ ունեին: Ամսվա վերջին գալիս եւ քարտեզի վրա ցույց էին տալիս, թե որտեղ են ականապա-

տել: Պատահել է, որ սխալ են թույլ տվել, պայթել են, նրանց հետ ոչընչացել է նաեւ քարտեզը: Եվ այդպես արդեն տեղադրված հազարավոր ականների տեղը կորցրել ենք, քանի որ դնողը պայթել է: Կռվից հետո ահագին հանել ենք, բայց շատ տեղերում մնացել են: Մեր ինժեներական ծառայության բաժնում Բաղդասարյան Սվետա կար, նրան զգուշացրել էի, որ անպայման գրի առնի, թե ով է զոհվել, որտեղ եւ ինչ պատճառով:

Բ. - Իսկ քարտեզները պահպանվե՞լ են:

Ռ.Ա. - Քարտեզները կան, պահպանվել են, ով եկել է, հաշվետվություն է ներկայացրել, շտաբում մինչեւ այսօր էլ կան:

Բ. - Իսկ ով չի հասցրե՞լ, պայթե՞լ է...

Ռ.Ա. - Եթե որեւէ մեկը մասնակցել է, հետն է եղել, նա է բերել, իսկ եթե ոչ՝ այդպես էլ կորել է: Ամեն ինչ գրված է: Բոլորին հիշել չեմ կարող:

Բ. - Կայի՞ն լավ վարպետներ, որոնք գլուխ էին հանում:

Ռ.Ա. - Բաղդասարյան Սվետային եթե հարցնեք, նա բոլորի անունները կտա, կասի, թե ովքեր են մահացել, որտեղ եւ ինչու: Սվետան շարժման սկզբից մինչեւ պատերազմի վերջը մասնակցել է, վերջում բանակից դուրս է եկել: Ամենաշատը Ավոյի ժամանակ ենք ականապատել: Ասում էր՝ պետք է ամբողջը ծովապատենք, այսինքն՝ ծովի նման լցնենք ականներով:

Բ. - Ավոն ասում էր, որ զոհերի ութսուն տոկոսը ականի պայթյունից է, ինչո՞ւ էր այդպես, չէ՞ր ստացվում՝ զինվորներին բացատրեն, որ զգույշ մնան:

Ռ.Ա. - Եղել են պահեր, որ գնացել են, ականապատել, հետո՝ ականազերծելիս... օրինակ՝ ական կա, որ եթե դնում ես, հանել չի կարելի, այն պետք է պայթեցնես: Բայց եղել է, որ ասել են՝ այնպես անենք, որ ձայն չլինի, պայթեցնել չի կարելի, իսկ ականն այնպես է դրված, որ այլ կերպ հնարավոր չէ հանել: Ասկերանում են այդպիսի դեպքեր եղել, Մարտունիում: Ասկերանում ինժեներական ծառայության պետ էի նշանակել Արմենին: Նրա հետ ուղարկել էի եւս մի քանի հոգու: Աղդամի գրավման ժամանակ հրաման տվեցին, որ հարկավոր է ականազերծել, որպեսզի մեր զրահատեխնիկան այդտեղով անցնի: Մի քանի անգամ եղել են դեպքեր, երբ որոշ գործեր են արել, մեր տանկերն էլ են պայթել: Մեր շտաբում աֆղանական պատերազմի հարուստ փորձով գնդապետ Զենեւիչ կար, նա ռուս էր, շատ խելացի մարդ: Եթե մի դեպք էր լինում, Զենեւիչը ինձ վրա միշտ ջղայնանում էր, ասում էր. «Էլի՞, նորից պայթեցի՞ն մերոնք»: Ասում էի. «Դե, պետք է մեզ ասեին, որ բացեինք: Առանց մեզ ասելու, առանց ճանապարհն իմանալու գնում են, պայթում»: Կարեւորն այն է, որ ականը դրած՝ աշխատել է, թե մերոնք

են գնացել, թե թուրքն է եկել, փաստն այն է՝ դրած է, պայթում է: Աղդամի գրավման ժամանակ Արմենին ասել են, որ գնա իր ականապատածը ականազերծի: Ճիշտն ասած, Ասկերանի հրամանատարը՝ Վիտոն էր ասել, որ պետք է ականազերծել: Արմենն ասաց, որ հնարավոր չէ, Վիտոն ասաց՝ դե փորձի՛ր, էլի: Պայթեցնելիս թշնամին կարող է իմանա... Առանց մեզ ասելու Արմենին ուղարկում է: Պատահել է, որ Ասկերանում, Մարտունիում ու այլ տեղերում հրաման են տվել, բայց ինձ հետ պետք է համաձայնեցնեին: Առանց ասելու գործեր են արել, շատ դեպքերում սխալվել: Ես կյանքում թույլ չէի տա, որ Արմենը գնա, իր դրած ականները, որոնք կրկնակի էին դրված, հանի: Ուղարկեցին, գնաց на рück, ասացին՝ պե՞տք է: Գնաց ու պայթեց: Հետո զանգեցին, ասացին, որ այդպես է եղել: Գնացինք, հարյուր հիսուն մետրի վրա փնտրեցինք, մի տոպրակի մեջ մեկ-երկու ոսկոր, մի քիչ հող բերեցինք, թաղեցինք: Դրանից հետո ես խոսել եմ Ասկերանի հրամանատարի՝ Բալասանյան Վիտոյի հետ, ասում էր՝ նա իր կամքով է գնացել, բայց այդպիսի բան չի կարող լինել: Առանց հրամանի սակրավորները քայլեր չեն ձեռնարկում, նրանք գիտեն, որ սխալվելու իրավունք չունեն, որովհետեւ նրանց սխալը մի անգամ է լինում:

Բոլոր իմ հիմնական աշխատողները՝ ճանապարհաշինարարները, սակրավորներ էին: Այդ պատճառով ինժեներական ծառայությունները ստեղծեցի՝ հենվելով նրանց վրա: Սերգեյին, որ իմ առաջին աշխղեկն էր, ուղարկեցի Ասկերան: Արմենի հետ միասին գնացին: Մեկ-երկու օր առաջ Սերգեյն էլ ականազերծելիս սխալ թույլ տվեց: Հակահետեւակային ականներ են եղել: Մի քիչ ուժեղ սեղմեց, պայթեց, աչքերը կուրացրեց: Հիմա Սերգեյն ապրում է, բայց աչքերը չեն տեսնում: Այստեղ կույրերի միություն են ստեղծել: Երբ նա հիվանդանոցում էր, գնացի այցելության: Աչքերը փակած էր: Բժիշկների հետ խոսեցի, ասացին, որ երեւի աչքերը չեն տեսնի: Արմենն էլ եկավ Ասկերանից, Սերգեյի հետ խոսեց: Միասին էին աշխատում, մեկը հրամանատարն էր, մյուսը՝ տեղակալը: Լացեց, որ իր ընկերը կուրացել է: Ասացինք, որ լավ կլինի: Արմենը մեկնեց Ասկերան. սթրեսային հոգեվիճակում էր: Այդպիսի դեպքերում, երբ սակրավորը անհավասարակշիռ վիճակում է, չի կարելի թույլ տալ ականի հետ գործ ունենալ:

Ինչպես ասացի, բոլոր շրջաններում ինժեներական ծառայություն ստեղծեցի: Մի առանձին բրիգադա ուղարկեցի Ցոր՝ Օգանովսկու մոտ: Մեծ գործեր անելու համար մեր հիմնական գումարտակից միշտ օգնության էի ուղարկում այնտեղ, որտեղ դրա անհրաժեշտությունը կար: Օրինակ՝ Էջմիածնի Մանվելը, երբ որեւէ տեղ դիրքավորվում էր, չնայած նա ուներ սակրավորներ, ամիսներով ես էի մարդիկ ուղարկում ականապատելու կամ ականազերծելու համար, որովհետեւ հարձակ-

վելու ժամանակ նրանք կամ պետք է ականները հանեն, կամ պաշտպանվեն: Զոհեր տվել ենք, բայց մեր գործը արել ենք:

Բ. - Իսկ կամուրջներ պայթեցնելու կամ դնելու գործով զբաղվո՞ւմ էիք:

Ռ.Ա. - Քելբաջարի տարբեր օպերացիաների ժամանակ, օրինակ՝ հենց Քելբաջար գնալիս, երբ ճանապարհների համար հետախույզներ ուղարկեցի, Էդիկենց էի ուղարկել: Գնացին, տեսան, որ ահագին տեղեր թուրքերը պայթեցրել են, ճանապարհները փակ են: Եվ առանց զրահատեխնիկայի՝ առանց տանկի կամ «ԲՄՊ»-ի գնալու դեպքում հաղթանակը բացառվում է: Հրաման ստացա, որ պետք է ճանապարհները բացենք: Ստիպված այստեղից մի «Կամացու» տարա: Ութերորդ վաշտ են ասում, կրկժանցի Սպարտակը, որը հիմա ինձ մոտ է աշխատում, այն ժամանակ այնտեղի հրամանատարն էր, հետո ես նրան բերեցի ինժեներական ծառայության «Կամացուն» աշխատեցնելու համար: Տարբեր տեղեր գնալիս, ճանապարհ բացելիս, երբ պետք է սակրավոր աշխատեր, Սպարտակին էի հրահանգ տալիս: Սպարտակին այստեղից տեղափոխում ենք, ճանապարհները բացելով տանում մինչեւ Քելբաջար: Մինչեւ ճանապարհը չէինք բացում, ոչ մի զրահատեխնիկա չէր անցնում: Այդ ճանապարհով Ավոյի տանկերն ու զրահամեքենաներն էին անցնում: Քելբաջար գնալիս մի տանկ պայթեց: Մինչեւ այդտեղ մաքրելով եկել էինք, անցնելը ծանր էր, հնարավոր չէր: Ավոյի հետ միշտ կապի մեջ էինք: Այդ ժամանակ Դալիբալթայանը միշտ մեզ հետ էր, նա խորհուրդներ էր տալիս: Դեռ շարժման սկզբից ես շատ եմ նրա հետ հանդիպել: Նա ինձ համար ռազմական մեծ մասնագետ էր: Թուրքերը դիրքավորված տեղից ականանետով խփում էին: Ավոն կապվեց եւ ասաց, որ իրենք չեն կարողանում կպնել, թող տանկը դուրս գա, ուղիղ խփի: Ասում եմ.

- Ավո՛, հնարավոր չէ, դուրս գա՝ կխփեն:

- Չէ, մերոնց ասա, թող շարժվեն:

- Դու կարող ես հրաման տալ, բայց հենց դուրս գան, կխփեն:

- Չէ՛, ռացիա տուր նրանց:

Տվեցի: Կապվեց տանկի հրամանատարի հետ: Բացատրում է՝ դուրս արի, խփի... Կոորդինատներ էլ է տալիս: Տանկը հենց դուրս է գալիս, թուրքերը խփում են: Մեր աչքի առաջ էր: Ավոյին ասում եմ՝ «Տեսա՞ր, որ խփեցին, ասում էիր՝ հնարավոր չէ»: Անհնար էր նրանց փրկելը: Խփեցին ու գնդացիրով կրակ բացեցին: Ոչ ոք չէր կարողանում մոտենալ: Դալիբալթայանն էլ էր մեզ հետ: Ոչ կարողացանք տանկը հանել, ոչ բացեցինք, տղաներն էլ մեջը, այնքան վառվեց, որ պայթեց: Մինչեւ հիմա էլ տանկն այդտեղ է: Դրանից հետո այդ դիրքը, որտեղից թուրքերը խփել էին, վերացրինք: «Գրադ» կայանքով տարբեր տեղերից խփում էին: Տղաները շրջանցել են եւ մտել նրանց խրամատը: Մտել են, խփել են, զոհվել են, բայց վերացրել են: Այդ տղաներին հերոսի կոչում են տվել: Հետո Ավոն ասաց. «Առաջը ականապատված է, գնացեք հանեք, որ զրահատեխնիկան առաջ գնա»: Այդ ժամանակ ես էի, Էդիկն ու Մարսելը՝ իմ տեղակալն ու օգնականը: Գնացինք, որ մաքրենք, թուրքերը սկսեցին խփել, կես ժամ մեզ պառկած պահեցին: Ավոյի հետ ես խոսեցի, ասացի. «Ավո՛, դու ինձ ասում ես ազատ գնացեք, բայց թուրքերը խփում են: Դուք սարի վրայից նայեք, մաքրեք, որ մենք ազատ մտնենք»: Ես նրանց ասացի՝ որտեղից են մեզ խփում, մերոնք խփեցին, բայց որեւէ բան անել հնարավոր չէր: Պատահական փրկվեցինք: Փախանք այնտեղ, որտեղ տանկը խփել էին, թաքնվեցինք տանկի հետեւում: Հետո Ավոն ասաց. «Խփել ենք, ազատ դուրս եկեք»: Գնացինք ականազերծելու: Ես միշտ իմ մեքենայով էի գնում, սեւ «ԳԱԶ-24» էր: Դալիբալթայանն էլ էր այնտեղ: Ականազերծելուց հետո ռացիայով ասացի. «Տանկերը թող գան»: «ԲՄՊ»-ն, մյուս զրահամեքենաները, քանի որ կորցրել էին իրենց ընկերոջը, վախենում էին, չէին հավատում, չէին գալիս: Սակրավորի աշխատանքն այդպես է, երբ ականազերծում ես, առաջինը ինքդ պետք է անցնես: Վարորդիս՝ Վալոյին, ասացի. «Դե լավ, քշիր, արի մեր հետեւից»: Վաչոն նրանց ասաց. «Արա, գոնե դուք գնացեք, եթե մի բան լինի... ձերը տանկ է, «ԲՄՊ» է, ողջ կմնաք, բայց «24»-ը որ պայթեց...»: Հետո ռացիայով ասում է, որ նրանք չեն գալիս: Ասացի. «Ոչինչ, դու արի»: Եթե տանկի համար դրված ականի վրա «24» պայթի, ականջն էլ չի մնա: Ասացի՝ պետք է գաս: Նա գալիս է, տանկերն ու «ԲՄՊ»-ն՝ նրա հետեւից: Հետո նրանց ասացինք. «Չեք ամաչո՞ւմ, արա՛, ինչո՞ւ եք այդպիսի բաներ անում»: Միշտ այդպես է եղել. որտեղ ականազերծել ենք, առաջինը մենք ենք այդտեղով անցել, մեր հետեւից եկել են: Եվ այդպես գնացել ենք մինչեւ Քելբաջար: Դրանից հետո Օմարի ճանապարհները պետք է բացեինք: Ականազերծելով մինչեւ Օմար բարձրացել ենք: Այնտեղ մեծ գործեր ենք արել՝ ականապատել ենք, փոսեր սարքել: Այն ժամանակ Գզողլյան Ֆելիքսը եկավ: Մի անգամ նրանց վաշտը կամ գունդն էր եկել: Միասին գնացինք նայեցինք: Մտանք մի փոսի մեջ: Օմարի ներքեւի մասում լեռնանցք էր: Ամբողջ այդ տարածքում խոր փոսեր էի պայթեցրել, որ թուրքերը ոչ մի կերպ չկարողանան անցնել: Ռեժիսոր Կարեն Գեւորգյանը եկել էր, ուզում էր նկարահանել: Ես էլ ասացի. «Պետք չէ, ընդհանրապես մի նկարիր»: Ես նկարվելուց միշտ էլ խուսափել եմ: Լեռնանցքում փոսերը պայթեցնելուց հետո հանգիստ էինք, որ թուրքի տանկերը չէին կարող գալ: Եթե բարձունքում ես, հետեւակը ոչ մի կերպ չի կարող բարձրանալ:

Մարտակերտի, Քելբաջարի գրավման ժամանակ Մանվելը պետք է

Մեծ Շենից դեպի Տոնաշենի կողմերը հարձակվեր: Երբ Մեծ Շենից իջնում են, պայթեցրած կամուրջների են հանդիպում: Գետի մի կողմը թուրքերն են, մի կողմը մերոնք են: Մանվելը ասում է. «Ռոլե՛ս, թե կարողանաս մի կամուրջ դնել, ասում եմ՝ այդ մի կողմը գրավելու եմ, միայն կարողանանք անցնել»: Անցնել հնարավոր չէր: Կամուրջը պայթեցրած էր:

Բ. - Կետին կյուղերի (Գետագոմեր) մոտ է՝ Տոնաշենից Զրաբերդ ու Իրեք մանկունք տանող ճանապարհին:

Ռ.Ա. - Այդ ժամանակ ես մնում եմ Օմարի, Քելբաջարի կողմերում, իմ տեղակալին՝ Այդինյան Էդիկին, ասում եմ, որ գնա կամուրջը դնի: Մենք անհրաժեշտ ամեն ինչ ունեինք: Քսան մետրանոց կամուրջ տեղադրող զրահամեքենա ունեինք: Բայց Քելբաջարը գրավելու ժամանակ մի հատ այնտեղ էինք դրել, գետով անցնում էինք: Քանի որ Գետավանի կամուրջները պայթած էին, հարձակվելու ժամանակ մենք մեր դրած ռազմական կամուրջով անցանք: Պատահել է, որ մեր տեխնիկան կամուրջից ընկել է, չեն կարողացել անցնել: Բայց, մինչեւ Քելբաջարից հետ դառնալը, այդ կամուրջը ես եմ կառուցել: Այն ժամանակ Սամոն էր հրամանատարը, նրան ասացի, որ Շուշիի բանտում ինչքան հայ բանտարկյալներ ունենք, բոլորին տանի այնտեղ, որ աշխատեն: Գիշեր-ցերեկ աշխատեցին, կամուրջը վերականգնեցին: Մինչեւ հիմա այդ կամուրջն աշխատում է:

Բ. - Հա, Քարվաճառի կամո՞ւրջը, որ անցնելիս միշտ շրխկում է, շրխկան կամուրջ է դարձել: Վրան երկաթե հաստ թերթ է դրած, որ մեքենա է անցնում, զնգում է:

Ռ.Ա. - Ես երկու կամուրջ եմ սարքել:

Բ. - Թութխունի վրա մի կամուրջ կար:

Ռ.Ա. - Տարբեր տեղերում: Շուշին գրավելուց հետո չէինք կարողանում Լաչին գնալ: Թուրքերը փախչելիս այնտեղ մի կամուրջ պայթեցրել էին: Զանգեցին, ասացին. «Ռոլե՛ս, շտապ մի բան մտածիր»: Այնտեղ ժամանակավոր ռազմական կամուրջ եմ կանգնեցնում, եւ տեխնիկան անցնում է: Առանց այդ կամուրջն անցնելու հնարավոր չէր Լաչինի կողմն անցնել, Լաչինը գրավել: Կամուրջը հետագայում հիմնովին վերականգնվեց: Իսկ երբ Էդիկին ուղարկեցի, որ Տոնաշենի կամուրջը դնի, ասացի, որ զգույշ լինի, հիսուն մետր այն կողմ թուրքերը կրակում են: Եկան, տանկով կանգնեցին, կամուրջը դրեցին: Խփում էին, բայց նրանք խիզախորեն առաջադրանքը կատարեցին: Գնացին Տոնաշենը, Մատաղիսը, ամբողջը գրավեցին: Երբ վերադարձանք, ես ներկայացրի Էդիկին, եւ նրան այդ առաջադրանքը կատարելու համար մայորի կոչում են տալիս, Երկրորդ աստիճանի մարտական խաչի է արժանանում:

Շուշիից դեպի Ղոչազ լեռան կողմերը, Լաչին ընկած տարածքը գրավելու ժամանակ, երբ Ասկերանի Վիտոյենք պետք է գնային այնտեղ, Լիսագորից ներքեւ՝ Շռլանի կողմերը, դեպի Ղոչազ գնացող ճանապարհն ականապատված էր, ոչ մի զրահատեխնիկա չէր կարողանում առաջ գնալ: Ուղարկեցի տղաներին: Գնացին մաքրեցին, ասացին, որ պատրաստ է: Էլի չեն գնում, թե՝ դու՛ք գնացեք: Ասում եմ. «Տղաները հիմա նստում են, գնան»: Ասացին. «Չէ, ձեր տրակտորը թող առջեւից գնա, մենք էլ՝ հետեւից»: Ասկերանի Վիտոն կանչում է Աբրիկին, ասում է.

- Աբրի՛կ, քանի՞ տարեկան ես,- կարծեմ, ասում է՝ հիսունքանի տարեկան,- դե, մեծ մարդ ես, կյանք տեսած, դու գնա, կպայթես՝ կպայթես... ես ջահել էրեխեքին ուղարկենք, գնան պայթե՞ն:

Ասացի. «Աբրի՛կ, պիտի գնաք»: Նրանք էլ առաջին անգամը չէ, գիտեն... Տրակտորը քշում է, գնում: Ամբողջ Ղարաբաղում, նույնիսկ Ռոբերտ Քոչարյանը, տեղյակ էին, գիտեին: Ասել էինք, որ այսպիսի հրաման ենք տվել: Տրակտորը գնում է, սակրավորներն էլ հետը: Հետո ասում է. «Թող իջնեն, ինքը գնա, եթե պայթում է, մենակ ինքը պայթի: Նրա հետեւից գնանք»: Հասնում են մինչեւ Ղոչազ: Ճիշտն ասած, մի թուրք էին բռնել, ասել էր, որ ինը հատ ական է դրված: Մերոնք հինգ հատը հանել էին, մի քանի հատը մնացել էին: Հետո, երբ գնացին Ղոչազ, տեսան՝ մի քանի ական այնտեղ ընկած, դրանք դեռ չէին դրել, այդ պատճառով վախենում էին գնալ: Մի խոսքով, հասնում են Ղոչազ, դիրքավորվում են: Ասում ենք՝ հերոսության համար հոնորար են գրում, գնում ես, եթե ողջ ես մնում, երկու հազար ռուբլի փող ես ստանում: Ես էլ եմ օգնում, նրան ներկայացնում եմ որպես հերոս, եւ պարգեւատրվում է: Շատերը կան, որ հերոսություններ են արել, բայց զոհվել են: Բոլորն էլ հիշում են նրանց, մոռանալ չի կարելի: Հիմա Աբրիկը առողջական խնդիրներ ունի, երկար ժամանակ տրակտորի վրա աշխատեց: Մի խոսքով, Էդիկն այնտեղ է լինում, Մանվելը գնում է հարձակման, հաղթում ենք:

Ոչ մի շրջանում առանց սակրավորների, առանց ինժեներական ծառայության կռիվ չի լինում:

Բոլոր գործողություններից հետո հավաքվում էինք շտաբում: Ես Սամվել Բաբայանին հաշվետվություն էի ներկայացնում: Տեղյակ էր լինում նաեւ հրետանու գեներալ Իվանյանը: Նա Ղարաբաղի բանակի հիմնական ստեղծողներից մեկն էր: Լավագույն մասնագետներից էր Գրադ Ժորան: Ժորայի մասին հարյուրավոր դեպքեր կարող եմ պատմել: Ես միշտ նրա մոտ էի: Մենք միասին էինք աշխատում: Իվանյանի կատարած աշխատանքները պետք է գնահատենք, որովհետեւ բանակը ստեղծել են նա եւ Գրադ Ժորան: Ամեն ինչ միասին են արել: Իվան-

յանը, շատ հրամանատարների վրա ջղայնանալով, նույնիսկ հայհոյելով, սովորեցրեց ինչպես անեն, որ զոհեր չտան: Ցանկացած իրավիճակի վերաբերյալ նա առաջարկություններ էր անում, եւ դրանց հետեւելիս բարի արդյունքի էին հասնում, իսկ չլսելու դեպքում ականի վրա պայթում էին, վատ էր լինում:

Երբ Մանվելը Թալիշի կողմերը գրավում է, Իվանյանը գնում է, բոլոր դիրքերը նայում: Միշտ ասում էր, որ փակ ճանապարհներ սարքենք, որ թուրքերը չտեսնեն. գնալ-գալուց մեզ խփում էին ճանապարհին: Նույնիսկ ստիպեց, որ Հայաստանից մասնագետներ գան, նախագծեն: Ասում էր. «Այնպիսի ճանապարհներ սարքեք, որ ծածկված լինի»: Ուղղորդողները եկան, գնացին, ոչ մի բան չարեցին: Բայց հետո կանչեց ինձ, ասաց. «Ռոլե՛ս, գնա, մի բան մտածիր»: Թե նախագիծ էր, թե ինչ էր, ես գնացի, նայեցի, սարքեցի: Մինչեւ հիմա էլ այդ ճանապարհը գործում է: Էջմիածնի Մանվելի գնդի գործելու ժամանակ այդ ճանապարհը փակ էր: Մանվելը ճանապարհները սարքելու համար ահագին օգնում էր:

Գեներալ Իվանյանին մոռանալ չի կարելի: Ղարաբաղում երեխաներն անգամ գիտեն, որ գեներալ Իվանյանը հերոս է եւ բանակի ստեղծման հիմնական ղեկավարներից մեկը: Նույն ուսումնական կենտրոնի շինարարությունը եւ բոլոր մեծ շինարարությունները մենք էինք կազմակերպում: Ինչքան խրամատներ, անհրաժեշտ սարքավորումներ հրետանու, հակաօդային պաշտպանության համար, որ բարձունքներում սարքում էինք, բոլորը մեր ինժեներական ծառայությունների մեջ էին մտնում: Այդ ամենը կատարում էինք Իվանյանի առաջարկություններով, հսկողությամբ: Դիրքերի տեղադրումը Իվանյանի առաջարկությամբ է արվել: Երբեմն առարկում էին Իվանյանին: Բոլորի հետ վիճում էր, բացատրում, թե որն է ճիշտը:

Բ. - Նման մի օրինակ պատմիր:

Ռ.Ա. - Սամվելից հետո Իվանյանն էր շտաբի պետը: Իվանյանի՝ թիկունքի գծով տեղակալը Բակո Սահակյանն էր: Բակոն Իվանյանի հետ միասին գերազանց աշխատում էր: Երբ գալիս էի, միշտ ջղայնանում էր... Այնպիսի պահ ստեղծվեց, որ Բակոն էլ սկսեց վիճել:

Բ. - Ի՞նչ հարցերի շուրջ էին վիճում, ի՞նչն էր բախման պատճառը, ո՞րն էր սկզբունքային հարցը:

Ռ.Ա. - Նայած՝ ով ինչպես էր մտածում: Հարձակման, օպերացիաների հարցում տարակարծություններ էին լինում: Ես ասել եմ. «Առանց ինժեներական ծառայության ոչ մի օպերացիա չանեք: Ասեք, որտեղ պետք է՝ ականները կհանենք, եթե պետք լինի, հետո կփակենք: Եթե գնաք, վատ բան կպատահի»: Իվանյանին դիմում եմ, ասում է՝ ճիշտ ես ասում: Գնում է ասում, ասում են՝ չէ՛, շատ մարդ չպետք է իմանա:

Տանկն էլ է փչանում, մարդիկ էլ են մեռնում: Ստացվում է՝ պետք է ամեն ինչ միասին անենք: Չէին ընդունում, որ Իվանյանը կյանքի մեծ փորձ ունի եւ նրա խորհուրդներին՝ թե՛ հարձակման, թե՛ դիրքավորման, թե՛ մատակարարման հարցերի վերաբերյալ, պետք է հետեւել: Այդ պատճառով ջղայնանում էր:

Բ. - Այսինքն՝ Իվանյանը պրոֆեսիոնալ էր, իսկ պատերազմի ժամանակ առաջ եկած տղաները, կարող է, ինչ-որ բաներ չէին ընկալում:

Ռ.Ա. - Տարիների ընթացքում սխալներ եղել են, հետո խելքի են եկել: Դե, բնական է, մի տարի կռվեցիր, երկրորդ տարին է... նույն սխալը չես անի: Մի անգամ այնպես են Իվանյանի քեֆին կպել, որ նա ուզում էր թողնել, գնալ: Բայց խոսեցի, որ չի կարելի այդպես: Ցուրաքանչյուրն իրենն էր առաջ քաշում, ասում՝ ես եմ, ես եմ... Այդ բնավորությունը Սամվելին էլ է հատուկ: Մեկ-մեկ ուրիշների խելքին էր ընկնում, թե Ամուլյան էր ասում, թե մեկ ուրիշը: Կարող էր գալ, ցանկացած բանի համար խոսել: Ամեն մի բացթողում, թերություն նկատում էր եւ նկատողություն էր անում: Ասում էր. «Ինչո՞ւ այս զինվորին ծխախոտ չես տալիս»: Դա որոշ մարդկանց դուր չէր գալիս: Կյանքում ամեն ինչ էլ կպատահի, ամենակարեւորն այն է, որ վերջում հասկանում են եւ հաղթանակ են տանում:

Բ. - Ինչո՞ւ այդպես ստացվեց, ինչո՞ւ Մարտակերտը հանձնեցին:

Ռ.Ա. - Դա սկսվեց Շահումյանից:

Բ. - Շահումյանը դիտավորյա՞լ տվեցին:

Ռ.Ա. - Այն հիմնականում դաշնակցականներն էին պաշտպանում, նրանց անունը գցելու համար այդպես արեցին: Ռուսները գալիս էին, օգնությունը ուշացրին, չտվեցին: Նույնիսկ պատահել է, որ առանց պաշտպանության, հենց այնպես տվել են:

Բ. - Իսկ Մարտակերտում ինչպե՞ս էր:

Ռ.Ա. - Երբ Շահումյանից Թալիշի տղաները ետ դարձան, ասացին, որ անհնար է պաշտպանել: Արդեն Մարտակերտից լուրը գալիս էր:

Բ. - Ի՞նչ գունդ էր, որ գալիս էր գյուղերը, ասում. «Թողեք, գնացեք»:

Ռ.Ա. - Հատուկ գունդն էր: Վախի մթնոլորտ էին ստեղծում: Գալիս էին եւ ասում. «Հետեւից զենքերով գալիս են, բոլորին կոտորում են»: Շատերը, տեսնելով, որ ավտոմատները ձեռքներին դիրքերը թողած գալիս են եւ այդպես ասում, հետ էին դառնում: Չեմ մոռանա, Կոմանդոսն ասում էր, որ թողնում փախչում են: Այն ժամանակ Գերագույն խորհուրդ էին ստեղծել: Մինիստրների սովետ էլ կար: Առաջարկեց դիմել նրանցից մեկին, որպեսզի նման դեպքերում տեղում պատժելու իրավունք ստանանք:

Բ. - Նա չէ՞ր կարող այդ հրամանը տալ:

Ռ.Ա. - Չէ՛, չէր անի: Մանվելը առանց հարցնելու պատժում էր՝ նըս-

տացնում էր կամ գնդակահարում, որ մյուսները տեսնեն եւ հասկանան, որ դիրքերը իրավունք չունեն տալ, փախչել չի կարելի: Կոմանդոսը զինվորական մարդ էր, կյանք տեսած:

Բ. - Ինչպե՞ս նրանց հաջողվեց վախի մթնոլորտ տարածել:

Ռ.Ա. - Տղաներ կային, որ ճանաչում էին, մոտ էին իրար հետ: Կապվում էին, հարցնում, թե ինչպե՞ս է վիճակը: Ասում էին. «Չէ, հնար չկա, մի քիչ հետ գնացեք»: Գեղեցիկ են ասում, չեն ասում՝ թող, փախիր, ասում են՝ եթե չեք կարողանում, մի քիչ հետ գնացեք: Պետք է ասի. «Մնա՛, մեռիր», բայց ասում է. «Հետ գնա»: Կոմանդոսը այդ հրամանի համար դիմեց Եսայան Օլեգին եւ պատասխան չստացավ: Ես հարյուր տոկոսով գիտեմ, որ տանկը կանգնած էր, Կոմանդոսն ասաց. «Դուրս արի, խփի»: Ասաց. «Փչացած է, տանկը չի աշխատում»: Հետո, երբ ասացին, որ հարյուր մետր հետ գնան, այդ նույն մարդը նստեց այն տանկը, որի համար ասում էր, թե փչացած է, եւ քշեց:

Բ. - Այսինքն՝ հրամանները չկատարելու հրահանգ էին կատարում:

Ռ.Ա. - Գգողլյան Ֆելիքսը շտաբի պետն էր: Կոմանդոսին ասում են. «Ոնց Մարտակերտը տվել ես, այնպես էլ գնա վերցրու: Հրամանատար ես, ինչո՞ւ ես տվել»: Այնպես էին խոսում, կարծես Կոմանդոսը միտումնավոր է տվել: Նրան մեղադրեցին, բայց այդպիսի բան չի եղել, նա կյանքում չէր տա: Եթե Կոմանդոսին չտեղափոխեին, կարող է հետեվից խփեին:

Պատմում է Շահեն Հովասափյանը
(ԼՂՀ Շահումյանի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից)
17.02.2006 թ., Երեւան

Շ.Հ. - Ծնվել եմ 1957 թվականի դեկտեմբերի 20-ին Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում: 1988 թվականին ես աշխատում էի Շահումյանի ավտոձեռնարկությունում որպես շահագործման բաժնի պետ:

Երբ Ստեփանակերտ - Շահումյան երթուղու ավտոբուսը վերադարձավ, վարորդը մոտեցավ ինձ, ասաց. «Ստեփանակերտում միտինգներ են սկսվել»: «Ի՞նչ միտինգներ»,- հարցրի ես: Ասաց. «Չգիտեմ, բայց սկսվել են»:

Պահածոների գործարանը, որը ղեկավարում էր Շահեն Մեղրյանը, մեր ավտոձեռնարկության կողքին էր գտնվում: Մենք Շահենի հետ մանկության ընկերներ էինք, նա ինձանից վեց տարով մեծ էր: Ծանոթ լինելով Շահենի հայրենասիրությանը՝ նրան ասացի, որ հանրահավաքները սկսվել են: Զանգեց Ստեփանակերտ, իմացավ, որ նման իրադարձություններ են կատարվում: Շահենն ասաց. «Մենք Գյուլիստանից ենք, իսկ Գյուլիստանը պատմական Արցախի մելիքական կենտրոններից մեկն է, մեր երակներով հայրենասիրության արյուն է հոսում, մենք պետք է մտածենք, թե ինչ ենք անելու»: Արդեն Հայաստանից պատվիրակներ, ընկերներ էին գալիս, որոնք շարժման ակունքներում էին կանգնած: Մենք նրանց հետ խորհրդակցում էինք, մեզ ուղղություն էին տալիս: Օրերից մի օր Շահենը ինձ զանգեց, ասաց, որ գրող, հեռուստամեկնաբան Բակուր Կարապետյանն է այստեղ՝ հեռուստաօպերատորի, ռեժիսորի եւ շահումյանցի Հովիկ Պետրոսյանի հետ, նրանք պետք է մեկնեն Ղարաբաղ՝ նկարահանումներ իրականացնելու ծրագրով: Մենք նախկինում Ղարաբաղ գնում էինք Կասում-Իսմայիլով - Միրբաշիր ճանապարհով: Բայց այդ անգամ որոշեցինք, որ Շահենենք պետք է կարճ, լեռնային ճանապարհով գնան Մարտակերտի շրջան: Նրանք կեսօրին դուրս եկան: Մենք սպասում էինք, որ իրիկունը պիտի գան: Երեկոյան չեկան: Առավոտյան ժամը տասին Շահենի կինը՝ Ստելլան, զանգեց ինձ. «Շտապ արի, դեպք

է պատահել»: Ես շտապ մեկնեցի Շահենենց տուն: Թե՝ Շահենենք գնացել են, չեն եկել, նրանցից տեղեկություն չունենք: Դեռ շրջկենտրոնից դուրս չէի եկել, երբ տեսա, որ Շահենենք վերադարձան: Պատմեցին, թե ինչ դժվարությամբ են հասել Չայլու գյուղ: Մենք հասկացանք, որ շարժումը ուղղակի բառ չէ, շարժումն իր դժվարություններն է ունենալու՝ մինչեւ հաղթանակին հասնելը: Այդ օրվանից մենք սկսեցինք ավելի խորը զբաղվել ղարաբաղյան շարժմամբ՝ Շահումյանի խնդիրը միացնելով Ղարաբաղի ընդհանուր շարժման հետ:

Ոմանք շարժումը սկսեցին օգտագործել իրենց տնտեսական, վարչական հարցերը լուծելու համար: Երբ շարժումը սկսվեց, Սարաջյան Արթուրը շրջսովետի գործկոմի նախագահն էր, Աղաջանյան Վոլոդյան՝ «Ագրոարդի» նախագահը, Միրզոյան Ռուդիկը՝ կուսշրջկոմի առաջին քարտուղարը: Քանի որ «Ագրոարդի» նախագահը եւ գործկոմի նախագահը հակակշռում էին միմյանց եւ իրար չէին սիրում, Արկադի Մանուչարովը, Ավագյան Արկադիայի խնամին լինելով հանդերձ, Սարաջյան Արթուրի հետ Ստեփանակերտում հանդիպում է ունենում: Իսկ քանի որ շրջկոմի առաջին քարտուղարը Բաքվից ուղարկած ներկայացուցիչ էր, Աղաջանյանը միանգամից հասցնում է նրան, որ Արթուրն էլ է ուզում շարժման մեջ խառնվել: Աշխատանքից ազատում են Սարաջյան Արթուրին, նրա տեղը նշանակում են Աղաջանյան Վոլոդյային: Այդ պայմաններում Մեղրյան Շահենը նշանակվում է «Ագրոարդի» նախագահ: Աղաջանյանը, ձեւական շարժում սկսելով, ուզում էր մի քանի մարդկանց եւս ներգրավել: Նա պաշտոնամոլ էր, եւ շարժումը նրա համար այլ խնդիր էր դարձել. նա ուզում էր դառնալ շրջկոմի առաջին քարտուղար: Եվ դեպքերի բերումով՝ հասավ դրան: Բայց նա չկարողացավ շրջանում լինել շարժման ղեկավար, ու նրա եւ Շահեն Մեղրյանի միջեւ սկսվեցին հակասությունները: Հակասությունները ավելի խորացան, երբ Գետաշեն գյուղի տարածքում անասնագոմերի պահակներին ադրբեջանցիները սպանել էին: Շահումյանի ղեկավարությունը թաղման գնալու նպատակով մեկնում է Գետաշեն: Այնտեղ շրջանի ղեկավարներին գերի վերցրին: Ժամանակի ընթացքում բոլոր գերիները փոխանակվեցին եւ վերադարձան Շահումյան: Վերադառնալուց հետո շարժումն սկսեցին մի քանի ուղղություններով ղեկավարել: Մեղրյան Շահենը իր հայրենասեր ընկերներով էր գործում, որոնք արդեն սկսեցին ջոկատներ կազմավորել, Աղաջանյանը՝ իր իշխանական թեւով, իսկ դատախազ Ստեփանյան Գենան՝ դատախազական եւ վարչական կառույցներով: Բայց քանի որ վերջին երկուսի մասնակցությունը ձեւական էր, Շահենը կարողացավ շարժումը ճիշտ ճանապարհի վրա դնել:

Բ. - Կար նաեւ կուսակցական ուղղվածություն...

Շ.Հ. - Կուսակցական ուղղվածությունը հետագայում եղավ, երբ Շահենը ընդունվեց Դաշնակցության շարքերը: Կոմունիստական կուսակցության խնդիր արդեն չկար: Դաշնակցության կոմիտեի նախագահը ես էի: Շրջանը կոմունիստական մտածելակերպը փոխեց դաշնակցականի, քանի որ Դաշնակցությունը հաշվում էինք որպես ազգային կուսակցություն: Շահենի գլխավորությամբ ստեղծվեցին ջոկատներ Վերին Շենում: Սամսոն Մայիլյանի գլխավորությամբ ստեղծվեց ջոկատ, որը սկզբնական շրջանում կոչվում էր «Արդարության համար պայքարի մարտիկներ» անունով: Դրանից հետո Գյուլիստան գյուղում ստեղծվեց ջոկատ՝ Պողոս Մեղրյանի գլխավորությամբ, շրջկենտրոնում՝ Հակոբ Խիդիրյանի, Կարաչինար գյուղում՝ Կոլյա Պետրոսյանի, Բուզլուխ գյուղում՝ Ստեփանյան Համլետի եւ Գեղամ Մուրադյանի, Էրքեջում՝ Վանիկի գլխավորությամբ, հետագայում հրամանատար դարձավ Հովհաննիսյան Կամոն, երբ Վանիկը զոհվեց: Երեւանից Մանաշիդ վերադարձան հայրենակիցներ Խաչիկ Վարդանյանը եւ Գեորգին (նրա ազգանունը չեմ հիշում): Խաչիկը դարձավ այդ գյուղի ջոկատի հրամանատարը: Հայ Պարիսում ջոկատի հրամանատար դարձավ Ջիվանը, որը նախկինում Շահեն Մեղրյանի վարորդն էր, Խարխափուտում՝ Վագիֆը, Մանասաշենում՝ Իջեւանից եկած Մալխասյան Վարդանը, Գաղտուտ գյուղում՝ Խաչատրյան Աշոտը: Բոլոր գյուղերում կազմավորվեցին ջոկատներ:

Բ. - Ինչքա՞ն մարդ էր ընդգրկված սկզբում:

Շ.Հ. - Սկզբում բոլոր ջոկատներն իրար հետ՝ երեք հարյուր հոգի էին:

Բ. - Իսկ զե՞նքը:

Շ.Հ. - Որսորդական հրացաններ էին: Մինչեւ շարժումը շրջանում երեք հատ ավտոմատ կար եւ հրացաններ: Իսկ 1989 թվականին Դաշնակցությունը եկավ զենքերով, երեսուներեք հոգու իրենց զենքերով բերեց Շահումյան: Հետո այդ տղաները, որոնք Հայաստանի տարբեր շրջաններից էին, գնացին, իսկ զենքերը մնացին Շահումյանի ջոկատներին, որոնք ղեկավարում եւ համակարգում էր Շահեն Մեղրյանը: Նրա տեղակալը ես էի՝ եւ՛ սպառազինության, եւ՛ անձնակազմի, եւ՛ թիկունքի գծով:

1991 թվականի «Կոլցո» օպերացիայից հետո, երբ Շահումյանը *կորցրեց Մանաշիդ, Բուզլուխ, Էրքեջ գյուղերը, Հայաստանից եկավ* Գզողլյան Ֆելիքսը՝ որպես շտաբի պետ: Կառավարության կողմից գործուղված էր Սմբատ Այվազյանը, Դաշնակցության կողմից՝ Վահան Հովհաննիսյանը, ՀՀՇ-ի կողմից՝ Երջանիկ Աբգարյանը: Ցերեկները նրանք հակաճառում, իրար հետ վիճում էին, յուրաքանչյուրն իր խնդիրներն էր դնում՝ կուսակցական կամ իշխանական, երեկոները

Մեղրյան Շահենի հայրական տանը՝ Գյուլիստանում, նրանք մի սենյակում քնում էին եւ ընկերներ էին: Այսինքն՝ խնդիրը խիստ կուսակցական չէր, որովհետեւ, ի վերջո, ազգային շահերին էր վերաբերում, եւ կարողանում էին նորմալ հարաբերություններ ունենալ ու այդ խնդիրները լուծել:

Քանի որ Ֆելիքս Գզողլյանը շտաբի պետն էր, նրան օգնողներ էին պետք: 1991 թվականի ամռանը Մեղրյան Շահենը Երեւանից վերադարձավ մի երիտասարդի՝ Չալյան Սերգեյի հետ: Ասաց, որ նա շահումյանցի է: Կամոյի շրջանի զինկոմիսարիատի պետի տեղակալ էր աշխատում: Նրանք սկսեցին Ֆելիքսի հետ աշխատել: Այն ժամանակ մարտական շտաբը Վերին Շեն գյուղում էր, իսկ տնտեսական, թիկունքի գծով շտաբը՝ Շահումյանում, որտեղ ես ավտոձեռնարկության տնօրեն էի: Օգոստոսին մենք ետ վերցրինք այդ գյուղերը: Ֆելիքսը տեղափոխվեց Երեւան, այնտեղից՝ Ստեփանակերտ: Չալյան Սերգեյը մնաց որպես Շահումյանի շտաբի պետ: Այսինքն՝ նա աշնանից շտաբի պետն էր՝ մինչեւ 1992 թվականի ամառը, երբ Շահումյանը արդեն չկար: Միասին համերաշխ աշխատել ենք: Ցուրաքանչյուրն իր գործն էր անում: Մեղրյանը զբաղվում էր քաղաքականությամբ եւ մարտական գործողություններն էր ղեկավարում, Չալյանը իր զինվորական գործն էր անում եւ շտաբը ղեկավարում: Ես, լինելով գործկոմի նախագահի՝ Մեղրյանի տեղակալը, զբաղվում էի ջոկատների, թիկունքի, սպառազինության եւ ընդհանուր շրջանի տնտեսական, վարչական հարցերով: Այսինքն՝ քաղաքացիական գործերը ես էի ղեկավարում, մարտական գործողությունները՝ Մեղրյանը:

Բ. - Ո՞նց էիք կազմակերպում մատակարարումը, ադրբեջանցիները ինչո՞վ էին խփում, մենք ինչո՞վ էինք պատասխանում:

Շ.Հ. - Շահենը հաճախ էր լինում Երեւանում եւ համագործակցում էր Վազգեն Սարգսյանի, Դաշնակցության, համարյա բոլոր ազգային կուսակցությունների հետ, որոնք ղարաբաղյան խնդիրը տեսնում էին որպես ազգային խնդիր: Ցուրաքանչյուրն իր օգնությունն էր ցույց տալիս: Հասկանալի է, որ հրթիռները եւ այլ տեսակի զենք-զինամթերքը պաշտպանության նախարարի գիտությամբ էին ուղղաթիռներով տեղափոխվում Ղարաբաղ: Սկզբնական շրջանում «Ալազան»-ներ էին, եւ մեզ թվում էր, թե դա այն տեխնիկան է, որով կարելի է գրավել, կամ մեզ կգրավեն: Բայց հետագայում իմացանք, որ դա սովորական զենք է: Կարաչինար գյուղում գաղտուտցի տղաներից մեկն ասում էր. «Որ «Ալազանը» գալիս է, ուխոդ ենք անում, անցնում է»: Հանաք էին անում: Դրանից հետո սկսեցին տեղափոխել «Ռապիրա»-ի արկեր: Այսինքն՝ մենք իբր մի քայլ առաջ գնացինք: Բայց թուրքերը մեզանից առաջ էին գնացել: Սկսեցին «Գրադ» կայանքով, ինքնաթիռով մեզ

խփել: Մեր գործը ավելի դժվարացավ: Մինչեւ 1993 թվականի սկիզբը մեզ տանկ եւ «ԲՄՊ-2»-ներ տրամադրեցին: «Գրադ» կայանքով մենք խփում էինք Նավթալանին, իսկ նրանք խփում էին շրջկենտրոնին: Շրջկենտրոնում առաջին զոհերը եղան «Գրադի» արկերից, որը շատ սարսափելի էր:

Բ. - Գործողություններ էիք ձեռնարկում՝ հաջող, անհաջող, ի՞նչ ընթացք ունեցան:

Շ.Հ. - Առաջին իսկական օպերացիան Բուզլուխ գյուղի ազատագրումն էր: Շտաբում Մեղրյան Շահենն էր, Ֆելիքս Գզողլյանը: Օպերատիվ բաժնի պետ Չալյան Սերգեյը ներկայացրեց՝ ինչպես պետք է գրավենք: Դաշնակցական ջոկատներն էին այնտեղ, «Արաբոն» էր, «Տիգրան Մեծը», պաշտպանության համակարգի Հատուկ գունդն էր: Հատուկ գնդի ղեկավարը այն ժամանակ Սեւանից գնդապետ Վոլոդյան էր: Օպերացիան կազմակերպեցին ու մեկ ժամվա ընթացքում Բուզլուխը գրավեցին: Շատ ջոկատներ կային Հայաստանից: Բուզլուխը գրավելուց հետո Մանաշիդը գրավեցին: Մնաց Էրքեջը՝ օդակի մեջ: «Տիգրան Մեծը» Էրքեջում էր նստած, «Արաբո», «Արամո», «Սասունցի Դավիթ» ջոկատները Բուզլուխ էին գնացել: Այդ օպերացիան, իհարկե, ղեկավարեց Մեղրյան Շահենը՝ Ֆելիքս Գզողլյանի եւ Չալյան Սերգեյի հետ միասին: Գործողությունը հաջողությամբ պսակվեց, եւ կարողացանք այդ գյուղերը ազատագրել:

Բ. - Հնարավո՞ր էր ձեր միջոցներով՝ եւ մարդկային ռեսուրսներով, եւ զենքով, պահել Շահումյանը:

Շ.Հ. - Զենք, իհարկե, Շահումյանում չէր արտադրվում, զենքը պետք է հայթայթեինք: Մարդկային ռեսուրսները քիչ էին. Շահումյանը տասներեք հազար հինգ հարյուր հայ բնակչություն ուներ, որից հազար հարյուր հոգին էին զինապաշտպանական գործերով զբաղվում: Մենք Հայաստանից օգնություն սպասում էինք, եւ մեզ օգնում էին: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական, կենցաղային խնդիրներին, ապա 1987 թվականին ավելի քիչ կարտոֆիլ է ցանվել, քան 1989-1991 թվականներին: Մենք ժողովրդի առաջ խնդիր էինք դրել, որ կարտոֆիլ ու ցորեն պետք է անպայման ցանեն, որովհետեւ եթե հաց, կարտոֆիլ եղավ, ապա մնացած խնդիրները կլուծվեն: Քանի որ մեր շրջանը կարտոֆիլագործական շրջան էր, մենք հնարավորություն ունեինք Լեռնային Ղարաբաղի մնացած շրջաններին էլ օգնելու եւ պահելու: Այսինքն՝ մենք հեռանկարներ ունեինք՝ մեկ-երկու տարվա ծրագրեր դնել եւ կարողանալ դրանք առաջ տանել: Պատերազմի հետ մեկտեղ սոցիալական խնդիրներն էինք առաջ քաշում:

Բ. - Շահումյանը, այսպես ասած, հեշտ հանձնվեց: Այսօր ի՞նչ եք մտածում՝ կարո՞ղ էին դրա դեմն առնել, թե՞ ոչ:

Շ.Հ. - Շահումյանը հանձնելուց հետո Հայաստանում հանձնաժողով ստեղծվեց՝ Այվազյան Սմբատի եւ Վլադ Խաչատրյանի համանախագահությամբ: Քննարկեցին Շահումյանի հանձնման հարցը: Հրամանատարներից ինձ ու Մեղրյան Շահենին կանչել էին այդ քննարկմանը: Երկրորդ անգամ քննարկում չեղավ. կամ բավարարվեցին, կամ հետաձգեցին:

Հատուկ գունդը գտնվում էր Շահումյանում: Մենք պատրաստվում էինք Գետաշենի ազատագրմանը: Մի քանի անգամ զեկուցեցի Երեվան, հետաձգում էին, թե՝ այսօր, վաղը: Օրերից մի օր ստացվեց այն, ինչ մենք չէինք սպասում: Ես եւ Չալյանը շտաբում էինք գիշերում: Բուզլուխից զանգեցին, թե՝ ոնց որ ադրբեջանցիները բարձրացել են բարձունքները, այնտեղից մեզ վրա կրակահերթ են բացել: Չալյանը շարժվեց Բուզլուխ: Տասը րոպե անց Մանաշիդից զանգեցին, նույնը զեկուցեցին: Ռացիայով էին զեկուցում: Ասացի, որ Չալյանը ճանապարհին է, կապվեն նրա հետ: Ես էլ կապվեցի Չալյանի հետ, ասացի, որ եթե մարդիկ ունի, ուղարկի այնտեղ: Մանաշիդ, Բուզլուխ գյուղերի պատասխանատուն Չալյանը դարձավ: Մեղրյանին տեղյակ պահեցի, եկավ շտաբ: Խիդիրյան Հակոբը արդեն դարձել էր Մեղրյանի՝ մարտական գծով տեղակալը: Նրանց Էրքեջ ուղարկեցինք, որովհետեւ այնտեղից էլ ահազանգ ստացանք: Քիչ անց Հայ Պարիսից էլ զանգեցին եւ ասացին, որ Հայ Պարիսի ներքեւից էլ են մտնում: 1992 թվականի հունիսի 12-ն էր: Շահումյանի Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ, Հայ Պարիս, Գաղտուտ, Կարաչինար, Մանասի Շեն գյուղերը սահմանային էին: Սահմանային չէին Վերին Շենը, շրջկենտրոնը, Խարխափուտը, Գյուլիստանը: Ադրբեջանցիները միանգամից բոլոր կողմերից հարձակվեցին: Երբ լույսը բացվեց, սկսեցին ինքնաթիռներով հարձակվել, իսկ զրահատեխնիկան հեռվից գնդակոծում էր: Հնարավոր է՝ եթե շատ պատրաստ լինեինք՝ հանկարծակիի չգայինք, դիրքերը չզիջեինք: Բայց քանի որ ժողովուրդը իր բնակավայրում էր, խուճապը անխուսափելի էր: Ժողովուրդը տեղեկացված չէր, ռազմական գործողություններին անծանոթ էր, իսկ կռվողների մեծ մասը հարյուր տոկոսով կթողներ եւ կգնար իր երեխաների, ծնողների հարցով զբաղվելու: Այսինքն՝ մենք պատրաստ չէինք: Եթե մենք ինֆորմացիա ունենայինք, որ երեք օր հետո նման հարձակում է լինելու, մենք պաշտպանված կլինեինք: Այդ ընտանիքներին կհեռացնեինք Գյուլիստան, մենք կզբաղվեինք ինքնապաշտպանությամբ: Դրանից հետո ենք իմացել, որ հարյուրից ավելի զրահատեխնիկա միանգամից հարձակվել էր Շահումյանի վրա: Ինքնաթիռներով եւ ուղղաթիռներով են ռմբակոծել, որոնք լիցքավորվում էին Գյանջայի խորհրդային բանակի ռազմական կետերում: Այդ հարձակումը ադրբեջանցիների ձեռքի գործը չէր, այն գլխավորում էր խորհրդային բանակը:

Բ. - Ասում են, իբր ճանապարհները ականազերծված էին:

Շ.Հ. - Նման խոսակցություն եղել է Մանաշիդ գյուղի տարածքի վերաբերյալ: Վազգեն Սարգսյանն իր ելույթում մեզ, իր կարծիքով, պաշտպանեց: Բայց դա պաշտպանել չէր: Մենք մի տանկի ճանապարհի համար երկու ական էինք հանել, որ մտնեինք Գետաշեն: Երբ սկսեցին, այդ երկու ականները տեղադրեցինք: Վազգեն Սարգսյանն ասում էր՝ ես եմ ասել..., իսկ մենք ոչ մի բան չէինք արել, որ նա ասեր: Այսինքն՝ դաշտը ականազերծված չի եղել, ականապատված է եղել: Պարզապես, քանի որ մենք նրա մարտական ընկերներն էինք, չէր ուզում, որ մեզ վրա ավելորդ խոսակցություն գա: Բայց դա իրականությանը չի համապատասխանում: Ականազերծված չի եղել, ականապատված է եղել: Ես ռազմական մասնագետ չեմ, չգիտեմ, բայց կան տանկեր, որոնք ականները հանելուց հետո են առաջ գնում: Թուրքերը, այդ ամեն ինչը իմանալով, իրենց գործողությունները կատարել էին: Ամենավատը աշխատել է տեղեկատվությունը: Հայաստանի Հանրապետության ղեկավարները, նրանց կողմից ղեկավարվող ստորաբաժանումները տեղյակ էին դրան եւ մեզ չէին ահազանգել, որ Շահումյանը հանձնվում է: Ես ավելին ասեմ: Երեք օր առաջ Հատուկ գնդի հրամանատարը՝ Կարապետյան Վոլոդյան, եկավ շտաբ: Վազգեն Սարգսյանի կողմից Հատուկ գնդին ռադիոհաղորդագրություն եկավ, որ երկու օր ժամանակ նրանց՝ թողնեն Շահումյանի շրջանը եւ մեկնեն Հայաստան՝ այլ հանձնարարություն ստանալու: Դրանից հետո, երբ քննարկում էինք, ես համոզված էի, որ Հայաստանի իշխանությունը գիտեր, որ Շահումյանը վտանգի տակ է, եւ մեզ մենակ թողնում էր այնտեղ: Երբ Շահումյանը հանձնվեց, ես անձամբ Հաթերք գյուղից Լեւոն Տեր-Պետրոսյանին հեռագիր եմ ուղարկել, որ Շահումյանի ժողովուրդը ճանապարհին է, մարդիկ զոհվում են, խնդրել եմ, որ գոնե ուղղաթիռներով տոպրակներով հաց գցեն, գաղթականները իրենց գոյությունը պահեն: Բայց մենք ոչ մի պատասխան չստացանք: Նույնիսկ ավելին՝ երբ եկանք Ստեփանակերտ, տեսանք, որ Հայաստանի իշխանությունների կողմից մենք հետապնդվում ենք: Ես այն ժամանակվա կառավարության նախագահ Օլեգ Եսայանին, Զորի Բալայանին ասել եմ, որ Շահումյանի ժողովուրդը ցրված է Ղարաբաղի տարածքով մեկ, եւ իմ, հրամանատարության եւ ղեկավարության կարծիքն է՝ շահումյանցիներին տեղավորեն Շուշի քաղաքում, մենք՝ շահումյանցի կռվողներս, նորից գնանք մարտի դաշտ: Ինձ պատասխանեցին, որ Շուշիում բոլոր տները զբաղված են, իրենք ոչինչ անել չեն կարող: Եվ սկսեցին շահումյանցիներին հալածել Շահեն Մեղրյանի եւ Շահեն Հովասափյանի պատճառով, նրանք գտնում էին, որ մենք դաշնակցականներ

ենք, իսկ ժողովուրդն էլ մեղավոր է, որ նրանց ղեկավարները դաշնակցականներ են:

Բ. - Դուք կարծում եք, որ դա նաեւ կուսակցակա՞ն մոտեցում էր:

Շ.Հ. - Շահենը եկավ Հայաստան, հեռուստատեսությամբ խոսեց եւ այսպիսի տեղեկություն տվեց՝ Շահումյանը ռազմաքաղաքական պարտություն էր: Ռազմականը՝ պարտություն էր, իսկ քաղաքականը՝ ինտրիգներ էին: Կային եւ՛ ներքին, եւ՛ արտաքին քաղաքական ինտրիգներ: Քանի որ այն ժամանակվա Հայաստանի ղեկավարությունը ռուսների հետ նորմալ հարաբերությունների մեջ չէր, Դաշնակցությունը վատաբանում էր իշխանություններին: Շահումյանը հանձնելուց հետո իշխանությունները ասում էին. «Քանի որ Շահումյանը դաշնակցական շրջան է, դուք էլ այսքանը կարողացաք անել»: Այսինքն՝ ներքին խմորումների արդյունքում Շահումյանը զոհեցին, շահումյանցիները դարձան փախստականներ եւ անտուն մարդիկ:

Բ. - Ես հիշում եմ՝ այդ դեպքերից հետո, երբ արդեն պարտիզանական շարժում էր սկսվում, ուղղաթիռով իջա, անտառում հանդիպեցի Շահեն Մեղրյանին, նրանից առաջին ինտերվյուն վերցրի եւ «Ազատամարտ» թերթում տպեցի: Ես, թեկուզ անկուսակցական էի, ՀՅԴ «Ազատամարտ» թերթի արցախյան բաժնի վարիչն էի: Թերթերը գրում էին, թե դավաճանել են... Շահենի պատասխանների միջոցով ես ցույց տվի, որ ոչ թե դավաճանել են, այլ պարտիզանական շարժում են սկսել: Դա մի քիչ մեղմացրեց ձեր շուրջը ստեղծված իրավիճակը:

Շ.Հ. - Երբ պարտիզանական շարժումը սկսվեց, մեկ ամիս հետո, հիվանդանալու պատճառով, Մեղրյանն ինձ ուղարկեց Երեւան: Այստեղ նորից կազմավորեցինք մեր ջոկատները, որ հետ դառնանք Ղարաբաղ: ՀՀ պաշտպանության նախարարությունում ստեղծվեց հատուկ նշանակության ջոկատը, որի հրամանատարը պիտի լիներ Մեղրյան Շահենը, շտաբի պետը՝ Չալյան Սերգեյը, տեղակալները՝ ես եւ Խիդիրյան Հակոբը: Այն ժամանակ Դաշնակցության գրասենյակում էինք հավաքվում՝ Նար-Դոսի փողոցի վրա: Երեք օր հետո Չալյան Սերգեյը եկավ, թե՝ առանձնանանք, գործ կա: Ասաց. «Վազգեն Սարգսյանն ասել է, որ Մեղրյան Շահենը չի կարող լինել ջոկատի հրամանատար, քանի որ նա մերը (ՀՀՇ-ական) չէ, դու եւ Չալյան Սերգեյը պետք է լինեք»: Իսկ այն ժամանակ բոլորս համախմբված էինք Մեղրյան Շահենի շուրջը: Ասացինք. «Սերգե՛յ, եթե դու պետք է լինես հրամանատարը, գնա, մենք քեզ հետ չենք»: Նա ասաց. «Ես չեմ գնացել եւ ինձ ներկայացրել: Նման բան են ասել, ես էլ հայտնում եմ ձեզ»: Շահենը դարձավ հրամանատար:

Ինչո՞ւ կոչվեց «Եղնիկներ» ջոկատ: Քանի որ մեր ծածկանունը «Եղնիկ» էր, դրա համար նրանք կոչվեցին «Եղնիկներ»: Շահենը երկու անգամ մեկնեց, երրորդ անգամը՝ զոհվեց: Այդ ջոկատների ստեղծումը Շահենի գաղափարն էր, Շահենն էր մտածել եւ կազմավորել: Ես մի բան էլ եմ ուզում ասել, այն, որ Շահումյանի շարժումը՝ եւ՛ մարտական, եւ՛ քաղաքական, կապված է Մեղրյան Շահենի անվան հետ:

Բ. - Շահենի զոհվելու հետ կապված տարբեր պատմություններ կան: Ինձ պատմում են ամենատարբեր վարկածներով...

Շ.Հ. - Ես չեմ կարողանում հասկանալ եւ չեմ հասկանում...

Բ. - Բայց դա ձեռնտու՞ էր ինչ-որ մարդկանց:

Շ.Հ. - Երեւի ձեռնտու էր, որ արեցին: Շահումյանում գտնվելու ժամանակ ավտոձեռնարկությունում ես եւ Շահենը քայլում էինք: Այդ պահին մեզ վրա երկու-երեք անգամ կրակահերթ բացվեց: Մենք փրկվեցինք: Շահումյանում շահումյանցիներն էին եւ Հայաստանից եկած զինված ջոկատները: Այսինքն՝ թուրքը չէր կարող Շահումյանի կենտրոնում ինձ ու Շահենին խփել:

Բ. - Ինչո՞ւ չկարողացան խփել, ի՞նչ եղավ:

Շ.Հ. - Դե, չխփեցին... Արդեն մենք զգաստացանք: Ես ավելին ասեմ ձեզ: 1993 թվականին, երբ Վազգեն Մանուկյանը պաշտպանության նախարարն էր, Շահենը արդեն զոհվել էր: Վազգեն Մանուկյանը սրտի վիրահատություն էր տարել: Ես եւ Աթանեսյան Գագիկը գնացինք նրան տեսակցության: Վազգեն Մանուկյանն ասաց. «Վաղը չէ մյուս օրը,- օգոստո՞ս թե սեպտեմբեր ամիսն էր, չեմ հիշում,- Սերժ Սարգսյանն է լինելու պաշտպանության նախարարը»: Այդ ժամանակ մեր՝ «Եղնիկների» հատուկ նշանակության ջոկատը կար: Ես Վազգենենց տնից դուրս եկա, նստեցի «Նիվա» մեքենան (պետական «Նիվա» էր), եւ ինձ մինչեւ վերջ հետապնդեցին: Ես տուն չգնացի, միանգամից գնացի Նորք՝ «Տիգրան Մեծ»-ի Արմենի մոտ, որ հետքս կորցնեմ, բայց չկարողացա նրանց կորցնել: Այն ժամանակ ես Մաշտոցի պողոտայի վրա վարձով էի ապրում: Շենքի բակում մեքենան կանգնեցրի: Ձեռքիս, ճիշտ է, զենք կար, բայց փախա, մտա տուն: Առավոտյան ես թուղթ գտա՝ «Քեզ խելոք պահիր, ընկերոջդ հետքերով կգնաս»: 1993 թվականն էր: 1993-ից մինչեւ 1996 թվականը ես ոչ քաղաքականությամբ, ոչ մի բանով չէի զբաղվում: Ամբողջ ժամանակ կամ խմում էի Արմենի հետ, կամ չգիտեմ՝ ինչով էի զբաղվում: Այդ ամենն իմ մեջ կասկածանք հարուցեց, թե մարդիկ իմացել են, որ Շահենը պիտի զոհվի, եւ Շահենը զոհվել է: Ինձ էլ զգուշացնում էին: Այդ ժամանակ ես մեծ քաղաքականության մեջ չկայի: Շահենի զոհվելուց հետո ես Դաշնակցության հետ իմ կապերը հարաբերականորեն խզեցի: Իրար ճանաչում էինք, բարեւում էինք, բայց քաղաքականության մեջ ես չկայի: Ինձ փորձեցին, որ չուղարկեն Շահենի մոտ: Բայց բժշկական, սննդի, տնտեսական բոլոր հարցերով նրանք ինձ հետ կապի մեջ են եղել: Ամեն

օր նրանց հրամանատարը կամ նրա տեղակալը տարբեր առիթներով եկել են ինձ մոտ: Դրանից բացի, շտաբում քննարկում էինք նրանց կատարած աշխատանքը: Ես հիշում եմ, թե ջոկատներից ով ինչպես է ծառայել մեզ մոտ: «Տիգրան Մեծը» միակ ջոկատն է եղել, որ ինքն է հոգացել իր սննդի եւ մյուս հարցերը: Ավելացածն էլ բաժանել է ժողովրդին: Նրանք 1989-ից մինչեւ 1992 թվականը մեզ հետ միասին եղել են Շահումյանում, միշտ Էրքեջ գյուղում են նստել: «Արաբո» ջոկատը Գետաշենը հանձնելուց հետո մեզ մոտ հաճախակի էր լինում: Դաշնակցության ջոկատներն էին մեզ մոտ լինում: Հատուկ գունդն է մեզ մոտ երկար եղել, որը նստում էր Խարխափուտում, Կարաչինար, Մանասի Շեն, Գաղտուտ գյուղերում, սահմաններն էր հսկում: Մեզ մոտ եղել են «Սասունցի Դավիթ», «Արամ» ջոկատները: Ղռերի Ավոն եւ Սմբատն են եղել՝ իրենց ջոկատով: Մեզ մոտ եկել էր ազգային անվտանգության հատուկ ջոկատը՝ քսանհինգ հոգով: Հարությունյան Հրաչը մեզ մոտ էր լինում: Նրանք մեզ կարողանում էին օգտակար լինել ամենատարբեր հարցերում: Գալիս էին երեւանաբնակ շահումյանցիները, Գյուլիստան գյուղի, Մանաշիդի, Էրքեջի ջոկատները: Գգիրյան Աշոտը, որը ակտիվիստներից էր, գալիս հերթապահում էր, կռվում էր: Շատ-շատերն էին գալիս-գնում: Քանի որ դա տեւեց մոտ երեք-չորս տարի, ամեն անգամ ինչ-որ փոփոխություններ լինում էին:

Բ. - Երբ ուղղաթիռին, որտեղ Շահենն էր, խփել են, Դուք այդտեղ չե՞ք եղել:

Շ.Հ. - Չէ, ես Երեւանում եմ եղել: Երբ «Եղնիկներ» ջոկատը ստեղծվեց, մեկ ամիս անց՝ Շահումյանը հանձնելուց հետո, ես եկա Երեւան: Դրանից հետո ես «Եղնիկներ» ջոկատում մարտական գործողությունների չեմ մասնակցել, որովհետեւ Շահենը գտնում էր, որ ես պետք եմ այստեղ: Ջոկատները օտարության մեջ էին, ես նրանց թիկունքի հարցերով էի զբաղվում՝ սննդի, շորի, զինամթերքի, տղաների ընտանիքներին օգնելու հարցերով: Այդ ժամանակ Թալիշ գյուղից վաթսունից ավելի տղաներ եկան, միացան «Եղնիկներին»: Նրանց հրամանատարին Այան Սլավիկ էին ասում:

Բ. - Մատակարարման հարցում կուսակցությունը օգնում է՞ր:

Շ.Հ. - Կուսակցությունն օգնում էր: Քանի որ մենք պաշտպանության նախարարության զինվորական մաս էինք հանդիսանում, նախարարությունը մեզ զենք-զինամթերքով, հագուստով օգնում էր: Նրանք այդ հարցում տարբերություն չէին դնում: Սկզբնական շրջանում, երբ Վազգեն Սարգսյանը նեղացած էր Մեղրյան Շահենից եւ ինձնից, անուշադրության էր մատնում: Վազգեն Մանուկյանի օրոք մեզ օգնում էին շատ բարձր մակարդակով: Քոչարյան Անդրանիկը Վազգեն Մանուկյանի տեղակալն էր: Նա էլ ամեն ինչ անում էր, որ մեզ օգ-

ներ, այսինքն՝ մեզ տար ավելին, քան պետք էր օրինական զինվորական մասին: Այդ ժամանակ Սան Ֆրանցիսկոյում Դաշնակցության կոմիտե կար: Նրանք մեզ ամսական տասներեք հազար դոլար էին տրամադրում, որից յոթ հազարը ես աշխատավարձ էի տալիս այն շահումյանցիներին, որոնք կռվում էին «Եղնիկներ» ջոկատում, բայց նրանց ընտանիքները Սիլիկյան թաղամասում էին բնակվում: Դաշնակցությունը մեզ տալիս էր բենզին, դիզելային վառելիք, սնունդ: Ստացվում էր այնպես, որ մենք օգտվում էինք եւ՝ Դաշնակցությունից, եւ՝ պաշտպանության նախարարությունից: Իսկ նախարարությունը ամեն ինչ անում էր, որ մեզ համար լավ լինի: Վազգեն Մանուկյանը, երբ նախարար էր, մեզ հետ նստում, խոսում էր: Շահենի զոհվելուց հետո էլ ամեն ինչ արել է, որ մեզ համար լավ լինի:

Բ. - Իսկ ի՞նչ տեխնիկա էր Շահեն Մեղրյանն ուզել: Խոսակցություն կար, որ Վազգեն Սարգսյանը չի հասցրել կամ չի տվել:

Շ.Հ. - 1992-ի հունիսի 12-ին Շահենը հեռագիր տվեց, որ պաշարման մեջ ենք, վատ ենք, եւ տեխնիկա ուզեց: Վազգեն Սարգսյանն ասել էր, որ կօգնի: Բայց, հասկանալի է, որ նա չէր կարող օգնել, որովհետեւ երկու-երեք օրում հնարավոր չէր տանկը Երեւանից հասցնել Շահումյան:

Բ. - Իսկ հարաբերությունները Ստեփանակերտի եւ Շահենի, ձեր շտաբի հետ ինչպե՞ս էին:

Շ.Հ. - Շատ սառը: Մինչեւ Շահումյանը հանձնելը՝ Շահենը իշխանությունից եւ Դաշնակցությունից Շահումյանի համար զենք-զինամթերքով, այլ միջոցներով սնվում էր: Իսկ Ղարաբաղում մեզ ասում էին, որ իրենց միջոցով պետք է այդ ամեն ինչը լինի: Շահենը չէր համաձայնվում: Այդ պատճառով նրա հետ սառը հարաբերություններ ունեին: Իսկ երբ Շահենը իր թեկնածությունը դրեց ԼՂՀ Ազգային ժողովի նախագահի ընտրություններում, այդ օրվանից հարաբերությունները միանգամից վատացան: Շահենի հետ հարաբերությունների վատանալու պատճառով ես էի կապ պահում պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի, իշխանության հետ: Ես էի նրանց հետ շփվում:

Բ. - Ճի՞շտ էր արդյոք ձեր կողմնորոշումը, երբ իշխանությունն ուրիշ էր, դուք կուսակցական այդ թեքումն ունեիք: Թե՞ պետք էր Ստեփանակերտի նման լինեիք՝ ավելի ճկուն:

Շ.Հ. - Այդպիսի խոսակցություն իմ եւ Շահենի միջեւ եղել է: Քանի որ այն ժամանակ ՀՀՇ-ի իշխանությունն էր, ես Շահենին ասացի. «Դու դաշնակցական լինելով հանդերձ՝ չես կարողանում հարաբերություններ ստեղծել ՀՀՇ-ամետ իշխանությունների հետ: Ներքին խաղ խաղանք: Այդ խաղում դու պետք է Դաշնակցությունից հրաժարվես եւ ասես՝ ՀՀՇ-ական եմ: Կարող ես լեզվով ասել՝ ՀՀՇ-ական եմ, բայց ՀՀՇական չլինես: Բայց դաշնակցական լինելով հանդերձ՝ դու չես կարող

ասել, թե դաշնակցական չես: Ներքին կարգով Դաշնակցության հետ պայմանավորվածություն ձեռք բեր, որ դու սառեցնում ես նրանց հետ հարաբերությունները եւ սկսում ես ուրիշի հետ աշխատել»: Շահենը կատեգորիկ դեմ էր դրան: Ասացի. «Քանի որ դու դեմ ես, արի՝ ես դառնամ ՀՀՇ-ական, դու մնա դաշնակցական՝ ի շահ շրջանի»: Շահենն ասաց. «Եթե դու դառնաս ՀՀՇ-ական, ես քեզ հետ հարաբերություններ չեմ ունենա»: Ու այդպես էլ չստացվեց: Մի բան էլ ասեմ: Երբ Շահենը գնաց Ղարաբաղ եւ իր թեկնածությունը դրեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի համար, մինչեւ գնալը ես եւ Շահենը Շահումյանում այդ հարցը քննարկել ենք: Ես դրան հարյուր տոկոսով դեմ եմ եղել: Բայց Շահենը, լինելով դաշնակցական, ընդունեց Դաշնակցական բյուրոյի, Հայաստանի կենտկոմի եւ Ղարաբաղի կոմիտեի առաջարկը: Երբ այդ առաջարկը քննարկվում էր Ստեփանակերտում, ես, այսօրվա նման հիշում եմ, դեմ էի եւ ասացի. «Շահեն, եթե դու գնում ես Ստեփանակերտում աշխատելու, ո՞վ պիտի Շահումյանը պաշտպանի»: Թե՝ դու: Ասացի. «Ես չեմ անի դա: Ես չեմ ուզում առաջին դեմք լինել: Ոչ թե նրա համար, որ վախենում եմ, այլ ես իմ գործի տերն եմ»: Ես ինձ նման երկրորդը չէի գտնի, որ կարողանար Շահումյանի համար այդքան բան անել: Շահենը չհամաձայնվեց: Դաշնակցությունը՝ Հրանտ Մարգարյանը, Վահան Հովհաննիսյանը եւ մնացած դաշնակցականները, որոնք այդ խորհրդակցությանը մասնակցել էին, բոլորը Շահենին պարտադրում էին, ես եւ Ոսկանյան Սամսոնը, շահումյանցիներով, դեմ էինք:

Պատմում է Կարո Կարապետյանը (1992-94 թթ. ԼՂՀ ՆԳ Հատուկ ջոկատի պետ) 30.01.2006 թ., Երեւան



Կ.Կ. - Ծնվել եմ 1966 թվականին Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում: Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից եմ եղել՝ սկսած առաջին հանրահավաքից մինչեւ պատերազմի վերջը: 1992 թվականի հուլիսի 26-ին առաջադրանք ստացանք՝ Մեծ Շենի ու Մաղավուզի ուղղությամբ առաջ շարժվել: Կյանքումս առաջին անգամ «S-72» տանկի անձնակազմի մեջ էի, հրամանատար էի նշանակվել Սամվել Բաբայանի հրամանով: Հասանք Մեծ Շեն, ու տանկի անձնակազմը Մոխրաթաղ - Աղաբեկալինջ - Մարտակերտ ուղղությունը վերցրեց: Հասանք Մոխրաթաղի մատույցներին, ինձ հաղորդեցին, որ ճանապարհն ազատ է, ոչինչ չկա, մեր զորքերն են դիմացը: Առաջ շարժվեցինք: Մոխրաթաղի դպրոցի մոտ զորքեր, մեքենաներ կային: Շարային ստուգատեսի պես մի բան էր անցկացվում: Մեր տանկին մոտեցավ մի կապիտան ու թուրքերեն հարցրեց. «Հարա՞ գեդիրսինիզ» (Ու՞ր եք գնում - խմբ.): Զարմացած նայում էի այդ մարդուն, թե ինչ գործ ունի այստեղ: Ինձ ասել էին, որ հայկական զորքն է այստեղ գտնվում: Նրա երկար խոսելուց համոզվեցի, որ թուրք կապիտան է, ՕՄՕՆ-ի վաշտերից մեկի հրամանատարը: Ինձ չկորցրի ու բացատրեցի.

- Մեծ Շենի կողմից եմ գալիս, շարժվում եմ դեպի Մարտակերտ:
- Հայերը փախչու՞մ են:
- Փախչում են:
- Ու՞ր են փախչում:
- Եսիմ, ջհանդամն են փախչում...

Մեր անձնակազմը կապի միջոցով լսել էր, որ այդտեղ հայեր են տեղակայված: Տանկի մեխանիկը փորձում էր անջատել շարժիչը: Հրամայեցի նման բան չանել: Փորձեց չկատարել հրամանը:

Նշանառուն Հարությունագոմերից Գագոն էր, որը նույնպես պատրաստվում էր լյուկից դուրս գալ, քանի որ մտածում էր, թե հայկական զորքերի կհանդիպենք: Տանկի դղրդոցի մեջ ոչինչ չէր լսվում, ուստի ոչ ոք իմ հրամաններին չէր ենթարկվում: Կապի միջոցով Գագոյին ասա-

ցի. «Շրջվի՛ր ու ինձ նայիր»: Ավտոմոտի փողը պահեցի գլխին, ասացի. «Հենց հիմա առաջ շարժվիր, այստեղ թուրքերն են»: Վախեցած էր, բայց հիսուն մետր առաջ քշեց, իմ հրամանով՝ տանկի փողը պահեց ուղիղ ադրբեջանական ստորաբաժանման մեջ: Նրանք դպրոցի դիմաց կանգնած էին: Դպրոցի «վերքերը» դեռ չեն ապաքինվել, վառված տեղերը մնում են, բայց ստիպված ենք այդպես արել: Առաջին կրակոցից ահագին զոհեր եղան: Երբ պահանջեցի երկրորդ արկը մտցնել, ասաց, որ արկը չի խփում, լռվել է: Բարձրացանք գյուղի վերեւը: Ադրբեջանական տանկը մեզ նկատեց, կրակեց մեր տանկի ուղղությամբ, տանկի ետեւի մասին կպավ: Թեթեւ վնասվածք ստացանք, բայց առաջ շարժվեցինք: Հասանք Մոխրաթաղի գյուղամեջ: Հայաստանից ու սփյուռքից տղաներ էին, որոնք ոտքով առաջ էին գնում: Ինձ տեսնելով՝ ուրախացան, որովհետեւ արդեն ծանոթներ էինք: Ասացի, որ կարող եմ զորքն ուղեկցել այնտեղ, որտեղ ադրբեջանցիներն են: Զորքն ուղեկցելու պահին մեզ փորձում էին շրջապատել, բայց չստացվեց: 1992 թվականի հուլիսի 26-ին էր: Ես Մոխրաթաղ գյուղից Սերժիկ անունով մի տղայի հետ ութ գերի վերցրի. ինձ թուրքի տեղ դնող կապիտանն էր՝ իր յոթ զինվորների հետ: Զինվորներից մեկը, որն իմ ավտոմատի փողի տակ էր, չուզեց հանձնվել, ինքն իր փորին կրակեց: Նրան այդպես վիրավոր էլ գերի վերցրի, տեղափոխեցի Չլդրանի շտաբ, որտեղ Սամվել Բաբայանն ու Սեյրան Օհանյանն էին: Մեր դիմաց դուրս եկավ մի աղջիկ, որը, հետո իմացա, Բաքվից գաղթած Անահիտ Մարտիրոսյանն էր: Նրա աչքի առաջ թուրքական խուժանը մորթել էր ամուսնուն: Անահիտը պահանջեց, որ շարքի վերջում կանգնած տղային հանձնեմ իրեն: Պարզվեց, որ նա ճանաչում էր այդ տղային, իր պատմելով՝ Բաքվում նա սպանել էր իր ամուսնուն: Չէի ուզում տալ, որովհետեւ այդ զինվորներին գերի վերցնելու նպատակը հետագայում մեր տղաների հետ փոխանակելն էր: Սամվել Բաբայանն ասաց. «Լավ, աղջիկ է, տուր, թող տանի, մի քիչ ծեծի, ամուսնու վրեժն առնի, հանգստանա»: Այդ զինվորին տվեցի Անահիտին, մյուսներին մտցրինք ավտոտնակի մեջ: Սամվել Բաբայանին ու Սեյրան Օհանյանին զեկուցում էի կատարվածի, մեր զորքերի տեղակայման վայրի մասին: Այդ օրը, երբ ես մտել էի գյուղ եւ ուզում էի հանդիպել հայկական զորքին, իմ հետեւից շատ պատահական գալիս էր մի «ԲՄՊ-2», նրա կրակի օգնությամբ կարողացանք տանկը դուրս հանել: Այդ նույն անձնակազմում մի հայ աղջիկ կար, նաեւ Մարտակերտի շրջանից Վանիկն էր, որը հետո ազգային անվտանգության համակարգում էր աշխատում: Այդ երկու տեխնիկան՝ փոքրաթիվ անձնակազմով, շատ մեծ, հերոսական գործ արեց այդ օրը: Ազատագրվեց Մոխրաթաղը: Այդ ընթացքում Ստեփանակերտի երկրորդ վաշտի «ԲՄՊ-2»-ը ադրբեջանական տանկի կողմից խփվեց: Անձնակազմը զոհվեց, ոչ մեկին չկարողացանք փրկել, քանի որ զրահամեքենան ամբողջությամբ վառվում էր:

Ամռանը Մարտակերտի ուղղությամբ երկրորդ վաշտի տղաների հետ զրահամեքենայով ես էի, երկրորդ վաշտից Արկադին՝ նշանառուն, որը հետո Ստեփանակերտի վերանորոգման գումարտակի հրամանատարն էր, եւ Փոքր Սամոն՝ մեխանիկ-վարորդը: Գիշերը Մեծ Շենի ուղղությամբ՝ Մեհմանա ձորի մոտ սկսվեց մարտը: Շատ հետաքրքիր բան եղավ: Մեր զորքերը անտառում աջից ու ձախից «սանրելով» գնում էին: Շատ լուրջ դիմադրություն էր այնտեղ: Տեխնիկա պահանջեցին: Արկադիին ու Սամոյին ասացի. «Մեր վախտն էլ եկավ...»: Հետեւակին «պաղերժկա» անելով առաջանում էինք: Հակառակ կողմից կիսալուսին նշանով «ԲՄՊ-1» դուրս եկավ մեր դեմ: Արկադին փողը պահեց ուղիղ մեքենայի աշտարակի տակին, որպեսզի փողը անշարժ դարձնի, մեր ուղղությամբ չկրակի: Նա խփեց, երկրորդ անգամ Արկադիին ասաց՝ դի՛ր «ավտոմատիչեսկի»: Բայց արդեն խփել, աշտարակը գցել էր, զրահամեքենան չէր կարողանում շարժվել: Մեկը դուրս եկավ, շլեմաֆոնից ծուխ էր դուրս գալիս, համարյա թե վառված: Ճանաչեցինք: Սեյրան Օհանյանն էր: Փաստորեն, համարյա սպանում էինք նրան:

Պատմում է Սերգեյ Վանցյանը
21.09.2005 թ., Երեւան

Ս.Վ. - 1988 թվականին, երբ շարժումը սկսվեց, ես Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտադրության ծառայության պետն էի: Աշնանը երկու տարով մեկնեցի Լենինգրադ Քաղաքացիական ավիացիայի ակադեմիայում ուսանելու: Այդ ժամանակ Լենինգրադից կազմակերպում եւ Հայաստան էինք ուղարկում զենք-զինամթերքը: Երկրաշարժի պատճառով դեկտեմբերի 10-ին ես վերադարձա Հայաստան: Լենինականում ռադիոսիրողները եթերում հայտարարեցին, որ օդակայանում դժվարություններ կան բեռնաթափման հարցում, եւ օգնության կարիք ունենք: Ավիաընկերության վարչության պետ Էդուարդ Պապիկյանը զանգեց, ասաց, որ արտասահմանից օգնություն են առաջարկում: Հատկապես հետաքրքրված էր գերմանական ավիաընկերությունը: Դիմավորեցինք նրանց ներկայացուցիչներին: Մեկ շաբաթվա ընթացքում բերեցին համապատասխան տեխնիկա, որը հնարավորություն էր տալիս կես ժամվա ընթացքում բեռնաթափել հիսուն տոննա բեռնատարողությամբ ինքնաթիռները:

1990 թվականի սեպտեմբերին ես կրկին վերադարձա Երեւան, ու վարչության պետ Հովհաննես Երիցյանն ինձ նշանակեց «Էրեբունի» օդանավակայանի բեռնափոխադրումների պետ: Ղարաբաղի հետ միակ կապը օդն էր՝ ինքնաթիռներն ու ուղղաթիռները: Մարտակերտի շրջանում պատրաստվել էր օդանավակայան «ՅԱԿ-42»-ի վայրէջքի համար: Սակայն հետագայում խորհրդային զինվորները Ադրբեջանի պահանջով հերկեցին այդ տարածքը: Մենք մեծ ջանքերի գնով այն նորից օդակայանի վերածեցինք: Ամրացրել էինք գետինը: Սակայն երեք ամիս հետո կրկին արգելեցին: Վառելիք, վառոդ, սնունդ էինք բերում:

Ուղղաթիռի՝ օդ բարձրանալու համար տասնյոթ ծառայություն էր աշխատում: Հայաստանը շրջապատման մեջ էր: Դժվար էր վառելիք, պահեստամասեր ձեռք բերել, հասցնել տեղ:

Բ. - Ջավախքցի եք, ձեր հայրենակիցները ի՞նչ մասնակցություն ունեցան Ղարաբաղյան շարժմանը:

Ս.Վ. - Ախալքալաքի, Ախալցխայի հայությունը օգնում էր ամեն ինչով: *Ռուսական զորամասից ձեռք էին բերում զենք, զինամթերք:* Հատկապես նշանակալից էր վառելիքի գծով օգնությունը: Բաքվից իբր զորամասի համար ավիացիոն նավթ էին բերում Ջավախքի զորանոց, իսկ այնտեղից ցիստեռներով ձմեռ թե ամառ, իհարկե, հաղթահարելով ամեն մի դժվարություն, տեղափոխում էին Երեւանի օդանավակայան: Անշուշտ, Բաքվի նավթ վաճառողները գիտեին, թե ուր է գնում նավթը, սակայն նրանց ավելի շատ հետաքրքրում էր փողը, քան Ղարաբաղը կամ Ադրբեջանը:

Գործի բերումով շատ էի շփվում օպերատիվ շտաբի պետ Գագիկ Մարտիրոսյանի հետ:

Հաճախակի էինք շփվում բանակի ավիացիայի շտաբի պետի հետ, որը շատ էր խանգարում մեզ: Որոշեցի բանակցել հետը: «Ինչո՞ւ ես խանգարում մեզ»,- հարցնում եմ ես: «Ինձ մինչեւ թույլ չտան՝ ես ոչինչ անել չեմ կարող»,- ասաց նա: «Լավ, քեզ հանգստանալ պետք չէ՞, արձակուրդ գնալ»,- ասացի: Ասաց. «Մեծ ուրախությամբ կգնամ»: Մի ծրար փոխանցեցի, գնաց արձակուրդի: Այլեւս մեր ճանապարհը բաց էր: Ավիացիոն գնդից սկսեցինք միջոցներ ձեռք բերել: Գյումրիի զորագնդի մասնագետների հետ ուղղաթիռներ բերեցինք, որոնց միջոցով որոշ գործողություններ կատարեցինք: Մեր օդաչուները ռազմական գործողություններում հմտացան: Ողջ ավիացիան լուրջ գործ կատարեց:

Շուշիից խփում էին «Գրադով»: Ինչպե՞ս բերենք կայանքը: Մեքենան ամբողջապես պետք էր տեղափոխել: Մեծ ուղղաթիռներ էին պետք: Երկու բեռնատար «ՄԻ-26» ուղղաթիռ տվեցին: Առաջին չվերթով ալյուր բերեցինք: Ալյուրը դատարկեցինք մարզադաշտում: Բալուջայի կողմից սկսեցին կրակել ուղղաթիռի վրա: Մի աղջնակ վիրավորվեց: Իջանք Գորիսի օդակայանում: Բաքերն էլ էին ծակվել: Մի գիշերվա մեջ մեր օդակայանում աշխատող վերանորոգողները լրիվ կարգի բերեցին: Այդ ուղղաթիռներով մի «Գրադ» կայանք իջեցրինք Քոլատակում, մյուսը՝ Շահումյանում: Ուղղաթիռը Շահումյանից վերադառնալիս տասնվեց տոննա ազնվամորի տեղափոխեց: Ետ վերադարձի ճանապարհին, 1992-ի փետրվարին, ադրբեջանցիները խփեցին ուղղաթիռին: Տասնվեց հոգանոց անձնակազմին փրկեցինք: Մենք ռուսներին տարանք դեպքի վայր: Վերեւից նայում էինք. ողջ տարածքը ազնվամորիով էր պատված: Չորս հոգու եւս փրկեցինք: Հատուկ նշանակության ջոկատի տղաները հարբել էին: Անձնակազմին օգնեցինք, ուղարկեցինք տուն:

Մեր տղաները մեծ փորձ ձեռք բերեցին: Մարտիրոսյան Շահեն ունեինք, որն Աֆղանստանում էր փորձ ձեռք բերել: Նա հետագայում դարձավ ավիացիայի գնդի հրամանատարը: Զորի հատվածում փոր-

ձարկեցինք: Հենակետ ունեին թուրքերը, նրանց վերացրին: Միեւնույն ժամանակ տղաներին սովորեցնում էր կրակել: Զինագործներ ունեինք՝ Գրիշան, Սերյոժան, որոնք մեծ գործ էին կատարում: Երբ օկրուգի հրամանատարը եկավ Երեւան, մեզ տեղեկացրին, որ ավիացիան տանում են: Իբր տանում են նորոգելու համար, սակայն այդ «Կրակադիլներն» ուզում էին այլեւս ետ չտալ ու մեզ զրկել ուղղաթիռային ռազմական ավիացիա ունենալու հնարավորությունից: Զանգեցի Վազգեն Սարգսյանին, ասաց. «Կանգնեցրեք պրոցեսը, մինչեւ գամ»: Ավիացիայի պետ Աշոտը աշխատում էր նրանց հետ: Գնացինք ավիագունդ: Գալիս են օկրուգի գլխավոր հրամանատարը, նրա տեղակալ գեներալ-լեյտենանտ Գրիգորյանը, Յոթերորդ բանակի հրամանատարը: Օկրուգի հրամանատարն ասում է՝ պրոֆիլակտիկայի են տանում: Իբր հրամայում է, որ ետ գան: Վազգենին ասում եմ՝ խաբում է: Խոստանում է՝ հաջորդ օրը կգան: Անջատում ենք լույսերը: Գեներալը չի կարողանում թռչել: Լույսերը միացրին: Պետրոսյան Ալիկի հետ որոշեցինք մի քայլ անել: Գեներալ Գրիգորյանին վերցրինք որպես պատանդ: Ասաց. «Ավելի լավ է ճակատիս գնդակ ստանամ, քան թե զալոժնիկ լինեմ»: Հսկայամարմին մարդ էր: Տղաները թեւերը ետ շրջեցին, ստիպված էր ենթարկվել: Նրա հետ վերցրինք եւ Յոթերորդ բանակի հրամանատարին: Հայտնեցինք օկրուգի հրամանատարությանը, որ եթե ռազմական ուղղաթիռները Երեւան չվերադառնան առավոտյան, այդ գեներալներին այլեւս չեն տեսնի: Վազգենն էլ հասկացավ, որ դա միակ ելքն էր: Ալիկը նրանց պահում էր հյուրանոցում: Հաջորդ օրը ուղղաթիռները ետ եկան: Դա հաղթանակ էր: Ադրբեջանցիներին մնացին հարյուրավոր ինքնաթիռներ, իսկ մեզ մի քանի հատը չէին ուզում թողնել: Դա ոգեւորեց մեր տղաներին:

Մի անգամ Մեղրյան Շահենի հետ որոշեցինք հարցեր լուծել Մոսկվայում: Ես էի, Գեղամը, Վալտերը: Շահենը ասաց, որ կա ոմն գեներալ Վալերի Պետրովիչ Օչերով, որ բարձր պաշտոնի է: Կոնյակ էինք տարել: Գլխավոր շտաբում հանդիպեցինք: Երեկոյան գնացինք ռեստորան: Գեներալը իր խոսքի տերը եղավ: Գեղամը ավիացիոն շոուի մասնակցեց: Ստացանք չորս հատ «Մի-24» ուղղաթիռ: Յուրաքանչյուրը տասնյոթ միլիոն դոլար արժեր: Հայտնեց, որ Նախիջեւանից կգնան Թիֆլիս: Գնացինք Նախիջեւանի զորամաս: Անձնակազմին ճոխ հյուրասիրեցինք ու, իբր եղանակը վատ է, իջեցրինք Երեւանում: Ու դրանք այլեւս մերն էին: Երկուսը, երբ Գորիսի հատվածում կրակոց էր եղել, տղաները թողել էին:

Լուկաշովը՝ ավիացիայի շտաբից, թուրքերի համար էր աշխատում, իսկ շտաբի պետ Մուժիկովը՝ մեզ համար: Օչերովը զանգեց, թե՝ Մուժիկովին հաղորդեք, թող կապվի ինձ հետ: Թբիլիսիի բնակարանում

նա հեռախոս չուներ: Կիրակի էր: Զանգեցի իմ բարեկամ Լավրենտի Մկրտչյանին, որը Թբիլիսիի օդակայանի պետն էր, խնդրեցի գնալ Մուժիկովի տուն եւ փոխանցել Օչերովի հրահանգը: Կապվում է, եւ կարգադրում են, որ զինամթերքը, զենք, վառելանյութ հասցնի մեզ: Նա եկավ Երեւան: Ուղղաթիռներով սկսեցինք տեղափոխել զենք-զինամթերքը: Հետագայում, երբ հարաբերություններ ստեղծվեց Վազգենի եւ Գրաչովի միջեւ (մինչ այդ Յոթերորդ բանակի հրամանատարը ռազմական օկրուգի հրամանատար նշանակվեց), կրկին լավ շրջան էր մեզ համար:

Պատմում է Նելսոն Մինասյանը *(1992-1993 թթ. Ստեփանակերտի կայազորի պետ, 1993-94 թթ. շտաբային վաշտի հրամանատար)*
05.10.2005 թ., Ստեփանակերտ

Ն.Մ. - Ծնվել եմ 1954 թվականին Ստեփանակերտում: Մինչեւ շարժումը մոտ տասը տարի աշխատել եմ իններորդ շինարարական ձեռնարկությունում որպես արտադրամասի վարիչ: Շարժման սկզբից ակտիվ էինք: Սումգայիթից հետո սկսեցինք զինվել, գիտեինք, որ սպասվում է նույն ճակատագիրը: Ես Սումգայիթում կորցրի զոքանչիս եւ աներոջս՝ Սեդա եւ Կոլյա Դանիելյաններին, նրանց տղան՝ Վիտալին, գլխին ստացած հարվածներից երկրորդ կարգի հաշմանդամ դարձավ, նա հիմա աշխատում է անվտանգության ծառայությունում, մայորի աստիճան ունի: Սկսեցինք պաշտպանական ջոկատներ ստեղծել Մալիբեյլուի, Խոջալուի կողմերում, նաեւ Հադրութ էինք ուղարկում տղաներին:

Ռուսները, թուրքերի պատվերով գալիս, նրանց մատնանշած մարդուն տնից հանում ու տանում էին Շուշի, իբր ծայրահեղական է, ազգամիջյան կռիվ է գցում: Այդ մարդկանց տանջում էին կամ ծախում մեզ վրա, կամ տանում Բաքու եւ սպանում: Դեպքեր էին լինում, երբ թուրքերը հարձակվում էին մեզ վրա, եւ ռուսները օգնում էին նրանց: Մեր տղաների պաշտպանվելու ժամանակ ռուսներին ասել էին, թե հայերը հարձակվել են Հասանաբադի վրա: Բայց հայերը չէի հարձակվում, այլ դիրքերում պաշտպանվում էին: Վանիկի եղբորը՝ Վաչոյին, սպանեցին այդտեղ: Տեսանք, որ մեր թշնամին այդ ժամանակ միայն թուրքը չէր, ռուսից էլ պիտի զգուշանայինք: Սկսեցինք զենք փնտրել: Այն ժամանակ Ղարաբաղում եթե մեկը զենք ուներ, տասը հոգի հայտնում էին, որ նա զենք ունի: Անմիջապես ուղարկում էին Բաքու, իսկ այդ մարդուն կալանավորում էին: Վախենում էինք զենք պահել: Բայց սկսեցինք զենք փնտրել՝ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից... Քանի որ զենքը ուղարկվում էր Երեւան՝ Իգոր Մուրադյանի տուն, որոշեցինք, որ պիտի գնանք, այնտեղից զենք բերենք: Բաղդասարյան Ռուբիկը (այն ժամանակ ակտիվիստներից էր), Դաշնակ Ագոն

ասացին, որ զենք կա, բայց չեն կարողանում բերել: Ասացի՝ ես կգնամ: Դա 1988 թվականին էր: Ես, Շուշիի գնդի Իշխանյան Վաչոն, Օգանով Ռուդիկն ու Օգանով Հենդոն՝ չորսով, «Ժիգուլիով» Կիրովաբադով ճանապարհ ենք ընկնում: Ճանապարհին պետավտոտեսուչը մեքենան կանգնեցնում է: Ասացինք, թե հեռագիր ենք ստացել, որ մեր եղբորը վիրահատում են: Հասանք Երեւան, երեք օր սպասեցինք՝ ոչ մի ձայն: Մի երկու հրացան էին տալիս, այն էլ չէինք վերցնում: Իգոր Մուրադյանի տանը Վազգեն Մանուկյանը, էլի մարդիկ, սպասում էին, որ պետք է զենքը տեղ հասնի, վերցնենք ու բերենք: Մի քանի օր սպասեցինք՝ ձայն չկար: Ընկերոջս՝ Արսեն Շումանյանի հետ գնացի Էջմիածին: Այնտեղ մի ռուս ենթասպայի հետ ծանոթացանք, նրանից տասներկու հազար ռուբլով երկու ավտոմատ գնեցի եւ ինքնաթիռով բերեցի: Օդակայանում մի ղարաբաղցի ոստիկան կար՝ Ցաշան, նա մեզ օգնեց, զենքը անցկացրինք: Ուրախանում ենք, որ մի քանի զենք ունենք: Մեր բակի ջահելներին հավաքեցի: Տասնհինգ տարեկանից բարձր բոլորն էլ գալիս էին: Մալիբեյլուի մոտ սկսում ենք խրամատներ փորել: Մուրադ-Պետրոսյանը եկավ, տղաների մի մասին տարավ Կրկժան: Երեք օր Կրկժանի հայոց թաղամասն էին պաշտպանում: Կամաց-կամաց սկսեցինք ջոկատներ հավաքել, վաշտեր կազմել: Առաջին վաշտը կազմեցին Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Իսրայելյան Ռուսլանը, երկրորդը՝ Բաբայան Սամվելն ու Բաբայան Կարոն՝ եղբայրը: Երրորդ վաշտն էլ ես կազմեցի. հատուկ դպրոց էր: Հրամանատար նշանակեցինք Սարգսյան Գագիկին, ջահել տղա էր: Այդ ժամանակ արդեն զենք էինք ստանում Հայաստանից: Քսանյոթ հատ «ԱԿ-74» ավտոմատ ստացա:

Բ. - Ո՞վ էր ուղարկում:

Ն.Մ. - Հայաստանից էին ուղարկում, արդեն նախարար ունեինք՝ Արկադի Կարապետյանն էր: Լուր ենք ստանում, որ Տողի վրա հարձակում է եղել: Հավաքվում ենք, գնում ենք պաշտպանության, չենք թողնում, որ թուրքերը մտնեն: Այնտեղ ղեկավարում էր Արկադի Տեր-Թադեւոսյանը: Մեր մեջ մի վատ գիծ կա՝ հայ դաշնակ, չգիտեմ ինչ... Ագոյին հանեցին, չնայած նա դաշնակցական չէր, փոխարենը նշանակեցին Սերժ Սարգսյանին, իսկ Արկադի Տեր-Թադեւոսյանին՝ առաջին տեղակալ:

Կրկժանի մարտերի ժամանակ, երբ Կրկժանն առաջին անգամ վերցրել էին, Ստեփանակերտի բոլոր վաշտերն էլ միասին էին: Հետո մինչեւ հինգերորդ վաշտ կազմվեց: Կրկժանը առաջին անգամ որ ազատագրեցինք, պահել չկարողացանք: Թուրքերն ինքնաթիռներով, ուղղաթիռներով որ եկան, թողեցինք ու դուրս եկանք: Այսինքն՝ պատրաստ չէինք, չէինք հասկանում, որ գրավելուց բացի պետք է նաեւ

պաշտպանենք: Երկրորդ անգամ արդեն կազմակերպված էինք: Ղեկավարում էին Քսանվեցի Յուրան, ուսումնական գնդի Վաչիկը, Սեյրան Օհանյանը, որն այն ժամանակ Ստեփանակերտում էր ծառայում. նրանք են զրահամեքենայով խփում Կրկժանին: Ռուսներին փող էինք տալիս, նրանք օգնում էին: Կրկժանը որ վերցրինք, թուրքերը մի քիչ խեղճացան: Մեր երկրորդ հաջողությունը 1992-ի փետրվարի 24-ին Խոջալուի ազատագրումն էր: Ջոկատներին գիշերը հարձակվելու հրաման է տրվում: Գիշերվա ժամը երեքին հարձակվում ենք ու նույն օրը Խոջալուն վերցնում: Ամենաշատը երեւի քսան զոհ տվեցինք այդտեղ: Ադրբեջանցիները հանգիստ էին, վստահ էին, որ պատրաստված են: Տղերքը երբ լսել էին, որ գնում ենք Խոջալուն վերցնելու, նույնիսկ հրացանով էին եկել: Օրինակ՝ Յուրան, որ որսորդական խանութում էր աշխատում, իր հրացանով եկավ, որ կռվի: «Արամո» ջոկատի Արամոն այստեղ վիրավորվեց, մեր տղաներից Բորյան նրան դուրս բերեց: Մեր տղաներից Աղաջանյան Էդոն սպանվեց, շատ լավ տղա էր, շարժմանը առաջին օրից էր մասնակցում: Իմ վաշտից Գարիկ անունով մի տղա ոտքից վիրավորվեց: Նրանք բարձրացել էին «ինը հարկանին», երկար ժամանակ պահել: «Արաբո» ջոկատն էլ էր մեզ հետ, նրանցից հինգվեց հոգի մասնակցում էին: Կարադաղլուն գրավելուց հետո նրանք մի զոհ տվեցին՝ Էդոն, Ճուտ անունով մի տղա վիրավորվեց, նրան տարան Ֆրանսիա: Սրանք մի քիչ խառնված էին, չէին ուզում նորից մասնակցել, բայց մի քանիսը մասնակցեցին՝ Կարենը՝ Մուզմուզը, Ջիվանը... Միջանցք բացեցինք: Երբ լուսանում էր, հրաման եղավ, որ կանանց, երեխաներին բաց թողնենք, գնան: Նրանք այդ արանքով գնացին:

Բ. - Իսկ տեղյակ ե՞ք՝ ոնց եղավ սահմանի դեպքը:

Ն.Մ. - Քյաթուկի տակ մի բլուր կա, մերոնք էլ կանգնած էին այդտեղ, «ԲՄՊ» ու գնդացիր էին դրված: Սրանք որ անցնում են, թուրքերը կարծում են, թե հայեր են: Դե, հեռվից ի՞նչ է երեւում, ժողովուրդ է՝ վազում են: Սկսեցին կրակել: Ուժեղին ոչ ոք չի քննադատում, միշտ թույլին են քննադատում: Հետո տասնհինգ հոգու՝ կանանց, ծերերի, երեխաների բերում են երրորդ վաշտ որպես պատանդ: Ասում են. «Նելսո՛ն, այստեղ պիտի մնան, նրանց հետ ինտերվյուի համար Ռուսաստանից եկել են»: Բայց ես նրանց այնքան լավ եմ պահել: Երկու սենյակ եմ տվել: Կանանց հետ գրկի երեխաներ էլ կային: Գնացի մեր տուն, կնոջս հարցրի, թե մեր տանը խտացրած կաթ պիտի լինի: Հարցրեց, թե ինչ եմ անում: Ասացի, որ տանում եմ, թուրք երեխուն տամ: Ասաց. «Նրանք նոր են սպանել հորս, դու տանում ես, նրանց տաս»: Ասում եմ. «Ախչի, նրանք չեն սպանել, դա մեր գյուղացի է»: Պարզվում է, որ այդ խոջալվեցիք հորս գյուղից են՝ Հարավ գյուղից, հայերեն խոսում են: Չթողեցի, որ մեկը մատով դիպչի նրանց: Մոտ քսան օր պահեցինք: Կարմիր խաչը եկավ, տվեցինք, տարան Աղդամի սահմանը: Ասացին. «Նելսոն ջան, սարը սարին չի հանդիպում, մարդը մարդուն հանդիպում է»: Ասացի. «Ուզում եք ասել, ես էլ ձեզ մոտ եմ պատանդ ընկնելու՞»: Նրանք հայհոյում էին Մութալիբովին, թե՝ մեր տունը քանդեց:

Բ. - Ի՞նչ էր ադրբեջանցու անունը:

Ն.Մ. - «Ղարմետաքս» կոմբինատում էին աշխատում: Ռադան էր՝ ջահել աղջիկ էր, նրա մայրն էր, երկու քույրերն էին, գրկի երկու երեխան, ոտքը գիպսի մեջ դրած տասը տարեկան մի տղա: Ասում էին. «Մեզ մին խոխա ինի, քո անունն ենք տիննական»: Ասում եմ՝ պետք չի իմ անունը դնել: Պահում էի, որովհետեւ մեղքս էին գալիս, նրանք ի՞նչ մեղք ունեին:

Երրորդն էր՝ Մալիբեյլու, Ղոչինլար: Այստեղ էլ են վաշտերը բոլորը միանում:

Բ. - Վաշտում քանի՞ հոգի էին:

Ն.Մ. - Վաչոյի խումբը եւ էլի ուրիշ խմբեր միացած էին երրորդ վաշտում: Շուրջ հարյուր վաթսունյոթ հոգի կային իմ վաշտում, բայց այդքան զենք չկար: Վազգենը, որ պատերազմի ժամանակ զինվորական դատախազությունում էր աշխատում, Կարեն Կարայանը, որն առաջին ատյանի դատավոր է, կրթված, գրագետ տղաներ էին, եկել էին թե՝ մեզ էլ զենք տվեք: Ասում եմ. «Զենք չկա: Պատերազմը դեռ չի վերջացել, ձեր հերթն էլ կհասնի: Թող հլա փորձ ունեցողները գնան, մեզ գրող էլ է պետք, ինչի է պետք, որ գնաք, Կրկժանում զոհվեք»:

Մալիբեյլու եւ Ղոչինլար գյուղերը վերցնելուց հետո պատրաստվում էինք Շուշիի ազատագրմանը: Երրորդ վաշտը տեղափոխվում է Չանախչի գյուղով Լիսագորսկ: Այնտեղ մի քիչ հանգստանում են, մայիսի 8-ին բարձրանում: Իսկ ես մնում եմ ընկերներիս՝ հասակակիցներիս հետ. «ստարիկների ռոտա» էինք ասում: Ամենաերիտասարդը Միքայելյան Վիլենն էր՝ ավտոգումարտակի հրամանատարը, իսկ ամենատարիքովը՝ Իվանով Ռուդիկը, նա հիսունյոթ տարեկան էր այդ ժամանակ: Դաշուշենից եկանք Շոշ: Գյուղի կամուրջով՝ բանտի ուղղությամբ, գիշերվա ժամը երկուսին բարձրանում ենք սարը: Հրետանին արդեն գործում էր: Հրաման է տրվում՝ առաջ շարժվել: Շատ մեծ դըժվարությամբ էինք բարձրանում: Ժամը չորսին հասանք մեր դիրքերը: Այնտեղ էին առաջին վաշտը , մեր՝ «ծերուկների» վաշտը, Դաշուշենի ու Շոշի ջոկատները: Այդ հատվածի հրամանատարը Իսրայելյան Ռուսլանն էր, ուղղության ընդհանուր հրամանատարը Ագոն էր, իսկ գործողության ղեկավարները Արկադի Տեր-Թադեւոսյանն ու Ֆելիքս Գզողյանն էին: Օպերացիային մասնակցում էին Սերժ Սարգսյանը,

Սամվել Բաբայանը, Մարտունու, Մարտակերտի, մնացած հատվածներում վերահսկողությունը նրանց ձեռքին էր: Առավոտյան թուրքերը տեսնում են, որ արդեն շրջապատված են: «ԲՄՊ-2»-ով գալիս են դեպի մեզ, բայց երբ գործի ենք դնում նռնականետը, թողնում փախչում են, թեեւ նրանց չէր էլ կպել: Երեք բարձունք կար դրանց տակին՝ ավտոբազայից ձախ, որի կողմից վեցերորդ վաշտը, Ներսիսյան Կարենի, Գագիկ Սարգսյանի ջոկատներն էին բարձրանում: Երբ լույսը բացվում է, Շուշին արդեն գրավված էր: Շատ քիչ զոհ ենք տալիս՝ մոտ քսան հոգի: Թուրքերի կողմից էլ շատ զոհ չի լինում՝ մոտ հիսուն հոգի, քանի որ նրանք փախչում էին դեպի Լաչին: Այդտեղից էլ մերոնք են բարձրանում Լիսագորսկ, ճանապարհին «Գրադ» կայանքը վերցնում: Սրանք Սարիբաբով, Մինքենդով բարձրանում են, գնում:

Բ. - Պատմիր «Քսանվեցի» դիրքերից:

Ն.Մ. - 1988 թվականի դեկտեմբերի 7-ին Ագոն ու Բեկորը գալիս են ինձ մոտ, որ միասին գնանք զենքի ետեւից: Արթուր Ալեքսանյանը ուղղաթիռով պետք է զենքը բերեր, Քիրս սարի տակը թափեր: Մեզ հետ էր նաեւ չանախչեցի Արմենը: Իմ «Նիվա»-ով ճանապարհ ենք ընկնում: Մեքենայի գլխին, ըստ նշանի, կարմիր վրան ենք փռում: Նշանակված վայրում ողջ օրը սպասեցինք, բայց ոչ մի ուղղաթիռ էլ չերեւաց: Այդ ժամանակ Կիրովաբադում հայերը հավաքվել էին եկեղեցում ու նրա բակում: Ճիշտ է, ռուսները չէին թողնում, որ նրանց սպանեն, բայց մարդիկ սոված էին: Գնացինք Ամարաս, մի թուրքի նախրից կով մորթեցինք, միսը կտրտեցինք, մեքենայով բերեցինք, հանձնեցինք Պետրոսյան Ռազմիկին, որ ուղարկի Շահումյան:

Մի անգամ «Կուկուռուզնիկ» ինքնաթիռով Ալեքսանյան Արթուրի հետ գնացինք Գորիս՝ դարձյալ զենք բերելու: Արթուրը մնաց Գորիսում, ես գնացի Ղափան՝ ամունալ, կապսուլ ու նման բաներ բերելու, որպեսզի կամուրջը պայթեցնեինք: Թուրքերը ռուսների հետ այդ կամուրջով ազատ մտնում էին քաղաք, դուրս գալիս: Պետք էր նրանց վախեցնել, որ այլեւս քաղաք չմտնեն: Սերժ Սարգսյանը, Ռազմիկ Պետրոսյանը կարգադրեցին՝ կամուրջը վերացնել: Պայթեցնելու գործը հանձն առավ ղափանցի Բաղդասարյան Սլավիկը, որին Բուլուշ էինք ասում, քարհանքում նա այդ գործով էր զբաղվում: Որոշեցինք, որ աստիճաններով պիտի բարձրանանք: Անհրաժեշտ էր տասներկու մետր բարձրությամբ սանդուղք սարքել: Ես մի վագոն հատուկ տախտակներ էի ստացել: Տասը տարվա իմ աշխատանքի ընթացքում առաջին անգամ էի դրանցից ստանում: Երբ սանդուղքը պատրաստ էր, տվեցի ընկերոջս՝ Եղիազարյան Աբոյին՝ Ձախ Աբոյին, բայց պատվիրեցի գործը ավարտելուց հետո ետ բերել, որովհետեւ ՊԱԿ-ը հեշտությամբ գըլխի կընկներ, թե այն որ արտադրամասում է պատրաստվել: Գիշերը՝

ժամը մեկին, կամուրջը պետք է պայթեր: Պայթյունը սահմանված ժամից հինգ րոպե հետո է տեղի ունենում՝ տակովն անելով մի քանի ռուսի, ուզբեկի: Բաքվի ՊԱԿ-ի աշխատակիցները գալիս են, ուսումնասիրում, փորձում հանցանշաններ գտնել: Եվ հանկարծ գետում հայտնաբերում են իմ պատրաստած սանդուղքը: Տղաները գցել էին գետը՝ մտածելով, թե կքշի, կտանի: Սանդուղքը տանում են ՊԱԿ, սկսում քննություն կատարել: Բայց պատերազմը արդեն սկսվում էր, մոռացան սանդուղքն էլ, կամուրջն էլ: Շուշիի գրավումից հետո կամուրջը երկաթե ձողերով ժամանակավորապես վերականգնեցինք: Դրանից հետո ինձ տեղափոխեցին պարետատուն: Բաբայան Կարոն պարետն էր, ես նշանակվեցի տեղակալ: Երկու ամսից փոխարինեցի Կարոյին, որովհետեւ նրան նշանակեցին գումարտակի հրամանատար: Մի տարի Ստեփանակերտի պարետն էի: Այդ ժամանակ թուրքերը գրավեցին Շահումյանը, Մարտակերտը: Ժողովուրդը խուճապի մատնված փախչում էր՝ սոված, վախեցած: Մի քանի տեղ հսկողություն էինք սահմանել, որ թույլ չտանք փախչեն: Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի հրամանով՝ կանանց ու երեխաներին օգնում էինք տեղափոխել, բայց տասնյոթից հիսուն տարեկան տղամարդկանց արգելված էր: Որին համոզելով, որին խաբելով կամ ծեծելով՝ կարողացանք պահել, որն էլ անտառներով փախավ, գնաց: 1992-93 թվականներին շատ դաժան օրեր տեսանք՝ Մարտակերտը մերը չէր, ժողովուրդը լցված Ստեփանակերտի դպրոցները, «Գրադը», թնդանոթը խփում էին, շենքերի հարկերը փլչում... Մի օրում մի ընտանիքի հինգ անդամները զոհվեցին: Երրորդ դպրոցը մի քանի անգամ ռմբակոծվել է, նույնը՝ ինտերնատը: Ահագին մարդիկ մահացան: Պարետի խնդիրն էր քաղաքում շրջել ու թույլ չտալ, որ զենքով կրակեն, խուլիգանություն անեն: Ոստիկանը զանգում էր. «Նելսոն, ախպոր պես, մի երկու զինվոր ուղարկիր, գալիս են մեզ կոտորեն»: Մեկն էլ հարբած գալիս էր, թե՝ այսինչ թվին այսինչ միլիցիան իմ քեֆին դիպչել է, գնում եմ հարցերս լուծեմ: Շատ դժվար էր այդ ամենը կառավարելի դարձնել:

Մարտակերտը թողնելուց հետո պարետատունը, Արջաձորի, Վանքի ջոկատները Խաչենագետի մոտ՝ կամուրջից մի քիչ վերեւ, դիրքավորվում են: Թուրքերը արդեն հասել էին Կիչան, Սրխավանդ: Պատրաստվում էինք տասը օրից այդ երկու գյուղերը ետ վերցնել: Թշնամու զորքերին այդ մարտում լավ ջարդ տվեցինք: Մեր ուղղաթիռը իջավ այդտեղ: Մի շատ լավ ընկեր ունեի՝ Լյովան, որին Դոնալդ էինք ասում, նա էլ էր ուղղաթիռում: Ասաց. «Տղանե՛ր, տեսեք, թե հիմա ինչ ենք անում թուրքերին»: Այն պահին, երբ ուղղաթիռը վերեւում էր, խփում են, ուղղաթիռն ընկնում է, տղաները զոհվում են:

Հինգ օրից Սեյրան Օհանյանի հրամանատարությամբ գրավում ենք

Կիչանն ու Սրխավանդը ու շարժվում դեպի Չլդրան: Այդ մարտում Սեյրան Օհանյանը ոտքից վիրավորվում է:

Մարտունիում ջոկատներ կային, որ Ավոյին չէին ենթարկվում: Դրանից խնդիրներ էին առաջացել: Ասում էին, թե Մարտիկն է, Սամվելը, որին Ցավ էին ասում, եւ այլն: Ես՝ որպես պարետ, պատասխանատու էի կարգապահության համար: Մի «ԲՄՊ»-ով ու բոլոր վաշտերից հավաքած հարյուր զինվորով գնում եմ Մարտունի: Դիմակներով մտանք զորանոց, տղաներից զենքերը հավաքեցինք: Կռիվ են տալիս, թե՝ ի՞նչ եք Ստեփանակերտից եկել, Մարտունին գրավում, գնացեք Ֆիզուլին գրավեք: Միմյանց ոչ մի կերպ չէինք հասկանում: Վեճը այնքան թեժացավ, որ քիչ էր մնում սպանեինք իրար: Նրանք դիրքերից տանկը դուրս բերին: Մեզ մոտ էլ «ԲՄՊ» էր: Հրամանատարը Սասուն Աղաջանյանն էր: Երկրորդ վաշտի տղաներից կային այնտեղ՝ Վարուժը, Միհերը: Նրանց ասացի զրահամեքենան թաքցնեն, որովհետեւ իսկապես կարող էին խփել ու մեծ վնաս հասցնել: Համոզվելով, որ այդպես հնարավոր չէ շարունակել, փորձեցի հաշտվել՝ բացատրելով, որ պարտավոր են հրամաններին ենթարկվել: Ասացին. «Լավ, զենքերը հանձնում ենք, ու այլեւս կռվին չենք մասնակցելու»: Մոնթեի հետ էլ խոսեցի: Նա ուզում էր այդ տղաներին ցրել տարբեր ջոկատներում, նրանք էլ չէին համաձայնվում: Տասնհինգ օր նրանց պահեցինք պարետային զորամասում: Մարտունիում կրքերը հագիվ մի քիչ հանդարտվել էին, երբ Հադրութում լարվածություն, բախում սկսվեց Մանվել Գրիգորյանի ու Աղաբեկյան Արթուրի միջեւ: Սերժ Սարգսյանը զանգեց, ասաց, որ անմիջապես գնամ այնտեղ եւ Արթուրին իր անունից բերեմ: Նախ գնացի Մանվելի մոտ, ասացի, թե ինչու եմ եկել: Պատասխանեց, որ իրենք բոլոր տարաձայնությունները հարթել են, այլեւս ոչ մի խնդիր չունեն:

1993 թվականին ինձ նշանակում են պարետային վաշտի հրամանատար, մի քանի ամսից՝ շտաբային վաշտի հրամանատար: Բայց այն իմ բնույթին համապատասխան գործ չէր. ես կռվող էի, շտաբում ու՞մ պաշտպանեի: Տեղափոխվում եմ Ցոր՝ Կարապետյան Սամվելի մոտ: Ինձ նշանակում էին շինարարական տրեստի հրամանատար: Չհամաձայնվեցի: Մինչեւ պատերազմն էի ես այդ գործով զբաղվում, պատերազմի ժամանակ չէի ուզում: Ֆագոտային՝ հակատանկային մարտկոց կազմավորվեց, ես նշանակվեցի հրամանատարի տեղակալ: Հորադիզում պարետային վաշտ կար: Գիշերը զանգեցին, որ ինչքան մեքենաներ, ուժեր ունենք՝ վերցնենք, շտապենք այնտեղ: Լուսադեմին հասանք, արդեն մարդ չկար, Հորադիզը վերցրել էին: Կարապետյան Սամվելը գնդում էր: Համարյա մեկ ամիս մնացի այնտեղ: Երբ վերադարձանք Ցոր, լսեցինք, որ թուրքերը Հորադիզի կայարանը գրավել են, մերոնք նահանջում են, արդեն հասել են Ֆիզուլի: Գիշերը Ցորի

գնդով՝ շուրջ հինգ հարյուր հոգով, հասնում ենք Ֆիզուլի եւ մարտի բռնվում: Ղափանի, Գորիսի ջոկատներն էին այնտեղ, Երեւանի պետավտոտեսչության աշխատակիցներից էին եկել: Տեսանք, որ բոլորը փախչում են, վախեցած են շատ՝ թե թուրքերը գալիս են: Ցոթանասուներորդ գումարտակն էր մեզ մոտենում: Տասնհինգ օրվա մարտերից հետո հակառակորդի ուժերը դուրս հանեցինք այդտեղից: Հորադիզի կայարանում նրանք էին, բարձունքի վրա տեղակայված դիրքերում՝ մենք: Գորիսի, Ղափանի ջոկատները մեզ փոխարինեցին, մենք վերադարձանք Ցոր: Հետո եկանք Մոխրաթաղ եւ պատրաստվեցինք հարձակվել Մատաղիսի վրա: Մոխրաթաղի ձախ կողմում Գրիգորյան Մանվելի ջոկատն էր, վերեւում՝ Չալյան Սերգեյի: Նրանք էլ միմյանց հետ էին բախումների մեջ: Մանվելը զանգեց Օգանովսկուն եւ խնդրեց նրա օգնությունը: Գնացինք, երկու կողմերի հետ էլ զրուցեցինք, համոզեցինք, որ միասին պետք է թշնամու դեմ կռվեն, ոչ թե՝ միմյանց: Խնդիրը հարթեցինք ու շարժվեցինք առաջ՝ դեպի Մղոզի բարձունքները: Մղոզի սարը մի անգամ վերցրեցինք, նորից ետ խլեցին: Երկրորդ անգամ վերցնելուց հետո հակառակորդին ետ քշեցինք: Բարձունքը մնաց մեր ձեռքին, նրանք հայտնվեցին Մատաղիսի բաց տարածությունում:

1994 թ. ապրիլին դիրքավորվեցինք Շորբուլաղում: Մեր դիրքերը Սումա, Գյուլիջա, Իշըլար, Նաբելար գյուղերի վերեւով էին ձգվում: Այդտեղ մենք ահագին զոհեր տվեցինք, ութ հարյուր հոգուց մնացել էին երկու հարյուրը, որոնցից շատերն էլ վիրավոր էին: Որ մտանք Գյուլիջա, թուրքերը տանկերով փախչում էին: Տղաներից Սլավիկ Դանիելյանը վազելով գնաց դեպի տանկը, նռնակը գցեց մեջը, տանկը վերցրեց: Տանկերից միայն մեկը փախավ, մյուսները վերցրինք: Ռացիայով կապվեցի Սլավիկի՝ այժմյան Ցորի գնդի հրամանատարի հետ: Ասաց, որ ինքը այդ պահին Ցորի օպերատիվ բաժնում է, իսկ ես վերցնեմ առաջին գումարտակը եւ շարժվեմ դեպի ձախ՝ կտրելու այդ կողմով փախչող թուրքերի ճանապարհը: Ես, Ցորի օպերատիվ բաժնի հրամանատար Լյովան ու մեր վարորդը՝ Կամոն, «ՈՒԱԶ» մեքենայով էինք: Լյովային ասում եմ, որ մեքենան թաքցնի, հանկարծ թշնամու տանկը չխփի: Ես հանում եմ բուշլատս, ավտոմատը վերցնում ու մեքենայից իջնում: Նրանք մի շրջադարձ են կատարում: Թուրքերը այնտեղ սպասում էին: Տղաները կարծում են, թե հայ են: Նրանց հայերեն հարցնում են, թե առաջին գումարտակը գալի՞ս է: Նրանք թե՝ հա գալիս են, ու երկուսին էլ սպանում են, մեքենան վերցնում, հեռանում: Իմ փաստաթղթերը մեքենայի մեջ էին: Դրանից եզրակացնում են, որ երկու սպայի են սպանել, որոնցից մեկը ավագ լեյտենանտ Մինասյան Նելսոնն է: Ռացիայով հաղորդում են, եւ մենք էլ ենք լսում: Առաջին գումարտակը

վերցնում, գալիս ենք, տեսնում ենք՝ թուրքերը այդտեղ կանգնած են: Աբոն, որին Դուշման էինք ասում (Ցորի գնդում էր ծառայում, Բաքվից էր), Սուրիկը եւ ես առաջանում ենք, գումարտակն էլ՝ մեր հետեւից: Այդ նույն թուրքերը դուրս են գալիս մեր դիմաց՝ չիմանալով, թե ովքեր ենք՝ հայ ենք, թե թուրք: Մութը խանգարում էր լավ տեսնել: Որ սկսեցին թուրքերեն խոսել, Աբոն ավտոմատը հանեց ու կրակեց, նրանք էլ՝ մեզ վրա: Մեզանից զոհեր չեղան, նրանց կողմից՝ չգիտեմ: Թաքնվեցինք գյուղի տների արանքում, մի երկու նռնակ նետեցինք նրանց ուղղությամբ: Քիչ հետո մեր տանկը մոտեցավ, նրա հետեւից գնալով՝ մտանք մյուս՝ Իշըլար գյուղը: Կռիվը, փոխադարձ կրակոցները շարունակվեցին ամբողջ գիշեր: Նրանց «Գրադից» Արմենը, Արոն ու երկու հոգի էլ զոհվեցին: Լուսադեմին ձեռքիս ռացիայով լսում եմ մեր տղաների խոսակցությունը, որ իբր ինձ գերի են վերցրել: Վաչոյի ձայնն էր, ասում էր. «Շուտ կապնվենք, քանի թուրք պետք է՝ կտանք, թե չէ Նելսոնին կսպանեն»: Ուզում էի պատասխանել նրանց, թարսի նման իմ ռացիան չէր աշխատում: Ժամը տասնմեկին Ցորի տղաներից մեկը գալիս է այդտեղ, ինձ տեսնելով՝ զարմանում.

- Ողջ ե՞ս, բա Կամոն, Լյովան...

- Նրանք մեքենայով են:

- Մեքենան Ֆանտոմաս անունով մի թուրք է քշում Թազաքյանդում, քեզ էլ էինք մահացած համարում:

Նստում եմ նրա մեքենան, ու գնում ենք: Ճանապարհին վիրավոր ընկած էր մեր կապավոր Սամվելը: Մեջքը՝ թոքերի հատվածում խփած, շունչը մեջքով էր առնում: Բերեցինք Աղդամի հոսպիտալ: Հույս չունեինք, թե կապրի, բայց, փառք Աստծո, ողջ մնաց: Եկանք Շորբուլաղի շտաբ: Բժիշկ Մարութը (Վալերի Մարության - խմբ.), ինձ տեսնելով, ասաց. «Վիրահատության ժամանակ ձեռքերս թուլացել էին, երբ լսեցի քո մահվան լուրը»: Մի տասն անգամ էլ Ստեփանակերտ՝ մեր տուն էին «պատվիրակություն» ուղարկել իմանալու՝ ինչ նորություններ կան ինձանից: Կինս հետո պատմեց, որ գալիս էին, նստում, թեյ էին խմում, տանը ոչ շաքար էր մնացել, ոչ մուրաբա, էլ չգիտեր՝ ինչով հյուրասիրեր նրանց: Մի քանի օրից Ասկերանի ջոկատը, Վիտոյի գունդը, թշնամու զորքերից տասնհինգ հոգու Շորբուլաղի մոտ շրջափակման մեջ են գցում, բոլորին սպանում: Այդտեղ էլ թաղում են նրանց: Թուրքերի հետ բանակցություններ են սկսում, որ նրանց դիակները փոխանակեն Կամոյի ու Լյովայի դիակների հետ: Համաձայնության են գալիս: Ռաֆոն մի քանի հոգու հետ գնում է նրանց մարմինները բերելու: Բայց դիակները վառել էին: Ատամներից ճանաչեցինք, որ մեր տղաներն են:

Մինչեւ 1994 թվականը ծառայում եմ, գալիս տուն: Ընտանիքս մեծ

է, հինգ երեխա ունեմ: Որոշեցի այլեւս հեռու մնալ պատերազմից ու անցնել քաղաքացիական աշխատանքի:

Բ. - «Քսանվեցի» դեպքերից ի՞նչ կարող եք հիշել:

Ն.Մ. - Թուրքերը միշտ գալիս, Ստեփանակերտի վերեւից կրակում էին: Այդտեղ էին Հովհաննիսյան Ցուրան, Դանիելյան Սլավիկը, քաղաքի երիտասարդ տղաներից շատերը: Գնում էին դիրքերը, Խայփալու, թուրքերն այդ կողմից էին գալիս: Պատահում էր, որ մերոնք մինչեւ տասնհինգ թուրք էին սպանում մի օրում: Այդ դիրքը Շուշին էլ էր պահում: Երբեմն այդտեղից էին կրակում, որ շուշեցիները չիջնեն ու ներքեւից կրակեն: «Քսանվեցը» անտանելի տեղ էր՝ քաղաքից բարձր, ձյուն, ցուրտ, ճանապարհ չկար, ոտքով մինչեւ հասնում էինք այնտեղ, հոգիներս դուրս էր գալիս: Բայց, ապրեն մեր տղաները: Մի քանի օր էլ մարտերին ես եմ մասնակցել: Ես շատ զբաղված էի, շատ հարցերի համար էի պատասխանատու: Հաճախ էին Սերժ Սարգսյանը, Ֆելիքս Գզոոյանը, Սամվել Բաբայանը ինձ դիմում: Իմ՝ երրորդ վաշտում, Արաբոյի, թալինցի Ափոյի ջոկատներն էին: Խելացի, լավ կռվող տղաներ էին: Երբ պատրաստվում էինք մասնակցել Խոջալուի մարտին, Ափոն վախենում, դողում էր իր տղաների կյանքի համար: Հանգստացրինք, թե ոչ մի բան էլ չի լինի նրանց: Եվ իսկապես, նրա ջոկատում քսանչորս հոգուց ոչ մեկն էլ չզոհվեց: Ափոն էլ շատ լավ կռվեց Խոջալուում:

Պատմում է Վյաչեսլավ Դանիելյանը
22.10. 2005 թ., Ստեփանակերտ

Վ.Դ. - Ես Ուկրաինայից Ղարաբաղ եկա 1992 թվականի ապրիլի 25-ին: Ծնվել եմ Բաքվում, բայց ծնողներս ղարաբաղցի են՝ Ասկերանի շրջանից. հայրս Մադաթաշենից է, մայրս Ղշլաղից: Հեռուստացույցով ահընդհատ հետեւում էի լուրերին, թե այստեղ ինչ է կատարվում: Երբ հունվարին լսեցի, որ գնդակոծություն է սկսվել, տասն օր արձակուրդ վերցրի՝ Ղարաբաղ գալու համար: Ինձ թույլ չտվեցին Երեւան գալ: Այստեղ Սեյրան Օհանյանը ինձ ծանոթացրեց Կոմանդոսի՝ Արկադի Տեր-Թադեւոսյանի հետ: Ես կադրային սպա էի, կապիտանի կոչում ունեի, ավարտել եմ Բաքվի զինվորական ուսումնարանը, ուստի Կոմանդոսն ինձ գումարտակի հրամանատար նշանակեց: Հրաման տրվեց բարձրանալ «Քսանվեցի» դիրքերը: Նախ ծանոթացա Յուրա Հովհաննիսյանի հետ: Նրա եւ Սեյրան Մուշեղիչի հետ շրջեցինք դիրքերում: Ինձ ներկայացրին իրավիճակը, անելիքները: Գիշերը ես եւ Յուրան բավական երկար զրուցեցինք: Եվ ես հասկացա, թե այդ տեղը, դիրքը եւ դրա պաշտպանությունը որքան կարեւոր են Ղարաբաղի համար: Սկզբնական շրջանում մեծ դժվարությունների առաջ էի կանգնած: Անծանոթ էի մարդկանց, տեղանքին: Յուրային ասացի, որ համարի, թե որպես սովորական զինվոր եմ եկել, կօգնեմ՝ ինչով կարող եմ:

Բ. - Կարո՞ղ եք նկարագրել նրա արտաքինը:

Վ.Դ. - Իմ հասակին էր, մազերն արդեն սպիտակում էին: Ֆիզիկայի թե մաթեմատիկայի ուսուցիչ էր: Հասուն տղամարդ էր, գիտեր՝ ուր է գնում, ինչի համար: Նրա տղան հիմա ամուսնացել է, որդի ունի՝ անունը Յուրա, աղջիկը շուտով կամուսնանա:

«Քսանվեցի» ճակատի դեպքերի ժամանակ մինչեւ վերջ միասին կռվեցինք: Աստիճանաբար բոլորի հետ ծանոթացա: Մի անգամ գիշերը բարձրացանք դիրքերը ստուգելու: Մթության մեջ տղաներն ինձ չէին նկատել, սկսեցին Յուրայի հետ խոսել՝ այդ ում են բերել, ինչ գիտեն, թե ով է, միգուցե Ռուսաստանից լրտես են ուղարկել: Ոչ ես, ոչ էլ

Յուրան ձայն չէինք հանում, որ մինչեւ վերջ լսեինք՝ ինչ են ասում: Ղեժգոհեցին, վերջացրին, ասացի. «Ժամանակը ցույց կտա, թե ով ով է»: Մի քանի օր շրջեցինք դիրքերում, մանրամասն ծանոթացա ամեն ինչին: Կրկժանից վերեւ գտնվող «Տասներկուերորդ» դիրքը հանձնել էինք թշնամուն: Այդ դիրքը, ինչ գնով էլ լիներ, պետք է ետ վերցնեինք, հակառակ դեպքում՝ այդտեղից ամբողջությամբ կգնդակոծեին Ստեփանակերտը, ինչպես նաեւ վերեւից ամեն ինչ հստակ կտեսնեին: Դա 1992 թվականին էր՝ մինչեւ Շուշիի ազատագրումը: Գիշերը ժամը երեքին դուրս եկանք: Մեզ հետ էին Սեւանից, Հրազդանից եկած խմբերը, Ստեփանակերտի ութերորդ վաշտը: Առանց որեւէ խնդրի դիրքը ետ վերցրինք՝ տալով մեկ զոհ: Երբ լույսը բացվեց, թուրքերը հասկացան, որ դիրքը մեր ձեռքում է: Հանգիստ իջանք տեսնելու, թե աջ կողմում ինչ է կատարվում: Այդ ժամանակ տղաները ռացիայով հաղորդեցին, որ Շուշին գնդակոծվում է: Սկզբում իրավիճակը մեզ մոտ թեեւ ոչ հանգիստ, բայց նորմալ էր, առանց խուճապի: Բայց երբ վիրավորներ ու զոհեր եղան, տղաները դիրքը թողեցին, հեռացան: Նույնիսկ հեռանալու հրաման արձակեցինք: Օգտագործելով նման առիթը՝ ադրբեջանցիները բարձրացան դիրքը: Ստիպված էինք դրա հետ մեկտեղ աջ կողմի դիրքն էլ թողնել նրանց ու հեռանալ: Ետ քաշվելով՝ համարյա հասանք «Քսանվեցի» հրամանատարական կետին: Թշնամին գրեթե երկու հարյուր մետր էր մեզանից վերեւ գտնվում: Օգնության հասան Ստեփանակերտի առաջին, քիչ ուշ՝ չորրորդ վաշտերը: Առաջին վաշտի հետ պատրաստվեցինք մեր հանձնած դիրքերը ետ վերադարձնել: Փոքր խմբով՝ ես, Յուրան, Աշոտը՝ Բեկորը, մեր գումարտակի նախկին հրամանատար Ռաֆոն, դյադյա Միշան, մի երիտասարդ տղա, ձախ կողմով շարժվեցինք դեպի վերեւ, որպեսզի թուրքերից ավելի բարձր դիրք գրավեինք: Հասանք մի անտառապատ տեղ: Սաղարթ չկար, բայց տեսադաշտը լավ չէր երեւում: Այնքան էինք մոտեցել, որ անմիջապես նրանց վերեւում էինք: Երբ նկատեցին մեզ, բոլորս նստեցինք՝ բացի դյադյա Միշայից: Նա ադրբեջաներեն խոսում էր: Հարցրին.

- Դու ո՞վ ես:
- Ես թուրք եմ:
- Չի կարող պատահել, չենք հավատում:
- Իսկ ի՞նչ կա որ, իսկապես թուրք եմ:
- Իսկ հայերն ու՞ր են:
- Հայերը ա՛յ էն կողմն են...

Բայց նրա ինչ-որ բառից թե շարժումից հասկացան որ հայ է: Սկսեցին կրակել: Մենք նույնպես կրակում էինք, նույնիսկ մի նռնակ գցեցինք նրանց կողմը: Հետո ստիպված եղանք ետ քաշվել, նահանջել, քանի որ նրանք ներքեւում էին: Ձախ կողմից եւս սկսեցին կրակել:

Մենք քիչ էինք, մնալը վտանգավոր էր, համ էլ չէինք հասկանում, թե ինչ է կատարվում: Ավելի հեռու դիրքավորվեցինք, որտեղ ամբողջ գիշեր մնացինք: Գիշերը ձյուն էր գալիս: Այդտեղ էին նաեւ «Սասունցի Դավիթ» ջոկատի տղաները: Առավոտյան տեսան, որ իրենց ընկերներից մեկը՝ Մուրադը, չկա: Զոհվել էր: Սպիտակ հանդերձներ հագանք, որպեսզի ձյան ֆոնի վրա նկատելի չլինեինք, եւ գնացինք այդ տղային փնտրելու: Գտանք նրան, ձյան տակից հանեցինք, բերեցինք:

Բ. - Ի՞նչ կարող եք պատմել Աշոտ Բեկորի մասին:

Վ.Դ. - Մեր առաջին իսկ հանդիպումից ես համակրեցի նրան: Շատ քիչ էր խոսում ու ցածրաձայն: Հաճախ ձեռքի շարժումներով էր ցույց տալիս, հասկացնում իր ուզածը: Հենց սկզբից հետաքրքրություն առաջացավ նրա հանդեպ: Այդ մարտի ժամանակ, որ պատմեցի, վիրավորվել էր, բեկորը ուսին էր կպել: Երբ նահանջում էինք, ասաց. «Ետ գնացեք, ես ձեզ կծածկեմ»:

Մեզ հանձնարարված էր Շուշի տանող ճանապարհը փակել, որպեսզի հակառակորդը Քյոսալարի, Ջանհասանի կողմից օգնություն ստանալու հնարավորություն չունենա: Պետք է Քյոսալարը վերցնեինք: Գրեթե ողջ գիշեր արթուն մնացինք: Առավոտյան մարտի պատրաստվեցինք այն նույն խմբով, որը պետք է «Տասներկուերորդ» դիրքը ետ վերադարձներ: Մեր ծրագիրը հաջողությամբ ավարտեցինք: Մեր հիմնական ուժը «ԲՄՊ»-ն էր:

Դրանից հետո այլեւս իմաստ չուներ «Քսանվեցը» պահել: Բոլոր խմբերը տեղափոխվեցին, հասան մինչեւ Լիսագորսկ, դուրս եկան ադրբեջանական մի գյուղ: Այնտեղ դեռեւս թուրքեր էին մնացել: Հեռադիտակով նայելիս պարզ երեւում էր նրանց զորասյունը: Այդտեղից էլ կարելի էր հրետանու կրակոցները ուղղորդել: Մի քանի արկ գցեցինք Լիսագորսկի վրա, եւ ընդամենը քսան րոպե հետո այդ զորասյունը այլեւս այնտեղ չէր: Լիսոագորսկում, կարելի է ասել, նրանք ընդհանրապես դիմադրություն ցույց չտվեցին, եւ մեր տղաները առանց մարտի առավոտյան մտան այնտեղ: Նույն հաջողությամբ շարժվեցինք առաջ: Լաչինում ադրբեջանցիները միայն առաջին օրը դիմադրեցին, իսկ գիշերը թողեցին այն, հեռացան: Ես գերի վերցրած ադրբեջանցուն հարցրի, թե քանի զինվոր ունեին այնտեղ: Պարզվեց՝ մինչեւ երեք հարյուր հիսուն զինվոր կար: Դրանից հետո, երբ Լաչինի միջանցքը արդեն բաց էր, ես Կոմանդոսին խնդրեցի ինձ թույլ տալ վերադառնալ Ուկրաինա: Ես դեռեւս ծառայության մեջ էի գտնվում ոչ այն է խորհրդային, ոչ էլ զուտ ուկրաինական բանակում: Այնտեղ ընկերներիս էի թողել, հրամանատարներին, ուստի՝ ամեն ինչ ավելի ազնիվ, մարդկային պետք է լիներ: Ես անգամ չէի պատկերացնում, թե դեռ ինչ կարող է պատահել Ղարաբաղին, թվում էր, թե այդքանով էլ ամեն ինչ կավարտվի: Երբ

հուլիսի վերջին վերադարձա այստեղ, Մարտակերտը արդեն ազատագրված էր: Շտաբը Չլդրանում էր գտնվում: Մի քանի գյուղ արդեն վերցրել էին, մնացել էր Աղդաբանի բարձունքը: Դրանից հետո Ցորի մարտերն էին: Ինձ այնտեղ շտաբի օպերացիոն բաժանմունքի պետ նշանակեցին:

Բ. - Երբ եկաք, դեռ բանակ չկար, ջոկատներ էին, զինվորական կրթություն չունեցող մարդիկ էին դառնում հրամանատարներ, բարձր պաշտոններ զբաղեցնում: Դուք՝ որպես կադրային սպա, ինչպե՞ս էիք վերաբերվում դրան:

Վ.Դ. - Նախ ինձ համար էր դժվար: Այս պատերազմում իմ տեսածը, սովորածը ոչ մի կապ չունեն այն տեսական գիտելիքների հետ, որոնք ես ձեռք եմ բերել զինվորական կրթություն ստանալիս: Պատերազմը լրիվ այլ բան է: Կռվի ժամանակ ես շատ բան սովորեցի նույնիսկ այն մարդկանցից, ովքեր կրթություն չունեին, զինվորական չէին, այդ թվում՝ մեր գնդի հրամանատարից: Ռազմական այն տակտիկան, որին մինչ այդ տիրապետել եմ, ենթադրում էր՝ շրջապատել, ոչնչացնել... Իսկ դրա արդյունքում շատ զինվորներ ենք կորցնում: Մեր դեպքում դա պարզապես չէինք կարող թույլ տալ, առանց այն էլ այդքան քիչ էինք: Կարգապահության հարցում էին թերություններ, խախտումներ լինում, դրա վրա մենք այնքան էլ ուշադրություն չէինք դարձնում: Այդ հարցով հիմնականում վաշտի, գումարտակի հրամանատարներն էին զբաղվում: Տղաները գրեթե բոլորը կամավոր զենքը վերցրել եկել էին այդտեղ: Նրանց սովորեցնելու ժամանակ չկար, ամեն ինչ փորձով էր ձեռք բերվում: Ասենք, մարտերի արանքում ժամանակ էր լինում, մեկնումեկը ինչ-որ բան էր պատմում, բացատրում, ինֆորմացիայի փոխանակում էր լինում: Սովորեցնելը դժվար էր, դրա համար ուսումնական բազա էր անհրաժեշտ: Երբ առաջ էին շարժվում, նրանց հետ սակրավոր էինք ուղարկում, որը շատ լավ գիտեր՝ ինչպես առաջ գնալ: Իսկ տղաները նրանից սովորում էին: Գնդի հրամանատարն էր ուսումնական աշխատանքներ անցկացնում, եթե պատահում էր, որ մի քանի օր հերթական մարտից առաջ ազատ էին լինում, կամ այն ժամանակ, երբ գրավում էինք ինչ-որ բարձունք եւ մի երկու օր այնտեղ ամրանում պաշտպանության համար: Հատուկ մասնագիտացում ունեցողներն էին սովորեցնում: Հրամանատարներն էլ էին կռվի մեջ շատ բան սովորում: Եվ դժվար է ասել՝ եթե կադրային սպաները ղեկավարեին մարտը, կորուստներն ավելի քիչ կլինեին: Թեեւ, ինչ խոսք, զինվորական կրթությունը ինձ օգնում էր կողմնորոշվել՝ ինչը որտեղ տեղադրել, որ կողմով ընթանալ, ում ընկեր ընտրել եւ այլն: Այն ժամանակ էլ էինք կազմակերպում, հանձնարարությունները բաշխում, ճշտում, իրավիճակին գնահատական տալիս, հետախուզությունը կազմակերպում,

բայց շատ ավելի փոքր մասշտաբներով:

Բ. - Պատմեք ձեր գնդի, նրա գործողությունների մասին:

Վ.Դ. - Կպատմեմ Չլդրանի, Դրմբոնի, Մեհմանայի ազատագրական գործողությունների մասին: Մեր գնդից բացի, գործողություններին մասնակցում էին Մարտակերտի գունդը, որը դեռեւս լրիվ չէր կազմավորված, եւ յոթանասունյոթերորդ գումարտակը, որն աջ թեւում էր տեղակայված: Այդ օրն առաջին անգամ մեզ հաջողվեց հսկայական տարածք ազատագրել՝ Չլդրանից մինչեւ Դրմբոն՝ ներառյալ Արջաձորը, մինչեւ քսանհինգ կիլոմետր: Հաջորդ օրը մտանք Դրմբոն գյուղը, այնտեղ գիշերեցինք, իսկ առավոտյան կազմակերպեցինք պաշտպանությունը Մեհմանա - Չլդրան ճանապարհների խաչմերուկում: Մեհմանայի բարձունքը մի պահ մենք հանձնեցինք, սակայն երեկոյան ետ գրավեցինք: Թշնամին մեծ ուշադրություն էր դարձնում այդ տեղանքին, որպեսզի գիշերային հարձակում սկսի: Ամբողջ գիշեր մարտ էր գնում: Մենք շատ կորուստներ ունեցանք: Սակայն հակառակորդը ոչնչի չհասավ: Հետո մենք ազատագրեցինք Ալազանը, Մեծ Շենն ու Մաղավուզը:

Բ. - Ե՞րբ էր դա:

Վ.Դ. - 1993-ի փետրվարի սկզբից մինչեւ մարտ: Հիշում եմ, որ մարտի 19-ին այնտեղ էինք: Այս գործողության վերջում մենք պետք է վերցնեինք հեռուստաաշտարակը: Երկու անգամ գրավեցինք, սակայն ետ վերադարձրինք:

Բ. - Ինչու՞ չստացվեց:

Վ.Դ. - Գործողությունները համատեղ էին, մի քանի օր հետեւում էինք, հետախուզում: Սամվել Կարապետյանն ուզում էր ընթացքից գրավել հեռուստաաշտարակի բարձունքը, սակայն զինվորները պատասխանեցին, որ Մեծ Շենի, Մաղավուզի մարտերից հետո հոգնել են, դրա համար դժվար կլիներ գրավել այն: Բացի այդ, թուրքերը ավելի նպաստավոր դիրքերում էին: Քելբաջարում նոր հարձակում էր սկսվել, որին մենք էլ էինք մասնակցում: Հենց քելբաջարյան մարտերից մեկում մեր գնդի հրամանատար Սամվել Կարապետյանը վիրավորվեց:

Բ. - Պուշկին յալը վերցրի՞ք:

Վ.Դ. - Վերջում դա էլ նվաճվեց: Այն վերցրին Ավոն ու Մարտունու գնդի տղաները: Այնտեղ էր նաեւ հայկական առաջին բրիգադը: Սակայն հետո մենք ստիպված էինք Պուշկին յալից նահանջել: 1993-ի հունիսին՝ Գալաչիլարը ապրիլին գրավելուց հետո եւ Աղդամը հուլիսին գրավելուց առաջ, Շուշիի գնդի հետ երկու բարձունք գրավեցինք, որոնք գտնվում են Պուշկին յալի եւ Փափրավանդ գյուղի միջեւ: Հետո գրավեցինք Բոյախմեդլին ու եւս մի բարձունք: Շուշիի գունդը գործում էր մեր աջ թեւում: Մենք երկու բարձունք գրավեցինք, հետո բարձրացանք Պուշկին յալ: Ռազմական տեսանկյունից հետաքրքիր էր Բոյախմեդլիի մոտի բարձունքների գրավման գործողությունը: Հրամանատարի որոշմամբ՝ մենք նախ ճեղքեցինք երկու բարձունքների միջեւ միջանցքը, հետո շրջանցելով հետեւից՝ առանց լուրջ դիմադրության գրավեցինք այն: Այդպես հետեւից բարձրացանք Պուշկին յալ, այն ազատեցինք թշնամուց: Գիշերն անձրեւ տեղաց: Հաջորդ օրը տղաները ցանկանում էին Մարտակերտ իջնել, սակայն նրանց թույլ չտվեցին: Գիշերը ռադիոկապով հայտնեցին, որ ժամանակավոր հրադադար է հայտարարվել: Բայց տղաները ցած իջան տեսնելու Մարտակերտը, որ դեռեւս թշնամու ձեռքին էր:

Աղդամի գործողությունը եւս մեր գնդի ձեռքբերումներից է: Մենք Աղդամը շրջապատել էինք մի քանի ուղղություններով: Գործողությունն այնպես էր մշակված, որ թուրքերը թողնեն քաղաքն ու հեռանան: Մենք մտանք Մարտունու կողմից, որտեղ Բաղմանլար եւ Սայբալի գյուղերն էին: Մարտունեցիները աջ կողմում էին, որտեղ օդակայանն էր: Ասկերանի գունդը դուրս եկավ Շորբուլաղի կողմից, որտեղ Ջիմի գյուղն էր: Թուրքերի համար մեկ ուղղություն էր թողնվել, որտեղով էլ նրանք հեռացան: Նրանք վախենում էին լրիվ շրջապատումից, ուստի հարմար գտան արագ թողնել Աղդամը: Քաղաքում հարմար չէր պաշտպանվելու համար: Երբ մենք Աղդամ մտանք, Աղջաբադ տանող մայրուղու վրա ոչ մի պահակակետ չունեին: Դա էր պատճառը, որ երեք օր շարունակ քաղաքացիական մեքենաներ էին գալիս նրանց կողմից ու գերի ընկնում:

Հիմա՝ Հորադիզի մասին: Երեկոյան ստացանք գլխավոր հրամանատարի հրամանը, ու գիշերը գունդը շարժվեց դեպի Հորադիզ: Արդեն Ժդանով տանող ճանապարհին էինք՝ Արաքս գետի մոտ: Մենք մտանք Շուքուրբեյլի բնակավայրը, պիտի խփեինք Հորադիզի ձախ կողմից ու մտնեինք: Մարտունու գունդը իր տանկերով պետք է բարձունքներց իջներ ու մտներ Հորադիզ: Հենց նրանք էլ առաջինը մտան: Հետո հայտնվեցինք մենք: Հորադիզից երկու գնացք դուրս եկան ու հեռացան:

Ես կուզենայի նշել մեր հերոս տղաների անունները. Սերոն, որն այժմ գնդի հրամանատարի տեղակալն է, Վիգենը, Սամվել Հարությունյանը, Արարատ Ղազարյանը, Ալիկ Գասպարյանը, Վահան Ղարիբյանը, հետախույզ Անդրանիկը... Ախր որի՞ն առանձնացնեմ:

1992 թվականին Հարությունագոմերի կողմերում տարբեր խմբեր կային: Մի խումբը խամ էր ու պատերազմից գաղափար չուներ, չնայած հայրենասեր տղաներ էին: Սամվել Հարությունյանի վաշտը եկավ փոխարինելու նրանց: Ես Սամվելին բացատրեցի, թե ոնց էին թուրքերը գրոհել, հետ էին քշել նրանց, մի տանկ այրել: Երեկոյան մենք մար-

տի բռնվեցինք: Մինչ այդ Սամվելը մանրամասն հետաքրքրվեց իրավիճակով: Մենք միասին պատրաստվեցինք, մշակեցինք մարտի մանրամասները: Ցավոք, այդ մարտում նա զոհվեց: Առավոտյան թուրքի տանկը պայթեց ականի վրա: Դրանից հետո մեր տղաները հաջողությամբ ետ էին մղում թշնամու՝ իրար հաջորդող գրոհները: Նրանց հրետանին եւս չէր լռում: Այդ խումբը կանգնեցրեց թշնամու առաջխաղացումը:

Բ. - Ինչպե՞ս նրանց հաջողվեց:

Վ.Դ. - Խումբն իսկական, կուռ կոլեկտիվ էր, որտեղ պատրաստ էին աջակցել, օգնել մեկմեկու: Բացի այդ, նրանց սովորեցրել էին կրակել: Հրամանատարը ունակ էր ճիշտ հրամաններ արձակել, ու հարգում, լսում էին նրան: Եթե հրամանատարին չլսեն, առաջին իսկ արկի պայթյունից բոլորը կփախչեն, իսկ հրամանատարին ենթարկվելու դեպքում ոչ ոք չի փախչի, կկատարի հանձնարարությունը, եւ արդյունքում կհաղթեն թշնամուն: Տղաները կարգապահ էին: Մտածում էին՝ ինչպես կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, քանի որ երկու կողմից արդեն սեղմվում էր օղակը: Շատ վատ ժամանակներ էին: Շատ ջոկատներ հրաժարվում էին Մարտակերտ գնալ, մի մասն էլ առանց գիտակցելու գնում էր ու այն թողնում հեռանում: Սակայն ամիսներ շարունակ այստեղ էին առաջին, չորրորդ, վեցերորդ վաշտերը: Դա ամենամարտական ռազմաճակատն էր: Մեր հաջողության գրավականը Մարտակերտի ուղղությամբ գնդի ստեղծումն էր՝ Սամվել Կարապետյանի հրամանատարությամբ, որին հարգում էին ու լսում: Գունդն ուներ շտաբ ու երեք գումարտակ: Գունդն աստիճանաբար կատարելագործվում էր ու մարտերում հաջողություններ ձեռք բերում: Կուզենայի առանձնացնել գնդի հրետանավորներին, հետախույզներին ու սակրավորներին: Հրետանու հրամանատար Լեւոն Մնացականյանը աչքի ընկավ հատկապես Քարվաճառում: Հետախույզների վաշտը մի բարձունք էր գրավել ու հրետանավորների օգնության կարիքն ուներ: Լեվոնն իր տղաների հետ հարյուր քսան միլիմետրանոց ականանետներով այնքան էր մոտեցել հակառակորդի դիրքերին, որ նույնիսկ վտանգավոր էր: Սակայն հրետանավորները հրաշալի կատարեցին առաջադրանքը: Քարվաճառի երկրորդ գործողության ժամանակ, երբ թուրքերը խաչմերուկում էին հայտնվել, մենք հիսուն հոգով գնդի հրամանատարի հետ այնտեղ էինք: Ցուրտ էր: Մենք պաշտպանում էինք բարձունքից ոչ հեռու հեռուստաաշտարակի դիրքերը: Պետք է օգնեինք ետ վերցնել Օմարի բարձունքը: Մենք պետք է գրավեինք ամենաաջ կողմը: Մեզ հետ էին չորրորդ պաշտպանականը, յոթանասունյոթերորդ գումարտակը: Ցավոք, Պետոն զոհվեց ականի պայթյունից: Հենց աջ բարձունքը վերցրինք, ձախինը հանձնվեց, ու մենք բարձրացանք:

Տղաները գիշերը մնացին սառնամանիքին: Առավոտյան պետք է շարժվեինք Նեաշաղ եւ Օմար տանող ճանապարհով: Երբ մեր հետախուզական վաշտը դուրս եկավ ճանապարհ, դիրքավորվեց վերեւում ու ամբողջությամբ հսկում էր տարածքը, թուրքերի խմբավորումը շրջապատման մեջ հայտնվեց: Հետո մենք բարձրացանք, ու ամեն ինչ ավելի հեշտ էր: Ամբողջ գործողությունը երկու օր տեւեց:

Պատմում են Գրիգոր Միրզոյանը (Գիրո), Արթուր Ավանեսյանն ու Սամվել Պողոսյանը:
21.10.2005 թ., Մարտակերտ

Գ. Միրզոյան - Թուրքերի դիրքերը գտնվում էին Մարտակերտ քաղաքի մոտակայքում, իսկ մենք դիրքավորվել էինք Մոխրաթաղ գյուղի մոտ: Քանի որ ես Աղաբեկալինջ գյուղի բնակիչ եմ, տեղանքը լավ գիտեի: Մեր գյուղը գտնվում է Մոխրաթաղ – Մարտակերտ բնակավայրերի միջեւ: Ինձ հանձնարարվել էր ուսումնասիրել հակառակորդի դիրքերը եւ թիկունքում գտնվող ուժերը: Ես Մեծ Շենից մինչեւ Կուսապատ գյուղն ընկած հատվածի հրամանատարն էի: Ինձ հետ էին Սասունը, որ հետագայում զոհվեց Քարվաճառի համար մարտերում, Գագիկը եւ Արայիկ Ղուկասյանը, որն ավարտել էր Կրասնոդարի իրավաբանական ինստիտուտը, վերադարձել՝ մասնակցելու հայրենիքի պաշտպանությանը: Եկավ ու նույն օրը խնդրեց, որ իրեն էլ ընդգրկեմ հետախուզական խմբի մեջ: Իմ մանկության ընկերն էր, լավ գիտեի նրան, սպորտսմեն էր, ֆիզիկական լավ տվյալներ ուներ: Հասանք Աղաբեկալինջ գյուղը: Խմբի մի մասին թողեցի գյուղում, ինձ հետ վերցրի միայն Արայիկ Ղուկասյանին: Ադրբեջանցիները իրենց լավ էին զգում ու տիրություն էին անում չեզոք գոտում: Անցանք Խաչին յալի

հետեւը, ամենը նշեցինք քարտեզի վրա: Գիշերը մնացինք այդտեղ: Առավոտյան կապվեցինք հրամանատարության հետ, հաղորդեցինք տեղանքի տվյալները՝ որ կարելի է սկսել հրետակոծումը: Թուրքերի համար անսպասելի սկսվեց հրետակոծումը, ու միայն «Ալլահ, Ալլահ» էինք լսում: Թշնամին գիտեր, որ իրենց թիկունքում հայեր կան, որոնք հաղորդում, ուղղորդում են հրետանու հարվածները: Նրանք հատուկ խմբեր ուղարկեցին, սակայն մեր մանկության վայրերը մենք ավելի լավ գիտեինք, եւ նրանց որոնումները ապարդյուն էին:

Հետո մենք շատ տհաճ տեսարանների հանդիպեցինք: Երբ մերոնք անսպասելիորեն որոշել էին Մարտակերտը հանձնել հակառակորդին, շատ մարդիկ էին մնացել, որոնց թուրքերը անխնա ու դաժանորեն կոտորել էին: Դիակների մեջ ծերունիներ էին, պառավ կանայք: Արայիկի հետ իջանք Մարտակերտ, բահեր գտանք, ամբողջ գիշեր փոսեր փորեցինք ու թաղեցինք դիակները: Իսկ թշնամին մեծ կորուստներ կրեց, ողջ տեխնիկան, շարասյունը ոչնչացավ:

Հաջորդը Աղդաբանի գործողությունն էր: Վլադիմիրի ջոկատը գրոհային ջոկատ էր: Լեոնիդ Ազգալդյանը, որը բարձր ինտելեկտի տեր մարդ էր, մեծ տեղ էր հատկացնում հետախուզությանը: Մեր խումբը կազմված էր հինգ հոգուց: Աղդաբանի գրավման գործում ամենալուրջ դերը հետախուզությանն էր պատկանում: Բուն գրոհը մեկ ժամ տեւեց: Երկու ուղղութամբ էր գրոհը: Հիմնական հարվածը պետք է տար Վլադիմիրի խմբավորումը Չափար - Աղդաբան ուղղությամբ: Իսկ մյուս խմբավորումը Լեոնիդն էր ղեկավարում: Պետք է հարվածեինք հարավարեւմտյան կողմից: Ծանր ուսապարկերը շալակած՝ շրջանցեցինք գյուղերը: Տասնհինգ կիլոմետր անցնելուց հետո Լեոնիդը դադար տվեց, բայց արգելեց կրակ վառել: Մեկ մետր խորությամբ ձյան մեջ քայլելով՝ թրջվել էին տղաները: Ասացինք՝ գնանք: Բայց Լեոնիդն ասաց, որ դեռ ժամանակ ունենք: Մեր խումբը ցրված էր: Լեոնիդն արգելում էր ծխելը: Տղաներից մեկը հեռանում էր խմբից ու գաղտնի ծխում: Մի պահ Լեոնիդը ռադիոկապով միացավ ու ասաց. «Ա՛յ տղա, դու էլի ծխո՞ւմ ես»: Տղային թվաց, թե հրամանատարը իր հետեւում է կանգնած, իսկույն հանգցրեց ծխախոտն ու զգաստ կանգնեց տեղում: Դա շատ ծիծաղելի ու զվարճալի էր:

Մի դեպք էլ պատմեմ: Պատերազմի ավարտից որոշ ժամանակ էր անցել: Հակառակորդը գիշերը անցնում է սահմանն ու նռնակ նետում պահակակետի վրա, սպանում ու վիրավորում զինվորներին: Ես չորրորդ պաշտպանական շրջանի հետախուզության պետն էի: Շտաբից հրահանգ եկավ, որ անպայման պատասխան հարված տանք ու գերի բերենք, որ հակառակորդը հրաժարվի նման դիվերսիոն քայլերից: Սկսեցինք նախապատրաստական աշխատանքները: Նույն առաջա-

դրանքը տրվել էր նաեւ բանակի հետախուզական գումարտակին: Ինձ տեղյակ չէին պահել այդ մասին: Մենք սպասում էինք հարմար պահի, որ մտնենք թշնամու թիկունքը: Ստեփանակերտից եկած խումբը փորձում է մտնել թիկունք, սակայն գործողությունը տապալվում է, ու մեծ աղմուկ է առաջանում: Ձմեռ էր, ցուրտ: Սովորաբար հակառակորդի զինվորները պոստերում չէին մնում: Ճանապարհը ականազերծելուց հետո բաց էր: Ինձ հետ իմ տեղակալն էր՝ Արթուր Ավանեսյանը, հետախուզական վաշտի հրամանատար Սամվել Պողոսյանը, եւս չորս տղաներ ու հինգ զինվոր, որոնք որպես պահեստային էին: Մտանք Ղափանլու գյուղը: Գյուղի միջով անցանք: Նույնիսկ շները չնկատեցին, միայն սագերը քիչ աղմկեցին: Տասն օրվա մեջ ամեն ինչ ուսումնասիրել էինք: Պետք է կտրեինք լարերը, Սամվելը ականապատեր խրամատները: Ես Արթուրի հետ պետք է պայթեցնեի բլինդաժը: Շարժվում էինք գիշերային տեսնող սարքերով: Ցուրտ, անլուսին գիշեր էր, առատ ձյուն էր տեղում, ինչը շատ նպաստավոր էր մեզ համար: Ես էլ եմ աջ ձեռքից վիրավոր, Արթուրն էլ: Ես դռան դեմը կտրեցի, որ ոչ ոք դուրս չգա: Կանգնել էինք, երկուսս էլ՝ վիրավոր, դժվար էր: Իրար նայեցինք, ժպտացինք: Իրոք որ, դա վիրավորների տեղը չէր: Բայց առաջադրանք ունեինք, որ պետք է կատարեինք: Հզոր նռնակ էի պատրաստել, որ գցեցինք, ամբողջ շտաբը ոչնչացավ: Ոչ ոք կենդանի չէր մնացել, որ գերի վերցնեինք: Առանց կորստի վերադարձանք:

1992 թիվն էր, ջոկատով Մոխրաթաղի դիրքերում էինք: Հրաման եկավ՝ ետ քաշվել: Մեծ Շենում մարդ չկար: Կապվեցի Սեյրան Օհանյանի հետ, ասաց՝ դիրքավորվիր: Հարցրի՝ ովքե՞ր են աջ ու ձախ կողմերում, թե՝ չգիտեմ: Հանձնարարեցի մեկական խրամատ փորել: Հետախույզները հայտնեցին, որ մեր ուղղությամբ մեծ ուժեր են կուտակված: Անտառոտ տեղանք էր: Ժամը տասնմեկին սակրավորները ետ եկան: Ականապատել էին: Ես անհանգստանում էի, որ հետախույզները ուշանում էին: Մենք դարան էինք նստել: Երբ թուրքերը մոտեցան, մի տասը մետր որ մնաց, սկսեցինք կրակ տեղալ: Կոտորեցինք, հետո հայտնվեցին զրահամեքենաներ ու տանկեր: Մենք մի տանկ ունեինք, որը ծառի ճյուղերով քողարկել էինք: Նռնականետներին կանչեցի: Մեկն ասաց. «Գիրո՛, դու խփիր»: «ԲՄՊ» եկավ՝ խփեցի: Տանկը եկավ՝ նորից խփեցի: Հաջորդ տանկը պայթեց ականի վրա: Մի նոր տանկ եկավ նույն ուղղությամբ: Արայիկ Ղուկասյանին հրամայեցի արկ բերել: Նա մոտ քսան արկ բերեց: Մինչ տանկին կխփեի՝ մի «ԲՄՊ» հայտնվեց, տղաների դիրքերի վրայով անցավ: Դրան եւս խփեցի: Արդեն սկսեցինք նրանց հետեւից եկող զինվորներին ոչնչացնել: Այդ տեղամասում մի գրոհային գումարտակ ոչնչացրինք: Ահագին ավար՝ զենք-զինամթերք, սնունդ, վերցրինք: Իսկ մենք ոչ մի կորուստ չենք ունեցել:

Բ. - *Ինչպե՞ս են կազմավորվել ջոկատները, ովքե՞ր են միացել:*

Գ. Միրզոյան - Ջոկատների կազմավորումը սկսվել է ավելի վաղ՝ արդեն 1990 թվականին, եւ այդ ամենը ստեղծվել է Լեոնիդ Ազգալդյանի գլխավորությամբ: Մեր ջոկատը կոչվեց «Ազատագրական բանակ»: Հրամանատար նշանակվեց Վլադիմիր Բալայանը՝ իմ համագյուղացին: Տղաները հիմնականում Աղաբեկալինջ եւ Մոխրաթաղ գյուղերից էին:

Ա. Ավանեսյան - 1990 թվականին Մոսկվայում ավարտեցի տեխնիկումը: Երբ վերադարձա, շարժումն արդեն սկսվել էր, ջոկատներ էին կազմավորվում: Իմ առաջին գործն էր մտնել ջոկատ: Մեր գյուղում՝ Մաղավուզում էլ էր ջոկատ կազմավորվել: Հրամանատարը Բաղալյան Սլավիկն է եղել: Մերոնք Քաջավանի տարածքում դիրքեր էինք պահում: Իսկ Վլադիմիրի ջոկատը շարժման մեջ էր, զբաղվում էր հակառակորդի կրակակետերը վնասազերծելով: Ես տեղափոխվեցի այդ ջոկատը: Այնտեղ հանդիպեցի Վլադիմիրին, Լեոնիդ Ազգալդյանին, Գիրոյին, Կամոյին: Ազգալդյանն ասաց, որ մեկ ամսից մարտական պատրաստվածություն ձեռք բերելու համար պետք է գնանք Ալաշան: Գնացինք, եւ երբ վերադարձանք, մեր ջոկատն արդեն մարտական վիճակում էր: Սկսեցինք կռվել: Երիտասարդների առանձին խումբ կար, որոնք դիրքեր էին պահում, մասնակցում մարտական գործողություններին: Սկզբում մտել ենք Մարտակերտ: Հակառակորդն ուզում էր Մարտակերտի վրա հարձակվել: Հարվածը տվել են Մարտակերտի ուղղությամբ: Նրանց տեխնիկան գերազանցում էր մերին: Ռուսական բանակը օգնում էր նրանց: Սովետական Տասնչորսերորդ բանակը Հայաստանում էր տեղակայված, Յոթերորդ բանակը՝ Ադրբեջանում: Այդ բանակի տեխնիկայի, անձնակազմի օգնությամբ փորձում էին գրավել Մարտակերտի շրջանը: Ծավալվել են արյունոտ մարտեր: Իհարկե, այն ժամանակ ուժերի գերակշռությունը նրանց կողմն էր: Տեխնիկայի պակասությունը զգացնել տվեց:

Բ. - Ո՞րն է եղել առաջին գործողությունը:

Ա. Ավանեսյան - Առաջին գործողությունները ադրբեջանական ՕՄՕՆ-ականներն էին կազմակերպում: Ռուսական զորքերի օգնությամբ հարձակվում էին գյուղերի վրա ուզում էին գտնել շարժման պարագլուխներին, ղեկավար մարմիններին, ջոկատների հրամանատարներին, զենք մատակարարողներին: Այդ նպատակով ՕՄՕՆ-ականները հարձակվում են Քաջավանի վրա, հայաթափ անում: Քաջավանը մարտավարական նշանակություն ունեցող հայկական փոքր գյուղ էր: Դիմացը ադրբեջանական մեծ գյուղեր էին, եւ Քաջավանը հայկական կողմի համար հենակետ էր: Այդ գյուղը երկու անգամ հա-

յաթափ են արել: Հետո ջոկատները սկսել են պաշտպանել:

Բ. - Տեսե՞լ եք՝ ինչպես են հարձակվել, հայաթափ արել:

Ա. Ավանեսյան - Երբ ադրբեջանցիները ՕՄՕՆ-ականների հետ մտել են գյուղ, այնտեղ քիչ մարդ է եղել: Ջոկատներից որոշ մարդիկ, Նորիկ Դանիելյանը՝ մեր առաջին հրամանատարը, այդ ժամանակ տարածքում էին, բայց մեծամասնությունը հասցրել էր փախչել: Յոթ հոգու բռնել էին՝ Նորիկ Դանիելյանին, կոճողոտցի Ալիկին. միայն այդ երկուսին եմ հիշում: Միրբաշիրից լուրը եկավ, որ յոթ հոգու տարել են: Այնտեղից նրանց տանում են Շուշի: Այդ դեպքից հետո ջոկատն իջնում է գյուղ՝ պաշտպանելու:

Բ. - Ի՞նչ զենք ունեիք:

Ա. Ավանեսյան - Ավտոմատներ, կարաբիններ եւ մեկ նռնականետ: Փամփուշտ, ոչինչ, կար, կարելի էր մեկ օրվա մարտ մղել: Այդտեղ փամփուշտը չէր խոսում, արկն էր խոսում եւ տեխնիկայի դիմագրավման համար նռնականետը, որից մի հատ էր: Հարյուր քսան հոգանոց ջոկատի համար դա շատ քիչ էր: Մեկ շաբաթ հետո գնդակոծեցին այդ դիրքերը:

Բ. - Բոլորդ էլ անտեղյակ էիք կռվելուն, մարտին, զինվորական գործին, ինչպե՞ս էիք նախապատրաստվում:

Ա.Ա. - Ազգալդյանն ուներ հատուկ հրահանգիչներ արտասահմանից եւ Հայաստանից, որոնք զբաղվում էին երիտասարդների մարտական պատրաստվածության հարցով:

Բ. - Ովքե՞ր էին հրահանգիչները:

Ա. Ավանեսյան - Մարտիկն է եղել, Մաչը, Վալոդը, Միշան:

Ս. Պողոսյան - Ես եւ Գրիգորի Միրզոյանը եղել ենք նույն ջոկատում, համարյա նույն օրն ենք մտել այդ ջոկատը: Կարող եմ ասել, որ շատ դաժան օրեր ենք քաշել, մինչեւ զենք ենք ստացել: Երկու ամսից ավելի տեւած պարապմունքներից հետո ենք ստացել զենքը: Այդ զենքերը բերել էին Ստեփանակերտից՝ Ցորի գնդից: Զենքը գնել էին փողով: «ԱԿ-74» ավտոմատ էր:

Ալաշանում նստած էինք, մի տասնյակ մարդ վազելով եկան, թե՝ Սարսանգի ջրամբարը գրավել են: Գրիգորի հետ գնացինք: Ճանապարհի կեսին այդ տղան ետ մնաց: Գալիս ենք, դիրքավորվում: Մարդկանց գլուխներ ենք տեսնում: Գրիգորը հրաման տվեց՝ առա՛ջ: Անտառով առաջ ենք գնում: Զգացինք, որ մարդիկ ոչ թե մեր դիրքերին են նայում, այլ հակառակորդի: Մոտեցանք, հանդիպեցինք Ավանեսյան Արթուրին: Երեք հոգի էին մնացել դիրքերում, մնացածը, դիրքերը թողած, նահանջել էին: Հակառակորդը աջից էր հարձակվել, այդ կողմը ետ է քաշվում եւ նրանց չեն զգուշացնում: Նրանք ձախ կողմի վրա ճանապարհը պահում են: Գալիս ենք, միանում: Առաջին իրիկունը ոչ մի բան

չի լինում, երկրորդ իրիկունը հակառակորդի սակրավորները գալիս են ճանապարհները մաքրելու, որ տեխնիկան գա: Սպասում ենք այնքան, մինչեւ մոտենան: Մենք ճանապարհի վերեւում էինք: Ասացինք՝ նռնակ գցենք, Գրիգորն ասաց՝ չէ, սպասեք, նռնակը հարմար չէ: Մի հատ հակատանկային նռնակ գցեցինք նրանց վրա: Չպայթեց: Երկրորդ կապսուլը չկար: Կրակեցինք նրանց վրա: Յոթ հոգի էին, երկուսը վիրավոր փախան, մյուսները զոհվել էին: Այդ նույն օրը՝ երեկոյան, «ԲՏՌ»-ով եկան: Մեկը նռնականետով խփեց, թուրքերը թողեցին, փախան:

Բ. - Նռնակը չէ՞ր կպել:

Ս. Պողոսյան. - Չեմ կարող ասել, մութ էր: Համենայն դեպս, տեխնիկան տարել էին:

Ա. Ավանեսյան - Պողոսյանը ճիշտ է ասում, այդ դեպքը շատ հետաքրքիր էր: Հաջորդ օրը գալիս են, ականի վրա են պայթում: Չորս թե հինգ օր անց նրանց շարասյունն է գալիս, շարասյան վրա ենք խփում: Ստացվում է այնպես, ինչպես Աֆղանստանում էր, երբ դուշմանները ռուսներին կոտորում էին: Այդպիսի մի ծուղակ էլ մենք ենք նրանց գցել: Ծուղակը մենք ենք սարքել, տեղում որոշել ենք, կազմակերպել: Մենք դարանակալ խումբ էինք՝ մոտ քսան հոգի: Ականները դրել էինք ջրամբար տանող ճանապարհի վրա: Մենք մի կողմից անտառն էինք հսկում, մի կողմից՝ ճանապարհը, որ նրանց տեխնիկան չանցնի: 1992 թվականի հուլիսն էր:

Գ. Միրզոյան - Հետաքրքիրն այն է, որ կռվի ժամանակ հիմնական դիրքերում չէինք կանգնում: Աշխատում էինք, որ հակառակորդը մեր տեղը չիմանա: Կարելի է ասել՝ պարտիզանական մոտեցում էր: Մեր նպատակն էր հակառակորդին մեծ կորուստներ պատճառել: Եվ այդ ձեւով, այդ տակտիկայով կռվելով՝ մեզ դա հաջողվում էր, արդյունքը շատ մեծ էր:

Բ. - Ո՞վ էր այդ տակտիկան ընտրել, ինչպե՞ս էր մտածում Ազգալդյանը:

Գ. Միրզոյան - Զենքով կրակելը մեզ Ազգալդյանը եւ նրա ինստրուկտորներն են սովորեցրել: Իսկ տակտիկայի ընտրությունը իրավիճակն էր թելադրում. նրանք շատ էին, մենք՝ շատ քիչ, նրանք լավ էին զինված, մենք՝ ոչ: Մենք պետք է ուրիշ ուժ օգտագործեինք, որ կարողանային հաղթել:

Իսկ այդ դեպքը, երբ ծանոթացանք Արթուրի հետ, շատ հետաքրքիր էր: Գիտե՞ք ինչպես էր... Ես չեմ ուզում ուրիշներին քննադատել, կամ՝ վատ խոսք ասել... Երեւանից եկել էր գեներալ Դալիբալթայանը: Շատ սիրում եւ հարգում ենք այդ մարդուն, բայց այն ժամանակ չէինք ընդունում նրան, քանի որ մենք պարտիզաններ էինք, նա՝ ռուսական բանակի գեներալ: Նա շատ լավ էր հասկանում կռվից, բայց մենք մեր չիմա-

ցությամբ՝ ուշադրություն չէինք դարձնում այդ մարդու ասածներին: Բոլոր ջոկատներով հավաքվեցինք Ալաշանում: Գեներալ Դալիբալթայանը քարտեզը կախել էր՝ ամեն ինչ գծագրած, նշած: Երեւում էր, որ աշխատել է այդ քարտեզի վրա, պատրաստվել, որ զեկուցում կարդա, բացատրի: Մեր մեջ էլ պրոֆեսիոնալ զինվորական չկար, որ կարողանար հասկանալ: Ռուսերենով բացատրում էր, թե հակառակորդին ինչպես պետք է խփենք, որ կողմից, իսկ մենք նրա բացատրածը չէինք պատկերացնում: Ռուսերենը չէր պատճառը, որ չէինք հասկանում, այլ տերմինները: Հետո, իհարկե, սովորեցինք: Առավոտյան ասացի. «Վեր կացե՛ք, գնանք, դիրքավորվենք»: Ալաշանից մինչեւ թուրքերի դիրքերը ճանապարհը բաց էր: Այդ տարածքում մենք ոչ մի տեղ դիրքեր չունեինք, ամբողջ զորքն էլ հավաքված էր Ալաշանում: Գնացինք: Այդ ժամանակ էր, որ Արթուրին հանդիպեցինք, ու այդ դեպքը պատահեց: Հետաքրքիրն այն է, որ երբ թուրքերին խփում էինք, անմիջապես զենքի ուղղությամբ էինք վազում, որ վերցնենք: Զենքի պակասություն կար, չէր հերիքում: Վաթսուն, ութսուն մարդ կար, միայն քառասուն հոգին էին զինված: Արթուրն ասաց.

- Ես իջնում եմ, զենքերը բերեմ:

- Սպասի՛ր, հաստատ իմանանք՝ հո վիրավոր չկա՞, հանկարծ նռնակ գցի, մեզ վնասի:

- Չի լինի:

Գնաց, մի տասը հատ ավտոմատ շալակած եկավ: Զենքերը բաժանեց, ասաց. «Տղե՛րք, բոլորս զենք ունենք, արդեն կարող ենք հաղթել»:

Ս. Պողոսյան - Կուբաթլուի օպերացիան էր, մեր գնդից հարյուր քսան հոգով գնացել էինք Խծաբերդ: Հրամանատարը Նորիկ Դանիելյանն էր, որ կազմակերպում էր մարտը: Նրա տեղակալը Միրզոյանն էր: Հետախուզությունը ղեկավարում էր Արթուրը: Մենք էլ՝ մեր դարդին, ինչ ասում էին, կատարում էինք, հրամանին մեռած մարդիկ: Վեց հոգի ուղեկցորդի հետ ելնում են բարձունքը: Երեկոյան՝ ժամը վեցի կողմերը, կապվում են, ասում. «Բարձրացե՛ք, արդեն դիրքերի տեղը գիտենք»: Իսկ մեզ Շուշիի գնդից երկու հետախույզ էին ուղեկցում: Գնում ենք, Արթուրենց հանդիպում. նրանք առաջին գիծ էին հասել: Այդտեղից իջնում ենք, անտառի միջով գնում: Առջեւից Արթուրն էր գնում, հետեւից՝ երկու ուղեկցողները, հետո՝ ես: Մութն ընկել էր: Ուղեկցողը կանգնում է, ինձ թվում է՝ բոլորը կանգնել են: Տասը րոպեից մեզնից վերեւ՝ ձախ կողմի վրա, նռնակ է պայթում: - Էս ի՞նչ էր... Տղերքը բոլորը սկսել են: Իմ հետեւում Արթուր անունով տղա կար, Խչո էինք ասում, թե՝ Սամո՛, ի՞նչ անենք: Ասացի. «Սպասիր, կողմնորոշվենք, տեսնենք՝ որ ուղղությամբ ենք գնում»:

Այդ կրակոցները լսելով բարձրանում ենք ձախի վրա: Արթուրի

ձայնն ենք լսում. «Արա՛, չմտնեք, խրամատը շրջանաձեւ է, պաշտպանությունը շրջանաձեւ է»: Այսինքն՝ մերը չէ, հակառակորդինն է: Երբ այդ դիրքերը հետախուզել էին... ստացվեց, որ այդ հետախույզը մեզ խաբել է, թե՝ այնտեղ դիրք չկա, դիրքը ահագին առաջ է: Երբ տղերքը ադրբեջանցիների խոսակցության ձայներ են լսել, ուղեկցողը կանգնել է եւ չի զգացել, որ տղաները բարձրանում են ձախ կողմի վրա: Արթուրենք նկատել էին, որ հակառակորդը նստած է, եւ բարձրանում են, նռնակը նետում: Հետո մենք ենք բարձրանում: Ասում են, որ խրամատը շրջանաձեւ է, աջից իրենք են մտնում, ձախից՝ մենք: Մի նռնակ ես եմ գցում, մեկը՝ Արթուրը:

Բ. - Ինչո՞վ էիք կապվում իրար հետ, «Ալինկո» ռացիայո՞վ:

Ս. Պողոսյան - Չէ, խոսում էինք, իրարից մոտ տասնհինգ մետր հեռավորության վրա էինք գտնվում: Նրանք բլրի վրա էին, մենք, դոշի վրա պառկած, խրամատի տակ: Երկու նռնակ ենք գցում խրամատի վրա եւ մտնում՝ նրանք աջ կողմից, մենք՝ ձախ: Գալիս ենք, մեջտեղում հանդիպում: Ուղեկցող չկար: Գիշերը պահում ենք դիրքը:

Բ. - Ուղեկցողները որտե՞ղ էին:

Ս. Պողոսյան - Չգիտեմ, երեւի կորցրել էին տեղը: Դրանից հետո ուղեկցողները դառնում ենք մենք, բայց վերեւից՝ բլուրներից, ղեկավարում էին Նորիկ Դանիելյանը եւ Գիրո Միրզոյանը: Մետր առ մետր ասում էին՝ աջով կամ ձախով գնանք:

Մի հետաքրքիր դեպք էլ պատմեմ: Դարպասաշեն գյուղ կար, այդ անունը դառնում է Արթուրի մականունը, որովհետեւ գրավեցինք Արթուրի ծննդյան օրը: Մինչեւ գյուղ մտնելը մի «ԲՄՊ-1» ենք խփում:

Բ. - Որտե՞ղ էր:

Ս. Պողոսյան - Կուբաթլուում, այդ մարտի շարունակությունն էր, հերթով գնում էինք: Գյուղում արդեն նստած՝ ձմերուկ էինք ուտում եւ հնդկահավի բդեր: Մոտ քսան րոպեից մեքենաներով գալիս են Նորիկ Դանիելյանը, Գրիգորի Միրզոյանը: Ասում են, որ առավոտյան գրոհի համար պետք է հետախուզության գնանք: Տալիս են «S-72» տանկ եւ «ԲՄՊ-2»: Ամբողջ զորքով նստում ենք, երեւի տասնութ հոգով, եւ գնում ենք հետախուզության: Իրիկունը մութն ընկնում է: Ադրբեջանցիների հրետանին մեզ նկատում է, բայց սկզբից մենք ենք նրանց նկատում: Կրակում ենք նրանց վրա: Երեք հատ թնդանոթ են թողնում, փախչում: Ասում են՝ նրանք խոզի միս չեն ուտում, բայց այդտեղ առաջին անգամ տեսա տաք-տաք խոզի խորոված, ոչխարի խաշլամա, որ պատրաստվում էին ուտել: Ի՞նչ ասեմ, լավ հաց կերանք: Երեկոյան վերադարձանք, գյուղում հանդիպեցինք իրար: Նորիկ Դանիելյանը քարտեզը, մեզ համար՝ գունավոր թուղթը, փռեց «Նիվայի» կապոտի վրա, թե՝ ցույց տվեք, թե ուր եք գնացել:

Բ. - Նա լա՞վ գիտեր քարտեզը:

Ս. Պողոսյան - Նա էլ գիտեր, Գիրո Միրզոյանն էլ: Արթուրին ասում է.

- Դե, ցույց տուր, տեսնեմ՝ որտե՞ղ եք հետախուզել:

- Դե, գնացել ենք...

- Արա, քարտեզի վրա ցույց տուր, որտե՞ղ եք եղել:

- Այ, էս գյուղում ենք եղել, այստեղով դուրս ենք եկել, այստեղով մտել:

Եվ Արթուրը քարտեզի վրա կլոր շրջան գծեց ու ասաց.

- Ա՛յ, այսքան տեղը գնացել ենք:

Նորիկն ասաց.

- Եկեք այստեղից ետ դառնանք, արդեն Թուրքիան էլ ենք վերցրել:

Ես էլ քարտեզից ընդհանրապես գաղափար չունեի, բայց դրանից հետո սկսեցինք քարտեզով աշխատել:

Ա. Ավանեսյան - Կուբաթլուի օպերացիան եղել է շատ կազմակերպված: Հարյուր հոգով Մարտակերտի մեր զորամասից՝ պաշտպանական շրջանից, կատարում էինք մի բրիգադի աշխատանք եւ մարտերով հասնում մեր նպատակին: Չնայած մեր պլաններում Կուբաթլու մտնելը չի եղել, բայց քանի որ օպերացիան փայլուն կատարվել է, մեզ ասել են՝ մտեք: Շուշիի գունդն էլ էր այնտեղ, քսանհինգ զոհ տված՝ չի կարողանում առաջ շարժվել: Հայկազի բրիգադը, այդքան տեխնիկայով, չէր կարողանում առաջ շարժվել: Հարյուր հոգանոց մեր գունդը սեպի պես տվեց մեջը եւ ճանապարհը բացեց: Առաջխաղացումն սկսվեց, եւ դրանից հետո եղան Զանգելանի, Ջեբրայիլի օպերացիաները, բայց արդեն առանց մեր միջամտության: Մենք մեր խնդիրը, կարելի է ասել, գերակատարել էինք:

Գ. Միրզոյան - Խծաբերդի մոտ թուրքական գյուղ կար՝ Բաշարաթ, թուրքերն այդտեղ ուժեղ դիրքավորված էին: Շուշիի գունդը ահագին՝ մոտ երեսուն զոհ էր տվել այդ դիրքերը վերցնելու համար: Թուրքերը լավ էին դիրքավորվել: Մոտ էինք՝ մի երկու կիլոմետր: Հարյուր հոգանոց մեր գնդից ընտրեցինք լավագույններին, լավ թիմ ստեղծեցինք: Նորիկն ասաց՝ Գիրո՛, ի՞նչ անենք: Անծանոթ տարածք է, անտառ, ի՞նչ իմանաս՝ ի՞նչ կարող է լինել: Ասացի. «Արի գիշերը խփենք, ոչ զոհ ենք տալու, ոչ վիրավոր: Ուղղակի երկու լավ ուղեկցող են պետք, որ տանեն, տեղը ցույց տան»: Տղերքը գնացին հետախուզության: Գիշերը նռնակի մի-երկու պայթյունով տղերքը մտան: Հասկանում էինք հոգեբանությունը, որ երբ գիշերվա ուշ ժամին հարձակվես, չեն իմանալու՝ որտեղից են խփում, եւ թողնելու են, փախչեն: Այդպես էլ եղավ, ինչպես որ պլանավորել էինք: Տղերքը ողջ-առողջ էին: Գյուղը վերցնելու օրն էլ որոշվեց, որ Կուբաթլուն էլ վերցնենք:

Բ. - Որտե՞ղ էր այդ գյուղը:

Գ. Միրզոյան - Կուբաթլուից երեսուն-քառասուն կիլոմետր այն կողմ: Այդտեղից մարշը, «Նիվայով» տանկերի առջեւից գնալով, հասել էր Կուբաթլու: Նորիկն ասաց. «Ստո՛պ, թող ժողովուրդը դուրս գա»: Կռվող չկար: Վերջին դիմադրությունը հեռուստաաշտարակի բարձունքում են ցույց տվել, երեք-չորս հոգի էին, խփեցինք: Այդպես ազատագրեցինք Կուբաթլուն: Նորիկն ասաց. «Հետ ենք գնում, մեզ ոչ մի բան՝ ալան-թալան պետք չէ»: Հետ եկանք մեր զորամաս: Այն ժամանակ Մարտակերտը, մեր տները թուրքերի ձեռքում էին:

Բ. - Մարտակերտի ազատագրմանը մասնակցեցի՞ք:

Ա. Ավանեսյան - Մարտակերտի ազատագրումը 1993-ի փետրվարի 12-ից սկսվեց: Հակահարձակումը Կիչանից սկսվեց: Արագ մտանք Մարտակերտ: Բումունց Լյովան, Սամոն, Ավանեսը, Արայիկը... Առավոտ ծեգին՝ մեզանից մի ժամ շուտ, Գիրոյենք են մտնում, հետո Նորիկին հայտնում, որ մենք էլ մտնենք: Շրջգործկոմի մոտ, գնում ենք, մի քիչ հաց ուտում:

Գ. Միրզոյան - Մարտակերտը ազատագրելուց հետո այնտեղ ոչ ոք չկար, ով որ մասնակցել էր ազատագրմանը, նրանցից ոչ ոք չկար այնտեղ, ամբողջ ղեկավարությունը ուրիշ՝ անկապ մարդկանցից էր կազմված: Այն մարդիկ էին ղեկավար, ովքեր իրենց երեխաներին փախցրել էին Ղարաբաղից, տարել ապահով տեղեր:

Ա. Ավանեսյան - Սեյրան Օհանյանը այն ժամանակ Մարտակերտի ճակատի շտաբի պետն էր: Մարտերը գնում էին Ծովին Հող կոչվող տեղամասում՝ Մեծ Շենի անտառի մեջ, հեռուստաաշտարակի մոտ: Թուրքերը հարձակվում են: Դիրքավորվում ենք: Մոխրաթաղից մի մեքենա է գալիս, Վերդի դային, ասում է. «Ամեն ինչ լավ է, նորմալ, բան չկա»: Մենք էլ դիրքեր ենք պատրաստատում: Տասը րոպե անց լուր է գալիս, որ թուրքերը հարձակվում են: Դիրքավորվում ենք, սպասում: Անտառում ոչ մի ձայն չկար, ճանճի տզզոցը լսվում էր: Տեսնենք՝ խշխշալով գալիս են: Մարտի ենք բռնվում: Հակառակորդը նահանջում է, չնայած նրանք քանակով շատ էին: Մեզ հետ երիտասարդների՝ Վոլոդյայի ջոկատն էր եւ կարծեմ՝ Պավել Երիցյանի «Աշոտ Երկաթ» ջոկատն էր: Նրանք գոռում են՝ նահա՞նջ, նահա՞նջ, ու փախչում են: Սեյրան Օհանյանն էլ մի լավ հայհոյեց, թե՝ ոչ թե նահանջ, այլ առա՛ջ: Սկսում ենք առաջ շարժվել, հակառակորդին քշել: Հասնում ենք հեռուստաաշտարակի կողմը: Մի հատ տեխնիկա էր կանգնած, լյուկը բաց, մարդ չկար մեջը: Բարձրանում ենք տեխնիկայի վրա: Նոր «ԲՄՊ-1» էր: Մենք էլ «ԲՄՊ-2» ունեինք, մեր շրջանի՝ Մարտակերտի տեխնիկան էր, հրամանատարն էլ Մեծ Շենից մի տղա էր: Մի խոսքով, վերցրինք տեխնիկան, լրացուցիչ զենքեր: Թուրքերն էլ դիակներ էին թողել: Ուրախա-

ցած սպասում էինք, որ ամբողջ զորքը գա, հավաքվենք: Օհանյանը եկավ, շնորհավորեց, որ բանակը նոր տեխնիկա ունի: Մտնում է մեջը, գործի գցում, տեղում գազը սեղմում: Ներքեւից մեր «ԲՄՊ-2»-ը գալիս է, նա էլ չգիտի, որ մենք արդեն լրացուցիչ տեխնիկա ունենք: Հայաստանի տղերքն էլ վրան նստած, ուրախացած, երգում էին: «ԲՄՊ-2»-ը կրակ է բացում «ԲՄՊ-1»-ի վրա, որը Օհանյանը գործի էր գցել: Երկու վիրավոր ենք ունենում, մեկ զոհ: Բոլորը փախչում են: Օհանյանը գազը սեղմում է, գնում մի ծառի դեմ առնում, սկսում տեղապտույտ անել: «ԲՄՊ-2»-ն էլ գալիս է հետեւից, «հարթուկում»: Զոռով կանգնեցնում ենք: «ԲՄՊ-2»-ի հրամանատարը դուրս է գալիս, ասում. «Ես ի՞նչ իմանամ, մենք մի տեխնիկա ունեինք, ինձ ոչ ոք տեղյակ չի պահել, որ մեկն էլ գրավել եք»: Օհանյանը մի կերպ է փրկվում, կարող էր եւ ուրիշ բան լինել:

Երբ զինվորական մարշով գնում էինք դեպի Կուբաթլու, շարասյունը մեր հետեւից էր գալիս, քանի որ մենք հետախույզներ էինք: Մենք ամբողջ խմբից առաջ էինք գնում, ամբողջ հրամանատարությունը նույնպես ետեւում էր, շարասյունը բերում էին: Զինվորական քայլով էինք գնում, քանի որ թուրքերը փախել էին: Հակառակորդը երկու ուղղաթիռ է բարձրացնում ուղիղ շարասյան վրա: Եթե հասցներ գնդակոծել, մենք ահագին զոհեր ու վիրավորներ կտայինք: Առաջին կրակոցից հետո «Իգլա»-ով խփում ենք: Առաջի արկը չի կպչում: Երկրորդ անգամ խփում ենք ուղղաթիռներից մեկին, մյուսն էլ փախչում է: Շարասյունը նորից կոկիկ մարշով տեղ է հասնում:

Մարտակերտի գրավման հետաքրքրությունը նրանում էր, որ հեռուստաաշտարակի բարձունքը վերցնելու համար, որը ամենադժվար, կարելի է ասել՝ անմատչելի դիրքն էր, Նորիկ Դանիելյանի հրամանատարությամբ երեք անգամ հարձակվել ենք: Երկու անգամ չի հաջողվել, չնայած մի անգամ ճեղքել էինք, բայց աջ եւ ձախ թեւերը չէին հասցրել մտնել: Երրորդ անգամ մի տանկ ու մի զրահամեքենա անցնում են հակառակորդի թիկունք, եւ լուսադեմին զորքը բարձրանում է: Ձախ թեւը միանգամից գրավում է տարածքը: Մեր հրետանին շատ լավ է աշխատել այդ օրը: Թիկունք մտած տանկն ու զրահամեքենան էլ շատ լավ դրսեւորեցին իրենց, չնայած զրահամեքենային խփեցին, անձնակազմը զոհվեց: Աջ կողմից էլ Գիրոյենք էին, վերցրին բարձունքը, դա ամենավատ հատվածն էր: Եվ այդտեղ հակառակորդը զգաց իր անմարտունակությունը: Ադրբեջանում արդեն իրար ուտում էին: Թալիշների առաջնորդ գնդապետ Ալաքրամ Հումբաթովը ապստամբություն էր բարձրացրել: Հակառակորդը զինադադար խնդրեց: Հաջորդ օրը մենք իջանք Մարտակերտ, բայց Մարտակերտը դեռ, կարելի է ասել, մերը չէր, չեզոք գոտի էր: Երկկողմանի հետախուզություն էր

գնում, բայց հիմնականում մենք էինք տիրություն անում: Սերժ Սարգսյանն էլ եկավ, զորավարժությունների տարածքում հանդիպեց Ադրբեջանի պատվիրակության հետ, եւ զինադադար կնքվեց: Դեկտեմբերին ես Թալիշի գերեզմանների մատույցներում վիրավորվել եմ, Մատաղիսից Թալիշ ձգվող անտառներում, դարանակալ թշնամու պատճառով: Գերեզմանների դիրքը Օջախ էր կոչվում: Այդ դիրքի վրա թուրքերը հարձակվում են: Թալիշը նրանց ձեռքում էր: Այդ օրը երկու դիրքերի վրա հարձակվում են, մի տեղ ետ են մղում, մյուս տեղում թողնում են փախչում եւ չեն էլ ասում՝ որտեղ են: Թուրքերը դիրքը գրավում են, մերոնք էլ չեն ասում, որ այդ դիրքը հանձնված է: Այդ ժամանակ հրամանատարը Աշոտ Առուշանյանն էր, Գյուլաթաղից էր, Նորիկի տեղակալն էր: Հետախուզությունը ուղարկում են Թալիշի հրամանատարի՝ Վանիկի հետ: Չորս հոգի մեր երեխաներից էին, չորսն էլ՝ նրանց: Բարձրանում ենք վերեւ՝ դիրքի մոտ: Ճանապարհին կանգնում ենք, ասում եմ. «Պետք չէ հենց այնպես գնալ, մի խաբար իմանանք, նոր գնանք»: Վանիկն ասում է. «Չէ՛, ռացիան տուր ինձ, քո ձայնը կարող է չճանաչեն, չպատասխանեն: Արի բարձրանանք»: Ասում եմ. «Ես չեմ բարձրանա»: Կապվում է Աշոտի հետ, ասում. «Աշոտն ասում է՝ բարձրացեք»: Զգացի, որ ինչ-որ բան այն չէ: Երեք հարյուր մետր էր մնացել, որ հասնեինք դիրքերը, նկատում ենք, որ մեկը սողեսող մտնում է ծառի հետեւը: Ասում եմ. «Հաստատ վիրավոր է, պետք է բռնենք»: Ձեռքս բարձրացնում եմ, Վանիկը մոտենում է: Ասում եմ. «Ծառի տակ մարդ կա»: Վանիկը մինչեւ ծառի տակ նայեց, ես գլուխս բարձրացրի եւ վերեւում շարժվող փայլեր նկատեցի: Երբ արեւի շողերն ընկնում են զենքի վրա, փայլում է: Հասկացա, որ այնտեղ զենքով մարդիկ կան նստած: Միանգամից կրակեցի այդ ուղղությամբ: Այնտեղից հուժկու կրակահերթ եկավ: Չգիտեմ, թե ինչպես ցատկեցի, հաստ ծառի հետեւում ընկա՝ անմիջապես թաքնված թուրքի դեմը: Այդտեղ մարտ գնաց: Ռացիան կանչում էր՝ պատասխանի՛ր, պատասխանի՛ր: Ասում եմ. «Վանի՛կ, պատասխանի՛ր»: Նայում եմ, տեսնում՝ Վանիկն արդեն չկա, գլուխը ծակվել էր: Հետ եմ նայում, տեսնում՝ տղերքից արդեն մի երեքն էլ պառկած են: Մնացել էինք երեք հոգով: Ասում եմ. «Այդտեղ մնացեք, գալիս եմ»: Մինչեւ ես թուրքին խփում եմ, մի քիչ հանդարտվում է: Ծառի հետեւից կրակելով դուրս եմ գալիս, որ գնամ նրանց մոտ, նորից հուժկու կրակահերթ են բացում, արդեն ինձ էլ է կպնում: Վիրավոր վիճակում հասնում եմ նրանց մոտ: Մինչեւ մութն ընկնելը սպասում ենք: Թուրքը աջից ու ձախից փորձում էր մտնել, չէր ստացվում: Արնաքամ էի լինում: Ենթասպան կռվող տղա էր, նրան Պրապոր էինք ասում, գնում է ռացիան վերցնելու, նրան էլ են խփում: Իջնում եմ ներքեւ՝ տղերքի մոտ: Կապ չկար, որ ասեի հարձակման մասին: Նրանց միայն

կրակահերթերի ձայնն էր հասնում: Իջնում եմ, ասում, որ դիակները բերեն: Ինձ հոսպիտալ են տեղափոխում: Հաջորդ մարտերն են սկսվում: Այդ ժամանակ նույնիսկ ծերերն էին կռվում: Ահագին նահանջեցինք: Մատաղիսը տվեցինք: Հակոբ Կամարիի մոտ դաժան մարտեր եղան: Թուրքերը սկսեցին ուրիշ տակտիկայով կռվել, արդեն նոր սերունդ էր կռվում՝ տասնութ-տասնինը տարեկան ջահելները: Իսկ մեր կռվողները նույնն էին: 1993 թվականի դեկտեմբերն էր: Մենք ռեսուրսներ չունեինք, իսկ նրանք բերել հասցրել էին այդ ռեսուրսները: Բավական ագրեսիվ մարտեր էին մղում: Համարյա Մաղավուզը տալիս էինք: Այդ ժամանակ Մանվել Գրիգորյանը օգնության հասավ: Մեկ ամիս տեւած դիրքային մարտերից հետո՝ ապրիլին, սկսվեց մեր վերջին հակահարվածը, որը ստիպեց հակառակորդին իրենց պարտության հետ հաշտվելու պայմանագիր կնքել: Ետ վերցրինք Հակոբ Կամարին, Մատաղիսը, Թալիշը: Չնայած դրան՝ Չայլուն չկարողացանք վերցնել: Ինչքան պահուստային ուժեր ունեին, բերել էին, լցրել մեր ճակատում, որովհետեւ հիմնական հարվածի ուղղությունը Միրբաշիրն էր:

Բ. - Նորիկն ինչպե՞ս զոհվեց:

Ա. Ավանեսյան - Նորիկին խփեցին, չգիտեմ՝ ով, ինչպես, բայց սպանեցին Ստեփանակերտից զորամաս վերադառնալու ճանապարհին:

Ս. Պողոսյան - Ամբողջ կռվի ժամանակ հակառակորդից ինչքան տեխնիկա առգրավել էինք՝ կլիներ մի վեց տանկ, «ԲՄՊ-2», հավաքեցինք: Գործողություն էր մշակվում Չայլուի ուղղությամբ: Ամբողջ գործողության հրամանատարը Առուշանյան Աշոտի տեղակալը՝ Ռազմիկն էր: Կանգնած էինք «530-րդ» բարձունքում, որը Լեւոնարխ գյուղի վերեւում էր գտնվում: Լեւոնարխը արդեն մեր ձեռքին էր: Օպերացիան արդեն մշակվում էր: Մի քանի լավ տղաներ կանգնած էին, Չայլուի տղաներն էին: Նրանց համար «հարսանիք» էր սպասվում, կանգնած՝ գյուղին նայում են, իրենց լեզվով ասում են՝ աղեկ, աղեկ է: Մարտակերտ իջնելիս չորս տանկ Մատաղիսի կողմով են գնում, մի տանկ եւ «ԲՄՊ-2»-ը մալականների (Լեւոնարխ գ. - խմբ.) կողմով է գալիս: Մալականներից ներքեւ դիրքավորվել էին Քառասունհինգերորդ մոտոհրաձգային գումարտակը, Վլադիմիր Բալայանի ջոկատը եւ հետախուզությունը: Դիրքավորված սպասում էինք, որ նրանք ձախից՝ Մարտակերտի կողմից, խփեն Չայլուի վրա, մենք էլ աջով մտնենք: Հրամանն այդպես էինք ստացել: Մենք էլ ջրմուղի մոտից նայում ենք, իրար հետեւից գնում, տեխնիկա չենք տեսնում, միայն փոշի է: Այդ պահին թե քսան հոգի էին, թե հարյուր՝ երրորդ գումարտակն էր հարձակվում Բաղիրյան Իլյիչի հրամանատարությամբ: Տղերքը ետ են նահանջում, ահագին վիրավորներ են տալիս: Մենք նայում էինք: Ասես մարտաֆիլմ լիներ: Հրաման ենք ստանում, որ աջով մտնենք: Տանկը աջով

մտնում է: Գետի մոտ ջրմուղը վնասվում է: Մեծ-մեծ խողովակներ էին, մտնում, անցնում է այդ խողովակների տակը: Մեկ էլ Արթուրը գոռում է.

- Տանկը խփեցին:
- Ո՞նց թե խփեցին:
- Չեն խփել, բայց հիմա կխփեն:
- Որտեղի՞ց պետք է խփեն:
- Վեր կացե՛ք, վազենք:

Դուրս եկանք այդ դիրքից, վազեցինք դեպի տանկը: Մի կերպ՝ կրակոցներով այդ տանկիստին հասկացնում ենք, որ թուրքերը իջնում են: Երկու հոգի, նռնականետն ու երեք հատ արկ շալակած, վազքով իջնում են: Տանկիստին գլխի ենք գցում, որ գալիս են խփեն: Շրջվում է, ջրատար խողովակների տակ կանգնում: Արկերից մեկը հեռու է գնում, երկրորդ արկը խփում են, այդ խողովակները պայթեցնում: Ջուրը լցվում է տանկի վրա: Մեխանիկը գլխի է ընկնում, թե ինչ է կատարվում, եւ շուռ է գալիս, փախչում: Այդտեղից միայն տանկն ենք հանում:

Բ. - Այսինքն՝ այդ ձորով գնալը սխալ էր:

Ս. Պողոսյան - Օպերացիան սխալ էր մշակված, ամբողջ տեխնիկան վարի տվեցին: «Ռազբորկան» Միրբաշիրի համար է գնացել: Հրամանատարները կանգնել ասել են. «Ով սկզբից մտավ Միրբաշիր, ամեն ինչը նրանն է»: Ասում են. «Բա, Մարտակերտը տուժած շրջան է, այդ ռազմավարը պետք է տարվի Մարտակերտի համար»: Այդպես էլ այդ գործողությունը ձախողվում է:

Բ. - Ո՞վ էր վիճում:

Ս. Պողոսյան - Գնդի հրամանատարը: Փոխարենը ընդհանուր հայտարարի գան... Մինչեւ օրս էլ այդպես է. կռվողը կռվել է, թալանողը՝ թալանել: Եթե կռվող տղան թալանի մասին զրույց արեց, մեր Արթուրի ասած՝ նա մաքուր դիակ է: 1991 թվականին մեր հրամանատարությունը՝ Լեոնիդ Ազգալդյանը եւ Վլադիմիր Բալայանը, ասել են, որ հայ զինվորը իրավունք չունի թալանին ձեռք մեկնի: Եթե զինվորը կռվելիս ընկավ թալանով, համարիր, որ դիակ է դարձել: Եղել է նաեւ՝ երբ գյուղը գրավել ենք, մտել ենք տուն, մեր ջոկատի զինվորներից մեկը մի մագնիտոֆոն ձեռքին դուրս է եկել, Ազգալդյանը տեսել է, ասել. «Ձենքը դիր, գնա ձեր տուն»: Մեր ջոկատում ամենավատ բանը զենքը դնելն էր: Ինչպես, օրինակ, մեր բանակում ընդունված է, որ սպային տալիս են թուղթ, որ նրա աստիճանը համապատասխանում է պաշտոնին: Պաշտոնի անհամապատասխանության առիթ են փնտրում, որ դրանով պետական բյուջեի գումարները տնտեսեն: Մեր պատերազմը դեռ չի ավարտվել...

Բ. - Միրբաշիրի գրավման խնդրում ես համաձայն չեմ ձեզ հետ:

Մարտակերտի ուղղությամբ ուղղակի գունդը հորդ անձրեւի պայմաններում պատրաստ չէր գործողությանը: Հետո հրադադարի պայմանագիրը գործեց:

Ս. Պողոսյան - Գուցե եւ...

Ա. Ավանեսյան - Ասում են՝ պատերազմը 1994 թվականին ավարտվել է, բայց ես կռվի ժամանակ այնքան գործ չեմ արել, որքան կռիվը դադարելուց հետո:

Պատմում է Արա Խուդավերդյանը
02.12.2005 թ., Երեւան



Ա.Խ. - 1988 թվականին մենք աղջիկներից հավաքում էինք դեզադորներ, լիցքավորում էինք պայթուցիկներով, մեխերով եւ տեղափոխում Արցախ:

Բ. - Այդպիսի բան օգտագործվել է՞ որեւէ տեղ:

Ա.Խ. - Չի օգտագործվել, բայց չեղած տեղից լավագույնն էր, որ գոնե ձեռքներիս մի բան լիներ: Դա մինչեւ երկրաշարժն էր: Հայաստանում դրանով զբաղվում էին երկու խումբ: Մենք այդ ժամանակ տեղակայված էինք Գրողների միության շենքում: Պարետային ժամ էր, լիցքավորված դեզադորները պիտի Կարապի լճի մոտ փոխանցեինք Արցախից եկած մի տղայի:

Բ. - Անունը գիտե՞ք:

Ա.Խ. - Անուններով չէինք դիմում միմյանց:

Թատերական հրապարակից հնչեցին առաջին կոչերը՝ «Օգնություն Ղնաբերդին, կամավորներ գնան եւ պաշտպանության կանգնեն Ղնաբերդին»: Այդպես ստեղծվեց «Յոթ հրաշալիների» խումբը. ես էի, Գրիգորյանը, Արտակը, Մալական Կարենը, Արաբո Աշոտը, ապարանցի Գոգան, ապարանցի Մարտինը: Ունեինք երկրորդ պլանի տղաներ, որոնք զբաղվում էին զինագործությամբ. զինագործ Ռուբոն էր, արտաշատցի Սամսոնը, հրազդանցի հացադուլավոր Գեւորգը, Խելառ Սասունը: Փորձում էինք ստանալ հրազենի փող: 1989-ին, երբ Գորիսում մեր չոբաններին սպանեցին, մեխեր էին խփել չոբանների ոտքերին...

Երբ Ղնաբերդից վերադարձանք, Կոռնիձորի չոբանների սպանությունից հետո «Ղարաբաղ» կոմիտեից Կոռնիձոր մեկնելու հրահանգ եկավ՝ պաշտպանելու Զանգեզուրի դարպասները: Յոթ հոգուն գումարվեցին ուջանցի Հարութի տղաները, ու մեկնեցինք Կոռնիձոր: Մենք ինքնաշեն նռնակներ ունեինք: Վերցնում էինք կոյուղատար խողովակները, որ չուգունից էին, լիցքավորում էինք ու փորձարկում: Գորիսում առաջին իսկ կրակոցներից զոհվեց ուջանցի Նորիկը: Պրովոկացիոն գործունեություն սկսեցինք թշնամու թիկունքում: Երեք հոգու ուղարկեցինք թիկունք: Կոռնիձորի տակ մի կողմը Գյուլիբերդի ճանապարհն էր, իսկ մյուս ճանապարհը քրդական գյուղ էր տանում: Եկեղեցու հետեւից տղաները կրակեցին մեզ վրա, եւ մենք գնացինք մարտի: Թշնա-

մին զոհեր տվեց, իսկ մենք ոչ մի զոհ ու վիրավոր չունեցանք: Դա մեր առաջին մկրտությունն էր: Չալավեկ Մրդոն էշի վրա դրեց մարտկոցներ ու լապտերներ՝ դիմացից ու ետեւից: Նա «ԼԱԶ»-ի վարորդ էր: Մենք որ գնում էինք հերթափոխության, էշը մեզ հետ տանում էինք: Այդ ժամանակ աղմուկ հանեց «լազեր գյալդի, էրմանի լազերի» պատմությունը: Կոռնիձոր եկավ միութենական հանձնաժողով՝ կազմված պետանվտանգության, ներքին գործերի, դատախազության եւ քաղաքարատի ներկայացուցիչներից: Խոսակցությունը «լազերի» մասին էր: Ասացինք, որ մենք նման բան չունենք: Զենքերը, հրացանները պատից կախված էին, անգամ տղաներից մեկի դոշին կարաբինի փամփուշտներ էին, ձեռքին՝ հրացան: Ռուսները խնդացին, թե՝ ա՛յ քեզ հիմար... Տղաներից երեքին՝ Ապարանցի Մրդոյին, Չաուշին եւ Ղարաբաղի Աշոտին հանձնարարեցի անցնել թիկունք՝ հերթական կրակոցը արձակելու:

Բ. - Այդ սադրանքը ու՞մ համար էր:

Ա.Խ. - Ռուսների, Խորհրդային Միության ղեկավարության, որպեսզի համոզվեին, որ մեր զենքը երեք աստիճան ցածր էր նրանց զենքից: Տղաների հետ իջանք ձոր, ու Հայաստանի տարածքում երկրորդ մարտը տվեցինք: Այս անգամ շատացել էինք: Ցոթ հոգի մենք էինք, ու մեզ միացել էին հոկտեմբերյանցի Կորյունը, երեք մարտունեցի տղաներ, արտաշատցի Սամոյենք՝ երեք հոգով, Գագոն եկավ: Տեղից Կամոն ու Անդրյուշան բազայից զենք էին բերում: Տասնչորս հոգի էինք: «Աբրեզը» որ կրակում էինք, իմ ձեռքին էր, ես էի կրակում, ոնց որ թնդանոթ խփեր, հզոր ձայն ուներ: Դա ռուսական բանակի ներկայացուցիչներին թյուրիմացության մեջ էր գցում. ձայնը թնդանոթի էր, բայց պայթյուն չկար: Տղաները հակառակորդի թիկունքից շարժվում էին դեպի մեզ ու չորս ժամ ընկան խաչաձեւ կրակոցների տակ: Լաչինում սկսվել էր շինարարություն: «Ղարաբաղ» կոմիտեն հայտարարեց, որ այդ շինարարությունը պիտի կանգնեցվի: Անվադողերի մեջ լիցքավորեցինք պայթուցիկները եւ գլորեցինք Արավուզ գյուղի վրա (այն ամենահարմար բարձր դիրքն ուներ), որ եթե վնաս չբերի, գոնե ահազանգ կհասնի վտանգի առումով, եւ կկասեցնեն շինարարությունը: Զինագործ Դոստիին հանձնարարեցի, որ փորձի զինափողեր ստանալ: Արտակի հետ օրնիբուն աշխատում էին: Լավ թե վատ՝ ստացվում էր: Իմ տղաներից զինագործ Էդիկը հայկական առաջին «ավտոմատիչեսկի» կարաբինը Սիսիանի տարածքում ստեղծեց: «ԱԿՍ»-ի փամփուշտ շատ ունեինք: Կոռնիձորից եկանք Երասխավան, երբ լսեցինք Երասխավանի կռիվների մասին: Մեր պարոլը այսպիսին էր՝ «Փողկապներդ կապեք, գնում ենք հարսանիք». դա նշանակում էր՝ զենքերդ վերցրեք, գնում ենք կռիվ: Գնացինք Երասխավանի կռվին: Մինչեւ մեր հասնելը՝ զոհեր էին

եղել, գերիներ ունեինք: Ցոթ հոգով անցանք թիկունք, քանի որ թուրքերը հայտարարել էին, թե պետք է դիակները այրեն սարի փեշին: Բանակցությունների էին եկել Բաբկեն Արարքցյանը, գեներալ-լեյտենանտ Սամսոնովը: Անցանք թիկունք: Մենք հրաման ունեինք չկրակել, ոչինչ չանել, երբ հրթիռը կխփի, դա մեր ետ գալու ազդանշանը կլինի: Բանակցությունները տեւեցին երեք րոպե: Տեսնում էինք՝ պետավտոտեսչության կետում խոսեցին շատ կարճ ու ետ դարձան: Ռացիայով հայտնեցին, որ Սամսոնովն ասել է՝ «Эти скоты...»: Հասկացանք, որ դիակները չեն տվել: Դեմ-դիմաց զուգարանում նստած էր մի թուրք: Նա շորերը մի կերպ հավաքելով, «էրմանի, էրմանի գյալդի» ասելով գնաց: Մինչեւ նրանք դուրս կգային, ես գլորվեցի ներքեւ, տեղս փոխեցի: Սկսեցին կրակել իմ կանգնած տեղի վրա: Մենք մի քիչ ետ քաշվեցինք, թիկունքն ամրապնդեցինք: Մեզ հետ էին օտար ջոկատի հրամանատար Սարգսյան Արմենը եւ տուրիստական բազայից Խաչատրյան Սամվելը, որ միացել էր մեզ՝ որպես «Կոռնիձոր» ջոկատի առանձին խումբ: Մեզ հետ էր նաեւ Երեւանից մի տղա, որը հանցագործ աշխարհից էր, նրա կարգախոսն էր. «Մի քաշ պլան գցեն Նախիջեւան, գրոհելով կգնանք»: Չպատկերացրինք, թե ոնց փախավ՝ կեղտոտված շալվարը թողնելով լեռնալանջին: Մութն ընկնելուն պես նահանջ ապահովելով՝ ետ քաշվեցինք: Տասնհինգ օր Երասխավանում մնացինք, դիրքերն ամրապնդեցինք, արարատցիները համախմբվեցին, ջոկատային համակարգը սկսեց աշխուժանալ: Արարատցի Լայերտը բերեց առաջին «Ալազան» կայանքը: Մինչեւ 1991-ը մենք ետ վերադարձանք: Մեզ ուղարկեցին Իջեւան, Իջեւանում գործունեությունը ծավալվեց, ետ եկանք, ուղարկեցին Շամշադին: Շամշադինում զոհվեց Վոժդը: Մենք վերեւում էինք, նրանք՝ տակը: Նրանց հանեցին, տարան Մովսես գյուղի կողմը: Մինչեւ մարտը դիմացի բլրի ազերիների հետ ավարտեցինք, երեկոյան բոթը հասավ մեզ, որ Միշիկը խփվել է: Միշիկը այնտեղ ընդհանուր հրամանատար էր նշանակվել: Տղաներից ում հարցրինք, թե՝ ոչինչ չեմ տեսել, ոչինչ չեմ լսել, ինչ-որ մեկը տեսել է, բայց ոչինչ չգիտեմ... Ոչինչ չկարողացանք պարզել:

1991-ին տեղակայվեցինք Կարաչինար գյուղում: Մեզ հետ էին երկու բժիշկներ եւ տեր Գրիգոր քահանան: Կռիվներում հասկացանք, որ տեր Գրիգոր քահանան Աստծո զավակն է: Որպես հրամանատար իմ գործունեությունը սկսել եմ Կոռնիձորով, ավարտել Հորադիզում, անցած ճանապարհս՝ Վերին Շենի, Էրքեջի մարտերը: Մարաղայում, Կարմիրավանում չհասցրինք, մինչեւ հասանք, արդեն գյուղը դատարկվել էր, ՕՄՕՆ-ը լցված էր: Շահումյանում էինք, արցախյան բարբառը չէինք հասկանում: Նոր բազավորվել էինք, հարեւանը եկավ, հարցրեց. «Հրամանատար, լոխ տեղ ը՞ն»: Մթերք էին տվել, որ հաց

սարքեն: Ասացի. «Չէ՛, մորքուր, լոխա չունենք»: Ու մի քանի ժամ սպասում ենք, որ հաց պիտի բերեն: Մորքուրը եկավ Երեւանից եկած շահումյանցու հետ: Նա բացատրեց, որ ես սխալ եմ հասկացել, այդ կինը ասում է՝ «Բոլորդ այստե՞ղ եք, հացը բերե՞մ»: Կարաչինարում սկսեցինք մեր դիրքերը ամրապնդել Շեֆեկի դեմը: Մեզ մոտ ուղարկեցին նաեւ Հատուկ գնդի Հրազդանի վաշտը: Շտաբում Ֆելոն էր, Երջանիկ Աբգարյանը, Դալիբալթայանը եկավ ու գնաց, Շահեն Մեղրյանն էր եւ Սմբատ Այվազյանը: Կուճի Շահենը Խարխափուտի ավտոբազայում էր: Էրքեջի գրավման ժամանակ Ֆելիքսը, տղաների դեմքին նայելով, խոսքն ուղղեց ինձ. «Արայի՛կ, մի բան ասա»: Մարդիկ կային, որ առաջին անգամ էին մարտի մեջ մտնելու: Ֆելիքսը, որպեսզի հաղթանակը մեր կողմը լինի, մեկին տասը ծանրացնելով ներկայացրեց պրոցեսը: Առաջին հարձակումից թուրքերին Էրքեջից դուրս մղեցինք, մինչեւ ժամը չորսը գյուղը պահեցինք մեր ձեռքին: Ես, աբովյանցի Կնյազը ու Դոստին վիրավորվեցինք, մեզ խփեց նշանաձիգը: Գնացինք հիվանդանոց: Կնյազը չէր կարող տեղից շարժվել, նրա փորին խփել էին, մեջքից դուրս էր եկել: Վիրակապ դրեցինք, նորից վերադարձանք մարտագոտի, որտեղ մեր վրայով թռչում էին ռուսական ուղղաթիռները՝ հայտարարելով, որ լքենք «ադրբեջանական» Էրքեջ գյուղը, դիմադրության դեպքում օդից կռմբակոծեն: Քաշվեցինք անտառ ու սկսեցինք ուղղաթիռների վրա կրակել: Ուղղաթիռները հետ քաշվեցին: Երեկոյան հասանք Ներքին Շեն, հանդիպեցինք Շահենին, ասացինք, որ Էրքեջի տղաներին օժանդակ ուժեր ուղարկեն, որպեսզի հաջորդ հարձակումը նախապատրաստենք: Գործողությունն անցավ հաջող: Կապվեցի Հայաստան՝ Վազգենի հետ, ասացի, որ մինչեւ ժամը չորսը մենք թուրքերի մաման լացեցրինք, չորսից հետո գյուղը հանձնեցինք, ուրիշ ճար չունեինք, քանի որ ՕՄՕՆ-ը եւ Ազգային ճակատի օժանդակ ուժերը եկան, դրան գումարած՝ ռուսները: Ադրբեջանցիների կողմից ռուսական Քսաներեքերորդ դիվիզիայի ներկայությունը Շահումյանի բոլոր մասերում եղել է պարտադիր: Դրան հետեւեցին Վերին Շենի կռիվները Շամփռապտուկի տակ: Դրսի դիտորդներից ներկա էին Շաբատը, գեներալ-մայոր Գայդարը՝ «Կրասնայա զվեզդա»-ի խմբագիրը, Ելցինի խորհրդականը՝ Միխայլիչը: Նրանք դիտորդի կարգավիճակով բարձրանում են դիրքեր: Ադրբեջանցիները պահում էին կրակի տակ՝ ժամը տասներկուսից մինչեւ երեկոյան ութը: Ինձ Կարաչինարից կանչեցին Վերին Շեն: Բարձրացանք վերեւ, որտեղ Սամվել Վարդանյանի տղաներն էին: Արդեն պատրաստվել էինք օգնության գնալ, «տակը թրջած»՝ Մոսկվայի խորհրդի պատգամավորներից մեկը եկավ, դեռ շտաբ չմտած՝ «Տղանե՛ր, դուք իսկական հերոսներ եք, այդ ազերիներին պիտի սպանել, մերոնցից կեսը կրակի տակ են, ես հազիվ, մազապուրծ փախել եմ»: Գայդարն ասաց. «Մենք գիտենք, որ նրանք հերոս են, կարեւորը ժողովուրդն ու պետությունը գնահատեն»: Բարձրացանք վերեւ, երկուսին էլ հանեցինք. մեկը կին էր, մեկը տղամարդ: Մի ուրիշ տղամարդ էլ բավական երկար ճանապարհ էր անցել, մի փոս էր գտել, մեջը նստել: Նրանց բերինք շտաբ, հանձնեցինք Ֆելոյին, ասացինք. «Վաղը առավոտ թռիչքը կլինի՝ կուղարկես»: Կարաչինարի ժողովուրդը եկել էր բազա: Բազան հիվանդանոցն էր: Թե՝ «Հրամանատար, մատաղ, ի՞նչ է լինելու, անձնագրային ռեժիմ է լինելու, ձեզ կվերցնեն, շորերդ փոխեք, մենք ձեզ կպահենք»: Ասացի. «Ոչ մի դեպքում»: Ռադիոկապը ապահովում էր Սերգեյը: Բարձրացա Վերին Շեն, Սերգեյին ասացի, որ կապվի Երեւան: Կապվեց Երեւան՝ կոմիտեի հետ, ասացին. «Տղե՛րք, զգույշ եղեք, ԳԿՉՊ-ն է...»: Ասացի. «Դու՛ք զգույշ եղեք, կարող է այդտեղ օժանդակ ուժեր պետք լինեն, որպեսզի ձեռք բերածը կարողանաք պահել, եթե այդտեղ կորցրիք, սա արդեն կորած է»: Ռուսական զրահամեքենաները Կարաչինարի ու Շեֆեկի մոտ կանգնած էին, բայց առաջ չէին գալիս: Գործարանի մոտ իմ դիրքերն էին, Գաղտուտով բարձրանում էր Մանասի թաղ: Գաղտուտի ու Կարաչինարի միջեւ գիծ չկար, մի փոքր ձոր էր բաժանում Գաղտուտի վրայով, եւ մի խրամատ, այդ ժամանակ դեռ խրամատ էլ չէինք փորել, օգտվում էինք բաղի թմբից: Ձեթի տան անկյունները, փողոցի այն կողմը՝ թուրքի տան այգու անկյունները, դարձել էին մեզ համար կրակակետեր: Մի քիչ առաջ էինք գնացել: Մյուս թեւը Մանասի թաղի դիրքերն էին, «Պոպոքանոցի» դիրքերը, այդտեղ էլ առուն էինք խրամատ դարձրել: Իսկ գործարանի աջ կողմի ճանապարհի վրա իրար վրա շարված էին «կուբիկները» որոնք ութ հարյուր կիլոգրամ էին թե մեկ տոննա երկու հարյուր կիլոգրամ: Մի կողմը տղաներից մեկը կարաբինով էր նստած, մյուսը՝ ինքնաշեն «ԱԳՍ»-ով: Մարտական տասնյոթ կետ էր: Դրան գումարած՝ ինը հոգի ռեզերվային բազայում էին, որոնք զենք չունեին: Հակառակորդը մեր դեմ բերեց ՕՄՕՆ-ի վաշտը, ստեղծեցին նաեւ Հատուկ նշանակության ջոկատ ներքին գործերի համակարգի «ԲԽՍՍ» ծառայությունով: Ռուսական «ՄԻ-8» ուղղաթիռ անցավ մեր կողմը, փամփուշտներով խփեցինք: Մեր աջ ու ձախ կրակոցներից ուղղաթիռը տատանվեց ու ընկավ Գաղտուտի կողմը: Մեր օդաչուների ասելով՝ եթե կարողանար վերեւ բարձրանալ ու դեպի ձախ գնար, կընկներ իրենց տարածքում: Մինչեւ հասանք այնտեղ, Դաշնակցության տղաներից երկուսը՝ մեկը Երեւանից, մյուսը Թալինից, մոտենում են ուղղաթիռին եւ օդաչուին ու խմբին իջեցնում են: Խմբից մեկը, որը վիրավորվել էր, իջնելիս մեր տղաներին խփում է: Իսկ սրանք փամփուշտներ չեն ունենում: Մինչեւ հասանք այդ տարածքը, ուղղաթիռը վերեւ բարձրացավ, երեսուն մետր անցավ ու նստեց: Նորից

սկսեցինք ուղղաթիռի վրա կրակել: Շաբաթի տվայալներով՝ չորս զոհ է եղել, երեք վիրավոր:

Կարաչինարի մարտից հետո մեզ խփում էին: Օգնության էին եկել Մարտակերտի Վլադիմիրի տղաները: Տղաներից մեկը խփվեց գյուղի ներքեւում՝ թուրքի տան տակ: Չէինք հասկանում, թե կրակոցը որտեղից էր: Շաբաթի օգնությամբ պարզեցինք, որ տան տակի քարերը հանած են, որտեղից նրանք պառկած վիճակում աշխատում էին: Մենք նվեր ուղարկեցինք մի հատ «ՌՊԳ-5» եւ մի հատ Հայաստանի «շանթերից», որից հետո բանակցային փուլ սկսվեց: Շաբաթը գնաց ներս, ետ եկավ եւ թուրքի լեզվով տնազ արեց. «Брат, понимайте, двенадцать из моих лучших убили»: Այսինքն՝ երբ մենք նռնականետը պատուհանով ներս ենք մտցրել, կպել է պատին ու պայթել: Տասներկու հոգի այդ սենյակում են եղել:

Կարաչինարում՝ Զեւայի կողմից, Կիրովաբադի գործկոմի նախագահի ընտանիքը «Ժիգուլիով» գնալիս ճանապարհը շփոթում է ու ընկնում մեր ձեռքը: Զանգեցի շտաբ. «Շտապ եկե՛ք, այն կողմից գերիներ կան»: Տղաները ասացին. «Հրամանատա՛ր, դուք հասկանու՞մ եք, թե նրանք մեզ հետ ինչ էին անում, պիտի թողնեք, որ նրանց անարգենք եւ մեր վրեժը լուծենք»: Ասացի. «Տորմուզ տվե՛ք»: Այդ պահին շտաբից մերոնք՝ Ֆելոն, Երջոն, Շահենը, ռուսական ներկայացուցիչները, դիտորդները եկան: Ասացին. «Դու դրանց մատով կպե՞լ ես»: Նրանց անիջապես զանգել, հարցրել էին՝ կարո՞ղ է այստեղ մոլորված լինեն: Հիմա եկել էր փոխանակելու պահը: Մեզ չորս գերիների՝ Մարտակերտի խաղաղ բնակիչների տվեցին: Մինչ փոխանակումը՝ կանգնած էին նրանց ՊԱԿ-ի տղաները, երեխաների հայրը: Մեր կողմից կանգնած էինք մենք, տեղական իշխանությունը: Դիտորդներից էին Շաբաթը, Գայդարը, Միխայլիչը: Հայրը աղջկան հարցրեց. «Ո՞նց է քո վիճակը»: Աղջիկը չգիտեմ ինչ պատասխանեց. փոխանակումից հետո ինձ պարզ դարձավ: Հայրը մոտեցավ մեզ: Շաբաթը ասաց՝ «Ուզում է գալ, ձեզ հետ երկու բառ փոխանակել»: Ասացի՝ ի՞նձ հետ, ասաց՝ այո: Եկավ, մաքուր ռուսերենով ասաց. «Ես պաշտում եմ քեզ, աստված թող ձեզ հաղթանակ տա: Թույլ տվեք համբուրել ձեր զինվորական սապոգները: Եթե իմ աղջիկը ընկներ մերոնց կամ ՕՄՕՆ-ականների ձեռքը, ապա կբռնաբարեին նրան»: Ասացի. «Ես ի՞նչ կապ ունեմ», թե. «Աղջիկս ասաց, որ դու թույլ չես տվել»: Աբգարյան Երջանիկն ասաց. «Միայն լեգենդների կոշիկներն են համբուրում: Հայկական սապոգն էր համբուրում»: Շաբաթը ինքնագոհ ժպտաց, ասաց. «Вот так, сволочи, армянские войска всегда на высшем уровне стояли»: Ետ եկանք: Դրանից հետո ԳԿՉՊ-ն ջարդվեց Մոսկվայում: Ռուսաստանի գենշտաբի ներկայացուցիչը իջավ Շահումյան: Ամեն կերպ նրանց

պլանները չէին կատարվում: Մեր առջեւ խնդիր էր դրված՝ ազատագրել Շահումյանի տարածքները: Բոլոր ուժերը պիտի կենտրոնացնեինք, հաշվի առնեինք բոլոր միավորները եւ անցնեինք լայնածավալ հարձակման: 1991 թվականից Շահումյանում Մոնթե Մելքոնյանը եղել է ինձ հետ: Նրա Ավո անունը ես եմ կնքել Երեւանում: Ինձ կանչեց Ռաֆայել Ղազարյանը, ասաց. «Արայի՛կ, ԱՍԱԼԱ-ի տղաներից մեկին աշխարհի բազում երկրներում քաղաքական ապաստան չեն տալիս: Պիտի գա Հայաստան, եւ կցելու ենք քո ջոկատին: Քեզանից առաջին հերթին պահանջվում է նրա կյանքի անվտանգությունը, երկրորդը՝ քեզ հետ պիտի մասնակցի մարտական գործողություններին: Դրանից հետո կտեսնենք՝ այն մարդն է՞, որը մենք պատկերացնում ենք, թե՞ ոչ»: Մոնթեի հետ եկավ ֆրանսահայ լրագրողուհի Մարին, որն աշխատում էր թուրքական գործոնի վրա: Աշոտ Մանուչարյանն ասել էր նրա ով լինելը: Բացի եկեղեցուց՝ ուրիշ ոչինչ թույլ չէի տալիս նկարել: Մոնթեին Մարիամի հետ ուղարկեցինք Շահումյան: Ետ եկան, մեր ջոկատով գնացինք, Մոնթեն մեզ հետ էր: Նա արդեն Ավո էր, կարծեմ՝ Ավետիսյան: Ազգանունն էլ էինք փոխել, բայց այն չօգտագործվեց: Թոդանի երկրորդ գրավմանը Մոնթեն էլ էր մասնակցում: Թոդանը վերցրինք: Մոնթեից մենք սովորեցինք ռազմագիտության մեջ հայկական տերմինները: Օրինակ՝ «մագազին» բառը ոչ մի կերպ չէինք կարողանում թարգմանել: «Պահունակ» բառը առաջին անգամ ինչեց նրա բերանից: Ասում էր. «Ձեզ հետ շփվելու համար նախ պիտի ռուսերեն սովորեմ»: Վազգենի մոտ էի, այնտեղ էին Քոչարյան Աբոն, Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հարցրեցին Մոնթեի մասին, ասացի, որ նրա հայրենասիրությունը, ռազմական գործի իմացությունը, կազմակերպչական ջիղը բարձր մակարդակի վրա են, նրան կարելի է հրամանատար նշանակել, եւ առաջարկեցի ուղարկել Մարտունի: Այնտեղ ուղարկեցի նաեւ Աշոտին, Քաչալին, Մասիվից Հովսեփին, ղարաբաղցի Սեւ դեւին, Մարդոյին՝ ԱՍԱԼԱ-ից երկրորդ տղային, Մարտիրոսին, որի անունը կնքել էինք Գրիշ: Իմ տղաներից յոթ հոգու Մոնթեի հետ ուղարկեցի, ասացի. «Մարտունիում ում կուզես, կպահես, ում չէ՝ ետ կուղարկես, որովհետեւ իմ ձեռքերն էլ են թուլանում»: Ասաց. «Խնդիր չկա, այսուհետ ես կկազմակերպեմ Մարտունու խմբավորումների միավորումը»: Հանրապետականների հրամանատար Արթուրին եւ կենտրոնի Աշոտենց խմբին էլ ուղարկեցինք Մարտունու շրջան: Քաջ իմանալով տեղային բնույթի խաղերը, հակառակորդի ու ռուսական խաղերը, մերոնց՝ լիդերիզմի տանող խաղերը, որ բոլորը ձգտում են դառնալ գեներալ, առաջին դեմք, այդ ամենը հաշվի առնելով՝ Մոնթեն կարողացավ Մարտունին դուրս բերել այդ վիճակից:

1991 թվականի դեկտեմբերին մենք Շահումյանից վերադարձանք :

Տղաներից մեկի ծննդյան օրն էինք նշում. Մոնթեն էր, Գրիշան, Հայաստանի ջոկատների տղաներից էին: Գիշերը Մոնթեին ասացի. «Երեւի այսօրվանից մենք բաժանվենք, դու կգնաս Մարտունի»: Համաձայնության գալով Արցախի իշխանությունների հետ՝ Նա գնաց Մարտունի եւ անցավ իր գործին: Մի քանի օր հետո Վազգենը զանգեց. «Արայի՛կ, արդեն Շուշիից գրադով խփում են Ստեփանակերտին, մենք չունենք համապատասխան միջոց, պիտի «Գրադ» կայանք տեղափոխվի Արցախ»: Պայմանավորվեցինք. ես եւ իմ տղաները պիտի այլուր տեղափոխենք մարդկանց սովից փրկելու համար: Հետո պիտի գրավենք «Էրեբունի» ռազմական օդակայանը: Վազգենն ասաց. «Մի բան էլ զգուշացնեմ, հինգ ջոկատ հարձակվել են, չեն կարողացել մտնել»:

Իջա ներքեւ, Սերգեյ Վանցյանի հետ ընդհանուր տարածքը նայեցինք, հերթապահությունը, շտաբը վերցրինք: Օդաչուներին բերեցինք, ասում են՝ չենք թռնում: Փողը տված էր, բայց Վրաստանի գենշտաբի կամակատարն էին: Խոսքս մեծ ուղղաթիռների մասին է: Մի թափքում մենք այլուրը բարձեցինք, մյուսում Մեղրյան Շահենենք բարձեցին: Ռուսական բազաները վերցված են, «Գրադը» տեղափոխել են Բասար, պատրաստվում ենք թռչել: Մեզ հետ վերցրինք մի «Կոբրա» ուղղաթիռ, որտեղ նստեցին Ռոբերտ Քոչարյանը, Օլեգ Եսայանը, Գեորգի Պետրոսյանը: Արցախի ղեկավարությունից բացակայում էր միայն Արթուր Մկրտչյանը: Հասանք Սեւան, վրացական օդուժը նշան տվեց. «Ձեզ կխփեն Օմարի վրա»: Կապիտանը կանչեց. «Командир, тебя хотят»: Ասացի.

- Да, я вас слушаю.
- Кто вы такой?
- Сын карабахского народа.
- Как вас звать?
- Воздушные пираты.
- Не понял!
- Что тут непонятного? Нам надо нести хлеб к своим.
- И боеприпасы.
- Какая тебе разница?
- Господин воздушный пират, на Омаре мы будем вас уничтожать...

Ռուսերենով տասնվեց հարկանի հայհոյանք նետեցի: Ուղղաթիռի վրա սառույց էր կապել: Օդաչուն ասաց. «Կապվենք Վանցյանի հետ, ներկայացնենք վիճակը, թող նա ասի՝ թռչե՞նք, թե՞ չէ»: Կապվեցի Վանցյանի հետ, ասաց. «Ամենամոտ օդակայանում իջեք»: Ասում եմ. «Յոթանասուն տոննա է, «ՄԻ-6» չի, որ ցանկացած դաշտում իջեցնես»: «Այդ դեպքում ետ եկեք Երեւան»,- ասաց: Եկանք Երեւան, օդաչուներին բերեցինք հյուրանոց, լավ խմեցրինք, որ մոռանան, թե ով է իրենց մաման: Առավոտյան ժամը յոթին նստեցինք ուղղաթիռը եւ՝ ուղիղ Բասար: Բասարում բեռնաթափեցինք, «Գրադը» մտցրինք ներս, Վանցյանի անձնակազմը՝ համոն, մյուսները եկան: Երեկոյան Վազգենը եկավ, ասացինք, որ ամեն ինչ լավ է: Ասաց. «Խոսելիք ունեմ քեզ հետ, շեֆը ասել է, որ քեզ ետ գցենք, առանց քեզ գնան»: Ասում եմ՝ «Հո չե՞ս ցնդել, այսքան գործը անելուց հետո... առաջին գրադը հասցնում ենք Արցախ: Մահվան վրայով ես կանցնեմ, բայց կհասցնենք»: Գիշերը՝ ժամը չորսին, վեր կենալու հրաման տվեցի: Երկու հոգու թողեցի ռազմական ուղղաթիռում, երրորդին չէր կարելի, մյուսներս նստեցինք քաղաքացիական ուղղաթիռները՝ մեր օդաչուների հետ. «չի կարելի» չկար: Ժամը չորսն անց կեսին մենք Օմարի դիրքերն անցանք: Վերեւից գալիս էր «Կոբրան»: Իջեցրինք Քոլատակ, հանձնեցինք համապատասխան մարդկանց: Մեր առջեւ դրված էր երկրորդ խնդիրը. միֆ պիտի արվեր եւ երեկոյան լուրերով հաղորդվեր, թե հայ ազատամարտիկները հակառակորդի մարտակերտյան դիրքերից գրավել են «Գրադ» կայանը: Հաղորդումը լսում ենք: Չայլուի տղաների՝ Ջամոյի, մյուսների հետ Միրբաշիրի վրայով անցանք թիկունք, ակցիա կատարեցինք՝ կրակոցներ, պայթյուններ: Շրջանցել ենք, Լենինավանի դաշտերով պտտվել, համարյա քառասուն կիլոմետր անցել, հասել ենք ՕՄՕՆ-ի բազային: Ինչ արել ենք, ՕՄՕՆ-ի բազայի վրա ենք արել: Ականներ էլ էինք դրել, մտել էինք ներս: Դետոնացիոն լարը դրել էինք ֆիթիլային լարի տեղ: Վառեցինք, դուրս եկանք: Պայթյունի համար հաշվարկել էինք տասնհինգ վայրկյան: Մի ժամ սպասեցինք, պայթյունը չէր լինում: Նրանք ակտիվացան, դուրս էին գալիս, զուգարան գնում: Հաջորդ օրը տղաները գերի վերցրին մի ձիով չոբանի, որին փոխանակեցին մի ցիստեռ նավթի հետ: Նրա տղան ՕՄՕՆ-ում միջին կարգի չինովնիկ էր, ներքին կարգով կազմակերպել էին փոխանակումը: Թուրք պապիկը ում տեսնում էր համազգեստով կամ մորուքով, ասում էր. «Աղջկաս, թոռանս կտամ քեզ, այդ կեղտոտ ազերիները...»: Երեւանից կապվեցին ինձ հետ, ասացին, որ ամեն ինչ լավ է, «Լրաբեր»-ով ինչ որ պետք է՝ ասվել է՝ որ մերոնք «Գրադով» խփել են այդ ուղղությամբ: Բայց իրականում ակցիան տեղի չունեցավ դետոնացիոն լարի պատճառով: Այդտեղից ետ եկանք: Հայաստանի հետ օդային ճանապարհը փակվել էր: Արկադի Տեր-Թադեւոսյանն ասաց, որ գնանք Շահումյան, այնտեղից թռիչք է լինելու, յոթ ուղղաթիռ են գալու: Մինչեւ Շահումյան գնալը մեր տղաներից մեկի համար Մարաղայից աղջիկ ուզեցինք: Գնացել էինք խնամախոսության, մնում էինք Չայլուում: Մարաղան արդեն կրակի տակ էր, Միրբաշիրից անընդհատ

խփում էին: Աղջկա անունը Սուսան էր, Շահումյանում էր սովորում: Իմ վարորդը, որ նաեւ զինվոր էր, հավանել էր նրան, ու սիրում էին իրար: Սուսանը տանն ասել էր, որ պիտի գան խնամախոսության: Ծնողները չէին համաձայնվել, թե՝ մենք հայաստանցուն աղջիկ չենք տա: Դրանք այն ժամանակներն էին, երբ Հայաստանից եկած ջոկատները շատ լկտի էին պահում իրենց: Գնացինք աղջկա տուն, ներկայացանք, ասացինք, թե ինչի համար են եկել, հայրը ասաց, որ դա լինելու բան չի: Ասում եմ. «Ժամանակ չունենք, կռիվ է, ասա՝ համաձայն եմ, վաղը գանք հարսանիք անենք»: Ոչ մի կերպ չէր համաձայնվում: Աղջկան ու տղային սենյակից դուրս հանեցի, ավտոմատը պահեցի հոր ճակատին, ասաց. «Հա, լավ, եկեք»: Հիմա էլ ստիպված էինք այդ մարդու հորը գտնել: Պարզեցինք, որ Վերին Հոռաթաղում է, բայց աղջկա հայրը չթողեց, որ մենք կանչենք, ասաց, որ շատ կզայրանա, երբ իմանա, որ առանց իր համաձայնության աղջկան տվել են: Հաջորդ օրը հարսանիքի համար մի խոզ, գինի, ալյուր ուղարկեցինք, ծաղիկներ գնեցինք սեղանը զարդարելու համար: Սեղանի շուրջը աղջկա հայրը խնդրեց, որ ձեւացնենք, թե նոր ենք ուզում իր աղջկան: Ասացի, որ ոչ ինձ կարող եմ խաբել, ոչ տարիքով մարդուն: Թամադան սկսեց կենաց ասել, պապը շուռ եկավ, թե՝ Ռաֆո՛, էդ առանց ինձ աղջկան տվել ե՞ս: Ասացի, որ աղջկան զոռով ենք վերցրել: Հարցրեց. «Փեսան ի՞նչ մասնագիտություն ունի»: Ասացի. «Ներկա պահին ֆիդայի է»: Թե՝ բա որ զոհվի: Ասացի. «Չի զոհվի, նա լավ կռվող է»: Ասաց. «Դե լավ, բախտավոր լինեն»: Օրվա առաջին կեսին քեֆ արեցինք, երկրորդ կեսին մարտը շարունակեցինք: Առաջին հարձակումը Մարաղայի վրա այդ օրը եղավ, մեզ էլ ստիպում էին՝ հարսին տարեք: Կոմանդոսն ասաց. «Գնացեք Շահումյան, երեք օրից ուղղաթիռների խումբ է իջնելու, համ էլ հարսին տուն կհասցնեք»: Նարեշտարում խփեցին մեր ուղղաթիռներին, բայց մեզ խաբար չկար, մենք պարում էինք, երգում, ուրախանում: Իջանք Ջերմուկում, շամշադինցի Գեղամն էր օդաչուն, հարցնում եմ. «Ինչի՞ ենք այստեղ իջել»: Ասաց, որ ուղղաթիռները խփել են: Մեր ուղղաթիռը թողած՝ վազել ենք մյուս ուղղաթիռների մոտ, մարդկանց ուշքի ենք բերում: Մի կին էր վիրավորվել հետույքից, աղջիկն էլ փոքր երեխա էր, անընդհատ ուշաթափվում էր: Ուշքի բերինք, հանգստացրինք, պատրաստվում էինք գնալ, օդաչու Գեղամն ասաց. «Էկիպաժը չպետք է նստի, մեզ խփել են, շուխուր չանենք»: Մեզ հետ մի բուժքրոջ էինք վերցրել, որի հայրը մահացել էր, նրան ոչինչ չէինք ասել, բայց նա ինչ-որ բան զգում էր: Տեսնենք՝ այդ աղջիկը տակը թրջել է, ասում է. «Դուք չտեսաք, գնդակը խփել է լիսեռին»: Գեղամը պնդում էր, որ անձնակազմից երեք հոգի պակասեցնեմ: Ասում եմ՝ ու՞մ, թե՝ հարս ու փեսային: Ասացի. «Միասին նստել ենք, այսքան ճանապարհ անցել, ճակա-

տագիրը նույնն է, եթե ընկնենք, ուրեմն միասին կընկնենք»: Երեւանում մեզ դիմավորեցին հրշեջ ծառայությունը, շտապ օգնության մեքենան:

Շուշիում «Գորշ գայլեր» խմբից մի ադրբեջանցու գերի վերցրինք: Մենք զոհ ունեինք, առավոտյան պատրաստվում էինք դիակը տեղափոխել, գերուն հանձնեցին ինձ: Ձեռնաշղթաները գցեցի օդակայանի մետաղյա ցանկապատից: Հաց բերին, կերակրեցին: Նստած հաց էր ուտում, մեր տղաները սկսեցին աջ ու ձախ խփել, թքել, քարեր շպրտել: Դիտողություն արեցի, թե՝ մի՛ արեք: Երբ տղաները սկսեցին ավելի ցինիկ վարվել, դիմեցի այդ թուրքին.

- Будешь драться с ними?

- Даûте мне оружие, еще одного армянина убью, потом убеûте меня.

- Մալադեց, դու լավ զինվոր ես: Թե ինչ վճիռ կկայացնեն, դա իմ գործը չէ, բայց իմ մոտից դու ողջ ու առողջ կգնաս:

Տղաները որ շատ զզվեցրին, ձեռնաշղթաները հանեցի ու ասացի. «Ո՞վ է հետը կռվում»: Մեկը չգտնվեց, որ նրա հետ ձեռնամարտի բռնվեր: Այնտեղ վանդակ կար, թուրքին ձեռքերն արձակած ուղարկեցի այդ վանդակում նստի: Հանգիստ, առանց փախչելու փորձ անելու գնաց, վանդակում նստեց: Տղաները դարձյալ սկսեցին քարերով խփել: Մեր զոհվածի դիակը եւ թուրք գերուն հրամանատարներից մեկի հետ ուղարկեցի Հայաստան:

Կոմանդոսի կարգադրությամբ գնացինք Նարեշտար: Մեր առջեւ խնդիր էր դրված. այն է՝ վերացնել հակառակորդի «Գրադը», «Շիլկան» եւ «ԶՍՈՒ»-ն: Եկանք Վաղուհաս, չորս հոգու տեղացի մի որսորդի հետ ուղարկեցինք հետախուզության: Տղաները վերադարձան, հայտնեցին թշնամու տվյալները, սկսեցինք մշակել հարձակման պլանը: Պիտի քսանյոթ կիլոմետր ոտքով անցնեինք, թռիչք կատարեինք լեռնային մասով: Զորակի տղաներից մեկը եկավ, ասաց. «Եկեք տեղներս փոխենք, դուք գնացեք Նարեշտար»: Բարձրանում էինք Նարեշտար, մի քանի սխալ տեղեկություններ հասան մեզ: Տղաներին ուղարկեցի հետախուզության, բերած տվյալները համեմատեցինք, չէին համապատասխանում մեր ունեցածի հետ: Նորից հետախույզներ ուղարկեցի: Ներքեւում անձրեւ էր՝ վերեւում ձյուն: Հասանք վերեւ, պարզվեց, որ այն մարդը, որը պիտի փակեր օգնության եկող ճանապարհը, ոչխարների հետ փոխանակել է մեր տեղեկությունը: Տղաները պատժեցին: Որոշել էին գնդակահարել: Ասացի, որ թողնում եմ իրենց խղճին: Այդ տղան Վանք գյուղից էր:

Բլուրների միջով որ բարձրանում էինք, ամեն բլրի վրա մի դասակ էր տեղակայված: Ես պրովոկացիոն կրակոցներ արձակեցի: Տղանե-

րին ասացի՝ հանգիստ նստեք: Սարի գագաթին էինք արդեն, Նարեշ-
տարը մեզնից ներքեւ էր: Թնդացին հակառակորդի կրակոցները: Զգա-
ցինք, որ շրջապատված ենք: Հաթերքի ձորակի տղաներից Բասմաչը
ուշացած, բայց հասավ վերեւ, ասաց. «Արո՛, մատաղ, հատուկ եկել եմ,
որ ասեմ՝ զգույշ եղեք, գործը ծախված է»: Բայց մենք արդեն գիտեինք
դա: Ծախված էր նաեւ օդուժը վերացնելու պրոցեսը: Սրբազանի մոտ
հավաքվել էինք. Սադոյանը, Շահինյան Սամվելը իրենց խոսքն ասա-
ցին, Դավթյան Գագիկը՝ Շահումյանի գործկոմի նախագահի տեղա-
կալը, իր խոսքն ասաց: Սրբազանը հարցրեց. «Նարեշտարը կարո՞ղ
ենք վերցնել»: Ասացի. «Մեկից մեկ, բայց կամ միայն հայաստանցիներ-
ով պիտի լինենք, կամ միայն ղարաբաղցիներով»: Ինձ հետ հարյուր
յոթանասունհինգ հոգի կային: Այդ ժամանակ թալանի ախորժակը մեծ
էր: Եթե միայն մենք մտնեինք մարտի մեջ, ես թույլ չէի տա թալանին
ձեռք տալ: Նախապատրաստվում էինք մարտի, մեզ պիտի միանային
Ստեփանակերտի տղաները: Նրանք ասացին, որ իրենք Հաթերքի ձո-
րակի տղաների հետ պիտի գնային: Կոմանդոսին ես բացատրեցի, թե
ինչու եմ ուզում միայն իմ խմբով գնալ:

Շահումյանում հույն լրագրող Դինա Վայենա կար, տեր Գրիգորին
ասաց. «Դալի բաբա, Դուք հիմա հոգեւորական ե՞ք, թե՞ զինվոր»: Տեր
Գրիգորը պատասխանի փոխարեն խաչը դրեց, ատրճանակը վերց-
րեց, լիցքավորեց ու կրակեց, դրեց տեղը, խաչը վերցրեց՝ օրհնու-
թյամբ: Այդ աղջիկը «Դալի բաբա» վերնագրով հոդված տպեց: Տեր
Գրիգորը Շահումյանում Քրիստոսի տանջանք կրեց, քանի որ մարդիկ
դժվարությամբ էին հավատքի գալիս: Կարաչինարի ու Գաղտուտի
արանքում եկեղեցի կար, տեր Գրիգորը եկեղեցին բացեց, օրհնեց: Պա-
հակ ու մոմավաճառ բերեցինք: Հաջորդ օրը եկա, տեսա՝ եկեղեցում
շուն է, կով: Ասացի. «Ժողովու՛րդ, եթե մի անգամ էլ շուն ու կով տես-
նեմ եկեղեցում, կգնդակահարեմ, իմանամ տերն ով է՝ տիրոջն էլ
կգնդակահարեմ»:

Մեզ ուղարկեցին Լաչին՝ Մալխալաֆ: Գյուլիբերդում լուրջ պրոցես-
ներ էին տեղի ունեցել: Մեր՝ հայաստանցի տղաները դիրքերը թողել
էին, իջել Նոր տարին նշելու: Թուրքերն ավելի աչալուրջ են եղել, նստել
են դիրքերում: Եկանք, Վազգենն ասաց. «Լաչին պիտի գնալ, Հոչազում
տղաները, ոստիկանության ծառայողները, չեն դիմանում, «Արամոյի»,
Բազեյան Ալբերտի տղաները դիրքերը թողել են, մի խելքը գլխին մարդ
չենք կարողանում բերել, որ տիրություն անի, Մասիսի Լյովայենց ենք
նստեցրել, բայց դիրքերը պիտի իրենց տեղից առաջ տարվեն, պիտի
սարը վերցվի»: Դա այն մասում էր, որտեղ իբր տանկի մոտ մերոնցից
հինգ դիակ կար, Գյուլիբերդ տանող ճանապարհին էր: Գնացինք Լա-
չին, մնացինք Գեւորգյան Լյովայի բազայում: «Գորշ գայլերը» մեզնից

«դժգոհ» չմնացին. հորիզոնական դիրքով տարան իրենց ընկերներին:
Դա այն տարին էր, երբ մտան Կոռնիձոր, չորս հոգու տարան՝ բիձուն
ու երեխեքին: Հեռուստացույցով անընդհատ գովազդում էին, թե՝ պե-
չենի են տվել...

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգարյան Արմեն - 145, 149
Աբգարյան Երջանիկ - 92, 122, 185, 238, 240
Աբեղյան Վարդան - 33
Աբրահամյան Առնոլդ - 29
Ադամյան Հրաչիկ - 136
Ազարյան Ռուդիկ - 165
Ազգալդյան Լեոնիդ - 118, 125, 132, 221, 224, 225, 233
Ազիզով - 162, 163, 164, 165, 167
Ազոյան Բասենցի - 69
Աթայան Սուրեն - 29
Աթանեսյան Գագիկ - 191
Աթաջանյան Վալերիկ - 151
Ալավերդյան Նաիրա - 60
Ալեքսանյան Ալիկ - 81, 83
Ալեքսանյան Արթուր - 56, 57, 127, 143, 144, 206
Ալեքսեեւսկի Կիրիլ - 119, 121
Ալիեւ Հեյդար - 12, 37, 75, 132
Ակաեւ - 18
Աղաբալյան Նարինե - 123
Աղաբեկյան Արթուր - 39, 63, 65, 208
Աղալավյան Լենսեր - 135
Աղաջանյան Ամալյա - 140, 156
Աղաջանյան Էդո - 204
Աղաջանյան Ռոլես - 30, 39, 157
Աղաջանյան Սասուն - 208
Աղաջանյան Սիլվա - 140, 148
Աղաջանյան Վոլոդյա - 184
Աղավնի (բուժքույր) - 98, 104, 145
Այան Սլավիկ - 192
Այդինյան Էդիկ - 173, 178
Այվազյան Սմբատ - 92, 93, 109, 122, 185, 188, 238
Անտոնյան Սուրիկ - 52, 59
Ապարանցի Մարտին - 235
Ապարանցի Մրդո - 236
Առուշանյան Աշոտ - 231, 232
Առուշանյան Բորիս - 30, 40
Ասլանյան Ռաֆիկ - 113, 137
Ասլանյան Սերժիկ - 88, 94
Ասրյան Սուրեն - 31
Ավակիմյան Լյովա - 145
Ավանեսյան Արթուր - 220, 222, 223, 224, 225, 228, 229, 232, 233
Արամո - 78
Արարքցյան Բաբկեն - 4, 19, 22, 75, 237
Արաֆաթ Ցասեր - 43
Արզումանյան Արթուր - 103
Արզումանյան Վովա - 145

Բաբայան Արամ - 29
Բաբայան Գագո - 167
Բաբայան Կարո - 207
Բաբայան Սամվել - 44, 49, 61, 66, 78, 79, 90, 99, 100, 103, 107, 114, 149, 150, 179, 195, 196, 203, 206, 211
Բաբայան Սեմյոն - 45, 136
Բաբուրյան Կարեն - 18 ,19, 158
Բագրատյան Հրանտ - 22, 26
Բադալյան Սլավիկ - 223
Բադունց Էդվարդ - 128, 129, 133
Բազեյան Ալբերտ - 246
Բալայան Արշավիր - 32
Բալայան Զորի - 9, 36, 37, 38, 39, 44, 45, 118, 125, 135, 137, 189
Բալայան Կիմ - 109, 136
Բալայան Վլադիմիր - 223, 232, 233
Բալանդեր Սաշա - 35
Բալասանյան Վիտալի - 44, 78, 79, 84, 157, 175

Բակատին - 24, 25, 26
Բաղդասարյան Ռուդիկ - 202
Բաղդասարյան Սլավիկ (Բուլուշ) - 206
Բաղդասարյան Սվետա - 174
Բաղիրյան Իլյիչ - 49, 103, 108, 110, 232
Բաղմանյան Հայկազ - 91, 104
Բաղրյան Վլադիկ - 138
Բասմաչ - 111, 246
Բարաննիկով - 23
Բարսեղյան Ալեքսան - 29, 30
Բարսեղյան Էդմոնդ - 123
Բեգլարյան Բարսեղ - 139
Բեգլարյան Վիկտոր - 136, 138
Բեգլարյան Վլադիմիր - 144
Բերդաձորի Անդրանիկ - 159
Բլախոտին - 158, 168
Բորյա (ջութակահար) - 60

Գաբրիելյան Գուրգեն - 29
Գալստյան Ժաննա - 89, 102, 104
Գալստյան Համբաձում - 39
Գալստյան Սուրիկ - 110
Գալստյան Վագիֆ - 91, 96, 104, 105, 185
Գալուստով Վահան - 4
Գասպարյան Ալիկ - 217
Գասպարյան Ժորա (Գրադի Ժորա) - 46, 52, 57, 64, 83, 91, 93, 99, 104, 112, 179
Գերասիմով - 35
Գզիրյան Աշոտ - 192
Գզողլյան Ֆելիքս - 48, 85, 93, 95, 96, 104, 122, 177, 185, 186, 187, 205
Գորբաչով Միխայիլ - 22, 23, 24, 25, 26, 27, 28, 30, 34, 36, 37, 38, 39, 40, 41, 141, 142, 151
Գորբաչովա Ռաիսա - 141
Գրաչով - 201
Գրիգորյան Ավետ - 166
Գրիգորյան Արթուր - 85
Գրիգորյան Համլետ - 163
Գրիգորյան Մանվել - 65, 200, 208, 209, 232
Գրիգորյան Ռուբեն - 30
Գրիգորյան Վաչագան - 38, 164, 170
Գրոմիկո - 141
Գուլիեւ Ռասուլ - 16, 18, 20
Գեւորգյան Բաբկեն - 93
Գեւորգյան Կարեն - 177
Գեւորգյան Լեւոն - 246
Գեւորգ Էմին - 5

Դադամյան Բորիս - 35, 44, 142, 143, 144, 170
Դալիբալթայան Գուրգեն - 48, 86, 93, 94, 95, 176, 177, 225, 226, 238
Դանիելյան Բորյա - 149
Դանիելյան Կոլյա - 202
Դանիելյան Նորայր - 49, 104, 105, 107, 127, 224, 226, 227, 230
Դանիելյան Սլավիկ - 209, 211, 212
Դավթյան Գագիկ - 246
Դավթյան Կոլյա - 129
Դավթյան Վլադիկ - 136
Դեմիրճյան Կարեն - 37
Դեմուրյան Ավիկ - 129
Դուբրովին - 141, 142
Դուշման Աբո - 210

Եսայան Օլեգ - 117, 152, 159, 242
Ելցին Բորիս - 17, 28, 238
Երիցյան Հովհաննես - 198
Երիցյան Պավել - 229

Զախարյան Արտակ - 52
Զենեւիչ - 57, 174
Զինագործ Դոստի - 236

Թովմասյան Արմեն - 128
Թովմասյան Ռոբերտ - 165
Թովմասյան Սերգեյ Սերգեյիչ - 165

Ժամկոչյան Մարտիրոս - 120, 129

Իշխանյան Յուրի - 39
Իշխանյան Վաչո - 203
Իսագուլով Արմեն - 68, 159
Իսախանյան Ռաֆիկ - 137
Իսրայելյան Ռուսլան - 203, 205
Իվանյան - 55, 56, 83, 155, 165, 179, 180, 181
Իվանով Ռուդիկ - 205

Լենին Վ.Ի. - 94
Լիգաչով - 38
Լոբով Վլադիմիր - 23
Լուկաշով - 201

Խալաստոյ Ազո - 91, 98, 100
Խաչատրյան Աշոտ - 185
Խաչատրյան Համլետ - 138
Խաչատրյան Ռոբերտ - 129
Խաչատրյան Սամվել - 237
Խաչատրյան Վլադիկ - 83, 188
Խելառ Սասուն - 235
Խիդիրյան Հակոբ - 185, 188, 190
Խնուշինակի Արթուր - 102
Խուդավերդյան Արա (Կոռնիձորի Արայիկ) - 235, 119, 120, 122, 130, 131

Ծառուկյան Անդրանիկ - 5

Կազիմիրով - 17, 19, 20
Կալինինչենկո - 23
Կամո (վարորդ) - 59, 209
Կապուտիկյան Սիլվա - 5, 38, 39, 141
Կարապետյան Արկադի (Դաշնակ Ազո) - 38, 156, 171, 202, 203, 205, 206, 39, 125, 203
Կարապետյան Կարո - 195
Կարապետյան Սամվել (Օգանովսկի) - 77, 98, 100, 208, 216, 218, 98
Կարապետյան Վալերի - 50
Կարապետյան Վլադիմիր - 140, 149, 152
Կարապետյան Վոլոդյա - 189
Կարապետյան Վրույր - 118
Կարնեշով Յուրի - 31
Կարո (Ֆրեզնոյից) - 129
Կաֆյան Արտեմ - 29
Կնյազ - 120, 122, 123, 124, 238
Կրոպով - 17
Կրկժանցի Սպարտակ - 176
Կեւորկով Բորիս - 33

Հակոբյան Ալեքսան - 109
Հակոբյան Բենիկ - 118, 119
Հակոբյան Ժորա - 139
Հակոբյան Մարատ - 84
Հակոբյան Մովսես - 153
Հակոբյան Սերգեյ - 113
Հակոբյան Վլադիկ - 154
Հակոբյան Ֆելիքս - 84
Համբարձումյան Սերգեյ - 141
Համբարձումյան Վիկտոր - 141
Համբարձումյան Վրեժ - 4
Հայկազյան Վարդան - 4
Հայր Վրթանես - 126, 132
Հայրապետյան (գնդ.) - 50
Հայրապետյան Էռնեստ - 30

Հայրապետյան Լեւոն - 138
Հայրապետյան Վալերի - 137
Հասանով - 22, 23, 25
Հարությունյան Աբրահամ - 145
Հարությունյան (գեն.) - 91
Հարությունյան Գրիգոր - 119
Հարությունյան Լեոնիդ - 4
Հարությունյան Համլետ - 134
Հարությունյան Հրաչ - 192
Հարությունյան Յուրա - 92
Հարությունյան Ռաֆիկ - 73
Հարությունյան Սամվել - 217
Հարությունյան Սուրիկ - 56, 104
Հովասափյան Շահեն - 183
Հովհաննիսյան Ալբերտ - 135
Հովհաննիսյան Անդրանիկ - 138
Հովհաննիսյան Կամո - 185
Հովհաննիսյան Յուրա (Քսանվեցի Յուրա) - 81, 104, 111, 126, 135, 136, 204, 211, 212
Հովհաննիսյան Վահան - 185, 194
Հովհաննիսյան Վարդան - 129
Հովսեփյան Հովսեփ - 100
Հումբաթով Ալաքրամ - 230

Ղազարյան Արարատ - 217
Ղազարյան Հայկ - 4
Ղազարյան Ռաֆայել - 40, 241
Ղամբարով Իսա - 16
Ղարիբյան Վահան - 217
Ղռերի Ավո - 192
Ղուլյան Աշոտ (Ասկոլկա, Բեկոր) - 81, 86, 90, 92, 203, 206, 213, 214
Ղուկասյան Արայիկ - 220, 222
Ղուկասյան Արկադի - 166
Ղուկասյան Էդուարդ - 148, 149

Մալական Կարեն - 235
Մալխասյան Վարդան - 185
Մամեդով - 67, 75, 107
Մայդանուկ Կոնստանտին - 33, 34
Մայիլյան Սամսոն - 185
Մանուկյան Գագիկ (Սեւանի Չոլ) - 94, 106
Մանուկյան Դավիթ - 106
Մանուկյան Վազգեն - 4, 31, 36, 37, 38, 39, 40, 43, 76, 191, 192, 193, 199, 203
Մանուկյան Ֆելիքս - 26, 27
Մանուչարյան Աշոտ - 13, 32, 40, 74, 75, 169, 241
Մանուչարով Արկադի - 29, 30, 35, 36, 37, 39, 40, 44, 45, 158, 159, 160, 161, 167, 168
Մասիսի Լյովա - 246
Մավիսակալյան Ռոբերտ - 125
Մարգարյան Հրանտ - 194
Մարդյան (գնդ.) - 103, 105
Մարտիրոսյան Անահիտ - 196
Մարտիրոսյան Գագիկ - 199
Մարտիրոսյան Շահեն - 200
Մարության Վալերի - 210
Մելիքյան Մարտիրոս (Մորուք Ռաֆո) - 106, 110, 131
Մելսիդա (բուժքույր) - 81
Մելքումյան Արմեն - 141
Մելքումյան Վազգեն - 29
Մեխակ (երգիչ) - 59
Մեղրյան Շահեն - 118, 119, 122, 131, 184, 185, 186, 187, 188, 189, 200, 201, 192, 193, 238, 242
Մեղրյան Պողոս - 185
Միխայիլ Արտյոմիչ (բժիշկ) - 137
Մինասյան Նելսոն - 202, 209
Միրզոյան Գրիգոր (Գիրո) - 220, 223, 224, 225, 227, 228, 229
Միրզոյան Մաքսիմ - 45, 136

Միրզոյան Ռուդիկ - 184
Միքայելյան Մարտուն - 82
Միքայելյան Սասուն - 88
Միքայելյան Վիլեն - 205
Մկրտչյան Արթուր - 43, 44, 242
Մկրտչյան Լավրենտի - 201
Մկրտչյան Շահեն - 135
Մնացականյան Լեւոն - 64, 218
Մելքոնյան Մոնթե (Ավո) - 49, 51, 63, 79, 107, 116, 120, 129, 130, 154, 174, 176, 177, 208, 239, 241, 242
Մովսիսյան Զավեն - 33
Մովսիսյան Լեւոն (Լոլո) -127
Մուզմուզ Կարեն - 204
Մութալիբով Այազ - 22, 23, 25, 205
Մուժիկով -201
Մուրադյան Գեղամ - 185
Մուրադյան Իգոր - 9, 36, 37, 117, 192, 203

Նավթալյան Արմեն - 103, 106, 116
Ներսիսյան Կարեն - 206
Նեւզորով Ալեքսանդր - 62, 85

Շաբաթ - 238, 240
Շահմուրադյան Սամվել - 92, 93, 94, 101, 102
Շահնազարյան Դավիթ - 69, 158
Շահնազարով - 41
Շամին Սերգեյ - 33, 34
Շիշմանյան Վարդան
Շապոշնիկով - 23, 25
Շաքարյան Սերգեյ - 29
Շումեյկո - 79, 19, 20
Շումանյան Արսեն - 203
Շիրինկուլով - 16, 18, 20
Շիրինյան Վիգեն - 38, 39, 160
Շիրխանյան Վահան - 76, 137

Ոսկան - 106
Ոսկանյան Նելլի - 60
Ոսկանյան Սամսոն - 194

Չալյան Սերգեյ - 115, 116, 126, 155, 186, 187, 188, 190, 209
Չատինյան Վազգեն -133
Չաուշ Լյովա - 123, 124, 131, 236
Չերնոմիրդին Վիկտոր - 23, 24
Չիթչյան Վալերի - 85

Պապայան Անտոն - 29
Պասկալեւա Ցվետանա - 122, 128
Պատվականյան Էրիկ - 151
Պարգեւ արք. Մարտիրոսյան - 79, 82, 82, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 131, 132, 143, 145, 152, 154, 156, 158
Պարույր Սեւակ - 5
Պետրոսյան Ալիկ - 59, 91, 92, 99, 100, 102, 103, 106, 113, 200
Պետրոսյան Գեորգի - 45, 242
Պետրոսյան Գեւորգ - 29
Պետրոսյան Լեոնարդ - 43
Պետրոսյան Կոլյա - 185
Պետրոսյան Կոստյա - 122
Պետրոսյան Հովիկ - 183
Պետրոսյան Մանուշակ - 171
Պետրոսյան Մուրադ - 36, 39, 125, 203
Պետրոսյան Ռազմիկ - 164, 169, 206
Պետրոսյան Վալերի - 145
Պողոսյան Բորիկ - 168
Պողոսյան Հենրիխ - 30, 33, 39, 141

Պողոսյան Սամվել - 220, 222, 224, 225, 226, 227, 228, 232, 233, 234
Պողոսյան Վալերի - 67
Պոչիկյան Արտաշես - 4
Պուտին Վլադիմիր - 41
Պրիմակով Եվգենի - 70

Զաքի Յուրա - 157, 158
Զալիլով - 18, 19, 20
Զերմուկի Համո - 105
Զիլավյան Սերժ - 137
Զհանգիրյան Յուրա - 29, 30

Ռաֆիկ սարկավագ - 121
Ռեյգան Ռոնալդ - 36
Ռիժկով Նիկոլայ - 72

Սահյան Սերգեյ - 128
Սախարով Անդրեյ - 35, 39
Սախինով Էդիկ - 128
Սաղյան Պավել - 145
Սամսոնով (գեն.) - 237
Սամվելյան Աբիգ - 135, 136, 137
Սայաթ-Նովա - 150
Սան Սանիչ (գեն.) - 50
Սարաջյան Արթուր - 184
Սարգսյան Արմեն - 235
Սարգսյան Գագիկ - 203, 206
Սարգսյան Գուրգեն - 138
Սարգսյան Հրաչ - 106, 160
Սարգսյան Ռոբերտ - 29
Սարգսյան Սերժ - 35, 46, 47, 50, 55, 58, 64, 76, 79, 83, 84, 102, 136, 140, 158, 165, 191, 193, 203, 205, 206, 207, 208, 211, 231
Սարգսյան Սոս - 38
Սարգսյան Վազգեն - 42, 43, 46, 57, 58, 69, 76, 77, 80, 88, 91, 93, 101, 103, 106, 125, 186, 189, 190, 192, 193, 200
Սարյան Մարտիրոս - 6
Սարուխանյան Վաչե - 9
Սաֆարյան Կամո - 171
Սաֆարյան Սամվել - 59
Սաֆոնով (գեն.) - 84, 158, 163, 168
Սեդոյ Միշիկ - 122
Սերոբյան Աիդա - 131
Սերովբե սրբազան - 5
Սիլաեւ - 22, 25, 26
Սիրադեղյան Վանո - 40
Սուխարեւ - 31, 34
Ստամբոլցյան Խաչիկ - 72
Ստարովոյտովա Գալինա - 35
Ստեփանյան Գենա - 184
Ստեփանյան Համլետ - 185
Ստեփանյան Եսայի - 4

Վազգեն Առաջին - 5
Վալերա (Լեպարդ) - 34
Վայենա Դինա (լրագրող) - 133, 246
Վանյան Նիկոլ - 124
Վանքի Յուրա - 57
Վասիսդաս - 124, 129, 130
Վարդանյան Խաչիկ - 185
Վարդանյան Շավարշ - 85, 158
Վարդանյան Սամվել - 119, 121, 127, 158, 159, 238
Վոժդ Միշիկ - 237
Վոլսկի Արկադի - 23, 24, 30, 141

Տեր-Գրիգորյան (գեն.) - 50
Տեր Գրիգոր քահ. Մարկոսյան - 117, 120, 123, 126, 127, 128, 130, 132, 246
Տեր-Գուլանյան Մերուժան - 109
Տեր Թադեւոս քահ. - 126
Տեր-Թադեւոսյան Արկադի - 48,

51, 79, 80, 86, 88, 89, 91, 92, 93, 153, 171, 172, 173, 181, 182, 203, 205, 212, 214, 244, 245, 246
Տեր Կորյուն քահ. - 118, 126, 132
Տեր Հովհաննես քահ. - 57, 125, 126, 132
Տեր-Պետրոսյան Լեւոն - 22, 24, 25, 27, 40, 76, 80, 189, 241

Ուլուբաբյան Բագրատ - 8, 29
Ուտյոս Արթուր - 89, 114

Փայտյան Արշալույս - 102
Փափազյան Արթուր - 48, 83, 86, 87

Քաղթալդյան Կարեն - 4
Քոկս Քերոլայն - 125
Քոչարյան Ալբերտ - 243
Քոչարյան Անդրանիկ - 192
Քոչարյան Շավարշ - 35
Քոչարյան Ռոբերտ - 30, 37, 40, 42, 43, 76, 79, 84, 136, 140, 142, 143, 158, 160, 161, 164, 169, 170, 171, 179, 207, 242

Օգանով Հենդո - 203
Օգանով Ռուդիկ - 162, 203
Օհանյան Սեյրան - 53, 54, 78, 86, 98, 104, 124, 152, 153, 159, 196, 197, 204, 207, 208, 212, 222, 229, 230
Օչերով Վալերի Պետրովիչ - 200, 201

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբովյան - 120, 121, 124, 158, 169
Ալանդյան կղզիներ - 17
Ալաշան - 93, 95, 105, 106, 154, 223, 224, 226
Ախալքալաք -198
Աղաբեկալինջ գյուղ - 195, 220, 223
Աղդաբան գյուղ - 215, 221
Աղդամ - 29, 32, 60, 78, 84, 86, 87, 89, 97, 157, 160, 174, 175, 205, 210, 216, 217
Աղջաբադ - 217
Ամարասի վանք - 83, 117, 127, 132, 156, 206
ԱՄՆ - 41, 133
Ասկերան - 44, 47, 50, 78, 84, 86, 136, 139, 154, 161, 172, 174, 175, 179, 210, 212, 217
Ավդալ գյուղ - 87
Արջաձոր գյուղ - 39, 49, 56, 60, 102, 103, 112, 207, 216
Արցախ - 11, 12, 13, 29, 71, 74, 79, 123, 129, 132, 183, 195, 235, 242, 243
Արեւմտյան Եվրոպա - 5
Արեւմտյան Հայաստան - 6, 8
Աֆղանստան - 108, 113, 172, 200, 225

Բալուջա գյուղ - 199
Բաղմանլար գյուղ - 217
Բաշինլար - 90
Բաքու - 13, 19, 20, 62, 122, 138, 145, 151, 161, 202
Բեյրութ - 43, 125
Բեռլին - 91
Բերդաձոր - 84, 138, 142, 145, 159, 162, 163
Բիշքեկ - 17, 18, 20
Բողուրխան լեռներ - 150
Բոյախմեդլի գյուղ - 216, 217
Բուդապեշտ - 34
Բուզլուխ գյուղ - 122, 131, 185, 187, 188
Բունիաթլու գյուղ - 37
Բուտիրկա - 33, 35

Գաղտուտ գյուղ - 185, 187, 192, 239, 246,
Գանձասար վանք - 43, 49, 56, 57, 58, 89, 99, 101, 113, 117, 118, 119, 121, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132
Գետավան գյուղ - 48, 95, 97, 98, 115, 178
Գյուլաթաղ գյուղ - 107, 109, 116, 233
Գյուլափլի գյուղ - 87
Գյուլիբերդ գյուղ - 235, 246
Գյուլիստան գյուղ - 119, 121, 131, 183, 185, 186, 188, 192
Գյումրի (Լենինական) - 59, 199, 198
Գյունափայա գյուղ - 90, 95
Գորիս - 84, 119, 173, 199, 200, 206, 209, 235

Դահրազ գյուղ - 37
Դաշուշեն գյուղ - 161, 205
Դրմբոն գյուղ - 47, 48, 54, 60, 63, 88, 97, 99, 104, 105, 110, 112, 137, 216

Երեւան - 4, 5, 6, 7, 8, 26, 27, 31, 33, 36, 37, 43, 44, 46, 47, 67, 76, 81, 83, 84, 88, 91, 97, 99, 100, 101, 102, 103, 105, 114, 117, 118

119, 120, 121, 123, 125, 127, 128, 129, 133, 134, 138, 143, 149, 150, 151, 165, 167, 168, 170, 183, 185, 186, 1888, 190, 192, 193, 195, 198, 199, 200, 201, 202, 203, 209, 212, 225, 235, 237, 238, 239, 242, 243, 245

Զանգեզան - 60, 228
Զնաբերդ - 235
Զոդ - 200
Զեւա գյուղ - 240

Էրքեջ գյուղ -122, 185, 187, 192, 237, 238

Թազաքյանդ գյուղ - 210
Թալին - 239
Թալիշ գյուղ - 37, 88, 102, 115, 147, 180, 192, 231, 232
Թաղլար գյուղ - 39
Թարթառ գետ - 66
Թբիլիսի (Թիֆլիս) - 201, 152, 165, 166, 167, 200
Թոդան գյուղ - 131, 241
Թուրքիա - 4, 72, 228

Ինդոնեզիա - 41
Իշըլար - 209, 210
Իջեւան - 16, 69, 110, 121, 122, 185, 237
Իսիկկուլ լիճ - 18

Լաչին - 13, 15, 79, 84, 127, 132, 163, 172, 173, 178, 179, 206, 217, 238, 246
Լեհաստան - 73
Լենինական գյուղ - 65, 77, 117, 243
Լեռնային Ղարաբաղ - 4, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 30, 32, 34, 37, 40, 41, 43, 44, 49, 56, 59, 68, 74, 77, 79, 83, 87, 90, 93, 98, 103, 107, 109, 112, 117, 119, 123, 127, 132, 134, 135, 136, 137, 138, 140, 141, 145, 151, 157, 159, 160, 168, 169, 171, 172, 179, 180, 183, 184, 186, 187, 189, 190, 193, 194, 198, 199, 202, 212, 214, 229, 235, 236
Լեֆորտովո բանտ - 33
ԼՂԻՄ - 8, 15
ԼՂՀ - 36, 46, 82, 157, 183, 193, 195
Լեւոնարխ գյուղ - 92, 11, 112, 115, 232

Խայփալու գյուղ - 211
Խաչեն գետ - 56, 104, 207
Խնուշինակ գյուղ - 102
Խոջալու - 38, 77, 78, 79, 86, 88, 89, 151, 161, 168, 202, 204, 211
ԽՍՀՄ (Խորհրդային Միություն) - 5, 7, 10, 13, 23, 24, 30, 31, 33, 34, 73, 141
Խրամորթ գյուղ - 87

Կամո - 119, 186
Կարադաղլու գյուղ -158, 163, 204
Կարակալպակիա - 10
Կարաչինար գյուղ - 120, 123, 130, 185, 186, 188,192, 237, 238, 239, 240, 246
Կարմիրավան գյուղ - 65, 91, 92, 237
Կարմիր կամուրջ - 22
Կարմիր շուկա գյուղ - 51, 53
Կիչան գյուղ - 56, 83, 102, 104, 112, 114, 142, 207, 208, 229
Կիրովաբաղ - 77, 79, 84, 120, 128, 129, 138, 195, 203, 240
Կիրովական - 37, 39
Կոճողոտ գյուղ - 60, 99, 100
Կոռնրձոր գյուղ - 119, 120, 122, 130, 131, 235, 237, 247
Կրասնոդար - 220
Կրկժան գյուղ - 124, 151, 159, 161, 203, 204, 205, 213

Հադրութ - 29, 39, 44, 50, 65, 110, 121, 137, 138, 142, 163, 171, 202, 208
Հաթերք գյուղ - 48, 49, 51, 56, 59, 60, 89, 90, 95, 96, 97, 99, 105, 113, 114, 115, 121, 137, 138, 189, 246
Հակոբ Կամարի գյուղ - 105, 232
Հայաստան - 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 20, 21, 22, 23, 24, 26, 31, 38, 40, 41, 42, 60, 68, 69, 70, 72, 73, 74, 76, 77, 79, 87, 92, 93, 114, 121, 135, 146, 147, 157, 159, 168, 173, 180, 183, 185, 186, 187, 188, 189, 200, 201, 203, 223, 224, 230, 235, 235, 237, 238, 240, 241, 242, 243, 245
Հասանաբաղ գյուղ - 56, 202
Հասանղայա գյուղ - 92, 110, 115, 116
Հարավ գյուղ - 29, 204
Հարությունագոմեր գյուղ - 57, 58, 60, 61, 98, 101, 195, 217
Հեռուստաաշտարակի բարձունք - 107, 110, 112, 116, 216, 218, 229, 230
Հոկտեմբերյան - 91, 110
Հորադիզ - 60, 2087, 209, 217, 237
Հրազդան - 78, 84, 88, 213, 238

Ղազախ - 16, 22
Ղազախստան - 10, 108
Ղազանչի գյուղ - 37, 39, 43, 90
Ղազարահող գյուղ - 99
Ղափան - 206, 209
Ղափանլու գյուղ - 222
Ղշլաղ գյուղ - 212
Ղոչազ լեռ - 179
Ղոչինլար գյուղ - 205
Ղրղզստան - 16, 17, 18, 20

Ճարտար գյուղ - 134, 138

Մադաթաշեն գյուղ - 212
Մալխալաֆ գյուղ - 246
Մալիբեյլու գյուղ - 153, 161, 170, 202, 205
Մաղավուզ գյուղ - 106, 112, 195, 223, 232
Մաճկալաշեն գյուղ - 65, 117
Մանաշիդ գյուղ - 122, 131, 185, 187, 188, 189, 192
Մասիս - 78, 246
Մատաղիս գյուղ - 105, 178, 209, 231, 232
Մարաղա գյուղ - 91, 237, 243, 244
Մարտակերտ - 39, 44, 46, 47, 48, 49, 50, 51, 53, 54, 55, 56, 60, 63, 65, 88, 90, 91, 92, 93, 96, 103, 105, 109, 110, 112, 114, 116, 117, 128, 136, 139, 142, 150, 160, 164, 172, 173, 177, 181, 182, 183, 195, 196, 198, 204, 207, 215, 216, 217, 218, 220, 221, 223, 228, 230, 232, 233, 240
Մարտունի - 120, 127, 146, 158, 164, 170, 173, 174, 175, 208, 241, 242
Մեծ Արագյալ գյուղ - 76

Մեծ Շեն գյուղ - 94, 105, 178, 195, 197, 216, 220, 222, 229
Մեհմանա գյուղ - 90, 95, 99, 100, 103, 105, 121, 197, 216
Մեհտիշեն գյուղ - 88, 168, 170
Մեղրի - 68
Միրբաշիր - 65, 66, 107, 110, 117, 168, 183, 224, 232, 233, 243
Մինսկ - 12, 16
Մինքենդ (Ռակ) գյուղ - 206
Մոխրաթաղ գյուղ - 109, 195, 196, 209, 220, 222, 223, 229
Մոսկվա - 4, 6, 12, 20, 21, 26, 32, 33, 35, 36, 39, 40, 56, 64, 68, 69, 81, 119, 133, 145, 149, 182, 200, 223, 238, 240

Նախիջեւան - 7, 8, 12, 13, 14, 21, 67, 68, 69, 75, 200, 237
Նախիջեւանիկ գյուղ - 86
Նարեշտար գյուղ - 48, 244, 245, 246
Նինգի (Նիգն) գյուղ - 146, 158
Նովոչերկասկ - 165, 167
Նորագյուղ գյուղ - 188

Շահումյան - 45, 58, 79, 90, 91, 105, 117, 118, 119, 121, 122, 123 126, 130, 131, 132, 136, 155, 159, 171, 181, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 194, 199, 206, 207, 237, 238, 240, 241, 243, 244, 246
Շամշադին - 69, 237
Շամփռապտուկ բարձունք - 238
Շորբուլաղ - 209, 210, 217
Շուշի - 13, 15, 29, 30, 32, 33, 41, 47, 64, 65, 77, 79, 80, 82, 83, 84, 125, 127, 131, 145, 146, 154, 155, 156, 157, 159, 160, 166, 167, 170, 172, 178, 179, 189, 199, 202, 203, 205, 206, 207, 211, 213, 214, 216, 224, 226, 228, 242, 245
Շոշ գյուղ - 150, 154, 156, 170, 205

Չայլու գյուղ - 65, 66, 184, 232, 243
Չանախչի (Ավետարանոց) գյուղ - 205
Չարենցավան - 34, 39, 46, 103, 169
Չինաստան - 42
Չլդրան գյուղ - 51, 54, 90, 93, 95, 99, 100, 102, 104, 105, 112, 114, 154, 196, 208, 215, 216
Չափար գյուղ - 46, 48, 49, 56, 59, 88, 90, 96, 106, 221

Պաղեստին - 43
Պյատիգորսկ - 137
Պուշկին յալ - 91, 107, 109, 112, 116, 216, 217

Ջանհասան գյուղ - 83, 161, 214
Ջեբրայիլ - 54, 60, 228
Ջուղա - 7

Ռուսաստան - 17, 19, 20, 22, 23, 27, 28, 49, 51, 70, 92, 119, 137, 158, 159, 202, 204, 212, 240,

Սադախլո - 110
Սան Ֆրանցիսկո - 193

Սարատով - 170
Սարսանգի ջրամբար - 63, 90, 93, 105, 129, 224
Սիսիան - 89, 95, 236
Սինգապուր - 41, 42
Սղնախ գյուղ - 170

Սովետաշեն - 40
Ստամբուլ - 16
Ստեփանակերտ - 7, 8, 9, 29, 30, 31, 33, 34, 46, 47, 48, 53, 55, 56, 60, 65, 78, 79, 81, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 93, 94, 95, 97, 98, 99, 100, 104, 107, 108, 109, 111,m 114, 117, 118, 121, 125, 126, 127, 1287, 135, 136, 138, 140, 151, 152, 157, 159, 165, 166, 167, 168, 170, 171, 183, 184, 186, 189, 190, 194, 196, 197, 202, 203, 204, 207, 208, 210, 211, 2112, 213, 222, 224, 232, 242, 246
Սրխավանդ գյուղ - 50, 56, 88, 90, 142, 207, 208
Սումգայիթ - 25, 37, 38, 135, 141, 151, 202
Սեւան - 31, 53, 78, 88, 94, 95, 103, 105, 106, 187, 213, 242, 244

Վաղուհաս գյուղ - 48, 57, 58, 59, 60, 61, 69, 90, 91, 101, 102, 113, 131, 245
Վանք գյուղ - 39, 43, 57, 113, 207, 245
Վերին Հոռաթաղ գյուղ - 59, 90, 98, 99, 125, 244
Վնուկովո - 27
Վրաստան - 22, 55, 68, 171, 202, 242

Տեղ գյուղ - 79, 236
Տոնաշեն գյուղ - 178

Ուզբեկստան - 10
Ուլուբաբ գյուղ - 8, 29, 83
Ուկրաինա - 10, 51, 09, 212, 214
Ումուտլու գյուղ - 46, 59, 89, 99, 109

Փառուխ գյուղ - 86, 142
Փափրավանդ գյուղ - 91, 107, 116, 155, 216

Քաջավան գյուղ - 223
Քարին տակ գյուղ- 170
Քելբաջար (Քարվաճառ) - 13, 15, 48, 49, 52, 60, 80, 88, 90, 97, 109, 160, 176, 177, 178, 216, 218, 220
Քյաթուկ գյուղ -141, 204
Քյոսալար գյուղ - 83, 214
Քոլատակ գյուղ - 118, 121, 171, 199, 243

Օմարի լեռնանցք - 15, 49, 50, 52, 59, 82, 109, 177, 178, 218, 219, 242, 243
Օմսկ - 40

Ֆիզուլի - 65, 208, 209
Ֆրանսիա - 72, 204

«ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ
ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀԱՋՈՐԴ ՀԱՏՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ՝

Բոգդան Ջանյան
Աշոտ Մանուչարյան
Սոս Սարգսյան
Աստվածատուր Պետրոսյան
Բակուր Կարապետյան
Արթուր Ահարոնյան եւ Արարատ Ահարոնյան
Էդուարդ Ղուկասյան
Անահիտ Մարտիրոսյան
Վարդգես Բաղիրյան
Ռաիսա Ստարամուդ
Պետրոս Մեղրյան
Ալիխանե Սամե
Գառնիկ Իսրայելյան
Ժիրայր Սեֆիլյան
Մկրտիչ Տոնոյան
Ռազմիկ Պետրոսյան
Սուրեն Գալստյան
Համազասպ Հովսեփյան